ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՀԱՅԿՈՄԿՈՒՍԻ ՓՈՐՁԵՐԸ

1920–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

947.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա 105950

Արարատ Հակոբյան

Հ Յ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՀԱՅԿՈՄԿՈՒՍԻ ՓՈՐՁԵՐԸ.

1920–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ ARCH. MESROB ASHJIAN
ՄԱՏԵՆԱՇԱՐ BOOK SERIES
198 198

ԵՐԵՎԱՆ 2020

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Հ 177

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պ.գ.դ. *Գեորգ Խուդինյան*

Հակոբյան Արարատ

Հ 177 Հ 3 Դաշնակցություն կուսակցությունը լուծարելու հայկոմկուսի փորձերը (1920-ական թվականներ) /Ա. Հակոբյան; Խմբ.՝ Գ. Խուդինյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020.- 431 էջ:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն մենագրությունը հնարավորություն է ընձեռում հետևելու 1920-ական թվականների այն գործընթացին, թե ինչպես Հայկոմկուսն (ՀԿ(բ)Կ) Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկյան) Կուսակցության (ՌԿ(բ)Կ) օրինակով ու նմանակմամբ Հայաստանում իր մենիշխանությունը հաստատելու ճանապարհին, պայքարի բոլոր ձևերի ու միջոցների գործադրմամբ, փորձել է դրսից և ներսից, թե՛ Հայաստանում և թե՛ գաղթաշխարհում քայքայել ու լուծարել իր գաղափարաքաղաքական գլխավոր ախոյան Հ 3 Դաշնակցություն կուսակցությանը: Բայց թե ևս ինչ արդյունքի հասավ, այդ մասին կարելի է իմանալ աշխատության ընթերցումից: Աշխատության վերջում արխիվային նյութերի հիման վրա, հավելվածի ձևով ներկայացված է 20-րդ դարի հայ ակնառավոր քաղաքական-պետական գործիչ, ՀՀ. առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունու անձնական մեծ ողբերգությունը՝ իբրև հիշատակի տուրք նրա ծննդյան 150-ամյակին:

Գիրքը հասցեագրվում է պատմաբաններին, քաղաքագետներին և առհասարակ Հայոց պատմությամբ ու հասարակական-քաղաքական կյանքով հետաքրքրվող ընթերցող լայն շրջանակներին:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
ISBN 978-9939-860-88-6
© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020
© Հակոբյան Ա., 2020

ԱՌԱՋԱԲԱՆ

ՌԿ(բ)Կ-ՀամԿ(բ)Կ–ԽՄԿԿ-ն իր ձևավորման ու գործունեության գրեթե ամբողջ ժամանակաշրջանում, իր մարքս-լենինյան հեղափոխական գաղափարախոսությամբ, դասակարգային ուղղվածությամբ, ծրագրային մաքսիմալիստական ռազմավարությամբ ու մարտավարությամբ, կազմակերպական խիստ ցենտրալիզմի (կենտրոնացվածության) ոգուն հավատարիմ՝ աջից թե «ձախ»-ից անխնա ու անհաշտ պայքար է մղել իր բնորոշմամբ բոլոր տիպի՝ բուրժուական, հակահեղափոխական, ոչ պրոլետարական, մանր բուրժուական, ազգայնական և համանման այլ որակում ստացած կուսակցությունների ու գաղափարական հոսանքների դեմ՝ դրանց գաղափարապես «սնանկացնելու ու ջախջախելու» և իբրև միակ ուղղափառ ու ճշմարիտ ուսմունք՝ ճանապարհ հարթելու սոցիալիզմի ու կոմունիզմի պայծառ ապագայի, դրա՝ համաշխարհային մասշտաբով հաղթանակի համար:

Ռուսաստանում 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխության (ներկայումս ընդունված է հեղաշրջում եզրույթը) հաղթանակից հետո համաշխարհային պատմության մեջ մինչ այդ ուտոպիա համարվող հասարակարգի՝ **սոցիալիզմի** ու **կոմունիզմի** կառուցման ճանապարհին խորհրդային կարգեր հաստատված երկրում պետք է լուծարվեին ու վերացվեին այդ հասարակարգին խոչընդոտ ու թշնամական որակվող բոլոր այլախոհ, բոլշևիկ-կոմունիստների պատկերացրած սոցիալիզմի հասարակական-քաղաքական մոդելին այս կամ այն կերպ հակառակորդ քաղաքական կուսակցությունները և

հոսանքները: Բանն այն է, որ խորհրդային-կոմունիստական միակուսակցական քաղաքական վարչակարգում կարող էր գոյություն ունենալ մեկ պաշտոնական գաղափարախոսություն՝ մարքս-լենինյանը, մյուսների գոյությունը ավելորդ էր: Եվ քանի որ մարքսիզմ-լենինիզմի տեսաղրույթներով (տեսլականով) և կոմունիստական կուսակցության ծրագրերով ու որդեգրած քաղաքականությամբ անթույլատրելի էր առանց բացառության այլախոհ բոլոր կուսակցությունների գոյությունն ու գործունեությունը **պրոլետարիատի դիկտատուրայի** պետությունում, կնշանակի՝ այդպիսին համարվող այդ բոլոր կուսակցություններն ու գաղափարաքաղաքական հոսանքները պայքարի բոլոր ձևերի՝ «գաղափարական սնանկացման ու կրախի ենթարկման», լուծարման, արտաքսման, բռնությունների, բանտի, աքսորի և այլ ձևերի գործադրմամբ պետք է կազմաքանդվեին ու վերանային հասարակական-քաղաքական ասպարեզից: Բոլշևիզմից դուրս բոլոր քաղաքական ուժերը համարվել են ոչ թե քաղաքական մրցակից, այլ քաղաքական թշնամի և ենթակա են եղել վերացման:

Խորհրդային ճանաչված պատմաբան, ակադեմիկոս Ի. Մինցը այս կապակցությամբ նշում էր, որ բոլշևիկները անհաշտ են այն բոլոր կուսակցությունների ու քաղաքական հոսանքների հետ, այդ թվում՝ սոցիալ-դեմոկրատական, սոցիալիստական, անգամ կոմունիստական համարվող, որոնք չեն ընդունում **պրոլետարիատի դիկտատուրան**[1]: Իր միակուսակցական իշխանությունը հաստատելուն համընթաց՝ նա վերացրել է իր բոլոր քաղաքական հակառակորդներին: Եվ այդ բռնաճնշիչ գործողությունները Չեկայի, բանակի, ներքին զորքերի, ՊՔՎ-ՄՊՔՎ, դատախազության, արտակարգ դատարանների, հատուկ խորհրդակցությունների, եռյակների և այլնի մի-

---

[1] Տե՛ս *Непролетарские партии России. уроки истории*, под. ред. **И. Минца**, М., 1984, с. 10.

ջոցով իրականացվել է ոչ թե պրոլետարիատի դիկտատուրան ամրապնդելու, այլ դրա անվան տակ բոլշևիկյան միակուսակցական, տոտալիտար (ամբողջատիրական), ավտորիտար վարչակարգը հաստատելու համար: Ոմանք դիտարկում են, որ բոլշևիկները գործադրել են զաղտնի օրենսդրական ակտեր, որոնք չեն հրապարակվել: Դրանք իրավական հիմք են հանդիսացել իրենց ռեպրեսիվ (բռնաճնշիչ) քաղաքականության համար[1]:

Ահա սա էր զաղափարաքաղաքական այն հիմքը (փիլիսոփայությունը), որով ծայր առան կոմունիստական-բոլշևիկյան կուսակցության կողմից հակահեղափոխական, ազգայնական ու այլ որակումներ ստացած կուսակցությունների կազմաքանդման ու քաղաքական դաշտից դուրս մղման (լուծարման ու վերացման) գործընթացները: Ավելին, խորհրդային պետության հիմնադիր Վ. Լենինի բնութագրմամբ «կարծրաքարերի» բնորոշումը ստացած կոմունիստական-բոլշևիկյան կուսակցությունը պարբերաբար պետք է «մաքրեր» իր շարքերը ներքին ընդդիմադիր խմբերից, թևերից, պլատֆորմներից և ստեղծեր միանման մտածող ու գործող մարդկանց զաղափարական ու կազմակերպական կոտ ամբողջություն: Բայց եթե կուսակցությունը զաղափարներ կուտակող և դրանք կյանքում իրականացնող կենդանի օրգանիզմ է, ապա, բնականաբար, նրա շարքերում անհրաժեշտաբար կառաջանան տարբեր տեսակետներ, մոտեցումներ, դիրքորոշումներ ու պլատֆորմներ տարաբնույթ հարցերի ու խնդիրների շուրջ: Եթե որևէ կուսակցության ներսում նման դրսևորումների հնարավորությունն արգելված է, թույլ չի տրվում, ապա այն ի վերջո կմատնվի քաղաքական լճացման, զաղափարական դոգմատիզմի, կուսակցական դիկտատուրայի և ի վերջո սնան-

---

[1] **Павлов Д.Б.**, *Большевистская диктатура против социалистов и анархистов 1917 – середина 1950-х годов*, М., 1999, с. 52.

կացման ու քայքայման, ինչը 20-րդ դարի վերջին տեղի ունեցավ ԽՄԿԿ-ի ու ԽՍՀՄ-ի պարագայում:

Բնականաբար այն, ինչը որ հետհոկտեմբերյան շրջանից ի վեր կատարվում էր հսկայատարած Ռուսաստանում, այդ նույնը Խորհրդային Ռուսաստանի օրինակով ու նմանակմամբ պետք է կատարվեին հիմնականում ռուսական Կարմիր բանակի միջոցով խորհրդային կարգեր հաստատած նախկին կայսրության ազգային շրջաններում, այդ թվում՝ 1920 թ. դեկտեմբերին խորհրդային վարչաձև ընդունած Հայաստանում: Ինքնին հասկանալի է, որ Հայաստանում այլախոհ ու թշնամական որակվող կուսակցությունների քայքայման ու վերացման գործառույթը, իհարկե, Կենտրոնի (Մայր կուսակցության) ցուցումներով պետք է իրագործեր նրա հայաստանյան մարտական ջոկատը՝ Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունը (ՀԿ(բ)Կ-ն կամ Հայկոմկուսը): Հայաստանի կոմկուսը օրինակ էր վերցնում ու պարզապես առաջնորդվում էր ՌԿ(բ)Կ ԿԿ-ի ղեկավար դիրեկտիվներով ու հրահանգներով:

Հայաստանի առաջին հանրապետության խորհրդայնացման նախօրեին, նրա քաղաքական դաշտում, ավել կամ պակաս ակտիվությամբ գործում էին ազգային և ոչ ազգային որակվող 7 քաղաքական կուսակցություններ: Դրանք էին՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը (ՀՅԴ), Հայ Ժողովրդականը (ՀԺԿ), Հայ Սահմանադրական Ռամկավարը (ՀՍՌԿ), Հայաստանի սոցիալիստ-հեղափոխականների (Էսէռներ), Ս Դ Հնչակյան, Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկյան) (ՀԿ(բ)Կ), Հայաստանի Սոց.-Դեմ. Բանվորական (ՀՍԴԲԿ-Սպեցիֆիկներ) կուսակցությունները[1]: Խորհրդայնացած Հայաստանի տարածքում Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունը չի գործել:

---

[1] Այդ մասին հանգամանորեն տե՛ս **Հակոբյան Ա.**, *Հայաստանի խորհրդայնացումը և քաղաքական կուսակցությունները 1918–1920 թթ.*, Ե., 2005:

1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի՝ Դրո-Լեգրան համաձայնագրով Հայաստանի խաղաղ խորհրդայնացումից հետո իշխանության ղեկը ստանձնած և միակ կառավարող կուսակցություն դարձած Հայկոմկուսը, Ռուսաստանի օրինակով ու նմանակմամբ, անկախ իր գաղափարական-ծրագրային հիմնադրույթներից, սոցիալ-դասակարգային կազմից, գործելակերպից և այլն, սկսեց հետևողական ու անհաշտ պայքար իրեն հակառակորդ ու թշնամի համարվող բուրժուական ու մանր բուրժուական, հակահեղափոխական ու ազգայնական և այլ որակումներ ստացած կուսակցությունների՝ տարբեր ձևերով ու մեթոդներով աստիճանաբար կազմալուծելու, քայքայելու և ի վերջո Հայաստանի քաղաքական դաշտը նման ուժերից մաքրելու շարժընթացը:

Ընդ որում, բոլշևիկյան միակուսակցական ամբողջատիրական դիկտատուրայի հաստատման ճանապարհին անխտիր պետք է վերացվեին բոլոր տիպի կուսակցությունները՝ միապետական, պահպանողական, ազատական-բուրժուական, սոցիալիստական, կրոնական թե ազգային: Խնդիր էր դրված հայ այլախոհ քաղաքական կուսակցությունների մաքրումը և վերացումը ոչ միայն Հայաստանից, այլև Անդրկովկասից, Ռուսաստանից, իսկ եթե հնարավոր լիներ, նաև արտերկրից (գաղթաշխարհից): Իշխանության ղեկը ստանձնած Հայկոմկուսի առջև, այլ խնդիրների կողքին, նախ ծառանում էր այդ կուսակցությունների գաղափարական ու կազմակերպական ջախջախումը, լուծարումը ու քաղաքական ասպարեզից վերացումը՝ ոմանց արագ, մյուսներին՝ համեմատաբար դանդաղ:

Բնականաբար հարվածի գլխավոր ալաքը պետք է ուղղվեր նախկին կառավարող ու Հայկոմկուսի համար ամենավտանգավոր քաղաքական ուժի՝ **Հայ Յեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ)** կուսակցության դեմ: Ակներև է, որ այդ ճանապարհին, թերևս, ամենադժվարը մինչ այդ հիմնական կառավարող և այն ժամանակվա հայ իրականության

ամենաստվարաթիվ ու ամենաազդեցիկ ՀՅԴ քայքայման խնդրի լուծումն էր, որի քննությանն ու լուսաբանմանն է նվիրված սույն ուսումնասիրությունը:

Հայկոմկուսն իր առաջ նպատակ էր դրել ոչ միայն կազմակերպչորեն լուծարել, Հայաստանից ու խորհրդային տարածքից դուրս մղել Դաշնակցություն կուսակցությունն իր կառույցներով ու անդամներով, այլև փորձել գաղափարապես ու կազմակերպչորեն քայքայել նաև գաղթաշխարհում՝ Սփյուռքում: ՀԿ(բ)Կ-ն ՀՅԴ դեմ պայքարի գործընթացը սկսեց իշխանության ղեկն ստանձնելու առաջին օրերից, նույնիսկ՝ ավելի վաղ, և շարունակեց ամբողջ 1920-ական թվականներին՝ հրապարակային դատերի ու լուծարման համագումարների, գաղափարախոսական ու քարոզչական աշխատանքներ տանելու, քաղաքական հետապնդումների, ձերբակալությունների, բանտ-աքսորի միջոցով, իսկ եթե այդ ուղղությամբ ինչ-որ բան կիսատ էր մնացել, ապա այն ավելի բռնի միջոցներով ավարտին հասցվեց 1930-ական թթ.՝ աննախադեպ քաղաքական բռնաճնշումների (ռեպրեսիաների) գործադրմամբ:

Խորհրդային Ռուսաստանի օրինակով Հայաստանում ևս ՀՅԴ և մյուս հակառակորդ ու թշնամական որակվող կուսակցությունների վերացումը համարվեց այն կռվաններից մեկը, որը հիմք ստեղծեց 1930-ական թթ. կեսերին հայտարարելու, որ խորհրդային երկրում վերացել են այդ կուսակցությունների սոցիալ-քաղաքական հենարան հանդիսացող շահագործողական դասակարգերը ու դրանով ԽՍՀՄ-ում հաղթանակել է սոցիալիզմը:

Եթե Հայաստանում, խորհրդայնացման նախօրյակին և դրանից հետո, այլախոհ, բուրժուական ու մանրբուրժուական համարվող վերը թվարկված Հայ ժողովրդական, ՀՍՌԿ, Էսէռ, Ս Դ Հնչակ, ՀՍԴԲԿ կուսակցությունների լուծարումը իրականացվեց հեշտությամբ, որովհետև դրանք խորհրդայնացվող Հայաստանում չունեին

բավականաչափ քաղաքական կշիռ ու ազդեցություն, ապա Հ Յ Դաշնակցության պարագայում այն ստացավ շատ ավելի դժվարին ու տևական բնույթ: Խորհրդային կուսակցական ու պետական մարմինները ամբողջ 1920-ական թվականներին մեծ արշավ կազմակերպեցին, դիմեցին պայքարի տարատեսակ ձևերի՝ գաղափարական, քարոզչական, կազմակերպչական, հետախուզական, քրեադատավարական, լրտեսական, չեկայական բռնությունների, բանտ-աքսորի և այլ մեթոդների, մինչև որ հնարավոր եղավ կազմակերպորեն լուծարված համարել այդ կուսակցությունը Խորհրդային Հայաստանում: Ինչպես արդեն ասվեց, կոմունիստական ղեկավարությունը խնդիր էր դրել քայքայել ու լուծարել Հ Յ Դ կուսակցությունը նաև արտասահմանում՝ որպես իր համար վտանգավոր քաղաքական ուժի, «իբրև միջազգային իմպերիալիզմի գործակալի»: Սակայն անցած 100 տարիների հեռվից հետադարձ հայացք ձգելով՝ կարելի է վստահաբար ասել, որ ՀՅԴ կուսակցության գաղափարական սնանկացման Հայկոմկուսի բոլոր փորձերը գործնականում անհաջողության մատնվեցին, վկան՝ ներկայիս իրողությունները: Չնայած խորհրդային երկրում և նրա սահմաններից դուրս ամբողջ ծանրաբեռնվածությամբ աշխատում էին կոմունիստական քարոզչամեքենան, հրատարակչությունները, գլավլիտը, մամուլը, քաղլուստները և այլն:

Վերոնշյալ խնդիրները վերհանելու, քննելու ու գնահատելու համար մեծապես օգտվել ենք Հայաստանի ազգային արխիվի համապատասխան ֆոնդերից, հրապարակի վրա գտնվող փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներից, կուսակցական պետական մարմինների որոշումներից, մասնագիտական ու հուշագրական բնույթի աշխատություններից, ժամանակաշրջանի պարբերական մամուլից, համացանցային նյութերից և այլն:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՅԴ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՊԱՍՏՈՂ ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

1. ՀՅԴ կուսակցությունը քայքայելու առաջին քայլերը (1920–1921 թթ.)

Ի սկզբանե ՌԿ(բ)Կ մարտական ջոկատներից մեկը համարվող Հայկոմկուսի[1] կողմից ՀՅԴ և մյուս «հակահեղափոխական» կուսակցությունների քայքայման ուղղություններից մեկը ներսից դրանց պառակտումն էր: Այդ գործընթացը գործնականում սկսվել էր 1920 թ. աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի ծանր օրերին և Հայաստանի սահմաններին Կարմիր բանակի հայտնվելու պահից:

1920 թ. խոր աշնանը Հայաստանի Հանրապետության ծանր պարտությունը թուրք-հայկական պատերազմում և բոլշևիկյան Կարմիր բանակի հայտնվելը Հայաստանի սահմանին ակտիվացրին

---

[1] Հայաստանի կոմունիստական կուսակցությունը պաշտոնապես հիմնվել է 1920 թ. հունիսի 30-ին ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյի որոշումով և ՌԿ(բ)Կ ԿԿ-ի կազմբյուրոյի հաստատումով՝ նրան տալով մարզային կազմակերպության իրավունք և ենթարկելով ԿԿ-ի Կովկասյան բյուրոյին, տե՛ս *Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության տրիբազքնը*, Ե., 1967, էջ 298:

ռուսամետ ու բոլշևիկամետ հայ հասարակական-քաղաքական ուժերին: Հանրապետության վիճակն այնքան բարդ էր ու ճգնաժամային, որ պառակտում առաջացավ նաև հիմնական կառավարող ՀՅԴ կուսակցության շարքերում: Ս. Վրացյանը նշում է, որ «կառավարական կուսակցության՝ Դաշնակցության շարքերում էլ վարանում ու շփոթ էր տիրում»[1]: Այդ օրերին Հայաստանում ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեզրանը Երևանից Մոսկվա Գ. Չիչերինին գրում էր, որ Հայաստանի ռազմաքաղաքական խոր ճգնաժամը առաջ է բերել պառակտում Դաշնակցության շարքերում[2]:

Ստեղծված իրադրության մեջ, իրոք, նոյեմբերի կեսերից ՀՅԴ ներսում առաջացավ մի քանի տասնյակ հոգուց բաղկացած, այսպես կոչված, «**Հայաստանի ինտերնացիոնալ ձախ դաշնակցականների**» խումբը: Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմնի՝ ՀՅԴ Բյուրոյի ազդեցությունից դուրս ստեղծվեց Ձախ դաշնակցական ինտերնացիոնալիստների խորհուրդ, որի մեջ մտան Հայկ Ավալյանը[3], Արտաշես Վանցյանը, Արշակ Գրիգորյանը և ուրիշներ[4]: Ձախ դաշնակցականների խմբին էին միացել նաև ՀՅԴ խորհրդարանական խմբակցության անդամներ Ավետիս Օհանջանյանը, Ռուբեն Քաջբերունին և ուրիշներ[5]: «Սրանք «ձախ»-ի պատմուճան հագան,- գրում է Իրազեկը (Հակոբ Տեր-Հակոբյանը),- որպեսզի փրկեն իրենց կաշին բոլշևիկյան հետապնդումներից և հաշվեհարդարից»[6]: Ադրբեջանի

---

[1] **Վրացյան Ս.**, *Հայաստանի Հանրապետություն*, Ե., 1993, էջ 541:

[2] Տե՛ս **Галоян Г.А.**, *Рабочее движение и национальный вопрос*, Е., 1969, с. 370–371.

[3] Խոսքը դեռ 1920 թ. Մայիսյան ապստամբության ժամանակ իր համայնամետ կեցվածքով աչքի ընկած Հայկ Ավալյանի մասին է, ով այդ հիման վրա ՀՅԴ Գերագույն դատական ատյանի 1920 թ. հունիսի 12-ի որոշմամբ վտարվել է կուսակցության շարքերից: Սակայն նրա վերջնական հեռացման հարցը պետք է հաստատվեր կուսակցության առաջիկա գումարվելիք Ընդհ. ժողովում: Այդ իսկ պատճառով Հ. Ավալյանը պաշտոնապես դեռևս համարվում էր կուսակցությունից չհեռացված:

[4] «Դրօշակ», Պոսթըն, 1930, թիվ 10, էջ 239:

[5] Տե՛ս «Ազդակ շաբաթօրեակ», Պէյրութ, 1973, 23 սեպտեմբերի, էջ 651, (թիվ 41):

[6] «Դրօշակ», Պոսթըն, 1930, թիվ 10, էջ 340:

խորհրդայնացումից հետո ՀՅԴ նման մի խումբ էլ ստեղծվել էր Բաքվում:

ՀՅԴ շարքերի քայքայման ազդակները գալիս էին նաև դրսից: Թուրքիայի արևելյան ճակատում ՌՄԴԽՀ ներկայացուցիչ Բ. Մղիվանուց նոյեմբերի 16-ին ստացած ռադիոգրի հիման վրա Վ. Լենինին ուղղված հեռագրում (պատճենը Գ. Չիչերինին) Ի. Ստալինը տեղեկացնում է, որ այլ հարցերի թվում ինքը խորհուրդ է տվել Մղիվանուն «պառակտել դաշնակներին և իր հետևից տանել ձախ մասը»[1]: Իհարկե, դա արվում էր դյուրացնելու համար Հայաստանի խորհրդայնացումը:

Ձախ ինտերնացիոնալ դաշնակցականների խորհուրդը (կոմիտեն) դեկտեմբերի սկզբին դիմել է Հայաստանի գերագույն իշխանությունը մի քանի օրով ստանձնած Դրոյին՝ իրենց կուսակցության կազմակերպական և ընթացիկ ծախսերի համար տրամադրել 8 մլն ռուբլի: Գրության տակ ստորագրել են կոմիտեի նախագահ՝ Ավ. Օհանջանյանը, Հայկ Ավալյանը և Թորոս Տեր-Ղազարյանը[2]: Ամենայն հավանականությամբ դիմումին ընթացք չի տրվել, որովհետև դեկտեմբերի 4-ին Դրոյին փոխարինած աջ և ձախ դաշնակցական չճանաչող Հայհեղկոմը բացառվում է, որ դրամ հատկացներ:

Այդուհանդերձ, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին ձախ դաշնակցականների խորհուրդը հանդես եկավ ժողովրդին ուղղված կոչերով ու հայտարարություններով (դեկլարացիա), որոնցով հորդո-

---

[1] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.» (քաղաքական պատմություն). փաստաթղթերի և նյութերի ժողովածու, պատ. խմբագիրներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, (այսուհետ՝ «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.», Ե., 2000, էջ 346:

[2] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 2:

ռում էր ժողովրդին կապերը խզել «Աջ դաշնակցականներից»[1], նրանց կառավարությունից և ամբողջովին փարվել հեղափոխական բանվորագյուղացիական Ռուսաստանին, կողմնորոշվել դեպի միջազգային սոցիալիզմն ու համաշխարհային հեղափոխությունը[2]:

Հայաստանի ձախ դաշնակցականների առաջադրած կարգախոսները, ըստ էության, ոչնչով չէին տարբերվում կոմունիստականից: Ձախ դաշնակցական ինտերնացիոնալիստների խումբը, որն իրեն համարում էր կուսակցություն, արդեն Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1920 թ. դեկտեմբերի 14-ին, որոշում էր ընդունել՝ ինքնալուծարվել և դիմել Հայկոմկուսի ԿԿ-ի բյուրոյին՝ մտնելու նրա շարքերը: Խորհրդի նախագահ Ավ. Օհանջանյանի և քարտուղար Հ. Ավալյանի ստորագրությամբ Հայկոմկուսի «Կոմունիստ» պաշտոնաթերթի դեկտեմբերի 18-ի (թիվ 11) համարում տպագրված այդ որոշման մեջ մասնավորապես ասվում էր. «Ի նկատի ունենալով, որ մեր և կոմունիստական կուսակցության մեջ չկա սկզբունքային տարբերություն, և որ խորհրդային իշխանության և նրա հոկտեմբերյան հեղափոխության նշանաբանները հաջող իրագործելու համար անպայման պահանջվում է, որ աշխատավորությունն ու գյուղացիությունն ունենա մեկ առաջնորդող բանվորա-գյուղացիական կուսակցություն, խորհուրդը որոշեց՝ **լիկվիդացիայի ենթարկել ինտերնացիոնալիստ ձախ դաշնակցականների կուսակցությունը**, համարելով անվավեր՝ կենտրոնական կոմիտեի կողմից տրված բոլոր վկայականներն ու փաստաթղթերը»[3]: Իսկ «Կոմունիստ»-ի 1920 թ. թիվ 20-ում տպված հայտարարության մեջ նշվում էր, որ «Հայաստանի աշխատավորության շահերի միակ պաշտպանը կոմկուսն է, որի հետ մենք չունենք ոչ մի սկզբունքային տարբերություն, այդ

---

[1] Նկատի ուներ առաջին հերթին Հ. Օհանջանյանի գլխավորած Բյուրո-կառավարությանը:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 185, թ. 1–2, գ. 208, թ. 53–55:

[3] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 208, թ. 56:

պատճառով մենք ձուլումն այդ կուսակցության մեջ գերադասում ենք ազատ գոյությունից: ... Մտնելով կոմկուսի մեջ մենք լծվում ենք կուսակցության աշխատանքին՝ կոչ անելով բոլոր ազնիվ և հեղափոխական ընկերներին հետևել մեր օրինակին»[1]: Սակայն վստահաբար կարելի է փաստել, որ այդ հայտարարություն-դիմումները մնացին գրեթե անարձագանք: Հայկոմկուսի ղեկավարությունը մտադիր չէր նրանց ներառել կոմկուսի շարքերը:

Պառակտում է եղել նաև Հայաստանի Էսէռների կուսակցության մեջ: Նրանց մի հատվածը ևս բարյացակամ էր տրամադրված Հայկոմկուսի հանդեպ: Հետագայում քաղաքական բռնաճնշման ենթարկված Աշոտ Հովհաննիսյանի՝ 1938 թ. հունվարին կազմված քրեական գործում բացատրություն կա, որ Հայաստանի խորհրդայնացման փուլում նա Բ. Լեգրանի հանձնարարությամբ բանակցություններ է վարել ձախ դաշնակցականների և Էսէռների հետ՝ Հայաստանը հեշտ խորհրդայնացնելու նպատակով[2]:

Հարկ է նշել, որ Հայաստանի խորհրդայնացման փուլում նշմարվում էր նաև ձախամետ ու ռուսասեր դաշնակցականների մի թև ևս, որի մեջ մտնում էին այդ շրջանում շատ մեծ հեղինակություն վայելող Դրաստամատ Կանայանը (Դրոն), Հ. Տերտերյանը, Ս. Վրացյանը և ուրիշներ, ովքեր վարում էին բոլշևիկների հանդեպ մեղմ գիծ և կողմնակից էին ստեղծված իրավիճակում Խորհրդային Ռուսաստանի հետ լեզու գտնելուն և խաղաղ ճանապարհով Հայաստանի խորհրդայնացմանը: Խորհրդամետ այս խմբի մասին էր ակնարկում Բ. Լեգրանը 1920 թ. նոյեմբերի 21-ին ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովբյուրոյի ղեկավար Գ. Օրջոնիկիձեին հասցեագրված ռադիոհեռագրում[3]: Լեգրանը տեղեկացնում էր, որ դաշնակցականների ներսում

---

[1] Նույն տեղում, թ. 54–55:
[2] ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 67, թ. 210:
[3] Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.», էջ 350:

առաջացել է մի խումբ Դրոյի գլխավորությամբ, որը պատրաստ է ընդունել Հայաստանի խորհրդայնացումը և թույլ տալ Կարմիր զորքի մուտքը Հայաստան[1]: Եվ պետք է ասել, որ Հայաստանի խորհրդայնացման գործը հեշտացնելու համար Բ. Լեզրանին հաջողվեց արդյունավետ կերպով օգտագործել ՀՅԴ շարքերում առաջ բերված պառակտումները:

Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո վերաբերմունքը հայ քաղաքական կուսակցությունների հանդեպ կտրուկ փոխվեց: Նման պայմաններում ոչ պրոլետարական որակվող բոլոր կուսակցությունները անցան ընդհատակ կամ հայտարարություն արեցին իրենց լուծարման և կոմկուսի շարքերն անցնելու պատրաստակամության վերաբերյալ, իսկ որոշ կուսակցությունների ղեկավարներ էլ, խույս տալով բոլշևիկյան սպասվելիք հետապնդումներից ու հաշվեհարդարից, անցան արտասահման: Փակվեցին այլախոհ բոլոր կուսակցությունների պարբերականները, հրատարակությունները, հասարակական ու բարեգործական կազմակերպությունները:

Ինքնին հասկանալի է, որ հայաստանյան իրականության պայմաններում առաջին ու գլխավոր հարվածը պետք է ուղղվեր ՀՅԴ կուսակցության դեմ: Բոլշևիկները, Հայաստան մտնելով, անմիջապես հայտարարեցին, թե աջ և «ձախ» Դաշնակցություն իրենք չեն ճանաչում, այլ գիտեն մի Դաշնակցություն կուսակցություն, որ «թշնամի է իրենց, և որի դեմ պիտի պայքարեն իրենք»[2]: Պատեհապաշտ ձախ դաշնակցական ինտերնացիոնալիստներից ոմանք փորձեցին մտնել Կոմունիստական կուսակցության շարքերը, մյուս-

---

[1] **Квашонин А.В.**, *Советизация Закавказья в переписке большевистского руководства 1920–1922 гг.*, М., 1997, с. 182.

[2] «Դրօշակ», Պոսթրն, 1930, թիվ 10, էջ 240:

ները նորից վերադարձան Դաշնակցություն, մանավանդ որ նրանցից շատերին բոլշևիկները մերժել էին իրենց շարքերն ընդունել[1]:

Թեև 1920 թ. դեկտեմբերի 2-ին ստորագրվել էր Հայաստանի խաղաղ խորհրդայնացման վերաբերյալ Երևանի՝ Դրո-Լեգրան համաձայնագիրը, որի 5-րդ կետով Դաշնակցության և մյուս սոցիալիստական (էսէռ և սոց.-դեմ.) կուսակցությունների անդամները չպետք է ենթարկվեին հալածանքի իրենց կուսակցական պատկանելիության համար, ինչպես նաև 6-րդ կետը, որով նախատեսվում էր երկու «ձախ դաշնակցականի»[2] կոալիցիոն սկզբունքով ընդգրկելու ապագա խորհրդային կառավարության (Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի) կազմում, սակայն այդ և մնացած կետերից և ոչ մեկը, ըստ էության, չիրագործվեց[3]: ՀԿ(բ)Կ ԿԿ-ը և Հայհեղկոմը կտրուկ դեմ արտահայտվեցին կոալիցիոն կառավարության ստեղծման գաղափարին: Ս. Կասյանը և Ավիսը իրենց դժգոհությունն են հայտնում, որ Լեգրանը համաձայնագիր է կնքել Դաշնակցության հետ, և իրենք չեն ուզում դրա ներկայացուցիչներ Դրոյին ու Տերտերյանին տեսնել կառավարության մեջ: «Էլ ի՞նչ բրոլետարիատի տիկտատուրա,- հեգնում է Ս. Վրացյանը,- երբ ինչ որ կոալիցիա պիտի կազմուի «դաշնակների» հետ»[4]: Ի դեպ, այդ գաղափարը Գ. Օրջոնի

---

[1] Տե՛ս «Դրօշակ», Պոսթրն, 1930, թիվ 10, էջ 240, «Վերջին լուր», Կ. Պոլիս, 1 ապրիլի 1921 թ:

[2] Այստեղ նկատի էր առնվում ոչ թե, այսպես կոչված, «ձախ» դաշնակցական ինտերնացիոնալիստներին, այլ ռուսամետ թևի ներկայացուցիչներ Դրոյին (Դ. Կասնայան) և Հ. Տերտերյանին:

[3] Տե՛ս «Великая Октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении» (сборник документов), Е., 1957, с. 441, **Վրացյան Ս.**, *Հայաստանի Հանրապետություն*, Ե., 1993, էջ 533–534, **Լազեան Գ.**, *Հայաստան և Հայ Դատը*, Ե., 1991, էջ 263–264, «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը» (փաստաթղթերի և նյութերի ժողովածու). պատ. խմբագիր և կազմող **Ղազախեցյան Վ.Ն.**, (այսուհետ՝ Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը), Ե., 1999, էջ 9, «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.», էջ 383–384:

[4] **Վրացեան Ս.**, *Կեանքի ուղիներով, դէպքեր, դէմքեր, ապրումներ*, հ. Ե., Պէյրութ, 1966, էջ 213:

կիձեն էր հուշել Բ. Լեգրանին, որպեսզի ավելի հեշտացներ Հայաստանի խորհրդայնացման գործը: Սակայն խորհրդայնացումից մի քանի օր անց Օրջոնիկիձեն էլ է հետ կանգնում այդ մտադրությունից՝ խնդիրը կապելով թուրքերի հետ: Դեկտեմբերի 4-ին Գ. Օրջոնիկիձեն Բաքվից հեռախոսով հայտնում է Մոսկվա՝ Լենինին, Ստալինին և Չիչերինին, որ «թուրքերը ամենևին չեն վստահում հայ կոմունիստներին, ուստի կարծում եմ՝ նպատակահարմար չէ Դրոյին և Տերտերյանին ընդգրկել հեղկոմի մեջ, որը կարող է ավելի մեծ դժգոհություն առաջացնել թուրքերի մոտ: Ստիպված ենք հրաժարվել նախորդ որոշումից»[1]:

Փաստորեն, խորհրդայնացման առաջին իսկ օրերից սկսվեցին հետապնդումներն ու ձերբակալությունները, բանտն ու աքսորը այդ կուսակցությունների ու առաջին հերթին իրենց համար առավել վտանգավոր ՀՅԴ դեմ:

Հայկոմկուսի ԿԿ-ը (տեխնիկական քարտուղար **Գ. Ալիխանյան**) և Հայհեղկոմը (նախագահ **Ս. Կասյան**) ոչ միայն ցանկություն չունեին Դաշնակցության հետ կոալիցիա կազմելու, այլև ի սկզբանե խնդիր էր դրված՝ այն կազմաքանդել և վերացնել: Հայհեղկոմի Երևան ժամանելուց մի քանի օր անց՝ 1920 թ. դեկտեմբերի 9-ին, ՀԿ(բ)Կ ԿԿ-ի շենքում՝ կուսակցական ակտիվի նիստում՝ կոմունիստների համար տված զեկուցման մեջ, հեղկոմի նախագահ Ս. Կասյանը Հայաստանում գործող բուրժուական, ոչ պրոլետարական և այլ կուսակցությունների հետագա ճակատագրի վերաբերյալ պարզաբանում էր, որ «դրանք որպես այդպիսին խորհուրդների իշխանության օրոք **չեն կարող գոյություն ունենալ** (ընդգծումը մերն է –

[1] Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվ (այսուհետ՝ **ՌՍՔՊՊԱ**), ֆ. 2, ց. 1, գ. 16404, թ. 1.

Ա.Հ.)»[1]: Բայց, միաժամանակ, թույլատրելի էր համարում այդ կուսակցությունների առանձին անդամների ծառայություններից օգտվելը[2]: Հայկոմկուսի և Հայհեղկոմի պաշտոնաթերթ ռուսալեզու «Կոմունիստ»-ը կարծես 1921 թ. հունվարմեկյան «նվեր» իր առաջնորդողում գրում էր, որ «տակավին գոյություն ունեն և գործում են դաշնակները: Խորհրդային իշխանության առաջնահերթ խնդիրը պետք է լինի դաշնակների լիկվիդացումը՝ կիսամիջոցները չեն օգնի: Հարկավոր է խիստ և անողոք լինել պրոլետարական հեղափոխության թշնամիների հանդեպ»[3]:

Ինչպես հայտնի է, 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրից հետո, ՀՅԴ գերագույն գործադիր մարմինը՝ Բյուրոն, պաշտոնապես դադարեցրեց իր գործունեությունը Հայաստանի սահմաններում: Մինչ այդ՝ դեկտեմբերի 1-ին՝ երեկոյան ժամը 20-ին, ՀՅԴ Բյուրոն, խորհրդարանական խմբակցությունը և կառավարությունը նախ վճիռ էին կայացրել «ընդունել կարմիրների առաջարկը սովետիզացիայի մասին. դրել ենք որոշ պայմաններ, որ ճանաչվի Հայաստանի անկախությունը, հաշտություն կնքել տաճիկների հետ, թույլ չտալ քաղաքացիական կռիվ, մտցնել կառավարության մեջ մերոնցից»[4]: Այդ նույն օրը՝ դեկտեմբերի 1-ին, ՀՅԴ Բյուրոն Հայաստանից հեռանալու մասին նաև որոշում էր կայացրել. «Հարկադրված երկու հակառակորդ կողմերի ճնշումից՝ Բյուրոն հեռանում է Հայաստանից, թողնելով իր ներկայացուցիչը և հրահանգում է ընկերներին իրենց տեղական պայմանների համաձայն գործել և գաղտնի պահպանել կուսակցության գոյությունը, իսկ ընկերներին չի արգե-

---

[1] **Կարապետյան Հ.Ն.**, *Մեծ պայքարի մարդիկ. Սարգիս Կասյան, Սահակ Տեր-Գաբրիելյան, Գևորգ Աթաբեկյան*, Ե., 1963, էջ 145–146, նույնը՝ «Կոմունիստ», Ե., 12 դեկտեմբերի 1920 թ. (թիվ 7):

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] «Коммунист», Эривань, 1 января 1921 г. (N 1).

[4] Տե՛ս բերվում է ըստ **Ա. Կարինյանի՝** *Դաշնակցությունը փաստերի դեմ*, Թիֆլիս, «Զակկնիգա», 1926 գրքույկում զետեղված վավերագրերի, էջ 81–82:

լում մտնել նոր իշխանության մեջ և աշխատել տնտեսական ու կուլ-տուրական զարգացման համար»[1]:

ՀՅԴ Բյուրոյի հայտնի որոշումից հետո դադարեցվեց նրա լեգալ իրավական գործունեությունը Հայաստանի սահմաններում: Սակայն այդ որոշման համաձայն՝ Դաշնակցության կուսակցության առանձին կազմակերպություններ և կուսակցական այլ կառույցներ, անցնելով ընդհատակ, այսպես թե այնպես, շարունակեցին իրենց ընդհատակյա և կիսաընդհատակյա գործունեությունը: ՀՀ վերջին վարչապետ և ՀՅԴ Բյուրոյի անդամ Ս. Վրացյանը պիտի մնար տեղում՝ իշխանության բոլոր մարմինները Հայհեղկոմին լիակատար փոխանցելու համար: Երևանում և գավառներում Հայհեղկոմի և Չեկայի գործադրած բացահայտ բռնությունների պայմաններում ՀՅԴ Երևանի «Մրգաստան» կոմիտեն՝ դեկտեմբերի 19-ին Ս. Վրացյանի, Ե. Սարգսյանի, Իրազեկի (Հ. Տեր-Հակոբյանի), Հ. Բուդաղյանի, Ռ. Քաջբերունու նախաձեռնությամբ, ստեղծել էր ընդհատակյա ղեկավար մի մարմին՝ **ՀՅԴ Հայաստանի կոմիտեն**, որի լիազորն էր Բյուրոյի ներկայացուցիչ **Ս. Վրացյանը**[2]: Վերջինս նշում է, որ ինքը «խորհրդակցական ձայնով մասնակցում էր Կոմիտեի նիստերին»[3]: Այդ մարմինը փաստորեն, Հայաստանի սահմաններում, փոխարինելու եկավ ՀՅԴ Բյուրոյին: Նա վարում էր կազմակերպական գործեր, կապ էր պահպանում գավառների հետ և օգնում վտանգված ընկերներին արտասահման անցնելու[4]: Հայաստանի կոմիտեն ՀՅԴ քայքայման վտանգը կասեցնելու համար Երևանում և շրջաններում աշխատում էր վերաստեղծել 3-4 հոգուց բաղկացած խմբակներ և կապ

---

[1] «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 10:

[2] Տե՛ս **Սասունի Կ.**, *Փետրուարեան ապստամբութիւնը*, «Հայրենիք», Պոսթըն, 1925, Գ տարի (նոյեմբեր), թիվ 1, էջ 83: «Ազդակ շաբաթօրեակ», Պեյրութ, 1973, (23 սեպտեմբերի), թիվ 41, էջ 651:

[3] *Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան*, հ. Դ., Աթէնք, 1995, էջ 141:

[4] «Ազդակ շաբաթօրեակ», նույն տեղում:

հաստատել բոլոր ընկերների միջև, ինչպես նաև կանխել հնարավոր խլրտումները[1]:

Հավելենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագրից հետո էլ թուրքական ռազմակալման (օկուպացիայի) պայմաններում գործում էր ՀՅԴ Շիրակի Կենտրոնական կոմիտեն: Գաղտնի կազմակերպություններ ու խմբեր կային Նոր Բայազետի ու Լոռու գավառներում, Ապարանի, Ախտալայի, Բաշ Գյառնիի, Կըրբուլաղի, Զառի, Եղվարդի, Ծաղկաձորի և այլ շրջաններում[2]:

Սակայն Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի՝ իշխանությունը խաղաղ ճանապարհով բոլշևիկներին հանձնելու վերաբերյալ Դրո–Լեգրան համաձայնագրի ստորագրության թանաքը դեռ չչորացած սկսվեցին դաշնակցականների ձերբակալությունները սկզբում՝ դեկավար, ապա՝ նաև շարքային անդամների[3]: Խորհրդայնացման հենց առաջին օրը՝ դեկտեմբերի 2-ին, համաձայնագիրը ստորագրած նույն ինքը՝ Բ. Լեգրանը, Բաքու՝ Գ. Օրջոնիկիձեին ուղղված հեռագրում հայտնում էր, որ կարգադրել է անհապաղ ձերբակալել Հայաստանի նախկին վարչապետ Հ. Օհանջանյանին, նրա կաբինետի (Բյուրո-կառավարության) բոլոր անդամներին և մի շարք «հակահեղափոխական այլ գործիչների»[4]: Հեռագրում հայտնվում էր, որ իր կազմած ցուցակով, բացի Օհանջանյանի կաբինետի անդամներից, ձերբակալվելու էին նահանգային կոմիսար Բենը, խմբապետ Համազասպը, քաղաքային ոստիկանության պետ Լ. Քալանթարյա-

---

[1] Տե՛ս **Ներսիսյան Ա.**, *Գարո Սասունի*, Ե., 2004, էջ 240:

[2] Տե՛ս *Հայաստանում Սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920–1922 թթ.)*, Ե., 1987, էջ 196–197, **Հակոբյան Արշ.**, *Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ.*, Ե., 1948, էջ 56–57:

[3] Տե՛ս **Ղազախեցյան Վլ.**, *Հ.Յ. Դաշնակցությունը խորհրդային իշխանության պայմաններում*, (տե՛ս Հ.Յ. Դաշնակցության հիմնադրման 115 և 120-ամյակներին նվիրված գիտաժողովների նյութեր), Ե., 2011, «Հայ Դատ» մատենաշար, թիվ 3, էջ 67–68:

[4] **Վիրաբյան Ա.**, *Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալման մասին* // տե՛ս Բանբեր Հայաստանի արխիվների (ԲՀԱ), Ե., 2009, թիվ 1, էջ 107:

նը, նրա օգնականը, արտակարգ դատարանի քննիչ Ղասաբյանը, բանտապետ Մացակը, արտակարգ դատարանի դատախազ Բաղդասարյանը, հակահեղափոխականներ Նաջարյանը, Իշխանյանը: Արդյունքում՝ դեկտեմբերի 6-ին, հայ-վրացական սահմանագլխին, Բզովդալ (Բազում) գյուղում «կարմիր պարտիզանների» զաղտնի խմբի կողմից՝ Երեմեյ Վանիևի գլխավորությամբ, ձերբակալվում են Հ. Օհանջանյանը և նրա գործընկերները (թվով՝ 17 հոգի), որոնք հետ են բերվում և կալանավորվում Երևանի կենտրոնական բանտում[1]:

Այդ առնչությամբ տեղին է նկատում ակադեմիկոս Գ. Գալոյանը. «Լեգրանի ձեռնարկած այս քայլերը ամբողջովին հակասում էին այդ նույն օրը Դրոյի և Տերտերյանի հետ ստորագրած համաձայնագրի ոգուն և ըստ էության չեղյալ էին հայտարարում այն»[2]: Զավեշտալին այն է, որ Երևանի համաձայնագրով անկախ համարվող Հայաստանի քաղաքացիների ձերբակալության հրահանգ է տվել մեկ այլ երկրի՝ Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչը, որը չլսված բան է միջազգային իրավունքի տեսակետից: Դեկտեմբերի 2-ին ձերբակալվում է հայտնի սոցիալ-դեմոկրատ (սպեցիֆիկ) Բ. Իշխանյանը[3]:

Ս. Վրացյանը վկայում է, որ, բացի «հին կառավարության անդամներից», բանտարկված էին Բ. Իշխանյանը, Համազասպը, Ս. Մելիք-Յոլչյանը, Նոր-Բայազետի քաղաքագլուխ Վ. Աֆրիկյանը, բժ. Հ. Տեր-Դավթյանը, Վ. Բաբայանը, Արշ. Աստվածատրյանը, բժ. Հ. Մելիքյանը և շատ ուրիշներ[4]: «Կոմունիստ» պաշտոնաթերթը տեղեկություններ է տպագրել, որ ՀՍԽՀ հեղափոխական տրիբունալի հունվարի 20-ի տվյալներով ձերբակալվել են «խորհրդարանի ան-

---

[1] Նույն տեղում, էջ 108–110:

[2] **Գալոյան Գ.**, *Հայաստանը և մեծ տերությունները (1917–1923)*, Ե., 1999, էջ 374:

[3] Տե՛ս «Коммунист», Эриван, 7 декабря 1920 г.

[4] Տե՛ս **Վրացյան Ս.**, *Հայաստանի հանրապետություն*, Ե., 1993, էջ 594:

դամ Ղազարյանը, մի խումբ մաուզերիստներ, այդ թվում Անդրանիկի շտաբի նախկին պետ Արտուշ խան-Շահրիարցին, Երվանդ խան-Ադամյանը, Արտաշես Պահլավունին, խմբապետ-բանդիտ Մակեդոնը և ուրիշներ»[1]:

Արդեն 1921 թ. Փետրվարյան ապստամբության նախօրյակին զանգվածային բնույթ ստացած ձերբակալությունները ոչ թե սահմանափակվում էին, այսպես կոչված, մաուզերիստներով, դաշնակներով ու մյուս հակահեղափոխականներով, այլև Արտակարգ Հանձնաժողովի (Չեկայի) նախագահ Շ. Ամիրխանյանը Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանից թույլտվություն էր խնդրում ձերբակալել նաև դրանց մոտիկ ազգականներին[2]: Ձերբակալվել և բանտ էին նետվել դաշնակցական մի շարք գործիչներ՝ Լևոն Զաոաֆյանի, Հակոբ Իրազեկի, Եփրեմ Սարգսյանի կանայք, Կարո Սասունու տիկինը՝ բանաստեղծ Միսակ Մեծարենցի զարմուհի Հռիփսիմե (Լոլա) Մեծատուրյան-Սասունին, բանտարկվածների թվում եղել են անգամ հղի կանայք, իսկ փետրվարի 16-ին Երևանի կենտրոնական բանտում բոլշևիկների կողմից գնդակահարվել է հայտնի կին դաշնակցական Նատալիա-Ամիրխանյան-Մուրատյանը և ուրիշներ [3]: Որոշ տվյալներով 1920-ական թվականներին Հայաստանում ձերբակալվել է 41 կին, որոնք ենթարկվել են տարբեր տարիների ազատազրկման[4]:

Ղեկավարվելով Կոմունիստական կուսակցության ղեկավար կենտրոնների դիրեկտիվներով՝ 1921 թ. հունվարի վերջերին (27-ին) Հայկոմկուսի ԿԿ-ի պլենումը՝ Ավիսի զեկուցման հիման վրա, ձայ-

---

[1] Տե՛ս «Коммунист», Эривань, 27 января 1921 г.

[2] **Սուքիասյան Հ.**, *1921 թ. փետրվարի 18-ին նախորդած ձերբակալությունների փաստաթղթերը* (տե՛ս «ՎԷՄ», Ե., 2011, հունվար-մարտ, թիվ 1 (33), էջ 209–210:

[3] Տե՛ս **Ձէյթլեան Ս.**, *Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ*, Լոս Անճելես, Քալիֆորնիա, 1992, էջ 25, 166 և 189:

[4] Տե՛ս **Մանուկյան Ա.**, *Քաղաքական կյանքը Հայաստանում 1920–1940 թթ.*, Ե., 2002, էջ 93:

ների մեծամասնությամբ (դեմ՝ Կասյան և Մռավյան) որոշում կայացրեց ձերբակալել ու մեկուսացնել ՀՅԴ բոլոր կոմիտեների ղեկավարներին և նախկին կառավարության անդամներին: Պլենումը մասնավորապես ընդունել էր երեքկետանոց հետևյալ որոշումը. 1. Անողոք պայքար մառզերիստների դեմ, 2. Անխնա պայքար դաշնակցական կառավարության ակնհայտ գործակալների դեմ և 3. Անխնա պայքար Դաշնակցության՝ որպես կուսակցության դեմ՝ արմատախիլ անելով նրա կազմակերպությունների որևէ գործողություն: Դրա համար ձերբակալել և մեկուսացնել նրա կոմիտեների, նախկին ու ներկա բոլոր կազմակերպությունների անդամներին[1]: Հայ բոլշևիկների սկզբունքային խնդիրներից էր, որ Դաշնակցությունը՝ որպես քաղաքական կուսակցություն, «**Հայաստանի արևի տակ տեղ չունի և մահվան պիտի դատապարտվի**»[2]:

Նպատակասլաց պայքար սկսվեց Դաշնակցություն կուսակցության լիակատար վերացման համար: Այդ պայքարը մեծապես հրահանգվում ու հրահրվում էր դրսից՝ Մոսկվայից, Բաքվից և Անգորայից: Այսպես, օրինակ, հիմք ընդունելով 1921 թ. հունվարի վերջին ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյի կայացրած որոշումը՝ Կովբյուրոյի քարտուղար Գ. Օրջոնիկիձեն և անդամ Մ. Օրախելաշվիլին փետրվարի 1-ին Բաքվից Երևան Հայհեղկոմի նախագահ Ս. Կասյանին ուղղված հեռագրով վերահաստատում էին ՀԿ(բ)Կ ԿԿ-ի հունվարվերջյան պլենումի որոշումը ՀՅԴ վերացման մասին՝ արձանագրելով, որ «քաղաքական իրադրությունը հրամայաբար պահանջում է **անողոք պայքար մղել Դաշնակցություն կուսակցության լիակատար վերացման համար**, մեկուսացնել կազմակերպությունների ղեկավարներին, ինչպես նաև Արտակարգ դատարանի և հակաժողովրդական մյուս հիմնարկների վարկաբեկված անդամներին:

---

[1] Տե՛ս ՌՍԱՔՊՊԱ, ֆ. 85, ց. 14, գ. 117, թ. 1:

[2] «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 6:

Դաշնակցականների դեմ պայքարում չպետք է մոռանալ այն ներքին խմորումները, որոնց մասնակիցները ակտիվորեն պաշտպանում են խորհրդային իշխանությունը, օրինակ, Դրո-Վրացյան խումբը: Հակաժողովրդական կուսակցության վերացման համար մղվող պայքարը ոչ մի դեպքում չպետք է վերածվի մտավորականության դեմ հախուռն պայքարի, թեկուզև դաշնակցական անցյալով»[1]:

Սույն խնդրի հետ կապված՝ հարկ է նշել, որ մինչև Փետրվարյան ապստամբությունը Հայաստանում կիսաընդհատակյա ձևով գործող կուսակցությունների, ի մասնավորի ՀՅԴ հանդեպ վերաբերմունքի հարցում 1921 թ. հունվարին ՀԿ(բ)Կ ԿԿ-ում հանդես է բերվել երկու մոտեցում՝ կոշտ և փափուկ: Առաջինի կողմնակիցները՝ կենտկոմի անդամներ Գ. Ալիխանյանը, Ավիսը (Ավետիս Նուրիջանյանը), Ի. Դովլաթյանը, Կ. Աչվազյանը և ուրիշներ գտնում էին, որ մյուս կուսակցությունների հանդեպ պետք է լինել անողոք, դիմել կոշտ ու բռնի քայլերի, անմիջապես լիկվիդացնել դրանց, իսկ փոքրամասնություն կազմող փափուկ դիրքորոշման կողմնակիցները՝ Հեղկոմի անդամներ Մ. Կասյանը, Ա. Մռավյանը, Ա. Բեկզադյանը և ուրիշներ, դեմ էին անողոք, ջարդարարական քաղաքականությանը, ռազմակոմունիստական անկանոն բռնագրավումներին, նախկին սպայության աքսորին և մյուս բռնի այլ ձեռնարկումներին[2]: Խորհրդային պատմագրության մեջ կասյանական հոսանքն անգամ որակվել է օպորտունիստական[3]:

---

[1] **ՌՍՔՊՊԱ**, ֆ. 85, ց. 14, գ. 118, թ. 1, նաև՝ «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 17–18:

[2] Տե՛ս **Հակոբյան Ա.**, *ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ*, Ե., 2014, էջ 19–20:

[3] Տե՛ս **Հակոբյան Արշ.**, *Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ.*, Ե., 1948, էջ 55:

Այս երկու դիրքորոշումները հստակ երևացին ՀԿ(բ)Կ ԿԿ-ի վերը նշված 1921 թ. հունվարյան պլենումում: Ալիխանյանական թևը հունվարի 27-ին ՀԿ(բ)Կ ԿԿ-ի անունից ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրո ուղարկեց մի բացատրագիր, որում հիմնականում շարադրված էր Հայկոմկուսի ԿԿ-ի պլենումի բանաձևի բովանդակությունը: Բացատրագրում կրկին հիշեցվում էր Դաշնակցությանը վերաբերող վերոնշյալ երեքկետանոց որոշումը՝ անխնա ու անողոք պայքար Դաշնակցության դեմ՝ այն որպես կուսակցություն վերացնելու նպատակով: Դրան հասնելու համար պահանջ էր դրվում արգելել այդ կուսակցության որևէ գործունեություն, բանտարկել և մեկուսացնել դաշնակցական կազմակերպությունների բոլոր ղեկավարներին, նախկին կառավարության բոլոր անդամներին, արտակարգ դատարանների բոլոր անդամներին, նախկին պահեստի միլիցիայի անդամներին և այլն[1]: Նույն կերպ պահանջ էր դրված բանտարկել «Ժողովրդական ազատություն» կուսակցության (այսինքն՝ ՀԺԿ – Ա.Հ.) աջքի ընկնող բոլոր անդամներին[2]:

ԿԿ-ի պլենումում ձայների մեծամասնությամբ ընդունված այդ բանաձևին կտրականապես դեմ արտահայտվեցին Ս. Կասյանը և Ա. Մռավյանը և հրաժարվեցին Հայհեղկոմի նախագահությունում այն անցկացնել: Որոշվեց հարցը փոխադրել ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովբյուրո: Հունվարի 28-ին Կասյանը և Մռավյանը իրենց հերթին բացատրագիր են ուղարկում Կովբյուրո՝ Գ. Օրջոնիկիձեին, այն մասին, որ իրենք համաձայն չեն ԿԿ-ի մեծամասնության հետ: Սակայն ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովբյուրոն քննարկում է ՀԿ(բ)Կ ԿԿ-ի ընդունած որոշումը և

---

[1] Տե՛ս ՌՍՀՊՊԱ, ֆ. 85, ց. 14, գ. 117, թ. 1, նաև՝ Ալիխանյան Ս.Տ., *Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917–1921 թթ.)*, Ե., 1966, էջ 299:

[2] Տե՛ս ՌՍՀՊՊԱ, նույն տեղում:

հավանություն է տալիս Դաշնակցություն կուսակցության լիակատար վերացման համար մղվող անողոք պայքարին[1]:

Փետրվարի առաջին օրերին բանավեճը Հայկոմկուսի ԿԿ-ում այնքան սուր բնույթ էր ընդունել, որ Կասյանը և Մռավյանը փետրվարի 7-ին հեռանում են ԿԿ-ից և Հայհեղկոմից: Հեղկոմի նախագահի պաշտոնակատար է նշանակվում Ի. Դովլաթյանը: Սակայն Կովբյուրոն դեմ է արտահայտվում Ս. Կասյանի և Ա. Մռավյանի իրենց պոստերից հրաժարմանը[2]: Վիճակը հարթելու նպատակով Հայաստան է գործուղվում Կովբյուրոյի անդամ Շ. Էլիավան: Հայաստանի ԿԿ-ում տիրող վիճակի մասին իրազեկ էր ՌԿ(բ)Կ ԿԿ-ը: Ահա այսպես լարված էր վիճակը Հայկոմկուսի ԿԿ-ում և Հեղկոմում, երբ մի քանի օր անց սկսվեց Փետրվարյան հակախորհրդային ապստամբությունը:

ՀՍԽՀ Արտակարգ հանձնաժողովի (Չեկայի) կողմից արդեն ձերբակալված ու բանտարկված էին ՀՅԴ նախկին ղեկավար շատ գործիչներ՝ Հ. Օհանջանյանը, Հ. Քաջազնունին, Ավ. Սահակյանը, Ռ. Դարբինյանը (Ա. Չիլինգարյան), Վ. Նավասարդյանը, Հ. Տեր-Դավթյանը, Լ. Շանթը, Ն. Աղբալյանը, Մ. Մուսինյանը, Համազասպը, Էսէռ Ի. Տեր-Ներսիսյանը և շատ ուրիշներ: Ապստամբության նախօրյակին Չեկայի բանտում եղել է 500 բանտարկյալ: Ըստ Հեղկոմի անդամ Ա. Մռավյանի՝ միայն Երևանում ձերբակալվեցին 200-ից ավելի դաշնակցականներ[3]: Վիճակը նույն էր Հայաստանի մյուս բնակավայրերում: Կ. Սասունու հայտնած տվյալներով Երևանում և այլ վայրերում ձերբակալվածների ընդհանուր թիվը հասնում էր 2500-ի[4]: Պատմաբան Վլ. Ղազախեցյանի հայտնած տվյալներով բանտարկ-

---

[1] Տե՛ս **Ալիխանյան Ս.Տ.**, նշվ. աշխ., էջ 302, **Մնացականյան Ա.Ն.**, *Ընդդեմ պատմության դաշնակցական նենգափոխության*, Ե., 1976, էջ 37:

[2] Տե՛ս «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 18:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 79, թ. 1:

[4] Տե՛ս **Սասունի Կ.**, *Փետրվարեան ապստամբութիւնը*, Պէյրութ, 1970, էջ 87:

յալների ընդհանուր թիվը հասավ մինչև 3000-ի[1]: «Բանտարկում էին տասնյակներով, հարյուրներով, հաճախ անմեղներին, անվնաս մարդկանց»[2]:

1921 թ. հունվարին թուրքերի պահանջով Հայաստանից հեռացվեց կարմիր բանակի հրամանատար Դրոն, իսկ շուրջ 1400-հոգիանոց ՀՀ նախկին բանակի զինվորականներ, այդ թվում գեներալներ (անբարեհույսի, դաշնակցականի պիտակով) աքսորվեցին Ռուսաստանի խորքերը (հիմնականում Ռյազանի նահանգային համակենտրոնացման ճամբար)[3]: Սփյուռքի հեղինակ Ս. Զեյթլեյանը հայտնում է, որ 1920-ական թթ ձերբակալվել և իբրև քաղաքական բանտարկյալ Ռուսաստանի խորքերն են քշվել նաև հեղափոխական կանայք, այդ թվում հայդուկապետ Վանա Իշխանի (Նիկոլ Միքայելյանի) այրին՝ Հեղինե Մեծպայանը, որի հետագա ճակատագիրը մնում է անհայտ[4]: Անշուշտ, քաղաքական դրդապատճառներով 1400 զինվորականների աքսորը պետք է դիտել որպես քաղաքական բռնաճնշման դրսևորում:

Հարկ է նշել, որ խորհրդային պետության համար հակահեղափոխական, վտանգավոր ու անցանկալի համարվող տարրերին աքսորելու կամ վերաբնակեցնելու համար ՌՍԴԽՀ ներքին գործերի ժողկոմատի համակարգում մշակված է եղել հատուկ ծրագիր, թե վարչական այս կամ այն շրջանի աքսորյալներին որ երկրամասերում պետք է տեղավորել: Օրինակ, Վորոնեժի և Կալուգայի նա-

---

[1] Տե՛ս **Ղազախեցյան Վլ.**, *Հայաստանը 1920–1940 թթ.*, Ե., 2006, էջ 48:

[2] «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 18:

[3] Տե՛ս **Վրացյան Ս.**, *Հայաստանի հանրապետություն*, Ե., 1993, էջ 543, **Լազյան Գ.**, *Հայաստան և հայ դատը*, Ե., 1991, էջ 270: *Պատմություն*, հ. IV, գիրք 1-ին, խմբ. խոր. նախագահ **Վ. Բարխուդարյան**, Ե., 2010, էջ 296, **Մանուկյան Ա.**, *Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920–1953 թթ.*, Ե., 1999, էջ 12, **Ղազախեցյան Վլ.**, *Հայ սպաների աքսորը 1920–1921 թթ.*, (ՐՀԱ, Ե., 2003, թիվ 2, էջ 32–51 նաև՝ **Հարությունյան Ա.**, *Հայ սպաները Ռյազանի համակենտրոնացման ճամբարում 1920–1923 թթ.* («ՎԷՄ», Ե., 2016, (ապրիլ-հունիս), թիվ 2 (54), էջ 244 և այլն:

[4] Տե՛ս **Զեյթլեան Ս.**, նշվ. աշխ., էջ 166:

հանգների աքսորյալներին պետք էր տեղավորել Արխանգելսկի նահանգում, Մոսկվայի և Նոր Նովգորոդինը՝ Վոլոգդայի նահանգում, Սմոլենսկի և Տամբովինը՝ Տվերում, Տուլայինը՝ Վյատկայի նահանգում, Վյատկայի, Կոստրոմայի և Լենինգրադի նահանգներինը՝ Սիբիրի՝ Սուրգուտի և Կրասնոյարսկի նահանգներում և այսպես շարունակ[1]: Ինչպես արդեն ասվեց, հայկական բանակի նախկին սպաների ֆիլտրացիայի (զտման) և կալանավորման մասնագիտացված վայր էր ընտրվել հիմնականում Ռյազանի նահանգային համակենտրոնացման ճամբարը:

Բացի բանտ ու աքսորից՝ ՀՅԴ կազմակերպորեն քայքայելու և կազմալուծելու ճանապարհին դաշնակցական գործիչներին նաև հավաքագրելու փորձեր են արվել: Օրինակ, տեղեկություն կա, որ 1921 թ. փետրվարի սկզբին Համազասպի Երևանի կենտրոնական բանտում եղած ժամանակ նրան այցելել են Ս. Կասյանն ու Գ. Աթարբեկյանը և համագործակցության առաջարկ արել, համաձայն որի՝ Համազասպի ազատ արձակման դիմաց նա պետք է տեղեկություններ հաղորդեր ՀՅԴ գործունեության մասին: Սակայն հավատավոր դաշնակցականը կտրականապես մերժել է այդ զազրելի առաջարկը[2]: Հավանաբար կարելի է ենթադրել, որ Համազասպի կողմից այդ մերժումը արժեցել է նրա կացնահարության գինը: Բանտում նման հավաքագրման առաջարկ է արվել նաև Հ. Օհանջանյանին և Ա. Չիլինգարյանին, որոնք նույպես մերժել են[3]: Ցավոք, ՀՅԴ շարքերում եղել են նաև թույլ, կամազուրկ և պատեհապաշտ մարդիկ, ովքեր կուլ են տվել այդ խայծը և մատնագրերով ու այլ ձևերով ծառայել են բոլշևիկներին: Դրանց թվում հիշելի են Ա. Ղազարյանը,

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 16, թ. 19–23:
[2] Տե՛ս **Ստեփանյան Գ.**, *Համազասպ Սրվանձտյանց*, Ե., 2016, էջ 784:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 785:

Հ. Բուդաղյանը (Բուդաշկոն) և ուրիշներ, որոնց մասին խոսք կլինի իր տեղում:

Այսպիսով՝ հանրագումարի բերելով ներկայացվող փաստավավերագիր նյութերը՝ կարելի է եզրակացնել, որ Հայկոմկուսը իշխանությունը ստանձնելու առաջին մի քանի ամիսներին՝ ընդհուպ մինչև 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը, խնդիր էր դրել, չնայած կուսակցության ներսում ծագած որոշ անհամաձայնությանը, գործնականում մի անգամից ֆիզիկապես ոչնչացնել ու վերացնել գլխավոր թշնամի ՀՅԴ կուսակցությանը՝ համենայն դեպս Հայաստանի տարածքում: Եվ սա կարելի է համարել ՀՅԴ դեմ պայքարի առաջին փուլը: Հենց այդ բոնի քաղաքականության արձագանքն էր Փետրվարյան ապստամբությունը:

Փետրվարից հետո որոշ դասեր ստացած Հայկոմկուսի ԿԿ-ը, ՀՍԽՀ կառավարությունը, հանձինս ազգային նկարագիր ունեցող նոր ղեկավարների՝ Ա. Մյասնիկյանի, Ս. Լուկաշինի, Ա. Հովհաննիսյանի և մյուսների, ինչպես նաև ղեկավարվելով Կենտրոնի ցուցումներով՝ սկսեց վարել համեմատաբար մեղմ ու հանդուրժողական քաղաքականություն: Այլ խոսքով՝ Հայկոմկուսը սկսեց գործադրել ՀՅԴ քայքայելու ավելի դանդաղ քայլեր՝ քաղաքական, գաղափարական, իրավական մեթոդներով հրապարակային դատավարություններ, ինքնալուծարման համագումարներ: Նաև դասախոսությունների, մամուլի ու գրականության միջոցով գաղափարաքաղաքական աշխատանքներ տանել՝ այդ գործում ներգրավելով տեսականորեն առավել լավ պատրաստված իր գործիչներին՝ Ալ. Մյասնիկյանին, Ս. Լուկաշինին, Ս. Կասյանին, Ա. Հովհաննիսյանին, Ա. Կարինյանին և ուրիշների:

2. Թիֆլիսի «Աշխատավորականների» թևը և ՀՅԴ քայքայման առաջին փորձերը արտերկրում

Հարկ է հատուկ անդրադառնալ ՀՅԴ Թիֆլիսի աշխատավորական թևին, որի ընդգծված ընկերավար մոտեցումները և քաղաքական դիրքորոշումները հաճախ հակոտնյա էին ՀՅԴ Բյուրոյի որոշումներին ու վարած ուղեգծին:

Հայկոմկուսն ու խորհրդային իշխանությունները, ինչպես արդեն ասվեց, ՀՅԴ քայքայելու համար օգտագործում էին նրա ներսում ի հայտ եկած բոլոր հոսանքները և ընդդիմադիր դրսևորումները: Այդպիսիներից մեկը համարվում էր ՀՅԴ Ձախ դաշնակցականների Վրաստանի հատվածը կամ Աշխատավորականների թևը, որը համախմբված էր Թիֆլիսում լույս տեսնող «Աշխատավոր» թերթի շուրջ: Դեռ Առաջին հանրապետության ժամանակաշրջանից այս խմբի ներկայացուցիչները հանդես բերեցին ընդգծված ռուսամետ ու խորհրդամետ դիրքորոշում: Նրանց արտահայտած շատ տեսակետներ ու ըմբռնումներ չէին համերաշխվում ՀՅԴ Բյուրոյի վարած ուղեգծին: Աշխատավորականները ազգային և դասակարգային պայքարի մոտեցումներում նախապատվությունը տալիս էին վերջինիս: Հարկ է նշել, որ «Աշխատավոր» թերթի ձախլիկ մտայնություններով էին տարված նաև Հայաստանի Հանրապետությունում լույս տեսնող «Շիրակի աշխատավոր», «Հայաստանի աշխատավոր», «Արարատյան աշխատավոր», «Աշխատավորի ձայն» թերթերը:

Վրաստանի խորհրդայնացումից հետո ՀՅԴ Թիֆլիսի Աշխատավորականների խումբն, իր գոյությունը պահպանելու նպատակով, 1921 թ. ապրիլի 9-ին հանդես եկավ խորհրդային տնտեսական ու քաղաքական համակարգի պաշտպանության հայտարարությամբ, որը տպագրվել է Վրաստանի կոմկուսի հայալեզու «Կարմիր

աստղ» թերթում[1]: Արտաքին քաղաքականության հարցում «Աշխատավորական» թևը պաշտպանում էր «հեղափոխական Ռուսաստանի օրիենտացիան», Վրաստանի խորհրդայնացումը, մերժում էր Փետրվարյան ապստամբությունը, անգամ խզում էր կապերը ՀՅԴ Բյուրոյի հետ և իր գերագույն մարմինը համարում էր ՀՅԴ Վրաստանի ԿԿ-ը[2]: Հայտարարության տակ ստորագրած ՀՅԴ Վրաստանի ԿԿ-ի անդամներ Կորյուն Ղազազյանը, Աշոտ Իսրայելյանը, Արամ Նալչաջյանը, Զորի Զորյանը և Բագրատ Թոփչյանը, հարմարվելով նոր փոփոխված քաղաքական պայմաններին, իրենց համարում էին Դաշնակցությունից անջատված և կոչով դիմում էին «բոլոր նախկին աշխատավոր ընկերներին՝ խզել վերջնականապես կապը «Դաշնակցության» հետ և հետևել «Անջատվածներին»՝ կոմունիստական կարմիր դրոշի տակ ընդհանուր պայքարին մասնակցել»[3]:

Բացի Աշխատավորական խմբի վերոնշյալ կազմից՝ ապրիլի 11-ին ՀՅԴ Գերագույն մարմնից՝ Բյուրոյից կապերը խզելու վերաբերյալ առանձին հայտարարությամբ հանդես եկան ՀՀ խորհրդարանի ՀՅԴ խմբակցության նախկին երեք անդամներ՝ Սահակ Թորոսյանը, Ենոք Միրաքյանը և Գևորգ Խատիսյանը: Նրանք նույնպես իրենց լոյալ վերաբերմունքն էին արտահայտում խորհրդային իշխանությանը[4]:

Կարծում ենք, որ Աշխատավորական թևի տրամադրությունների արտահայտություն պետք է համարել հետագայում՝ 1923 թ. օգոստոսի 1-ին, Դրոյի, Կ. Ղազազյանի և մյուսների ստորագրությամբ ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի «Մարտակոչ» պաշտոնաթերթում լույս տեսած ՀՅԴ կովկասյան խմբի խորհրդամետ դեկլարացիան, որով ՀՅԴ կովկասյան կազմակերպությունների անունից ճանաչում էին

---

[1] Տե՛ս «Կարմիր աստղ», Թիֆլիս, 9 ապրիլի 1921 թ. (թիվ 33):
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 190, թ. 3–4:
[3] Նույն տեղում, թ. 7–8:
[4] «Կարմիր աստղ», 14 ապրիլի 1921 թ. (թիվ 37):

խորհրդային իշխանությունը և պարտավորվում «չգործել խորհրդային իշխանության դեմ և չխանգարել նրա աշխատանքներին Հայաստանում»[1]: Գրականության մեջ տեսակետ կա, որ Դրո-Ղազազյան օգոստոսի 1-ի հայտարարությունը կապված է եղել նաև այն հանգամանքի հետ, որպեսզի կարողանան Ջեմալ փաշայի սպանության պատրվակով արդեն մեկ տարուց ավելի Մետեխի բանտում բանտարկվածներին ազատել: Եվ այդ նպատակով Դրոն 1923 թ. հուլիսի վերջին Մոսկվայից ժամանել էր Թիֆլիս[2]:

Այս կապակցությամբ մի առիթով Ալ. Մյասնիկյանը ակնարկում է, որ 1923 թ. օգոստոսի 1-ի հայտագիրը ստորագրել են ՀՅԴ Վրաստանի կենտկոմի անդամները՝ Ջեմալ փաշայի սպանության մեղադրանքով Մետեխի բանտում բանտարկված վիճակում, որ նրանք տեղյակ չեն եղել ընթացիկ քաղաքական անցուդարձին և ստորագրել են առանց ՀՅԴ արտասահմանյան Պատասխանատու մարմնի գիտության: Միայն Դրոն է գտնվել ազատության մեջ և Մոսկվայից ժամանել է Թիֆլիս[3]:

Աշխատավորական թևի շատ ներկայացուցիչներ, ի սկզբանե, ցանկություն են հայտնել հեռանալ Դաշնակցություն կուսակցությունից և մտնել կոմկուսի շարքերը: Դա երևում է նրանից, որ ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովբյուրոյի նախագահության 1921 թ. հունիսի 16-ի նիստում որոշում է կայացվել դիմել Վրաստանի կոմկուսի ԿԿ-ին, քննել Վրաստանի տարածքում Դաշնակցությունից հեռացածների կոմիտեի դիմումը՝ կոմկուսի մեջ իրենց ընդունելու վերաբերյալ[4]:

ՀՅԴ քայքայման աշխատանքներում անգամ Հայաստանի և Վրաստանի կոմկուսները փորձեր են արել իրենց գործողությունները հստակեցնել: Այսպես՝ Հայկոմկուսի ԿԿ-ը 1921 թ. սեպտեմ-

---

[1] «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 73:
[2] Տե՛ս **Այվազյան Մ.**, *Ովքեր են սպանել Ջեմալ փաշային*, Ե., 2016, էջ 89–91:
[3] Տե՛ս **Մյասնիկյան Ալ.**, *Երկեր*, հ. 5, Ե., 2007, էջ 447–448:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1187, թ. 8:

բերի 26-ի նիստում, լսելով Արտակարգ հանձնաժողովի նախագահ Շ. Ամիրխանյանի զեկուցումը Թիֆլիսի դաշնակցականների գործունեության մասին, որոշում է. ա) հանձնարարել Հայչեկայի նախագահին՝ Թիֆլիսի դաշնակների գլխավորներին վերցնել պատանդ: բ) խնդրել Վրաստանի Կոմկուսի ԿԿ-ին՝ Վրացչեկայի միջոցով ուժեղացնել գործակալների աշխատանքը Վրաստանում[1]: Հայկոմկուսի ԿԿ-ը միաժամանակ առաջարկում էր Հայաստանի ԱՀ-ին ուժեղացնել հսկողությունը դաշնակցական ընդհատակյա կազմակերպությունների նկատմամբ: Դաշնակցական որևէ գործ բացահայտելիս և բռնաճնշում գործադրելիս դրանց տալ հասարակական հնչեղություն: «Մեկուսացնել դաշնակցական կազմակերպությունների հետ դեռևս կապերը չխզած բոլոր աչքի ընկնող և ակտիվ դաշնակներին, նրանց ուղարկելով Հայաստանից դուրս, ընդ որում միանգամայն զգույշ և տակտով՝ դրան չտալով զանգվածային բնույթ: Արտասահմանում գտնվող պատասխանատու դաշնակներին ոչ մի ձևով թույլ չտալ Հայաստան»[2]: Սա ուղղակի Հայկոմկուսի ղեկավար հրահանգն էր՝ ուղղված Հայչեկային: Եվ այդ աշխատանքները գնալով խորացվում և ստանում էին համակարգված բնույթ:

Հարկ է նշել, որ ՀՅԴ քայքայման հենց առաջին փուլում աշխատանքներ են տարվել նաև արտասահմանում, այդ թվում՝ Պարսկաստանում (Իրան), ուր շատ ամուր էին ՀՅԴ դիրքերը: Պարսկաստանում ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցիչ Ֆ. Ռոտշտեյնը և ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ, նախկին Անկախ սոցիալիստների (մենշևիկ) կուսակցության առաջնորդ **Լևոն Սարգսյանը**, անհանգստացած Իրանում Դաշնակցություն կուսակցության «հանցավոր գործունեությունից», 1920 թ. դեկտեմբեր ամսվա զեկուցագրերից մեկում հույս էին հայտնում, որ «բարեկամ Իրանի կառավարությունը մի-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 39:
[2] Տե՛ս «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 20–21:

ջոցներ կձեռնարկի կասեցնելու այդքան ձգձգվող այդ կուսակցության (Դաշնակցության – Ա.Հ.) գործունեությունը, մի կուսակցություն, որում տասնյակ խմբեր ու դրանց խմբապետներ ու կուսակցական գործիչներ՝ Ռուբեն փաշայի[1] և մյուսների ղեկավարությամբ, ամենուրեք բանդիտական, ավազակային, քայքայիչ աշխատանքներ են վարում Խորհրդային պետության դեմ»[2]:

3. ՀՅԴ քայքայմանը նպաստող ներքին և արտաքին գործոնները

Կոմունիստական կուսակցության և խորհրդային կառավարության ըմբռնումների տեսակետից ՀՅԴ լուծարման ամենազորեղ փաստարկը կարող էր համարվել 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը: Խորհրդային իշխանությունների կողմից դաշնակցականների ավանտյուրա (արկածախնդրություն) որակված այդ ապստամբությունը արտաքին միջամտությամբ ճնշվեց: Եղան երկուստեք զոհեր: Երկու կողմից էլ գործադրվեցին դաժանություններ: Ապստամբությունը գլխավորած ՀՅԴ ղեկավար միջուկը և շատ շարքայիններ ու հայդուկներ, պարտություն կրելով ռուսական կարմիր բանակից, հեռացան Հայաստանից: Այդ ամենը գաղափարաքաղաքական քարոզչական լայն դաշտ բացեց Դաշնակցության՝ համենայն դեպս Հայաստանի տարածքում, գաղափարական ու կազմակերպական քայքայման ու վերացման համար:

Նախկին քաղաքական թշնամի որակվող կազմակերպությունների դեմ պայքարի գլխավոր գործիքը, Խորհրդային Ռուսաստանի 1917 թ. դեկտեմբերի 7-ի օրինակով, 1920 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանում ստեղծված, Ալ. Մյասնիկյանի բնորոշմամբ «բանվորագ-

---

[1] Խոսքը ՀՅԴ Բյուրոյի անդամ Ռուբեն Տեր-Մինասյանի մասին է:
[2] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 53, թ. 29–30:

յուղացիական հեղափոխության անդուլ պահակ» **Արտակարգ հանձնաժողովն (ԱՀ)** էր կամ անվանման ռուսերեն հապավումով, ամենքին հայտնի՝ **Չեկան**[1]:

Համառուսաստանյան մասշտաբով քաղաքացիական պատերազմի ավարտը, 1921 թ. գարնանը ամբողջ խորհրդային երկրով մեկ անցումը Նոր տնտեսական քաղաքականությանը (ՆԷՊ-ին), մի շարք հակախորհրդային ապստամբությունների՝ Կրոնշտադի, Տամբովի և այլնի հանգամանքը, Մերձվոլգյան և Հյուսիսային Կովկասի երաշտն ու սովը, նաև արտաքին գործոնը՝ միջազգային մեկուսացումից դուրս գալու ձգտումը և այլն, անհրաժեշտաբար խնդիր ստեղծեցին փոքր-ինչ մեղմելու կուսակցական ու պետական իշխանության մարմինների բռնաճնշիչ քաղաքականությունը:

Քաղաքացիական պատերազմի ավարտից հետո, ՆԷՊ-ի անցման պայմաններում խորհրդային երկրի խաղաղ տնտեսական շինարարության անցնելու կապակցությամբ, կուսակցական-պետական մակարդակով որոշվեց վերակազմավորել Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովը՝ սահմանափակելով նրա իրավասության շրջանակը: Ստեղծվեց հանձնաժողով՝ Լ. Կամենև, Դ. Կուրսկի և Ֆ. Ձերժինսկի կազմով, և որոշվեց ա) սահմանափակել Չեկայի իրավասությունը, բ) սահմանափակել ձերբակալման իրավունքը, գ) ուժեղացնել դատարանների դերը, դ) կատարել Չեկայի անվանափոխություն և այլն[2]: 1922 թ. հունվարին ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Քաղբյուրոն որոշեց Չեկան վերակառուցել և դրա փոխարեն Ն.Գ. ժողկոմատի համակարգում ստեղծել **Պետական քաղաքական վարչություն (ՊՔՎ-ГПУ)**: Խաղաղ աշխատանքի անցման պայմաններում անհրաժեշ-

---

[1] Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու. պր. 1–2, Էջմիածին, 1921, էջ 7–8, Հայկ. ՍՍՌ օրենքների, Գերագույն սովետի նախագահության հրամանագրերի և Հայկ. ՍՍՌ կառավարության որոշումների ժամանակագրական ժողովածու (1920 թ. նոյեմբեր – 1938 թ. դեկտեմբեր), Ե., 1963, էջ 534:

[2] Տե՛ս **Голиков Давид**, *Тайные операции ВЧК*, М., 2008. с. 65, **Լենին Վ.Ի.**, Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ), հ. 44, Ե., 1982, էջ 663:

տություն կար որոշ չափով սահմանափակել պրոլետարիատի դիկտատուրայի գործիք համարվող Չեկայի բռնաճնշիչ դերը: Անվանափոխությունը կրում էր նաև քարոզչական երանգ, որովհետև «Չեկան» և «չեկիստը» թե՛ երկրի ներսում և թե՛ դրսաշխարհում բացասական իմաստ էր ստացել, մինչդեռ խորհրդային պետությունը միջազգային ճանաչման խնդիր ուներ: Նկատենք, որ Խորհրդային Ռուսաստանը, 1922 թ. սկզբին, հրավիրվել էր Ջենովայի միջազգային ֆինանսատնտեսական կոնֆերանսին, որին մասնակցելու էր նաև Հայաստանի ներկայացուցիչը:

Արդեն 1922 թ. դեկտեմբերին, ԽՍՀՄ կազմավորումից հետո, Պետական քաղաքական վարչությունը ստացավ **Միացյալ պետական քաղաքական վարչություն** անվանումը (ՄՊՔՎ – ОГПУ): ԽՍՀՄ կառավարությունը 1923 թ. նոյեմբերի 15-ին ընդունեց պետանվտանգության վերաբերյալ նոր կանոնադրություն: Ամբողջ Միության համար ժողկոմխորհին կից ստեղծվեց նոր ինքնուրույն գերատեսչություն՝ Միացյալ պետական քաղաքական վարչություն (ՄՊՔՎ), որը պետք է ղեկավարեր միութենական հանրապետությունների ՊՔՎ-ները[1]: Սակայն ՀՍԽՀ-ում այդ փոփոխությունը թե՛ ձևի և թե՛ բովանդակության տեսակետից հետաձգվեց: Խնդրի հետազոտող մասնագետ հեղինակներից Ա. Մանուկյանը Չեկայի կառույցի պահպանման երկարաձգումը տարածաշրջանում բացատրում է Անդրկովկասում և Հայաստանում հակահեղափոխական տարրերի ու բանդիտիզմի դեմ պայքարի անհրաժեշտությամբ[2]: Իրոք, փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանում մինչև 1926 թ. կեսերը շարունակել է պահպանվել Արտակարգ հանձնաժողովը՝ Չե-

---

[1] Տե՛ս Голиков Д., նշվ. աշխ., էջ 71:

[2] Տե՛ս Մանուկյան Ա., *Քաղաքական կյանքը Հայաստանում 1920–1940 թթ.*, Ե., 2002, էջ 84:

կան՝ իրեն բնորոշ գործառույթներով[1]: Ավելին, Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո, Հայհեղկոմի 1921 թ. ապրիլի 15-ի դեկրետով, ավելի էր հստակեցվել ու ընդլայնվել **հեղափոխության պահապանի՝** Արտակարգ հանձնաժողովի իրավասությունը: Դրանից հետո նրան վերապահվել էին նաև լրտեսության, հարբեցողության, հրձիգության, երկաթուղային գծերի և առհասարակ հաղորդակցության միջոցների վնասման հանցագործությունների դեմ պայքարի գործառույթներ[2]:

ՀՅԴ դիրքերի թուլացմանը, անշուշտ, նպաստեցին ամբողջ խորհրդային երկրում գործադրվող Նոր տնտեսական քաղաքականությունը (ՆԷՊ), Հայհեղկոմի ընդունած 1921 թ. ապրիլի 10-ի՝ ներման և 23-ի՝ համաներման դեկրետները, Ռուսաստանից աքսորյալ սպաների վերադարձը, ինչպես նաև Զանգեզուրի միացումը և ՀՅԴ շարքերի ակտիվ հատվածի հանրապետության տարածքից արտաքսումը (հեռացումը):

Ինչպես հայտնի է, Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո, արտասահման (հիմնականում Պարսկաստան) գաղթեց տարբեր տվյալներով 8-10 հազար մարդ[3]: Զանգվածային բնույթ ստացած այդ երևույթի դեմն առնելու համար իրար հաջորդեցին,

---

[1] Հիմք ընդունելով Անդր. ԿԳԿ-ի 1926 թ. հուլիսի 13-ի և ՀԿ/բ/Կ ԿԿ-ի նախագահության օգոստոսի 31-ի որոշումները՝ ՀՍԽՀ ԿԳԿ-ը սեպտեմբերի 8-ին կայացրեց հետևյալ որոշումը. 1. ՀՍԽՀ ժողկոմխորհին կից հիմնել Հայաստանի Պետական քաղաքական վարչություն (ՀՊՔՎ), 2. Վերացնել Հայաստանի Արտակարգ հանձնաժողովը և նրա գավառային ենթամարմինները՝ փոխարինելով նրանց ՀՊՔՎ տեղական մարմիններով, 3. ՀՊՔՎ նախագահին կառավարությունում տալ վճռական ձայնի իրավունք (տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 416, թ. 1173–1174): ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախագահության 1927 թ. ապրիլյան նիստում հաստատվում է Հայաստանի ՊՔՎ փոփոխված կանոնադրությունը, որով այդ մարմնին տրվում էր վարչական արտաքսման, համակենտրոնացման ճամբարներում աքսորման և բանտարկության իրավունք (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 27, թ. 43):

[2] Տե՛ս ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարիատների 1920–1922 թթ. հաշվետվությունը, Ցե., 1923, էջ 219–220:

[3] Տե՛ս **Հակոբյան Ա.**, *ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ*, Ե., 2014, էջ 126–127:

ինչպես ասվեց, Հայհեղկոմի երկու հայտնի՝ ապրիլի 10-ի՝ ներման և ապրիլի 23-ի՝ համաներման դեկրետները (օրենքները)՝ քաղաքական բնույթի հանցագործություն կատարած անձանց ներում շնորհելու մասին: Ճիշտ է նկատում վաստակաշատ պատմաբան Վ. Ղազախեցյանը, որ «Դրանք կարևոր նշանակություն ունեցան երկրում տիրող քաղաքական լարվածությունը լիցքաթափելու, նրա հետևանքները վերացնելու տեսակետից, ինչպես նաև նպատակ ունեին պարտված ապստամբների և քաղաքացիական բնակչության արտագաղթը կանգնեցնելու համար»[1]: Այդ դեկրետների շնորհիվ Պարսկաստան անցած հազարավոր փախստական մարդիկ նեյում ստացան և վերադարձան հայրենիք: Վերադարձան նաև 1921 թ. հունվարին քաղաքական նկատառումներով Հայաստանից աքսորված հայ սպաները:

Մինչ այդ դեկրետների քննությանն անդրադառնալը հարկ ենք համարում միջանկյալ անդրադառնալ քաղաքական կամ այլ հանգամանքներով խորհրդային տարածքից արտագաղթած մարդկանց շարժական և անշարժ գույքի տնօրինման խնդրին: Հայտնի է, որ ՌՍԴԽՀ տարածքում 1920 թ. նոյեմբերի 19-ին ընդունվել էր օրենք Հանրապետության սահմաններից փախած կամ թաքնված քաղաքացիների շարժական ամբողջ գույքի բռնագրավման մասին:

Հարց է ծագում. այդ օրենքը տարածվե՞լ է արդյոք Փետրվարյան ապստամբությունից հետո կամ մինչ այդ Հայաստանից փախած (արտագաղթած) քաղաքացիների վրա: Հայտնի է, որ մինչ ապրիլի 10-ի ներման որոշումը Ս. Կասյանի գլխավորած Հայհեղկոմը ապրիլի 3-ի ամսաթվով հրաման է արձակել՝ «Դաշնակցական հակահեղափոխական իշխանության տապալումից հետո դրանց ներկայացուցիչների հանդեպ ձեռնարկվելիք գործողությունների մասին»: Մասնավորապես, հրամանի 10-րդ կետով «ՀՓԿ պատասխանատու

[1] **Ղազախեցյան Վ.**, *Հայաստանը 1920–1940 թթ.*, Ե., 2006, էջ 207:

ղեկավարները հայտարարվում են օրենքից դուրս և նրանց գույքը ենթակա էր գրավման հօգուտ հանրապետության»[1]:

Կարելի է վստահաբար պնդել, որ Հայաստանի այն քաղաքացիները, ովքեր քաղաքական որոշակի հանգամանքների, վախի կամ Դաշնակցության հակախորհրդային քարոզչության հետևանքով հեռացել էին Հայաստանից, ըստ ամենայնի, նրանց վրա չի տարածվել այդ օրենքը: Եվ հենց դա են վերահաստատում 1921 թ. ապրիլի 10-ի՝ ներման և ապրիլի 23-ի՝ համաներման դեկրետները: Իսկ հակահեղափոխական ու հակախորհրդային համարվող տարրերի վրա, կասկած չկա, որ տարածվել է շարժական ու հատկապես անշարժ գույքը բռնագրավելու ու պետականացնելու մասին օրենքը: Որ այդ օրենքը տարածվել է Անդրկովկասի (ԱՍԴԽՀ) ու նրա վարչական մասը կազմող ՀՍԽՀ վրա, երևում է ԽՍՀՄ ԿԳԿ-ի նախագահ Մ. Կալինինի և Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ա. Սմիռնովի ստորագրությամբ 1927 թ. հուլիսի 23-ի Անդրկովկասյան Պետական քաղաքական վարչությանը (ՊՔՎ) իջեցված հրամանից, որ այդ և նախկինում ընդունված համանման օրենքները բռնագրավումների վերաբերյալ վերացվում են[2]:

Հայհեղկոմի 1921 թ. ապրիլի 10-ի դեկրետի (հրապարակվել է «Կոմունիստ» թերթի ապրիլի 12-ի թիվ 63-ում) ներածական մասում հայտարարվում էր, որ «Հայաստանի աշխատավորների կամքով և Հայաստանի ու նրա մեծ դաշնակից Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակի փառապանծ հաղթություններով մահացու հարված է հասցված դաշնակցական հակահեղափոխականների հանցավոր ավանտյուրային»: Այնուհետև նշվում էր, որ «Հայաստանի

---

[1] Տե՛ս *Великая Октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении (сборник документов)*, Ե., 1957, с. 545, նաև՝ **Հակոբյան Ա.**, *ՀՍԽՀ 1921 թ. հեղափոխական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ*, Ե., 2014, էջ 177:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 16, թ. 1–7:

Ռազմահեղափոխական կոմիտեն ոխակալ չէ խորհրդային իշխանության դեմ դաշնակների ագիտացիայով, վախով ու սպառնալիքով զենք բարձրացրած անգիտակից ու անմեղ մասսային, մեծահոգի է դեպի այդ բոլոր մոլորյալները, սակայն անողոք է լինելու գործող հակահեղափոխության նկատմամբ»[1]:

Ներման մասին դեկրետով սահմանվում էր. «1. բոլոր գյուղացիներին, տաճկահայ գաղթականներին, աշխատավոր ինտելիգենցիային, որոնք այս կամ այն ձևով մասնակցել և մասնակցում են հակահեղափոխական շարժմանը, կառավարությունը լիակատար մոռացության է տալիս Հայաստանի բանվորների և գյուղացիների հանդեպ նրանց կատարած հանցանքը՝ հակահեղափոխական շարժման մեջ մասնակցելու համար: Նրանք բոլորը կանչվում են աշխատանքի: 2. Սույն ներումը չի տարածվում հակահեղափոխության գիտակցական և հանցագործ ղեկավարների՝ այսպես կոչված ՀՓԿ անդամների, Արտակարգ հանձնաժողովի կոլեգիայի, բարձր հրամկազմի և խմբապետների վրա»[2]:

Ի լրումն և ի փոփոխումն ապրիլի 10-ի դեկրետի՝ Հայհեղկոմը ապրիլի 23-ին դեկրետ ընդունեց ընդհանուր ներման մասին (հրապարակվել է ապրիլի 24-ին), որում հայտարարվում էր. 1. Ազատ համարել քաղաքական և ամեն տեսակի ու ձևի պատասխանատվությունից առանց բացառության բոլոր նրանց, ովքեր որևէ կերպ պայքարել են ՀՍԽՀ դեմ՝ անկախ նրանց անմիջական գործերից, կոչումից, դիրքերից, պաշտոնից: Ծանոթ.- Ապրիլի 10-ի դեկրետի 2-րդ կետը վերացվում է: Այսինքն՝ համաներման օրենքը տարածվում էր բոլոր քաղաքացիների վրա՝ անկախ նախկինում նրանց ունեցած հակահեղափոխական գործունեությունից, դիրքից ու պաշտոնից: 2.

---

[1] «Կոմունիստ», 12 ապրիլի 1921 թ. (թիվ 63):

[2] Տե՛ս «Կոմունիստ», 12 ապրիլի 1921 թ. (թիվ 63). ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 2, (1921 թ. ապրիլի 2 – 1921 թ. օգոստոսի 1), Էջմիածին. 1921, էջ 10–12:

Բոլոր այս քաղաքացիներին վերահաստատել իրենց իրավունքների մեջ[1]: Կնշանակի՝ սույն օրենքը տարածվում էր բոլոր քաղաքացիների վրա՝ անկախ նախկինում նրանց ունեցած «հակահեղափոխական» գործունեությունից: Հասկանալի է, որ ապրիլի 10-ի՝ ներման և ապրիլի 23-ի՝ համաներման դեկրետները, իհարկե, տարածվելու էին քաղաքական բնույթի հանցագործությունների վրա՝ չընդգրկելով ընդհանուր քրեական հանցագործությունները՝ սպանությունը, բռնաբարությունը, ավազակությունը և այլն[2]:

Ապրիլի 23-ի համաներման համաձայն՝ պահանջվում էր բանտարկությունից, կալանքից և աքսորից անհապաղ ազատել բոլոր քաղբանտարկյալներին (քաղաքական գործիչներին ու քաղաքացիներին): Այդ համաներումը կարծես սկզբունքորեն տարածվում էր նաև Փետրվարյան ապստամբության ղեկավարների վրա: Այն բարերար ազդեցություն պետք է թողներ Զանգեզուր գաղթածներից շատերի վրա, որոնք կարող էին հետ վերադառնալ իրենց բնակության վայրերը:

Սակայն պարզվում է, որ համաներման դեկրետի ընդունումից կարճ ժամանակ անց հրապարակվել է մի նոր դեկրետ, որը փաստորեն ի չիք է դարձրել համաներման (ապրիլի 23-ի) դեկրետի ուժը և վերադարձ է կատարվել դեպի ապրիլի 10-ի՝ մասնակի ներման մասին օրենքին: Խոսքը ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի և քարտուղար Մ. Ղարաբեկյանի ստորագրությամբ 1921 թ. մայիսի 12-ին ընդունված, իսկ մայիսի 22-ին «Կոմունիստ» թերթում հրապարակված մեկ այլ լրացուցիչ դեկրետի՝ ներման ենթակա քրեական գործերի կարճման մասին է: Դրանում արձանագրված է. «Տարածել ներման 1921 թ. ապրիլի 14-ի[3] դեկրետը այն անձերի վրա,

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 38, թ. 20, գ. 197, թ. 43, նաև՝ ֆ. 571, ց. 2, գ. 5, թ 1:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 38, թ. 33:

[3] Ապրիլի 14-ը պետք է կարդալ՝ ապրիլի 10, որովհետև խոսքը այդ օրն ընդունված ներման դեկրետի մասին է:

որոնք քաղաքական հանցանքներ են կատարել մինչև 1921 թ. փետրվարի 18-ը: Վերոհիշյալ բոլոր կարգի գործերը, որոնք մնացել են ՀՍԽՀ դատական ու վարչական մարմիններում, կարճել»[1]: Սույն դեկրետից կարելի է հասկանալ, որ ներման մասին ապրիլի 14-ի (ստույգ 10-ի) օրենքը տարածվելու էր մինչև 1921 թ. փետրվարի 18-ը քաղաքական բնույթի հանցանքներ կատարածների վրա: Այդ կարգի գործերը կարճել: Իսկ փետրվարի 18-ից, այսինքն՝ պետական հեղաշրջումից հետո կատարված քաղաքական հանցանքները հետապնդվելու էին, այլ խոսքով՝ համաներման փոխարեն վերականգնվում էր ապրիլի 10-ի ներման դեկրետի 2-րդ կետը. այն է՝ հետապնդումը վերատարածվելու էր Հայրենիքի փրկության կոմիտեի (ՀՓԿ) անդամների, Արտակարգ հանձնաժողովի կոլեգիայի, բարձր հրամկազմի և խմբապետների վրա:

Ըստ վաստակաշատ պատմաբան Վլ. Ղազախեցյանի՝ փաստորեն վերադարձ է կատարվել ապրիլի 10-ի մասնակի ներմանը, այսինքն՝ համաներման գործընթացը սահմանափակվել է ապրիլի 10-ի ներման դեկրետի շրջանակներում: Պատմաբանը կարծում է, որ Մյասնիկյանը դա արել է՝ հիմքում ունենալով Չեկայի նախագահ Շ. Ամիրխանյանի դժգոհությունը ապրիլի 23-ի համաներման վերաբերյալ[2]:

Միջանկյալ նշենք, որ Կենտրոնի կողմից գործուղված Ալ. Մյասնիկյանը Հայաստան է ժամանել մայիսի 4-ին, կառավարության նախագահ է հաստատվել մայիսի 21-ին, սակայն նա է ստորագրել մայիսի 12-ի վերոնշյալ դեկրետը այն դեպքում, երբ Հայհեղկոմի նախագահը տակավին Ս. Կասյանն էր: Սա մի փաստ է, որը վկայում է Հայաստանի կառավարության ոչ լիարժեք ինքնիշխանության և հս-

---

[1] ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 2, Էջմիածին, 1921, էջ 31. նաև՝ «Կոմունիստ», 22 մայիսի 1921 թ. (թիվ 89):

[2] Ղազախեցյան Վլ., *Չեկայի գործունեության առաջին տարին Հայաստանում* (տե՛ս ԲՀԱ, Ե., 2011, թիվ 1, էջ 46):

տալ իրավասության մասին: Սակայն մյուս կողմից՝ Ալ. Մյասնիկյանի Հայաստան գործուղվելը և հանրապետության բարձրագույն գործադիր-կարգադիր մարմնի ղեկի ստանձնելը բարերար ազդեցություն ունեցավ հանրապետության հասարակական և բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Վլ. Ղազախեցյանի հրապարակած արխիվային տվյալներով համաներման (ապրիլի 23-ի) դեկրետի ընդունման պահին Արտակարգ հանձնաժողովի զծով բանտարկված է եղել 475 մարդ, ովքեր, նրա ասելով, գրեթե բոլորը ազատ են արձակվել[1]: Բայց եթե մայիսի 12-ի դեկրետով փաստորեն վերականգնվել է ապրիլի 10-ի մասնակի ներման օրենքը, ապա հարց է ծագում. իսկ հետագա ի՞նչ ընթացք է ունեցել ապրիլի 23-ի համաներմամբ ազատված 475 քաղբանտարկյալների ճակատագիրը: Այս հարցը մնում է բաց (չպարզաբանված):

Առաջ անցնելով՝ նշենք, որ 1920-ական թթ. առաջին կեսին պարբերաբար կիրառվել է ներման ու համաներման գործառույթը՝ հատկապես Հայաստանի խորհրդայնացման տարեդարձների կապակցությամբ: Այսպես՝ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման 1-ին տարեդարձի՝ նոյեմբերի 29-ի առթիվ ԺԿԽ-ի նախագահ Ա. Մյասնիկյանը նոյեմբերի 21-ին ստորագրել է ներման մասին դեկրետ: Դեկրետը հնարավորություն էր տալիս լիովին ներել կամ մեղմել հասարակական մեծ վտանգավորություն չունեցող հանցանքները: 1. Մինչև 6 ամիս ժամկետով դատապարտվածներին նպատակահարմար գտնել ազատել պատժից, 2. 6 ամսից մինչև 2 տարի ժամկետով պատժվածների ժամանակամիջոցը կրճատել կիսով չափ, իսկ 2-ից մինչև 5 տարի ժամկետովներինը՝ կրճատել 1/3-ով: Բացի այդ՝ Հեղափոխական տրիբունալների և Արտակարգ հանձնաժողովի մինչև նոյեմբերի 29-ը կայացրած զնդակահարության դատավճիռները, եթե մինչև այդ օրը ի կատար չեն ածվել, ապա

[1] Տե՛ս նույն տեղում:

այդպիսիների գնդակահարությունը փոխարինել 5 տարվա ազատազրկման: Սակայն ներումը չէր տարածվելու քննության տակ գտնվող այն անձանց նկատմամբ, որոնք մեղադրվում են ա) խորհրդային իշխանության դեմ զինված հանդես գալու, դավադրություններին կամ նման կազմակերպություններին մասնակցելու, բ) ակնհայտ հակահեղափոխության, լրտեսության, բանդիտիզմի, սպանության, հրձիգության և այլնի մեջ[1]: Այլ խոսքով՝ սույն համաներումը չի տարածվել քաղաքական բնույթի՝ «հակահեղափոխական», տեռորիստ, լրտես, բանդիտ և համանման այլ որակում ստացած քրեական մեղադրանք հարուցված գործերի հանդեպ:

Խորհրդային օրենքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներման և համաներման ուղղությամբ օրենքներ են ընդունվել խորհրդային երկրի համար նշանավոր իրադարձությունների տարեդարձների կապակցությամբ: ՀՍԽՀ ԿԳԿ-ը ամեն տարի նոյեմբերի 29-ի, ԽՍՀՄ կազմավորման, Կարմիր բանակի ստեղծման և այլ առիթներով ընդունել է նման դեկրետներ ու որոշումներ: Սակայն դրանք, որպես կանոն, տարածվում էին փոքր, շարքային ու մեծ վտանգավորություն չունեցող գործերի վրա, իսկ քաղաքական բնույթի՝ հակահեղափոխության, լրտեսության, այսպես կոչված բանդիտիզմի, ինչպես նաև ստաշտոնական դիրքի չարաշահումների, կաշառակերության, պետական ունեցվածքի հափշտակության, սպանության և այլ քր. հանցագործությունների դեպքում ներումը չէր տարածվում, և այդպիսիների գործերը չէին կարճվում: Այդ նշանակում է, որ Հայաստանում դեռևս առկա ընդհատակյա և կիսաընդհատակյա այլախոհ քաղաքական խմբերի ու կազմակերպությունների և առաջին հերթին ՀՅԴ հակախորհրդային գործու-

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի 1921 թ. (թիվ 234), նաև՝ ՀԱԱՀ, ֆ. 571, ց. 2. գ. 5, թ. 4:

նեության բացահայտման ու քրեական գործեր հարուցելու պարագայում դրանք ենթակա չէին ներման:

Հայչեկայի նախագահի տեղակալ Ս. Մելիք-Օսիպովի (Հովսեփյան)՝ հանրապետության դատախազին ուղղված 1923 թ. ապրիլի 14-ի հույժ գաղտնի գրությամբ, Անդրչեկայի ապրիլի 5-ի հարցման համաձայն, խնդրում էր հաղորդել, թե 1922 թ. ներումը (նշված չէ ներման շարժառիթը) կիրառվելու է արդյոք քաղաքական բանտարկյալ Մելքոնյան Սանդրո Ալեքսանդրի վրա, ով իրենց կողմից 1921 թ. դատապարտվել էր 5 տարվա բանտարկության՝ Լոռիի կոմունիստների գնդակահարության գործով: Հայչեկայի նախագահի տեղակալը անհրաժեշտ է գտնում, որ ներումը չտարածվի կալանավոր Ս. Մելքոնյանի վրա, որովհետև Մելքոնյանը չի ընդգրկված ներման ենթակաների ցուցակում[1]: Ս. Մելիք-Օսիպովը դատախազին ուղղված մեկ այլ՝ մայիսի 17-ի գրությամբ տեղեկացնում էր, որ նույն կերպ քննության է ենթակա բանտարկյալ Սերգեյ Հարությունյանի գործը, որը ևս չի կարող արդարացվել և այլն[2]:

Կուսակցությունների քայքայման և ասպարեզից հեռացնելու համար, բացի քարոզչական, իրավական, վարչական, հարկադրանքի գործադրումներից, Հայկոմկուսն ու կառավարությունը իրականացնում էին նաև սոցիալ-տնտեսական, կրթամշակութային մի շարք վերափոխումներ, որոնք բարերար մթնոլորտ էին ստեղծում խորհրդային իշխանությունից դժգոհ ու այլախոհ տրամադրված հասարակաշերտերի շրջանում, դրանով իսկ խարխլվում էր հակախորհրդային ուժերի սոցիալական հիմքը: Այս իմաստով, մասնավորապես, նշելի են հողաշինարարության, դատահրավական, կրթության ասպարեզներում կատարվող դրական փոփոխությունները: ԽՍՀՄ Պետական քաղաքական վարչության՝ Հայաստանին վերա-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 2, թ. 20:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 26–27:

բերող 1923 թ. մարտ ամսվա մի ամփոփագրում ասված է, որ հանրապետության գյուղացիները գոհ են Հայկոմկուսի և խորհրդային իշխանության վարած հողաշինարարական քաղաքականությունից[1]:

Հայաստանում և Անդրդաշնության հայկական միջավայրում խորհրդային իշխանության հանդեպ վերաբերմունքը կարծես ավելի բարյացակամ դարձավ այն բանից հետո, երբ ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Անդրերկրկոմի 1923 թ. հուլիսի 23-ի ընդլայնված նիստի որոշմամբ օգոստոսի 1-ին Թիֆլիսի «Մարտակոչ» պաշտոնաթերթում հրապարակվեց, արդեն վերը հիշատակված, Դաշնակցության կովկասյան խմբի (ղեկավարներ՝ Դրո Կ. Ղազազյան և մյուսներ) դեկլարացիան, որով ճանաչվում էր Խորհրդային իշխանությունը և դադարեցվում էր պայքարը նրա դեմ[2]: Նման ձևով, փաստորեն, Անդրկովկասի ՀՅԴ շատ կազմակերպություններ գնում էին հաշտեցման խորհրդային իշխանության հետ: Ընդ որում, հայտարարության հրապարակումից հետո խորհրդային իշխանությունները որոշում են ազատ արձակել ձերբակալված դաշնակցականներին (հատկապես երիտթուրք պարագլուխներից Ահմեդ Ջեմալ փաշայի սպանության կասկածանքով), իսկ Դրոյին և Կ. Ղազազյանին թույլատրում մեկնել արտասահման[3]: Այդ կապակցությամբ հարկ է փաստել, որ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախկին քարտուղար Ա. Հովհաննիսյանի (1938 թ.) քր. գործում ակնարկ կա, որ անձամբ Անդրկովկասի փաստական ղեկավար Ս. Օրջոնիկիձեն է օգնել Դրոյին մեկնելու արտասահման՝ իբր **ՀՅԴ քայքայելու նպատակով**: Բայց դա սպասվելիք արդյունք չի տվել[4]:

---

[1] Տե՛ս *Հայաստանի պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)*, Ե., 2008, էջ 53:

[2] Տե՛ս «Մարտակոչ», 1 օգոստոսի 1923 թ.:

[3] Տե՛ս «Հ Յ Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 72–73, ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 11, թ. 39:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 67, թ. 147:

Անդրկովկասի Արտակարգ հանձնաժողովի նախագահ Ս. Մոգիլևսկին 1923 թ. հուլիսի 26-ին հեռագրում է Մոսկվա ԽՍՀՄ Պետքաղվարչության հատուկ բաժնի պետ Մենժինսկուն, որ Դրոյի հայտարարության հիման վրա Ջեմալ փաշայի սպանության գործով ձերբակալված բոլոր դաշնակցականներին ազատ են արձակել՝ առաջարկելով նրանց թողնել Անդրկովկասի սահմանները[1]: Ի դեպ, տեղեկություններ կան, որ Ջեմալ փաշայի ահաբեկման կապակցությամբ Անդրկովկասում ձերբակալված են եղել 700–800 մարդ, այդ թվում՝ կանայք: Դրանց մի մասին բանտարկել են, մյուս հատվածի հանդեպ հանցանշան չգտնելով՝ ազատ են արձակել, իսկ 120 հոգու էլ աքսորել են Ռուսաստան[2]: Իրականում ահաբեկչության կազմակերպիչն ու ոգեշնչողը եղել է ՀՅԴ Վրաստանի ԿԿ-ը (մասնահյուղը), իսկ այն իրականացրել են նվիրյալ վրիժառուներ **Մտ. Ծաղիկյանը, Պետրոս Տեր-Պողոսյանը** և **Արտաշես Գևորգյանը**[3]: Դատապարտելի է, որ քեմալական Թուրքիայի հետ բարեկամ դարձած խորհրդային իշխանությունները զանգվածային ձերբակալություններ, բանտարկություն և աքսոր էին իրականացնում երիտթուրք մի պարագլխի ահաբեկման համար, որի մասնակցությամբ 1,5 մլն. մարդ էր ցեղասպանության ենթարկվել և Կ. Պոլսի ռազմական դատարանը նրան հեռակա կարգով մահապատժի էր դատապարտել[4]:

Բայց և այնպես, իրադրության ու հանգամանքների փոփոխման հետևանքով փաստորեն ՀՅԴ Անդրկովկասի դաշնակցական կազմակերպությունները, ոչ միայն աշխատավորականները, այլև ՀՅԴ Վրաստանի ԿԿ-ը աստիճանաբար գնում էին հաշտեցման խորհր-

---

[1] «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 48–49:

[2] Տե՛ս «Հայրենիք», 14 փետրվարի 1923 թ., Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Դ, Աթէնք, 1995, էջ 254:

[3] Տե՛ս **Այվազյան Մ.**. *Ովքեր են սպանել Ջեմալ փաշային*, Ե., 2016, էջ 8–10 և 89–93:

[4] Տե՛ս *Հայոց պատմություն*, հ. 4, գիրք 1-ին, խմբ. նախագահ **Վլ. Բարխուդարյան**, Ե., 2010, էջ 232–233:

դային իշխանության հետ: Ինչ վերաբերում էր նրա ավելի մեծաթիվ՝ աջ դիրքորոշման, սկզբունքային ընդդիմադիր հատվածին, որոնք հաստատվել էին արտասահմանում, հիմնականում անհաշտ, գաղափարական հակառակորդ էին խորհրդային իշխանությանը[1]: Եվ պատահական չէ, որ Դրոյի խմբի այդ հայտարարության դեմ բողոք էին հայտնել ՀՅԴ արտասահմանյան մարմինները[2]:

*

* *

Անդրադառնալով ՀՅԴ քայքայման արտաքին գործոնների խնդրին՝ հարկ է փաստել, որ Հայաստանի ազգային շահերի տեսակետից ստեղծվել էին մի շարք աննպաստ պայմաններ: Մասնավորապես, Հայաստանի խորհրդայնացումից հետո կնքվեցին Հայաստանին վերաբերող մի քանի միջազգային պայմանագրեր, որոնք ՀՅԴ և հայ մյուս ազգային կուսակցությունների համար քաղաքական հեռանկարի ու հույսի դաշտ չէին թողնում: Խոսքը վերաբերում է առաջին հերթին Մոսկվայի, Կարսի և Լոզանի հայավնաս պայմանագրերին: Հանրապետության ղեկավարներ Ալ. Մյասնիկյանը, Ս. Լուկաշինը և մյուսները քաղաքական-գաղափարական կոնյունկտուրայի թելադրանքով արտաքուստ կարծես ուրախ էին, որ կնքվեց Լոզանի, մեղմ ասած, ոչ հայանպաստ պայմանագիրը, որը, ըստ նրանց, նպաստեց ՀՅԴ կազմալուծմանը և քայքայմանը: Օրինակ, ԺԿԽ նախագահ Ս. Լուկաշինը հեգնում էր. «Լոզանը հանդիսացավ դաշնակցական քաղաքական մեծ ծրագրերի գերեզմանը»[3]: Ըստ Լուկաշինի՝ Դաշնակցությանը մահացու հարված հասցրեցին Լոզանի

---

[1] Տե՛ս «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 13 հոկտեմբերի 1923 թ., «Հայրենիք», Պոսթն, 1923 թ., թիվ 6 (ապրիլ), էջ 3:

[2] Տե՛ս *Հայաստանը սկսական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)*, Ե., 2008, էջ 85:

[3] **Լուկաշին Ս.**, *Հոդվածներ, զեկուցումներ, հաոեր*, Ե., 1986, էջ 191:

պայմանագիրը, ինքնալուծարման համագումարը[1]: Իրականությունն այն է, որ մեծ տերությունների խարդավանքի արդյունք, այսպես կոչված, «Լոզանը» փաստորեն «մահացու հարված» էր ոչ միայն Դաշնակցություն կուսակցությանը քաղաքական դատի իմաստով, այլև ամբողջ հայ ժողովրդի համազգային շահերին:

Համանման միտք է արտահայտել նաև հայ բոլշևիկների մյուս առավել երևելի առաջնորդ Ալ. Մյասնիկյանը: Նա գտնում էր, որ Խորհրդային Հայաստանի ստեղծումով փաստորեն լուծվել է «այսպես կոչված հայկական հարցը»[2]: Ալ. Մյասնիկյանը, մեկ այլ առիթով քննադատելով դաշնակցական կառավարության վարած արևմտամետ քաղաքականությունը, պաշտպանության տակ էր վերցնում քեմալական Թուրքիային: Նա դատապարտում էր «Թուրքիայի վզին կապված Սևրի դաշնագիրը, այդ երկրորդ ասիական Վերսալը, որի տակ կա և դաշնակցական Հայաստանի ներկայացուցչի ստորագրությունը: Այդ Հայաստանը Թուրքիայի նկատմամբ ուզում էր անել այն, ինչ որ Վերսալում հաջողեց կատարել Բելգիան Գերմանիայի նկատմամբ»[3]: Հայաստանի կուսակցական-պետական գործիչների վերը բերված մտքերի գնահատականը թողնում ենք ընթերցողներին:

Հայկոմկուսի ԿԿ-ի պաշտոնաթերթ «Խորհրդային Հայաստան»-ը, ընդգծելով իր կուսակցության թրքանպաստ դիրքորոշումը՝ «Ազգային օջախի» խնդրի բարձրացումը Լոզանում, համարում էր «մի նոր ավանտյուրա»[4]: Թերթի մեկ այլ հրապարակման մեջ «Ազգային օջախը» որակվում էր իբրև «Հայկական սիոնիզմ»[5] և այլն:

---

[1] «Խորհրդային Հայաստան», 8 մայիսի 1924 թ.:
[2] **Մյասնիկյան Ալ.**, *Երկեր, հինգ հատորով*, հ. 5. Ե., 2007, էջ 443:
[3] Նույն տեղում, էջ 413:
[4] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 10 հունվարի 1923 թ.:
[5] Տե՛ս նույն տեղում, 2 փետրվարի 1923 թ.:

Հայտնի է, որ ամբողջ 20-ական թվականներին՝ Լոզանի խորհրդաժողովից առաջ և հետո, երկար տարիներ միջազգային ասպարեզում շրջանառվում էր «Ազգային օջախի» գաղափարը: Նման հայահավաքման օջախի հավանական տարածք էր համարվում կամ Կիլիկիան, կամ էլ Հյուսիսային Սիրիան: Սակայն քանի որ այդպիսի ծրագիրը հակասում էր խորհրդային երկրի «բարեկամ» Թուրքիայի շահերին, ուստի Հայաստանի քաղաքական ղեկավարությունը պետք է դեմ լիներ Հայկական հարցի արծարծման ցանկացած դրսևորման, այդ թվում Կիլիկիայում կամ Սիրիայում «Հայկական օջախ»-ի ստեղծման գաղափարին: Հասկանալի է, որ ՀՍԽՀ քաղաքական ղեկավարությունը հարկադրված է եղել Կենտրոնի ուղղորդմամբ ցուցաբերել թուրքամետ դիրքորոշում, որպեսզի հանկարծ չխաթարվի խորհրդա-թուրքական բարեկամությունը:

Հայկոմկուսի քաղաքական երկվությունը (դուալիզմը) Հայկական հարցում դրսևորվում էր նրանով, որ նա մի կողմից իրավացիորեն քննադատում ու մերկացնում էր Անտանտի տերությունների գիշատիչ դեմքը, Լոզանի կոնֆերանսում Հայկական հարցը մանրադրամի վերածելը՝ հանուն իրենց շահերի, իսկ մյուս կողմից ներքուստ ուրախանում, ոչ մի ափսոսանք չէր արտահայտում այն բանի համար, որ այդ պայմանագիրը խարխլում էր հայ ազգային կուսակցությունների ու հատկապես ՀՅԴ տասնամյակներով Արևմուտքից ակնկալած ու փայփայած հույսերը և դրանով իսկ նպաստում՝ նրանց քաղաքական ազդեցության ու դիրքերի զգալի թուլացմանը ոչ միայն խորհրդահայ տարածքում, այլև գաղութահայության աչքում:

Հայ բոլշևիկ առաջնորդները ոչ թե ափսոսանք էին հայտնում, որ Հայկական հարցը չլուծվեց, այլ հրճվանք էին ապրում, որ դաշնակից երկրների՝ Թուրքիայի հետ կնքած Լոզանի պայմանագրով ձախողվեցին ՀՅԴ փայփայած ծրագրերը: Կնշանակի՝ հայ համայնավարների համար առաջնայինը ոչ թե համազգային նշանակութ-

յան քաղաքական խնդիրների լուծումն էր, այլ կուսակցական, դասակարգային, գաղափարական-քաղաքական շահը, հավատարմությունը, այսպես կոչված, պրոլետարական ինտերնացիոնալիզմի ու համաշխարհային հեղափոխության գաղափարին:

Բայց միևնույն ժամանակ մենք համարձակվում ենք արտահայտելու այն միտքը, որ կոմունիստական գաղափարաքաղաքական մենաստիրության պայմաններում հայ կոմունիստ ղեկավարը, անգամ Ալ. Մյասնիկյանի, Ս. Լուկաշինի, Ա. Հովհաննիսյանի տրամաչափի, չէր էլ կարող արտահայտել կուսակցական գաղափարական ուղեգծին խոտոր այլ միտք ու տեսակետ, հակառակ դեպքում կմեղադրվեր հակահեղափոխության, նացիոնալիզմի, «դաշնակիզմի», ժողովրդի թշնամի լինելու մեջ՝ դրանից բխող հետևանքներով: Մեր կարծիքով, այս գործիչներն իրենց սպեցիֆիկ քաղաքական անցյալով, այնուամենայնիվ, այս կամ այն չափով պահպանել են իրենց ազգային դիմագիծը: Իբրև կուսակցական պետական գործիչներ՝ նրանք պարտադրված էին իրենց զրավոր ու բանավոր ելույթներում հանդես գալ մայր կուսակցության կուսակցական գծին հավատարիմ դիրքերից: Մեր կարծիքով, սակայն ներքուստ, իրենց ընկալումներում նրանք մոռացության չէին մատնում ազգայինը, հայկականը:

Հայ քաղաքական կուսակցությունների քայքայման ու լուծարման կոմկուսի համար արտաքին նպաստավոր գործոնների թվում, գիտական շրջանառության մեջ տեսակետ կա, որ այդ խնդրի լուծմանն են ծառայեցվել Խորհրդային Ռուսաստանի կողմից կամ նրա հովանավորությամբ կնքված մի քանի միջազգային պայմանագրեր, մասնավորապես, Թուրքիայի և Իրանի հետ[1]:

---

[1] Տե՛ս **Մանուկյան Ա.Ա.**, *Քաղաքական կուսակցությունների լուծարումը Խորհրդային Հայաստանում 1920-ական թթ., (ակնարկներ)*, Ե., 2012, էջ 12–13:

Հայտնի է, որ ռուս-թուրքական՝ Մոսկվայի, 1921 թ. մարտի 16-ի (18-ի) և Կարսի՝ հոկտեմբերի 13-ի թուրք-անդրկովկասյան պայմանագրերի, համապատասխանաբար 8-րդ և 10-րդ հոդվածները, որոնցում կողմերը պարտավորվում էին իրենց տարածքներում արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք հավակնություն կունենան մյուս երկրի տարածքը կամ կառավարությունը զավթելու: Մոսկվայի պայմանագրի 8-րդ հոդվածը սահմանում էր, որ «Պայմանավորվող երկու կողմերը պարտավորվում են իրենց տարածքներում արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք կհավակնեն կառավարության դեր մյուս երկրի կամ նրա տարածքի մի մասի նկատմամբ, ինչպես նաև պարտավորվում է իրեն տարածքում արգելել այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարել մյուս երկրի դեմ: Նույն կերպ, Ռուսաստանը և Թուրքիան փոխադարձ պարտավորություն են ստանձնում նաև Կովկասի իսորհրդային հանրապետությունների վերաբերմամբ»[1]: Թուրք-անդրկովկասյան Կարսի՝ 1921 թ. հոկտեմբերի 13-ի պայմանագրի 10-րդ հոդվածը, կրկնելով Մոսկվայի պայմանագրի վերոնշյալ 8-րդ հոդվածը, վերահաստատում էր երկու, այս անգամ թուրք-անդրկովկասյան կառավարությունների անմիջական ենթակայության տակ գտնվող տարածքներում այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացման ու գոյության արգելումը, որոնք կհավակնեն կառավարության դեր մյուս երկրի ամբողջ տարածքի կամ մի մասի նկատմամբ[2]:

Ինչ վերաբերում է ռուս-իրանական 1921 թ. փետրվարի 26-ին ստորագրված պայմանագրին, ապա դրա 6-րդ հոդվածում, որտեղ փոքր այլ ձևակերպմամբ և ոչ իրավահավասար սկզբունքով նշվում

---

[1] Տե՛ս *Документы внешней политики СССР*, т. 3, М., 1959, с. 600:

[2] Տե՛ս **Հակոբյան Ա.**, *Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում*, Ե., 2010, էջ 291:

էր, որ եթե մի երրորդ երկրի կողմից Ռուսաստանի կամ նրա դաշնակից երկրների դեմ Պարսկաստանի տարածքը հարձակման բազա դարձվի, որը կսպառնա իրենց անվտանգությանը և ՌՍԴԽՀ կառավարության կողմից զգուշացումից հետո Պարսկաստանի կառավարությունը ինքը միայնակ չի կարողանա կանխել այդ վտանգը, ապա Ռուսաստանի կառավարությունը ինքնապաշտպանության նպատակով իրավունք կունենա իր զորքը մտցնելու Պարսկաստան: Տվյալ վտանգը վերացնելուց հետո Ռուսաստանի խորհրդային կառավարությունը պարտավորվում է իր զորքերը անհապաղ դուրս բերել Պարսկաստանի սահմաններից[1]:

Ինչպես տեսնում ենք, սույն պայմանագրերով Խորհրդային Ռուսաստանը փորձում էր իրավապայմանագրային մակարդակով արգելապատնեշ դնել Թուրքիայի և Իրանի տարածքներում առաջացող ամեն տեսակ իրեն անցանկալի, թշնամական համարվող ուժերի՝ դեպի Անդրկովկաս ներթափանցելու վտանգների դեմ: Իրանի պարագայում Ռուսաստանին միակողմանիորեն իրավունք էր վերապահվում անգամ զորք մտցնել այդ երկրի տարածք, ինչպես որ արեց 1941 թ. Երկրորդ աշխարհամարտի պայմաններում:

Ինչ վերաբերում է իրենց տարածքներում թշնամական համարվող կուսակցությունների ու խմբերի արգելմանը, ապա կոնկրետ Իրանում առկա հայկական հակախորհրդային որակվող կուսակցությունների ու խմբերի հանդեպ վերաբերմունքի հարցում կարելի է ասել, որ իրանական կառավարությունը գործնականում չի արգելել դրանց գոյությունն ու տեղաշարժերը իր տարածքում: Ավելին, նա չնկատելու տալով այս կամ այն կերպ հովանավորել է իր տարածքում հաստատված Հայաստանի և Անդրկովկասի հակախորհրդային կուսակցություններին և կազմակերպություններին՝ հակաբոլշևիկյան պայքարում:

---

[1] Տե՛ս *Документы внешней политики СССР*, т. 3, М., 1959, с. 538–539.

Հայտնի է, որ հատկապես Իրանի տարածքում՝ Թավրիզում, Թեհրանում և այլուր, ազատորեն գործել են հայ քաղաքական կուսակցությունների կառույցներ, խմբեր, հրատարակչություններ, որոնք զբաղվել են նաև հակախորհրդային գործունեությամբ, դրանց ներկայացուցիչները հաճախ խախտել են հայ-իրանական սահմանը և առանձնապես չեն հետապնդվել իրանական իշխանությունների կողմից: Մինչդեռ խորհրդա-թուրքական պայմանագրի ու սահմանախախտումների պարագայում խնդիրը եղել է շատ ավելի բարդ:

Այսպիսով՝ խորհրդային պետական-կուսակցական ապարատը ջանադրորեն օգտագործել է արտաքին ու ներքին բոլոր ռեսուրսները իրեն անցանկալի ու թշնամական համարվող բոլոր քաղաքական խմբերը և կազմավորումները քայքայելու և վերացնելու համար: Այդ ամենով հանդերձ՝ խորհրդային երկրում ոչ պրոլետարական ու թշնամական որակվող կուսակցությունների վերացման, քաղաքական դաշտի մաքրման և բոլշևիկյան մենիշխանական կառավարման համակարգի հաստատման գլխավոր ազդակը գալիս էր Կենտրոնից՝ ՌԿ(բ)Կ ԿԿ-ից ու Քաղբյուրոյից՝ խորհրդային երկրում, հնարավորության դեպքում նաև համաշխարհային հեղափոխության հաղթանակի դեպքում ամբողջ աշխարհում անբաժան իշխելու նրա գաղափարաքաղաքական ու. ծրագրային հավակնոտ պլաններից ու հիմնադրույթներից:

Ռուսաստանում քաղաքացիական կռիվների հաղթական ավարտից հետո ավելի առարկայական ու կոնկրետ դարձավ կուսակցությունների լուծարումը խորհրդային պետության ամբողջ տարածքում, այդ թվում նաև ազգային շրջաններում ու Հայաստանում: Համառուսաստանյան Արտակարգ հանձնաժողովը (Չեկան) 1921 թ. հունիսի 4-ին մշակել էր Ռուսաստանի ընդդիմադիր ամենաազդեցիկ էսէռների և մենշևիկների կուսակցությունների վերացման պլանի նախագիծ: Այդ պլանի և իրականացվող սցենարի նախաձեռ-

նությունը գալիս էր Վ. Լենինից: Պարզվում է, որ մինչ այդ՝ 1921 թ. ապրիլի 21-ին, Չեկան Ֆ. Ձերժինսկու անունով հետևյալ բովանդակությամբ քաղվածք էր ստացել Վ. Լենինի կողմից՝ Վ. Մոլոտովին ուղղված գրությունից. «Հանձնարարել ՀԱՀ-ին մշակելու կանոնավոր պլան, մասնավորապես. 1) վերացնել էսէռներին, 2) նույնը՝ մենշևիկներին, 3) մաքրել կուսակցությունը անկայուն կոմունիստներից և այլն»[1]: Լենինի հանձնարարականը իրականացնելու համար Չեկան մշակեց զանգվածային գործողությունների հանգամանալի պլան-ժամանակացույց: Կազմված պլանը գործնականում վերաբերում էր ոչ բոլշևիկյան բոլոր տիպի, այդ թվում ազգային բոլոր կուսակցությունների վերացմանը: Հենց այդ պլանն էլ գործադրվեց խորհրդային ամբողջ տարածքում: Գրեթե համանման սցենարով ամբողջ խորհրդային տարածքում անցկացվեցին կուսակցությունների հրապարակային դատեր, լուծարման համագումարներ, դատական գործընթացներ, բանտարկություններ ու աքսոր:

4. ՀՅԴ 1921 թ. հրապարակային դատը

Իշխանության ղեկը ստանձնած Հայկոմկուսն իրեն հակառակորդ ու թշնամական համարվող կուսակցությունների ու զաղափարաքաղաքական հոսանքների ու առաջին հերթին ՀՅԴ դեմ պայքարի ձևեր էր ընտրել՝ պետանվտանգության մարմինների կողմից նրանց հետապնդում-հալածանքները, նրանց գաղտնի կազմակերպությունների ու խմբերի բացահայտումը և ջախջախումը, այդ կուսակցությունների ներսից պառակտումը, դատապրոցեսների կազմակերպումը, նրա գործիչների բանտարկությունները ընդհուպ մինչև գնդակահարությունները:

---

[1] **Гимпельсон Е.Г.**, *Путь к однопартийной диктатуре*, տե՛ս «Отечественная история», РАН, М., 1994, N 4–5, с. 106.

Հայկոմկուսի ԿԿ-ը և ՀՍԽՀ կառավարությունը (ԺԿԽ) ՀՅԴ քաղաքական ասպարեզից վերացնելու համար օտագործում էր պայքարի գաղափարական, կազմակերպչական, քարոզչական ու զինական ողջ զինանոցը: Այդ նպատակով կազմակերպվում էին հակադաշնակցական հանրահավաքներ, միտինգներ, ժողովրդին ուղղված կոչեր և այլն:

Այլախոհ կուսակցությունների ասպարեզից վերացման քարոզչական գործուն միջոցներից մեկը համարվեց հրապարակային դատավարությունների և «ինքնալուծարման» համագումարների կազմակերպումը: Հասկանալի է, որ դրանք հրահանգավորվում և ուղղորդվում էին Կենտրոնից (Մոսկվայից): Այդ գործընթացը համակարգված բնույթ ստացավ քաղաքացիական պատերազմի ավարտից հետո և ընդգրկեց ամբողջ խորհրդային երկիրը: ՌՍԴԽՀ 1918 թ. հուլիսի 10-ին ընդունված սահմանադրության մեջ, թեև չէր խոսվում խորհրդային երկրում այլ քաղաքական կազմակերպությունների արգելման մասին (նույնը բնականաբար կրկնված է ՀՍԽՀ 1922 թ. փետրվարի 3-ին ընդունված սահմանադրության մեջ), սակայն ռուսականի հոդված 23-ում ակնարկվում էր, որ «Առաջնորդվելով ամբողջ բանվոր դասակարգի շահերով՝ ՌՍԴԽՀ-ը զրկում է իրավունքներից այն բոլոր անհատ քաղաքացիներին ու առանձին խմբերին, որոնք կարող են օգտագործվել ի վնաս սոցիալիստական հեղափոխության»[1]:

Հայաստանի խորհրդայնացումից ու հատկապես 1921 թ. Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո ՀՅԴ-ն ժողովրդի աչքում վարկաբեկելու նպատակով, Ռուսաստանի այլախոհ կուսակցությունների օրինակով, նրա դեմ հրապարակային դատ նախապատրաստվեց ու անցկացվեց:

---

[1] Տե՛ս *Конституция (Основной закон) Российской Социалистической Федеративной Советской Республики*. М., 1918, с. 12.

Հաշվի առնելով, որ խորհրդային իշխանության նկատմամբ առաջվել սառը և օտարոտի վերաբերմունք ունեին հատկապես արևմտահայ գաղթականությունը, և Փետրվարյան ապստամբության ժամանակ հիմնական ընդվզող տարրը գաղթականությունն էր, որը մեծ չափով գտնվում էր ՀՅԴ ազդեցության տակ, խորհրդային իշխանության նկատմամբ նրանց վստահությունը բարձրացնելու համար 1921 թ. մայիսի 21-ին Թալինում կայացավ Էջմիածնի գավառի տաճկահայ աշխատավորության 1-ին համագումարը: Հասկանալի է, որ այն կազմակերպել էին ՀԿ(բ)Կ ԿԿ-ը և նրա հասարակական ակտիվիստները: Համագումարը ողջույնի հեռագիր է ուղարկում Հայկոմկուսի ԿԿ-ին, Վ. Լենինին և Կարմիր բանակի պետ Լ. Տրոցկուն[1]: Հակադաշնակցական ոգով նմանատիպ համագումարներ կայացան Թիֆլիսում, Երևանի, Ղամարլուի, Ալեքսանդրապոլի և այլ շրջաններում: Այսպես, 1921 թ. հունիսի 25-ին Ալեքսանդրապոլում անցկացվեց գավառի արևմտահայերի 1-ին համագումարը, որին մասնակցել էին 95 պատգամավորներ: Համագումարը տաճկահայ գաղթականության անունից կոչ ընդունեց, որով դիմում էր՝ «երես դարձնել Դաշնակցությունից, որն իր ավանտյուրիստական քաղաքականությամբ աղետներ բերեց հայ ժողովրդին»[2]: Հունիսի 30-ին հակադաշնակցական ուղղվածության բազմամարդ միտինգ կայացավ Երևանում՝ Բանվորական տանը, մայրաքաղաքի արևմտահայության անունից: Զեկուցել է Ա. Կարինյանը: Նա հայտարարում է, որ «գաղթականությունը երես է շրջել Դաշնակցությունից»[3]: Օգոստոսի 10-ին դարձյալ հակադաշնակցական կարգախոսներով համագումար հրավիրվեց Էջմիածնի գաղթականության շրջանում: Հա-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 122, թ. 98:

[2] Նույն տեղում, թ. 108:

[3] «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» (այսուհետև՝ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան»), Ե., 1960, էջ 539:

մաժոռովի նպատակը արևմտահայ գաղթականության կապերի կտրելն էր Դաշնակցություն կուսակցության ազդեցությունից և կողմնորոշելը խորհրդային իշխանության կողմը[1]: Զանգեզուրում դաշնակցականների դեմ պայքարի կապակցությամբ հուլիսին բանվորներին, կարմիր զինվորներին և աշխատավոր գյուղացիներին ուղղված Հայկոմկուսի ԿԿ-ի դիմում-կոչում ասվում էր՝ «Թո՛ղ վերջնականապես կործանվի Դաշնակցությունը»[2]: Դաշնակցության դեմ, 1921 թ. հուլիսի 4-ին պայքարի կոչ էր ընդունել Էջմիածնի անկուսակցական աշխատավոր գյուղացիների համագումարը[3]:

Հակադաշնակցական հանրաժողովներ են գումարվել գրեթե բոլոր գավառներում ու խոշոր բնակավայրերում, իսկ դրանց կազմակերպիչը հասկանալի է, որ կոմկուսն էր, գավառային և քաղաքային իշխանության մարմինները: Նման մեթոդներով փորձ էր արվում թուլացնել ՀՅԴ սոցիալական հիմքերը, քայքայել նրա շարքերը: Հակադաշնակցական քարոզչական այդ արշավը կազմակերպվում էր նախապատրաստելու համար հրապարակային դատ ու լուծարման գործընթացներ ՀՅԴ դեմ՝ այն Հայաստանից, իսկ հնարավորության դեպքում նաև՝ գաղթաշխարհից վերացնելու նպատակով:

1921 թ. Փետրվարյան «ապանտյուրան» և Զանգեզուրի դրամատիկ իրադարձությունները միայն բավական էին, որպեսզի Հայկոմկուսի ԿԿ-ը և կառավարությունը պայքարի՝ գաղափարական, կազմակերպչական, քարոզչական ու վարչահիրավական ողջ զինանոցն ուղղեր ՀՅԴ դեմ՝ նրան քաղաքական ասպարեզից վերացնելու համար:

ՀՍԽՀ Արտակարգ հանձնաժողովի (նախագահ Շ. Ամիրխանյան) 1921 թ. երկրորդ կեսի վերաբերյալ ներկայացրած գաղտնի մի

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 122, թ. 108:

[2] «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան», էջ 548:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 448–449:

ամփոփագրում հայտնում էր, որ Դաշնակցությունը շարունակում է իր գործունեությունը հատկապես քաղաքներում: Նրա ազդեցությունը բավականին ուժեղ է հատկապես Աշտարակի և Էջմիածնի շրջաններում: «Հայաստանի դաշնակները,- կարդում ենք փաստաթղթում,- կապեր են պահպանում իրենց կենտրոնի հետ, որը գտնվում է Թավրիզում: Մյուս կուսակցությունների՝ Էսէռների, մենշևիկների, հայ ժողովրդականների գործունեությունը աննկատ է»[1]: Չեկայի մեկ այլ տեղեկատու բյուլետենից իմանում ենք, որ Դաշնակցություն կուսակցության բջիջները ակտիվ են Երևան քաղաքում: Սակայն դրանք գործում են մեծ զգուշությամբ, ժողովներ են գումարում քաղաքից դուրս՝ այգիներում և այլուր[2]:

Հայկոմկուսի ԿԿ-ի քարտուղարության արդեն 1921 թ. նոյեմբերի 22-ի նիստում լսվել է Դաշնակցություն կուսակցության նկատմամբ **հրապարակային դատ** կազմակերպելու մասին հարցը և որոշվել՝ Նոյեմբերյան հեղափոխության 1-ին տոնակատարության առթիվ, իբրև միջոցառում, առաջարկել կենտրոնական հանձնաժողովին այդ դատը կազմակերպել որքան կարելի է բովանդակալից[3]: Եվ դեկտեմբերի սկզբներին Հայկոմկուսը թատերականացման նմանվող հրապարակային դատ կազմակերպեց ՀՅԴ կուսակցության դեմ:

Դատավարությունը ընթացավ 1921 թ. դեկտեմբերի 2-ից – 13-ը Երևանի Բանվորական ակումբում (նախկին խորհրդարանի դահլիճում)՝ Դր. Տեր-Սիմոնյանի նախագահությամբ: Դատարանի անդամներն էին Ա. Խաչյանը, Հ. Ազատյանը, Ս. Մարտիկյանը և Պ. Մակինցյանը: Իբրև հասարակական մեղադրողներ՝ Ա. Երզնկյանը, Ս. Մարգարյանը և Ա. Ղարագյոզյանը, պաշտպանությունը հանձն էին առել Ավիս Նուրիջանյանը և Աշոտ Հովհաննիսյանը: Մեղադրյալի

---

[1] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 33, թ. 89:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 154:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 43, թ. 21:

աթոռին, հանձին Հ. Յաղուբյանի, նստած էր Դաշնակցություն կուսակցությունը[1]:

Դատարանի նախագահ Դր. Տեր-Սիմոնյանը ՀՅԴ դեմ ներկայացրեց 15 կետից բաղկացած մեղադրական: Նա իր ելույթում, ի թիվս այլ, հիմնականում անհիմն մեղադրանքների, Դաշնակցություն կուսակցությունը մեղադրեց ցարական կառավարության գործակալ լինելու մեջ: Իրականում դա անհիմն զրպարտանք էր, որովհետև, ընդհակառակը, ՀՅԴ համարվում էր 20-րդ դարասկզբին ցարական բռնավարչակարգի դեմ պայքարող ամենագործուն ուժերից մեկը: Այն առարկայական դարձավ հատկապես Հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին օրենքի ընդունումից հետո: Իրականում սկսած Հայ եկեղեցու կալվածքների ու գույքի բռնագրավման մասին հակահայ օրենքի ընդունումից ի վեր՝ ՀՅԴ-ն ինքնակալության դեմ ամենից ավելի անհաշտ ու հետևողական պայքարող ազդեցիկ քաղաքական ուժերից էր, գուցե բոլշևիկներից ավելի ազդեցիկ ու առարկայական:

Դարասկզբին ՀՅԴ ընդունած Կովկասյան նախագծով Դաշնակցությունը փաստորեն կոչվ էր մղում երկու ճակատով. Թուրքիայի դեմ՝ ազգային-ազատագրական, իսկ Անդրկովկասում՝ ազգային ու սոցիալ-դասակարգային (սոցիալիստական): Թուրքական իրականության մեջ պայքարի միակ անհրաժեշտ ու արդյունավետ ձևն այն էր, որը որդեգրել էր Դաշնակցությունը: Երկու դեպքում էլ նա հարվածներ էր ստանում՝ ելույթները խեղդվում էին արյան մեջ, առանց խտրականության նրա գործիչներն ու ազատամարտիկները հետապնդվում ու հալածվում էին, բանտարկվում ու աքսորվում: ՀՅԴ ազատամարտիկները, բացի սուլթանական բռնավարչակարգից, մարտնչում էին նաև ցարական ինքնակալության դեմ, ռուս-թուր-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 199, թ. 2:

քական սահմաններին և այլուր զոհվում էին տասնյակներով ու հարյուրներով:

Հիմնագուրկ էր նաև Դր. Տեր-Սիմոնյանի բնութագիրը՝ Դաշնակցությանը հայ լիբերալ բուրժուազիայի և առևտրական կապիտալի ծնունդ ու հարազատ զավակ համարելը: Այս կապակցությամբ հանդիպակաց հարց է ծագում. եթե, իրոք, ՀՅԴ հայ բուրժուազիայի կուսակցություն էր, ապա վերջինս ինչո՞ւ նյութական ու ֆինանսական միջոցներ չէր հատկացնում Տաճկահայ ազատագրական պայքարի համար, և Դաշնակցությունը նման միջոցներ հայթայթելու նպատակով ստիպված դիմում էր նույնիսկ բռնի, պատմությանը հայտնի «Փոթորիկ» գործողությանը: «Հայ բուրժուազիան,- դատական իր ելույթում նշել է պաշտպան Աշ. Հովհաննիսյանը,- ոչ միայն քաղաքական, այլև նյութական օգնություն ցույց չի տվել Դաշնակցությանը: Դաշնակցությունը հայ բուրժուազիայից դրամներ էր կորզում տեռորի միջոցով, կամավոր չէր տալիս»[1]:

Դատարանի նախագահի՝ ՀՅԴ-ին հասցեագրած մեղադրանքներից մեկն էլ այն է, որ, իբր, Առաջին աշխարհամարտում Դաշնակցությունը, գործիք դառնալով ցարիզմի ձեռքում, կազմակերպել է կամավորական խմբեր և, իբր, պատճառ դարձել հայկական կոտորածների, Թուրքիայի հայաջինջ քաղաքականությանը, Անդրկովկասը Ռուսաստանից անջատելուն և այլն[2]: Հայոց մեծ եղեռնի ավելի քան հարյուրամյա հեռավորությունից ամենքին հայտնի է, որ երիտթուրք պարագլուխները արևմտահայությանը բնաջնջելու, երկիրը հայազրկելու և այն յուրացնելու վերաբերյալ գաղտնի դիվային որոշումները կայացրել էին դեռ Սալոնիկի՝ 1910–1911 թթ. իրենց կուսակցության գաղտնի ժողովներում:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 199, թ. 29:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 3–9:

Եթե հայ ազգային կամավորական խմբերը մասնակցել են Կովկասյան ճակատի ռազմական գործողություններին, ապա դրա նպատակը ոչ թե ռուսական ցարիզմին ծառայելն էր, այլ իրենց նվիրական մասնակցությամբ սեփական հայրենիքն ու հարստահարվող ժողովրդին ազատագրելն էր թուրքական բռնակալական լծից և ոչ թե աշխարհամարտի տարիներին բոլշևիկ-լենինյանների առաջ քաշած դավաճանական հայտնի կարգախոսներով՝ ռազմաճակատում հայ, ռուս, թուրք և այլ զինվորների եղբայրություն քարոզելը, զենքն ուղղելը սեփական կառավարության դեմ և այլն: Ինչ վերաբերում է Դաշնակցության կողմից Անդրկովկասը Ռուսաստանից անջատելուն, ապա չկա ավելի մեծ կեղծիք, քան այդ գրպարտանքը:

Ներկայումս հրապարակված Անդրկովկասյան կոմիսարիատի և Սեյմի նիստերի արձանագրություններից ու բազում այլ փաստաթղթերից դժվար չէ համոզվել, որ, ի տարբերություն վրաց մենշևիկների ու թաթար մուսավաթականների, ՀՅԴ խմբակցությունը, թերևս, միակ քաղաքական ուժն էր, որ այն ժամանակ, զգալով արևելահայության գլխին կախված թուրքական մահացու վտանգը, Անդրկովկասյան սեյմի լուծարման մինչև վերջին օրը դեմ էր եղել Անդրկովկասը Ռուսաստանից անջատելուն, անգամ հայտարարությամբ բողոքել է դրա դեմ, փորձել է դուրս գալ Անդրկովկասյան կոալիցիոն կառավարության կազմից: Անգամ «Մայիսի 28»-ի Հայաստանի անկախության վերաբերյալ հայտնի հայտարարագրում Ռուսաստանից իրավաբանորեն իր անջատվածությունը ցույց չտալու համար «անկախություն» բառը չի գործածված: Վերոնշյալ մեղադրանքները թուրքական պատմագրությանը համահունչ բոլշևիկների սկզբնավորած տեսակետներ են, որոնք շարունակում են շրջանառվել մինչ օրս, անգամ ներկայիս հայ նեոբոլշևիկ որակվող քաղաքական շրջանակների կողմից:

Ավելի հաճախ կեղծելով պատմությունը և խեղաթյուրելով իրականությունը՝ ցարական սատրապների նման, Հայաստանի բոլշևիկյան իշխանությունը ևս դատական գործ սարքեց ՀՅԴ դեմ՝ բեմադրելով մի իսկական թամաշա-ներկայացում:

Պատմական զուգահեռի կարգով հիշեցնենք, որ ավելի վաղ «ՀՅԴ գործ» անունով մի դատական գործ էլ ցարական իշխանությունը կազմակերպեց Դաշնակցության դեմ: Հայտնի է, որ 1905–1907 թթ. համառուսաստանյան առաջին հեղափոխության պարտությունից հետո ցարական իշխանությունները նշանառության տակ էին վերցրել ՀՅԴ՝ նպատակ դնելով բանտ-աքսորի միջոցով ջախջախել ու արմատախիլ անել այդ կուսակցությանը: Հենց նման հանձնարարականներ ստանալով էր, որ աշխատում էր գործի պատասխանատու քննիչ Ն. Լիժինը: 1908–1912 թթ. ընթացքում հիմնականում կեղծ մեղադրանքներով 40-հազարէջանոց դատական գործ կազմվեց և մի քանի ամիս շարունակ՝ 1912 թ. հունվարի 17-ից մինչև մարտի 22-ը, Սանկտ Պետերբուրգում դատավարություն անցկացրեց, որը պատմության մեջ հայտնի է «Հ.Յ. Դաշնակցության գործ» անունով: Հիրավի, այդ դատը դասվում է Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքական մեծ դատերի թվին[1]: Դատավարությանը մասնակից և մեղադրյալ Հակոբ Սառիկյանի հայտնած տվյալներով չորս տարում 2000-ից ավելի տարբեր խավի ու զբաղմունքի (գրականագետ, քահանա, ուսուցիչ, առևտրական, երկրագործ, արհեստավոր, բանվոր և այլն) մարդ կալանավորվեց ու հարցաքննվեց[2]: Սակայն ցարիզմն իր ուզած արդյունքին չհասավ:

Դարձյալ պատմական զուգահեռ անցկացնելով և գալով մեր ժամանակները՝ հիշեցնենք, որ Հայաստանի երրորդ հանրապետության օրոք՝ 1990-ական թթ. կեսերին, ՀՀՇ-ական իշխանությունը

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 10, թ. 1:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 2–3:

ները ՀՅԴ-ի դեմ ուղղված՝ «30+1»-ի և «Դրո կառույցի» գործերով դատախաղ-ներկայացումներ կազմակերպեցին, որովհետև Դաշնակցության աճող կշռից ու ազդեցությունից կառավարող ՀՀՇ-ն՝ իշխանությունը կորցնելու վտանգ տեսավ:

Այսպիսով՝ ստացվում է, որ 20-րդ դարում իրար հաջորդած քաղաքական տարբեր վարչակարգերի կողմից ՀՅԴ-ի դեմ առնվազն երեք անգամ քաղաքական բնույթի դատախաղեր (դատապրոցեսներ) են կազմակերպվել:

Արդ, ցարիզմի նման 20-ական թթ. Դաշնակցությանը դատում էր նաև Հայկոմկուսը: Համանման եղանակով դատարանի նախագահ Դր. Տեր-Սիմոնյանը, ՀՅԴ դեմ մեկ տասնյակից ավելի մեղադրանքներ ներկայացնելով, առաջարկեց պատժի առավելագույն չափ. այն է՝ «իբրև կուսակցություն՝ Դաշնակցությունը Հայաստանի արևի տակ տեղ չունի և մահվան պիտի դատապարտվի»[1]: Դատավարությունում հանդես եկած հասարակական մեղադրող Ար. Երզնկյանը, դարձյալ կրկնելով Դր. Տեր-Սիմոնյանի մտքերը՝ ցեղասպանության մեղքը ՀՅԴ-ի վզին փաթաթելու, Դաշնակցությանը բուրժուական կուսակցություն համարելու և այլ հարցերում, առաջարկում է՝ «Դաշնակցությանը դատապարտել բարձրագույն պատժի»[2]:

Դատարանում ելույթով հանդես է գալիս հասարակական մեղադրող, Արցախում և Սյունիքում իր ջարդարար գործողություններով հայտնի Արմենակ Ղարսգյոզյանը: Սա էլ էր գտնում, որ Դաշնակցությունն իր քաղաքական բնույթով եղել է բուրժուական կուսակցություն: Նրա մեղադրանքներից մեկն էլ այն է, որ Դաշնակցությունը մեղավոր է Շուշվա շրջանի հայության կոտորածի հա-

---

[1] Տես ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 199, թ. 9–10:
[2] Նույն տեղում, թ. 24–25:

մար: Կոմունիստ Ա. Ղարագյոզյանը ևս Դաշնակցություն կուսակցությանը դատապարտում է ամենաբարձր պատժի[1]:

Դատարանի նախագահ Դր. Տեր-Սիմոնյանի, հասարակական մեղադրող Ար. Երզնկյանի, Ա. Ղարագյոզյանի և մյուսների ելույթներում կարմիր թելի պես անցնում էր այն գաղափարը, որ արևմտահայության բնաջնջման (այսինքն՝ Հայոց ցեղասպանության) համար մեղավոր է ՀՅԴ: Ստացվում է, որ դահիճի փոխարեն զոհն է մեղավոր: Հայ ազգային քաղաքական կուսակցությունները սևացնելու համար տասնամյակներ շարունակ խորհրդահայ պատմագրության մեջ զարգացվել է այն թուրքահաճո հայեցակարգը, թե Հայոց ցեղասպանության համար մեղսակից են գլխավորապես հայ ազգային քաղաքական կազմակերպությունները:

Նշենք, որ հրապարակային սույն դատավարությունն ու կայացրած դատավճիռն իրենից ներկայացնում էր ոչ այնքան քրեական, որքան քաղաքական-բարոյական շոու-ներկայացում, նպատակը՝ ՀՅԴ հրապարակով վարկաբեկել և հող նախապատրաստել նրա լուծարման համար:

Ուշագրավ է, որ հրապարակային դատավճիռը ներկայացնելու ժամանակ դատարանի անդամ, հասարակական մեղադրող ու դատապաշտպան, ընդհանուր թվով մեկ տասնյակից ավելի պաշտոնական անձանցից, թերևս, միակ մարդը, որ, գիտականորեն ապացուցելով ու իրավաբանորեն հիմնավորելով, դեմ է արտահայտվել դատարանի վճռին, հանրային դատապաշտպանի պարտավորություն ստանձնած, հետագա մեծանուն պատմաբան և կուսակցական-պետական գործիչ **Աշոտ Հովհաննիսյանն** էր: Նա իր ելույթում Դաշնակցության սոցիալ-դասակարգային ծագման հարցում հերքում է նախընթաց ելույթ ունեցողների կողմից և ընթերցված մեղադրականում Դաշնակցությանը հայ **բուրժուական** կուսակցություն որակում

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 25:

տալը և բնորոշում է, որպես հայ մանրբուրժուական, գյուղացիական, ռուս նարոդնիկական տիպի կուսակցություն: Նա Դաշնակցությանը բուրժուական համարելը անհեթեթ էր համարում ոչ միայն գաղափարական, այլև, ինչպես արդեն ասվեց, անգամ նյութական աջակցություն ցույց չտալու տեսակետից՝ հիմնավորելով ազատագրական պայքարի համար հայ բուրժուազիայից ահաբեկման ճանապարհով դրամ կորզելու մի շարք փաստերով[1]:

Միաժամանակ նա հիմնովին սխալ էր համարում այն տեսակետը, երբ փորձ է արվում Թուրքիայի ջարդարարական քաղաքականությունը կապել չեթնիկների (հայդուկների) գործունեության հետ: «Չէ՞ որ,- պարզաբանում էր պատմաբան Ա. Հովհաննիսյանը,- հայդուկային շարժումը սկսվել էր նախքան երևան կգար Դաշնակցությունը (Ժիրայր, Հունո, Ազրիպասյան, Գոլոշյան և այլք)»[2]:

ՀՅԴ գործով պաշտպանն իր ամփոփիչ ելույթում տալիս է Դաշնակցության գործունեության իրավական գնահատականը՝ նշելով, որ Դաշնակցության կատարած «հանցանքները» կատարվել են մի հասարակարգի շրջանում, որ ներկայումս գոյություն չունի, մինչդեռ յուրաքանչյուր հանցանք պետք է քննվի այն իրավակարգի պայմաններում, որտեղ գործել է: Դրա համար յուրաքանչյուր հեղափոխությանը հաջորդում է քաղաքական համաներում: Այլ խոսքով, այդ դատավարությունը նա իրավացիորեն համարում էր ժամանակավրեպ:

Ի պատիվ Ա. Հովհաննիսյանի՝ փաստենք, որ նա այդ դատավարությունը որակել է նաև որպես «թյուրիմացություն»՝ վերջում հավելելով այն ժամանակ շատերի համար դժվար կռահելի ու ըմբռնելի հետևյալ խորիմաստ միտքը. «**Դաշնակցության գործունեությունը այսօր հայոց պատմության սեփականությունն է, և այդ գործունեությունը պետք է ենթակա լինի մի ուրիշ դատի, ավելի ահեղ, քան նեղկա**

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 199, թ. 29:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 27–28:

դատը, դա պատմության դատն է»[1]: Իրոք, պատմության ահեղ դատը, պատմության փորձը և պատմաքաղաքական հետագա դեպքերն ու իրադարձությունները ցույց տվեցին, թե իրականում ով էր ճշմարիտը, և ինչպես պատմությունը վերջին հաշվով ազգային զաղափար ու նկարագիր ունեցող այդ կուսակցությանը արդարացրեց:

5. ՀՅԴ դեմ քաղաքական հետապնդումների ու բռնաճնշումների այլ դրսևորումները 1920-ական թթ. սկզբներին

Փետրվարյան 1921 թ. հակախորհրդային ապստամբության ճնշումից հետո, հանձին Հայաստանի նոր ղեկավարության ընդունած ներման, համաներման և այլ որոշումների, քաղաքական բռնաճնշումները փոքր-ինչ մեղմվեցին: Բայց հետագայում դրանք նոր թափ ստացան, քանզի ռազմավարական խնդիր էր դրված աստիճանաբար լուծարել ու վերացնել Խորհրդային Հայաստանում ընդհատակում կամ կիսաընդհատակում գործող «հակահեղափոխական» բոլոր կուսակցությունները, փակել արտասահմանից Խորհրդային Հայաստան մտնող բոլոր անօրինական, զաղտնի սահմանախախտների, կուսակցական կապավորների և բանդիտական համարվող մարդկանց ու խմբերի մուտքերը:

«Совершенно секретно: Лубянка-Сталину о положении в стране (1922–1934)» 2001–2004 թթ. Մոսկվայում հրատարակված բազմահատոր ժողովածուից Կովկասի ու Հայաստանի վերաբերյալ քաղված պետական զաղտնի քաղաքական ամփոփագրերի ու տեսությունների նյութերից պարզվում է, որ Կովկասում առկա հակախորհրդային կուսակցություններից և կազմակերպություններից առավել ազդեցիկ ու վտանգավոր վրաց մենշևիկների կողքին նշված է Դաշնակ-

[1] Նույն տեղում, թ. 30–31:

ցություն կուսակցության անունը: Տեղեկացվում է, որ նրա կենտրոնը գտնվում է Պարսկաստանում: Թավրիզում է գտնվում ՀՅԴ Արևելյան բյուրոն: Միաժամանակ հայտնվում է, որ 1922 թ. կեսերին Բյուրոն դադարեցրել է իր գոյությունը և գործերը հանձնել ՀՅԴ ԿԿ-ին: ԿԿ-ի կողքին գոյություն ունի դաշնակցականների վտարանդի Հայաստանի կառավարությունը[1]: Խոսքը 1921 թ. հուլիսին Լեռնահայաստանի Հայաստանին միացումից հետո, Հայկական հարցին քաղաքական նկատառումով ընթացք տալու նպատակով, հյուրընկալ Պարսկաստան անցած Հայաստանի տարագիր կառավարության մասին է՝ խորհրդանշական երեք նախարարներով (Ս. Վրացյան, Հ. Տեր-Հակոբյան և Վ. Մինախորյան), որը լուծարվեց Հայկական հարցի (Լոզանում) փակվելուց հետո՝ 1923 թ. աշնանը[2]:

Երիտասարդ դաշնակցական գործիչ Աշոտ Արծրունին (Տուլյանը), որը 1920-ականի կեսերին Հայաստանից անցել էր արտասահման, տեղեկացնում էր, որ 1921 թ. բանտարկված էին բազմաթիվ ուսանողներ, գյուղացիներ և մտավորականներ: Իսկ մի խումբ սպաների էլ ձերբակալել էին «Մեր հայրենիքը» երգելու համար: Հայտնվում է, որ աշնանը սկսվեցին նոր, ավելի լայն զանգվածային ձերբակալություններ: Ինչպես արդեն ասվել է, ձերբակալություններ կատարվեցին 1922 թ. ամռանը Թիֆլիսում տեղի ունեցած Ջեմալ փաշայի ահաբեկման առիթով[3]:

Փետրվարից հետո էլ շարունակվեց գաղափարական, կազմակերպական, գործնական պայքար Դաշնակցության դեմ՝ նրան լիակատար արմատախիլ անելու նպատակով: Այսպես՝ ՀՍԽՀ խորհուրդների 1-ին համագումարում (1922 թ. հուվար-փետրվար) շատ

---

[1] Տես *Հայաստանը սկսական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)*, Ե., 2008, էջ 28:

[2] Տես **Իրազեկ Հ.(Յ)**, *Մոտիկ անցեալից*, Պէյրութ, 1956, էջ 110:

[3] Տես *Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության*, հ. Դ, Աթենք, 1995, էջ 253:

ելույթ ունեցողներ նշում էին, որ իբր ծպտյալ դաշնակցականները թափանցել են պետական, տնտեսական և այլ մարմիններ, և որ երկրի առջև ծառացած դժվարությունների, անհաջողությունների պատճառը նրանք են, ուստի հարց էին բարձրացնում ազատվել նրանցից[1]:

Այս կապակցությամբ տեղին է անել հետևյալ դատողությունը, որ ամեն անգամ, երբ սոցիալիստական շինարարության ասպարեզում կոմկուսը, պետական իշխանության մարմինները դժվարությունների կամ ձախողումների էին հանդիպում, որպես կանոն, իրենց անկարողությունը սքողելու համար, իբրև քավության նոխազ, այդ դժվարությունների մեղքը բարդում էին «դասակարգային թշնամու՝ «դաշնակների», «կուլակների» և այլ «վնասարար, քայքայիչ տարրերի» վրա:

Խորհուրդների այդ նույն համագումարում Ժողկոմխորհի՝ հունվարի 30-ին տրված հաշվետվության մեջ նախագահ Ալ. Մյասնիկյանը ՀՅԴ հանդեպ վարվելիք քաղաքականության հարցում նշում էր. «մենք չենք կարող ազատություն տալ դաշնակներին, որովհետև նրանք քարուքանդ կանեն մեր երկիրը»[2]: Մյասնիկյանի խոսքերից երևում է, որ իրենց գլխավոր հակառակորդը Դաշնակցությունն է: Իսկ ԿԿ-ի քարտուղար Ս. Լուկաշինը ՀԿ(բ)Կ 1-ին համագումարի առթիվ 1922 թ. հունվարի 25-ին տպագրված հոդվածում մասնավորապես նշում էր, որ հարկավոր է քայքայել և վարկաբեկել Դաշնակցությունը նաև «կարմիր գծից» այն կողմ՝ արտասահմանում, ուր նրա տեղեկությամբ ՀՅԴ-ն գաղութահայ «լայն խավերում զգալի արմատներ ունի»[3]: Այստեղ տեղին է հիշել Ե. Չարենցի «Լե-

---

Տե՛ս *ՀՍՍՀ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների խորհուրդների առաջին համագումարը (արձանագրություն)*, Ե., 1922, էջ 67–68:

[2] Նույն տեղում, էջ 16:

[3] **Լուկաշին Ս. (Սրապիոնյան)**, *Հոդվածներ, զեկուցումներ, ճառեր*, Ե., 1986, էջ 21–22, «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան», էջ 560,

նին ու Ալին» հայտնի բալլադը, ուր դարձյալ խոսվում էր «Կարմիր գծի» մասին:

ՊՔՎ 1923 թ. հունվարյան մի ամփոփագրում տեղեկացվում է, որ «դաշնակների գործունեությունը Հայաստանում սահմանափակվում է ընդհատակյա աշխատանքով»[1]: Մեկ ուրիշ ամփոփագրում նշվում է, որ «Ամբողջ հանրապետությունում նկատվում է դաշնակների կազմակերպական աշխատանքների ուժեղացում: Ամենուրեք տեղի են ունենում դաշնակների ժողովներ: Ենթադրվում է, որ ուզում են զինված ապստամբություն բարձրացնել»[2]: Մեր կարծիքով, միշտ չէ, որ կարելի է հավատ ընծայել պետական հատուկ ծառայությունների հայտնած տեղեկություններին: Այդ իմաստով անտեղի է հիշյալ մարմինների, զինված ապստամբության մասին, ենթադրությունը:

Պետանվտանգության մարմինների 1920-ական թվականների տեղեկատվական բյուլետենները, հաշվետվություններն ու ամփոփագրերը ողողված էին երկրից դուրս ու ներսում գործող, այսպես կոչված, հակահեղափոխական, լրտեսական, բանդիտական խմբերի վերաբերյալ տեղեկություններով ու հաղորդագրություններով: Այսպես՝ խորհրդային ինֆորմացիոն բյուլետեններից մեկից տեղեկանում ենք, որ 1922 թ. գարնանը Կապանի լեռներում գործել է Նժդեհի հրամանատարներից **Գերասիմ Աթաջանյանը**, ով կապի մեջ է եղել Թավրիզում գտնվող ՀՅԴ բյուրոյականների հետ, որ ապրիլի 26-ին թվով 15 դաշնակցականներ և զանգեզուրցիներ փախել են Գերասիմի մոտ՝ միանալու նրա խմբին[3]: Կրկին փաստենք, որ Իրանի կառավարությունը հակաբոլշևիկյան ու հակաքեմալական կեցվածքի համար բարյացակամ վերաբերմունք ուներ իր երկրում

---

[1] *Հայաստանի պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)*, Ե., 2008, էջ 40:

[2] Նույն տեղում, էջ 42:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 166, թ. 124:

ապաստանած վտարանդի հայության հետ ընդհանրապես և ՀՅԴ հետ՝ մասնավորապես:

Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի կոլեգիայի (նախագահ՝ Շ. Ամիրխանյան, տեղակալ՝ Ս. Մելիք-Օսիպով, բաժնի վարիչ Զ. Աշրաֆյան և ուրիշներ) 1922 թ. փետրվարի 10-ի, մայիսի 24-ի, հոկտեմբերի 20-ի և այլ նիստերում լսվել են քաղաքական ու քրեական բնույթի գործեր, որոնց մի մասի նկատմամբ հարուցված գործերը որոշվել է հանձնել հանրապետության **Հեղափոխական տրիբունալի** դատին և այլն: Մասնավորապես, լսվել են հարցեր Փետրվարյան «խռովության» ժամանակ կարմիր բանակի դեմ կռվածների լրացուցիչ բանտարկության, սահմանախախտների, դաշնակցական ընդհատակյա կազմակերպություններին մասնակցության, թուրքահպատակների ձերբակալության, զանազան կողոպուտների ու սպանությունների վերաբերյալ[1]:

Հավանաբար չափից ավելի ծանրաբեռնված համարելով Միության մասշտաբով հեղափոխական տրիբունալների աշխատանքի ծավալը՝ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախագահության 1924 թ. հոկտեմբերի 20-ի նիստում լսվել է ՌԿ(բ)Կ ԿԿ-ի որոշումը տեղական դատարանների կողմից **քաղաքական գործերով պատժի առավելագույն միջոցի կիրառման անհրաժեշտության մասին**, և որոշվել է ընդունել ի գիտություն և ղեկավարություն[2]:

Հանրապետության դատաիրավական համակարգում, բացի Հեղափոխական տրիբունալից, գործել են նաև բարձրագույն դատական ատյան համարվող **Գերագույն** և **Գլխավոր** դատարաններ, որոնք իրավասու էին վճիռներ կայացնել քաղաքական բնույթի քրեական գործերի վերաբերյալ: Գերագույն դատարանը հիմնվել է

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 19, գ. 2, թ. 2, 6, 30, 40–41:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 6, թ. 74:

փոքր ուշ՝ ՀՍԽՀ ԿԳԿ-ի 1925 թ. հունվարի 24-ի որոշմամբ[1]: Ինչ վերաբերում է Գլխավոր դատարանին, ապա նա չի ունեցել մշտական բնույթ, ժամանակ առ ժամանակ լուծարվել է կամ անցել Գերագույն դատարանի ենթակայության տակ: Քաղաքական բնույթի դատական գործերը գտնվում էին կուսակցական բարձրագույն մարմնի՝ ԿԿ-ի և նրա նախագահության հսկողության տակ: Արդարադատության ժողկոմատը (նրա ժողկոմը միաժամանակ համարվում էր հանրապետության դատախազ) պարտավոր էր գաղտնի գրագրություն և տեղեկատվություն փոխանցել ԿԿ՝ իր կոլեգիայի ամեն նիստից անմիջապես հետո[2]:

Այսպիսով՝ Հայկոմկուսի ԿԿ-ն ու ՀՍԽՀ կառավարությունը, իրենց դիրքերի ամրապնդմանը զուգահեռ, իրականացնում էին նախապատրաստական, քարոզչական, բռնաճնշիչ գործողություններ հանրապետության քաղաքական դաշտը այլ կուսակցություններից ու հոսանքներից մաքրելու և երկրի սահմանները թշնամական (բանդիտական) տարրերի ներթափանցումներից պաշտպանելու ուղղությամբ:

---

[1] Տե՛ս **Քարտաշյան Ա.**, *Հայաստանի դատախազության պատմության էջերից*, Ե., 2009, էջ 47:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 10, թ. 80:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՅԴ ԼՈՒԾԱՐՄԱՆ 1923 Թ. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1. Լուծարման համագումարի հրավիրման հանգամանքները և աղբյուրագիտական հիմքերը

ՀՅԴ լուծարման հայաստանյան համագումարի հրավիրման անհրաժեշտությունը թելադրված էր կոմունիստական վարչակարգի կողմից խորհրդային երկրի ողջ տարածքում առկա այլախոհ ու թշնամական որակվող բոլոր կուսակցությունների կազմալուծման ու քաղաքական ասպարեզից վերացման առաջադրանքով: Բնականաբար այն պետք է գործադրվեր նաև Խորհրդային Հայաստանում նմանատիպ որակում ստացած կուսակցությունների հանդեպ: Իսկ այդպիսիներից ամենաազդեցիկն ու ամենավտանգավոր համարվողը Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիր ու առաջնորդող ՀՅԴ կուսակցությունն էր:

Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրից (1920 թ. դեկտեմբերի 2) Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունը (ՀԿ(բ)Կ) իր մենիշխանությունը հաստատելու և ամրապնդելու համար Մոսկվայի հրահանգով ձեռնամուխ եղավ հանրապետությունում գործող բոլոր քաղաքական ուժերի և առաջին հերթին

նախկին կառավարող կուսակցության՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) կազմաքանդման ու լուծարման գործընթացին:

Ինչպես արդեն ասվել է, թեև Երևանի՝ դեկտեմբերի 2-ի Դրո-Լեգրան համաձայնագրով խաղաղ ճանապարհով իշխանության եկած Հայհեղկոմը պարտավորվել էր չհետապնդել ու չհալածել նախկին կառավարության անդամներին, նախկին բանակի սպաներին և այլ պաշտոնյաներին, իսկ համաձայնագրի կետերից մեկով (թիվ 6) խոստացել էր անգամ կազմել խառը (կոալիցիոն) կառավարություն՝ 5 կոմունիստ, 2 դաշնակցական[1], սակայն Կարմիր բանակի՝ Բաքվից Հայաստան մուտք գործելուց հետո ոչ միայն չհարգեց պայմանագրի կետերը, այլև գործնականում սանձազերծեց չհայտարարված պատերազմ Դաշնակցության և մյուս՝ «մանր բուրժուական» կամ «բուրժուական» որակվող (ՀԺԿ, Էսէռ, Հնչակ, Սոց-դեմ. մենշևիկ, Հայ ռամկավար, Սպեցիֆիկ և այլն) կուսակցությունների դեմ՝ նրանց ջախջախելու և դուրս մղելու նպատակով:

Այդ հալածական քաղաքականության անմիջական հետևանք հանդիսացող 1921 թ. Փետրվարյան ժողովրդական ապստամբությունը ռուսական կարմիր բանակի միջոցով ճնշելուց հետո հազարավոր մարդիկ՝ կուսակցությունների ներկայացուցիչներ, նախկին հայդուկներ և այլն, բանտ-ազատից ու գնդակահարություններից խույս տալով, արտագաղթեցին Պարսկաստան:

ՀՅԴ լուծարումը, բացի Կենտրոնի որոշումներով համապետական նշանակության քայլ լինելուց, թելադրված էր նաև այն հանգամանքով, որ, չնայած Դաշնակցության շարքերի մեծագույն մասի արտագաղթին, այնուամենայնիվ, նրա մի հատվածի թեկուզ ընդհատակյա գոյությունն ու գործունեությունը, քաղաքական առումով պոտենցյալ վտանգ էր համարվում Հայկոմկուսի մենիշխանության համար: Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո էլ ՀՍԽՀ

---

[1] *Հայաստանի Հանրապետություն 1918–1920 թթ.*, էջ 383–384:

Արտակարգ հանձնաժողովը ուշի-ուշով հետևում, արձանագրում, բացահայտում և պատժում էր ՀՅԴ ընդհատակյա մարմինների ու անհատ անդամների ամեն մի քայլը: Արտակարգ հանձնաժողովի 1922 թ. 1-ին եռամսյակի ամփոփագրի տվյալներով Հայաստանում գործող կուսակցություններից առավել աչքի ընկնող է ՀՅԴ-ն: Նշվում էր, որ դաշնակցականները ակտիվ են գործում Հայկոռպում և նրա գավառային մասնաճյուղերում: Տեղեկացվում էր նաև, որ Ալեքսանդրապոլում ստեղծվել է երիտասարդ դաշնակցականների միություն, որը «տանում է ընդհատակյա աշխատանք և տարածում է սադրիչ լուրեր հայ-թուրքական պատերազմի վերաբերյալ»[1]: Նույն Չեկայի նախագահ Շ. Ամիրխանյանն իր պատրաստած 1922 թ. գարնանային եռամսյա հաշվետվության մեջ կրկին նշում էր, որ ՀՍԽՀ տարածքում հակախորհրդային աշխատանք է տանում Դաշնակցություն կուսակցությունը, որն ունի կազմակերպական լայն ցանց Հայաստանի ամբողջ տարածքում: Ուժեղ կազմակերպություններ կան Երևանում, Ալեքսանդրապոլում, Ն. Բայազետում, Էջմիածնի և Լոռիի գավառներում, որոնցում կան կոմիտեներ, որոնք էլ իրենց հերթին կապված են ՀՅԴ Թիֆլիսի ԿԿ-ի հետ: Երևանի և Ալեքսանդրապոլի կազմակերպություններն անմիջական կապ ունեն նաև Թավրիզի հետ, որը իրականացվում է կապավորների միջոցով: Շ. Ամիրխանյանն իր հաշվետվությունը եզրափակում էր նրանով, որ «դաշնակների գործունեությունը ուժեղ է հատկապես գավառներում ու գյուղերում, քանի որ դրանցում խորհրդային իշխանության մարմինները թույլ են»[2]: Շ. Ամիրխանյանի, Զ. Աշրաֆյանի և Փանյանի ստորագրությամբ ՀԿ(բ)Կ ԿԿ, Ժողկոմխորհ և կարմիր բանակի հատուկ բաժին ուղարկված մեկ ուրիշ տեղեկանքում հաղորդվում էր, որ դաշնակցականների երևանյան կազմակերպությունը Նորքում

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 75, թ. 3:
[2] Նույն տեղում, թ. 25:

հրավիրել է հավաքներ, իսկ փետրվարի 17-ին Աշտարակում տոնել են Փետրվարյան ապստամբության տարեդարձը. երաժշտությամբ կազմակերպված դուրս են եկել փողոց, բնակչությանը հաց են բաժանել և քարոզներ արել[1]: Որքան էլ փորձենք չափազանցություններ տեսնել չեկիստների ամփոփագրերում, բայց և այնպես իրողություն է, որ ՀՅԴ-ն գաղտնի թե կիսագաղտնի շարունակում էր գործել: Բերված փաստերը հիմք էին տալիս իշխանություններին սկսելու Դաշնակցության հայաստանյան կառույցի լուծարման գործընթաց: Իսկ դրա հրահանգը արդեն ստացված էր Կենտրոնից:

*

* *

Մինչ լուծարման համագումարի քննության անցնելը հարկ ենք համարում ներկայացնել համագումարի պատմության աղբյուրագիտական հենքը: ՀՅԴ դեմ հրապարակային դատ կազմակերպելուց հետո նախապատրաստվեց նրա հրապարակային լուծարման գործը գոնե Հայաստանում: Խորհրդային իշխանության արշալույսին Հայկոմկուսն իր գլխավոր ախոյան ՀՅԴ-ին քայքայելու ու վերացնելու նպատակով ոչ միայն հրապարակային դատ իրականացրեց, այլև հենց Խորհրդային Հայաստանի դաշնակցականների մասնակցությամբ կազմակերպեց Հայաստանի սահմաններում այդ կուսակցության լուծարման (ինքնավերացման) համագումար:

Դաշնակցության լուծարման համագումարը պետք է դիտել իբրև 1920-ական թվականների առաջին կեսին խորհրդային երկրում ձևնարկված՝ էսէռների, մենշևիկների, վրաց մենշևիկների և «մանրբուրժուական» որակվող մյուս կուսակցությունների քայքայման քաղաքականության շատ էական օղակներից մեկը: Ի դեպ, Անդրկովկասի առավել ազդեցիկ հակախորհրդային կուսակցութ-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 9–10:

յուններից Վրաց սոց.-դեմ. մենշևիկների կազմակերպական լուծարման աշխատանքները ընթացան փոքր ավելի վաղ՝ 1923 թ. ամռանը: Ինքնալուծարման կոնֆերանսներ անցկացվեցին Վրաստանի բոլոր քաղաքներում, իսկ օգոստոսի վերջին Թիֆլիսում անցկացվեց Վրաստանի նախկին մենշևիկների համավրաստանյան համագումար, որը ներկայացնում էր մոտ 12000 անդամ (ստացվում է՝ Հայաստանի դաշնակցականներից 3 անգամ ավելի): Հասկանալի է, որ ընդունված սխեմայով համագումարը վրաց մենշևիկյան կուսակցությունը հայտարարեց լուծարված[1]: Ի դեպ, համագումարն ավելի ազդեցիկ դարձնելու համար խորհրդային իշխանությունները 38 մենշևիկ բանտարկյալների Մետեխի բանտից բերել էին՝ մասնակցելու համագումարին: Ինչ վերաբերում է Անդրկովկասի մուսուլմանների շրջանում առավել ազդեցիկ Մուսավաթ կուսակցության քաղաքական ճակատագրին, ապա նրա հանդեպ ինքնալուծարման համագումարի հրավիրման անհրաժեշտություն չի զգացվել: Մուսավաթ կուսակցության ԿԿ-ի կազմի ձերբակալությունից հետո բավարարվել են միայն ինքնալուծարման վերաբերյալ հայտարարություն (դեկլարացիա) ընդունելով[2]:

Դաշնակցություն կուսակցության խնդրում կիրառվել է վրաց մենշևիկների սցենարը:

ՀՅԴ հայաստանյան կառույցը պաշտոնապես վերացնելու նպատակով, ի վերջո, ամիսներ տևող կազմակերպչական ու քարոզչական բնույթի նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1923 թ. նոյեմբերի 20-23-ին, գումարվեց ՀՅԴ լուծարման համահայաստանյան համագումարը:

---

[1] Տե՛ս *Հայաստանը սովետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)*, Ե., 2008, էջ 71: Սակայն վրաց մենշևիկների լուծարման համագումարը բնավ չխանգարեց, որ դրանից ուղիղ մեկ տարի անց՝ 1924 թ. օգոստոսին, նրանք կազմակերպեին հակախորհրդային ապստամբություն, որն, իհարկե, Կարմիր բանակը խեղդեց արյան մեջ:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 75:

Պաշտոնապես «Նախկին դաշնակցականների համահայաստանյան համագումար» անվանումը ստացած այդ միջոցառման ամբողջական արձանագրությունը պահվում է Հայաստանի ազգային արխիվի 1457 (նախկին ՄԼԻ 4047) ֆոնդի, 1-ին ցուցակի 220 գործում՝ 135 թերթ ծավալով: Գործը վերնագրված է. «Դաշնակցություն կուսակցության ինքնավերացման՝ նախկին դաշնակցականների Համահայաստանյան համագումարի սղագրական հաշվետվություն», ռուսերեն՝ «Стенографический отчет Всеармянского съезда бывших дашнаков по самоликвидации партии Дашнакцутюн»: Նախկին դաշնակցականների համահայաստանյան համագումարի արձանագրությունները գրքի տեսքով լույս են տեսել Երևանում 1923 թ. «Տրեստի» 1-ին տպարանում՝ Ակսել Բակունցի[1] «Երկու խոսք»-ով: Ակներև է, որ համագումարի սղագրական արձանագրությունների հրատարակումը հետապնդել է քարոզչական նպատակ, որպեսզի արտասահմանի աշխատավորական զանգվածները ևս «Հայաստանի օրինակով կազմալուծեն դաշնակցական խմբերն ու կոմիտենները»[2]:

Հետագայում այս գրքի նյութերով ՀՅԴ նշանավոր գործիչ Ռուբենի (Ռ. Տեր-Մինասյան) հայրը՝ Անահիտ Տեր-Մինասյանը, 1991 թ.

---

[1] Խոսքը հայ մեծանուն գրող, արձակագիր Ակսել Բակունցի (1899–1937 թթ.) մասին է: Ծննդյան տվյալներով նրա անուն-ազգանունը եղել է Ալեքսանդր Թևոսյան, 1915 թ. ՀՅԴ անդամ, 1924 թ. ընդունվել է ՀամԿ(բ)Կ շարքերը՝ իբրև անդամության թեկնածու, գործուն մասնակցություն է ունեցել հանրապետության հասարակական-գրական կյանքին, իր նախկին կուսակցական պատկանելիության համար ենթարկվել է բաղաքական հետապնդումների և ԽՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական հանձնաժողովի վճռով դատապարտվել է գնդակահարության, որն ի կատար է ածվել 1937 թ. հուլիսի 8-ին:

[2] Նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան համագումարի արձանագրությունները, (Ստենոգրաֆիական հաշվետվություն), 20–23 նոյեմբերի 1923 թ. (այսուհետ՝ Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար), Ե., 1923, էջ 5:

տպագրել է «Հ.Յ. Դաշնակցության ինքնավերացումը Երևանում 1923 թ.» վերտառությամբ հոդված[1]: Շատ ավելի վաղ, լուծարման համագումարի թարմ տպավորությունների տակ, ՀՅԴ դիրքերից առանձին ուսումնասիրություն է գրել ՀՅԴ ճանաչված գործիչ, տեսաբան Վահան Նավասարդյանը[2]: Վերը նշված արխիվային գործի արձանագրությունը, էական կրճատումներով, հատվածաբար տեղ է գտել նաև պրոֆ. Վլ. Ղազախեցյանի կազմած փաստաթղթերի և նյութերի ժողովածուում[3]: Համագումարի գլխավոր կազմակերպիչներից մեկի՝ Ակսել Բակունցի կյանքի ու գործունեության հետ կապված՝ լուծարման համագումարի նյութերը հրապարակվել են գրականագետ Դ. Գասպարյանի մենագրությունում[4]: Սակայն հեղինակը ընտրողաբար տպագրել է միայն Ա. Բակունցի՝ համագումարում ունեցած ելույթները (որպես նիստը նախագահող կամ զեկուցում կարդացող):

Բայց երբ արխիվում պահվող 135-թերթանոց գործը համեմատում ենք նրա հիման վրա հրատարակված չորսօրյա համագումարի նիստերի արձանագրությունների հետ, ապա տեսնում ենք, որ վերջինս նկատելիորեն խմբագրվել է և դրանց միջև կան իմաստային ու նույնիսկ փաստական անճշտություններ և անհամապատասխանություններ: Օրինակ՝ Դաշնակցությունից հեռացողների վերաբերյալ Ա. Բակունցի հայտնած տվյալներով՝ միջնակարգ կրթություն ունեցողների տոկոսը արխիվային գործում նշված է 26, իսկ այդ նույն գործի հիման վրա հրատարակված գրքում՝ 20 տոկոս[5]: Այդ

---

[1] Այդ մասին տե՛ս *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, Ե., 1999, էջ 148:

[2] **Նավասարդյան Վ.**, *Հ.Յ. Դաշնակցության «լիկվիդացիան» (քաղվածքներ սնանկության առիթով)*, Գահիրե, 1924:

[3] *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 130–148:

[4] **Գասպարյան Դ.**, *Ակսել Բակունց, կյանքը և ստեղծագործությունը*, Ե., 2009, էջ 321–336:

[5] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 13, Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 20:

իսկ պատճառով խնդիրը քննելիս, որպես աղբյուրագիտական հիմք, առաջին հերթին հենվել ենք արխիվային գործի վրա:

Անդրադառնալով համագումարի արձանագրության վերտառությանը՝ համաձայն չենք նախկին դաշնակցականներ ձևակերպմանը, որովհետև համագումարին մասնակից 247 պատգամավորները (էլ չենք խոսում փաստաթղթում նշվող 4000-ից ավելի կուսանդամների մասին), դեռևս համարվել են դաշնակցականներ, ուստի այդ հասկացությունն օգտագործում ենք չակերտների մեջ: Ու թեև համոզելով, վախեցնելով, ուժով ու հարկադրանքով նրանք հայտարարություն էին տվել Դաշնակցությունից հեռանալու մասին, սակայն կուսակցությունից հեռանալու հարցը պետք է վճռվեր հրավիրվելիք համագումարում: Ուրեմն «նախկին դաշնակցական» հասկացությունը պայմանականորեն պետք է գործածել: Նրանք հին թե նոր, ակտիվ թե պասիվ դեռևս համարվել են այդ կուսակցության անդամ: Հետագա շարադրանքից կարելի է տեսնել, որ համագումարի ընթացքում պատգամավորների տված հարցերից, ունեցած ելույթներից, ռեպլիկներից ակներև է դառնում, որ նրանց մի զգալի մասը համոզմունքով և մտածելակերպով շարունակել է մնալ դաշնակցական: Անգամ համագումարի նախաձեռնող և ամենաակտիվ մասնակից Ա. Բակունցը, մեր կարծիքով, հեռացած չի եղել Դաշնակցությունից: Այդ մասին է վկայում 1924 թ. փետրվարի 24-ին գրված նրա ինքնակենսագրականը[1]: Միայն լուծարիչ համագումարից հետո Բակունցը հանդես է գալիս ՀՅԴ շարքերից հեռանալու և կոմկուսի շարքերը ընդունվելու հայտարարությամբ[2]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 4, ց. 2, գ. 1218, թ. 5–6:

[2] Ըստ ինքնակենսագրականի՝ 1924 թ. սեպտեմբերի 16-ին Բակունցը դիմել է Հողժողկոմատի կոմբջջին՝ կուս. շարքերը մտնելու: Նախկին դաշնակցական Ա. Բակունցի դիմումը լսել է ՀԿ(բ)Կ Երևանի քաղաքային կոմիտեի նախագահությունը և ընդհանուր հիմունքներով նա ընդունվել է որպես կուս. թեկնածու:

2. Լուծարման համագումարի նախապատրաստումը և բացումը

ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1923 թ. հունիսյան պլենումի օրակարգային հարցերից է եղել Դաշնակցություն կուսակցությունը քայքայելու մեթոդների մասին հարցը, զեկուցել է Շ. Ամիրխանյանը[1]: Պլենումի ընդունած բանաձևով հանձնարարվում էր ԿԿ-ի նախագահությանը՝ մշակել ավելի խիստ միջոցառումներ Դաշնակցություն կուսակցությունը քայքայելու մեթոդների վերաբերյալ[2]: Եվ այդպիսի հիմնարար մեթոդներից էր հենց դաշնակցականների ձեռքով իրենց կուսակցության լուծարումը: Այդ կապակցությամբ հուլիսի 25-ին ԿԿ-ից բոլոր գավկոմների քարտուղարներին է ուղարկվում Դաշնակցություն կուսակցության վարկաբեկման և կազմալուծման վերաբերյալ հույժ գաղտնի շրջաբերական նամակը: Ութը կետից կազմված շրջաբերականում հրահանգվում էր սույն գործի մեջ ներգրավել գավկոմների ամենապատրաստված անդամներին, անհատապես «մշակման» ենթարկել «դաշնակներին», նախապատրաստել նրանց, հետագայում միավորելով կուսակցությունից հեռացողների ոչ մեծ խմբերում, կազմակերպել Դաշնակցությունից հեռացողների խմբային կամ անհատական հայտարարությունների հրապարակում միայն ԿԿ-ի թույլտվությամբ, մշտական աշխատանք տանել դաշնակցականների գործունեությունը մերկացնելու և վարկաբեկելու ուղղությամբ և այլն[3]:

Իբրև լրացում ԿԿ-ի հուլիսի 25-ի շրջաբերականի՝ փոքր ինչ ուշ հետևեց Հայկոմկուսի ԿԿ-ի՝ հանրապետության բոլոր գավկոմներին ուղղված լրացուցիչ շրջաբերական: Նրանում դարձյալ կետերով

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 6, թ. 7:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 22:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 14, թ. 35 և շրջերես:

նշվում էր, որ Դաշնակցության կազմալուծումը մեծ չափեր է ընդունել: Դա երևում է դաշնակցականների արած հայտարարություններից: Բայց և կան «դաշնակներ», ովքեր մտադիր չեն հրաժարվել պայքարի մտքից: Այս տեսակետից մեծ է Չեկայի դերը: Դրա համար զգուշացվում է, որ կարող են լինել ահաբեկման, տեռորի ու գաղտնի քարոզչության դեպքեր: Չեկայի մարմիններին հանձնարարվում է հաշվառման վերցնել այն դաշնակցականներին, ովքեր նախնական խորհրդակցությունների ժամանակ, իրենց ելույթներում, անհամաձայնություն են արտահայտել մեր հարցադրումներին, ի հայտ բերել և օգտագործել այն դաշնակցականներին, ովքեր կարող են օգտակար լինել մեր այս աշխատանքներում: Այս ամենն իրագործել խիստ զգույշ, ոչ մի դեպքում թույլ չտալ, որ տվյալ գործում երևա Չեկայի անունը: Վերջում հիշեցվում էր, որ այդ ամենի մասին ամիսը երկու անգամ (ամսվա 1-ին և 15-ին) հանգամանալի զեկույց ներկայացնել Կենտկոմ[1]:

ՀԿ(բ)Կ ԿԿ-ի շրջաբերականները կյանքի կոչելու, ՀՅԴ կազմալուծման աշխատանքները առաջ տանելու, նախկին դաշնակցականների լուծարման համագումարը նախապատրաստելու և անցկացնելու համար խորհրդային իշխանությանը առավել լոյալ երևելի դաշնակցականներից ստեղծվեց հինգ հոգուց կազմված լուծարման համագումարի Նախաձեռնող բյուրո, որի նախագահ ընտրվեց գրող **Ակսել Բակունցը**, քարտուղար՝ Նիկ. Կրմենանցը, անդամներ՝ Հայկ Ավալյանը, Խաչիկ Դանիելյանցը և Ռուբեն Տոնոյանը: Բոլոր գավառներում հիմնվեցին համագումարի նախաձեռնող գավառական ենթաբյուրոներ, սահմանվեց դրանց գործունեության աշխատակարգը (կանոնադրությունը):

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 14ա, թ. 5:

Համագումարի նախապատրաստման ու անցկացման ողջ գործընթացը, որպես խնամարկու (կուրատոր), անմիջապես ղեկավարում և ուղղորդում էր ԿԿ-ի քարտուղարներից Ալ. Շահսուվարյանը: Նախապատրաստական աշխատանքներում ներգրավված էին պետանվտանգության մարմինները, գավկոմները, տեղական իշխանության մարմինները և այլն: Նրանք 1923 թ. հուլիս-նոյեմբեր ամիսների ընթացքում Հայաստանի քաղաքներում, գավառներում, շրջաններում ու գյուղերում լայն արշավ կազմակերպեցին, որպեսզի Դաշնակցությունից հեռացողների հավաքներ, ժողովներ ու կոնֆերանսներ անցկացնեն, ընտրեն համագումարի պատգամավորներ, կազմեն հարցաթերթիկներ, պատրաստեն հայտարարությունների տեքստեր, դրանք հրապարակեն մամուլում և այլն: Մինչ համագումարի հրավիրումը նախաձեռնող Բյուրոն գումարել է տասնյակ նիստեր:

Արխիվային ֆոնդերում, Չեկայի ամփոփագրերում ու հատկապես ժամանակի մամուլում հրապարակված են գործնականում կուսակցական մարմինների կողմից պատրաստված մեծ թվով հայտարարություններ ու կոչեր իրենց կուսակցությունից նախկին դաշնակցականների հեռանալու վերաբերյալ: Այդ կապակցությամբ ընթերցողի ուշադրությունը հրավիրենք մեր ձեռքի տակ եղած մի շարք փաստերի վրա:

Դաշնակցությունից հեռանալու հայտարարությամբ հանդես են եկել Էջմիածնի գավառի Ղուրդուղլի (Արմավիր) շրջանի 10 գյուղերի՝ 82 դաշնակցականներ[1]: Հայտարարության մեջ մասնավորապես նշված է, որ «Իբրև ազգային կուսակցություն՝ Դաշնակցությունն իր անցյալ շրջանում ունեցել է դրական արժեք, կազմակերպել է հայ ժողովրդին: Բայց հետագա շրջանում այս կուսակցությունը գնաց սխալ ճանապարհով և ... որ խորհրդային իրավակարգը վերջ

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 208, թ. 27:

տվավ այդ անտրմալ վիճակին»[1]: Նմանատիպ հայտարարությամբ են հանդես եկել նույն շրջանի Էվջիլար (Արազափ) և Մարգուսրա գյուղերի 17 դաշնակցականներ, դրանց թվում ստաժավորներ: Օրինակ, վանեցի նախկին խմբապետ Խաչիկ Շուշանյանի ՀՅԴ կուսստաժը նշված է 1895 թ., Հակոբ Մուրադյանինը՝ 1900 թ., Հակոբ Գևորգյանը՝ 1901 թ. և այլն[2]: Ի դեպ, հայտարարություններում հատուկ նշվում էին վետերան դաշնակցականների կուսակցական ստաժը՝ ընդգծելու համար, թե ինչպիսի ստաժավոր դաշնակցականներ են անգամ հեռանում կուսակցությունից:

Աշտարակ գյուղի և շրջանի ակտիվ և շարքային դաշնակցականների կոլեկտիվ հայտարարագրում նշվում էր, որ իրենք միամտություն են ունեցել հավատալու, թե «հայ աշխատավորության սոցիալ-քաղաքական կացությունը հնարավոր է փոխել հերոսական ընդվզումներով, հախուռն ցույցերով, դիվանագիտական սնամեջ խաղերով: Խորազնին վերազնահատումից հետո այսօր խոր և սնեներ համոզմունքով գալիս ենք ընդունելու, որ պրոլետարիատի դիկտատուրան է ազատ ճանապարհ հարթողը մարդկության բարոության համար, որ խորհուրդն է միակ ճշմարիտ վարչաձևը: Այս անկեղծ ու շիտակ հայտարարությամբ մեկընդմիշտ մոռացության ենք տալիս մեր գայթակղություններով ու սայթաքումներով լի անցյալը, ցանկանում ենք 3-րդ ինտերնացիոնալի փառավոր դրոշի տակ խմբվածների ծանր ու վեհ աշխատանքին միացնել մեր աշխատանքը: Կորչի՛ համաշխարհային հակահեղափոխությունը: Կեցցե՛ 3-րդ ինտերնացիոնալը: Կեցցե՛ Խորհրդային կուռ միությունը»[3]: Հայտարարության տակ ստորագրել են Աշտարակ գյուղից 24 շարքային և ճանաչված դաշնակցականներ, այդ թվում Աշտարակի ՀՅԴ կոմի-

---

[1] «Խորհրդային Հայաստան», 12 հոկտեմբերի 1923 թ.:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 208, թ. 31:

տեի նախագահ, բժիշկ Նահապետյանը, կուսանդամ 1903 թ.: Տեղեկացվում է, թե նա, Մայիսյան ապստամբության շրջանում, ապտակել էր բոլշևիկ Արտաշես Մելքոնյանին: Այնուհետև հատուկ նշված են ՀՅԴ վետերաններ կոմիտեի անդամ Գեղամ Ղափանցյանի (կուսանդամ 1902 թ.), Լևոն Մովսիսյանի՝ կուսանդամ 1902 թ. և այլոց անուններ: Ընդհանուր հաշվով շրջանում հայտարարության տակ ստորագրել են 99 դաշնակցականներ, այդ թվում 23-ը՝ Օշական գյուղից, դրանց շարքում երկուսի կուս. ստաժը՝ 1895 թ., մեկինը՝ 1900 թ. և այլն, Ղզըլթամար (Ոսկեվազ) գյուղից՝ 12, Փարպիից՝ 22, Բյուրականից՝ 6 հոգի և այլն[1]:

Դաշնակցությունից իրենց կապերը խզելու վերաբերյալ սեպտեմբերի 16-ի հայտարարության տակ ստորագրել էին Ջանֆիդա գյուղի 104 վերաբնակ դաշնակցականներ ու համակիրներ[2]: Դաշնակցությունից հեռանալու վերաբերյալ հայտարարություն էին տվել նույն Էջմիածնի գավառի Մոլլաբաղար գյուղի 41 վերաբնակ դաշնակցականներ՝ Հայաստանի փրկության հույսը կապելով խորհրդային իշխանության և 3-րդ կոմինտերնի հաղթանակի հետ: Նույնպիսի մի դեկլարացիա է հրապարակվել նույն գավառի Թուրքմենլու (Ապագա) գյուղի 41 դաշնակցականների ու համակիրների ստորագրությամբ[3]:

Թերթերում տրված հայտարարությունների բովանդակությունից ու գրելաոճից դժվար չէ համոզվել, որ արևմտահայ գաղթական ու հիմնականում անգրագետ բնակիչները առհասարակ պատկերացում չեն ունեցել ո՛չ կոմինտերնից, ո՛չ էլ սոցիալիզմից: Ակներև է, որ կուսակցական, պետական մարմինները շաբլոն կերպով կազմել են այդ հայտարարությունների տեքստերը և ներկայացրել այս կամ այն

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 208, թ. 32–35:
[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 2 հոկտեմբերի 1923 թ.:
[3] Տե՛ս նույն տեղում, 28 սեպտեմբերի 1923 թ.:

գյուղի կամ շրջանի անունից: Նոյեմբերի 4-ին Վաղարշապատում բացվել է նախկին դաշնակցականների գավառային համագումարը: Գավառի 116 պատգամավորներից ներկա են եղել 75-ը, համահայաստանյան համագումարի համար ընտրվել է 40 պատգամավոր[1]: Հայչեկայի մի ամփոփագրի տվյալներով Էջմիածնի գավառում Դաշնակցություն կուսակցությունից դուրս գալու մասին հայտարարություն են տվել 1294 մարդ, որից 65-ը ընտրվել են համահայաստանյան համագումարի պատգամավոր[2]:

ԿԿ-ի քարտուղար Ալ. Շահսուվարյանը ՀՅԴ լուծարման հարցով 1923 թ. հուլիս-սեպտեմբերյան հաշվետվության մեջ նշում է, որ Դաշնակցության կազմալուծման գործընթացը հաջողությամբ առաջ է ընթանում բոլոր գավառներում, չնայած որ որոշ վայրերում կան ընդհատակյա խմբեր, որոնք կապ ունեն արտասահմանյան իրենց կենտրոնի հետ: Այդ գաղտնի խմբերը որոշ չափով խանգարում են սկսված գործին, սակայն միջոցառումներ են ձեռնարկվում նրանց գործունեությունը դադարեցնելու համար[3]: Հայչեկայի ամփոփագրերում ևս նշվում է, որ «շարունակվում է Դաշնակցություն կուսակցության բարոյալքումը և քայքայումը: Ամեն օր տեղեկություններ են հասնում տարբեր վայրերից կուսակցության շարքերից դուրս գալու մասին: Հեռացածների ընդհանուր թիվը հասնում է մինչև 1100 մարդու»[4]: Վերոհիշյալ և հետո բերվող զանգվածային հայտարարություններից կարելի է հետևեցնել, որ, իրոք, սկսված այդ գործընթացը առանձնապես լուրջ խոչընդոտի չի հանդիպել:

---

[1] Տե՛ս նույն տեղում, 11 նոյեմբերի 1923 թ.:

[2] **Կիրիմյան Ա.**, *«ՍԽՀ Արտակարգ հանձնաժողովի 1923 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակաշրջանի անդիմադրելի Խորհրդային Հայաստանի իրավիճակի մասին»* // ԲՀԱ, Ե., 2013, թիվ 1, էջ 88:

[3] Տե՛ս Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 38:

[4] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 102, թ. 61:

Լուծարման համագումարի Նախաձեռնող բյուրոյի հանձնարարությամբ հայտարարություն են ստորագրել Արագածի փեշերին հաստատված մի քանի տասնյակ (29) գյուղերի սասունցի, մշեցի, խնուսցի և այլ 879 դաշնակցականներ[1]: Հայտարարությունում նշված է, որ իրենք «եղել են Դաշնակցության կույր գործիքը, նրա քաղաքականության կատարողները»[2]:

Սեպտեմբերի 23-ին տեղի է ունեցել Կոտայքի շրջանի դաշնակցականների կոնֆերանսը, որին մասնակցել են 37 դաշնակցականներից 33-ը: Ըստ թերթում տրված հայտարարության տեքստի՝ կոնֆերանսը դատապարտել է ՀՅԴ 33 տարվա հայավնաս գործունեությունը և որոշել լուծարել Կոտայքի և շրջանի բոլոր գյուղերի ՀՅԴ կոմիտեները, հեռանալ Դաշնակցության շարքերից և միանալ 3-րդ ինտերնացիոնալին: Վերջում Երևանի գավառային կոնֆերանսին մասնակցելու համար ընտրվում է 6 պատգամավոր և 2 թեկնածու[3]:

Նոր Բայազետի գավառի 29 գյուղերում ՀՅԴ-ից հեռանալու հայտարարություն են տվել ընդամենը 311 անձ, որոնցից 10-ը եղել են քահանաներ[4]: Հոկտեմբերի 21-ին Նոր-Բայազետի թատրոնի դահլիճում կայացել է նախկին դաշնակցականների գավառային կոնֆերանսը, որին մասնակցել է 36 պատգամավոր և Դաշնակցության վերացման համահայաստանյան համագումարի համար ընտրել է 20 պատգամավոր[5]: Ախտայի շրջանից հեռանալու հայտարարություն են տվել 162, Զանգիբասարի 6 գյուղերից՝ 61 դաշնակցականներ և այլն[6]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 208, թ. 20:
[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 16 հոկտեմբերի 1923 թ.:
[3] Տե՛ս նույն տեղում, 27 սեպտեմբերի 1923 թ.:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 232, թ. 1–5:
[5] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 20 հոկտեմբերի 1923 թ.:
[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 208, թ. 26–27 և 29–30:

Լուծարման նախապատրաստական աշխատանքները լայն թափով են իրականացվել նաև Ալեքսանդրապոլ քաղաքում և գավառում: ՀՅԴ-ից հեռանալու հայտարարություններ են տրվել Ալեքսանդրապոլի «Բանվոր» թերթում՝ ընդամենը 67 մարդ[1]: Նույն սցենարով գավառը համահայաստանյան համագումարի համար ներկայացրել է 35 պատգամավոր: Կապանի, Սիսիանի և բուն Զանգեզուրի 61 գյուղերի 331 ներկայացուցիչներ սեպտեմբերի 12-ին իրենց ժողովներում որոշում են կայացրել և խմբակային նամակ հղել ՀՅԴ-ից իրենց հեռանալու մասին և այլն[2]: Եվ այսպես շարունակ տվյալներ կան հանրապետության հարյուրավոր գյուղերի վերաբերյալ:

«Խորհրդային Հայաստան» թերթում հայտարարություններ կան Երևանի համալսարանի դաշնակցական ուսանողների, Երևանի դերձակների, Ամերկոմի դաշնակցական բանվորների և այլնի կողմից, բնականաբար հրահանգավորված և պատրաստված իշխանությունների թելադրանքով:

Համահայաստանյան համագումարի Նախաձեռնող բյուրոն բերել է որոշ ամփոփ տվյալներ Դաշնակցությունից հեռացողների թերթերթում հայտարարություն տվածների վերաբերյալ: Դրա ամփոփիչ հաշվումներով միայն «Խորհրդային Հայաստան» թերթում՝ 167 համարից մինչև 238-ը, Դաշնակցությունից դուրս գալու վերաբերյալ խմբակային թե անհատական դիմում-հայտարարություն տվածների ընդհանուր թիվը կազմել է 1935 մարդ[3]: Մեկ այլ հաշվարկով թերթի 183-ից մինչև 248 համարներում նման հայտարարությունների ընդհանուը թիվը կազմել է 2383 մարդ[4]: Բացի այդ, պատրաստված են եղել 796 կոլեկտիվ ու անհատական կարգով Ելենովկայի (Սևան), Նոր Բայազետի, Մարտունու, Բասարգեչարի և այլ

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 28:
[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 25 սեպտմբերի և 4 հոկտեմբերի 1923 թ.:
[3] Տե՛ս ՀԱԱ. ֆ. 1457, ց. 1, գ. 208, թ. 18–21:
[4] Տե՛ս նույն տեղում. թ. 22–27:

շրջանների 4-5 տասնյակ գյուղերի 796 մարդկանց հայտարարություններ, որոնք առայժմ հնարավոր չի եղել հրապարակել[1]: Նույն կերպ, նշվում է, որ Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Ղամարլուի, Դիլիջանի, Լոռիի, Ջալալօղլիի, Բաշ-Գառնիի և Դարալագյազի նախկին դաշնակցականների հայտարարությունները դեռ չեն ստացված, որոնք կհրապարակվեն ստանալուն պես և այլն[2]:

Նախաձեռնող բյուրոյի ներկայացրած համահավաք տվյալներով, կոլեկտիվ և անհատական ձևով Դաշնակցություն կուսակցությունից հեռանալու հայտարարություն են տվել 3248 մարդ[3]: Այս ամենը ցույց է տալիս, թե որքան զանգվածային մասշտաբներ է ընդունել հայտարարություններ տալու այդ արշավը: Ինքնին հասկանալի է, որ եղել են նաև հարյուրների հասնող, գուցե և ավելի մարդիկ, ովքեր համոզմունքով, վախով, գաղտնի մնալով կամ այլ պատճառներով հայտարարություն տալու այդ ներկայացմանը պարզապես չեն մասնակցել:

Նման հայտարարությունների փորձեր են եղել նաև ՀՍԽՀ-ից դուրս: Անդրերկրկոմի հայերեն պաշտոնաթերթ «Մարտակոչ»-ում զետեղված մի նյութում տեղեկացվում է, որ նոյեմբերի 4-ին Ստեփանակերտում կայացել է շարքային նախկին դաշնակցական անդամների ժողով: Վ. Վարդապետյանի և Աբ. Կիսիբեկյանի զեկուցումները լսելուց հետո միաձայն ընդունվել է կոչ-բանաձև՝ Դաշնակցությունից հեռանալու մասին[4]: Նոյեմբերի 23-ին ինքնավերացման կոչ են ընդունել նաև Բաքվի և նրա շրջանների Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչների կոնֆերանսում և այլն[5]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 29–30:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 30:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 22–30:
[4] Տե՛ս «Մարտակոչ», Թիֆլիս, 18 նոյեմբերի 1923 թ.:
[5] Տե՛ս նույն տեղում, 24 նոյեմբերի 1923 թ.:

Թերթերում և արխիվային վավերագրերում կան բազմաթիվ դիմում-հայտարարություններ անհատական կարգով Դաշնակցություն կուսակցությունից հեռանալու մասին[1]: Բացի այդ, Հայաստանից արտագաղթած մի խումբ տարագիր սպաներ (20 հոգի) հոկտեմբերի 1-ին Թավրիզից ռուսերեն լեզվով հայտարարություն են տվել, որ իրենք, խաբվելով Դաշնակցության վարած պրոանտանտյան քաղաքականությունից, վերջնականորեն իրենց կապերը խզում են հակախորհրդային կուսակցություններից[2]:

Հարկ է փաստել, որ ՀՅԴ-ից հեռանալու հայտարարություններ տալուց զատ՝ իշխանությունները պահանջել են, որ լրացվեն նաև հեռացողների հատուկ անձնական **անկետա-հարցաթերթիկներ**, որի համար պատրաստվել են 15 կետից բաղկացած հարցացուցակներ, որոնք պետք է լրացվեին: Բերենք անկետային մի նմուշ: Նրանում նշվում էր յուրաքանչյուր հեռացողի անուն, հայրանուն, ազգանունը, տարիքը, ծննդյան վայրը, սոցիալական և ընտանեկան դրությունը, կուսակցության անդամակցության ժամկետը, կուսակցական աշխատանքի բնույթը, մասնակցությունը կամավորական շարժմանը, քաղաքացիական կոիվներին ու ազգամիջյան ջարդերին և վերջապես նրա հասցեն, գտնվելու վայրը և ստորագրությունը[3]: Եվ այսպես՝ բազմաթիվ գործերում հայրուրներով ու հազարներով բերված են յուրաքանչյուր հեռացողի անկետային տվյալները: Այդ կապակցությամբ ԿԿ-ի քարտուղարի հաշվետվություններից մեկում կարդում ենք. «Պատրաստված են հատուկ հարցաթերթիկներ, որոնց միջոցով Համահայկական կոնֆերանսի պահին ավելի հան-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 208, թ. 1–2:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 3–6:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 224, թ. 4–122:

զամանորեն կիետազոտվի և կուսումնասիրվի կուսակցությունից հեռացողների կազմը»[1]:

ՀՅԴ-ից հեռանալու հայտարարություն տվող հազարավոր մարդկանց տվյալները դիտարկելիս կարելի է ենթադրել, որ նրանցից շատերը հասկանալիորեն հաճախ խուսափել են կասկածելի և իրենց անձի համար վտանգ ներկայացնող հարցերին ճիշտ պատասխանել, որպեսզի զերծ մնան հետագա հետապնդումներից: Բայց և կասկած չկա, որ հիշյալ հարցաթերթիկ-անկետաները հենց միայն դաշնակցական լինելու համար, անշուշտ, հետագայում (1930-ական թթ. մեծ ռեպրեսիաների շրջանում) օգտագործվել են ներքին գործերի, պետանվտանգության, դատախազության և այլ մարմինների կողմից քաղաքական բռնաճնշումների ընթացքում:

Այդ գործընթացը վերահսկում էր Հայչեկան: Իհարկե, բոլոր հեռացողների անկետային տվյալները չէ, որ կազմվել ու հայտնի են: Հայչեկայի նախագահի տեղակալ Ս. Մելիք-Օսիպովի և գաղտնի բաժնի պետ Խ. Մուղդուսու 1923 թ. սեպտեմբերի 1-ի թիվ 4118/c հույժ գաղտնի գրությամբ՝ ուղղված անձամբ Հայկոմկուսի ԿԿ-ի քարտուղարին (հավանաբար Ալ. Շահուվարյանին – Ա.Հ.), դրան կից բերված է հուլիսի 19-ից մինչև սեպտեմբերի 1-ը Դաշնակցությունից հեռացած 846 անձանց ցուցակը: Ընդ որում, տեղեկացվում է, որ 382-ի անձնական տվյալները իրենց հայտնի են, իսկ 464-ինը՝ ոչ[2]: Այդ նշանակում էր, որ Հայչեկան հաշվառում և իր մոտ էր պահում Դաշնակցության անդամների ու հեռացողների հնարավորին ողջ ցանկը:

Ինչպես արդեն ասվել է, լուծարման համագումարի նախապատրաստական փուլում, Նախաձեռնող բյուրոն հրավիրել է տասնյակ նիստեր: Օրինակ, այդպիսիներից մեկը կայացել է 1923 թ.

---

[1] Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 39:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 209, թ. 1–3 դարձերես:

հոկտեմբերի 5-ին՝ Հ. Ավալյանի նախագահությամբ: Օրակարգում լսվել են մի շարք հարցեր՝ 1. Նախաձեռնող բյուրոյի ուժեղացումը, 2. Թավրիզից վերադարձած նախկին դաշնակցական ընկերների օգտագործումը, 3. Նախաձեռնող բյուրոյի, գավառային ու շրջանային մարմինների կապի ուժեղացումը և այլն: Գործին օգնելու համար Երևանի ուղղիչ տնից ազատ էին արձակվել նախկին դաշնակցականներ՝ Վ. Մադոնցը. Գ. Գրիգորյանը, Գ. Նասիբյանը, Լիպարիտ Զաքարյանը, Ռ. Ղամբարյանը, Հայկ Ստեփանյանը, Սաֆար Մելիք--Սարգսյանը: Սրանց խորհուրդ-հանձնարարական էր տրվել հանդես գալ առանձին հոդվածներով և քննադատել իրենց նախկին կուսակցության անցյալը և ներկան[1]: Հոկտեմբերի 10-ի թիվ 5 նիստում Բյուրոյի հանձնարարությամբ լսվել են Էջմիածնի գավառի տաճկահայ գյուղերը շրջած Հմայակ Սնդաշունիի և Միհրան Սերջանյանի զեկուցումները: 1923 թ. սեպտեմբեր-հոկտեմբերի սկզբի 28 օրերի ընթացքում նրանք շրջել են 41 գյուղ: Նախաձեռնող բյուրոյին տված զեկուցման համաձայն՝ նշված 41 գյուղերից 37-ը տվել են հայտարարություն, իսկ 4-ը չեն տվել՝ դաշտային աշխատանքներով զբաղված լինելու պատճառով: Զեկուցումից պարզվել է, որ «բացառությամբ Վասպուրականի հայության, տաճկահայ աշխատավոր գյուղացիության մեջ զտարյուն, տոմսավոր դաշնակցականներ շատ քիչ են եղել՝ մոտ 5 տոկոս, բայց և անհերքելի է, որ Դաշնակցության հետևից է գնացել տաճկահայ աշխատավորության և մտավորականության խոշոր տոկոսը»[2]: ՀԿ(բ)Կ ԿԿ-ի հուլիս-սեպտեմբերյան հաշվետվության տվյալներով, այսինքն՝ հոկտեմբերի սկզբի դրությամբ, ամբողջ հանրապետությունում ՀՅԴ-ից հեռացած 2125 մարդուց 900 եղել է արևմտահայ[3]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 213, թ. 1–2:
[2] Նույն տեղում, թ. 4–5:
[3] Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 38:

ՀԱԱ Դաշնակցության (1457) ֆոնդի գործերից մեկում (208) կան դաշնակցականների կամ քաղաքական հողվածներով դատապարտված բանտարկյալների հարազատների բազմաթիվ նամակ-դիմումներ՝ ուղղված Նախաձեռնող բյուրոյին ու համագումարի նախագահությանը, որոնցում խնդրում էին լուծարման համագումարի հրավիրման առթիվ քննության առնել իրենց հարազատների գործերը և նրանց Չեկայի բանտից ազատ արձակել[1]: Կան նաև խմբակային հանրագրեր՝ բողոքելով այն մասին, որ իրենց դաշնակցականի պիտակով զրկել են ընտրելու իրավունքից: Օրինակ, Դիլիջանի և Դարբալաքաղաքի շատ գյուղացիներ, Վաղարշապատի բնակիչ Խաչատուր Բաբայանը խնդրում էին Նախաձեռնող բյուրոյին՝ միջնորդելու համապատասխան մարմինների առջև՝ վերականգնելու իրենց իրավունքները[2]:

Լուծարման համագումարի նախօրյակին՝ հոկտեմբերի սկզբին, ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախագահությունը՝ իբրև ներման մի արտահայտություն, Արտակարգ հանձնաժողովի նախագահ Ս. Մելիք-Օսիպովի զեկուցման հիման վրա որոշում է ստեղծել հանձնաժողով (Ս. Համբարձումյան, Ա. Շահսուվարյան կազմով) և հանձնարարել նրան վերանայել Երևանի ուղղիչ տան և ԽՍՀՄ համակենտրոնացման ճամբարներում պատիժը կրող դաշնակցականների ցուցակը՝ նրանց ազատելու համար: Ազատմանը իրավական և օրինական բնույթ տալու համար այն պետք է իրագործվեր Հայաստանի Կենտգործկոմի միջոցով[3]: Սակայն այդ որոշման արդյունքի մասին փաստաթուղթը լռում է:

Անկասկած, ՀՅԴ հայաստանյան կառույցի լուծարման նպատակ ունեցող համագումարը չի եղել ինքնաբուխ և նախաձեռնվել է

---

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 208, թ. 11–12, 15, 39 և այլն:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 40–43:
[3] Տե՛ս Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 37:

Հայկոմկուսի կողմից: Ռուսաստանի օրինակով այս քայլը ձեռնարկել են կուսակցական-պետական մարմինները: Այդ նպատակով ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1923 թ. սեպտեմբերի 24–26-ի պլենումում որոշում էր ընդունվել հիմնել հանձնաժողով՝ Դաշնակցություն կուսակցության քաղաքական և կազմակերպական քայքայման աշխատանքները վարելու համար: Ուստի ԿԿ-ի նախագահությունը, հոկտեմբերի 2-ի որոշմամբ, ստեղծում է համապատասխան հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են Շ. Ամիրխանյանը, Ա. Կարինյանը և Ալ. Շահսուվարյանը[1]: Ինչպես արդեն նշվել է, ՀՅԴ կազմալուծման գործընթացի քաղաքական ու կազմակերպական ղեկավարումը գտնվում էր ԿԿ-ի քարտուղար Ալ. Շահսուվարյանի հսկողության ներքո: Վերջինիս հետ անմիջական կապ էին պահպանում նախկին դաշնակցականներ Հայկ Ավալյանը և Նիկ. Կրմենանցը:

Լուծարման համագումարը կազմակերպելու համար ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի հոկտեմբերի 9-ի որոշմամբ (զեկ. Ա. Մյասնիկյան) հանձնարարվում է Հայկոմկուսի ԿԿ-ին այդ նպատակով «ամենասեղմ կարգով միջոցներ բաց թողնել»[2]: Նույն որոշումը կրկնվել է նոյեմբերի 8-ին՝ «Գաղտնի ծախսերի համար ՀԿ(բ)Կ ԿԿ-ին միջոցներ բաց թողնել»[3]:

Այս ամենը վկայում է, որ Դաշնակցության լուծարման համագումարի կազմակերպումը և անցկացումը համարվել է կուսակցական-պետական կարևոր միջոցառում: Հարկավոր էր առաջին հերթին Հայաստանում կազմաքանդել ու վերացնել Հայկոմկուսի համար ամենավտանգավոր քաղաքական ուժը՝ Դաշնակցություն կուսակցությունը: Նախկին դաշնակցականների համագումարին մասնակցելու իրավեր են ստանում նաև Ղարաբաղի նախկին դաշնակցականների ներկայացուցիչներ և Հայաստանի դաշնակցական

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 48:
[2] Նույն տեղում, գ. 11, թ. 86:
[3] Նույն տեղում, թ. 93:

ուսանողների ներկայացուցիչներ[1]: Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարի Նախաձեռնող բյուրոն 1923 թ. հոկտեմբերի 15-ին նամակով դիմել է Բաքվի դաշնակցական ընկերներին՝ առաջարկելով լքել Դաշնակցության շարքերը և միանալ իրենց համագումարի ձայնին[2]: Բաքվի դաշնակցական նախկին բանվոր՝ ոմն Բանվոր Ռաշիդ ծածկանունով մեկը, շուրջ 10-թերթանոց ընդարձակ նամակում նկարագրել է իր ապրած դժվարին հեղափոխական պայքարի պատմությունը, իսկ վերջում հանգել խորհրդային իշխանության պաշտպանության գաղափարին[3]:

Տեղեկացնենք, որ նախատեսվում էր Դաշնակցության վերացման համահայաստանյան համագումարից հետո նախապատրաստվել հրավիրելու համակովկասյան համագումար՝ Բաքվի, Թիֆլիսի և այլնի նախկին դաշնակցականների մասնակցությամբ[4]: Ավելին, Հայկոմկուսը ձգտում էր նման համագումարի կազմակերպմանը հասնել նաև արտասահմանում՝ այդ կուսակցության ամբողջական ու վերջնական քայքայման նպատակով[5]:

Այսպիսով՝ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի գիտությամբ ու հրահանգով չորս-հինգ ամիս տևած նախապատրաստական աշխատանքներից հետո, 1923 թ. նոյեմբերի 20-ին՝ երեկոյան ժամը 6-ին (արխիվային գործում և «Խորհրդային Հայաստան» թերթում նշված է ժամը 8-ը), Երևանի պետական թատրոնի դահլիճում 3-րդ ինտերնացիոնալի և համաշխարհային հեղափոխության կարգախոսների ներքո տեղի ունեցավ համագումարի հանդիսավոր բացումը: «Այսօր,- կարդում ենք Հայ

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 213, թ. 8 և 11:

[2] Տե՛ս «Մարտակոչ», Թիֆլիս, 21 հոկտեմբերի 1923 թ.:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 208, թ. 44–51:

[4] Տե՛ս նույն տեղում, գ. 213, թ. 14, «Խորհրդային Հայաստան», 17 հոկտեմբերի 1923 թ.:

[5] Տե՛ս «Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в стране (1922–1934 гг.) т. 2, часть 1, М., 2001, с. 32.

կոմկուսի ԿԿ-ի պաշտոնաթերթ «Խորհրդային Հայաստանում»,- բացվում է շարքային նախկին դաշնակցականների համահայաստանյան համագումարը: Վերջին 5 ամիսներին տեղի են ունեցել ժողովներ ու դեկլարացիաներ, որոնցով զանգվածաբար հրաժարվել են Դաշնակցությունից: Հրավիրվել են նախ գավառակային, ապա գավառային կոնֆերանսներ, իսկ այսօր գումարվում է համահայաստանյան համագումարը, որ ոճրագործ այդ կուսակցությունը այլևս գոյություն չունի Հայաստանի համար և իրավունք չունի խոսելու հայ ժողովրդի անունից»[1]: Ի նշանավորումն համագումարի բացման Նախաձեռնող բյուրոն «Մենք խզում ենք մեր կապերը Դաշնակցությունից և մտնում 3-րդ Ինտերնացիոնալի դրոշի տակ» կարգախոսով անգամ լույս ընծայեց «Լրաբեր» մեկօրյա թերթ[2]:

Համագումարի բացումն իրականացրեց Նախաձեռնող բյուրոյի ղեկավար, ՀՅԴ անդամ Ա. Բակունցը: Իր խոսքում նա նշեց, որ չորս ամիս շարունակ իրենք նախապատրաստվել են համագումարին և որ համագումարից հետո ավելի քան 4000 նախկին շարքային դաշնակցականներ, հանձինս իրենց լիազոր պատգամավորների, պետք է վերագնահատեն Դաշնակցության գործունեությունը, հեռանան այդ կուսակցությունից և լինեն Խորհրդային Հայաստանի վերաշինման մասնակից[3]: Բակունցը ընդգծում էր, թե «մենք այլևս անկարող ենք մնալ Դաշնակցության մեջ»[4]: Բակունցի արտահայտած սույն միտքը գալիս է հաստատելու մեր այն պնդումը, որ համագումարի պատգամավորները և հայտարարություն տվածները դեռևս շարունակում էին մնալ Դաշնակցության անդամ: Ուստի նա հասկացնում էր, որ հարկավոր է հեռանալ Դաշնակցությունից ոչ միայն որպես անդամ, այլև հայացքներով ու մտածելակերպով: «Հրաժարվելով

---

[1] «Խորհրդային Հայաստան», 20 նոյեմբերի 1923 թ.:
[2] «Լրաբեր», Ե., 20 նոյեմբերի 1923 թ.:
[3] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 2–3:
[4] Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 7:

Դաշնակցությունից,- շարունակում էր Բակունցը,- մենք մեր կենսունակ ուժերը ի սպաս ենք դնում Խորհրդային Հայաստանի վերաշինման ու պայքարին՝ ուղղված այն բոլոր շարժումների դեմ, որոնք նպաստակ կունենան խախտելու մեր ազատ կյանքը»[1]:

Քանի որ իր բացման խոսքում Ա. Բակունցը ակնարկում էր Հայաստանում 4000 նախկին դաշնակցականների առկայության մասին. այս թվի վերաբերյալ հարկ ենք համարում տալ որոշ պարզաբանումներ: Ավելի ուշ համագումարի մասնակիցների և Հայաստանի շարքային դաշնակցականների ստույգ թվաքանակի վերաբերյալ նրա անունից 2-րդ Ինտերնացիոնալի միջազգային բյուրոյին ուղղված նամակից տեղեկանում ենք, որ համագումարին մասնակցել է 247 պատգամավոր՝ ներկայացնելով 4032 շարքային անդամների[2]: Սակայն համագումարի ավարտից հետո Արտակարգ հանձնաժողովի (Չեկայի) 1923 թ. դեկտեմբերի վերջի տարեկան ամփոփագրում Հայաստանում Դաշնակցությունից հեռացածների թիվը նշված էր 4300 մարդ[3]:

Հարց է ծագում. իրո՞ք 1923 թ. աշնանը Խորհրդային Հայաստանում ՀՅԴ անդամների թիվը եղել է 4000-ի չափ: Մեր կարծիքով՝ նրանք ավելի մեծ թիվ են կազմել, էլ չենք խոսում կուսակցության համակիրների մասին: Պարզվում է, որ Դաշնակցության անդամներից շատերը կուսակցությունից հեռանալու հայտարարություն չեն տվել, մնացել են ծպտյալ վիճակում, չեն արձագանքել համագումարին: Բակունցը Նախաձեռնող բյուրոյի հաշվետու զեկուցման մեջ նշում է, որ «շատերը չէին ուզում դեկլարացիա տալ»[4]: Լուծարման

---

[1] Նույն տեղում:

[2] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 132:

[3] ՀՍԽՀ Արտակարգ հանձնաժողովի 1923 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակաշրջանի ամփոփագրերը Խորհրդային Հայաստանի իրավիճակի մասին, տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետ՝ ԲՀԱ), Ե., 2013, թիվ 1, էջ 111:

[4] Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 18:

համագումարի նախօրյակին՝ նոյեմբերի 15-ին, Հայչեկայի հայտնած տվյալներով կուսակցությունից հեռացել է 2630 մարդ[1]: Հավանաբար խոսքն այստեղ հայտարարություն տված մարդկանց մասին է: Վերոնշյալ զեկուցման հեղինակներն այն միտքն են զարգացնում, որ «համագումարի պատգամավորների շուրջ 20 տոկոսն այն տարրերն են, ովքեր, հայտարարություն տալով և խցկվելով պատգամավորների շարքերում, ուզեցել են իրենց վրայից հանել ամեն տեսակ կասկածները և իրենց համար ստեղծել աշխատանքի ավելի լավ պայմաններ»[2]: Բակունցն իր զեկուցման մեջ շեշտում էր, որ «Հայաստանում, անշուշտ, մնում են անհատ դաշնակցականներ, որոնք, քաղաքացիական քաջություն ցույց տալով, դեկլարացիա չեն տվել»[3]: Նա նաև նշում էր, որ, անշուշտ, մնացել են անհատ դաշնակցականներ, ովքեր շարունակում են հավատարիմ մնալ այդ կուսակցությանը, երկար տարիներ գործել են նրա կազմում և «բարոյական մահ են համարում իրանց համար դեկլարացիա տալը. պետք է հարգել այդպիսիների «քաղաքացիական քաջությունը» և թողնել նրանց մնալ սոսկական քաղաքացիներ»[4]:

Առաջ անցնելով փաստենք՝ մեր ձեռքի տակ կան տվյալներ, որ լուծարման համագումարից տարիներ անց էլ ոմանք ցանկություն չեն հայտնել դուրս գալ Դաշնակցության շարքերից: Այսպես. օրինակ, ՀԿ(բ)Կ Մեղրու շրջկոմի քարտուղար Ս. Բուդումյանը իր վերադասին՝ ԿԿ-ի քարտուղարին ուղղված 1926 թ. փետրվարի 19-ի գրությամբ տեղեկացնում է, որ մինչ օրս նրանցից (դաշնակցականներից) ոչ մեկը հրապարակայնորեն չի հայտարարել Դաշնակցությունից դուրս գալու մասին: «Նրանք բոլորը,- շարունակում է կուսշրջկոմի քարտուղարը,- առանց բացառության, ներկայումս

---

[1] Տե՛ս ԲՀԱ, Ե., 2013, N 1, էջ 99:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 111:
[3] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ.13:
[4] «Խորհրդային Հայաստան», 23 նոյեմբերի 1923 թ.:

եռանդուն կերպով զբաղված են Մեղրու շրջանում իրենց կուսակցության շարքերը ամրապնդելու կազմակերպական աշխատանքով»[1]:

Դարձյալ հարց է ծագում. որո՞նք էին այն կռվանները, ըստ որոնց, այնուամենայնիվ, ՀՅԴ-ն Հայաստանում խորհրդային իշխանությանը դիմակայելու որոշակի հող էր պահպանում. քաղաքական առումով դա ազգային հարցի ոչ հայանպաստ լուծումն էր: Բավական է հիշել Մոսկվա-Կարսի պայմանագրերը, Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Ադրբեջանին և այլն: Սոցիալ-տնտեսական ոլորտում պահպանվում էին երկրի քայքայված վիճակը, հարկային ծանր բեռը, չքավորությունը, սովը, գործազրկությունը, գործադուլները և այլն:

Բակունցի բացման խոսքից հետո համագումարում ողջույնի խոսքերով հանդես են գալիս Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Զանգեզուրի, Էջմիածնի գավբյուրոների ներկայացուցիչները, երիտասարդ դաշնակցականների համագումարի Նախաձեռնող բյուրոյի ներկայացուցիչ Լ. Մարությանը, Բաքվի բանվորների ներկայացուցիչներ և այլն[2]:

Կազմվում են 5 հոգուց բաղկացած նախագահություն, նաև քարտուղարություն, խմբագրական և մանդատային հանձնաժողովներ: Նախագահության անդամ են ընտրվում Ալեքսանդր Բակունցը, Պողոս Տեր-Պողոսյանը, Գրիգոր Բալասբեկյանը, Հարություն Թումյանը և Սիմոն Փոլյանը: Ինչպես բնորոշ էր խորհրդային վարչակարգին, որոտընդոստ ծափերով համագումարի պատվավոր նախագահ են ընտրվում Լենինը, Զինովևը, Տրոցկին, Մյասնիկյանը, Համբարձումյանը, Լուկաշինը և Շահսուվարյանը: Որոշվում է հա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 22, թ. 11:
[2] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 4–7:

մագումարի անունից պատվավոր նախագահներին ողջույնի հեռագրեր ուղարկել:

ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախագահության նոյեմբերի 19-ի որոշմամբ հաստատվում է օրակարգը, սահմանվում ռեգլամենտը. նիստերը ընթանալու էին դռնփակ:

Օրակարգում դրված էին հետևյալ հարցերը.

1. Զեկուցում Նախաձեռնող բյուրոյի գործունեության մասին,

2. Զեկուցում միջազգային քաղաքական դրության մասին,

3. Դաշնակցության անցյալի և գործունեության վերագնահատում,

4. Ընթացիկ հարցեր[1]:

3. Բակունցի զեկուցման մասին

1923 թ. նոյեմբերի 21-ին՝ առավոտյան, (երկրորդ) նիստում (նախագահող Հ. Թումյան), օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց համագումարի Նախաձեռնող բյուրոյի նախագահ Ա. Բակունցը: Վերջինս համագումարի ամբիոնից հայտարարեց. «Ընկերնե՛ր, Խորհրդային Հայաստանում այլևս դաշնակցական կազմակերպություններ չեն մնացել: Մնացել են միայն անհատներ ու խմբակներ»[2]: Այնուհետև նա քննադատեց ՀՅԴ կովկասյան կազմակերպության անունից Դրո-Ղազազյանի կողմից արված վերջին հայտարարությունը[3]՝ այն որակելով «անտակտ և ոչ ճիշտ»[1]: Բակունցը քննադատեց

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 8, «Խորհրդային Հայաստան», 20 նոյեմբերի 1923 թ., նաև՝ «Բաներ Հայաստանի արխիվների» (ԲՀԱ), Ե., 2013, N 1, էջ 104: Տեղեկացնենք, որ նոյեմբերի 19-ին ՀԿ(բ)Կ ԿԿ-ն է երաշխավորել համագումարի օրակարգը (տե՛ս Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 44):

[2] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 9:

[3] Խոսքը վերաբերում է Դաշնակցություն կուսակցության կովկասյան կազմակերպությունների այդպես հիշատակված 1923 թ. օգոստոսի 1-ի հայտնի դեկլարացիային (հայտարարությանը), որում մասնավորապես անկեղծ համոզմունք էր հայտնվում, որ իրենք «վճռել են չգործել խորհրդային իշխանության դեմ», որ իրենք խոր-

դեկլարացիայի հեղինակներին նաև նրա համար, որ «այդ փաստաթղթում ոչ մի խոսք չկա Դաշնակցության լիկվիդացիայի մասին, և իբր նրանք հույս ունեն լեգալացնել Դաշնակցությունը»[2]:

Այս կապակցությամբ կցանկանայինք զուգահեռներ անցկացնել Բակունցի զեկուցման և ՀԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար Ա. Հովհաննիսյանի «Նորք» հանդեսում «Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կույսը» հոդվածում արտահայտած մտքերի միջև: Նախ, ի տարբերություն Բակունցի, Ա. Հովհաննիսյանը նշել է, որ «Հայաստանում կան դաշնակցական ընդհատակյա թույլ կազմակերպություններ, որոնք տանում են միայն հետախուզական աշխատանքներ իրենց արտասահմանյան մարմինների համար»[3]: Այնուհետև, գնահատական տալով ՀՅԴ Կովկասյան խմբերի և Վրաստանի ԿԿ-ի ներկայացուցիչների՝ «Դրո-Ղազազյան և ուրիշներ» դեկլարացիային (հայտարարությանը), այն համարել է «ոչ լիարժեք, որովհետև նրանում չի դատապարտված ՀՅԴ քաղաքական վարքագիծը անցյալում»[4]: Այս կապակցությամբ Բակունցի և Ա. Հովհաննիսյանի արտահայտած մտքերի որոշակի նմանությունից կարելի է եզրակացնել, որ

հրդեհային իշխանության թշնամիներ չեն . . . և որ, ով դրսից թե ներսից կռիվ կմղի խորհրդային իշխանության դեմ, նա հայ ժողովրդի թշնամին է (տե՛ս Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 72–73): Խորհրդային իշխանության համար նպաստավոր այդ հայտարարության հրապարակմանը չէր առարկել ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի նախագահությունն իր 1923 թ. հուլիսի 23-ի որոշմամբ: Հայտարարության հրապարակումից հետո որոշվում է ազատել ձերբակալված դաշնակցականներին, իսկ Դրոյին և Կ. Ղազազյանին թույլատրել մեկնելու արտասահման (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 11, թ. 39): Մյուս կողմից հարկ է նշել, որ Դրո-Ղազազյան խորհրդամետ հայտարարության կապակցությամբ ՀՅԴ արտասահմանյան մարմինները դժգոհություն են հայտնել: Նրանք բողոքել են, որ Դրոն հանդես է եկել Կովկասի կազմակերպությունների անունից, տե՛ս «Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в стране (1922–1934 гг.), т. 2, часть 1, М., 2001, с. 33.

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 9:

[2] Նույն տեղում:

[3] «Նորք», Ե. 1923, գիրք 3 (ապրիլ-սեպտեմբեր), էջ 169:

[4] Նույն տեղում, էջ 183:

Բակունցի և համագումարում կարդացված մյուս զեկուցումները, անշուշտ, անցել են ԿԿ-ի զրաքննության մաղով, կամ էլ նրանք առաջնորդվել են ԿԿ-ի քարտուղարի՝ Դաշնակցությանը տրված գնահատականներով: Սակայն տվյալ դեպքում Ա. Բակունցը աչքի է ընկել այդ հայտարարությանը տրված ԿԿ-ի քարտուղարից ավելի կոշտ ու ժխտողական որակումներով: Միգուցե դրանով ցանկացել է ավելի ընդգծել իր նվիրվածությունը Հայկոմկուսին: Այլապես, ինչպես կարելի է հասկանալ, որ իրենց իսկ՝ Բակունցի և մյուսների հայտնած տվյալներով միայն ՀՍԽՀ-ում առկա էր 4000-ից ավելի դեռևս իր կուսակցությունից պաշտոնապես չհրաժարված ՀՅԴ անդամ, էլ չենք խոսում ավելի մեծաթիվ համակիրների մասին:

Հայաստանի Պետական քաղաքական վարչությանը (ՊՔՎ) վերաբերող 1923 թ. հունվարի ամփոփագրում, միգուցե չափազանցելով իրական պատկերը, հայտնվում էր, որ «Ամբողջ հանրապետությունում նկատվում է դաշնակների կազմակերպական աշխատանքների ուժեղացում: Ամենուրեք տեղի են ունենում դաշնակների ժողովներ: Ենթադրվում է, որ ուզում են զինված ապստամբություն բարձրացնել»[1]: Ի լրումն Ա. Հովհաննիսյանի արտահայտած մտքին՝ հավելենք, որ ՀՅԴ լուծարման համագումարից հետո՝ 1923 թ. դեկտեմբերի սկզբին, Հայաստանի խորհուրդների 3-րդ համագումարում տրված զեկուցման մեջ Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինը ևս նշել է, որ Հայաստանում դեռևս առկա է Դաշնակցություն կուսակցությունը, ու թեև չկա կուռ կազմակերպություն, սակայն կան առանձին խմբակներ ու անդամներ[2]:

Հ.Յ. Դաշնակցությանը տրված այս և հետագա գնահատականների վերաբերյալ միջանկյալ կերպով կցանկանայինք ընդգծել, որ

---

[1] *Հայաստանը սովետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)*, Ե., 2008, էջ 42:

[2] Տե՛ս Լուկաշին Ս., *Հոդվածներ, զեկուցումներ և հատներ*, Ե., 1986, էջ 162:

դեռևս ՀՅԴ անդամ Բակունցը, թեև հապշտապ կերպով փորձել է վերանայել իր քաղաքական անցյալը ու անկեղծորեն ծառայել խորհրդային իշխանությանը, սակայն որքան էլ դա պարադոքս լինի, հայ մեծ արձակագրի հետագա ողբերգական ճակատագրում ոչ պակաս դեր են խաղացել լուծարման համագումար նախաձեռնելու, անցկացնելու, ելույթներ ունենալու կապակցությամբ նրա անձնական հակառակորդների զրպարտանքներն ու շինծու մեղադրանքները: Այսպես կոչված «ուղղափառ պրոլետարական գրողները» նրան պիտակավորել են որպես նացիոնալիստ, դաշնակ, «ժողովրդի թշնամի», տրոցկիստ և այլն: Մասնավորապես 1936 թ. հունիսի 4-ին տեղի ունեցած ժողովում տխրահռչակ Ն. Զարյանը նշել է. «Դաշնակցական լիկվիդատորների համագումարում նրա (Բակունցի – Ա.Հ.) արտասանած ճառը ոչ թե լիկվիդացիայի ճառ է, այլ քողարկված աշխատանքի անցնելու ձևերի հետագա ծրագիր: ... Իմ խորին համոզմունքով մեր կուսակցական կազմակերպության մեջ Ակսելը եղել է դաշնակցության գիտակից ագենտը...»[1]: Մինչդեռ Բակունցի ելույթների նյութերին ծանոթանալիս, ընդհակառակը, կարելի է տեսնել միայն բոլշևիկյան կուսակցությանը հավատարիմ ծառայելու չափից ավելի մեծ նվիրում:

Անդրադառնալով լուծարման համագումարի Նախաձեռնող բյուրոյի կազմակերպական աշխատանքներին՝ Բակունցը պարզաբանում էր, որ սկզբում ծրագրված էր համակովկասյան համագումար հրավիրել Թիֆլիսի, Բաքվի և այլ կազմակերպությունների մասնակցությամբ, ինչպես և դիմել արտասահմանին՝ համագումարին տալով մի տեսակ համադաշնակցական բնույթ[2]: Ինքնին հասկանալի է, որ այդ պլանը մշակվել ու հրահանգավորվել էր Հայկում

---

[1] Գասպարյան Դ., *Ակսել Բակունց. կյանքը և ստեղծագործությունը*, Ե., 2009, էջ 51:

[2] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 10:

կուսի ԿԿ-ի խոհանոցում: ԿԿ-ի քարտուղար Ս. Լուկաշինը ՀԿ(բ)Կ 1-ին համագումարի առթիվ 1922 թ. հունվարի 25-ին տպագրված հոդվածում մասնավորապես նշում էր, որ հարկավոր է քայքայել և վարկաբեկել դաշնակցությունը նաև «կարմիր գծից» այն կողմ՝ արտասահմանում[1]: Նույն կերպ, ՀԿ(բ)Կ 2-րդ համագումարում (1923 թ. փետրվար) ԿԿ-ի քաղաքական հաշվետվության մեջ Ս. Լուկաշինը կրկին կուսակցության կարևոր խնդիրներից էր համարում «Դաշնակների քայքայումը արտասահմանում»[2]: Սակայն ինչ-ինչ հանգամանքների հետևանքով հարցը հետաձգվել էր և որոշվել առայժմ սահմանափակվել համահայաստանյան համագումարով: Այս կապակցությամբ կարելի է ենթադրել, որ ա) հավանաբար տեղերից արձագանք չի եղել, բ) նման համագումարի հրավիրումը կազմակերպչական շատ մեծ աշխատանք կպահանջեր, գ) կամ էլ, որը քիչ հավանական է, խորհրդային իշխանությունները վախեցել են, որ նման ձեռնարկի դեպքում արտերկրի հայկական միջավայրում մեծ աղմուկ և դիմակայություն կառաջանար: Մեր կարծիքով, արտասահմանում ՀՅԴ քայքայման ամեն տեսակ փորձ, անշուշտ, կձախողվեր:

ՀՅԴ Պուքրեշի (Բուխարեստի) 1921 թ. (ապրիլ) խորհրդաժողովում, քննության առնելով Բյուրոյի գործունեությունը, նրա անբավարար կազմակերպական աշխատանքը նոր փոփոխված պայմաններում, խնդիր էր դրվել ուժեղացնել կուսակցության շարքերի գաղափարական համախմբումը և կանգնած մնալ «Միացյալ Հայաստանի անկախության տեսակետի վրա»[3]: Երկու տարի անց՝ 1923 թ. ապրիլ-մայիսին տեղի ունեցած ՀՅԴ Վիեննայի խորհրդաժողովը

---

[1] *Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում*. Ե., 1960, էջ 560:

[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 1. թ. 5:

[3] Տասնապետեան Հ., *Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. ժողով (1890–1924)*. Աթէնք, 1988, էջ 159:

դարձյալ որոշում էր ընդունել իր շարքերի գաղափարական ու ծրագրային անսասանության վերաբերյալ. «Ազգային-քաղաքական ուղղության ղեկավար սկզբունքը շարունակում է մնալ Միացյալ և Անկախ Հայաստանի պահանջը»[1]: Սակայն խորհրդային պետությունը թշնամի համարվող այլ կուսակցությունների շարքում ջանք չէր խնայում արտերկրում ևս քայքայելու Դաշնակցությանը: ՀՅԴ քայքայման գործը առաջ էր տարվում թե՛ Կոմինտերնի, թե՛ ՀԿ(բ)Կ-ի և թե՛ նույնիսկ ՀՕԿ-ի միջոցով: Իսկ ՀՅԴ արտասահմանյան կազմակերպությունների դեմ պայքարում օգտագործել են թե՛ տվյալ երկրի (օրինակ՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Հունաստանի, Բուլղարիայի և այլն) կոմկուսների հայ բանվորական խմբերը և թե՛ անգամ ռամկավարներին ու՝ հնչակյաններին: Որովհետև ըստ Լուկաշինի՝ Հայաստանում, բացի Դաշնակցությունից, մյուս կուսակցությունները կենդանություն ցույց չեն տալիս[2]: Այս նույն միտքն է զարգացնում ականավոր պատմաբան Ն. Ադոնցը. «Հայ բոլշեւիկ կառավարությունը եւ հայ կոմունիստները,- գրում է նա,- երկրում թե գաղութներում մաքառում են բացառապես Դաշնակցության դեմ, աշխատելով փշրել այս կազմակերպությունը ամեն միջոցներով, որպես միակ լուրջ եւ կազմակերպված հակառակորդ ուժ»[3]:

Այնուամենայնիվ, եթե արտերկրի դաշնակցական կառույցները բնավ չարձագանքեցին Նախաձեռնող բյուրոյի կոչերին, ապա Անդրկովկասի որոշ կազմակերպություններ կա՛մ արձագանքել, կա՛մ հրավեր են ստացել մասնակցելու համահայաստանյան համագումարին: Արդեն տեղեկացվել է, որ ՀՅԴ լուծարման հայաստանյան համագումարին մասնակցելու հրավեր են ստացել Բաքվի, նաև՝ Ղարաբաղի դաշնակցականները[4]: ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի պաշտոնաթերթ «Մարտակոչը» տեղեկացնում էր, որ նոյեմբերի 4-ին Ստեփանակերտում կայացել է

---

[1] Տասնապետեան Հ., նշվ. աշխ., էջ 165:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 1, թ. 5–6:
[3] Ադոնց Ն., *Հայկական հարց*, հ. Ա, Ե., 1996, էջ 175:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 213, թ. 8–11:

շարքային դաշնակցականների ժողով, որտեղ միաձայն կոչ-բանաձև է ընդունվել Դաշնակցությունից հեռանալու մասին[1]: Նույնպիսի կոչ է ընդունվել Բաքվի և նրա շրջանների Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչների կոնֆերանսում[2]: Առաջ անցնելով՝ նշենք, որ լուծարման հայաստանյան համագումարից հետո էլ շարունակել է օրակարգում մնալ Կովկասում և արտասահմանում նս նման համագումարների հրավիրման հարցը: Բակունցն իր կենսագրականում հայտնում է, որ 1923 թ. դեկտեմբերին Գ. Խարմանդարյանի աջակցությամբ Խարկովում փորձել է լիկվիդացիոն շարժում ծավալել դաշնակցականների մեջ, սակայն հաջողություն չի ունեցել[3]: ՌԿ(բ)Կ Անդրերկրկումի քարտուղարության բյուրոյի 1924 թ. նոյեմբերի 19-ի նիստում (զեկ. Մռավյան, Մյասնիկյան, Օրջոնիկիձե) որոշվում է «Անհրաժեշտ համարել արտասահմանում դաշնակների քայքայման գծով համագումարի հրավիրումը: Համագումարի անցկացումը հանձնարարել Ա. Երզնկյանին և Ս. Փիրումյանին: Վերջինիս ընդունել կոմկուսի մեջ»[4]: Մեր ձեռքի տակ եղած տվյալներով դրանից հետո Հայկոմկուսի ԿԿ-ի նախագահության 1925 թ. փետրվարի 10-ի նիստում (զեկ. ԿԿ քարտուղար Ալ. Շահսուվարյան) լսվել է Վրաստանում, Ադրբեջանում և Հյուսիսային Կովկասում Դաշնակցություն կուսակցության կազմալուծման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին հարցը, և կրկին վերահաստատվել է ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախագահության 1925 թ. հունվարի 5-ի «Դաշնակների շրջանում հետագա աշխատանքների մասին» որոշումը[5]: Հայկոմկուսի ԿԿ-ի նախագահության մեկ այլ՝ 1925 թ. ապրիլի 6-ի նիստում, դարձյալ լսվել է Հյուսիսային Կովկասում Դաշնակցության կազմա-

---

[1] Տե՛ս «Մարտակոչ», Թիֆլիս, 18 նոյեմբերի 1923 թ.:
[2] Տե՛ս նույն տեղում, 24 նոյեմբերի 1923 թ.:
[3] Տե՛ս Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 152:
[4] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 13, թ. 160:
[5] Նույն տեղում, գ. 8, թ. 7:

լուծման մասին հարցը[1]: Ինչպես տեսնում ենք, իր զեկուցման մեջ Բակունցը ցանկացել է պատգամավորներին հասցնել Դաշնակցության վերացման ուղղությամբ Հայկոմկուսի ծրագրերը: Խորհրդային կուսակցական մարմինները շատ են ջանացել ավելի մեծ մասշտաբի քայքայիչ աշխատանք տանել, սակայն նրանց թափած ջանքերը էական արդյունք չեն տվել:

4. Հ.Յ. Դաշնակցության սոցիալական ծագման ու կազմի մասին

ՀՅԴ սոցիալական ծագման մասին Ալ. Բակունցի և մյուսների հետագա զեկուցում-ելույթներում, համագումարի նյութերում, 2-րդ Ինտերնացիոնալի միջազգային բյուրոյին ուղղված նամակում Դաշնակցություն կուսակցությունը որակվել է որպես **մանր բուրժուական** կուսակցություն: Մեր կարծիքով՝ այն ժամանակների համար բավականին համարձակ նման տեսակետը բխում էր Հայկոմկուսի ԿԿ-ի 1-ին քարտուղար Ա. Հովհաննիսյանի և մի քանի այլ ուղղամիտ բոլշևիկների գիտականորեն ու քաղաքականապես հիմնավորված դիրքորոշումից: Այդ շրջանում վեճեր էին ծագում Դաշնակցության սոցիալական ծագման ու բնույթի վերաբերյալ: Հայկոմկուսի ղեկավարման շրջանում պատմաբան-գաղափարախոս Ա. Հովհաննիսյանը Դաշնակցությունը բնութագրել է որպես կովկասահայ մանր բուրժուազիայի, գյուղացիական, ինտելիգենտական սոցիալական ծագում ունեցող կուսակցություն, ինչը հետագայում որակվեց որպես մարքսիզմին անհարիր, անհարազատ գաղափար՝ դրանից բխող հետևանքներով[2]: Հետագա տասնամյակներին խորհրդահայ պատմակուսակցական գրականության մեջ քննադատության

---

[1] Նույն տեղում, թ. 14:

[2] Տե՛ս **Հակոբյան Ա.**, *Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ)*, Ե., 2016, էջ 299–300:

թիրախ դարձան նաև Ա. Հովհաննիսյանի այլ տեսաղրույթները և նրա սպեցիֆիկյան անցյալը: Այնինչ հետագա խորհրդահայ պատմակուսակցական գրականության մեջ, որպես կանոն, Դաշնակցությունը որակել են «**բուրժուական**», «**խոշոր բուրժուական**», և նույնիսկ «**ֆաշիստական**» պիտակավորումներով: Իսկ իր, այսպես կոչված, «սպեցիֆիկյան» հայացքների համար հետագայում Ա. Հովհաննիսյանը ենթարկվեց ստալինյան «քաղաքական ինկվիզիցիայի»:

Հասկանալի է, որ ԿԿ-ի այն ժամանակվա ղեկավարության դիրքորոշումը պետք է իր ազդեցությունը թողներ համագումարի քաղաքական մթնոլորտի վրա: Նախաձեռնող բյուրոյի զեկուցման մեջ Բակունցը նշում էր, որ «Դաշնակցությունը իր սկզբնական շրջանում կատարել է դրական աշխատանք»[1]: Այնուհետև, խոսելով դաշնակցականների սոցիալական կազմի մասին, բերում էր տեղեկություններ կուսակցությունից հեռացողների սոցիալական ու կրթական վիճակի վերաբերյալ, ներկայացնում նրանց կուսստաժը: Նրա հայտնած ամփոփ տվյալներով հեռացողների 40–50 տոկոսը (կամ շուրջ կեսը) կազմում էին շարքային դաշնակցականները, որոնք Դաշնակցության հիմնադրումից ի վեր գործել էին նրա շարքերում, 10 տոկոսը՝ դաշնակցական ակտիվ գործիչները, 17-ը՝ ռազմիկ գործիչները, 16-ը՝ գավառական գործիչները, 4-ը՝ կուսակցական բարձր մարմնի անդամները և 2 տոկոսը՝ կուսակցության մեջ զաղտնի և հատուկ հանձնարարություն կատարողները (ահաբեկիչ, զենք փոխադրող և այլն)[2]:

Սոցիալական կազմի տեսակետից կուսակցության շարքերից հեռացողների ճնշող մեծամասնությունը կազմում էր գյուղացիութ-

---

[1] Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 18:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 12–13, «Խորհրդային Հայաստան», 23 նոյեմբերի 1923 թ.:

յունը, մյուս մասը ուսուցիչներ էին, գյուղական մտավորականություն, բանվորներ և այլն: Այս առիթով «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթը նշում էր, որ դանդաղ են ընթանում քայքայման աշխատանքները հատկապես մտավորականության շրջանում, ովքեր դժվարությամբ են համաձայնվում հայտարարություն տալ[1]: Ըստ կրթական ցենզի՝ կուսակցությունից հեռացողների 30 տոկոսը եղել է բոլորովին անգրագետ, 40 տոկոսը՝ կիսագրագետ, միջնակարգ կրթություն է ունեցել 26 տոկոսը, իսկ բարձրագույն՝ 4 տոկոսը[2]: Այս կապակցությամբ ՀՍԽՀ Արտակարգ հանձնաժողովի կազմած 1923 թ. տարեվերջյան ամփոփագրի տվյալներով Դաշնակցությունից հեռացողների 40 տոկոսը նշված է անգրագետ և 60-ը՝ գրագետ, որից 18 տոկոսը՝ միջնակարգ կրթությամբ, իսկ 4-ը՝ բարձրագույն[3]:

Համեմատելով ՀՍԽՀ նախկին դաշնակցականների և Հայկոմկուսի անդամների այդ նույն ժամանակաշրջանի կրթական ցենզը՝ ստացվում է, որ 1923 թ. Դաշնակցությունից հեռացողների 26 տոկոսն ունեցել է միջնակարգ կրթություն, իսկ 4 տոկոսը՝ բարձրագույն, այն դեպքում, երբ 1924 թ. Հայաստանի ընդամենը 4032 կոմունիստներից միջնակարգ կրթություն է ունեցել 427 մարդ կամ 10,6 տոկոսը, իսկ բարձրագույն՝ 53 մարդ կամ 1,3 տոկոսը[4]: Իսկ Խորհրդային Միության մասշտաբով 1925 թ. տվյալներով ՀամԿ(բ)Կ շարքերում միայն 1 տոկոսն է ունեցել բարձրագույն կրթություն[5]: Ի դեպ, ուշադրության է արժանի հետևյալ փաստը. 1930 թ. դեկտեմբերից (հավանաբար Ն. Բուխարինի պաշտոնազրկումից հետո) մինչև 1941 թ. փետրվար

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 23 նոյեմբերի 1923 թ.:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 13:

[3] Տե՛ս ԲՀԱ, Ե., 2013, թիվ 1, էջ 111:

[4] Տե՛ս *Компартия Армении в цифрах и документах, 1920–1980*, Е., 1980, էջ 20, նաև **Հակոբյան Ա.**, *Միակուսակցական փարչական ձևավորումը Խորհրդային Հայաստանում*, Ե., 2016, էջ 17:

[5] Տե՛ս **Щетинов Ю.А.**, *История России XX век*, М., 1999, с. 156.

ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի անդամներից և ոչ մեկը չի ունեցել լրիվ բարձրագույն կրթություն[1]: Բերված տվյալները հիմք են տալիս հետևեցնելու, որ Հայաստանի դաշնակցականների կրթական-որակական մակարդակը ավելի քան երկու անգամ բարձր է եղել Հայկոմկուսի և մի քանի անգամ՝ ողջ Միության կոմունիստների կրթական մակարդակից:

Կրկին դառնալով Բակունցի զեկուցմանը՝ նշենք, որ նա Նախաձեռնող բյուրոյի հաշվետվությունն ավարտել է՝ մեջբերելով Հովի. Քաջազնունու հայտնի աշխատության գլխավոր միտքը, որ «մեր նախկին կուսակցությունը (այսինքն՝ ՀՅԴ-ն – Ա.Հ.) անելիք չունի»[2]:

Հետաքրքրական էին զեկուցման ավարտից հետո Ալ. Բակունցին ուղղված հարցերը: Տվյալ դեպքում առաջիններից մեկը՝ համագումարի պատգամավոր, շարքային դաշնակցական Մամիկոն Ալթունյանը, նրան հարց է տվել. «Արդյոք Բյուրոն չի՞ զգում, որ մենք՝ այստեղ եղողներս, չենք կարող ներկայացնել ամբողջ Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը: Արդյոք դեկլարացիա տվող մասսայի մի համագումար չէ՞ այս միայն»[3]: Մ. Ալթունյանի տված այս հարցը հավանաբար անցանկալի լինելու պատճառով տեղ չի գտել հետագայում «Տրեստի» հրատարակած գրքում[4]: Իսկ մի ապարանցի պատգամավոր էլ, ի լրումն Մ. Ալթունյանի հարցին, հայտարարում է, որ «Ապարանում շատ դաշնակցականներ կան, որոնք ներկայացուցիչ չունեն այստեղ, մենք ինչպե՞ս կարող ենք նրանց լիկվիդացիայի ենթարկել»[5]:

---

[1] Տե՛ս *Политические партии России: история и современность*, под. ред. проф. Завелева А.Н. и др, М., 2000, с. 432.

[2] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, է. 15:

[3] Նույն տեղում, թ. 16:

[4] Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 22–23:

[5] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 18:

Բերված փաստերը կրկին վկայում են, որ համագումարը լիովին չի ներկայացրել Խորհրդային Հայաստանում առկա (հրապարակային ու ծպտյալ) դաշնակցականներին: Այս կապակցությամբ նիստը նախագահող Հ. Թումյանը պարզաբանում էր, որ համագումարի մասնակիցները ընդամենը դաշնակցական զանգվածների ներկայացուցիչներ են, և որ համագումարից հետո իրենք մեծ աշխատանք պետք է տանեն այդ զանգվածների հետ, որպեսզի «խաչ քաշեն իրենց անցյալ գործունեության վրա»[1]: Այս հատվածը ևս հանվել էր հետագայում հրապարակված գրքից:

Ա. Բակունցի զեկուցման կապակցությամբ եղել են այլ առարկողներ: Օրինակ, Դիլիջանի պատվիրակ Ծովակ Ծովյանը կշտամբել է զեկուցողին և մյուս ելույթ ունեցողներին այն պնդման համար, թե իբր Դաշնակցությունը կրթական գործ չի տարել. «Ամբողջ հայկական միտքը,- նշել է Ծ. Ծովյանը,- հայ առաջադիմական գործը այդ ժամանակ Դաշնակցության ղեկավարությամբ է եղել: Դաշնակցությունը դրական վիթխարի գործ է կատարել հայ կյանքի կուլտուրական ասպարեզում. այդ չպիտի ուրանալ...»[2]:

Համագումարի մեկ այլ պատգամավոր, ախտեցի (Հրազդան) Խաչատուր Տեր-Թովմասյանը, դրական գնահատելով Դաշնակցության Բաքվի գործունեությունը, հայտարարում էր. «Սխալ է հայտարարել, որ Դաշնակցությունը Բաքվում դասակարգային խնդիրներով չի զբաղվել. նա վիթխարի դեր է կատարել այդ ուղղությամբ Բալախանում»[3] և այլն: Ինչպես նկատում ենք, Նախաձեռնող բյուրոյի հաշվետու զեկուցման շուրջ տրվել են բավականին սուր հարցեր, մտքերի փոխանակության ժամանակ արտահայտվել են տարբեր

---

[1] Նույն տեղում, թ. 16:

[2] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, էջ 17, նաև՝ Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 23:

[3] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 21, նաև՝ Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 28:

կարծիքներ: Այնուամենայնիվ, ինքնին հասկանալի է, որ համագումարը հաստատել է Նախաձեռնող բյուրոյի նախագահ Բակունցի ներկայացրած հաշվետու զեկուցումը:

Նիստի ավարտին լսվել է մանդատային հանձնաժողովի զեկուցումը (զեկուցել է Նոր Բայազետի ներկայացուցիչ Վահան Ամբարզյանը): Նա հանձնաժողովի անունից հայտնում էր, որ բոլոր պատգամավորները ստաժ ունեցող դաշնակցականներ են: Պատգամավորներից 3-ի մանդատները չեն հաստատվել, որովհետև 2 մանդատում նշված էր «համակիր», իսկ մեկն էլ՝ Տիգրան Վանյանը, պարզվում էր՝ Դաշնակցությունից արդեն անցել է կոմկուսի շարքերը՝ իբրև անդամության թեկնածու: Այս կապակցությամբ համագումարի նախագահությունը նրան հայտնում է, որ վերջինս իրավունք չունի պատգամավոր համարվելու: Ուստի մանդատային հանձնաժողովի եզրակացությամբ համագումարին լիարժեք ձայնով մասնակցելու իրավունք է ստանում 225 պատգամավոր, 19-ը՝ խորհրդակցական, իսկ 3-ի մանդատները չեն վավերացվում: Բակունցի զեկուցումն ընդունվում է ի գիտություն, և եզրակացությունը հաստատվում է[1]:

---

[1] Աշխատության վերջում բերված են մանդատային հանձնաժողովի վիճակագրական տվյալները համագումարին մասնակից 247 պատգամավորների վերաբերյալ (տե՛ս Հավելված 1):

5. Միջազգային դրության և ներքին խնդիրների քննարկումը

Նոյեմբերի 21-ի երեկոյան (երրորդ) նիստում (նախագահող՝ Պողոս Տեր-Պողոսյան) միջազգային դրության մասին զեկուցել է ՀՍԽՀ արտ. գործ. ժողկոմ, Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ա. Մռավյանը: Մռավյանի մի քանի ժամ տևած ելույթի արձանագրությունից կարելի է տպավորություն ստանալ, որ «կապիտալի աշխարհը» ներքին ու արտաքին հակասություններից ուր որ է կկործանվի: Զեկուցման վերջում, անդրադառնալով Հայաստանի քաղաքական դրությանը, Մռավյանը ինքն իրեն հարց էր տալիս, թե կարո՞ղ է արդյոք Հայաստանը ապրել անկախ և դրան պատասխանում՝ ոչ: Բայց այնուհետև, ինքը հակասելով իրեն, հայտարարում էր. «Հայաստանն իր անկախության շատ չնչին մասն է կորցրել»[1]: Եվ որքան էլ զավեշտական հնչի, Ա. Մռավյանը Հայաստանի անկախ լինել-չլինելու միակ տարբերությունը տեսնում էր նրանում, որ իր փոխարեն «իմպերիալիստական պետությունների հետ խոսում է Չիչերինը»: Ինչ վերաբերում է Վրաստանի և Ադրբեջանի հետ ունեցած սահմանների խնդրին, Հայաստանի արտ. գործ. կոմիսարը պատասխանում էր, որ այդ հարցը «մենք լուծել ենք մի քանի րոպեում»[2]: Սակայն հակառակ դրան՝ համագումարի նոյեմբերի 22-ի առավոտյան (չորրորդ) նիստում (նախագահող՝ Սիմոն Փոլյան) նախորդ օրվա զեկուցող Ա. Մռավյանին են ուղղվել մի քանի քաղաքական բնույթի սուր հարցեր: Գրավոր հարց է տրվել, թե ինչ դիրք է բռնել Խորհրդային պետությունը Կարսի և Սուրմալուի հարցի հանդեպ: Հարցին արտ. գործ. ժողկոմը տվել է կոմունիստին բնորոշ հետևյալ պատասխանը. «Դուք գիտեք, որ 21 թ. հոկտեմբերի 18-ին

---

[1] Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 40:
[2] Նույն տեղում:

(պետք է լինի՝ 13 – Ա.Հ.) մենք դաշն կնքեցինք Թուրքիայի հետ՝ Ախուրյանը և Արաքսը սահման ընդունելով: Մենք հրաժարվեցինք Ղարսից և Սուրմալուից, որովհետև Հայաստանի ժողովրդի շահն էր պահանջում այդ (ընդգծումը մերն է – Ա.Հ.): Այդպիսի պայմաններում մենք չենք կարող մի քանի գավառները գերադասել Թուրքիայի բարեկամությունից: Եթե կտրուկ կերպով պահանջեինք վերադարձնել Ղարսն ու Սուրմալուն, Թուրքիան չպիտի համաձայներ, և մենք հարկադրված զենքի պիտի դիմեինք. Հայաստանի Խորհրդային հանրապետության շահը այդ չէր պահանջում (վերջին նախադասությունը մեր նշած գրքում չկա – Ա.Հ.): Մենք խաղաղությունը գնել ենք թանկ գնով և ոչ մի մտադրություն չունենք հետ տալու: Այդ երկու գավառների փոխարեն մենք ունենք այստեղ ճահիճներ, եթե չորացնենք նրանց, եթե ջրենք մեծ ու փոքր Սարդարապատի, Եղվարդի, Արազդայանի դաշտերը, տասնյակ հազարավոր գյուղացիություն կտեղավորենք այդ հողերի վրա: Փոխանակ դաշնակցականների նման զենք ճոճելու թուրքերի դեմ՝ մենք գերադասում ենք մեր բոլոր ուժերը գործադրել ուրիշ ուղղությամբ՝ երկրի արդյունաբերության և կուլտուրայի բարձրացման ասպարեզում, որը ավելի շահավետ է Հայաստանի աշխատավորության համար»[1]: Մենք դիտավորյալ ենք կատարում այս ընդարձակ մեջբերումը՝ հասկանալու համար կոմկուսի քաղաքականությունը հայկական կորուսյալ հողերի հարցում:

Այս կապակցությամբ ամենից առաջ պետք է ընդգծել, որ համագումարին մասնակից դաշնակցական պատգամավորներին շարունակել է հուզել հայկական հողերի հարցը, որի համար էլ հարցապնդում է արվել արտ. գործ. կոմիսարին: Մռավյանի մեկնաբանությամբ ստացվում էր, որ հանուն Թուրքիայի հետ բարեկամութ-

[1] ՀԱԱ. ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 38–39:

յան իրենք ստիպված հրաժարվել են Կարսից ու Սուրմալուից: Եվ դա արվել է իբր հանուն հայ ժողովրդի շահի:

Այժմ ամենքին է հայտնի, որ խորհրդաքեմալական գործարքը ընթացիկ հաշվարկների վրա կառուցված կեղծ բարեկամություն էր, ինչը իրականացվեց նաև հայկական տարածքների կորստի հաշվին: Ռուս-թուրքական Մոսկվայի՝ 1921 թ., «բարեկամության և եղբայրության մասին» պայմանագրի արդյունքում Թուրքիային անցան 20700 քառ. կմ բուն արևելահայ տարածքներ (չխոսելով Արևմտյան Հայաստանի մասին), ինչպես նաև Թուրքիայի պահանջով Նախիջևանի մարզը (շուրջ 5500 քառ. կմ) հանձնվեց իր փոքր եղբայր Ադրբեջանին[1]: Իսկ երբ քեմալական Թուրքիան, Խորհրդային Ռուսաստանից ստացած զենքի ու ոսկու օգնությամբ, արևմտյան սահմաններում լուծեց իր ռազմավարական խնդիրները, նա աստիճանաբար երես դարձրեց ԽՍՀՄ-ից: Ավելին, հայտնի է, որ Երկրորդ աշխարհամարտի տարիներին որոշակի նպաստավոր պայմանների դեպքում Թուրքիան ծրագրում էր հարձակվել ԽՍՀՄ-ի վրա և նրանից պոկել առնվազն Կովկասը: Ահա թե ինչպիսին է եղել Թուրքիայի հետ Հայաստանի և Ռուսաստանի նվաճած «բարեկամությունը»:

Ուշագրավ է, որ լուծարման համագումարի նույն՝ 1923 թ. նոյեմբերի 22-ի առավոտյան նիստում Ա. Մռավյանին ուղղված մի քանի տասնյակ այլ հարցերի թվում հնչել է նաև հետևյալը. «Ի՞նչ մասնակցություն ունեցավ հայ բոլշևիկյան կուսակցությունը Ղարսի անկման գործում 1920 թ.»: Տրված հարցին Մռավյանը պատասխանել է. «Ոչ մի մասնակցություն. հայ բոլշևիկները Ղարսի անկման ժամանակ բանտում նստած էին»: ... «Իսկ մտածել, որ հայ բոլշևիկ-

[1] **Հակոբյան Ա.**, *Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում*, Ե., 2010, էջ 325:

ները մտել են Ղարսի զինվորների մեջ և իրենց ագիտացիայով քայքայել նրանց, միանգամայն անհեթեթություն է»[1]:

Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ Ա. Մռավյանին հարց տվողը ըստ ամենայնի տեղյակ է եղել 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում բոլշևիկների ծավալած քայքայիչ գործունեությանը և ցանկացել է Հայկոմկուսի ղեկավար գործչի բերանից լսել ամբողջ ճշմարտությունը: Սակայն Ա. Մռավյանը կտրականապես ժխտել է բոլշևիկների որևէ մասնակցություն Կարսի անկմանը: Չենք կարծում, որ միջազգային դրության մասին զեկուցող Ա. Մռավյանը տեղյակ չի եղել 1920 թ. սեպտեմբերի 1-8-ին Բաքվում հրավիրված Արևելքի ժողովուրդների՝ առաջին համագումարի ստեղծած «Արևելքի ժողովուրդների քարոզչության և գործողության խորհուրդի» նախագահության սեպտեմբերի 17-ի բացահայտ հակահայկական որոշմանը, որով թուրքական և ռուսական զորքերի առջև խնդիր էր դրվում Հայաստանի վրա համատեղ հարձակվելու միջոցով տապալել իր «սեփական ժողովրդին հարստահարող դաշնակների լուծը» և «հաստատել Խորհրդային իշխանություն»[2]: Չենք կարծում, որ Արևելքի ժողովուրդների համագումարին մասնակից հայ պատվիրակ Ա. Մռավյանը տեղյակ չլիներ այդ փաստաթղթին: Թուրք-հայկական պատերազմում Հայաստանի բանակը քայքայելու և նրա պարտության գործը արագացնելու նպատակով վերը նշված խորհրդի սեպտեմբերի 17-ի որոշումը գործողության պլանի վերածելով՝ Հայկոմկուսի ԿԿ-ը ընդամենը երեք օր անց՝ սեպտեմբերի 20-ին, Բաքվից «հույժ գաղտնի» թիվ 218 հրահանգն է իջեցրել կուսակցության բոլոր կազմակերպություններին, թիկունքի և ռազմական գոտիների բոլշևիկներին, որում մասնավորապես ասվում էր.

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 45, նույնը՝ Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը, էջ 49:

[2] Տե՛ս *Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.*, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2000, էջ 284–286:

1. Կազմալուծել հայկական կռվող բանակը բոլոր միջոցներով, այն է.

ա) կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել զորահավաքին,

բ) ռազմաճակատներում հասկացնել զինվորներին, որ նրանք չկրակեն առաջացող թուրքական զինվորների վրա, այլ լքելով դիրքերը՝ վերադառնալ թիկունք,

գ) չենթարկվել սպաների հրահանգներին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց և այլն[1]:

Այդ հրահանգի տակ Ս. Կասյանի և մյուսների կողքին տեղ է գտել նաև Ա. Մռավյանի անունը:

ՀՍԽՀ խորհուրդների 1-ին համագումարում (1922 թ. հունվար-փետրվար) Հայաստանի կարմիր բանակի մասին զեկուցում կարդացած Վ. Բալյանը, խոսելով թուրք-հայկական 1920 թ. պատերազմում նախկին դաշնակցական 40-հազարանոց բանակի կազմալուծման ու բարոյալքման մասին, նշում էր. «Մենք նրանց մեջ մտցնում էինք այն հիմնական միտքը, թե մեր թշնամին ոչ թե մեր դարավոր հարևան թուրքն է (նկատի ունի ադրբեջանցուն – Ա.Հ.), կամ տաճիկը (օսմանցի թուրքը – Ա.Հ.) այլ մեր բուրժուազիան և նրա գաղափարախոս Դաշնակցությունը»[2]:

1920 թ. հայկական բանակում բոլշևիկների քայքայիչ գործունեության մասին իրենց հուշերում վկայում են հենց իրենք՝ բանակում ծառայած բոլշևիկ զինվորները: Այսպես, օրինակ, զինվոր Հայկ Մխիթարյանը պատմում է. «Մենք (բոլշևիկները – Ա.Հ.) զինվորների մեջ տանում էինք բացատրական-քարոզչական աշխատանքներ: Մենք հատկապես զինվորներին բացատրում էինք, որ թուրք աշխատավորներն էլ մեզ նման աշխատավորներ են, և դաշնակցականնե-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 275, թ. 1:

[2] *ՀՍԽՀ խորհուրդների 1-ին համագումար (արձանագրություն)*, Ե., 1922, էջ 95:

ը ցանկանում են ոչնչացնել այդ աշխատավորներին, մերկացնում էինք դաշնակցականների դեմքը»[1]: Հատկանշական է, որ հայկական բանակը ներսից քայքայելու համար քեմալական գործակալները իրենց հերթին լուրեր էին տարածում, թե թուրք զինվորները «նույնպես բոլշևիկներ են», իսկ «...թուրք-հայկական պատերազմի ամբողջ ընթացքում,- գրում է ակադեմիկոս Հր. Սիմոնյանը,- հայ բոլշևիկ գործիչներից և ոչ մեկը հանդես չեկավ թուրքերին դիմադրելու և հայրենիքը պաշտպանելու սեփական ժողովրդին ուղղված որևէ կոչով»[2]:

Ա. Մռավյանին ուղղված հարց ու պատասխանի ժամանակ «նախկին դաշնակցական» համարվող պատգամավորից մեկը հարցում է արել. «Ինչո՞ւ Ախալքալաքը չի միանում Խորհրդային Հայաստանին, երբ նրա ազգաբնակչության մեծագույն տոկոսը կազմում են հայերը»: Տրված հարցին ՀՍԽՀ արտ. գործ. ժողկոմը տվել է հետևյալ մանկամիտ պատասխանը՝ «Ախալքալաքի հայ գյուղացիությունը այդ չի պահանջել»[3]:

Դաշնակցականին բնորոշ ազգային խնդիրներին հետամուտ այսպիսի սուր հարցադրումներով ավարտվեց միջազգային դրության վերաբերյալ Ա. Մռավյանի ներկայացրած զեկուցումը: Համագումարի պատգամավորների մեծ մասի պահվածքից ու պահանջատիրական հարցադրումներից դժվար չէր եզրակացնել, որ ներկա գտնվողների մի զգալի մասը, իրոք, հայացքներով ու համոզմունքով շարունակում էին մնալ դաշնակցականներ, թեկուզ «նախկին» պիտակավորումով:

---

[1] ՀԱԱ. ֆ. 403, ց. 1, գ. 20, թ. 1:

[2] **Սիմոնյան Հ.Ռ.**, *Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից*, Ե., 1991, էջ 401:

[3] ՀԱԱ. ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 48, նույնը նաև՝ Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը, էջ 50:

6. Հ.Յ. Դաշնակցության գործունեության վերագնահատման հարցի շուրջ

1923 թ. նոյեմբերի 22-ի երեկոյան Գր. Բալասբեկյանի նախագահությամբ կայացավ համագումարի 5-րդ նիստը, որում «Դաշնակցության վերագնահատման մասին» թեմայով զեկույց ներկայացրեց Սիմոն Փոլյանը: Նա հիմնականում խորհրդային-բոլշևիկյան դիրքերից էր փորձում վերլուծել Դաշնակցություն կուսակցության 30-ամյա գործունեությունը՝ վերջում եզրակացնելով, թե իբր «Դաշնակցությունը աշխատավորական կուսակցություն չի եղել երբեք»[1]: Նա ևս Բակուցի նման դատապարտեց հայտնի «Դրո-Ղազազյան դեկլարացիան», դրական երանգներով բնութագրեց Հ. Քաջազնունու հայտնի գրքույկը, ըստ որի՝ Դաշնակցությունը անելիք չունի այլևս, և նա պետք է քայքայվի ու հեռանա սцենայից[2]: Զեկուցող Ս. Փոլյանը համագումարի գլխավոր խնդիրն էր համարում «Դաշնակցության լիկվիդացիան Հայաստանում՝ իր բոլոր ճյուղերով ու մարմիններով»[3]:

Համագումարի նախագահության անդամ Ս. Փոլյանի զեկուցումից հետո տրվեցին հարցեր, կատարվեց մտքերի փոխանակություն: Երբ Երևանից պատվիրակ Հրանտ Կարինյանն իր ելույթում նշեց, որ 4000 նախկին դաշնակցականների կողմից լիազորված համագումարը կոչված է այսուհետ կապերը խզել Դաշնակցության հետ և միանալ 3-րդ Ինտերնացիոնալին, Ալեքսոլի պատգամավոր Առաքել Սիմոնյանը, հակադարձելով նախորդ ելույթ ունեցողին, հայտարարեց. «**նա իր դերը կատարել է փայլուն ու փառավոր կերպով և աշխատանքները պետք է հարգենք, (ծափեր): Ինչքան էլ նրան որ մեռցնենք, նա չի մեռնի, որովհետև նա եղել է գաղափարական և կմեռնի այն**

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 80:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 82 և 84:
[3] Նույն տեղում, թ. 85:

ժամանակ, երբ կչորանան նրա արմատները (ընդգծումը մերն է – Ա.Հ.)»[1]:

Ա. Սիմոնյանի ելույթի վերջին հատվածը դահլիճում առաջ բերեց աղմուկ, լսվեցին դժգոհության ձայներ: Ի պատասխան այդ ելույթին՝ պատգամավորներից ոմն Պետրոսյան ամբիոնից հայտարարեց, որ «Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ նա (Դաշնակցությունը – Ա.Հ.) չի ապրի ... նրա գործունեությունը եղել է շովեն և կործանարար, ...նա ոտնատակ է տվել բանվորության շահերը» և այլն: Այդ ելույթին դահլիճից արձագանքեցին՝ «սխալ է», «անպատասխանատու հայտարարություններ են», «խոսքը հետ վերցնել»: (Պետրոսյանը հեռանում է ամբիոնից)[2]:

Մտքերի փոխանակության կապակցությամբ ուշադրության արժանի տեսակետ արտահայտեց բանվոր պատգամավոր Տրդատ Տրդատյանը. «Ընկերնե՛ր, այստեղ այնպես արտահայտվեցին, որ կարծես թե Դաշնակցությունը ավելի վնասակար է եղել, քան թե Սուլթան Համիդը: Եթե խոսում եք նրա մասին, ապա պետք է պատճառաբանեք»: Տ. Տրդատյանը արդարացի էր համարում անգամ Զանգիբասարի մաքրումը. «Եթե մի ժողովուրդ չի ենթարկվում պետության, ինչպես կվարվեն նրա հետ: Եթե Դաշնակցության փոխարեն լիներ մեկ այլ կուսակցություն, ինչպես կվարվեր»[3]: Ելույթի վերջում Տրդատյանը հայտարարեց, որ ինքը չի զղջում, որ պատկանել է այդ կուսակցությանը[4]: Բուռն քննարկումներով ընթացած նիստը փակվեց միայն գիշերվա ժամը 2-ին:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 96, նույնը տե՛ս Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 87–88:

[2] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 96, նաև՝ Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 88:

[3] Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 88:

[4] Նույն տեղում, էջ 89:

Համագումարի նոյեմբերի 23-ի առավոտյան (վեցերորդ) նիստում, որը նախագահում էր Պ. Տեր-Պողոսյանը, Դաշնակցության գործունեության վերագնահատման մասին եզրափակիչ խոսքով պետք է հանդես գար նախորդ օրվա զեկուցող Ս. Փոլյանը, ինչպես նաև ընդունվեր բանաձև և լսվեին ընթացիկ հարցեր: Բայց մինչ այդ արտասահերթ ձայն տրվեց համագումարի նախաձեռնողներից մեկին, այսպես կոչված, նախկին Ինտերնացիոնալիստ ձախ դաշնակցականների խմբի ղեկավարներից և 1920 թ. Մայիսյան ապստամբության սադրման պատասխանատուներից Հայկ Ավալյանին[1]: Նա իր ելույթում ամփոփեց նախորդ օրը Դաշնակցության գործունեության վերագնահատման հարցի վերաբերյալ իր ստացած տպավորությունը: Հ. Ավալյանը ընդգծում էր, որ ելույթների ընթացքում ի հայտ եկան Դաշնակցությանը բնորոշ ամենատարբեր տեսակետներ ու գնահատականներ, դրսևորվեցին ազգային և սոցիալիստական թեքումներ, բայց, իր կարծիքով, Դաշնակցությունից հեռացող պատգամավորների ճնշող մեծամասնությունը հանդես եկավ սոցիալիստական ուղղության պաշտպանությամբ, ուստի և պետք է խզի իր կապերը Դաշնակցությունից ու հարի 3-րդ Ինտերնացիոնալին[2]:

Սակայն նիստում ելույթով հանդես է գալիս նաև Էջմիածնի պատգամավոր Սմբատ Կարոյանը և քննադատում ինչպես Ավալյանին, այնպես էլ հատկապես հիմնական զեկուցող Ս. Փոլյանին: Նա տարակուսանք է հայտնում, որ Դաշնակցության 33-ամյա գործունեությունը վերլուծելիս վերջինս «ոչ մի դրական գիծ չգտավ այնտեղ: Չի կարող պատահել, որ մի կուսակցություն այդքան գործու-

---

[1] Տեղեկացնենք, որ հենց Մայիսյան դեպքերի կապակցությամբ ՀՅԴ Գերագույն դատական ատյանը (նախագահ Հովսեփ Տեր-Դավթյան) 1920 թ. հունիսի 12-ին որոշել էր Հ. Ավալյանին հեռացնել Դաշնակցության շարքերից և ենթարկել երեք ամսվա բանտարկության, (տե՛ս ՀԱԱ. ֆ. 1457, ց. 1, գ. 18, թ. 10. տե՛ս նաև՝ «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը». էջ 154–155):

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 111:

նեություն ունենա և ոչ մի դրական գործ չկատարի: Ընկ. Փոլյանն այդքան տարի աշխատել է Դաշնակցության մեջ և միայն հիմա՞ իմացավ, որ նա ոչ մի դրական գործ չի կատարել»[1]: Կասկած չկա, որ ՀՅԴ Բաքվի ԿԿ-ում երկար տարիներ աշխատած Ս. Փոլյանի և մյուսների զեկուցումները անպայման հրահանգավորվել ու անցել էին կոմկուսի գաղափարաքաղաքական մաղով: Ուստի քննադատական սուր հարցադրումներից հետո՝ վերջում, եզրափակիչ խոսքով հանդես եկած Ս. Փոլյանը ստիպված էր ավելի մեղմ տոնայնությամբ ամփոփել զեկուցման արդյունքները:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարելի է հետևեցնել. ա) լուծարման համագումարի արձանագրության նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այնպես չէ, թե համագումարի 247 պատվիրակները հավաքվել էին միակամ՝ դատապարտելու և լուծարելու Դաշնակցության հայաստանյան կառույցը, բ) տրված հարցերից, ելույթներից, արված ռեպլիկներից և այլ նշաններից դժվար չէր նկատել, որ պատգամավորների մի հատված հայացքներով ու համոզմունքներով շարունակում էր մնալ իր հարազատ կուսակցության դիրքերում: Այդպիսիք մասնակցել էին համագումարին տարբեր դրդապատճառներով. կամ հարկադրանքով, կամ աշխատանքն ու ունեցվածքը այդ կերպ ապահովագրելու ակնկալիքով, կամ էլ ոմանք ներկայացել են սոսկ հետաքրքրասիրությունից մղված՝ ուսումնասիրելու և գնահատելու ստեղծված իրավիճակը:

Հարկ է նկատել նաև, որ շարքային պատգամավորներից շատերը՝ իբրև քաղաքական ճահիճ, հայտնվել էին լուռ դիտողի դերում: Նրանք հետևել են համագումարի ընթացքին, բնավ ելույթ չեն ունեցել, տատանվել են, սակայն ընդհանուր հոսանքի ճնշման տակ վերջին հաշվով քվեարկել են մեծամասնություն կազմող լուծարման

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 114, տե՛ս նաև՝ Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 104:

կողմնակիցների օգտին: Իհարկե, դժվար է ստույգ թվերով տալ համագումարի 247 մասնակիցների նման շերտավորվածության պատկերը: Ստույգ տվյալների բացակայության պատճառով է՛լ ավելի դժվար է հաշվել, թե նշված 4000-ից զատ՝ որքան նախկին շարքային դաշնակցականներ ու համակիրներ են եղել, որոնք մնացել են ծպտված, չբացահայտված, տարբեր նկատառումներով հայտարարություն չեն տվել և ոչ էլ իրենց անունից որևէ մեկը ներկայացել է որպես պատգամավոր: Ուստի պատահական չէ, որ համագումարի անունից ընդունվել է հայտարարություն՝ ուղղված բոլոր նախկին դաշնակցականներին, որոնք դեռ տատանվում են[1]: Նման որոշման ընդունումը ևս վկայում է, որ համագումարում ու հատկապես համագումարից դուրս նկատելի են եղել բազմաթիվ տատանվողներ: Այդուհանդերձ, իրողությունն այն է, որ խորհրդային իշխանությունների պարտադրանքով համագումարի մասնակիցներից ոմանք՝ համոզմունքով, ոմանք՝ կամավոր, ոմանք՝ հարկադրանքով, մի մասն էլ՝ աշխատանքը չկորցնելու վախից, իրենց պարտավորված զգալով, քվեարկությունների ժամանակ «դատապարտել են» Դաշնակցությանը և Հայաստանում նրա լուծարման վճիռ կայացրել: Հավանաբար նման իրականության պայմաններում այլ կերպ չէր էլ կարող լինել:

7. Համագումարի եզրափակիչ փուլը

Համագումարի օրակարգային վերջին՝ ընթացիկ հարցերի մասին կրկին զեկուցել է Ա. Բակունցը: Ինչպես ասվեց շարադրանքի սկզբում, այստեղ նորից բարձրացվել է ավելի լայն մասշտաբի լուծարման համագումար հրավիրելու հարցը: Սկզբում առաջարկ է

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 119:

հնչել հավանություն տալ Համակովկասյան համագումարի հրավիրմանը: Սակայն նկատի առնելով, որ նախատեսվող համագումարին պետք է մասնակցեին նաև Թուրքեստանը (Միջին Ասիան), Խարկովի շրջանը և այլն, առաջարկվում է գումարել նախկին դաշնակցականների Համադաշնային (Համամիութենական) համագումար[1]: Ավելին, համագումարի նախագահության անդամ Հ. Թումյանը առաջարկում է. «Քանի որ շատերին է հետաքրքրում արտասահմանյան դաշնակների մտայնությունը՝ առաջարկում եմ չսահմանափակել համագումարը Խորհրդային Միությունով, այլ հնարավորություն տալ նույնպես արտասահմանյան դաշնակցականներին (մեզ համակիր եղողներին)՝ մասնակցելու այդ համագումարին: Զրկվել տաղանդավոր դաշնակցական ընկ. Սնար Սնարից[2], օրինակ, մեզ համար կլիներ ցավալի: Ուրեմն այդ համագումարը պետք է համարել համադաշնակցական»[3]:

Նիստի նախագահող Պ. Տեր-Պողոսյանը առաջարկում է ապագա համագումարը նախաձեռնելու համար ընտրել 5 հոգուց կազմված բյուրո, ինչպես նաև ապագա համագումարի համար ընտրել 20 պատգամավոր[4]: Նույնիսկ նախատեսում են համագումարը հրավիրել մի քանի ամսից: Անգամ Դաշնակցության վերագնահատման հարցի վերաբերյալ ընդունված որոշման կետերից մեկում ասվում էր. «Առաջարկել Ադրբեջանի, Վրաստանի և Խորհրդային հանրապետությունների սահմաններում, այլև Տաճկաստանի ու զաղութահայ մյուս վայրերում գտնվող դաշնակցական աշխատավոր շարքերին՝ մեր օրինակով լուծել դաշնակցական կազմակերպությունները

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 120:

[2] Խոսքը ծնունդով շուշեցի Սիմոն Սահակի Նարինյանի մասին է: Նա սկզբում եղել է Դաշնակցության անդամ, սակայն հետագայում հեռանում է նրա շարքերից և արտասահմանից սկսում է ծառայել բոլշևիկներին:

[3] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 120:

[4] Տե՛ս նույն տեղում, թ. 121–122:

ու ցրել ղեկավար մարմինները տեղերում»[1]: Սակայն կրկին նշենք, որ այդպես էլ չհրավիրվեց ո՛չ Համամիութենական (ԽՍՀՄ մասշտաբով) և ո՛չ էլ առավել ևս արտասահմանի դաշնակցականների մասնակցությամբ համադաշնակցական համագումար:

Համագումարի վերջին և եզրափակիչ՝ 7-րդ նիստը (նախ. Ա. Բակունց) գումարվեց նոյեմբերի 23-ի երեկոյան Բանվորական ակումբի դահլիճում: Նիստ վարողը հայտնեց, որ մի քանի պատգամավորների կողմից առաջարկ է ստացել, որպեսզի համագումարը միջնորդի ազատ արձակելու բանտերում գտնվող մի քանի «քաղաքական հանցավոր» (քաղբանտարկյալ) ընկերների: Տեղերից առաջարկ է արվում ներում շնորհել նաև աքսորվածներին, իսկ ակտիվ պատգամավոր Գր. Բալասբեկյանը հարց է բարձրացնում վերականգնել ընտրական իրավունքից զրկված բազմաթիվ գյուղացիների իրավունքները: Համագումարը հավանություն է տալիս արված բոլոր առաջարկություններին[2]: Սակայն դժվար է ասել, թե խորհրդային իշխանությունները որքանով են հաշվի առել համագումարի հիշյալ միջնորդությունները: Մեր ձեռքի տակ կան բազմաթիվ փաստեր, դիմում-խնդրագրեր, երբ բնակիչները անհատապես կամ հանրագրի ձևով դիմել են իշխանություններին, լուծարման համագումարին՝ միջնորդելու չեկայի բանտից, այլ մեկուսարաններից ազատելու իրենց հարազատ կամ բարեկամ մարդկանց, կան խմբակային հանրագրեր այն մասին, որ դաշնակցականի պիտակով իրենց զրկում են ընտրելու իրավունքից և այլն[3]:

Վերջում, նախապես պլանավորված կարգով, համագումարը ողջունելու համար, խոսք է տրվում Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինին: Դահլիճը նրան դիմավորում է ոտաներով, կեցցենե-

---

[1] Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 128:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 125:
[3] Նույն տեղում, գ. 208, թ. 3-43:

ռով, երաժշտախումբը կատարում է Ինտերնացիոնալը: Ս. Լուկաշինն իր ողջույնի խոսքում շեշտում էր. «Դուք՝ որպես ներկայացուցիչներ 4000 նախկին ակտիվ գործող կուսակցական ընկերների, ասում եք այն, ինչին նա իր կյանքի ուղիով մանավանդ վերջին տարիներս արդեն հանգել է»[1]: Ինչ վերաբերում է համագումարում շատ արծարծված ազգային հարցին, որի տակ, անշուշտ, պետք է հասկանալ Հայկական հարցը, Ս. Լուկաշինը ևս, տարված Լենին-Տրոցկի--Զինովևյան համաշխարհային հեղափոխության կեղծ կարգախոսներով, դրա լուծումը կապեց 3-րդ Ինտերնացիոնալի և «միջազգային հեղափոխության բախտի հետ»[2]: Այլ խոսքով՝ երբ կհաղթանակի համաշխարհային հեղափոխությունը, այդ պարագայում ինքնաբերաբար կլուծվի ազգային հարցը, և ճնշված ու հայրենակորույս այլ ժողովուրդների շարքում, իբր, կերջանկանա նաև հայ ժողովուրդը:

Համագումարի եզրափակիչ նիստում ընթերցվել և ընդունվել են նաև Նախաձեռնող բյուրոյի և համագումարի նախագահության կազմած երկու բանաձևերը:

Միջազգային քաղաքական դրության մասին Ա. Մռավյանի զեկուցման կապակցությամբ ժողովականների բրավո, կեցցեներով միաձայն ընդունված 9-կետանոց, առանձնապես ոչինչ չասող, շաբլոն բանաձևում դատապարտվում էր միջազգային իմպերիալիզմը, մյուս կողմից՝ ջերմ ողջույն էր ուղղվում 20-միլիոնանոց գերմանական պրոլետարիատին իր հեղափոխական պայքարում: Այնուհետև ընդգծվում էր, որ խաղաղ ու անցավ կերպով լուծվել են սահմանային վեճերը Անդրկովկասում, և ստեղծվել են փայլուն պայմաններ խաղաղ կյանքի ու շինարար աշխատանքի[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 126, տե՛ս նաև՝ Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 111:

[2] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 127–128:

[3] Տե՛ս Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 121–124:

Դաշնակցության վերագնահատության հարցի շուրջ Ս. Փոլյանի զեկուցման թեզերի հիման վրա դարձյալ երկարատև ծափերով ու բուցականչություններով, սակայն առանց քվեարկության ընդունված 8-կետանոց բանաձևում նախ՝ տրվում էր «մանրբուրժուական ռոմանտիկական» որակված Դաշնակցության 30-ամյա գործունեության ամփոփ բնութագիրը, իսկ այնուհետև արձանագրված 7-կետանոց որոշման մեջ նշված էր գլխավորը՝ 1-ին կետը. «Լիկվիդացիայի ենթարկել Հ.Հ. Դաշնակցության բոլոր կազմակերպությունները Հայաստանում»[1]:

Բակունցի ավարտական խոսքով և Ինտերնացիոնալի հնչյունների ներքո փակվում է համագումարը: Աշխատանքների ավարտից հետո 1923 թ. դեկտեմբերի 17-ի ամսաթվով համագումարի նախագահությունը՝ 15 հոգու ստորագրությամբ, որպես ի գիտություն, նամակ է ուղղել 2-րդ Ինտերնացիոնալի Միջազգային Բյուրոյին՝ հայտարարելով, որ Հայաստանում Դաշնակցության վերացումով իրենք հրաժարվում են նրա աշխատանքներին մասնակցելու մանդատից[2]: Իսկ դեկտեմբերի 19-ին համագումարի նախագահությունը՝ 14 անձի ստորագրությամբ, հրապարակել է մի ընդարձակ կոչ՝ ուղղված բոլոր շարքային դաշնակցականներին՝ այդ կուսակցությունից հեռանալու մասին[3]:

Լուծարման համագումարի արդյունքները ամփոփվել են ՀԿ(բ)Կ 3-րդ համագումարում (1924 թ. մայիս): ԿԿ-ի հաշվետու զեկուցման մեջ նշվել է, որ գաղափարաքաղաքական պայքարի գլխավոր ալաքն ուղղված է եղել ՀՅԴ դեմ, որ հաշվետու տարում զգալի աշխատանք է տարվել ՀՅԴ տեղական և արտասահմանյան կազմակերպությունները ջախջախելու, աշխատավոր դաշնակցականնե-

---

Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 126–129:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 220, թ. 132–134, նաև՝ Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 132–135:

[3] Տե՛ս Հայաստանի նախկին դաշնակցականների համագումար, էջ 129–132:

ին նրա ազդեցությունից դուրս բերելու և սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղղությամբ[1]:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է հետևեցնել.

1. Միակուսակցական իշխանության հաստատման ճանապարհին այլախոհ (ոչ պրոլետարական, մանրբուրժուական ու բուրժուական որակվող) կուսակցությունների լուծարումը և քաղաքական ասպարեզից վերացումը եղել է կոմունիստական կուսակցության առաջնահերթություններից մեկը:

2. Հայաստանի խորհրդայնացումից հետո հարվածի գլխավոր թիրախ դարձավ Հայկոմկուսի հիմնական քաղաքական ախոյան, հայ իրականության մեջ ամենաազդեցիկ ՀՅ Դաշնակցություն կուսակցությունը:

3. Այդ նպատակով Հայկոմկուսի ԿԿ-ը Մոսկվայի հրահանգով և ուղղորդմամբ նախկին ու ներկա դաշնակցականների ձեռքով իրականացված և ամիսներ տևած նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1923 թ. նոյեմբերին, կազմակերպեց և անցկացրեց ՀՅԴ ավելի քան 4000 նախկին ու ներկա անդամ ունեցող հայաստանյան կազմակերպությունների լիկվիդացման (վերացման) համագումարը:

4. 247 դաշնակցական պատգամավորներից կազմված չորսօրյա այդ համագումարում՝ դեռևս դաշնակցական Բակունցի ընդհանուր նախագահությամբ, շատերը համոզմունքով, ոմանք՝ վախով, ոմանք էլ այլ նկատառումներով վճիռ կայացրին իրենց կուսակցության Հայաստանի կառույցի լուծարման ու վերացման մասին: Այդ մասին հայտարարվեց ի լուր աշխարհի՝ խորհրդային պետության և համաշխարհային հեղափոխության առաջնորդներից մինչև Սոցինտերնի Միջազգային Բյուրո:

---

[1] Տե՛ս Ներկարարյան Վ.Ն., *Հայաստանի կոմունիստական պարտիայի 3-րդ համագումարը (1924 թ. մայիս)*, Ե., 1958, էջ 31:

5. Հայկոմկուսին չհաջողվեց և չէր էլ հաջողվի համայն Դաշնակցության լուծարման համագումար անցկացնել: Երևանում հրավիրված համագումարը եղել է հայաստանյան և անգամ չի հաջողվել այն տարածել Խորհրդային Միության մաս կազմող Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի դաշնակցականների վրա:

6. Կարելի է արձանագրել, որ այս համագումարով չիրականացվեց ՀՅԴ ինքնալուծարումը Հայաստանում, և դրանից հետո էլ շարունակվեց, 1920-ից սկսած, Դաշնակցությունն իբրև կառույց քայքայելու գործընթացը:

7. Սակայն 1920-ական թվականներին ՀՅԴ տակավին շարունակում էր դրսևորել իր ներկայությունը խորհրդային տարածքում: Միացյալ պետական քաղաքական վարչության (ՄՊՔՎ) 1924 թ. հունվար ամսվա քաղաքական-տնտեսական տեսության մեջ արձանագրված էր, որ «արտասահմանի դաշնակների կուսակցությունը դիմադրում է և ամեն կերպ ջանում է թույլ չտալ կուսակցության քայքայում»: Նշված էր նաև, որ «Վրաստանում կազմակերպվել է դաշնակների նոր ԿԿ»[1]:

8. Ուրեմն՝ ամենևին էլ տպավորություն չպետք է ստեղծվի, թե համագումարից հետո Դաշնակցությունը Հայաստանում լիովին քայքայվեց: Դարձյալ դիմենք պետանվտանգության մարմինների պաշտոնական տվյալներին: ՄՊՔՎ կազմած ամփոփագրով, 1930 թ. հունվարի 1-ի դրությամբ, հանրապետությունում հաշվառման մեջ է գտնվել դաշնակցական 70 բջիջ (խումբ)՝ 538 անդամներով, որոնք ընդգրկված են եղել 6 կազմակերպություններում և ղեկավարվել են Դաշնակցության ԿԿ-ի 3 անդամների կողմից[2]: Փաստերը վկայում են, որ գործել են դաշնակցական խմբեր, էլ չենք խոսում անհատնե-

---

[1] «Совершенно секретно», Лубянка-Сталину о положении в стране (1922–1934 гг.), М., 2001, т. 1, (1922–1923 гг.), часть 2, с. 927.

[2] Տե՛ս նույն տեղում, հատ. 8, մաս 2, Մոսկվա, 2008, էջ 1329–1330:

րի մասին: Հայաստանում դրանք գործել են մինչև համատարած կոլեկտիվացման փուլը՝ 1930-ական թվականների առաջին կեսը:

9. 1920-ական թթ. խորհրդային իշխանություններին հաջողվեց Հայաստանում Դաշնակցությանը քայքայել կազմակերպորեն, բայց ոչ գաղափարապես: «ՀՅԴ գաղափար է,- գրում է վաստակաշատ պատմաբան Վլ. Ղազախեցյանը,- որ տիրում էր շատ մարդկանց, հատկապես մտավորականությանը, գյուղական բնակչությանը, արևմտահայ գաղթականությանը և որի (գաղափարի) դեմ հարկ կլիներ տնական պայքար մղել»[1]: Մարդկանց գլխից ու մտածելակերպից գաղափարներ արմատախիլ անելը դժվարին խնդիր էր. կամ պետք էր տվյալ գաղափարի կրողների համար այլընտրանքներ առաջարկել և դրանք կյանքով ապացուցել, կամ էլ, եթե դա չկար, ապա խորհրդային բռնավարչակարգի պայմաններում այլախոհական գաղափարները արմատախիլ անելու միջոցներ էին դառնում քաղաքական բռնություններն ու ռեպրեսիաները, ինչպիսիք կիրառվեցին 1930-ական թթ. և հետագա տարիներին:

10. ՀՅԴ հայտնվեց հարկադիր տարագրության մեջ: Նրա գործունեության ծանրության կենտրոնը փոխադրվեց գաղթաշխարհ (Սփյուռք): Սակայն Հ.Յ. Դաշնակցությունը անտեսանելի հոգևոր թելերով շարունակեց կապված մնալ հայրենի փոքր հողակտորի՝ Խորհրդային Հայաստանի, ազգային ինքնագիտակցություն ունեցող հայ մարդու և հայ հանրույթի հետ:

11. Թեև ի վերջո Հ.Յ. Դաշնակցությունը խորհրդային երկրում կազմակերպորեն վերացվեց (կազմաքանդվեց), սակայն հայ հասարակության առանձին շերտերի գիտակցության մեջ արմատացած նրա գաղափարները հնարավոր չեղավ մինչև վերջ արմատախիլ անել: Այդ գաղափարները 70 տարի մնացին անթեղված Խորհրդային Հայաստանում: Ի վերջո նպաստավոր ժամանակների գալուն

---

[1] «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 6:

պես՝ փոփոխված պայմաններում, 1990 թ. օգոստոսի 8-ին, Հ.Յ. Դաշնակցությունը կրկին բացահայտեց իր կազմակերպական ներկայությունը մայր Հայրենիքում և իր ծանրակշիռ մասնակցությունը բերեց Հայոց անկախ պետականության կառուցման և Արցախի ազատագրության գործում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՆԱԽԿԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ (ԴԱՇԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ) «ԻՆՔՆԱՎԵՐԱՑՄԱՆ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1. Դաշերիտմիության «ինքնավերացման» համագումարի նախապատրաստումը

ՀՅԴ հայաստանյան ավագ կառույցի օրինակով ինքնալուծարման փորձ կատարվեց նրա երիտասարդական թևի՝ Դաշեյիտմիության (դաշնամոլի) վերացման ուղղությամբ: Այդ նպատակով 1924 թ. փետրվարի 1-3-ը Երևանում անցկացվեց նրա, այսպես կոչված, «ինքնավերացման» համագումարը: Մանդատային հանձնաժողովի զեկուցմամբ հաստատված պատգամավորների թիվը եղել է 60, որից համագումարին մասնակցել է 56-ը: Ըստ կրթական ցենզի՝ պատգամավորները գերազանցապես ունեցել են միջնակարգ կրթություն, որոնց 45 տոկոսն ունեցել է կուսակցական ստաժ, իսկ 55 տոկոսը՝ երիտմիութենական[1]:

---

[1] Տե՛ս Հ.Ց. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 181–182: Ցավոք, չկան ամփոփ տվյալներ Հայաստանի Դաշերիտմիության անդամների ընդհանուր քանակի վերաբերյալ: Դրա փոխարեն, օրինակ, նույն սցենարով 1923 թ.

Ընդունված կարգով մինչ համագումարի բացումը կատարվել են նախապատրաստական աշխատանքներ, որոնց անմիջական ղեկավարությունն իրականացրել է Հայաստանի կոմունիստական երիտասարդական միության (ՀԿԵՄ) ԿԿ-ը: ՀԿԵՄ ԿԿ-ի նախագահության 1923 թ. սեպտեմբերի 6-ի որոշմամբ (զեկ. ԿԿ-ի քարտուղար Գուրգեն Գումեղին) Դաշերիտմիության կազմալուծման գծով աշխատանքների ղեկավարումը հանձնարարվում է ՀԿԵՄ ԿԿ-ի նախագահության անդամ Մուշեղ Մինասյանին. «Առաջարկել նրան կապվել Դաշերիտմիությունից հեռացողների ու հին ակտիվիստների հետ Դաշերիտմիության կազմակերպությունը խորտակելու գործում նրանց օգտագործելու նպատակով: Հավաքել Դաշերիտմիության մասին գավառներում գոյություն ունեցող նյութերը՝ Երևան, Ալեքսանդրապոլ, Էջմիածին, Ղարաքիլիսա և Զանգեզուր»[1]:

Ստեղծվում է Հայաստանի նախկին երիտասարդ դաշնակցականների լուծարման համագումարի Նախաձեռնող բյուրո՝ Մկրտիչ Մարգարյանի նախագահությամբ: Բյուրոյի 7 անդամների ստորագրությամբ, իբրև ուղեցույց հրապարակված 3-էջանոց դեկլարացիայում խստորեն քննադատվում էր Դաշնակցություն կուսակցության անցյալը, նրա վարած հակահեղափոխական քաղաքականությունը: Այնուհետև նշվում էր, որ իրենք այսօր վերագնահատում են իրենց անցյալը, որ նախկինում մոլորված են եղել և այլն: Դեկլարացիայում հարց էր բարձրացվում, որ Հայաստանի աշխատավոր երիտասարդության այն հատվածը, որ մինչ այդ դեռ կապված էր Դաշնակցության հետ, պետք է ճշտի իր դիրքը և ասի, թե ում հետ է կամենում

հոկտեմբերին Վրաստանում անցկացված վիրաց մենշևիկյան նախկին երիտասարդական կազմակերպությունների լուծարման համագումարի պատգամավորները ներկայացրել են 5000-ից ավելի երիտասարդ մենշևիկներ, տե՛ս *История Грузии*, т. III, Тб., 1968, с. 31.

[1] Նույն տեղում, էջ 162:

լինել: Դրա համար էլ. «երիտասարդ ակտիվիստ դաշնակցականներս կազմակերպում ենք համագումար՝ վճռելու մեկընդմիշտ հեռանալ Դաշնակցությանը հարելուց և միանալու կոմինտերնին»: Դեկլարացիան ավարտվում էր՝ «Կեցցե՛ համաշխարհային հեղափոխությունը, կեցցե՛ 3-րդ կոմինտերնը, կորչի՛ ֆաշիզմը և ֆաշիստական Դաշնակցությունը»[1]: Դեկլարացիայի բովանդակությունից դժվար չէ կռահել, որ այն պատրաստել են կոմկուսի կամ կոմերիտական մարմինները:

ՀԿԵՄ ԿԿ-ի նախագահությունը 1923 թ. սեպտեմբերի 9-ի նիստում որոշում է. «Ի նկատի ունենալով, որ քայքայման աշխատանքները սկսված են ուշ, համագումարի հավաքումը նոյեմբերի 20-ին համարել անհնար (ստացվում է, որ նախապես ծրագրված է եղել նախկին դաշնակցականների երկու համագումարները հրավիրել նույն օրը – Ա.Հ.) և հետաձգել Դաշնակցություն կուսակցության համագումարից հետո»[2]: ՀԿԵՄ ԿԿ-ի նախագահության հերթական՝ 1923 թ. հոկտեմբերի 16-ի նիստում Դաշերիտմիության վերացման մասին օրակարգային հարցում (զեկ. Մ. Մինասյան) որոշվում է. 1) Դաշերիտմիության լիկվիդացիոն բյուրոն չմիացնել Դաշնակցության՝ այդ նպատակով գործող Բյուրոյի հետ, 2) Կազմել առանձին Նախաձեռնող բյուրո՝ բոլոր երիտասարդական հակախորհրդային կազմակերպություններին լիկվիդացիայի ենթարկելու համար, 3) Ի հայտ բերել իրենց քաղաքական դեմքը չբացահայտող տարրերին և աշխատել, որ նրանք հայտարարություն տան, 4) Բյուրոյի աշխատանքների ծախսերը հոգալու համար դիմել կուսկենտկոմին, որպեսզի նա տրամադրի համապատասխան դրամական միջոցներ[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 488, ց. 1, գ. 27, թ. 1–3:
[2] Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 163:
[3] Տե՛ս նույն տեղում:

ՀԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար Ա. Շահուվարյանի՝ Հ. Ավալյանին ուղղված գրություններից երևում է, որ կազմալուծիչ ակտիվ աշխատանք է տարվել հատկապես ուսանողության շրջանում՝ տատանվողներին վերահամոզելու և խորհրդային իշխանության կողմը ներգրավելու[1]: Քարոզչական աշխատանքներ են տարվել նաև նախկին դաշնակցական «Երկրի աշակերտական միության» շրջանում: Այդ միության 24 անդամներ նոյեմբերի 6-ին հանդես են եկել հայտարարությամբ, որ իրենք կապերը խզում են Դաշնակցությունից և միանում են Կոմունիստական ինտերնացիոնալին ու համաշխարհային հեղափոխությանը[2]: ՀՅԴ երիտասարդական, ուսանողական, աշակերտական միություններից հեռանալու վերաբերյալ խմբերով հայտարարություններ են տրվել նաև դեկտեմբեր ամսվա ընթացքում[3]: Ինքնին հասկանալի է, թե հիմնականում ովքեր էին հրահանգում ու գրել տալիս այդ հայտարարությունների տեքստերը երիտասարդների, ուսանողության և աշակերտության անունից և հրապարակում թերթերում, փակցնում պատերին և այլուր: Անշուշտ, նրանց մի մասն էլ առանց հարկադրանքի, համոզումով ու սպասելիքով են դիմել նման քայլի:

Դաշնակցության ինքնավերացման նախապատրաստական էական քայլերից էր անհատապես կամ խմբակային կերպով դրանից հեռանալու վերաբերյալ հայտարարություն տալը և այդ նպատակով համապատասխան անկետաներ (հարցաթերթիկներ) լրացնելը: ՀԱԱ ՀՅԴ (1457) ֆոնդի գործերից մեկում առկա են 1923 թ. հոկտեմբերի ամսաթվով 191 երիտասարդ դաշնակցականների լրացված անկետաները: Նշված երիտասարդներից ամենամեծ ստաժ ունեցել է Մկրտիչ Զաքարյանը (1915 թ.) Վաղարշապատի կազմակերպությու-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 164:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 165:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 168–169:

նից[1]: Հետաքրքիր են անկետայում առաջադրված մեկնկես տասնյակից ավելի հարցերը (ռեկվիզիտը), որոնց և պատասխանել են դիմումատուները: Բացի ազգանուն, անուն, հայրանունից, հասցե ու ծննդավայր նշումից, տարիքից, սոցիալական ու ընտանեկան վիճակից, կրթությունից ու զբաղմունքից՝ անկետայում տեղ են գտել նաև քաղաքական բնույթի մի շարք հարցեր: Մասնավորապես, հարցեր կան, թե ինչ աշխատանք են տարել մինչև Հայաստանի խորհրդայնացումը, ի՞նչ են արել Դաշնակցության «ավանտյուրայի» ժամանակ, արդյո՞ք տարագրվել են Թավրիզ կամ այլ վայր, ի՞նչով են զբաղվել Թավրիզում կամ այլ վայրում, թվարկել Դաշնակցությունից հեռանալու պատճառները և այլն[2]: Դժվար չէ կռահել, որ համանման բովանդակությամբ լրացված անկետային տվյալները պետք է ծառայեին դոսյե (գործի փաստաթղթային ամբողջություն) խորհրդային պետանվտանգության մարմինների ձեռքում երբեմնի երիտասարդ դաշնակցականների հանդեպ հետագա քաղաքական հետապնդումների համար: Հարկ է փաստել, որ արխիվային գործերում առկա անկետաները լրացվել են Դաշտոմոլի ինքնալիկվիդացման համագումարի ամբողջ նախապատրաստական փուլում՝ 1923 թ. ընթացքում և մինչև 1924 թ. հունվար ամիսը ներառյալ:

Օրավուր քարոզչական ու կազմակերպչական աշխատանք տանելով՝ նախապատրաստվում էր համագումարի հրավիրումը: Նախաձեռնող բյուրոն սերտ համագործակցային կապի մեջ է եղել ՀԿԵՄ ԿԿ-ի հետ: Նախաձեռնող բյուրոյի 1923 թ. հոկտեմբերի 26-ի նիստին ներկա են եղել կոմերիտմիության ԿԿ-ի ներկայացուցիչներ Գ. Գումեդինը և Մ. Մարգարյանը[3]: Բյուրոյի նոյեմբերի 1-ի նիստում դասախոսություն կարդալու համար որոշվում է հրավիրել ՀԿ(բ)Կ

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 226, թ. 1–4:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 5:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 214, թ. 1:

ԿԿ-ի քարտուղար Աշ. Հովհաննիսյանին և Գրիգոր Մեհրաբյանին[1]: Նույն բյուրոյի նոյեմբերի 2-ի նիստում որոշում է կայացվում ուժեղացնել քարոզչական աշխատանքները համալսարանում, բյուրոյի անդամների վրա խնդիր է դրվում երկու օրում, ըստ ֆակուլտետների, ցուցակագրել նախկին երիտասարդ դաշնակցականներին[2]: Հաջորդ նիստում լսվել են Էջմիածնի և Ալեքսանդրապոլի գավառներում տարվող աշխատանքների մասին: Նախաձեռնող բյուրոյի անդամ Միքայել Մարությանը զեկուցում է, որ իրեն հաջողվել է բերել 9 երիտասարդ դաշնակցականների դեկլարացիա[3]: Միաժամանակ նշվում է, որ մի քանի երիտասարդ դաշնակցականներ հակաքարոզչական աշխատանք են տանում Բյուրոյի դեմ և խանգարում նրա աշխատանքներին: Դաշերիտմիության լուծարման Նախաձեռնող բյուրոյի աշխատանքները պարբերաբար ամփոփվել են նրա նոյեմբերի 14-ի, 26-ի, դեկտեմբերի 1-ի և հետագա այլ նիստերում:

Այն բանից հետո, երբ նախկին դաշնակցականների «ինքնավերացման» համագումարի հրավիրումը օրերի հարց էր, ՀԿԵՄ ԿԿ-ի նախագահության նոյեմբերի 18-ի նիստում նկատի ունենալով, որ Դաշերիտմիության կազմալուծման ուղղությամբ տարվող աշխատանքներում խոչընդոտներ կան, որ նա դեռ «իդեալապես չի կազմալուծվել», ուստի որոշվում է «համագումարի հավաքումը հետաձգել»: Միաժամանակ առաջարկվում է ագիտբաժնին՝ Հովհաննիսյանի ղեկավարությամբ պատասխանատու ընկերներից կազմել խումբ և մոտ ապագայում Հնչակ ու Դաշնակցություն կուսակցությունների ուսումնասիրության ծրագիր մշակել: Որոշման կետերից մեկով նաև հանձնարարվում է ՀԿԵՄ ԿԿ-ի նախագահության անդամ Մու-

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 3:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 4:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 5–6:

շեղ Մինասյանին, ուսխորհրդի միջոցով, անցկացնել համալսարանում քաղաքական զտում և այլն[1]:

ՀԿԵՄ ԿԿ-ի նախագահության 1923 թ. դեկտեմբերի 3-ի նիստում նախկին երիտդաշնակների համագումարի համար առաջարկվում է հետևյալ օրակարգը՝ 1. Ընթացիկ մոմենտը, 2. Համագումար հրավիրող Նախաձեռնող բյուրոյի զեկուցումը, 3. Դաշնակցություն կուսակցության և համակրող ուսանողների ու աշակերտական խմբակների մտայնության ու գործելակերպի վերագնահատումը, 4.Ազգային հարցը և խորհրդային իշխանությունը: Որոշվում է համագումարը հրավիրել 1923 թ. դեկտեմբերի 30-ին[2]: Նրա անցկացման համար հաստատվում է 1470 ռուբլի չերվոն[3]: Սակայն կրկին կազմալուծման անբավարար նախապատրաստական աշխատանքների պատճառով ինքնալուծարման համագումարի հրավիրումը հետաձգվում է: Տեսնելով, որ համագումարի հրավիրումը ձգձգվում է՝ ՀԿԵՄ ԿԿ-ի նախագահությունը նախկին Դաշերիտմիության համագումարի վերաբերյալ 1924 թ. հունվարի 10-ին որոշում է. «Համագումարի հետաձգումը համարել անհնար: Խնդրել ՀԿ(բ)Կ ԿԿ-ին թույլատրել համագումարի հրավիրումը, բաց թողնել միջոցներ համագումարն անցկացնելու համար՝ մինչև Անդրերկրկոմից համապատասխան գումարի ստացումը»[4]:

Տասն օր անց, վերադաուից ստանալով համաձայնություն, ի վերջո նախկին երիտասարդ դաշնակցականների համագումարի Նախաձեռնող բյուրոն իր 1924 թ. հունվարի 24-ի ընդլայնված նիստում (ժողովում)՝ Բյուրոյի նախագահ Մկրտիչ Մարգարյանի նախագահությամբ (քարտուղար Գրո), լսում և որոշում է՝ Ընդհանուր ժողով հրավիրել հունվարի 23-ին, ընտրել նախագահություն 4 հո-

---

[1] Տե՛ս Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 165–166:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 167:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 169:

գուց: Առաջարկվում է ընդունել հետևյալ օրակարգը (ռեգլամենտը). 1. Նախաձեռնող բյուրոյի ինֆորմացիան (զեկ. Մկ. Մարգարյան), 2. Ներկա մոմենտը (զեկ. Բակունց), 3. Դաշնակցության պատմություն և գործունեություն (զեկ. Ս. Ֆոլյան), 4. Ազգային հարցը և խորհրդային իշխանությունը, 5. Երիտասարդության դերը Դաշնակցության մեջ (զեկ. Գրո): Որոշվում է համագումարն անցկացնել դոնփակ, իբրև հյուր հրավիրել Միութենական կոմերիտմիությունից, Անդրերկրկոմից, ՀԿ(բ)Կ ԿԿ-ից, Դաշնակցության լիկվիդացիոն Բյուրոյից, Չեկայից և այլն[1]: Հունվարի 24-ի ժողովում որոշվում է համագումարը բացել փետրվարի 1-ին: Գավառներին տալ 40 պատգամավորական տեղ: Համագումարի բացման առթիվ փետրվարի 1-ին, լույս է տեսնում «Բանբեր» միօրյա թերթը, որում Նախաձեռնող բյուրոյի 9 անդամների ստորագրությամբ՝ դեկլարացիա, որն ավարտվում էր՝ «Կեցցե՛ համաշխարհային հեղափոխությունը, Կեցցե՛ 3-րդ Ինտերնացիոնալը, Կորչի՛ ֆաշիզմը և ֆաշիստական Դաշնակցությունը»[2]:

2. Համագումարի բացումը և ընթացքը

Համագումարը բացվում է 1924 թ. փետրվարի 1-ին երեկոյան ժամը 6-ին: Այն բացում է Նախաձեռնող բյուրոյի նախագահ **Մկրտիչ Մարգարյանը**: Մանդատային հանձնաժողովի նախագահ Կ. Գործունյանը զեկուցում է, որ ընդամենը 60 պատգամավորներից համագումարին մասնակցում է 56-ը: Համագումարի պատգամավորների 45 տոկոսն ունեցել է ՀՅԴ կուսակցական ստաժ, իսկ 55-ը՝ դաշերիտմիության:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 214, թ. 10:

[2] Տե՛ս Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 170–171:

Խորհրդային երկրի այն ժամանակվա ընդունված կարգով պատգամավորները հոտնկայս հարգում են համաշխարհային պրոլետարիատի մեծ առաջնորդ Վ. Լենինի թարմ հիշատակը: Համագումարի նախագահության անդամներ են ընտրվում հինգ հոգի՝ Մկ. Մարգարյան, Գր. Գրիգորյան (Գրո), Միք. Մարության (Լեմբել), Օնիկ Չթչյան և Ալ. Բակունց (նախագահ), նաև՝ 4 հոգի խմբագրակազմի և 2 հոգի մանդատային հանձնաժողովի անդամ[1]: Համագումարի պատվավոր նախագահներ են ընտրվում Զինովևը, Տրոցկին, Աշ. Հովհաննիսյանը և Գ. Գումեդինը: Դժվար չէ նկատել, որ Ի. Ստալինը դեռևս խորհրդային քաղաքական դաշտի առաջին պլանում չէ: Հաստատվում է 5-կետանոց օրակարգը:

Լսվում է Ալ. Բակունցի զեկուցումը ներկա պահի մասին: Կարելի է ասել, որ այս հարցում գրեթե նույնությամբ կրկնվել են ՀՅԴ լուծարման համագումարի ժամանակ միջազգային ու ներքին դրության վերաբերյալ հարցադրումները: Զեկուցման ավարտին Բակունցին հարցեր են ուղղվել: Պատգամավորներից մեկը հարց է տվել, թե «ինչ դիրք է բռնել Դաշնակցությունը ֆաշիզմի դեմ»: Բակունցը պատասխանում է. «Դաշնակցությունը այնքան որքան գաղութահայ աշխատավորությանը զրկված է պահում բանվորական շարժումից և օրորում է նրան ծովից ծով գաղափարներով, ֆաշիստ է»[2]: Գաղութահայ խնդիրների շուրջ Բակունցը պարզաբանում է, որ դրսի դաշնակցականների շրջանում էլ կան Խորհրդային իշխանության բարեկամներ, ինչպես արդեն հիշատակված **Ծնարյանը (Ա. Նարինյան)** Ամերիկայում, որոնք իրենց բանվորական կազմակերպությամբ մտել են տեղական բանվորական կազմակերպությունների մեջ: Նույն շարժումը կա Բուլղարիայում[3]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 229, թ. 4:
[2] նույն տեղում, թ. 12:
[3] Տե՛ս նույն տեղում:

Նախկին երիտդաշնակցականների համահայաստանյան համագումարի երկրորդ նիստը նախագահել է Գր. Գրիգորյանը (Գրոն): Նիստում Նախաձեռնող բյուրոյի նախագահ Մկ. Մարգարյանը զեկուցում է, որ մինչև համագումարը Դաշերիտմիությունից հեռանալու հայտարարություն են տվել ընդամենը 245 հոգի, որից Երևանից՝ 93, Էջմիածնից՝ 102, Ալեքսանդրապոլից՝ 17, Նոր Բայազետից՝ 16, Ղարաքիլիսայից՝ 13, Դիլիջանից՝ 3[1]: Այնուհետև նշվում է, որ ըստ նոր ստացած տեղեկությունների՝ Ալեքպոլից և Էջմիածնից ստացվել է ևս 29 նոր հայտարարություն տվողների ցուցակ, որով ընդհանուր թիվը կազմել է 274[2]: Զանգեզուրի գավառի վերաբերյալ տվյալներ չի նշված, որովհետև, ըստ զեկուցման, երիտասարդ դաշնակցականների կազմակերպությունն այնտեղ վաղուց քայքայվել է:

Ըստ սոցիալական կազմի ու կրթական ցենզի՝, անկետային տվյալներ են ներկայացված Դաշնակցությունից հեռացած 492 երիտասարդների վերաբերյալ: Ընդ որում, նրանցից 215-ը եղել են գյուղացիներ, իսկ մնացած 277-ը՝ քաղաքացիներ: Ըստ կրթական ցենզի՝ պատկերն հետևյալն է. անգրագետ՝ 2, տարրական՝ 58, միջնակարգ՝ 187, ուսանող՝ 81, աշակերտ՝ 19, ուսուցիչ՝ 43, հողագործ և այլ զբաղմունք ունեցող՝ 102[3]: Բերված տվյալները վկայում են, որ երիտասարդ դաշնակցականների մոտ ևս բարձր է եղել կրթական մակարդակը: Հեռացածների ավելի քան 63 տոկոսն ունեցել է միջնակարգ և ավելի բարձր կրթություն:

Փաստերը ցույց են տալիս, որ եղել են նաև շատ երիտդաշնակցականներ, ովքեր հայտարարություն չեն տվել և չեն հեռացել երիտդաշնակցությունից: Օրինակ, նշվում է, որ Լենինականի «Բանվոր» թերթում տրվել են մի քանիսի անուններ, ովքեր դեկլարացիա չեն

---

[1] Փաստաթղթում այդ թվերն են նշված, որում մեկ հոգի պակասում է:
[2] Տե՛ս *Հ.Յ. Դաշնակցություն և խորհրդային իշխանություն*, էջ 180:
[3] Տե՛ս նույն տեղում:

տվել, բայց նշված են նրանց անունները: Իսկ Անդրանիկ Քանքանյանը հայտարարել է, որ «երիտասարդ դաշնակցականների իրական թիվը շատ ավելին է, քան տրված է զեկուցումում, որ հազիվ նրանց 1/10-րդ մասը դեկլարացիա տված լինի: Բացի այդ՝ կան մարդիկ, որոնք 2 անգամ են դեկլարացիա տվել: Եվ որ այս համագումարը չի կարելի նախկին բոլոր երիտասարդ դաշնակցականների համագումար համարել»[1]:

Շատ չծավալվելով՝ նշենք, որ ընդհանուր հաշվով նախկին երիտդաշնակցականների համագումարում անցկացվել է ընդամենը 5 նիստ: Վերջին՝ փետրվարի 3-ի երեկոյան նիստում «Երիտասարդության դերը Դաշնակցության մեջ» թեմայով զեկուցել է Գրոն (Գրիգոր Գրիգորյանը): Նա իր ելույթում նշում էր, որ երիտասարդությունը գիտակցաբար թե անգիտակցաբար գնացել է Դաշնակցության հետևից. «Մենք մեր հանցանքները կատարել ենք անգիտակցաբար, իսկ այժմ, երբ գիտակցության ենք եկել, արդեն հարում ենք Երրորդ Կոմինտերնին, որը մեզ տանում է դեպի աշխատավորության հաղթանակը (ծափեր)»[2]: Նախորդ նիստերում Ալ. Բակունցի՝ «Ներկա մոմենտի», Ս. Ֆոլյանի՝ «Դաշնակցության գործունեության և պատմության» և Ս. Տեր-Հարությունյանի՝ «Ազգային հարցի» մասին կարդացված զեկուցումների վերաբերյալ ևս միաձայն ու բուռն ծափերով ընդունվում են համապատասխան բանաձևեր: Միաժամանակ առաջարկվում է հեռագիր ուղարկել Միջազգային երիտասարդական ինտերնացիոնալին՝ պատրաստակամություն հայտնելով գնալու նրա հետևից[3]: Համագումարի սղագրական արձանագրությունից երևում է, որ հարցերի քննարկումների ընթացքում եղել են նաև այլ տեսակետներ արտահայտողներ:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 229, թ. 18–19:
[2] *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, Լ.ջ 186:
[3] Տե՛ս նույն տեղում:

Համագումարի արդյունքները ամփոփել է Մկ. Մարգարյանը: Նախկին երիտդաշնակցականների համահայաստանյան համագումարը, արձանագրելով իբրև զանգվածային բեկում երիտասարդության շրջանում, ավարտում է իր աշխատանքները բոտն ծափերի և «Ինտերնացիոնալի» նվագի ներքո: Տալով գնահատական այս համագումարին՝ կարելի է ասել, որ ակներև է այդ միջոցառման ցուցադրականությունը, բայց և այնպես այն պետք է դիտել որպես քայլ անորոշության մեջ հայտնված ՀՅԴ հայաստանյան երիտկառույցները քայքայելու և նրա երիտասարդությանը դեպի խորհրդային իշխանությունը կողմնորոշելու ուղղությամբ:

3. Դրությունը երիտդաշնակցականների ինքնավերացման համագումարից հետո

Երիտդաշնակցականների ինքնալուծարման համագումարից հետո դրանց կազմակերպությունների ու խմբերի վերջնական վերացման աշխատանքները բնականաբար հանձնարարված էր ՀԿԵՄ ԿԿ-ին, որն էլ իր տեղական կառույցների միջոցով դիմում է գործնական քայլերի: Երիտդաշնակցականների կազմալուծման գործողություններից մեկը համարվեց նրանց անհատական կարգով զաղափարապես վերադաստիարակելը և ընդգրկելը կոմերիտմիության շարքերը: ՀԿԵՄ ԿԿ-ի նախագահությունը 1924 թ. մարտի 11-ին որոշում է՝ նախկին դաշնակցականներին կոմերիտմիության մեջ ընդգրկելու համար ԿԿ-ին առընթեր ստեղծել Եռյակ հանձնաժողով՝ Գ. Գումեղինի ղեկավարությամբ, մանրակրկիտ ուսումնասիրել դիմում տվողների գործերը և դրական կարծիք կազմելու դեպքում ընդունել կոմերիտմիության շարքերը[1]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 48, ց. 39, գ. 29, թ. 32:

Փաստերը ցույց են տալիս, որ գործնականում, լուծարման համագումարից հետո էլ, տնական ժամանակ շարունակել են պահպանվել դաշնակցական երիտասարդական միություններ: ԿԿ-ի նախագահությունը 1924 թ. ապրիլին արձանագրել է դպրոցներում, տեխնիկումներում և համալսարանում աշխատող երիտասարդության շրջանում հակակոմունիստական խմբակների գոյության մասին: Այդ նպատակով առաջարկվում էր վերահսկողություն սահմանել դրանց աշխատանքի վրա: Միաժամանակ հրահանգ էր տրվում պայքար մղել հակակոմունիստական դաշնակցական գրականության տարածման դեմ: Գրադարաններից ազատել նման գրականության տարածմանը նպաստող անձանց[1]: ՀԼԿԵՄ Էջմիածնի գավկոմի քարտուղարի 1924 թ. հուլիս-օգոստոս ամիսների զեկուցման մեջ նշվում է, որ գավառի որոշ կենտրոններում՝ Վաղարշապատում, Աշտարակում գոյություն ունեն դաշերիտմիություններ, որոնց թիվը, սակայն, մեծ չէ: Գավկոմի քարտուղարի կարծիքով. «Դրանք կուլակների և առևտրականների տղաներ են՝ դժգոհ մեր կարգերից»[2]:

Ուշագրավ է, որ ՀԼԿԵՄ ԿԿ-ի համակարգում ստեղծվել էր հակակոմունիստական կազմակերպությունների քայքայման բաժին: Դա երևում է ՀԼԿԵՄ ԿԿ-ի 1924/25 թթ. հաշվետվությունից: ԿԿ-ի քարտուղար Գ. Գումեղինն իր ներկայացրած տարեկան հաշվետվության մեջ հայտնում էր, որ չնայած 1924 թ. փետրվարին նախկին երիտասարդ դաշնակցականների համագումարում այդ կազմակերպությունը հայտարարվեց ինքնալուծարված, սակայն դրանից հետո էլ շարունակում են ի հայտ գալ հակակոմունիստական երիտասարդական խմբակներ. «Դրանց աշխատանքը նկատելի դարձավ Երևանի պետական համալսարանում, նույնպես՝ Էջմիածնի գավառում: Այդ խմբակներում մտնում էին և՛ դաշնամոլներ, և՛ մենշևիկներ: Դ-

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 26, թ. 49 և 58:
[2] ՀԱԱ, ֆ. 488, ց. 1, գ. 251, թ. 116:

բանք իրար հետ ունեն փոխադարձ. կապ: Նրանց աշխատանքը հատկապես ակտիվացավ Վրաստանում մենշևիկների անցյալ տարվա արկածախնդրության ժամանակ[1], որին արձագանքել են նաև Նոր Բայազետի համանման խմբեր»[2]:

ՀՍԽՀ-ում առկա հակակոմունիստական երիտասարդական խմբավորումների գոյության փաստի մասին արձագանքել է Անդրերկրկոմի նախագահությունը: 1926 թ. նրա ընդունած բանաձևում նշվում էր, որ ՀԼԿԵՄ-ում ի հայտ են եկել հակակոմունիստական խմբեր ու խմբավորումներ, որոնք գտնվում են դաշնակցականների և մենշևիկների ազդեցության տակ: Դրանցից են «Տրոցկիստական երիտասարդական միությունը» և «Օրտոդոքսալ մարքսիստները», որոնք հանդես են գալիս տրոցկիստական պլատֆորմով, դեմ են կուսակցության վարած ներքին և արտաքին քաղաքականությանը, գործում են ընդհատակյա, հարում են մենշևիկներին և դաշնակներին: Նշված է, որ սրանց խմբերը ուժեղ են Երևանի կազմակերպություններում, անկայուն երիտասարդների մի մասը ընկել է սրանց ազդեցության տակ: Անդրերկրկոմի նախագահությունը հանձնարարում էր ՀԼԿԵՄ ԿԿ-ին և Երկոմին ուժեղացնել գաղափարական պայքարը նման թշնամական խմբավորումների դեմ, տանել բացատրական աշխատանք երիտասարդության շրջանում և այլն[3]:

Խորհրդային կուսակցական ու պետական մարմինները, տանելով քայքայիչ ու կազմալուծիչ աշխատանք նախկին այլախոհ երիտասարդական կազմակերպությունների դեմ, դրանով իսկ պատրաստում էին կոմունիստական կուսակցության ու խորհրդային պետության համար միակ վստահելի երիտասարդական կառույցը՝ հանձին լենինյան կոչված կոմունիստական երիտասարդական

---

[1] Նկատի ունի վրաց մենշևիկների 1924 թ. օգոստոսին կազմակերպած հակախորհրդային խռովությունը:

[2] ՀԱԱ, ֆ. 488, ց. 1, գ. 467, թ. 5:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1406, թ. 1–5:

միության: ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Ալ. Մյասնիկյանի հայտնած տվյալներով 1924 թ. 5000 անդամներից բաղկացած Հայկոմկուսն ուներ 13000 կոմերիտական, որը համարվում էր կոմկուսի հուսալի ռեզերվ[1]:

Արդեն 20-ականի երկրորդ կեսին համապետական մասշտաբով ընդդիմության ակտիվացման պայմաններում փոխվում է դրա դեմ պայքարի ձևերն ու մեթոդները: Ավելի հաճախ գործի են դրվում ձերբակալությունները, բանտն ու աքսորը: Վավերագրերը ցույց են տալիս, որ նշված ժամանակահատվածում ակտիվություն է նկատվել նաև երիտասարդ դաշնակցականների շրջանում: 1928 թ. մի գաղտնի տեղեկանքում հայտնվում է, որ հակակոմունիստական-տրոցկիստական օպոզիցիոն խմբեր կան Աշտարակի և Ղուրդուլուի շրջանների բնակավայրերում, որ ակտիվացել են նախկին դաշնակցականները և գործակցում են մյուս ընդդիմադիրների հետ, և որ Աշտարակում, Օշականում, Հայ Զեյվայում, Աղավնատնում, Դոխսում, Սամադարում, Ն. Խաթունարխում ստեղծվել են խմբեր, Դաշսոմոլ կազմակերպություններ: Այդ իսկ պատճառով Էջմիածնի գավառային լիազորը գտնում էր, որ հակախորհրդային դաշնակցական այդ խմբերի դեմ պայքարի ամենաարդյունավետ ձևը «դրանց մեկուսացնելն ու ռեպրեսիվ միջոցների դիմելն է»[2]:

ՀԽՍՀ դատախազության ֆոնդի գործերից մեկում տեղեկություններ կան ընդհատակում գործող Դաշնակցական երիտասարդական միության և Երիտասարդ մարքսիստների այլախոհ կազմակերպությունների գործունեության մասին: Երիտասարդ մարքսիստների կազմակերպությունը դիտվել է որպես լենինյան կոմերիտմիությանը հակակշիռ կառույց: Հակախորհրդային ու հակահեղափոխական որակվող երիտասարդական կազմակերպությունն-

---

[1] Տե՛ս Մյասնիկյան Ալ., *Երկեր*, 5 հատորով, հ. 5, Ե., 2007, էջ 262:
[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 65, թ. 20–22:

րի հետապնդման խնդիրներով զբաղվում էր Պետքաղվարչության գաղտնի բաժինը: Փաստաթղթերից մեկում բերվում է նման խմբերին հարող տասնյակ ուսանողների անուններ, որոնք սովորելիս են եղել Վաղարշապատի մանկավարժական տեխնիկումում և Երևանի Քաղլուստեխնիկումում: Հայտնվում է, որ դրանցից առավել ակտիվներին ՊՔՎ կոլեգիայի դատական նիստը ՀՍԽՀ Քր. օր.-ի 67 և 68 (քաղաքական) հոդվածներով դատապարտել է բանտարկության՝ 3-ից մինչև 5 տարի ժամկետներով համակենտրոնացման ճամբար[1]:

Մեր կարծիքով՝ ՊՔՎ և կուսակցական մարմինների ներկայացուցիչները որքան էլ որ չափազանցրած լինեն հակակուսակցական տրոցկիստական, դաշնակցական խմբերի գոյության մասին տեղեկությունները, այդուհանդերձ դրանք սոկա են եղել: Այլախոհ կուսակցությունների պաշտոնապես լուծարումից հետո էլ դրանք պահպանվել են, տեղ-տեղ կրկին ինքնադրսևորվել, որովհետև ՀՅԴ գաղափարախոսությունը, ազգային քաղաքական նպատակադրումները մնում էին մարդկանց որոշ հատվածների մոտ որպես մտածելակերպ, հոգեվիճակ և հնարավոր չէր վարչական կամ հակաքարոզչական միջոցներով դրանք միանգամից արմատախիլ անել:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 57, թ. 3–7:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԼՈՒՅՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

ՀՅԴ լուծարման համագումարներով Դաշնակցություն կուսակցության և նրա երիտասարդական կազմակերպությունների ՀՍԽՀ սահմաններում պաշտոնապես վերացված համարելով՝ խորհրդային իշխանությունները փորձեր կատարեցին դրանք քայքայել ու վերացնել գաղթաշխարհում (նեյքին և արտաքին սփյուռքում):

Անդրկովկասում ազգայնական շարժման վերաբերյալ ՄՊՔՎ 1924 թ. հունվար ամսվա քաղաքական-տնտեսական տեսության մեջ նշվում է, որ. «Հայաստանում հայ դաշնակների քայքայման գործընթացը վերջնականորեն ձևակերպվեց Երևանում կայացած նախկին դաշնակների համահայկական համագումարով»[1]: Իրականում, ինչպես տեսանք, գումարված համագումարը ոչ միայն համահայկական չէր, այլև ընդամենը հայաստանյան էր, այն անգամ չէր տարածվել Ռուսաստանի, Վրաստանի և Ադրբեջանի դաշնակցականների վրա: Այնուհետև տեղեկանքում հայտնվում էր, որ արտասահմանի դաշնակցականները անհանգստացած են, և նրանց գործունեությունը ներկա ժամանակ ուղղված է այն բանին, որ թույլ չտան, դիմադ-

[1] «Совершенно секретно». Лубянка-Сталину о положении в стране (1922–1934 гг.), М., 2001, т. 1, (1922–1923 гг.), часть 2, М., 2001, с. 972.

րեն կուսակցության քայքայմանը: Վրաստանում կազմակերպվել է նոր ՀՅԴ Կենտկոմ[1]:

Խորհրդային Հայաստանում ՀՅԴ լուծարման համագումարից հետո խնդիր դրվեց կազմաքանդել այդ կուսակցության կառույցները խորհրդային տարածքում, հնարավորության դեպքում՝ նաև արտասահմանում: Այդ գործը գլուխ բերելու համար դեռևս նախկին դաշնակցականների համահայաստանյան լուծարման համագումարում ընտրվել էր մինչև 23 հոգուց կազմված Նախաձեռնող բյուրո, որին հանձնարարվել էր մշակել ծրագիր և զբաղվել Համամիութենական մասշտաբով համագումար հրավիրելու հարցերով: Այդ մասին հիշեցնում է Արտակարգ հանձնաժողովի նախագահ Ս. Մելիք-Հովսեփյանը (Օսիպովը) 1924 թ. դեկտեմբերի 25-ին ՀԿ(բ)Կ ԿԿ-ին ուղղված հույժ գաղտնի գրությունում: Չեկայի նախագահը դժգոհություն է հայտնում, որ անցել է մեկ տարի և ոչ մի գործունեություն չի նկատվում սույն Բյուրոյի կողմից[2]: Այդ գրությամբ խնդրվում էր մոտիկ ապագայում հրավիրել խորհրդակցություն, հրավիրել Նախաձեռնող բյուրոյի բոլոր անդամներին և մշակել հետագա գործունեության ծրագիր: Այդ նպատակի համար Արտակարգ հանձնաժողովը նույնիսկ պատրաստ էր որոշ գումար հատկացնել[3]: ՀՍԽՀ Չեկայի նախագահ Ս. Մելիք-Հովսեփյանը Հայկոմկուսի ԿԿ-ի քարտուղարությանն ուղղված մի այլ գրությամբ հայտնում է, որ Հյուսիսային Կովկասի իր գործընկերներից, Միացյալ պետքաղվարչությունից, տեղեկություն է ստացել տեղի դաշնակցականների կողմից իրենց կուսակցությունից հեռանալու հայտարարություն տալու վերաբերյալ: Այդ հիման վրա նա միանգամայն անհրաժեշտ ու ցանկալի էր

---

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, էջ 53–54:
[3] Տե՛ս նույն տեղում:

համարում Հյուսիսային Կովկասում Դաշնակցության շարքերի կազմալուծման արշավի անցկացումը[1]:

Խորհրդային Հայաստանից դուրս՝ խորհրդային տարածքում, հատկապես հայաշատ Վրաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի տարածաշրջաններում (ուր ապաստան էին գտել տասնյակ հազարավոր գաղթականներ) տարվել են նախապատրաստական որոշ աշխատանքներ, Հայկոմկուսի Կենտկոմում տեղի են ունեցել լսումներ, առանձին վայրերում եղել են Դաշնակցությունից հեռանալու վերաբերյալ հայտարարություններ և այլն: Վերոնշյալ երկրամասերում Դաշնակցության կազմալուծման աշխատանքների վերաբերյալ հարց է լսվել ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախագահության 1925 թ. փետրվարի 10-ի նիստում (զեկ. ԿԿ-ի 3-րդ քարտուղար Ալ. Շահնազարյան) և որոշվել. հարց բարձրացնել կուսակցության Անդրերկրկոմի առաջ՝ ձեռնարկելու գործնական քայլեր Վրաստանում, Ադրբեջանում և Հյուսիսային Կովկասում Դաշնակցություն կուսակցությունը կազմալուծելու ուղղությամբ[2]: Հայկոմկուսի ԿԿ-ի բարձրացրած հարցը լսվել է Անդրերկրկոմի քարտուղարության բյուրոյի 1925 թ. մարտի 25-ի նիստում: Նրանում հավանություն է տրվել Հայկոմկուսի ԿԿ-ի առաջարկին և որոշվել. 1. Դաշնակցականներին կազմալուծելու գծով առանձնացնել համապատասխան ընկեր Անդրկովկասի Արտակարգ հանձնաժողովում աշխատելու համար: 2. Առաջարկել Վրաստանի և Ադրբեջանի կոմկուսների կենտկոմներին մշակել Վրաստանում և Ադրբեջանում Դաշնակցություն կուսակցության կազմալուծման աշխատանքի պլան և ներկայացնել Անդրերկրկոմ: 3. Խնդրել ՌԿ(բ)Կ Հյուսիս-Կովկասյան երկրային կոմիտեին Հյուսիսային Կովկասում ևս անցկացնել կազմալուծման համապատասխան աշխատանք[3]: Հայկոմկուսի ԿԿ-ի նախագահութ-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 55:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 304–305:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 306:

յունը 1925 թ. ապրիլի 6-ի որոշմամբ հավանություն է տվել և անհրաժեշտ է համարել Հյուսիսային Կովկասում Դաշնակցության կազմալուծման աշխատանքներին, իսկ Անդրկովկասի Արտակարգ հանձնաժողովում կազմալուծման աշխատանքները վարելու համար Հայաստանում հարմար մարդ չլինելու պատճառով հունիս ամսին առաջադրվել է Անդրչեկայի աշխատակից Նազարովի թեկնածությունը[1]: Նշված տարածաշրջաններում ՀՅԴ կազմալուծման համագումարներ կազմակերպելու վերաբերյալ հետագա վավերագիր նյութերը լռում են:

*
* *

Շատ ավելի դժվար էր ՀՅԴ քայքայման գործընթաց իրականացնել արտաքին Սփյուռքում: Այդ նպատակին հասնելու համար Հայկոմկուսն օգտագործում էր ոչ միայն իր, այլև արտերկրում ՀՅԴ-ին հակառակորդ՝ Ս.Դ. Հնչակ, ՌԱԿ, արտերկրի կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ուժերն ու միջոցները: Բացի Հայաստանի կուսակցական-պետական մարմիններից՝ ՀՅԴ քայքայման հարցը մշտապես գտնվել է ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի ուշադրության կենտրոնում: Դաշնակցություն կուսակցությունը արտասահմանում քայքայելու նպատակով ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի և Հայկոմկուսի ԿԿ-ի մակարդակով զուգահեռաբար փորձեր են արվել արտերկրում ևս նման համագումար հրավիրել: Այս կապակցությամբ Անդրերկրկոմի քարտուղարության բյուրոյի 1924 թ. նոյեմբերի 19-ի նիստում, լսելով Հայկական հարցերի գծով Գ. Օրջոնիկիձեի, Ալ. Մյասնիկյանի և Ա. Մռավյանի զեկուցումները, որոշվում է.

«1. Անհրաժեշտ համարել արտասահմանում դաշնակների քայքայման գծով համագումարի հրավիրումը: Համագումարի անցկա-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 307:

ցումը հանձնարարել ընկերներ Ա. Երզնկյանին և Ս. Փիրումյանին: Այս կետի վերաբերյալ հարցնել ՀԿԿ Կենտկոմի կարծիքը:

2. Ընկ. Ս. Փիրումյանին ընդունել Կոմկուսի մեջ: Ներկայացնել ՌԿԿ Կենտկոմի հաստատմանը:

3. Անդրժողկոմխորհի միջոցով ամսական 50 դոլար բաց թողնել «Բանվոր Փարիզի» թերթի համար: (Որոշման 4–5-րդ կետերը խնդրի հետ էական կապ չունեն – Ա.Հ.):

6. Հարց հարուցել ՌԿԿ Կենտկոմի առաջ Փարիզի մեր միսիայում Անդրկովկասի հայ ներկայացուցիչ մտցնելու անհրաժեշտության մասին»[1]:

Տարագիր հայության շրջանում, անգամ Կոմինտերնի մակարդակով հակադաշնակցական քարոզչություն վարելու նպատակով առանձին աշխատողներ են նշանակվել:

Իր հերթին արտասահմանում տարվող գործերի մասին լսումներ ու որոշումներ է կայացրել Հայկոմկուսի ԿԿ-ը: ԿԿ-ի նախագահության վերոնշյալ 1925 թ. փետրվարի 10-ի նիստում, բացի Վրաստանում, Ադրբեջանում և Հյուսիսային Կովկասում Դաշնակցության կազմալուծման ուղղությամբ տարվող աշխատանքներից, լսվել է նաև արտերկրում այդ ուղղությամբ աշխատանքների մասին: Լսվել են Լուկաշինի, Երզնկյանի և Փիրումյանի հաղորդումները և որոշվել. 1.Անհրաժեշտ և ցանկալի համարել հայերով բնակեցված վայրերում (Կոստանդնուպոլիս, Բալկաններ, Փարիզ, Մարսել, Ամերիկա) ԽՍՀՄ համապատասխան լիազոր ներկայացուցչություններին կից ունենալ Դաշնակցության կազմալուծման աշխատանքների գծով ընկեր: 2. Ուժեղացնել Դաշնակցության կազմալուծման աշխատանքը արտասահմանում և խնամքով նախապատրաստել ըստ շրջանների Դաշնակցության կազմալուծման համագումարների

[1] Նույն տեղում, էջ 303:

հրավիրման մասին հարցը[1]: Այս որոշումից երևում է, որ նախատեսվում էր ՀՅԴ քայքայման համագումարներ հրավիրել տարբեր երկրների հայահոծ վայրերում, այլ կերպ հնարավոր էլ չէր պատկերացնել, որովհետև ՀՅԴ Սփյուռքի համաշխարհային առավել ուժեղ ու կենսունակ կառույցներից էր: ՀՅԴ գաղթաշխարհում գաղափարապես ու կազմակերպորեն քայքայելու գաղափարը գլուխ բերելու համար կարծում ենք կպահանջվեր հսկայական կազմակերպական, ֆինանսական, մարդկային, գործակալական ու քարոզչական աշխատանք, մի հանգամանք, որի հնարավորությունը խորհրդային վարչակարգը չուներ:

Պետք է նաև հաշվի առնել, որ նման գործնական քայլի դիմելու դեպքում Կումկուսը տեղերում անպայման կհանդիպեր ուժեղ դիմադրության: Հայտնի է, որ կոմունիստական կուսակցությունը քայքայիչ աշխատանքներ տարել է արտասահմանում գործող նախկին ռուսաստանյան այլախոհ՝ Էսէռ, կադետ, մենշևիկ և այլ կուսակցությունների հանդեպ: Սակայն որքան մեզ հայտնի է արտերկրում (բուրժուական ու իմպերիալիստական որակվող) լուծարման համագումարներ չեն կազմակերպվել, այդ թվում նաև՝ ՀՅԴ դեմ:

*

* *

Դրա փոխարեն, Հայկոմկուսը ամենաբարձր ղեկավար անձերի մակարդակով, հակախորհրդային, հակահեղափոխական, ազգայնական որակվող կուսակցությունների ու հոսանքների և առաջին հերթին Դաշնակցություն կուսակցության դեմ միաժամանակ տանում էր անհաշտ **գաղափարական-քարոզչական** աշխատանք թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս:

---

[1] Տե՛ս *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 304:

ՀՅԴ դեմ պայքարի դրսևորումներից կարելի է համարել քարոզչական նպատակով Պետհրատի միջոցով նրա նախկին ու ներկա գործունեությանը վերաբերող ժողովածուների, հուշագրությունների և քննադատական բնույթի այլ հակադաշնակցական աշխատությունների լույսընծայումը և տարածումը: 1920-ականների սկզբին Խորհրդային Հայաստանում թափ հավաքող հակադաշնակցական ուժեղ գաղափարաքարոզչական պայքար էր իրականացվում հատկապես ՀՍԽՀ արտգործժողկոմատի տեղեկատու բաժնի «Բյուլետեն»-ի միջոցով: Հոկտեմբերյան հեղաշրջման հաղթանակից հետո Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմատի կողմից, ցարական և ժամանակավոր կառավարությունների գաղտնի պայմանագրերի հրապարակման օրինակով, ՀՍԽՀ արտգործժողկոմատը Ալ. Մյասնիկյանի (Մարտունու) առաջաբանով հրատարակեց Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի նախագահ, Փարիզում գործող ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանի 4 նամակներն ու զեկուցագրերը[1]:

ՀՅԴ դեմ հակադաշնակցական գաղափարաքաղաքական դիրքորոշման ու պայքարի ստեղծագործություններից է Ալ. Մյասնիկյանի՝ «Կուսակցությունները գաղութահայության մեջ» հայտնի աշխատությունը, որը տասնամյակներ շարունակ մեթոդական ուղեցույց է հանդիսացել խորհրդահայ սյատմաբանների համար սփյուռքահայ երեք ավանդական կուսակցությունների ու առաջին հերթին Դաշնակցություն կուսակցության գնահատման հարցում: Հարկ է նշել, որ հայ ավանդական մյուս երկու՝ Ռամկավար Ազատական և Ս.Դ. Հնչակյան կուսակցություններից կոմկուսը առանձնապես մեծ վտանգ չէր տեսնում, մանավանդ վերջիններս էլ ստեղծված իրավի-

---

[1] **Սուքիասյան Համո.**, *Ա. Ահարոնյանի նամակ-զեկուցագրերի հրատարակման հարցը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ)*, (տե՛ս **Ահարոնյան Ավետիս**: *Գիտաժողովի նյութեր*, Ե., 2017, էջ 363):

ճակում հիմնականում լոյալ ու հաշտվողական դիրք էին բռնել խորհրդային իշխանությունների հանդեպ:

Ալ. Մյասնիկյանի սկսած հակադաշնակցական գաղափարաքաղաքական պայքարի գործին լծվեցին կուսակցական-պետական մյուս նշանավոր գործիչները՝ Ս. Լուկաշինը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Կարինյանը, Ս. Կասյանը, անգամ գրողներ ու գրականագետներ իրենց մենագրական աշխատություններով ու երկերով: Առաջին հերթին հակադաշնակցական պայքարին էին լծված կուսակցական ու կոմերիտական ապարատի համապատասխան քարոզչական ստորաբաժանումները: Այդ պայքարում որոշակի գործառույթ էին իրականացնում կրթական ու գիտական հաստատությունները՝ այդ թվում Պետհամալսարանը, հետագայում պատմության և գրականության ինստիտուտները, Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական բաժանմունքը, Պետական կենտրոնական արխիվը և այլն:

Որքան Հայաստանում ու խորհրդային տարածքում ՀՅԴ դիրքերը թուլացվում և դատավարությունների ու լուծարման համագումարների միջոցով նա աստիճանաբար դուրս էր մղվում հասարակական-քաղաքական կյանքից, ի լրումն դրա՝ ուժգնանում էր պայքարը նաև գաղթաշխարհում՝ նրա լիակատար քայքայման ուղղությամբ:

Անդրադառնալով արտերկրում Դաշնակցության քայքայման խնդրին՝ հարկ է հատուկ ընդգծել, որ այդ պայքարում գործունեության անհամեմատ լայն դաշտ էր համարվում սահմանակից Պարսկաստանը, ուր կենտրոնացված էր մեծ թվով հայություն, այդ թվում Փետրվարյան 1921 թ. ապստամբության պարտությունից հետո այնտեղ հաստատված ՀՅԴ ղեկավար միջուկի մի հատվածը: Չեկայի 1921 թ. կազմած տեղեկատվական ամփոփագրերի ու բյուլետենների ոչ ամբողջական տվյալներով Իրան էին ապաստանել ՀՅԴ կուսակցական ու պետական գործիչներ, խորհրդարանի անդամներ, խմբա-

պետներ ու զինվորականներ՝ Ավետիք Սահակյանը, Սիմոն Վրացյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Հակոբ Տեր-Հակոբյանը, Գերասիմ Բալայանը, Զաքար Յոլյանը, Գևորգ Վարշամյանը, Եփրեմ Սարգսյանը, Գեդեոն Տեր-Մինասյանը, Սերգեյ Մելիք-Յոլչյանը, Մարտիրոս (Բաշգառնեցի) Աբրահամյանը, Խնկո (Բաշգառնեցի) Ասատրյանը, Հովհաննես Պարոնյանը (Յապոն), Շավարշ Բասենցյանը, Հրաչ Ավետիսյանը,, Ասլան Ստեփանյանը, Մուշեղ (Սասունցի) Ավետիսյանը, Սուրեն (Կոտո) Թարխանյանը, Գերասիմ Աթաջանյանը և շատ ուրիշներ[1]: Իրանը քաղաքական առումով որոշակի վտանգ էր պարունակում, մանավանդ որ պարսկական իշխանությունները համակրանքով էին վերաբերում հակախորհրդային կեցվածք ընդունած Դաշնակցություն կուսակցությանը:

Հայաստանի խորհրդայնացումից ի վեր սահմանակից Պարսկաստանում ՀՅԴ քայքայման աշխատանքներում Հայչեկան և Անդրչեկան գործում էին միասնաբար՝ դրանում ներգրավելով Թեհրանի և Թավրիզի խորհրդային դիվանագիտական, առևտրական և այլ ներկայացուցչությունները, ՀՕԿ-ի մասնաճյուղը, գործակալական կամ այլ ճանապարհներով կատարվում էին դաշնակցականների ու նրանց կազմակերպությունների միջև Պարսկաստան-Հայաստան և հակառակ ուղղությամբ նամակագրությունների գաղտնընթերցումներ[2], խորհրդային հյուպատոսության աշխատակիցները հետևում էին դաշնակցական խմբապետների ու գործիչների տեղաշարժերին, հաճախակի ձերբակալվում էին սահմանախախտ դաշնակցականները և այլն: Հայչեկայի նախագահ Շ. Ամիրխանյանը 1922 թ. օգոստոսի 11-ին հեռագրում էր Թավրիզ՝ ՀՍԽՀ գլխավոր հյուպատոս Եզեկել Երզնկյանին՝ ճշտելու համար Անդրչեկայի տեղեկությունն

---

[1] *ՀՍԽՀ Արտակարգ հանձնաժողովի տեղեկատվական գործունեությունը 1921 թ. հուլիս-դեկտեմբեր ժամանակաշրջանում*, կազմեցին՝ **Ա. Վիրաբյան, Ա. Կիրիմյան** (տե՛ս ԲՀԱ, Ե., 2017, թիվ 125, էջ 156-157 և 166):

[2] Այդ մասին հանգամանալի անդրադարձ կլինի ավելի ուշ:

այն մասին, որ Գ. Նժդեհը Պարսկաստանից տեղափոխվել և գտնվում է Բաքվում[1]: Չեկայի նախագահը օգոստոսի 20-ին կրկին հեռագրում էր Թավրիզ գլխավոր հյուպատոս Ե. Երզնկյանին՝ տեղեկացնելով, որ մեկ տասնյակից ավելի մաուզերիստներ ու խմբապետներ (թվարկված են անունները) Ջուլֆայով անօրինական սահմանն անցնելիս բռնվել են, և նա ցանկանում էր պարզել, թե ինչ նպատակով են նրանք փորձել գալ Հայաստան[2]:

Պարսկաստանում հակադաշնակցական պայքարում ներգրավված է եղել ոչ միայն Թավրիզի հյուպատոսությունը, այլև Թեհրանում գտնվող ԽՍՀՄ (լիազոր ներկայացուցչությունը) դեսպանատունը: Դեսպանին պարբերաբար զեկուցել են Պարսկաստանում ՀՅԴ քայքայման գործընթացի մասին: Այսպես՝ ԽՍՀՄ լիազոր-ներկայացուցիչ Շումյացկուն 1923 թ. սեպտեմբերի 18-ին ուղղված մի նամակում խորհրդային հավանաբար գաղտնի ծառայող Մ. Սլավուցկին հայտնում է, որ Թավրիզում՝ Դաշնակցության շարքերում, տարբեր պատճառներով տեղի է ունենում նկատելի քայքայում, նրա լիդերների մեծ մասը լքում է Թավրիզը: Բայց նամակագրի կարծիքով՝ ոչ այն աստիճանի, որ իրենք կարողանան պայքարել դաշնակցականների դեմ և հաղթել մեջլիսի ընտրություններում կամ թեմական ժողովում՝ «տեղի դաշնակցական խումբը բավական լուրջ մեծություն է հատկապես գոյություն ունեցող հակադաշնակցական տարրերի համեմատությամբ»[3]:

Թավրիզից ՀՅԴ գործունեության վերաբերյալ Հայաստանի և Անդրկովկասյան չեկաներին ուղղված մեկ այլ՝ 1923 թ. սեպտեմբերի 24-ի վավերագիր մի ամփոփագրով տեղեկացվում է, որ Թավրիզում Դաշնակցություն կուսակցությունն իր տրամադրության տակ ունի

Տե՛ս *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 290:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 291:

[3] Նույն տեղում, էջ 292–293:

350 մարդ, որոնց թվում մաուզերիստներ, խմբապետներ, սպաներ ու զինվորներ: Նշվում է, որ Դաշնակցություն կուսակցության շարքերում պառակտում առաջ բերելու նպատակով փորձում են իրար դեմ հանել նրա վերնախավին ու շարքայիններին, արևմտահայերին ու ռուսահայերին, նրանցից ոմանք ստորագրել են իրենց պատրաստած հակադաշնակցական բովանդակության կոչը՝ ցանկություն հայտնելով վերադառնալ Հայաստան:

ՀՍԽՀ Արտակարգ հանձնաժողովի նախագահի տեղակալ Ս. Մելիք-Հովսեփյանի՝ Անդրչեկայի նախագահ Ս. Մոգիլևսկուն (անձամբ) ուղղված 1924 թ. հոկտեմբերի 25-ի զեկուցագրում նշվում էր, որ Անդրչեկայի ս.թ. օգոստոսի 29-ի թիվ 2340 խ/գ գրության դիտարկումը, թե իբր ստեղծված նպաստավոր պայմաններում հարկավոր է խորացնել պառակտումն ու կազմալուծումը Դաշնակցություն կուսակցության Թավրիզի կազմակերպության շարքերում, Ս. Մելիք-Հովսեփյանը դրան պատասխանել է, որ իրենց ունեցած տվյալներով դա այնքան էլ այդպես չէ: Այնպիսի խոշոր դաշնակցական գործիչներ, ինչպիսիք են Վահե Արծրունին, Ս. Մելիք-Յոլչյանը և ուրիշներ բնավ մտադիր չեն թողնել Դաշնակցության շարքերը, և որ Թավրիզի հյուպատոսությունը այնքան էլ ճիշտ չի կազմակերպում տարաբնույթ դաշնակցականների Հայաստան վերադարձի աշխատանքները և այլն[1]:

Խորհրդային դիվանագիտական և անվտանգության մարմինները ակնկալում էին, որ Պարսկաստանում Դաշնակցությունից դիմումով հեռացածները կարող են գալ Հայաստան և տեղում շարունակել «Դաշնակցության քայքայման սկսված կամպանիան»[2]: Դրան ի պատասխան՝ Հայչեկան դիմում էր Թավրիզի գլխավոր հյուպատոսությանը, որ առանց իր համաձայնության և մանրամասն ծանոթության՝

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 300–302:
[2] Նույն տեղում, էջ 301:

տարագիրներից որևէ մեկին Հայաստան մուտքի թույլտվություն չտրվի[1]: Ավելի վաղ ներկայացված է եղել 11 դաշնակցականների մի ցուցակ, որոնց մուտքը խորհրդային տարածք Հայաստանի Արտակարգ հանձնաժողովը աննպատակահարմար էր համարում[2]:

Բացի Պարսկաստանից՝ Բալկաններում, Ֆրանսիայում, Ամերիկայում և այլուր ՀՅԴ քայքայման նպատակով զուգահեռաբար տարվում էր գաղափարական-քարոզչական լայն աշխատանք, խորհրդային ֆինանսական միջոցներով ու մարդկանց ներգրավմամբ հրատարակվում էին հակադաշնակցական թերթեր ու ամսագրեր, ստեղծվում՝ խորհրդամետ կողմնորոշման միություններ, ընկերություններ, անգամ կուսակցություններ, գործակալական ճանապարհով հայտնաբերվում ու ընթերցվում էին գաղտնագիր նամակներ, արտասահման էր ուղարկվում մեծաքանակ կոմունիստական գրականություն և այլն:

1920-ական թթ. Բուլղարիայի Ֆիլիպե (Պլովդիվ) քաղաքում լույս էր տեսնում Բուլղարիայի կոմկուսի հայկական խմբի «Կարմիր լուրեր» հայերեն թերթը, որը հետո վերանվանվեց «Նոր Աշխարհ»[3]: Բուլղարիայի կոմկուսի անդամ Թ. Թազվորյանը ՀԿ(բ)Կ ԿԿ-ին ուղղված 1927 թ. հուլիսի 20-ի նամակում հայտնում էր, որ Հայաստանի ընկերներից ստացել են կոմունիստական գրականություն: Նա գտնում էր, որ «հայ գաղթականության մեջ պետք է ակտիվացվի ագիտացիան և պրոպագանդան, որպեսզի մասսաները դուրս բերվեն դաշնակների, հնչակի և ռամկավարների ազդեցությունից»[4]: Թազվորյանի տեղեկացմամբ Հունաստանում, Բուլղարիայում և

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 302:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 295:

[3] Տե՛ս Խաչատրյան Ռ.Հ., *Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից*, Ե., 1960, էջ 124:

[4] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 82, թ. 4:

Ռումինիայում կա 150 հազար հայ գաղթական: Ի դեպ, Հունաստանը համարվել է Հայաստանից ստացվող կոմունիստական գրականության տարածման կենտրոն: Ավելորդ չէ նշել, որ գործակալական ճանապարհով պարզվում է, որ Հունաստանի հայերի եպիսկոպոս Մազլումյանը[1] խորհրդային գաղտնի ծառայությունների հանձնարարությամբ աշխատանքներ է տարել՝ «դաշնակներին քայքայելու ուղղությամբ»[2]: Խորհրդային գաղտնի ծառայությունների մյուս աղբյուրը եղել է Կ. Պոլիսը, որտեղից նամակագրության միջոցով իրենց տեղեկություններ է հայտնել տեղի հայոց պատրիարք Մեսրոպ Մշեցի Նարոյանը[3]:

Այդուհանդերձ, 1920-ական թթ. հակադաշնակցական պայքարի գլխավոր ճակատը շարունակում էր մնալ սահմանակից Պարսկաստանը: ՀԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար Ա. Հովհաննիսյանը Անդրերկրկոմի մամուլի ենթաբաժնի վարիչին 1925 թ. մարտի 24-ին ուղղված գրությունում հայտնում էր, որ հաշվի առնելով դաշնակցականների նկատելի ներկայությունը սահմանակից Պարսկաստանում՝ Հայկոմկուսի ԿԿ-ը անհրաժեշտ է համարում Թավրիզում լույս ընծայել խորհրդային կողմնորոշման թերթ: Նա նշում է, որ Թավրիզում այժմ ստեղծվում է խորհրդային կողմնորոշման ընկերություն՝ այսպես կոչված «Հայ ժողովուրդ», որն իր առջև դնելու էր «ավելի արմատական քաղաքական խնդիրներ, քան այդ անում են այսպես կոչված Հայաստանի օգնության կոմիտեները»[4]:

Հայկոմկուսի ԿԿ-ը ամենից ավելի մեծ կարևորություն էր տալիս Պարսկաստանում տարվող հակադաշնակցական աշխատանք-

---

[1] Խոսքը Հունաց հայոց թեմի առաջնորդ Տեր Կարապետ արքեպիսկոպոս Մազլումյանի մասին է:

[2] **Агабеков Г.С.**, ЧК за работой. Приложение к журналу «Отечественные архивы», выпуск 1, М., 1992, http://Jib.ru/memuary/Acabekow/CH za rabotoj.txt, p. 203.

[3] Տե՛ս նույն տեղում:

[4] *Հ.Յ. Դաշնակցություն և խորհրդային իշխանություն*, էջ 305:

ներին, քանի որ Հայաստանը սահմանակից էր Պարսկաստանին, և որովհետև այդ երկրում կար ՀՅԴ ամուր միջուկ, որը կարող էր անմիջական վտանգ ներկայացնել: Քանի որ հայ-պարսկական սահմանը հիմնականում թափանցիկ էր ու հեշտ անցանելի հատկապես Մեղրու հատվածում, այդ իսկ պատճառով 1921 թ., ամռանը վարչական բաժանումներ կատարելիս, տարածքով փոքրածավալ ու բնակչությամբ փոքրաթիվ Մեղրու շրջանին տրվեց գավառի հատուկ կարգավիճակ, որն անմիջական ու առանձնահատուկ կապ ուներ հանրապետության ղեկավար Կենտրոնի հետ:

Պարսկաստանում Դաշնակցության շարքերը քայքայելու համար օգտագործել են նաև Ձախ դաշնակցականներին, որոնց նշանավոր ղեմքերից են «Մինարեթ» հայալեզու թերթի խմբագիր Առաքել Հարությունյանը և նախկին ՀՓԿ Արտակարգ հանձնաժողովի նախագահ Ավետիս Օհանջանյանը, ովքեր ցուցաբերում էին խորհրդային կողմնորոշում և հանդես գալիս հակադաշնակցական դիրքերից[1]:

Պարսկաստանում, ԽՍՀՄ լիազոր ներկայացուցչությունում հայկական գործերի գծով քարտուղար Ս. Առաքելյանի՝ 1927 թ. փետրվարի 15-ին Հայաստանի կառավարությանը հասցեագրված գրությունում նշվում էր, որ Թեհրանում լույս տեսնող «Գաղափար» և Փարիզում՝ «Երևան» հայերեն թերթերը հանդիսանում են Դաշնակցական մամուլին հակակշռող արտասահմանյան թերթեր: Հաշվի առնելով, որ հիշյալ թերթերը հայտնվել են ֆինանսական ծանր վիճակում, ուստի Առաքելյանը խնդրում էր նյութապես օժանդակել դրանց լույս ընծայմանը: Միաժամանակ նշվում էր, որ Մոսկվան

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 293–294:

սկսել է ֆինանսավորել Թեհրանում լույս տեսնող «Բանվոր» թերթը[1]:

Պարսկաստանում, խորհրդային մարմինների օժանդակությամբ, Դաշնակցության կազմալուծման գործում կենտրոնական դեմքերից էր համարվում դաշնակցական նախկին գործիչ, պատգամավոր և նախարար, բժիշկ **Արշակ Ղազարյանը**, որն էլ խմբագրում էր խորհրդային կողմնորոշման «Գաղափար» թերթը, նաև «Նոր գաղափար» հանդեսը, հրատարակում խորհրդամետ աշխատություններ[2]: Բացի այդ, Իրանում լույս էին տեսնում «Մինարեթ» և «Ռանչպար Իրանի» խորհրդամետ թերթերը: Կուսակցական և պետական մարմինները, հույսեր կապելով հատկապես Ա. Ղազարյանի և նրա «Գաղափար» թերթի հետ, հնարավոր էին համարում պառակտել Դաշնակցություն կուսակցության շարքերն արտասահմանում: Խորհրդային չեկիստ **Գ. Աղաբեկովի** հայտնած տեղեկություններով թերթը խմբագրելու համար Ա. Ղազարյանին վճարվում էր 100 դոլար, բացի այդ, որպես հովանավորություն՝ նրա աղջկան աշխատանքի էին ընդունել խորհրդային հիվանդանոցում: «Գաղափար» թերթը քարոզչական նպատակով ձրի տարածվում էր անկուսակցականների և դաշնակցական երիտասարդության շրջանում, առաքվում էր արտասահման և ամսական հասցնում էր 300 դոլարի վնաս[3]: Երկու տարի հրատարակվելուց հետո, ի վերջո, թերթը փակվում է՝ առանց շոշափելի արդյունքի:

Խորհրդային պետության կողմից ֆինանսավորվող և գաղափարապես ուղղորդվող նման պարբերականները գովաբանում էին

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 84, թ. 14–15: Ֆրանսիայում լույս էր ընծայվում նաև «Փարիզի բանվոր» խորհրդամետ թերթը:

[2] Այդ մասին հանգամանալի խոսք կլինի այլ տեղում՝ հայկական սմենովեխականության հարցի քննության կապակցությամբ:

[3] Գեորգի Աղաբեկովի սույն տեղեկությունը բերվում է ըստ «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը փաստաթղթեր»-ի ժողովածուից, էջ 319–321:

խորհրդային երկրի ձեռքբերումները և մյուս կողմից պայքարում գալթաշխարհի քաղաքական կուսակցությունների և ազգային կառույցների դեմ: Օրինակ, մի վավերագրից պարզվում է, որ «Փարիզի «Երևանը» սանձարձակ պայքար մը սկսած է Բարեգործական միության[1] դեմ: Ինչու՞ է այս կասկածը բարեգործականի և նրա նախագահ Նուպար Փաշայի դեմ, այն դեպքում, որ բարեգործականի նպատակն է օգնել մեր հայրենիքի վերաշինության գործին»[2]: Ի հիմնավորումն ասվածի, օրինակ, փաստվում է, որ Բարեգործականը Շիրակի աղետյալների[3] համար հանգանակել և Հայաստանի կառավարությանն է հանձնել 75 հազար դոլար կամ 150 հազար ռուբլի գումար[4]:

Նոր պայմաններում ՀՅԴ մոտեցումների ու դիրքորոշման հստակեցման տեսակետից սկզբունքային ու նրա շարքերում առողջացնող դեր խաղաց կուսակցության 10-րդ Ընդհանուր ժողովը (Փարիզ 1924/25 թթ.): Թեհրանում ԽՍՀՄ դեսպանատան հայկական գործերի գծով քարտուղար Ս. Առաքելյանը 1925 թ. օգոստոսին ՀՍԽՀ Ժողկոմխորհին ուղղված մի գաղտնի տեղեկագրում հայտնում էր, որ «Թեհրանի Կենտկոմը (ՀՅԴ – Ա.Հ.) սկսել է պարբերաբար հրահանգներ ստանալ Փարիզից,- մի կապ, որը նախկինում բավականին թույլ էր պահպանվում»[5]: Պարսկաստանում ԽՍՀՄ լիազոր-ներկայացուցիչ Կ. Յուրենևը 1926 թ. հունիսի 8-ին բողոք էր հայտնում Պարսկաստանի արտաքին գործերի մինիստրին՝ դաշնակցականների կողմից Հայաստանի անկախության 8-րդ տարեդարձը նշելու առթիվ[6]:

---

[1] Խոսքը 1906 թ. հիմնված Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) մասին է:

[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 84, թ. 31:

[3] Խոսքը Լենինականի 1926 թ. հոկտեմբերի 22-ի ավերիչ երկրաշարժի մասին է:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 84, թ. 31:

[5] *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 312:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 313:

Պարսկաստանում ՀՅԴ դեմ պայքարելու նպատակով օգտագործել են անգամ քրդական շարժման հանգամանքը, հետապնդել են հայ եկեղեցու Ատրպատականի թեմական առաջնորդ **Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանին**: Հայտնի է, որ Հայաստանում բոլշևիկների իշխանության գլուխ անցնելու առաջին իսկ օրերից առանձնապես մեծ լարվածություն ստեղծվեց կուսակցական-պետական մարմինների ու Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ն. արք. Մելիք-Թանգյանի միջև՝ պայմանավորված մասնավորապես այն հանգամանքով, որ նա սերտ հարաբերությունների մեջ էր տեղի դաշնակցական կառույցների ու շարքայինների հետ:

Վավերագիր նյութերը ցույց են տալիս, որ խորհրդային իշխանությունները, հայ եկեղեցու կառույցը (Մայր Աթոռն) հալածելով հանդերձ, օգտագործել են այն որպես ՀՅԴ դեմ պայքարի միջոց (գործիք), քանի որ ազգային-հոգևոր ներքին կապ էին տեսնում այդ երկու կառույցների միջև, մանավանդ որ բարձրագույն հոգևոր հայրերից շատերը ազգային գաղափարական հիմքերով համակիր էին ՀՅԴ-ին, իսկ ոմանք՝ անդամ: Այլ խոսքով, ավել կամ պակաս կերպով գաղափարական, կազմակերպական, քարոզչական պայքար էր մղվում թե՛ Դաշնակցություն կուսակցության և թե՛ Հայ եկեղեցու դեմ՝ նրանց կազմալուծելու նպատակով:

Չնայած հետապնդումներին՝ ՀՅԴ հանդեպ լոյալ վերաբերմունք էր ցուցաբերում Մայր Աթոռը: Սակայն Մայր Աթոռի, Ն. Մելիք-Թանգյանի ու ՀՅԴ միջև եղած մտերմիկ հարաբերությունները հանգիստ չէին տալիս խորհրդային իշխանություններին: Էջմիածնի գործերի առթիվ Մայր Աթոռի և խորհրդային կառավարության ներկայացուցիչ, ն. գ. կոմիսար Պ. Մակինցյանի միջև բանակցությունների ժամանակ վերջինս հայտնել է, որ Թավրիզում Էջմիածնի ներկայացուցիչ, թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսը «ակնհայտ թշնամական դիրք է բռնել դեպի Հայաստանի այժմեան Խորհրդային

կառավարությունը, աջակցում է իրենց թշնամիներին՝ դաշնակցականներին, որոնց ագենտն է»[1]:

Հայաստանի կառավարության կողմից Էջմիածնի կոմիսար նշանակված Գր. Վարդանյանը 1922 թ. փետրվարի 14-ին Վեհափառ Գևորգ Ե. Վշտալուն ուղղված գրությունում դարձյալ քաղաքական բնույթի մեղադրանքներ է ներկայացնում Ատրպատականի հոգևոր հովիվ Ն. արք. Մելիք-Թանգյանի վերաբերյալ՝ նշելով Գ. Նժդեհին օգնելու, Ղարադաղի խան Ամիր Արշատի հետ կապված լինելու, քուրդ ապստամբ Սմկոյի դեմ պայքարում Պարսից կառավարությանը օժանդակելու կապակցությամբ: Վերջում առաջարկվում էր, ըստ կարելվույն, փութանակի նրան հետ կանչել Էջմիածին կամ փոխադրել մեկ այլ՝ քաղաքականապես ավելի անվտանգ վայր[2]: Ի դեպ, Ատրպատականից Ն. Մելիք-Թանգյանին հեռացնելուն շահագրգռված է եղել նաև Թուրքիայի քեմալական կառավարությունը: Դա բացատրվում էր այն հանգամանքով, որ թեմի առաջնորդը հովանավորում էր դաշնակցականներին, իսկ վերջիններս արգելք էին Թուրքիայի և Խորհրդային Հայաստանի հարաբերությունների զարգացմանը և Ատրպատականում թուրքական գործակալների ակտիվացմանը[3]:

Խորհրդային պետանվտանգության մարմինների (ՆԳԺԿ և Չեկա) ճնշմամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հարկադրված մի քանի անգամ փորձ է արել Թավրիզից հետ կանչել Սրբազանին, անգամ երկու դեպքում Թավրիզ են գործուղվել Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանը և Արսեն վարդապետ Ղըլտճյանը, որպեսզի համոզեն նրան հեռանալու Առաջնորդարանից: Ավելին, Չեկան վերջինիս ուղարկել էր, որպեսզի նա փորձի գրավել Մելիք-Թանգյանի աթոռը:

---

[1] *Վավերագրեր հայ եկեղեցու պատմության*, գիրք ԺԳ, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող **Ս. Բեհբուդեան**, Ե., 2005, էջ 540:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 544–545:

[3] Տե՛ս *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 317:

Միաժամանակ, այդ նույն օրերին, «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթը «Վեղարավոր դաշնակցականը» վերտառությամբ զրպարտչական հոդված է տպագրում թեմի առաջնորդ Ն. Մելիք-Թանգյանի դեմ[1]: Սակայն տեղի հավատացյալ ժողովուրդը, թեմական խորհրդի ղեկավարությամբ, վճռականապես դեմ է եղել իր սիրած Առաջնորդի հեռանալուն: Այդ մեղադրական աղմուկին ի պատասխան՝ Ատրպատականի Հայոց թեմական պատգամավորական ժողովը 1922 թ. մայիսի 2-ին պատասխանել է Վեհափառ կաթողիկոսի հարցմանը, որ Գերապատիվ Ներսես արքեպիսկոպոսի հասցեին ուղղված մեղադրանքները որևէ հիմք չունեն, չեն համապատասխանում իրականությանը, որ դրանք միտումնավոր անճշտություններ են[2]:

Այդ նույն խնդրով, մայիսի 3-ին Վեհափառին ուղղված գրությունում Ն. արք. Մելիք-Թանգյանը դարձյալ բացատրություն է տալիս, որ ինքը հակախորհրդային որևէ քայլ չի կատարել, ընդհակառակը, Խորհրդային Հայաստանին, զաղթականությանը աջակցություն ցուցաբերելու համար Ռուսաց Խորհրդային հյուպատոսարանի քարտուղար Գիլբարսից երեք անգամ ստացել է գրավոր շնորհակալագիր, իսկ ապրիլի 6-ին «Խորհրդային Հայաստան» թերթում իր դեմ տպված նյութը զրպարտություն է[3]:

1925 թ. նոյեմբերին դարձյալ Ատրպատականի թեմի առաջնորդ Ն. արք. Մելիք-Թանգյանին կարգալույծ անելու խնդրի շուրջ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի պատվիրակներ, արքեպիսկոպոսներ Խորեն Մուրադբեկյանը և Գարեգին Հովսեփյանը բանակցել են ՀՍԽՀ հողժողկոմ և ԺԿԽ նախագահի տեղակալ Ար. Երզնկյանի հետ: Վերջինս, կշտամբելով հայ եկեղեցու պահվածքը, դարձյալ ակ-

---

[1] «Խորհրդային Հայաստան», Յե., 6 ապրիլի 1922 թ. (թիվ 76):
[2] Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԳ, էջ 546:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 547–548:

նարկել է Ն. Մելիք-Թանգյանի դաշնակցականների հետ ունեցած կապի մասին՝ բայց չնշելով որևէ փաստ: Ըստ նրա՝ Մելիք-Թանգյանը «Պարսկաստանում պայքար է մղում մեր դեմ, նա ոչ այնքան էջմիածնի ներկայացուցիչն է, որքան Դաշնակցության»[1]: Նույնիսկ հարց է բարձրացվել, որ Սրբազանը հեռանա Երուսաղեմ: Սակայն կաթողիկոսի պատվիրակները առարկել են, որ առանց լուրջ հիմքի նրան պաշտոնանկ անելը կարող է մեծ աղմուկ ու դժգոհություն առաջ բերել գաղթաշխարհում[2]: Եվ հայ ազգային ու հոգևոր նվիրյալներից Ն. արք. Մելիք-Թանգյանը մնաց իր աթոռին ու պաշտոնավարեց մինչև իր մահը՝ 1948 թ.:

1920-ական թվականների երկրորդ կեսին Արարատ լեռան շրջանում քրդական ապստամբության կապակցությամբ խորհրդային պետանվտանգության մարմինները ձերբակալված դաշնակցական կապավորներից գաղտընթերցված նամակներ են հայտնաբերել, որոնցով բացահայտել են Թավրիզի դաշնակցականների կապը այդ շարժման հետ: Մասնավորապես համանման բովանդակությամբ գաղտընթերցվել է նաև քրդական շարժման փաստական ղեկավար Արտաշես Մուրադյանի նամակագրական կապը Ատրպատականի թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Ն. Մելիք-Թանգյանի հետ: Արդյունքում Հայաստանի և Անդրկովկասյան դաշնության պետքաղվարչությունները հարց են բարձրացրել՝ խորհրդային դիվանագիտական խողովակներով դիմելու պարսկական կառավարությանը՝ քրդական շարժումը խափանելու համար Թավրիզի դաշնակցական ղեկավարներին և Ն. Մելիք-Թանգյանին Պարսկաստանից հեռացնելու վերաբերյալ[3]: Անշուշտ, պարսկական իշխանություններին հասցված այդ տեղեկությունը նկատելի բացասական ազ-

---

[1] *Գարեգին Ա Հովսեփյան, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու*, գլխ. խմբ. **Ա. Վիրաբյան**, կազմող, **Գ. Ավագյան**, հ. Ա., Ե., 2017, էջ 400:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 401–402:

[3] Տե՛ս *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 316:

դեցություն է գործել Դաշնակցության հանդեպ պարսկական կառավարության վերաբերմունքի հարցում, ընդ որում, Թավրիզում կատարվել են առանձին խուզարկություններ ու բանտարկություններ: Դաշնակցության դեմ պայքարում, անկասկած, իր դերն է խաղացել նաև թուրք-բոլշևիկյան շարունակվող գործակցությունը: Ատրպատականում այս գործակցության նպատակներից էր, թուլացնելով Դաշնակցության դիրքերը, դրանով իսկ նպաստել քրդական շարժման ճնշմանը:

Խորհրդային Հայաստանի հարևանությամբ ընթացող Արարատի 1926–1930 թթ. քրդական ապստամբության խնդրում կարելի է ընդգծել հետևյալ իրողությունը, որ ՀՅԴ-ն Պարսկաստանի հանդեպ, անկախ վերջինիս արտաքուստ ոչ հայանպաստ կեցվածքին, առհասարակ հանդես է բերել լոյակ մոտեցում, մինչդեռ նա գործակցելով քրդերի հետ՝ ձգտել է այդ շարժումը ուղղել միմիայն բոլշևիկների գործընկեր Թուրքիայի դեմ: Այդ մասին է հավաստում նաև «ՎԷՄ» ամսագրում պատմաբան Ա. Ս. Սայիյանի կողմից հրապարակված ՀՅԴ Բյուրոյի անդամ Ռ. Տեր-Մինասյանի ձեռագիր զեկուցագիրը[1]:

ՀՅԴ վարկաբեկելու և քայքայելու նպատակով Հայկոմկուսը չի խորշել օգտագործել նույնիսկ Հայաստանի քրդերին: 1926 թ. ապրիլին Հայկոմկուսի ԿԿ-ը կազմակերպել է ՀՍԽՀ անկուսակցական աշխատավոր քրդերի համագումար: Դրա նպատակն էր Հայաստանի քրդերի անունից դատապարտել Արևմտյան Հայաստանի քրդաբնակ շրջաններում տեղի ունեցող ապստամբությունը՝ ներկայացնելու համար, որ իբր դա ոչ թե քուրդ ժողովրդի ազատագրության համար մղվող պայքար է, այլ անգլո-ֆրանսիական իմպերիալիստների հրահրած քուրդ ֆեոդալ բեկերի ու շեյխերի ելույթ, որում, ըստ հա-

[1] Տե՛ս «ՎԷՄ», Ե., 2018 (ապրիլ-հունիս), թիվ 2, էջ 247–276:

մաքումարի կազմակերպիչների, իբրև «սադրիչ դեր են խաղում իմպերիալիզմի հայ գործակալները՝ դաշնակները»[1]:

Որպեսզի Հայաստանի քրդերի այդ համագումարին ավելի մեծ քաղաքական հնչեղություն տրվի ու արձագանք ստանա, ԿԿ-ի քարտուղար Ա. Հովհաննիսյանը ՀամԿ(բ)Կ ԿԿ-ին ուղղված ապրիլի 22-ի գաղտնի գրությամբ խնդրում էր հնարավորին շտապ կարգով այդ մասին հրապարակումներ տպել «Պրավդա» և «Իզվեստիա», նմանապես Հայաստանի և Անդրկովկասի թերթերում[2]: Ինչպես տեսնում ենք, Հայկոմկուսի ԿԿ-ը գումարել է քուրդ աշխատավորների համագումար, նրանց անունից քեմալական Թուրքիային պաշտպանող հակաիմպերիալիստական ու հակադաշնակցական ոգով բանաձև է ընդունել, որի մասին կարելի է վստահաբար ասել, որ Հայաստանի քուրդ աշխատավորը պատկերացում էլ չի ունեցել: Վերոնշյալը հերթական անգամ վերահաստատում է այն միտքը, որ ՀՅԴ դեմ մղվող պայքարում Հայկոմկուսը բաց չի թողել ոչ մի առիթ ու հնարավորություն:

ՀՅԴ և մյուս հակահեղափոխական, ազգայնական և այլ որակումներ ստացած կուսակցությունների դեմ երկրի ներսից և դրսից պայքարը համալիր կերպով հաջողությամբ առաջ տանելու համար Հայկոմկուսի ԿԿ-ը մենաշնորհի կերպով վերահսկում էր Հանրապետության մամուլի և հրատարակությունների գործունեությունը: Խստորեն գրաքննվում ու պատժվում էր ցանկացած այլախոհ թերթի ու նյութի հրատարակությունը: Ոչ պակաս հետևողականությամբ վերահսկվում էր դրսից Հայաստան մտնող ցանկացած մամուլ և գրականություն: Իսկ այդ ամենի գերագույն վերահսկիչը Մոսկվան էր: Այս կապակցությամբ տեղին է ներկայացնել ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի ինֆորմացիայի բաժնի վարիչ Ցիրուլի 1927 թ. փետրվարի 2-ի հույժ գաղտ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 13, թ. 99–102:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 99:

նի շրջաբերականը՝ ուղղված Հայաստանի «Գենսեկ» Ա. Հովհաննիսյանին, որով ցանկանում էր պարզել, թե որքանով է կատարվում ԿԿ-ի որոշումը՝ սպիտակգվարդիական մամուլի ինքնուրույն բաժանորդագրությունը դադարեցնելու ուղղությամբ 1926 թ. դեկտեմբերի 29-ին ուղարկված քաղվածքը: ԿԿ-ի տեղեկատվական բաժնի վարիչը պահանջում էր, առանց ԿԿ-ի գիտության նման մամուլ չբաժանորդագրվել[1]: Ի պատասխան դրա՝ ԿԿ-ի քարտուղար Ա. Հովհաննիսյանը փետրվարի 25-ին տեղեկացնում է, որ Հայաստանի ԺԿԽ-ն բաժանորդագրվել է հայկական բուրժուա-էմիգրանտական հետևյալ հրատարակություններից՝ «Հայրենիք» և «Դրօշակ» ամսագրեր՝ երկուական օրինակ, «Հայրենիք», «Յուսաբեր», «Յառաջ», «Մարմարա», «Ապագա», «Արև», «Պայքար» թերթեր՝ ընդամենը 26 օրինակ[2]: Բացի այդ, ի կատարումն Ցիրուլի շրջաբերականի, ՀԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղարության բյուրոյի վարիչ Հարությունյանը, փետրվարի 27-ին, լրացուցիչ իրազեկում է ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի տեղեկատվական բաժնին, որ Հայկոմկուսի ԿԿ-ի բոլոր կուս. կազմակերպություններին կտրուկ հրահանգ է տրվել, սպիտակ գվարդիական մամուլ ինքնուրույն չբաժանորդագրվել[3]: ԿԿ-ի նախագահությունը որոշում էր կայացրել՝ Հայաստանում թույլատրել միայն խորհրդային կողմնորոշման հետևյալ արտասահմանյան թերթերը՝ «Երևան», «Նոր Աշխարհ», «Գաղափար», «Արև», «Հաղթանակ», «Վերելք» և կոմունիստական սեկցիայի մի քանի այլ լրագրական հրատարակություններ, մնացած «հակախորհրդային» թերթերի վաճառքն արգելել: ԿԿ-ի այդ որոշում-հանձնարարականը ստորագրել էր ԿԿ-ի քարտուղար Ե. Բակունցը[4]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 85, թ. 13:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 14–15:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 16:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 5, թ. 144:

Ինքնին հասկանալի է, որ նման սահմանափակումների նպատակն էր խորհրդային հասարակությանը կտրել կամ հնարավորինս հեռու պահել դրսի հակահեղափոխական, բուրժուազգայնական որակվող գաղափարական-քարոզչական վնասակար ազդեցություններից, որպեսզի երկրի ներսում ավելի հեշտացվի այլախոհ կուսակցությունների ու հոսանքների կազմակերպական ու գաղափարական կազմալուծումը: Ի դեպ, հետագայում այդ քաղաքականությունը ստացավ «Երկաթյա վարագույր» անվանումը:

*

* *

ՀՅԴ քայքայման աշխատանքների աշխարհագրությունը եղել է բավականին լայն՝ ընդհուպ մինչև Ամերիկա: Տարբեր մեթոդներով ՀՅԴ քայքայման փորձեր են արվել նաև Ամերիկայում: ՀՅԴ Բյուրոյի Երևանի «Յառաջ» պաշտոնաթերթի տվյալներով Ամերիկայի 100-հազարանոց հայ գաղութում հաշվում էր 12 հազար դաշնակցության անդամ[1]:

1927 թ. հուլիսի 31-ին Նյու Յորքից կոմունիստ Հ. Պայտարյանը մի ընդարձակ նամակ է գրել ԿԿ-ի քարտուղար Ա. Հովհաննիսյանին, որում նա շնորհակալություն էր հայտնում իրենց «Նոր Աշխարհի» պարբերականի հրատարակությանը օգնելու համար[2]: Վավերագիր նյութերը ցույց են տալիս, որ Հայկոմկուսը գրականություն է ուղարկել նաև Ֆրանսիայի կոմկուսի հայկական բաժանմունքի գործկոմին և այլն[3]: Այսպիսով, Հայկոմկուսի գաղթաշխարհում քարոզչական աշխատանքներից մեկն էլ կոմունիստական գրականության փոխադրումն ու տարածումն էր: Այդ աշխատանքները մեծ չափով կատարվում էին ՀՕԿ-ի խողովակներով:

---

[1] Տե՛ս «Յառաջ», Յեթ., 1 հունարի 1920 թ. (թիվ 1):
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 82, թ. 6:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 10–12:

Ըստ էության, ՀՅԴ-ը արտերկրում քայքայելու նպատակով Հայկոմկուսի հանձնարարությամբ, 1926–1927 թթ. արտասահմանյան մի շարք երկրներում աշխատանք է տարել նախկին մենշևիկ Ս. Փիրումյանը: Այն ժամանակվա ԿԿ-ի քարտուղար Ա. Հովհաննիսյանի հանդեպ հետագայում՝ 1938 թ. կազմված քր. գործում տեղեկություն կա, որ Ս. Փիրումովը բանակցել է ՀՅԴ Բյուրոյի հետ գժտված դաշնակցական գործիչ Շահան Նաթալիի հետ, սակայն դրական արդյունքի չի հասել[1]: ՀՕԿ-ի վարչության նախկին նախագահ Գր. Վարդանյանի 1937 թ. քր. գործում տվյալներ կան, որ 1928 թ. Փարիզ եղած ժամանակ նա սեփական նախաձեռնությամբ հատուկ զրույց է ունեցել Փարիզի դաշնակցական «Յառաջ» թերթի խմբագիր Շավարշ Միսակյանի հետ[2]:

Դաշնակցության դիրքերը հայկական գաղութներում թուլացնելու ու քայքայելու համար կարևորություն էր տրվում այդ երկրներում կոմունիստական շարժման ուժեղացմանը, հայ կոմունիստ բանվորների տեսակարար կշռի մեծացմանը: «Կուսակցությունները գաղութահայության մեջ» աշխատությունում Ալ. Մյասնիկյանը նշում է, որ կոմունիստական շարժումը համեմատաբար առկա է Ամերիկայում, Բուլղարիայում և Ֆրանսիայում: Ըստ Մյասնիկյանի՝ հայ բանվորությունը ԱՄՆ-ում հասնում է 30-35 հազարի: Ամերիկայում կա բանվորական կուսակցություն՝ (Workers Party) Վորքերս Փարթի՝ մոտ 25 հազար անդամներով, որոնց շարքերում հայկական հատվածը (սեկցիան) կազմում է մի քանի հարյուր անդամ[3]:

Սփյուռքի հասարակական-քաղաքական կյանքին գիտակ ու հետազոտող Կ. Դալլաքյանի վկայությամբ, 20-ական թվականների սկզբներին, գաղթաշխարհում քիչ թե շատ լուրջ ուժ են ներկայացրել

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 67, թ. 148:
[2] Տե՛ս նույն տեղում, գ. 78, թ. 10:
[3] Տե՛ս **Մյասնիկյան Ալ.**, *Երկեր*, հինգ հատորով, հ. 5, Ե., 2007, էջ 286:

ԱՄՆ-ի հայ կոմունիստները: Ամերիկայի բանվորական կուսակցության հայկական բաժանմունքը լույս էր ընծայում «Բանվոր» և «Գործավոր», իսկ ապա դրանց միավորումով «Պրոլետար» թերթը և այլն[1]: Ամերիկայի և առհասարակ արտասահմանի հայ համայնավարները մեծապես ուղղորդվում էին խորհրդային կառույցների կողմից: Եվ դրանց գործունեությունը բնավ չէր նպաստում Սփյուռքի ազգային միասնության գաղափարին: Բավական չէ, որ գաղթաշխարհի հայ ավանդական երեք կուսակցությունները, մեղմ ասած, իրար հետ համերաշխ չէին, դրան գումարվում էր նաև հայ համայնավարների կողմից Սփյուռքի շարքերի դասակարգային-գաղափարական հողի վրա տարանջատումը, Հայաստան-Սփյուռք օտարացումը[2]: Ճիշտ է նկատում Կ. Դալլաքյանը, որ Հայաստան-Սփյուռք մեկուսացումն ու օտարացումը կատարվում էին ոչ միայն դրսից, այլև Հայաստանի ներսից՝ Հանրապետության ղեկավարության կողմից: Դրա նպատակը, առաջին հերթին, քաղաքականապես առավել վտանգավոր Դաշնակցություն կուսակցության թուլացումն ու քայքայումն էր:

Այս տեսակետից Հայկոմկուսի ԿԿ-ը հատուկ կարևորություն էր տալիս հատկապես Ամերիկայի դաշնակցականների կազմալուծման գործով աշխատանքների ուժեղացմանը: Այդ նպատակով ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախագահությունը, 1925 թ. մայիսի 2-ին, որոշում է կայացնում Ամերիկայում աշխատելու համար մարդ գործուղել: Այդ որոշումը կյանքի կոչելու համար Հայաստանի ԿԿ-ը օգոստոսի 21-ին դիմում է ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմին, որպեսզի նա միջնորդի համապատասխան մարմինների առաջ՝ Ամերիկա գործուղելու ԿԿ-ի մամուլի ենթաբաժնի վարիչ Կարո Համդիյանին, ով տիրապետում էր անգլերենին և ուներ զանգվածների շրջանում կազմակերպական

---

[1] Տե՛ս Դալլաքյան Կ.Լ., Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության (1920-ական թվականներ) Ե., 1994, էջ 67:

[2] Տե՛ս Դալլաքյան Կ.Լ., նշվ. աշխ., էջ 67-68:

և քարոզչական աշխատանք վարելու փորձ[1]: Սակայն իրական փաստերը ցույց են տալիս, որ 1920-ական թվականներին ԱՄՆ-ում և գաղթաշխարհի մյուս հատվածներում ՀՅԴ քայքայման փորձերի մասին կարելի է եզրակացնել, որ այդ ուղղությամբ էական արդյունք չի արձանագրվել: Նման գնահատականի ենք հանդիպում նաև Սփյուռքում գործող խորհրդային աշխատողներ, ՀՕԿ-ի ներկայացուցիչներ՝ Դր. Տեր-Սիմոնյանի, Գր. Վարդանյանի և Փարիզի խորհրդամետ «Երևան» թերթի խմբագիր Մուսայելյանի՝ 1928 թ. օգոստոսի 29-ին Փարիզից Հայկոմկուսի ԿԿ-ի քարտուղար Հ. Կոստանյանին հասցեագրած նամակում: Դրանում մասնավորապես կարդում ենք. «Դաշնակցություն կուսակցությունը, որը երեք տարի առաջ ապրում էր զգալի կազմալուծման ժամանակաշրջան, այժմ որոշ չափով ամրապնդվել է: Ընդ որում, որոշ օբյեկտիվ պատճառների հետ մեկտեղ, այդ հարցում պակաս դեր չի խաղացել և մեր անբավարար աշխատանքը գաղութի սահմաններում»[2]: Մյուս կողմից՝ տարակույս չկա, որ խորհրդային գործիչների ինքնաքննադատական խոսքը հետագայում օգտագործվել է որպես քաղաքական մեղադրանք նրանց հանդեպ 1930-ական թթ. քաղաքական բռնաճնշումների համար:

Առաջ անցնելով հետազոտվող հարցի ժամանակագրական շրջանակից՝ հավելենք, որ ՀՅԴ քայքայելու ու կազմալուծելու ջանքեր թափվել են նաև 1930-ական թվականներին, ընդհուպ մինչև կոլեկտիվացման կուրսի ավարտը և խորհրդային երկրում հայտարարված սոցիալիզմի հաղթանակը: Այսպես՝ ՀԿ(բ)Կ ԿԿ-ում 1932 թ. հոկտեմբերին կայացած խորհրդակցությունում լսվել է ԿԿ-ի առաջին քարտուղար Ա. Խանջյանի հաղորդումը արտասահմանում տարվող աշխատանքի վիճակի և Դաշնակցություն կուսակցության պառակտման մասին: Խորհրդակցությունում ընդունած որոշմամբ

---

[1] Տե՛ս *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 311:
[2] Նույն տեղում, էջ 315:

հավանություն է տրվել Դաշնակցության պառակտման ուղղությամբ Խանջյանի առաջադրած դրույթներին[1]: ԽՍՀՄ դատախազ Ա. Վիշինսկուն և ՀԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար Ա. Ամատունուն ուղղված ՀԽՍՀ դատախազ Պ. Թորոսյանի 1937 թ. փետրվարի 2-ի հույժ գաղտնի հաղորդագրությունում հայտնվում է, որ ՆԳԺԿ Պետանվտանգության վարչության քննչական բաժինը, նույն հունվարի սկզբին, Ապարանի շրջանում, բացահայտել ու վերացրել է 27 հոգուց կազմված դաշնակցական ընդհատակյա կազմակերպություն, այնուհետև բերված են ակտիվիստների անունները[2]: Դատախազ Պետիկ Թորոսյանը Ամատունուն հասցեագրված մեկ այլ գրությունում հաղորդում է 1937 թ. մարտի 31-ին Ամասիայի շրջանի Ղոնջալի գյուղում բացահայտված հակահեղափոխական դաշնակցական կազմակերպության գոյության մասին և այլն[3]:

Քննության առնելով ու հանրագումարի բերելով վերոշարադրյալ նյութերը՝ վստահաբար կարելի է եզրակացնել, որ Հայաստանի ու Անդրկովկասի կուսակցական ու պետական իշխանությունները ամբողջ 1920-ական թվականներին, գործադրելով պայքարի բոլոր ձևերն ու միջոցները, ձգտել են թե՛ Հայաստանում և թե՛ գաղթաշխարհում քայքայել ու ասպարեզից վերացնել իրենց համար քաղաքական ու զաղափարական հակառակորդ ու թշնամի որակվող ՀՅԴ կուսակցությունը: Բայց կարելի է ասել, որ այդ խնդիրը այդպես էլ մինչև վերջ չեն կարողացել լուծել: Եթե Հայաստանում և ԽՍՀՄ շրջանակներում 1920-ական թվականներին այդ խնդիրը կազմակերպչական առումով հաջողվեց իրագործել, ապա արտասահմանում նրանց թափած ջանքերը բավարար արդյունք չտվեցին: Խորհրդային-կոմունիստական քարոզչությունը արդյունքի չհասավ առավել ևս ՀՅԴ դեմ զաղափարական պայքարի ոլորտում: Խորհրդային

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 321:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 328–329:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 331:

Հայաստանի 70-ամյա պատմության ժամանակաշրջանում, ընդհուպ մինչև, այսպես կոչված, գորբաչովյան «վերակառուցման» ավարտը դժվար է մատնանշել Հայկոմկուսի մի համագումար, որում առանձին բաժին չհատկացվեր «իմպերիալիզմի գործակալ, հայ ժողովրդի ոխերիմ թշնամի» որակված Դաշնակցություն կուսակցությանը: Բայց ինչպես տեսնում ենք իրականությունն միանգամայն այլ է:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՄԵՆՈՎԵԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

1. Սմենովեխականություն երևույթի առաջացումը

ՀՅԴ քայքայման գործընթացը բազմակողմանիորեն ներկայացնելու համար հարկ է հատուկ անդրադառնալ նաև «**Սմենովեխականություն**» երևույթին: Առաջին հայացքից ընթերցողի մոտ կարող է տպավորություն ստեղծվել, թե ռուսական քաղաքական երևույթ համարվող «Սմենովեխականություն»-ը կապ չունի հայ իրականության և ՀՅԴ քայքայման՝ կոմկուսի որդեգրած քաղաքականության հետ: Սակայն խորանալով հարցի մեջ՝ տեսնում ենք, որ **նեպական Ռուսաստանում** տարածում ստացած այդ հոսանքն իր արտացոլումն է գտել նաև հայ իրականության մեջ՝ այդ թվում դաշնակցական առանձին գործիչների շրջանում և որոշակիորեն ազդել է Հայկոմկուսի որդեգրած ՀՅԴ քայքայման գործընթացների վրա: Այդ գործում նկատելի դեր են խաղացել նաև ՀՅԴ ներսում առաջացած ներքին խմորումները: Եվ առհասարակ, Կոմկուս-ՀՅԴ փոխհարաբերությունների բնույթն ու էությունը լավ հասկանալու համար հարկ է անդրադառնալ 1920-ական թթ. տարածում ստացած «Սմենովեխականություն» զաղափարական հոսանքի և հայ իրականության մեջ դրա դրսևորումների վրա:

Ռուսաստանում 1918–1920 թթ. քաղաքացիական պատերազմի ավարտից հետո ռուս վտարանդի մտավորականության շրջանում առաջացավ հասարակական-քաղաքական մի հոսանք, որը բոլշևիկները բնորոշեցին որպես «Սմենովեխականություն» («Сменовеховство»):

Հասկացությունը ծագում է կադետաօկտյաբրիստական[1] մի խումբ ռուս-վտարանդիական գործիչների՝ Ն. Ուստրյալովի, Յու. Կլյուչնիկովի, Ա. Բոբրիշչև-Պուշկինի և ուրիշների կողմից 1921 թ. ամռանը Պրահայում հրատարակված «Смена вех»-ի (Ուղենիշերի փոփոխություն) ժողովածուի անվանումից: Սմենովեխականները ունեին իրենց տպագիր այլ օրգանները՝ «Смена вех» թերթը՝ Փարիզում (1921–1922 թթ.), «Накануне» թերթը՝ Բեռլինում (1922–1924 թթ.) և այլուր:

Ռուսաստանում, Նոր տնտեսական քաղաքականությամբ (ՆԷՊ) պայմանավորված, քաղաքական նոր իրողությունների լույսի ներքո նրանք բոլշևիկներից պարտված ազատական մտավորականությանը կոչ էին անում համագործակցել խորհրդային իշխանությունների հետ, օգնել երկրի տնտեսական ու մշակութային վերաշինության գործին՝ միաժամանակ հույս փայփայելով, որ ժամանակի ընթացքում, կյանքի թելադրանքով, բոլշևիկյան ծայրահեղական զաղափարախոսությունն ու քաղաքականությունը կփոխվեն, խորհրդային պետությունը կբարեշրջվի, և, ի վերջո, ազատական, ժողովրդավարական զաղափարները կհաղթանակեն: Այս զաղափարների կրողները որոշակի հույսեր էին կապել նաև ՆԷՊ-ի քաղաքականության պայմաններում ՌԿ(բ)Կ ղեկավար շրջանակներում կու-

[1] Խոսքը ռուսաստանյան Առաջին հեղափոխության շրջանում հիմնված ռուսական ազատական ժողովրդավարական զաղափարների կրող երկու՝ Սահմանադրական դեմոկրատների կամ կադետների և Հոկտեմբերի 17-ի միության կամ օկտյաբրիստների կուսակցությունների մասին է, որոնք սկզբունքորեն դեմ էին ալյաքարի բռնի, հեղափոխական մեթոդներին և կողմնակից էին բարեփոխությունների ճանապարհով Ռուսաստանում սահմանադրական, խորհրդարանական, ժողովրդավարական կարգերի հաստատմանը:

սակցության միասնության, ներկուսակցական դեմոկրատիայի, արիմիությունների դերի և այլ հարցերի շուրջ ծավալված ներկուսակցական բանավեճերի (դիսկուսիաների) հետ: Բոլշևիկների կողմից սմենովեխական կոչվածները և կոմկուսին հակառակորդ դրսի ու ներսի քաղաքական որոշ ուժեր հույսեր էին փայփայում, որ այդ բանավեճերի հետևանքով կոմկուսը կպառակտվի ու կքայքայվի, իսկ խորհրդային վարչակարգն էլ տնտեսական ու քաղաքական վերափոխման կենթարկվի: Սմենովեխականները ակնկալում էին, որ ՆԷՊ-ի պայմաններում կաշխուժանան բուրժուական տարրերը, աստիճանաբար կվերափոխվի խորհրդային երկրի տնտեսական և քաղաքական համակարգը և վերադարձ կկատարվի դեպի մասնատիրական, ազատական, ժողովրդավարական կարգեր:

Ռուս վտարանդիական այս հոսանքը դեմ էր «սպիտակ» վտարանդիների արմատական (վրանգելյան)[1] թևի գործելակերպին, ովքեր փորձում էին զինված պայքարի միջոցով տապալել խորհրդային վարչակարգը: Քաղաքական չափավոր գործելակերպ ընտրած սմենովեխական այդ հոսանքը որոշ արձագանք գտավ թե՛ երկրի ներսում և թե՛ դրսում: ՆԷՊ-ի պայմաններում սմենովեխականությունը բավականին ծանրակշիռ հոսանք դարձավ, և մանր արտադրողները, նեպմանները, կուլակները կարծես առարկայորեն համարվում էին նրանց սոցիալական հենարանը: ՌԿ(բ)Կ 11-րդ համագումարում, ԿԿ-ի քաղաքական հաշվետվության մեջ, (1922 թ. մարտի վերջ) Վ. Լենինը, խոսելով սմենովեխականության մասին, նշում էր, որ «Սմենովեխականներն արտահայտում են հազարավոր և տասնյակ հազարավոր ամեն տեսակ բուրժուաների կամ սովետական ծառայողների, մեր նոր տնտեսական քաղաքականության մասնա-

[1] Խոսքը ռուս վտարանդի գեներալ, բարոն Պ. Վրանգելի մասին է, ով, համոզմունքով լինելով միապետական, գտնում էր, որ պետք է շարունակել զինված պայքարը՝ Հայրենիքը (Ռուսաստանը) բոլշևիկներից ազատագրելու համար:

կիցների տրամադրությունը»[1]: ՆԷՊ-ը Կոմկուսի շարքերում անհանգստություն առաջացրեց: Նույնիսկ շատերը ՆԷՊ-ը ընկալեցին որպես «դավաճանություն Հոկտեմբերին», որպես վերադարձ դեպի կապիտալիզմ: Ուստի 1922 թ. կոմկուսի անդամների շուրջ 3 տոկոսը հեռացավ կուսակցությունից[2]: Դրան ի պատասխան, մարտավարական առումով սմենովեխականների հայտարարությունը, Ռուսաստանի դեպի կապիտալիզմ Ռուսաստանի էվոլյուցիայի մասին, Վ. Լենինը համարում էր իրենց համար ավելի օգտակար, քան «քաղցր-մեղցր կոմունիստական փչոց»-ները[3]:

Մինչև 1920-ական թթ. կեսերը կոմկուսը փորձում էր սմենովեխականների հանդեպ վարել համեմատաբար լոյալ, քիչ թե շատ հանդուրժողական քաղաքականություն: ՌԿ(բ)Կ Համառուսաստանյան 12-րդ (1922 թ. օգոստոս) խորհրդաժողովի «Հակասովետական կուսակցությունների և հոսանքների մասին» հարցի շուրջ ընդունած բանաձևի 7-րդ կետում, որն ամբողջովին վերաբերում էր սմենովեխական հոսանքին, արձանագրված է. «Այսպես կոչված սմենովեխական հոսանքը մինչև հիմա խաղացել է և դեռ կարող է օբյեկտիվորեն խաղալ առաջադիմական դեր: Այս հոսանքը համախմբել և համախմբում է վտարանդիության և ռուսական ինտելիգենցիայի այն խմբերին, որոնք «հաշտվել են» սովետական իշխանության հետ և պատրաստ են աշխատել նրա հետ երկրի վերածննդի համար: Այդքանով սմենովեխական ուղղությունն արժանի է եղել և արժանի է դրական վերաբերմունքի: Բայց դրա հետ մեկտեղ չի կարելի ոչ մի րոպե մոռանալ, որ սմենովեխական հոսանքի մեջ ևս ուժեղ են բուրժուառեստավրատորական միտումները, որ սմենովե-

---

[1] **Լենին Վ.Ի.**, *ԵԼԺ*, հ. 45, Ե., 1983, էջ 117:

[2] Տե՛ս **Верт Никола**, *История Советского государства 1900–1991*, М., 1992, с. 145–146, տե՛ս նաև՝ «Политические партии России. История и современность», под ред. проф. **Завелева А.Н.**, М., 2000, с. 417.

[3] **Լենին Վ.Ի.**, նույն տեղում, էջ 116:

խականների համար մենշևիկների ու էսէռների հետ միասին ընդհանուր է այն հույսը, թե տնտեսական զիջումներին կհետևեն քաղաքական զիջումներ՝ բուրժուական դեմոկրատիայի ուղղությամբ և այլն»[1]: Ինչպես նկատում ենք, բուրժուադեմոկրատական որակվող այս հոսանքին տրված է երկակի գնահատական. մի կողմից՝ նրա «օբյեկտիվորեն առաջադիմական դերը», որ նա համախմբում է խորհրդային իշխանության հետ աշխատել ցանկացող վտարանդիությանը հանուն երկրի վերածննդի, իսկ մյուս կողմից՝ ընդգծվում էր հինը վերականգնելու նրա «բուրժուառեստավրատորական» միտումների վտանգի մասին: Այս որոշումը ուղեցույց հանդիսացավ կուսակցական և պետական մարմինների համար՝ ամբողջ 1920-ական թվականներին, ինչպես Միության, այնպես էլ հանրապետությունների մակարդակով: Այսպես, եթե մինչև 1920-ական թթ. կեսերը վերաբերմունքը սմենովեխական կոչվածների հանդեպ դրական-հանդուրժողական էր, ապա 1920-ական թթ. վերջից ՆԷՊ-ի սահմանափակման և, այսպես կոչված, ամբողջ ճակատով սոցիալիզմի հարձակման կուրսի պայմաններում այս հոսանքի հանդեպ վերաբերմունքը և տարվող քաղաքականությունը ևս կտրուկ փոխվեցին: Փաստերը ցույց են տալիս, որ ճիշտ նույն քաղաքականությունը իր երկու փուլով՝ հանդուրժողական և ապա՝ հարձակողական, գործադրվել է նաև Խորհրդային Հայաստանում:

1920-ական թթ. կեսերին սմենովեխական համարվող գործիչների մի մասին անգամ թույլատրվեց վերադառնալ և աշխատել հայրենիքում: Այդ շրջանում կադրերի մեծ պակաս կար, և խնդիր էր դրված այդ բացը լրացնել նաև խորհրդային իշխանության հանդեպ

ՍՄԿԿ համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, հատ. 2, (1917–1922), Ե., 1986, էջ 777:

լոյալ տրամադրված մասնագետ կադրերով: Խորհրդային երկիր վերադարձան գիտության ու մշակույթի առանձին գործիչներ: Նրանցից էին՝ Ա. Տոլստոյը, Ե. Տառլեն, Մ. Շահինյանը, Վ. Բոգոռազ-Տանը և ուրիշներ[1]: Հայրենիք վերադարձավ նաև սմենովեխականության հիմնադիր ու գաղափարախոս, փիլիսոփա Նիկոլայ Ուստրյալովը: Սակայն 1930-ական թթ. հարյուրհազարավոր այլ մտավորականների ու գործիչների նման, Ն. Ուստրյալովը ևս դարձավ քաղաքական բռնաճնշումների զոհ: Նա մեղադրվեց լրտեսության, հակահեղափոխական ու հակախորհրդային քարոզչության մեջ և ԽՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի վճռով 1937 թ. սեպտեմբերին գնդակահարվեց:

Այսպիսով՝ ռուս սմենովեխականների հույսերը չարդարացան: Չարդարացավ նրանց այն ակնկալիքը, թե ՆԷՊ-ի պայմաններում խորհրդային պետությունը կվերափոխվի և կվերադառնա բնականոն-կապիտալիստական հուն: Ավելին, բոլշևիկյան միակուսակցական, այլախոհություն ու այլևսկարծություն չհանդուրժող վարչակարգը ոչ միայն պահպանվեց, այլև ավելի ամրապնդվեց: Հենց ՆԷՊ-ի տարիներին՝ 1920-ական թթ., խորհրդային երկրում ասպարեզից հեռացվեցին ընդդիմադիր բոլոր տիպի կուսակցությունները: Այդ նույն ժամանակաշրջանում «ջախջախվեցին» նաև բոլշևիկյան կուսակցության ներսում ի հայտ եկած բոլոր ընդդիմադիր խմբերը և պլատֆորմները: Բոլշևիկ-լենինյանները ՆԷՊ-ը դիտեցին ընդամենը ժամանակավոր նահանջ, մարտավարական քայլ՝ այսպես կոչված «կապիտալիզմի ամրոցը» պաշարելու և վերջնականապես գրավելու ճանապարհին:

Այն բանից հետո, երբ 1920-ական թվականների վերջին ՀամԿ(բ)Կ ղեկավարությունը հրաժարվեց ՆԷՊ-ից և ասպարեզ նետվեց խորհրդային երկրում իբր դասակարգային պայքարի սրման վե-

---

[1] Տե՛ս *Советская историческая энциклопедия*, т. 13, М., 1971, с. 75.

բաբերյալ ստալինյան հայտնի կեղծ դրույթը, թե ամբողջ ճակատով սոցիալիզմի հարձակման պայմաններում քաղաքում և գյուղում սրվելու է դասակարգային պայքարը[1], վճռական հարձակում սկսվեց բուրժուական որակվող նեպման-կուլակային, տրոցկիստական և այլ տարրերի վերացման ուղղությամբ: Բնականաբար, այսպես կոչված, տրոցկիստական-զինովևական, աջ թեքման, ազգայնական և այլ խմբավորում-հոսանքների շարքում թշնամական համարվեց նաև սմենովեխականությունը: Վերջինս որակվեց որպես սոցիալիզմին թշնամի՝ քողարկված գաղափարախոսություն և 1930-ական թվականների կեսերին, սոցիալիզմի խորհրդային մոդելի կառուցումից հետո, այդ գաղափարական հոսանքը լիովին դուրս մղվեց ասպարեզից, իսկ դրա ներկայացուցիչները ենթարկվեցին քաղաքական բռնաճնշումների:

2. Հայկական սմենովեխականություն երևույթը և նրա առանձնահատկությունները

Հայաստանի խորհրդայնացումից, 1921 թ. Փետրվարյան ապստամբության պարտությունից ու հատկապես Հայկական հարցի փակուղի մտնելուց հետո մի տեսակ հոռետեսական ու հուսալքության տրամադրություններ առաջացան հայ ազատական ու նաև դաշնակցական մտավորականության առանձին ներկայացուցիչների մոտ: Հայտնվելով օտար ափերում՝ նրանք սկսեցին մտածել հայրենիքի հետագա քաղաքական հեռանկարի, իրենց անելիքների, խորհրդային վարչակարգի հետ, այսպես ասած, լեզու գտնելու, հաշտվելու, երկրի տնտեսական ու մշակութային վերաշինությանը այս կամ այն կերպ մասնակցելու մասին: Կամա թե ակամա բոլշևիզմի հետ հաշտվելու ու համակերպվելու սմենովեխական գաղա-

[1] Տե՛ս Ստալին Ի.Վ., *Երկեր*, հ. 12, Ե., 1949, էջ 40, 42, 342–343:

փարախոսությունն իր արտահայտությունը գտավ նաև արտասահմանում հայտնված հայ մտավորականության մեջ, հայտնվեցին այդ մտայնության հայ հետևորդներ:

Հարց է ծագում. արդյո՞ք «հայ սմենովեխականություն» երևույթը միայն ընդօրինակված էր ռուսականից, թե՞ ուներ նաև տեղական սոցիալական և զաղափարական նախադրյալներ ու առանձնահատկություններ: Մեր կարծիքով, այդ հոսանքը տվյալ ժամանակաշրջանում ստեղծված հանգամանքների թելադրանք էր, մտավորականության առանձին ներկայացուցիչների անխուսափելի արձագանքն էր ստեղծված իրավիճակին: Ինչպես ռուսական «սպիտակ» շարժումը, այնպես էլ ՀՅԴ-ն, իշխանության համար պայքարում պարտվել էին, առանձին գործիչների մոտ առաջացել էին անկումային տրամադրություններ, ոմանք գտնում էին, որ պետք է հարմարվել ու հաշտվել իրականությանը: Նման տրամադրություններ ունեցող մտավորականությանը որոշակի ազդակներ էր հաղորդում ՆԷՊ-ի քաղաքականությունը, ապրանքադրամական հարաբերությունների աշխուժացումը, պարենհարկը և այլն:

Իբրև առանձնահատկություն՝ հայ սմենովեխականության ներկայացուցիչների մոտ, ի տարբերություն ռուսականի, ի հայտ եկավ ընդգծված ազգային թեքումը: Ժամանակաշրջանի հայ հեղինակներից մեկը հայկական սմենովեխականությունը համարում էր հայ ազգայնականության դրսևորում[1]: Հարկ է նկատել, որ հայկական սմենովեխականության վրա, անկումային, հոռետեսական տրամադրությունների տեսակետից, անպայման իր ազդեցությունն ունեցավ Հայկական հարցի ձախողումը: Հայ սմենովեխական մտայնության ներկայացուցիչները, հիասթափված Արևմուտքի տերությունների մեծապետական, շահամոլ քաղաքականությունից, և ի հակակշիռ դրա, բոլշևիզմը և խորհրդային պետությունը դիտելով որ-

[1] Տե՛ս Մարենց, *Հայկական սմենովեխականության դեմքը*, Յեր., 1928, էջ 8:

պես նոր ուժ՝ սկսեցին մտածել, որ շարունակ համագործակցելով փոքր, հարստահարված ժողովուրդների ազատագրության մասին խոսող խորհրդային-բոլշևիկյան հզորացող պետության հետ՝ միգուցե հնարավոր է նրա օգնությամբ լուծել Հայկական հարցը, մանավանդ որ դրա կրողը հայ ժողովրդի համար ընդունելի Ռուսաստանն ու ռուս ժողովուրդն էին: Այդ մտայնության ներկայացուցիչները դատում էին հետևյալ կերպ. եթե Դաշնակցությունը, իբրև քավության նոխազ, հեռանա ասպարեզից, միգուցե համագործակցելով երկրի ղեկը ստանձնած բոլշևիկների կուսակցության հետ՝ հնարավոր լինի ժամանակի ընթացքում լուծել հայկական հողերի հարցը: Ցավոք, նման պատրանք են ունեցել ռամկավար, հնչակյան գործիչները, նաև սմենովեխականի որակում ստացած ՀՅԴ առանձին գործիչներ՝ Հ. Քաջազնունին, Ա. Ղազարյանը և ուրիշներ:

Իբրև մեկ այլ յուրահատկություն՝ հարկ է նշել, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո կիսաընդհատակ անցած կամ Հայաստանից հեռացող և գաղթաշխարհում գործող հայ ազգային ու մյուս զրեթե բոլոր կուսակցությունները լոյալ վերաբերմունք են դրսևորել և, ըստ էության, պատրաստակամություն են հայտնել համագործակցելու խորհրդային պետության հետ: Խոսքը վերաբերում է դրսի ու հատկապես ներսի Ս. Դ. Հնչակին, Հայ ռամկավարներին (ՌԱԿ), Հայ Ս. Դ. մենշևիկներին, այսպես կոչված, «Զախ» դաշնակցական ինտերնացիոնալիստներին, սպեցիֆիկներին և այլն: Ուստի ՀՍԽՀ հասարակական-քաղաքական և գաղափարական կյանքում առանցքային նշանակություն ունեցած ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1928 թ. նոյեմբերյան պլենումում Հայհեղկոմի նախկին նախագահ Ս. Կասյանը համոզմունք էր հայտնում, որ հայ սմենովեխականության հիմնական մոտիվը ռուսական «օրիենտացիան է»[1]: Այլ խոսքով՝ հայ սմենովեխականների քաղաքական կողմնորոշումը անվերապահ եղել է ռու-

[1] Տե՛ս Հ.Ց. *Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 236:

սական: Բայց դա չէր նշանակում անպայման՝ խորհրդային: Օրինակ, Հայ ռամկավարները դրսևորել են անսքող ռուսական կողմնորոշում, սակայն լինելով ազատական ու ժողովրդավարական արժեքների կրողներ՝ նրանք դեմ էին խորհրդային վարչակարգին: Ի դեպ, խորհրդամետ դիրքորոշում է ունեցել նաև Անդրանիկը: Խորհրդային Հայաստանի և նրա բոլշևիկյան ղեկավարության մասին Անդրանիկի ունեցած հայոզմունքներն ընդհանուր գծերով համապատասխանում էին զաղութահայության մեջ գործող Ս.Դ. Հնչակի և ՌԱԿ-ի, ինչպես նաև նոր առաջացող կոմունիստական խմբերի՝ Հայաստանի մասին ունեցած տեսակետներին: Զորավարը, Պողոս Նուբարի շնորհիվ, ավելի կապված էր ՌԱԿ-ին: Նա չէր կիսում ՀՅԴ-ի՝ խորհրդային կարգերի և բոլշևիզմի մասին ունեցած պատկերացումները[1]: Ուստի Անդրանիկի հեղինակությունը և վերը նշված կուսակցությունների ողջ հոսանքը՝ իբրև քաղաքական զենք, օգտագործվում էր ՀՅԴ դեմ պայքարում:

Հայտնի է նաև, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո, հանգամանքների թելադրանքով, սոցիալիստական ուղղվածության կուսակցությունների ներկայացուցիչները անհատական կամ խմբակային ձևով պատրաստակամություն են հայտնել հրաժարվել իրենց կուսակցություններից և զանգվածաբար մտել են կոմկուսի շարքերը, որոնք հետագայում, հենց միայն նախկինում այլ կուսակցության պատկանելու համար, արդեն 1930-ական թթ., պիտի ենթարկվեին քաղաքական բռնաճնշումների: Այդ կուսակցությունների ներկայացուցիչները, ի տարբերություն սմենովեխական կոչվածների, ամենևին էլ ակնկալիք չեն ունեցել, թե համագործակցելով բոլշևիկների ու խորհրդային պետության հետ՝ դրանով կնպաստեն

[1] Տե՛ս **Սիմոնյան Հր.**, *Անդրանիկի ժամանակը*, գիրք Բ, Ե., 1996, էջ 748–749:

խորհրդային պետության վերափոխմանը: Նրանք նման խնդիր չեն դրել իրենց առջև: Ավելին՝ սոցիալիզմին նվիրվելու ու ծառայելու տեսակետից հնչակյանների գործելակերպը էապես չի տարբերվել բոլշևիկյանից: Տարբերությունն այն էր, որ իբրև ազգային կուսակցություն՝ հնչակյանները շարունակել են հետամուտ լինել Հայկական հարցի լուծմանը, անգամ հույսեր են կապել Կոմինտերնի ու համաշխարհային հեղափոխության հաղթանակի հետ[1]:

Ինչ վերաբերում էր ՀՅԴ-ին, ապա նա խորհրդային իշխանության դեմ զինված առճակատման ռազմավարություն չի որդեգրել, և նրա հակամարտությունն արտահայտվել է քաղաքական-գաղափարական դաշտում: Դրանում կարելի է համոզվել Փետրվարյան ապստամբությունից հետո՝ 1920-ական թթ. և հետագա տարիներին, նրա խորհրդաժողովների ու ընդհանուր ժողովների պաշտոնական որոշումների քննությունից: ՀՅԴ արտասահմանյան մարմինների Վիեննայի (1923 թ. ապրիլ-մայիս) արտակարգ խորհրդաժողովը խորհրդային իշխանության հանդեպ վարվելիք քաղաքականության հարցում որոշում է՝ մնալով «ընդդիմադիր պոլշեւիկեան ամբողջատիրութեան և անոր մեթոտներուն», «Բայց Հայաստանի համայնավար վարչաձեւը տապալելու նպատակաւ բռնամիջոցներու եւ զէնքի պիտի չդիմի: Ընդհակառակն, Դաշնակցութիւնը ամեն կերպով պիտի աջակցի Երկրի վերաշինության գործին»[2]: Անգամ խորհրդային պատմակուսակցական գրականության մեջ բացահայտ հակախորհրդայինի ու հակառուսի որակում ստացած դաշնակցական գործիչ Ռուբեն Դարբինյանը (Արտաշես Չիլինգարյան) «Հայրենիք» թերթի խմբագրականում մասնավորաբար գրում էր. «մենք բացարձակապէս հակառակ ենք ապստամբական որեւէ շարժման Հայաս-

---

[1] Տե՛ս *Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան 1887–1962*, խմբագիր՝ **Կիտուր Ա.**, հատ. Ա, էջ 521–522, հատ. Բ. էջ 182–187:

[2] **Տասնապետեան Հ.**, *Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչև Ժ. Ընդհ. ժողով (1890–1924)*, Աթէնք, 1988, էջ 165–166:

տանի մէջ ներկայ խորհրդային ռեժիմի դէմ, որքան ատեն որ միջազգային քաղաքական պայմանները մեր երկրի շուրջը հիմնական ու մեզի համար նպաստաւոր փոփոխութեան մը ենթարկուած չեն (ընդգծումները բնագրային են – Ա.Հ.)»[1]:

Բացի Բուխարեստի 1921 թ. ապրիլի և Վիեննայի 1923 թ. ապրիլ-մայիսի հայտնի խորհրդաժողովներից՝ խորհրդային իշխանության հանդէպ լոյալ կեցվածք որդեգրելու որոշում էր կայացրել ՀՅԴ Ամերիկայի շրջանի 1924 թ. պատգամավորական ժողովը: Նրանում շեշտվել էր, որ «Մեր ազգային գերագոյն շահերն ու իդեալները իրականացնել կարենալու համար Հ.Յ. Դաշնակցությունը պարտավոր է մնալ լոյալ **ընդդիմադիր** (ընդգծվածը որոշումից է – Ա.Հ.) իր նախկին դիրքին մեջ հանդէպ խորհրդային **կառավարության** (նույնը – Ա.Հ.), շարունակելով միաժամանակ բոլոր տրամադրելի միջոցներով նպաստել Հայաստանի վերաշինության, հայ ժողովրդի ազգահավաքման, տնտեսական զարգացման և ազգային-կուլտուրական առաջադիմության գործին»[2]: Ինքնին հասկանալի է, որ վերը բերված վավերագիր նյութը վկայում է ՀՅԴ պաշտոնական դիրքորոշման մասին, ինչը որևէ աղերս չունի «սմենովեխականություն» կոչված երևույթի հետ:

Հայաստանի ու հայ ժողովրդի համար ստեղծված ոչ ապահով վիճակը ինքնին պայմանավորում էր հայ քաղաքական կուսակցությունների առավել հանդուրժողական ու լոյալ վերաբերմունքը խորհրդային պետության ու կոմունիստական կուսակցության նկատմամբ: ՀՅԴ-ն դեմ էր բոլշևիկյան վարչակարգին, բայց ոչ Ռուսաստանին ու ռուս ժողովրդին: ՀՅԴ «Դրօշակ» պաշտոնաթերթը գրում էր. «Չշփոթել երկիրն ու ժողովուրդը ռեժիմի հետ, ռեժիմներն անցողական են, ժողովուրդն ու երկիրը՝ յավիտենական»[3]: Հայ քա-

---

[1] «Հայրենիք», Պոսթըն, 2 մարտի 1923 թ.:
[2] Նույն տեղում, 8 հուլիսի 1924 թ.:
[3] «Դրօշակ», Փարիզ, 1926, թիվ 1, էջ 1:

ղաքական կուսակցություններից, թերևս, միայն ՀՅԴ-ն՝ չընդունելով բոլշևիկյան վարչակարգը, սկզբունքային ու տևական գաղափարական պայքար մղեց ընդհուպ մինչև ԽՍՀՄ փլուզումը և կոմունիստական մենիշխանության ավարտը:

Դրա հետ մեկտեղ՝ ռուսական սմենովեխականությանը նմանվող մտայնությունը այսպես թե այնպես դրսևորվեց դաշնակցական առանձին անհատների մոտ, որոնք գտնում էին, որ պետք է հաշտվել բոլշևիկների հետ, օժանդակել խորհրդային պետությանը, անգամ հեռանալ քաղաքական ասպարեզից՝ հույս ունենալով, որ այդ վարչակարգը բարիք կբերի Հայաստանին ու հայ ժողովրդին և ի վերջո կլուծի հայկական հողերի հարցը: ՀՅԴ գործիչների շարքում նման մտայնության ամենատիպական ներկայացուցիչը համարվում է **Հովհաննես Քաջազնունին** (1868–1938 թթ.)՝ իր հանրահայտ գրքույկի պատճառով[1]:

3. Հովհ. Քաջազնունու դիրքորոշումը

Երբ ծանոթանում ենք Հայաստանի Առաջին հանրապետության հիմնադիրներից մեկի՝ Հովհ. Քաջազնունու ցնցող վերնագրով գրքույկին, առաջին հայացքից թվում է, թե լուրջ ճգնաժամ էր տիրում Դաշնակցության շարքերում, որովհետև դրանով բարձրացվում էր երեք տասնամյակից ավելի բեղուն գործունեություն ծավալած, հայ քաղաքական կյանքն ու միտքը հիմնականում իր ուսերին տարած, Առաջին հանրապետությունը կերտած կուսակցության գործունեության դադարեցման հարցը: Բայց երբ իրերի վիճակը քննում ենք ըստ էության, ապա տեսնում ենք, որ ներկուսակցական ճգնաժամի խնդիր չկար: Դա կուսակցության մի քանի գործիչների,

---

[1] Տե՛ս **Քաջազնունի Յ.**, *Հ.Յ. Դաշնակցությունը անելիք չունի*, Պուքրէշ, 1923:

այդ թվում՝ Հ. Քաջազնունու սուբյեկտիվ արձագանքն էր նոր իրավիճակին՝ փոփոխված կացությանը:

Դժվար է միանշանակ բացատրություն տալ Քաջազնունու հայացքների կտրուկ փոփոխության պատճառներին: Դա միգուցե կարելի է բացատրել 1921 թ. Փետրվարյան ապստամբությունից հետո նրա հուսալքումով, անկայուն հոգեվիճակով կամ էլ խորհրդային երկրում որդեգրված ՆԷՊ-ի քաղաքականությամբ: Վերջինս սմենովեխական մտայնության ոգով երկրի ազատականացման ու ժողովրդավարացման հույս էր ներշնչում: Հնարավոր է, որ Հ. Քաջազնունու դիրքորոշման փոփոխության վրա ազդեցություն են գործել միաժամանակ և՛ հուսալքությունը, և՛ Լոզանի կոնֆերանսում Հայկական հարցի փակուղի մտնելը, և՛ ՆԷՊ-ով պայմանավորված նոր հանգամանքները:

Ու մինչ Հ. Քաջազնունին կհանգեր իր հայտնի հետևությանը, 1922 թ. ՀՅԴ Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթի մայիսի վերջի և հունիսի սկզբի 6 համարներում տպագրել էր տվել իր «**Ի՞նչ պէտք է ըլլա մեր ուղին**» խորագրով հոդվածաշարը: Թերթի խմբագիրը, համաձայն չլինելով հանդերձ նրանում ՀՀ անդրանիկ վարչապետի առաջ քաշած շատ տեսադրույթներին, այնուամենայնիվ չէր առարկել, որ այն հրապարակվի բաց քննարկման համար: Այստեղ, Հայաստանի խորհրդայնացումից հետո ստեղծված պայմաններում, Հ. Քաջազնունին պետականաշինության գործում Դաշնակցության մասնակցության երկու հնարավոր տարբերակ էր մատնանշում: **Առաջին՝** ՆԷՊ-ի քաղաքականության պայմաններում բոլշևիկյան կուսակցությունը աստիճանաբար կհրաժարվի նախկին ուղղափառությունից, կսահմանափակի բռնի մեթոդները, այլախոհ կուսակցությունների գործունեության համար կապահովի որոշ ազատություններ: Նման պայմաններում Դաշնակցությունը պետք է հանդես գա իբրև քաղաքական ընդդիմություն և փորձի բոլշևիզմի դեմ պայքարել օ-

ինական միջոցներով: Երկրորդ՝ Հ. Քաջազնունին հնարավոր էր համարում, որ բոլշևիկները գնան ավելի հեռու՝ ընդդիմության հետ կազմելու քաղաքական կոալիցիա: Այս դեպքում, ըստ նրա, Դաշնակցությունը՝ իբրև Հայաստանում ամենակազմակերպված քաղաքական ուժ, պատրաստ պետք է լինի բոլշևիկների հետ կոալիցիային՝ վերցնելով պատասխանատվության իր բաժինը: Ավելին, Հ. Քաջազնունին չէր բացառում նաև երրորդ տարբերակը. այն է՝ դեպքերի բերումով «Դաշնակցությունը նորից կոչված լինի ղեկավարող դեր ստանձնելու»[1]:

Ինչպես տեսնում ենք այդ հոդվածաշարում, Քաջազնունին խորհրդային վարչակարգի պայմաններում որոշակի տեղ ու դեր էր տալիս Դաշնակցությանը՝ օրինական ընդդիմությունից մինչև հանրապետությունում քաղաքական ղեկավար դերի վերստանձնում: Հ. Քաջազնունու կողմից ներկայացված հնարավոր տարբերակների, արտահայտած մտքերի ու դատողությունների մեջ դժվարանում ենք իրատեսական որևէ բան նկատել: Իրականությունն այն է, որ ով քիչ թե շատ ծանոթ է բոլշևիզմի գաղափարախոսությանը, նրա մենիշխանական ձգտումներին, ծայրահեղական գործելակերպին, ծրագրային հավակնություններին, կարող է առանց վարանելու չհամաձայնել այս, անգամ տեսաբանի դերակատարություն ստանձնած նախկին վարչապետի, դատողություններին: Նշված հոդվածաշարում արտահայտված մտքերից էականն այն էր, որ Հ. Քաջազնունին ընդունում էր խորհրդայնացած Հայաստանում Դաշնակցության կշռելի դերակատարության հնարավորությունը, մի բան, որը դրանից ամիսներ անց՝ 1923 թ. մարտին, չենք տեսնի Բուխարեստում

[1] «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 30 մայիսի 1922 թ.:

նրա գրած զեկուցագիր-գրքույկում: Այստեղ Հ. Քաջազնունին քաղաքական կտրուկ շրջադարձ է կատարել:

Սակայն «Ի՞նչ պետք է ըլլա մեր ուղին» հոդվածաշարում, ուշադրություն են գրավում տնտեսական քաղաքականության ասպարեզում Քաջազնունու առաջ քաշած մի քանի դրույթներ, որոնք իրենց հետագա զարգացումը ստացան նրա գրքույկում: Նա իրավացիորեն զարգացնում է այն գաղափարը, որ Հայաստանը գյուղացիական, մանր սեփականատիրական երկիր է և դեռ պատրաստ չէ ընկերվարական կարգերի համար: Ինչպես նկատում ենք, Հայաստանի տնտեսական վերաշինության ճանապարհին մանրապրանքային տնտեսության զարգացման առումով Քաջազնունու մատնանշած հեռանկարը համահունչ էր խորհրդային երկրում գործադրվող ՆԷՊ-ի քաղաքականությանը: Ավելի որոշակի՝ Հայաստանի վերաշինության ճանապարհին նա դեմ էր արտահայտվում հողերի համայնացման (կոլեկտիվացման) ծրագրին: Դրա փոխարեն, իրավացիորեն, Հայաստանի համար ընդունելի էր համարում անհատական (ֆերմերային) տնտեսության զարգացումը:

Ուշագրավ է, որ Հ. Քաջազնունու տնտեսական ոլորտին վերաբերող այս մտքերին անդրադարձել է ՀԿ(բ)Կ ԿԿ-ի այն ժամանակվա քարտուղար Աշոտ Հովհաննիսյանը: Վերջինս գտնում էր, որ անհատական, մանր ապրանքային տնտեսության վերականգնման ու զարգացման իր առաջարկներով Հ. Քաջազնունին փաստորեն հանդես է գալիս «Կապիտալիզմի ռեստավրացիայի պահանջով»[1]: Հայաստանի տնտեսական զարգացման հեռանկարի հարցերում հենց այս մոտեցումները նկատի ունենալով՝ Աշոտ Հովհաննիսյանը Քաջազնունուն նմանեցնում էր ռուս սմենովեխականներին:

---

[1] Հովհաննիսյան Ա., *Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը*, «Նորք», Ե., 1923, գիրք 3, ապրիլ- սեպտեմբեր, էջ 171:

Հավատարիմ էսէռների, նաև Դաշնակցության ազգարային ծրագրին (ի դեպ, դրանք իրար շատ մոտ են եղել), որն ինչպես հայտնի է, 1917-ին իր նպատակների համար օգտագործեց Վ. Լենինը, սկզբում Հ. Քաջազնունին գտնում էր, որ հողը պետք է տրվի գյուղացուն մշտական օգտագործման, բայց ոչ որպես սեփականություն: Ցավոք, Առաջին հանրապետությանը բաժին ընկած ծանր իրավիճակի, ժամանակի սղության, թշնամական շրջափակման, մշտական պատերազմների և այլ պատճառներով հնարավոր չեղավ կյանքի կոչել հողերի սոցիալիզացիայի էսէռադաշնակցական ծրագիրը: Սակայն բոլշևիկների հետ գործակցելու համար հետագայում ՀՀ առաջին վարչապետ Քաջազնունին նրանց հետ որոշակի կոմպրոմիսի դաշտ էր փնտրում: Նա կարծում էր, որ Դաշնակցությունը պետք է հրաժարվի իր տնտեսական որոշ պլատֆորմներից, օրինակ՝ առաջարկում էր գնալ հողերի պետականացմանը կամ ազգայնացմանը, ինչը, ինչպես հայտնի է, բոլշևիկյան ծրագրային դրույթներից էր[1]: Չնայած սկզբունքի տեսակետից Քաջազնունու համար անընդունելի էր նման քաղաքական ու տնտեսական համակարգը, բայց ստեղծված քաղաքական իրավիճակը, ըստ նրա, թելադրում էր գործակցել բոլշևիկների հետ, մինչև որ հետագա վիճակը պարզվի:

Հ. Քաջազնունին իր «Ի՞նչ պետք է ըլլա մեր ուղին» հոդվածաշարի 6-րդ՝ ավարտական հոդվածում հարցադրում էր անում՝ ՀՅԴ-ն պե՞տք է արդյոք կրկին իր ձեռքը վերցնի Հայաստանի պետական ղեկը, թե՞ թողնի ասպարեզը ուրիշներին: Եվ դրան պատասխանում էր հետևյալ կերպ. «Անշուշտ, լավ կլիներ, եթե հայ իրականության մեջ գոյություն ունենար Դաշնակցությունից ավելի կարող և ավելի ձեռնահաս քաղաքական կազմակերպություն: Դժբախտաբար այդ-

[1] Տե՛ս «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 3 հունիսի 1922 թ.:

պիսի կազմակերպված ուժ չկա ասպարեզում և դարձյալ Դաշնակցությունն է, որ պիտի ճգնի անել իր լավագույնը»[1]:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ նախկին վարչապետը «Ճակատամարտ»-ի հոդվածաշարում փորձել էր ներկայացնել Խորհրդային Հայաստանի և ՀՅ Դաշնակցության հետագա հարաբերությունների, այդ թվում՝ համագործակցության հնարավոր տարբերակները: Բայց, ինչպես արդեն ասվեց, ամիսներ անց նա արձանագրում է քաղաքական կտրուկ կերպարանափոխություն և պնդում, որ Դաշնակցությունը սպառել է իրեն, պետք է հեռանա ասպարեզից և ղեկը հանձնի բոլշևիկներին: Պահի քաղաքական նպատակահարմարության (կոնյունկտուրայի) ազդեցությամբ Հ. Քաջազնունին այն ժամանակվա շատ գործիչների ու մտածողների նման որոշակի ակնկալիք է ունեցել զորեղացող Խորհրդային Ռուսաստանից: «Հայաստան,- կարդում ենք նրա գրքույկում,- պէտք ունի բոլշեւիկներին, որովհետն պէտք ունի Ռուսաստանին», քանզի «մեր երկրի ղժբախդ աշխարհագրական դիրքը կապում է մեր ձեռներն ու ոտները»: «Այսօր Ռուսաստանի բարեացակամութիւնն ու պաշտպանութիւնը ունենալու համար, Հայաստան ինքը խորհրդային պիտի լինի: Ուրիշ ելք չկա՝ ես գոնէ չեմ տեսնում»[2]: Այս հիմնավորմամբ, քաղաքական-գաղափարական կտրուկ նահանջ կատարելով, նա գտնում էր, որ «Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, ո՛չ ներկայում, ո՛չ ապագայում. նա վերջ պիտի դնի իր գոյութեան»[3]: **Նախկին վարչապետի ասածից ստացվում է, որ մի քանի ամսվա ընթացքում Հայաստանում փաստորեն հայտնվում է Դաշնակցությանը փոխարինող համարժեք քաղաքական ուժ:**

---

[1] «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 4 հունիսի 1922 թ.:
[2] **Քաջազնունի Յ.**, *Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի*, Բուքրէշ, 1923, էջ 77:
[3] Նույն տեղում, էջ 89:

Ավելին, Հ. Քաջազնունին կարծում էր, որ եթե հայ բոլշևիկների գլխավոր ախոյան ՀՅԴ-ն հեռանա քաղաքական ասպարեզից, ապա խորհրդային պետությունը խաղաղ և հանգիստ պայմաններում կիրագործի երկրի տնտեսական վերաշինությունը և աստիճանաբար կլուծի Հայ Դատը: Մեկ այլ տեղ նա ակնարկում էր, որ «Հասկանանք. հայ բոլշեւիկները մեր ժառանգներն են, որ շարունակելու են – ու արդէն շարունակում են – մեր գործը»[1]: Մոտավորապես այսպիսին էր Հ. Քաջազնունու ազգային «սմենովեխական» պատկերացումների հիմնական իմաստը:

4. Հովհ. Քաջազնունու նոր դիրքորոշման քննադատները

Ամեն ինչ սկսվում է նրանից, որ ՀՀ նախկին վարչապետ Հ. Քաջազնունին՝ իբրև անհատ դաշնակցական, ՀՅԴ արտասահմանյան մարմինների Վիեննայի (1923 թ. ապրիլ-մայիս) խորհրդաժողովին է ներկայացնում մի ընդարձակ զեկուցագիր, որում, ինչպես արդեն ասվեց, զարգացնում էր այն միտքը, թե ՀՅԴ պետք է ինքնալուծարման որոշում կայացնի, որովհետև նրա համար այլևս անելիք չի մնացել հայ կյանքում: Սակայն ինչպես նշում է ՀՅԴ Բյուրոյի անդամ Արշակ Ջամալյանը, խորհրդաժողովը Քաջազնունու առաջարկը մերժեց միաձայնությամբ: Անգամ, ըստ Ջամալյանի, կոնֆերանսի անդամները «անլուրջ մի բան համարեցին, որ մինչև անգամ ավելորդ նկատեցին նրա քննությունն ըստ էության»[2]:

---

[1] **Քաջազնունի Հովհ.**, *Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս*, Ե., 1994, էջ 58–59:

[2] **Ջամալեան Ա.**, *Յ. Քաջազնունին և Դաշնակցութիւնը*, (տե՛ս «Հայրենիք», հունվար 1924, (Բ տարի), թիվ 3, էջ 48):

Վիեննայի խորհրդաժողովից հետո Քաջազնունին հեռացավ Դաշնակցության շարքերից և հրատարակության ներկայացրեց իր այդ զեկուցում-գրքույկը «Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի» վերնագրով: Ի դեպ, ՀՅԴ ղեկավար մարմինները ոչ մի անգամ խոչընդոտ չեն հարուցել գրքույկի հրատարակմանը, ինչպես որ սովորաբար հակառակն է լինում այլ կուսակցությունների պարագայում: Հասարակական-քաղաքական տարբեր շրջանակների մոտ հետաքրքրությունն այնքան մեծ էր, որ նույն թվականին գրքույկը հրատարակվեց չորս տարբեր քաղաքներում՝ Բուխարեստում, Վիեննայում, Ալեքսանդրիայում և Թիֆլիսում: Հետագայում գրքույկն ունեցավ այլ վերահրատարակություններ, այդ թվում հետխորհրդային շրջանում երկու անգամ Երևանում: Սա մի կողմից վկայում է հետաքրքրությունը այդ գրքույկի վերնագրի և նրանում արտահայտված ոչ ստանդարտ մտքերի մասին, իսկ մյուս կողմից՝ Դաշնակցության մահը բաղձալի համարող հակառակորդ քաղաքական ուժերի համաձայնությունը՝ սկսած բոլշևիկներից ավարտված հնչակյաններով ու ռամկավարներով, էլ չենք խոսում օտար թշնամական կուսակցությունների մասին, որոնք չարախնդացել և օգտագործել են այդ հանգամանքը իրենց հակադաշնակցական քարոզարշավում:Նման արտասովոր վերնագրով գրքույկի լույսընծայումը «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթը համարեց ցնցող լուր և ի արձագանք դրա՝ տպագրվեց «Հովհ. Քաջազնունու կարապի երգը» հոդվածը[1]: Քաջազնունու սույն գրքույկը գալիս էր ջուր լցնելու Դաշնակցությունը լուծարելու և քաղաքական ասպարեզից հեռացնելու բոլշևիկյան քաղաքականության ջրաղացին: Եվ պատահական չէր, որ 1923 թ. նոյեմբերին Երևանում հրավիրված Հայաստանի «Նախկին դաշնակցականների» համագումարում թեավոր խոսք էր դարձել «Դաշնակցությունը անելիք չունի» արտահայտությունը:

---

[1] «Խորհրդային Հայաստան», Ե., 11 նոյեմբերի 1923 թ:

Բնականաբար, ՀՅԴ գործիչների մեծագույն մասը, դեմ լինելով Քաջազնունու արտահայտած մտքերին, դրանց հակադարձեց իրենց պատասխան աշխատություններով՝ ցույց տալով, որ ՀՅԴ դեռ անելիք ունի: Դրան առաջիններից մեկը պատասխանեց Ս. Վրացյանը՝ «Խարխափումներ» աշխատությամբ[1]: Ս. Վրացյանը անհամաձայնություն է արտահայտում գրքույկում Դաշնակցության գործունեությանը տրված գնահատականներին ու եզրահանգումներին, փաստերի շարադրման միակողմանիությանը, հեղինակի դիրքորոշումների հակասականությանը, անգամ մատնանշում փաստական անճշտություններ:

Գրեթե համանման փաստարկումներով Հ. Քաջազնունու գրքույկին հակադարձեց նաև Վահան Նավասարդյանը: Քաջազնունու երկարամյա մյուս զաղափարակից գործընկերը ցավով արձանագրում է, որ նախկինում հղկված մտքի ու հստակ գրչի տեր Քաջազնունուն այս անգամ ցավալիորեն դավաճանել է միտքը[2]: Վ. Նավասարդյանը ևս համոզմունք է հայտնում, որ գրքույկը գրված է «ժամանակաշրջանի թարմ հույզերի և քաղաքական որոշակի նկատառումների ազդեցության տակ»[3]:

Տպագրված գրքույկի տաք հետքերով, առանձին աշխատությամբ ու ավելի խիստ տոնայնությամբ Քաջազնունուն պատասխանեց ՀՅԴ մեկ այլ գործիչ՝ Ռուբեն Դարբինյանը: Մասնավորապես իրավագետ, տեսաբան և հրապարակախոս Ռ. Դարբինյանը կշտամբում էր Հ. Քաջազնունուն, որ նա, ՀՅԴ շնորհիվ դառնալով ՀՀ անդրանիկ վարչապետ, այսօր հանկարծ հեռանում է Դաշնակցությունից[4]: Ռ. Դարբինյանի մեկնաբանությամբ՝ «Յ. Քաջազնունին սակայն

---

[1] **Վրացեան Ս.**, *Խարխափումներ*, Պոսթրն, 1924:

[2] Տե՛ս **Նավասարդեան Վ.**, *Հ.Յ. Դաշնակցության անելիքը (մտքեր և հուշեր)*, Գահիրե, 1924, էջ 8:

[3] Նույն տեղում, էջ 163:

[4] **Դարբինեան Ռ.**, *Մեր պատասխանը Յ. Քաջազնունիի*, Պոսթրն, 1923, էջ 9:

իր դասալքութեանը կ՚ուզէ գաղափարական (ընդգծումը՝ Ռ.Դ.) բնոյթ տալ, եւ, մինակ չմնալու համար, ուրիշներն ալ դասալքութեան մղել»[1]: Ավելին՝ Ռ. Դարբինյանը Հ. Քաջազնունուն բնութագրում էր որպես «անուղղելի կոմունիստ», ինչպես որ հենց ինքը՝ Քաջազնունին է խոստովանել[2]: Դարբինյանը վերլուծելով՝ «Քաջազնունիի քաղաքական ինքնասպանութեան առաջարկին բոլոր գլխավոր կէտերը» նկատում էր. «թե ո՛ր աստիճան անոնք անհիմն, անլուրջ, անհետեւողական եւ վնասակար են ոչ միայն Հ.Յ. Դաշնակցութեան, այլ եւ բովանդակ հայութեան ազգային շահերու տեսակէտով»[3]:

Ավելի ուշ, սփյուռքահայ մեկ այլ հեղինակ, Ս. Բարսեղյանը Հ. Քաջազնունու գիրքը համարել է այն ժամանակվա քաղաքական կտրուկ դեպքերի ազդեցության արգասիք: Ըստ հրապարակագիր Ս. Բարսեղյանի՝ «Այն գրված է հորդ զգացումներով, զուրկ է տրամաբանական հաջորդականությունից և պատմական վավերագրերից»[4]: Կարելի է համաձայնել, որ գրքույկը, իրոք, գրված է զգացումների ու հույզերի տպավորության տակ, սակայն տեղին չէ պատմական վավերագրերի բացակայության մասին ակնարկը, քանզի պետք է հաշվի առնել, որ գրքույկը գիտական ուսումնասիրություն չէ, այլ գրված է քաղաքական շարժառիթներով:

Մեր կարծիքով՝ Հ. Քաջազնունու գիրքը Դաշնակցության 1914–1923 թթ բուռն ու հակասական գործունեության վերագնահատման փորձ է, որին էլ հաջողել են նրա վիճահարույց գնահատականներն ու եզրահանգումները: Պատմական շատ իրադարձությունների վերաբերյալ Հ. Քաջազնունու դատողությունների մեծ մասը կառուցված է ենթադրությունների վրա: Այդ մասին հենց ինքն է

---

[1] Տե՛ս նույն տեղում. էջ 7:

[2] Նույն տեղում, էջ 9:

[3] Նույն տեղում, էջ 140:

[4] **Բարսեղեան Ս.**, *Ինչպե՞ս կը գրեմ մեր նորագոյն պատմութիւնը*, Պ. Այրես, 1948. էջ 10:

խոստովանում[1]: Այս կապակցությամբ կարելի է բավարարվել՝ մեջտեղ բերելով մի երկու փաստ: Օրինակ, բոլշևիկների համակրանքը շահելու համար Քաջազնունին, ըստ էության, ժխտում է խորհրդաթուրքական գործակցության փաստը[2]: Մինչդեռ հայտնի է, որ, սկսած 1920 թ. օգոստոս ամսից, այդ գործակցությունը դրսևորվել է ցամաքով ու ծովով Ռուսաստանի կողմից Թուրքիային ցուցաբերված օգնության տեսքով՝ զենքով, զինամթերքով, ոսկով և այլն, որի վերաբերյալ հրապարակի վրա կան մեծաքանակ վավերագիր նյութեր ու գրականություն[3]: Հ. Քաջազնունին հավանաբար ծանոթ չի եղել Մ. Քեմալի 1920 թ. ապրիլի 26-ին Վ. Լենինին ուղղված նամակի բովանդակությանը կամ Արևելքի ժողովուրդների 1920 թ. սեպտեմբերին Բաքվի համագումարի արդյունքում ստեղծված «Արևելքի ժողովուրդների քարոզչության և գործողության Խորհրդի» նախագահության ընդունած սեպտեմբերի 17-ի որոշմանը, որով թուրքական և ռուսական զորքերի առաջ խնդիր էր դրվում Հայաստանի վրա համատեղ հարձակվելու միջոցով տապալել իր «սեփական ժողովրդին հարստահարող դաշնակների լուծը» և «հաստատել խորհրդային իշխանություն»[4]: Քննադատության չի դիմանում նաև գրքույկի հեղինակի այն պնդումը, թե «Ալեքսանդրոպոլի պայմանագիրը (ոչինչ որ հեղինակը պայմանագրի կնքման օրը սխալմամբ նշում է իր ասե-

---

[1] Տե՛ս **Քաջազնունի Հովհ.**, *Հ.Յ. Դաշնակցությունը անկիրք չունի այլևս*, Ե., 1994, էջ 34:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 34–35:

[3] Տե՛ս *Документы внешней политики СССР*, т. 2, М., 1958, с. 725, (приложения), т. 3, М., 1959, с. 675, **Хейфец А.Н.**, *Советская дипломатия и народы Востока*, 1921–1927 гг., М., 1966, с. 187, **Զոհրաբյան Է.Ա.**, *Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920–1922 թթ.*, Ե. 1979, էջ 46, **Զոհրաբյան Է.Ա.**, *1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները*, Ե., 1997, *Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.* (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2000, Պատմության մութ ծալքերը կամ եղե՞լ է արդյոք թուրք-բոլշևիկյան գործարք, «Հայություն», Ե., 1–10 հուլիսի 1993 թ., թիվ 9 (27) և այլն:

[4] *Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.* (քաղաքական պատմություն), Ե., 2000, էջ 284–286, նույնը՝ **Զոհրաբյան Է.Ա.**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Ե., 1997, էջ 153–154:

լով՝ «դեկտեմբերի 1-ը, թէ՝ նոյեմբերի 30-ը») շատ էլ չէր տարբերւում Բաթումի դաժան դաշնագրից»[1]: Բերված միտքն անընդունելի է հենց միայն այն տեսակետից, որ Բաթումի հայ-թուրքական պայմանագրով պետական սահմանն անցնում էր Արագած լեռան ամենաբարձր գագաթով, Էջմիածնի շրջագծով, Սև ջուր գետով և այլն, այն դեպքում, երբ Ալեքսանդրապոլի պայմանագրի պարագայում հայ-թուրքական սահմանն անցնում էր Արաքս և Արփաչայ (Ախուրյան) գետերի հունով: Հավանաբար Հ. Քաջազնունու արտահայտած այս միտքը, խորհրդահայ շատ հեղինակներ մեխանիկորեն կրկնելով, ըստ էության, նույնացրել են այդ երկու պայմանագրերը, որպես փաստարկ շահարկել են նրա արտահայտած էլի շատ ոչ ճիշտ մտքեր ու դատողություններ:

Ինչպես տեսնում ենք, բազմաթիվ են արձագանքները Հ. Քաջազնունու մեծ աղմուկ հանած գրքույկի վերաբերյալ: ՀՅԴ շարքերի վերաբերմունքն ու գնահատականը բնականաբար եղել է գերազանցապես մերժողական: Ինչ վերաբերում է խորհրդային շրջանի և Սփյուռքի ոչ դաշնակցական շրջանակների վերաբերմունքին ու գնահատականներին՝ գրքույկի հեղինակի համարձակ առաջարկը՝ ՀՅԴ-ին քաղաքական ասպարեզից հեռացնելու մասին հիմնականում ընդունվել է բավականությամբ, իսկ տեղ-տեղ էլ՝ ցնծությամբ:

---

[1] **Քաջազնունի Հովհ.**, *Հ.Յ. Դաշնակցությունը անկիրք չունի այլևս*, Ե., 1994, էջ 35:

5. Հայկական սմենովեխականության թևերը և գաղափարական հոսանքները

Մինչ Հ. Քաջազնունու Խորհրդային Հայաստան վերադարձի և հետագա ճակատագրի մասին խոսելը հարկ ենք համարում միջանկյալ փոքր-ինչ անդրադարձ կատարել հայկական սմենովեխականության այլ դրսևորումներին:

Եթե ԽՍՀՄ-ում կուսակցական-պետական մակարդակով 1920-ական թթ. խոսվել է սմենովեխականություն երևույթի մասին, ապա, բնականաբար, նույն բանը պետք է «բացահայտվեր» Խորհրդային Հայաստանում և հայ իրականության մեջ ու քննարկման նյութ դառնար նաև Հայաստանի ղեկավար մարմինների համար: Նկատենք, որ հայկական սմենովեխականության մասին խոսք է բացվել ՀԿ(բ)Կ 5-րդ համագումարում (1927 թ. նոյեմբեր): Հանդես գալով ԿԿ-ի քաղաքական և կազմակերպչական հաշվետվությամբ՝ ԿԿ-ի քարտուղար Հայկ Հովսեփյանը «տրոցկիզմի, մենշևիզմի և դաշնակիզմի» քննադատության համատեքստում փոքր-ինչ դրական երանգներով է խոսել սմենովեխական մտավորականության մասին՝ դրանց թվին դասելով Հ. Քաջազնունուն՝ իր հայտնի աշխատությամբ: Նրա կարծիքով՝ մտավորականության մի մասը վերագնահատում է իր նախկին հայացքներն ու դիրքորոշումները և այժմ խորհրդային վարչաձևի մեջ է տեսնում հայ ժողովրդի ֆիզիկական գոյության ապահովումը և երկրի տնտեսական զարգացումը[1]:

Սակայն մեկ տարի անց, ինչպես արդեն ասվել է, Խորհրդային Հայաստանի գաղափարական-քաղաքական կյանքում շրջադարձային համարվող ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1928 թ. նոյեմբերյան պլենումի զեկուցումներում և ընդունած որոշումների մեջ արդեն խոսվում էր խորհրդային իրականությանը թշնամի սմենովեխական հոսանքի

[1] Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 1, թ. 112:

ջախջախման և վերացման մասին: Պլենումի որոշումներում հակախորհրդային թշնամական, բուրժուանացիոնալիստական որակվող գաղափարախոսությունների՝ դաշնակիզմի, ռամկավարության, հնչակիզմի, մենշևիզմի, սպեցիֆիզմի, տրոցկիզմի շարքում հաջորդաբար դասվում էր սմենովեխականությունը: «Ինչպես Խորհրդային Միության մեջ ընդհանրապես,- կարդում ենք պլենումի նյութերում,- **սմենովեխականությունը** (ընդգծումը փաստաթղթին է – Ա.Հ.) պաշտպանողական լոզունգներով վարագուրված բուրժուական իդեոլոգիա է, որ ձգտում է հարմարվել նոր պայմաններին և մասսաների վրա ազդելու նպատակով գործադրել նոր մեթոդներ»[1]: Պլենումի որոշումներում նշվում էր Հայաստանում դրսևորվող սմենովեխականության երեք ուղղություն. ա) **ազատամտական** սմենովեխականություն[2], որը կրում է ռուսական կողմնորոշման ազդեցությունը, բ) **դաշնակցական** սմենովեխականություն, որն իր մեջ ներառում է ոչ միայն ռուսական ազատամտականությունը, այլև «մայր» Դաշնակցության ազդեցությունը: Պլենումի որոշումների մեջ նշված է նաև **եկեղեցական** սմենովեխականություն, որի նպատակը համարվել է եկեղեցական ռեֆորմները[3]:

Մինչ այդ՝ պլենումում «Գաղափարական ճակատի խնդիրները» ընդարձակ զեկուցմամբ հանդես եկած Ս. Կասյանը, խոսելով հայկական սմենովեխական հուսանքի վտանգավորության մասին, այն բաժանել էր երկու ուղղության՝ ա) **ազատամտական** և բ) **դաշնակցական** (եկեղեցականի մասին խոսք չկար): Նա ազատամտական

---

[1] *ՀԿ(բ)Կ խնդիրները իդեոլոգիական ֆրոնտում (ԿԿ-ի 1928 թ. նոյեմբերյան պլենումի որոշումներով)*, Ե., 1929, էջ 20:

[2] Հարցը ամբողջական ներկայացնելու համար հարկ են համարել անդրադառնալ նաև այսպես կոչված ազատական կամ ազատամտական սմենովեխականության երևույթին, որ հիմնական կրողներն էին Հայ ռամկավարները և Գր. Չայխուշյանը:

[3] Տե՛ս *ՀԿ(բ)Կ խնդիրները իդեոլոգիական ֆրոնտում*, էջ 21:

սմենովեխականության ներկայացուցիչ էր համարում Գր. Չալխուշյանին: Ս. Կասյանի բնորոշմամբ այդ ուղղությունն ունի ընդգծված ռուսական կողմնորոշում: Ինչ վերաբերում է դաշնակցական սմենովեխականությանը, ապա նա այն բաժանել է երկու թևի: Ըստ Ս. Կասյանի՝ «Մի թևի արտահայտիչը Հ. Քաջազնունին է, որը հանդես է գալիս Դաշնակցությունը լիկվիդացիայի ենթարկելու պահանջով, իսկ մյուսինը՝ Ա. Ղազարյանը[1], որն առաջարկում է հաշտեցնել երկու՝ դաշնակցական և բոլշևիկյան կողմերին»[2]: Ճիշտ է նկատել Կասյանը, որ այս երկու թևերում էլ դարձյալ կա ռուսական կողմնորոշում:

Բացի Ս. Կասյանից՝ հայկական սմենովեխականության հարցին անդրադարձել է խորհրդային կուսակցական-պետական մեկ այլ գործիչ՝ Ա. Կարինյանը: Ըստ Կարինյանի՝ հայկական սմենովեխականությունը սկիզբ է առել 1921 թվին: Նա առաջին հայ սմենովեխականների շարքին է դասել Հայ ռամկավարներին, դրանց թվում՝ Արշակ Չոպանյանին, Պողոս Նուպար փաշային, Արտակ Դարբինյանին, Վահան Թեքեյանին, Ավետիս Թերզիպաշյանին, Հրաչ Երվանդին, Փանոս Թերլեմեզյանին և մյուսների[3]: Փաստենք, որ 1920-ական թթ. սկզբներին Հայաստան են այցելել ռամկավար գործիչներ Ա. Դարբինյանը, Վահան Թեքեյանը, Ավետիս Թերզիպաշյանը, Փանոս Թերլեմեզյանը, Լևոն Բաշալյանը և ուրիշներ[4]: Օրինակ, 1922 թ. սկզբներին Հայաստան ժամանած և ՀՍԽՀ ղեկավարներ Ա. Մյասնիկյանին, Ս. Լուկաշինին, Ա. Մռավյանին և մյուսներին տեսակցած հայտնի ռամկավար գործիչ Արտակ Դարբինյանը ռամկավարների

---

[1] Խոսքը 1921 թ-ից Պարսկաստանում ապաստանած ՀՅԴ գործիչ, ՀՀ նախկին նախարար ու պատգամավոր բժիշկ Արշակ Ղազարյանի մասին է:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 8, թ. 3–16, *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 236–237:

[3] Տե՛ս **Կարինյան Ա.**, *Նացիոնալիզմի «նոր դիրքերը»*, Մոսկվա, 1929, էջ 7–8:

[4] Տե՛ս **Մարտունի Ալ.**, *Կուսակցությունները գաղութահայության մեջ*, Թիֆլիս, 1924, էջ 25, «Հայրենիք», Պոսթըն, 14 փետրվարի 1923 թ.:

կենտրոնական մարմնի կողմից հանձնարարական է ունեցել. «մեր ազգային դատի շուրջ խնդրելու խորհրդային իշխանութեան միջնորդութիւնը Մոսկվայի խորհրդային կառավարութեան քով», հակառակ դեպքում. «գոնէ հնարաւորութիւն տալ անապատան թուրքահայ գաղթականներուն Խ. Հայաստանի մէջ տեղաւորելու»[1]:

Ինքնին հասկանալի է, որ ազատական գաղափարներ որդեգրած Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) համար ընդունելի չէր խորհրդային-բոլշևիկյան վարչակարգը, բայց նա քաղաքական նկատառումներով բարյացակամություն էր հանդես բերում, ինչը, սակայն, խորհրդային կողմից համարժեք վերաբերմունքի չէր արժանանում: «Ինչ որ ալ ըլլայ,- կարդում ենք Հայ ռամկավար կուսակցության Արևմտյան Եվրոպայի շրջանակի «Ապագա» պաշտոնաթերթում,- Երևանի կառավարութեան ներկայ ռէժիմը, ինչ որ ալ ըլլան Հայաստանի նոր վարիչներուն հետապնդած սկզբունքները, սա անժխտելի է, որ անիկա հայ կառավարութիւն մըն է վերջապէս եւ այն ժողովուրդը, զոր ներկա քաղաքական տագնապներում մէջէն առաջնորդելու կոչուած է ան, հայ ժողովուրդ է»[2]:

Ա. Կարինյանի կարծիքով՝ ռամկավարների յուրօրինակ սմենովեխական բարյացակամությունը Խորհրդային Հայաստանի նկատմամբ բացատրվում է նրանով, որ. ա) հայ բոլշևիկները ջախջախեցին դաշնակցականներին և բ) Խորհրդային Հայաստանը, վերսուշինելով քանդված երկիրը, նպաստավոր պայմաններ է ստեղծում որբերի ու գաղթականների խնդրի լուծման համար և դրանով թեթևացնում նրանց հոգսերը: Ա. Կարինյանը նկատում է ռամկավարների խորհրդային իշխանության հանդեպ բարյացակամ վերաբերմունքի նաև մի երրորդ կողմ. այն է, որ նրանք մեծ հույսեր էին տածում, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը, թիկունքին ունենա-

---

[1] **Դարբինեան Ա.**, *Հայ ազատագրական շարժման օրերէն (յուշեր 1890-էն 1940)*, Ե., 2003, էջ 12:

[2] «Ապագա», Բարիզ, 6 օգոստոսի 1921 թ.:

լով խորհրդային զորեղ պետությունը, կկարողանա դիվանագիտական կամ այլ ուղիներով հասնել Հայաստանի տարածքների ընդլայնմանը[1]:

Ամփոփելով վերոշարադրյալը կարելի է եզրակացնել, որ **հայ սմենովեխական բոլոր ուղղությունների ու հատկապես ռամկավար թևի ներկայացուցիչները ցուցաբերել են խորհրդային-ռուսական ընդգծված կողմնորոշում, չեն ընդունել բոլշևիզմի տնտեսական ու քաղաքական համակարգը, օգնել են Հայաստանի տնտեսական վերաշինությանը, սակայն ունեցել են ակնկալիք, որ խորհրդային պետությունը, ի վերջո, թեկուզ մասնակիորեն կլուծի Հայկական հարցը:** Բայց ժամանակի ընթացքում զաղութահայ խորհրդամետ քաղաքական շրջանակները, էական արդյունք չտեսնելով, աստիճանաբար կոշտացնում են իրենց վերաբերմունքը խորհրդային պետության հանդեպ:

Ըստ բոլշևիկ Ս. Կասյանի՝ ազատամտական հոսանքի ամենավառ ներկայացուցիչը դիվանագետ, հրապարակագիր **Գրիգոր Չալխուշյանն** էր, ով, լինելով նախկին դաշնակցական, Հայաստանի խորհրդայնացմամբ հեռանում է նրա շարքերից և աչքի ընկնում ընդգծված հակադաշնակցական կեցվածքով: Այս իմաստով Հայ ռամկավարների և Գր. Չալխուշյանի ազատամտական հայացքները, ըստ էության, նույնանում են: Այսպես կոչված ազատական կամ ազատամտական և դաշնակցական սմենովեխականության համեմատության մեջ Ս. Կասյանը բոլշևիկյան դիրքերից ավելի ձեռնտու

---

[1] Տե՛ս **Կարինյան Ա.**, նշվ. աշխ., էջ 9–10:

էր համարում ազատամիտ հոսանքը, քանի որ «նա իր հերթին պայքարում է Դաշնակցության դեմ»[1]:

Սմենովեխական հայացքների տեսակետից առանձնանում է Չալխուշյանի 1923 թ. ապրիլին արտասահմանում լույս ընծայած «Ի՞նչ էր և ի՞նչ պիտի լինի մեր ուղին» գրքույկը: Նրանում հեղինակը ներկայանում է որպես անկուսակցական, ով 1919 թ. և մինչև 1920 թ. սկիզբը ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի պաշտոն է վարել Դոնի ոչ խորհրդային կառավարությունում: 1920 թ. սկզբներին՝ գեներալ Ա. Դենիկինի կամավորական բանակի պարտությունից հետո, նա վերադառնում է Հայաստան, իսկ նույն թվականի նոյեմբերին անցնում արտասահման: Այնտեղ վերագնահատելով իր հայացքները, տեղի ունեցած իրադարձությունները՝ քաղաքական առումով նա հակվում է խորհրդային կողմնորոշմանը: Իր դիրքորոշումը հիմնավորելու համար Չալխուշյանը հաճախ խտացրած գույներով քննադատության էր ենթարկում Առաջին հանրապետության կառավարության վարած արտաքին ու ներքին քաղաքականությունը: Դա դեռ բավական չէ, նախկին դիվանագետը դիմում էր փաստերի միտումնավոր աղավաղման՝ պնդելով, թե իբր՝ «Կամավորական բանակը ... միշտ մեզ անբարեացակամ էր»[2]: Այնինչ հայտնի է, որ Հայաստանի Հանրապետությունը բավականին լավ հարաբերությունների մեջ է եղել Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների՝ Դոնի, Կուբանի և Թերեքի կառավարությունների հետ: Գեներալ Ա. Դենիկինի կամավորական բանակից Հայաստանը ստացել է հաց, զինամթերք, զինվորական մասնագետներ, վարկ, այնտեղ են ապաստանել հարյուր-հազարավոր հայ գաղթականներ և այլն[3]: Իր հերթին ՀՀ կառավարությունը, պահպանելով չե-

---

[1] *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 237:

[2] Չալխուշեան Գր., *Ի՞նչ էր եւ ի՞նչ պիտի լինի մեր ուղին*, Վիեննա, 1923, էջ 30:

[3] Տե՛ս *Հայոց պատմություն*, հատ. 4, գիրք 1-ին, խմբ. խորհրդի նախագահ Բարխուդարյան Վ., Ե., 2010, էջ 138:

զոքություն, ձեռնպահ է մնացել վրաց-ադրբեջանական հակադենիկինյան գործողություններից: ՀՀ նախկին դիվանագիտական ներկայացուցիչը փոփոխված քաղաքական իրադրության մեջ զարգացնում էր այն միտքը, որ. «Մեզ ամեն գնով պետք էր Խորհրդային Ռուսաստանի կողքին կանգնել ու համակերպուել, քանի որ անոր միջոցով մենք կարող պիտի ըլլայինք պահպանուել մեր անկախութիւնը»[1]: Ինչ վերաբերում է Հայաստանի անկախության պահպանման մասին «դիվանագետի» արտահայտած տեսակետին, ապա հայտնի է, թե Հայաստանի խորհրդայնացումից հետո ինչպես «պահպանվեց» Հայաստանի անկախությունը: Վերջում Գր. Չալխուշյանը կրկին եզրակացնում էր, որ «Միայն Ռուսաստանի գրկին մէջ մենք հնար ունինք ապահով բազմանալ, զարգանալ եւ բարօրութեան հասնիլ»[2]: Գրքույկի ընթերցումից տպավորություն է ստեղծվում, որ այն գրված է քաղաքական պատվերով՝ անսքող հակադաշնակցական և ընդգծված խորհրդամետ դիրքերից: Նման պարագայում Ս. Կասյանի և մյուս բոլշևիկների բնորոշած ազատամտական կոչված հոսանքը, մեր կարծիքով, որևէ աղերս չունի առհասարակ քաղաքական առումով ազատական գաղափարախոսության հետ:

Ամփոփելով Գր. Չալխուշյանի դատողությունները, հարկ է նշել, որ նա Հայաստանի քաղաքական ապագան տեսնում էր դաշնային կառուցվածքով ԽՍՀՄ հովանու տակ: Իր նախկին հայացքներով լինելով ազատական գաղափարների համակիր՝ Գր. Չալխուշյանը չի խոսում Հայաստանի ապագա քաղաքական ու տնտեսական կարգի մասին: Նրա մոտ բացակայում է նաև սմենովեխականներին բնորոշ հին կարգերը վերականգնելու ակնկալիքը: Դրա համար էլ Չալխուշյանի մոտեցումներն ու գնահատականները հիմնականում դրականորեն են արձագանքվել խորհրդային գրականության մեջ:

---

[1] Չալխուշեան Գր., նշվ. աշխ., էջ 31:
[2] Նույն տեղում, էջ 39:

Ու թեև Գր. Չալխուշյանը Դաշնակցությանը սուր քննադատել է անցյալում նրա արածների ու չարածների համար, սակայն նա խոսք չի բացել այդ կուսակցության ապագայի ու հետագա անելիքների մասին:

6. Հովհ. Քաջազնունու վերադարձը Հայրենիք և հետագա ճակատագիրը

ՀՅԴ Վիեննայի 1923 թ. խորհրդաժողովից հետո կուսակցության շարքերից հեռացած Հ. Քաջազնունին ցանկանում էր վերադառնալ հայրենիք: Նոյեմբերի 14-ին Բուխարեստից իր դստերը՝ Մարգարիտային (Մարգոյին) ուղղված նամակում նշում էր, «Մի տենչ ունեմ միայն. վերադառնալ Հայաստան եւ աշխատել հայ ժողովրդի համար, ինչ աշխատանք էլ լինի՝ թէկուզ Երևանի փողոցները սալայատակել ու արխերը կանոնաւորել: Այդ յոյսով էլ ապրում եմ: Եւ կը գամ, հէնց որ ֆիզիքապէս հնարաւոր լինի գալու: Անասելիորեն կարոտել եմ ձեզ ու Հայրենիքիս»[1]: Խորհրդային իշխանությունների համաձայնությամբ և հայրենիքի վերաշինությանն անկեղծ մասնակցելու պատրաստակամությամբ ծերունի ճարտարապետը 1925 թ. հունվարին վերադարձավ Հայաստան[2]: Այդ նպատակով նա դիմել էր Բեռլինում Խորհրդային Միության ներկայացուցչությանը[3]: Արխիվային վավերագրերը ցույց են տալիս, որ Հ. Քաջազնունու Հայաստան վերադարձին նպաստել է ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Ա. Մյասնիկյանը: Նա 1924 թ. սեպտեմբերի 25-ի հեռագրով հայտնում էր, որ ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Քաղբյուրոն չի առարկում, որ Հովհ. Քա-

---

[1] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Հ. Քաջազնունու ֆոնդ, գ. 161, թ. 2:

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 23 հունվարի 1925 թ.:

[3] Տե՛ս Յուշամատեան ՀՅԴ, Ալբոմ-ատլաս, հատ. Բ, Լոս Անճելըս, 2001, էջ 135:

ջազևունին մուտք գործի ԽՍՀՄ սահմաններից ներս[1]: Հ. Քաջազնունու ճանապարհը բաց էր, որովհետև նա կատարել էր իրենից պահանջվող քայլը:

Հարկ է նշել, որ բոլշևիկների կուսակցությունը Հ. Քաջազնունու անձի նկատմամբ առանձնակի թշնամանք չի ունեցել, քանզի նրան կարելի էր բնութագրել ոչ այնքան կուսակցական, որքան պետական մտածելակերպի գործիչ: Անգամ իր վարչապետության օրոք, կարելի է ասել, որ Հ. Քաջազնունին հանդուրժելի է եղել ոչ միայն սովորական քննադատների, այլև անգամ առավել ծայրահեղական ընդդիմություն համարվող բոլշևիկների համար:

Հ. Քաջազնունու Հայաստան վերադարձի վերաբերյալ փոքր տեղեկատվություն է տպագրվել «Խորհրդային Հայաստան» թերթում, «Զրույց Հ. Քաջազնունու հետ» վերտառությամբ: Հայտնվում է, որ 1925 թ. հունվարի 19-ի երեկոյան Թիֆլիսից Երևան է հասել «Դաշնակցությունն անելիք չունի այլևս» գրքի հեղինակ և նախկին դաշնակցական կառավարության նախագահ Հ. Քաջազնունին: Մինչ Հայաստան գալը նա մեկ ամիս ապրել է Թիֆլիսում, ուր զբաղված է եղել իր ընտանիքի գործերի կարգավորմամբ: Կնշանակի, որ Հ. Քաջազնունին խորհրդային երկիր մուտք է գործել 1924 թ. վերջերին: Արմենտայի[2] աշխատակցի այն հարցին, թե «ի՞նչն է ձեր Հայաստան գալու նպատակը, քաղաքացի Քաջազնունին պատասխանել է՝ իմ գալու նպատակը Խորհրդային Հայաստանում աշխատելն է, ես շատ ջերմ ցանկություն ունեմ աշխատելու Հայաստանի շինարարության մեջ իմ մասնագիտության ասպարեզում»[3]:

Հայաստան ներգաղթելուց հետո նրա կյանքի ու գործունեության վերաբերյալ կան հետևյալ սուտ տվյալները: Քաջազնունին

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 19, թ. 159:

[2] «Հայկական հեռագրական գործակալության» ռուսերենի հապավումն է:

[3] «Խորհրդային Հայաստան», 22 հունվարի 1925 թ.:

սկզբում աշխատել է Հայբամբակկոմում որպես բաժնի վարիչ (մինչև 1928 թ.): Այնուհետև դասավանդել է Պետհամալսարանի տեխնիկական ֆակուլտետում, եղել է ՀՍԽՀ Պետպլանի շինտեխնիկական կոմիտեի նախագահի տեղակալ (մինչև 1931 թ.), իբրև քաղաքացիական ինժեներ-շինարար մասնակցել է Լենինականի 1926 թ. երկրաշարժի հետևանքով ավերված քաղաքի շենքերի նախագծման ու վերականգնման աշխատանքներին: 1930 թ. ՀՍԽՀ Լուսժողկոմատի կոլեգիայի որոշմամբ պետհամալսարանի դասախոս Հ. Քաջազնունին ստացել է պրոֆեսորի գիտական կոչում[1]:

Այս ամենի հետ մեկտեղ՝ արխիվային վավերագրերը ցույց են տալիս, որ նա Հայաստան տունդարձի առաջին իսկ օրերից փաստորեն մինչև 1937 թ. հուլիսի 28-ի իր բանտարկությունը հայտնվել է խորհրդային գաղտնի ծառայության խիստ հսկողության տակ: Այսպես՝ Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի գաղտնի բաժնից 1925 թ. հունիսի 27-ին ԿԿ-ի քարտուղար Երեմիա Բակունցին ուղղված գաղտնի գրությամբ հայտնվում էր, որ իրենք գաղտնի կերպով ուսումնասիրում են նախկին դաշնակցական Քաջազնունու և նրան շրջապատողների գործունեությունը, որի մասին հետո մանրամասն կհաղորդվի[2]: Իսկ մեկ տարի անց ՀԱՄԽ-ի նախագահ Պ. Կուզնեցովի (Դարբինյան)՝ Հայկոմկուսի ԿԿ, պատճենը Արտակարգ հանձնաժողովին, հասցեագրված 1926 թ. հունիսի 6-ի գրությունում կարդում ենք. «Վերջին ժամանակներս նկատվում է, որ նախկին դաշնակցական, Հայաստանի վարչապետ Քաջազնունին Հայբամբակկոմում պաշտոնի անցնելուց հետո նրա շուրջը համախմբվում են դաշնակներ և հակահեղափոխական անցյալ ունեցող անձինք»: Գրության վերջում խնդրվում էր՝ «ձեռք առնել միջոցներ վերջ տալու այդ եր-

---

[1] Տե՛ս **Դոլուխանյան Լ.**, *Հովհաննես Քաջազնունին՝ նպաստապետ*, Ե., 1997, էջ 4, 20–21:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 44, թ. 98:

նույթին»[1]: ԿԿ-ի քարտուղար Ե. Բակունցը հունիսի 11-ի ամսաթվով հետևյալ մակագրությունն է թողել Պ. Կուզնեցովի գրության վրա. «Խնդրել ԱՀ-ին (Արտակարգ հանձնաժողովին – Ա.Հ.) հայտնել իր կարծիքը»: Չեկայի նախագահ Ս. Մելիք-Հովսեփյանը (Օսիպով) հունիսի 27-ին պատասխանել է Բակունցին, որ «առայժմս ոչ մի քայլ արված չէ, որ դեռ գաղտնի կերպով ուսումնասիրվում է Քաջազնունու և նրան շրջապատողների գործունեությունը և աշխատանքը, որից հետո մանրամասը կհաղորդենք»[2]:

Ուշագրավ է Հ. Քաջազնունու հանդեպ անվստահության ու հետապնդման մեկ այլ դրվագ: Նրա աշխատավայր հանդիսացող Հայբամբակկոմի մասնաշենքը գտնվել է Երևանի ձեթ-օճառի գործարանին կից: Շենքը ճաք էր տվել ու ձևախախտվել: Դրա պատճառը պարզելու համար ստեղծվել է հանձնաժողով: Փորձ է արվել մեղքը գցել Հ. Քաջազնունու և ևս երկու աշխատակիցների՝ Մելիք-Հայկազյան Մուշեղի և Մելիք-Աղամիրյան Համայակի վրա՝ իբրև խորհրդային իշխանության դեմ վնասարարության գործողություն: Խնդրի քննարկման ժամանակ Հ. Քաջազնունին բացատրություն է տվել, որ շենքի ձևախախտման պատճառ կարող էր լինել ընդերքը. շենքը կառուցելիս հավանաբար երկրաբանական հետազոտման չի ենթարկվել և դա էլ եղել է ճեղք տալու պատճառը: Երկար քննարկումներից հետո, ի վերջո, Հայպետքաղվարչության (ՊՔՎ) տնտեսական գծով (ՅԿՕ) լիազոր Ա. Անանովը քննությամբ պարզում է, որ դրանում հանցակազմ չկա և 1931 թ. փետրվարի 21-ին որոշում է կայացվում վերոհիշյալ երեք անձանց նկատմամբ հարուցված գործը կարճել և հանձնել արխիվ[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 44, թ. 100:
[2] Նույն տեղում, թ. 98:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2082, թ. 39–40, գ. 2083, թ. 66:

Բերված փաստերից դժվար չէ կռահել, որ Հայաստան գալուց ի վեր պետանվտանգության մարմինները ուշի-ուշով հետևել են Հ. Քաջազնունու քայլերին, անգամ նրա անձնական կյանքի առօրյային: Ինչպես նկատում ենք, խորհրդամետ կողմնորոշում ընտրած Հ. Քաջազնունու գլխին աստիճանաբար մութ ամպեր էին կուտակվում, որոնք ավելի խտացան 1930-ական թվականներին:

Չնայած հետապնդում-հալածանքներին՝ պարզվում է, որ խորհրդային իշխանության հանդեպ բարյացակամ տրամադրված նախկին վարչապետը Հայաստանի խորհրդայնացման տասնամյա տարեդարձի առթիվ (1930 թ.) հոդված էր պատրաստել, որը, սակայն, չի տպագրվել[1]: Խորհրդային իրականությունը, ստալինյան պլանով սոցիալիզմ կառուցելու մոլուցքը, հակահեղափոխական, տրոցկիստ ու ազգայնական որակվածների հանդեպ չեկայական հալածանքներն ու բռնությունները, որոնց միամտաբար մասնակցել է անգամ իր հոր դեմ մատնագիր գրած հարազատ որդին՝ կոմերիտական **Կարեն Քաջազնունին**[2], իսկ հետո՝ 1937 թ. հուլիսին, նաև բանտարկությունը խոր հիասթափություն են առաջացնում նրա մոտ:

Հ. Քաջազնունին դուրս էր եկել ՀՅԴ շարքերից և հայրենիք էր վերադարձել նրա տնտեսական վերաշինությանը մասնակից լինելու անկեղծ մտադրությամբ: Բնականաբար, Քաջազնունին ներքուստ պետք է վերանայեր իր դիրքորոշումը՝ ընդունելով, որ ինքը սխալվել է, սակայն արդեն ուշ էր: Ավելին, նա պետք է ոչ միայն ընդուներ իր սխալը, այլև նեղ շրջանակում խոստովաներ այդ մասին: Պարզվում է, որ հենց այդպես էլ եղել է. նա իր սիրտը բացել է հավատարիմ էակի՝ հարազատ դստեր առջև: 1950 թվականին Մարգո Քաջազնունին պատմաբան Դ. Մուրադյանի հետ ունեցած անկեղծ

---

[1] Բգնունի Արտ., *Հայկական «Սմենովեխովականություն»* (տե՛ս «Նոր ուղի», Ե., 1931, գիրք 4, էջ 65):

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, 2083, թ. 4–6:

զրույցում վկայել է. «երբ 1936 թվին՝ Աղասի Խանջյանի սպանությունից հետո, սկսվեցին զանգվածային բանտարկությունները, հայրս խիստ շփոթվել էր և տխուր էր: Նա հավատացած էր, որ իրեն ևս կբանտարկեն: Մտերիմ ընկերներն ասում էին, որ չպետք է գար Հայաստան, բայց հայրս պատասխանում էր՝ պետք է գայի, բայց այդ գիրքը չպետք է գրեի: Նա ասում էր՝ ես խիստ զղջում եմ: Խոսակցության վերջում Մարգո Քաջազնունին ավելացրեց. «Հայրս շատ էր ափսոսում, որ գրել է այդ գիրքը»[1] (ընդգծումը մերն է – Ա.Հ.):

Այդ գրքի կապակցությամբ ակադեմիկոս Հ. Սիմոնյանը կարծիք հայտնելով նշում է, որ հետագայում խորհրդային բանտ նետված Քաջազնունին պիտի խոստովաներ, որ «Դաշնակցությունը դեռ անելիք ունի»[2]: Շատերի պես Հ. Քաջազնունու գլխին ևս կախվեցին սև ամպեր: 1937 թ. հուլիսի 28-ին ՆԳ ժողկոմիսար Խ. Մուղդուսու ստորագրությամբ տրվեց օրդեր (թիվ 6/41) Հ. Քաջազնունու բնակարանը խուզարկելու և ձերբակալելու մասին[3]: ՀԽՍՀ ՆԳԺԿ Եռյակը 1937 թ. դեկտեմբերի 5-ին Հ. Քաջազնունու՝ որպես ակտիվ դաշնակցականի, նախկին վարչապետի հանդեպ կայացրեց մահապատժի դատավճիռ՝ անձնական գույքի բռնագրավումով: Սակայն նրա մոտ տուբերկուլյոզ ախտորոշած բանտային բժշկի եզրակացության հիման վրա գնդակահարությունը հետաձգվեց: Եվ կարճ ժամանակ անց՝ 1938 թ. հունվարի 15-ին, Երևանի բանտային հիվանդանոցում

---

[1] **Մուրադյան Դերենիկ**, *Հովհաննես Քաջազնունու ողբերգությունը. հիշողություններ և խոհեր*, «Երկիր», ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի պաշտոնաթերթ, Ե., 3 մարտի 2006 թ., N 6, էջ 11:

[2] **Սիմոնյան Հր.**, *Անդրանիկի ժամանակը*, հ. Բ, Ե., 1996, էջ 760:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 18:

70 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց Հայաստանի Առաջին հանրապետության վարչապետ Հ. Քաջազնունին[1]:

*

* *

ՀՅԴ քայքայման նպատակով գործում էր խորհրդային կուսակցական-պետական ճնշիչ մեքենան և դրա առաջին շարքում՝ Չեկան՝ Պետքաղվարչությունը: Նրա մարմինները դաշնակցական և այլ նախկին կուսակցությունների առանձին գործիչների ու մտավորականների զցում էին իրենց ցանցը, ստիպում հանդես զալ մեղայականներով, մեղադրում նացիոնալիզմի, դաշնակիզմի, սմենովեխականության մեջ և այլն: Ընդ որում, այդ աշխատանքները տարվում էին ոչ միայն խորհրդային երկրում, այլև արտասահմանում՝ դեսպանատների ու հյուպատոսարանների, անվտանգության մարմինների, ՀՕԿ-ի, զաղտնաընթերցումների, մարդկանց հավաքագրման, պետական ֆինանսավորմամբ գրքերի ու թերթերի, քարոզչական բնույթի հրատարակությունների միջոցով:

Այս և այլ մեթոդների կիրառման արդյունքում ելույթներով, գրքույկներով և մեղայականներով հանդես եկան և ՀՅԴ-ից հեռացան կամ հեռացվեցին ոչ միայն Հ. Քաջազնունին, այլ նաև Սնար Սնարյանը (Նարինյան), Սահակ Չիթչյանը, Արշակ Ղազարյանը, Գերասիմ Աթաջանյանը, Հարություն Բուդաղյանը, Սահակ Թորոսյանը և ուրիշներ:

Առանձնապես նվաստացուցիչ էր ՀՀ կառավարության նախկին նախարար, Արարատյան նահանգի նախկին նահանգապետ,

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 22–23: Հ. Քաջազնունին արդարացվել է 1992 թ. ՀՀ գլխավոր դատախազ **Արտավազդ Գևորգյանի** հաստատմամբ: Նրա քր. գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով (տե՛ս նույն տեղում, թ. 77): Հ. Քաջազնունու մեծ ողբերգության մասին գրքի վերջում հանգամանորեն տե՛ս **ՀԱՎԵԼՎԱԾ 2** :

խորհրդարանի պատգամավոր, «ձախ» հայացքներով հայտնի, ծնունդով Փարպի գյուղից Սահակ Թորոսյանի «ողիսականը»[1]:

«Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթը տեղեկացնում էր, որ 1926 թ. հունվարի 22-ին Ս. Թորոսյանը մեղայականով դիմել է Անդրկովկասյան Դաշնության ԿԳԿ-ի և ՀՍԽՀ ԿԳԿ-ի նախագահություններին և Քաջազնունու օրինակով ինքը ևս «զղջում է իր նախկին հանցանքները» ու «պատրաստակամություն է հայտնում ազնվորեն ծառայելու բանվորների և գյուղացիների իշխանությանը»: Դիմումի մեջ վերաշարադրանքի ձևով հայտնվում էր, որ ուրախությամբ է իմացել 1926 թ. հունվարի 25-ին Երևանում Անդր. ԿԳԿ-ի նստաշրջանի բացվելու մասին: Դրա համար էլ ինքը ողջունում է այդ քայլը և հայտնում, որ այս ընթացքում չի հեռացել Հայաստանից, բանտարկվել է, հարկադիր աշխատանքներ է կատարել և այժմ հանգել է վերջնական հետևության, որ Դաշնակցությունը այլևս անելիք չունի, որ հայ ժողովրդի ապահովության երաշխիքը բանվորագյուղացիական պետության կարմիր դրոշակն է: Նա խնդրում է հաշվի առնել իր կրած պատիժները, իրեն ազատել կալանքից, և որ ինքը ազնվորեն կծառայի ՀՍԽՀ հայրենիքին: Հայաստանի ԿԳԿ-ը, նկատի առնելով, որ Ս. Թորոսյանը խորապես զղջում է իր «հանցանքները» և հեռանում է ՀՅԴ-ից, ուստի նրան ներում է շնորհում[2]:

---

[1] Պարզվում է, որ 1921 թ. Փետրվարյան ապստամբությունից հետո նա խորհրդային երկրից չի հեռացել: Նրա ասելով 4 անգամ բանտարկվել է, հիվանդացել է, գտնվել է Ռուսաստանի բանտերում, Պետրովսկի ճամբարում, մինչև իսկ Սիբիրի Տոմսկ քաղաքում՝ որպես ազատ աքսորյալ, կատարել է հարկադիր աշխատանքներ և այլն: 1936 թ. վերջին Ս. Թորոսյանը վերադարձել է Հայաստան, սակայն 1938 թ. գարնանը նորից է ձերբակալվել՝ մեղադրվելով հակահեղափոխական կազմակերպության մասնակցելու մեջ: Քաղբանտարկյալ Ս. Թորոսյանը մահացել է 1940 թ. Երևանի բանտային հիվանդանոցում: տե՛ս ՀԱԱ, ֆ. 1422, ց. 1, գ. 22, թ. 1–3, **Թորոսեան Ս.**, **Գերասիմ.**, *Ինչո՞ւ հարամարվեցինք*, Բարիզ, 1926, էջ 14, 21, տե՛ս նաև՝ «Երկիր», Ե., 2004, 28 մայիս – 3 հունիս (թիվ 20):

[2] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 18 ապրիլի 1926 թ.:

Ս. Թորոսյանի դիմումի կապակցությամբ Ս. Վրացյանը, Ս. Մասուրյան գրական կեղծանունով, կարծիք էր հայտնել, որ դիմումում արծարծված մտքերը Չեկայի հարկադրանքով են գրվել, որ Ս. Թորոսյանը չէր կարող նման թուղթ գրած լիներ: Իսկ Թորոսյանն էլ՝ «Իմ պատասխանը Ս. Մասուրյանին» հոդվածում, պնդում էր, որ դիմումը ինքը գրել է իր կամքով և ստորագրել[1]:

ՀՅԴ-ից հեռանալու վերաբերյալ, 1926 թ. հունիսի 2-ին հայտարարությամբ, հանդես է եկել 10-րդ Ընդհ. ժողովի մասնակից, Զանգեզուրի ազատագրական պայքարի ճանաչված գործիչ, Գ. Նժդեհի զինակից ընկեր Գերասիմ Աթաջանյանը (Ղափանցի Գերասիմը): Դաշնակցության գաղափարական հակառակորդ ռամկավարների Փարիզի «Ապագա» թերթում տպված և Փարիզի բոլշևիկամետ «Երևան» թերթում արտատպված Դաշնակցությունից հեռանալու վերաբերյալ Գ. Աթաջանյանի հայտարարության մեջ նշվում է, որ ինքը իբր՝ հանգել է այն եզրակացության, որ «հայ ժողովրդի գոյությունը ապահովված է խորհրդային իշխանության հովանավորութեան տակ»[2]:

Մեզ հայտնի չէ՝ արդյոք Գ. Աթաջանյանի դիմումը կուսակցության կողմից ընդունվե՞լ է, թե՞ ոչ, որովհետև ՀՅԴ Բյուրոն և թերթերը պատասխան չեն տվել նրա այդ հայտարարությանը[3]: Իրականությունն այն է, որ ՀՅԴ բոլոր գործիչները ցավով են արձանագրել հայ ազգային-ազատագրական պայքարի ազնիվ և նվիրված դեմքերից մեկի հեռանալը Դաշնակցության շարքերից: Սակայն, եթե հավատանք Բեռլինում Անդրդաշնության ներկայացուցիչ Ս. Փիրումյանի ՀԿ(բ)Կ ԿԿ ուղարկված 1926 թ. հունիսի 14-ի նամակին՝ Դաշնակ-

---

[1] Այդ մասին հանգամանորեն տե՛ս **Թորոսեան Ս., Գերասիմ**, *Ինչո՞ւ հրաժարվեցինք*, Բարիզ, 1926, էջ 4–21:

[2] «Ապագա», Բարիզ, 16 հունիսի 1926 թ., **Թորոսեան Ս., Գերասիմ**, Ինչո՞ւ *հրաժարվեցինք*, Բարիզ, 1926, էջ 30:

[3] Տե՛ս *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 225:

ցությունից հեռանալու գործում Գ. Աթաջանյանի հետ որոշակի աշխատանք է տարել վերոնշյալ «Երևան» թերթի խմբագիր Եղիա Չուբարը[1]:

Գերասիմի մտափոխությունը բոլշևիկների կողմը համոզիչ է թվում նրանով, որ հակառակ դեպքում նրա հայտարարությունը չէր տպագրվի խորհրդամետ այդ թերթերում: Սակայն, ինչ էլ որ եղած լինի, մեր կարծիքով՝ Գ. Աթաջանյանի հայտարարությունը ՀՅԴ-ից հեռանալու վերաբերյալ որևէ կապ չի ունեցել խորհրդամետ մտայնության և «սմենովեխականություն» կոչված երևույթի հետ: Բոլշևիկների հետ հարաբերվելու նրա իրական նպատակն է եղել՝ կարողանալ խորհրդային բանտից ազատել իր դաշնակցական ընկերներին, ինչպես նաև արտասահման փոխադրել ընտանիքն ու հարազատներին: Բայց 1928 թվականին, մեկ այլ տեղեկությամբ՝ 1929 թ. սեպտեմբերին, երկրորդ անգամ պետական սահմանն անցնելիս՝ դեպի Պարսկաստան վերադարձի ժամանակ, նա գետում զոհվել է ռուս սահմանապահների գնդակից, 40 տարեկան հասակում[2]:

7. Իրանահայ հոսանքը

Պարզվում է, որ Հ. Քաջազնունուց զատ՝ խորհրդային պետության նկատմամբ ոչ պակաս հաշտվողական ու բարյացակամ դիրքորոշում է հայտնել ՀՅԴ երկարամյա գործիչ, ՀՀ խորհրդարանի անդամ, բժիշկ **Արշակ Ղազարյանը**: Հ. Քաջազնունու զեկուցում-դիմումին գրեթե զուգահեռ, 1923 թ. մարտին՝ փաստորեն ՀՅԴ Վիեննայի խորհրդաժողովից առաջ, Ա.Ղազարյանը գրել է մի զեկուցում, որը գրքույկի ձևով 1924 թ. լույս է տեսել Թեհրանում «Ազատութեան ու-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 213–215:

[2] Տե՛ս *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 228–229 և 338. «Յուշամատեան ՀՅԴ», Ալբոմ-ատլաս, հատ Բ. Լոս Անճելըս, 2001, էջ 224:

ղին և հայի քաղաքական վսրքագիծը» խորագրով: Ինչպես հեղինակն է նշում գրքույկի «Երկու խոսքում», այն գրել է թուրքահայ դատի հարցում Լոզանի կոնֆերանսի թողած ծանր տպավորությունների տակ: Գրքույկում Ա. Ղազարյանը նախ անդրադառնում է Հայկական հարցի ձախողումների վրա՝ պատճառ համարելով թե՛ ՀՅԴ «անիրատես քաղաքականությունը» և թե՛ մեծ տերությունների վարքագիծը: Ըստ Ա. Ղազարյանի՝ «Միացեալ անկախ Հայաստանի ակտը, որ ընդունեց Հ.Յ. Դաշնակցութիւնը 1919 թւին, չէին բխում իրական տեսակներից, հետևապէս այդ ակտը միայն գրգռումների առիթ տուեց և էլ աւելի նպաստեց հարևան թշնամի ոյժերի ոխակալութեանը»[1]: Հարկ է նկատել, որ Միացյալ և Անկախ Հայաստանի ծրագրային պահանջից Ա. Ղազարյանը Հ. Քաջազնունու համեմատ ավելի հետ էր նահանջում: Ի տարբերություն Հ. Քաջազնունու՝ նա փաստորեն հրաժարվում էր 9-րդ Ընդհ. ժողովի որդեգրած գերագույն հիմնադրույթից՝ Միացյալ և Անկախ Հայաստանի ծրագրային պահանջից, ինչը, կարծում ենք, գործնականում նրան դուրս էր դնում կուսակցության շարքերից:

Հանդես գալով որպես ռուսական կողմնորոշման ընդգծված կողմնակից՝ նա քննադատում էր արևմտյան երկրների վարած քաղաքականությունը Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ և քննելով բոլոր հանգամանքները՝ հանգում էր այն հետևությանը, որ հայ ժողովրդի ֆիզիկական գոյության ապահովման, նրա տնտեսական ու կուլտուրական զարգացման միակ ուղիղ ճանապարհը կարող է լինել բոլշևիկյան Ռուսաստանը[2]: Մեկ այլ տեղ նա ավելացնում էր. «Վերջնականապէս պիտի ընդունենք այն ճշմարտութիւնը, որ **առանց Ռուսաստանի հայ ժողովուրդը փրկութիւն չունի** (ընդգծումը

---

[1] Ղազարեան Ա., *Ազատութեան ուղին և հայի քաղաքական վարքագիծը*, Թէհրան, 1924, էջ 11:

[2] Նույն տեղում, էջ 28–29:

մերն է – Ա.Հ.)»[1]: Տասնամյակների դաշնակցական գործչի սույն դատողությունները կարելի է ասել, որ ոչնչով չեն տարբերվում անցյալի ու ներկայի ցանկացած կոմունիստի մտածելակերպից: Ահա թե ինչի էր հանգել «սմենովեխականի» որակում ստացած՝ հին դաշնակցական, Պարսկաստանում ապաստանած բժիշկ Ա. Ղազարյանը:

Այս կապակցությամբ տեղին է հիշեցնել, որ Եգիպտոսի ՀՅԴ «Յուսաբեր» պաշտոնաթերթի 1926 թ. 114-րդ համարում ՀՅԴ գործիչ, ՀՀ նախկին նախարար Արշակ Հովհաննիսյանը (Ա. Արշակունի) իր «Հավատուրացը» վերտառությամբ հոդվածում շատ սուր որակումներով քննադատության է ենթարկել Ա. Ղազարյանին՝ իր նոր հայացքների ու դիրքորոշման համար: Արշակունին այպանում էր Հայ Դատը ուրացած, 30 արծաթով իր խիղճը վաճառքի հանած, «օձի պես շապիկը փոխած», բոլշևիկներին վարձված հավատուրաց Ա. Ղազարյանին[2]:

Իր հերթին՝ ինքնապաշտպանության նպատակով Ա. Ղազարյանը իր խմբագրած խորհրդամետ «Նոր գաղափար» հանդեսում պատասխան հրապարակմամբ փորձում էր հիմնավորել իր մոտեցումները, սակայն, մեր կարծիքով, ոչ այնքան համոզիչ[3]: Ա. Ղազարյանն այնքան էր կտրվել իրականությունից, որ մեկ-երկու տարի անց դրականորեն էր արտահայտվում անգամ խորհրդային պետության «բարեկամ» քեմալական Թուրքիայի մասին: «Քաղաքագետ» Ա. Ղազարյանը քեմալական շարժումը «Տաճկական մեծ հեղափոխութիւն» էր անվանում, որով, ըստ նրա, Թուրքիան «էապես բա-

---

[1] Նույն տեղում, էջ 44–45:

[2] Տե՛ս «Յուսաբեր», Գահիրե, 14 օգոստոսի 1926 թ. (թիվ 114):

[3] Ղազարեան Ա., *Հ.Յ. Դաշնակցութեան դերի քաղաքականութիւնը*, տե՛ս «Նոր գաղափար», Ա տարի, Բ մաս, Թէհրան, 1927, էջ 225–236: «Նոր գաղափար»-ը համարվել է դարձյալ Ա. Ղազարյանի կողմից հրատարակվող «Գաղափար» թերթի հավելվածը: Տեղեկացնենք, որ «Նոր գաղափար»-ի կազմի վրա նշված է որպես 1927 թ. հրատարակություն, սակայն տիտղոսաթերթում՝ 1926 թ.:

բեփոխվում ու եվրոպականանում է»[1]: Այն ժամանակ էլ քեմալական Թուրքիայի եվրոպականացման կեղծ շղարշը մոլորեցնում էր հայ սմենովեխականներին և ոչ միայն նրանց: Հիմա էլ մեզանում ոմանց մոտ շարունակում է պահպանվել այդ խաբկանքը:

Տնտեսական բարեփոխումների ստումով հիմք ընդունելով ՆԷՊ-ի քաղաքականությունը՝ Ա. Ղազարյանը ակնկալում էր, որ բոլշևիկների դիրքորոշումը կփոխվի դրականապես: Նրա կարծիքով՝ եթե բոլշևիկները սկզբնական շրջանում ներքին և արտաքին թշնամի ուժերին ճնշելու համար դիմել են սուր ու դաժան միջոցների, որպեսզի հեղափոխության հաղթանակը ամրապնդվի, սակայն ներկայումս նրանց վարքագիծը փոխվել է, ավելի մեղմացել են, շատ սկզբունքներ, որոնք բուրժուական էին համարվում, այսօր նորից կյանքի են կոչում և այլն»[2]: Ռուսամետ ու խորհրդամետ դիրքորոշում ցուցաբերող նախկին դաշնակցականը ոչ միայն լավատես էր Խորհրդային Հայաստանի վերաշինության հարցում, այլև հայ մյուս սմենովեխականների նման միամտորեն կարծում էր որ. «վաղը նույն Ռուսաստանի կողմից, հարկադրանքի տակ թէ խաղաղ ճանապարհով, հայ ժողովրդին կվերադարձուի իր պատմական հայրենիքը»[3]:

Ահա հիմնականում այսպիսի դիրքորոշումներ ու եզրահանգումներ է բովանդակում Ա. Ղազարյանի հրատարակած գրքույկը: Հեղինակը նպատակ է ունեցել հիշյալ գրքույկն ուղարկել ՀՅԴ 10-րդ Ընդհ. ժողովի քննությանը: Հատկանշական է, որ եթե Հ. Քաջազնունու գրքույկ-դիմումը ուղղված էր ՀՅԴ Վիեննայի 1923 թ. խորհրդա-

---

[1] **Ղազարեան Ա.**, *Հ.Յ. Դաշնակցութեան սրտի քաղաքականութիւնը*, (տե՛ս «Նոր գաղափար», Ա տարի, Բ մաս, Թէհրան, 1927, էջ 235–236:

[2] **Ղազարեան Ա.**, *Ազատութեան ոգին և հայի քաղաքական վարքագիծը*, Թէհրան, 1924, էջ 29–30:

[3] Նույն տեղում, էջ 45: **Ղազարեան Ա.**, *Հ.Յ. Դաշնակցութեան սրտի քաղաքականութիւնը*, Թէհրան, 1928, էջ 10:

ժողովին, ապա Ա. Ղազարյանի գրքույկը՝ ՀՅԴ 1924/1925 թթ. 10-րդ Ընդհ. ժողովին:

Բացի նշված գրքույկից՝ Ա. Ղազարյանը 1924 թ. ամռանը Փարիզում ՀՀ ներկայացուցիչ Ալ. Խատիսյանին է ուղարկել մի գրություն «Մոմենտը պահանջում է» վերտառությամբ՝ իբրև լրացուցիչ պարզաբանում իր գրքույկում արտահայտած մտքերի: Գրությունը գրքույկի հետ միասին ուղարկվել է նախկին վարչակետ Ալ. Խատիսյանին, որպեսզի դրանք հանձնվեն Ընդհ. ժողովի դիվանին ի քննություն՝ որպես անհատ ընկերոջ կարծիք: Ի դեպ, «Մոմենտը պահանջում է» գրության մեջ Ա. Ղազարյանը դիմում էր Խատիսյանին՝ իբրև իր սիրելի բարեկամի, որպեսզի նա համոզի ընկերներ Համոյին, Սիմոնին, Ռուբենին և մյուսներին Ընդհ. ժողովում հասնելու նրան, որ ճանաչվի Խորհրդային Հայաստանը[1]: Ա. Ղազարյանի այդ գրությունը լույս տեսավ գրքույկի ձևով: Դրանում նա կտրական անհամաձայնություն էր հայտնում ՀՅԴ ղեկավարության վարած քաղաքականությանը, որով «աւելորդ տեղը թումբ է կանգնում Մանուկ Հայաստանի հանդէպ»[2]:

Սակայն, ի տարբերություն Հ. Քաջազնունու՝ Ա. Ղազարյանը գտնում էր, որ Դաշնակցությունը դեռևս պետք է ապրի, նա անելիք ունի: Այս կապակցությամբ չի կարելի համաձայնել խորհրդային կուսակցական-պետական գործիչ, հրապարակագիր Ա. Կարինյանի արտահայտած այն մտքին, թե իբր Ա. Ղազարյանը նույնպես հաստատել է Հ. Քաջազնունու տեսակետը, որ «Դաշնակցությունը ոչ մի անելիք չունի հայ կյանքում»[3]: Ա. Ղազարյանը նշում էր, որ ինքը կարդացել է Քաջազնունու գիրքը և չի հավանել ոչ թե նրա համար, որ ճշմարտություն չի պարունակում, այլ այն իմաստով, որ «Դաշ-

---

[1] Տե՛ս Ղազարեան Ա., *Մոմենտը պահանջում է*, Թէհրան, 1925, էջ 19:
[2] Նույն տեղում, էջ 2:
[3] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 217, թ. 1–2, «Խորհրդային Հայաստան», 1924 թ., թիվ 270:

նակցութիւնը հէնց այսօր է, որ բան ունի անելու»[1]: Նա դիմում էր Ալ. Խատիսյանին, որ կուսակցությունը պետք է համագործակցի բոլշևիկների հետ՝ հանուն հայրենիքի վերաշինության, որ «Հ.Յ. Դաշնակցութիւնն այսօր առաւել քան երբէք անելիք ունի: Մենք ենք, որ մեր արտասահմանեան կուռ կազմակերպութիւնների միջոցով կարող ենք օգնել Խորհրդային Հայաստանին», որ «գաղթականական խնդիրը Հ.Յ. Դաշնակցութիւնը միայն կարող է արմատապէս վճռել. նա կարող է ցրիւ դրսի հայութիւնը Մայր հայրենիք կենտրոնացնել»[2]: Գրքույկում Ա. Ղազարյանը նաև կոչ էր ուղղում գաղութահայությանը. «ճանաչել Սովետական Հայաստանը՝ համարելով այն լավագույն իրավակարգը, որի մեջ միայն հայ ժողովուրդը կարող է գտնել ինչպես իր ֆիզիկական գոյության պահպանումը, նմանապես և իր ինքնուրույն կյանքի լայնորեն զարգացումը»[3]:

Ա. Ղազարյանը հույսեր չէր փայփայում, թե խորհրդային երկիրը դարձ կկատարի դեպի հին կարգեր: Սակայն նա խորհրդային պետությունը տեսնում էր հետագա կատարելագործման, ներքին օրենքների հղկման, իրավական և տնտեսական բարեփոխումների մեջ: Նա ընդունում էր խորհրդային համակարգը՝ հետագա բարեփոխման հեռանկարով. «այն ժամանակ նոր խօսք կարող է լինել Անկախ Սովետական Հայաստանի մասին»[4]: Գրություն-գրքույկի վերջում հեղինակը կատարում է եզրահանգումներ՝ Ընդհ. ժողովին ուղղված մի քանի առաջարկություններով: Նա կարծում էր, որ Դաշնակցությունն ունի անցյալի խոշոր փորձ գաղթականության, հայահավաքման և մի շարք այլ խնդիրներին. «ընթացք տալու, ինչպէս և

---

[1] **Ղազարեան Ա.**, *Մոմենտը պահանջում է*, Թէհրան, 1925, էջ 4:
[2] Նույն տեղում, էջ 6:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 51, թ. 5:
[4] **Ղազարեան Ա.**, *Մոմենտը պահանջում է*, Թէհրան, 1925, էջ 22:

բաւականաչափ հմայք իրեն լսելի անելու համար: Այս իսկ տեսակէտից Հ.Յ. Դաշնակցութիւնը՝ որպէս կուսակցութիւն, պիտի մնա»[1]:

Ա. Ղազարյանը 10-րդ Ընդհ. ժողովից պահանջում էր. ա) ճանաչել անվերապահորեն Խորհրդային Հայաստանը, բ) հայ ժողովրդի բախտը կապել ռուս ժողովրդի բախտին և գ) թուրքահայ գաղթականների տեղավորման, ինչպես և հայահավաքման գաղափարի համար Հայաստանի Սովետական կառավարության հետ անմիջապես համաձայնության գալ[2]: Ի տարբերություն Քաջազնունու՝ Ա. Ղազարյանը գտնում էր, որ Դաշնակցության կարելիությունները (հնարավորությունները) պետք է օգտագործել խորհրդային երկրի զորեղացման նպատակով:

Իր գրվածքների ու հայացքների համար ՀՅԴ 10-րդ Ընդհ. ժողովը Ա. Ղազարյանին վտարում է կուսակցության շարքերից: Վերջինս կուսակցությունից իրեն վտարելու հիմնական դրդապատճառը համարում էր այն, որ ինքը համարձակություն է ունեցել գրելու, որ «-Վերջնականապէս պիտի ընդունենք այն ճշմարտութիւնը, որ առանց Ռուսաստանի հայ ժողովուրդը փրկութիւն չունի»[3]: Սակայն մեր կարծիքով, կուսակցությունից նրա հեռացման գլխավոր պատճառը, ինչպես արդեն ասվել է, եղել է կուսակցության ծրագրային կարևոր պահանջից նրա հրաժարվելը: Բացի այդ՝ տվյալներ կան, որ Ա. Ղազարյանը գործակցել է Պարսկաստանում ԽՍՀՄ դեսպանատան հետ, հավաքագրվել խորհրդային հետախուզության կողմից[4]: Վերջինիս աշխատակիցները աշխատել են օգտագործել Ա. Ղազարյանի ազդեցությունը Դաշնակցությունը կազմալուծելու նպատակով:

---

[1] Նույն տեղում, էջ 23:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] **Ղազարեան Ա.**, *Հ.Յ. Դաշնակցութեան սրբոյ քաղաքականութիւնը*, Թէհրան, 1928, էջ 9:

[4] Տե՛ս **Агабеков Г.С.**, *Записки чекиста*, Париж, 1930. с. 131–133.

Իսկապես Պարսկաստանում ԽՍՀՄ լիազոր-ներկայացուցիչ Կ. Յուրենևի և Հայկական գործերի գծով քարտուղար Ս. Առաքելյանի ստորագրությամբ՝ Մոսկվա՝ Ս. Պաստուխովին և Երևան՝ Ս. Համբարձումյանին ու Ա. Հովհաննիսյանին 1925 թ. օգոստոսի 18-ին Թեհրանից թիվ 113 գաղտնի գրությամբ տեղեկացվում է, որ Ա. Ղազարյանի նախագահությամբ ստեղծվել է «եռյակ», որը տանելու է հակադաշնակցական աշխատանք, դեսպանատան ֆինանսավորմամբ հրատարակվել է «Գաղափար» թերթը[1], բժիշկը ձեռնարկել է «Երիտասարդական միության» ստեղծումը և այլն[2]: Եթե համեմատում ենք Հ. Քաջազնունու և Ա. Ղազարյանի հեռացումը Դաշնակցություն կուսակցությունից, ապա առաջինի հեռանալը տեղի է ունեցել խաղաղ և կամավոր, իսկ երկրորդինը՝ վճռական ու աղմկալի: Ինքնին հասկանալի է, որ Հ. Քաջազնունին չէր կարող լինել մի կուսակցության մեջ, որը, ըստ նրա, պետք է վերանար:

Պետք է ասել, որ ՀՅԴ արտասահմանի կառույցներում, անշուշտ, եղել են Ա. Ղազարյանի մտայնության փոքրաթիվ այլ հետևորդներ: Նրա ազդեցությամբ՝ սմենովեխական-հաշտվողական մտայնությանը տուրք տվեց Զանգեզուրի երբեմնի վարչապետ Գեղեոն Տեր-Մինասյանը: Թեհրանում լույս տեսնող խորհրդամետ «Գաղափար» թերթում տպագրվեց նրա նամակը, որում պաշտպանվում էր Ա. Ղազարյանի տեսակետը. «Այսօրվա Հայաստանի իրավակարգը անհրաժեշտ է հայ ժողովրդի ֆիզիկական գոյութեան, ինչպես և նրա տնտեսական-կուլտուրական զարգացման համար»[3]: Իրենց ձախ հայացքների համար Դաշնակցությունից հեռացվում են

---

[1] Թերթի ամսական ծախսը Չեկայի վրա նստում էր 100 դոլար (տե՛ս *Հ.Յ. Դաշնակցությունը գաղտնիքներում*, էջ 11):

[2] *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 310–311:

[3] «Գաղափար», Թեհրան, 23 դեկտեմբերի 1925 թ.:

նաև հայկական «Մինարեթ» թերթի խմբագիր, «ձախ» դաշնակցական Առաքել Հարությունյանը և Ավետիս Օհանջանյանը[1]:

Ինչպես ասվեց, տվյալներ կան, որ ՀՅ Դաշնակցության առանձին ներկայացուցիչներ ճնշումներով, հարկադրանքով, կաշառքով և այլ միջոցներով հավաքագրվել են խորհրդային գաղտնի ծառայությունների կողմից: Այսպես, ՀՅԴ 10-րդ Ընդհ. ժողովի պատգամավոր Աշոտ Արծրունու (Աշոտ Տուլյան)[2] տվյալներով Հարություն Բուդաղյանը (Բուդաշկո) եղել է Չեկայի գործակալ: Իր իսկ ասելով՝ ՀՅԴ 10-րդ Ընդհ. ժողովից հետո՝ 1925 թ., նա հեռացել է կուսակցության շարքերից: Հայտնվում է նաև, որ Մ. Խուշոյանի[3] հայտնի սպանության գործով 1926 թ. հոկտեմբերին Երևանում անցկացված դատավարության ժամանակ նա ցուցմունքներ է տվել Դաշնակցության դեմ[4]: Վտարանդիության շրջանում Հ. Բուդաղյանը հանդիսացել է Թավրիզում գործող ՀՅԴ երկու ԿԿ-ներից մեկի՝ «Նաիրի» կոմիտեի լիազոր ներկայացուցիչը: Այդ երկու ԿԿ-ները՝ հինը և վտարանդիներից կազմված «Նաիրին», գտնվել են մշտական հակամարտության մեջ[5]:

Խորհրդային վարչակարգին համակերպվող, այսպես կոչված, Հայկական սմենովեխական դիրքորոշմանը հետևող դեմքերից կա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 211, թ. 2, նաև՝ *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 294:

[2] **Աշոտ Արծրունի (Տուլյան)** (1902–1979 թթ.), ծնված Քանաքեռ ավանում, եղել է ՀՅԴ աշակերտական և ապա ուսանողական միությունների ղեկավար անդամ. մասնակցել է ՀՅԴ 10-րդ Ընդհ. ժողովին, մի քանի անգամ գաղտնի վերադարձել է Հայաստան, տարել ընդհատակյա կուսակցական աշխատանք (տե՛ս Յուշամատեան ՀՅԴ, Այրում-ատլաս, հատ. Բ, Լոս Անճելըս, 2001, էջ 224):

[3] Խոսքը վերաբերում է Ն. Աղջաղայա (Ն. Բազմաբերդ) գյուղի գյուղխորհրդի քարտուղար Մանուկ Խուշոյանի սպանությանը: Այդ մասին կիսասվի հաջորդ գլխում:

[4] Տե՛ս *Դաշնակցական տերրորիստների գործը (Հատված Մ. Խուշոյանի տերրորիստական սպանության դատաքննությունից)*, Ե., 1927, էջ 141–164:

[5] *Հ.Յ. Դաշնակցությունը ԽՍՀՄ Արտակարգ հանձնաժողովի և Պետական քաղաքական վարչության գաղթականներցումներում (1920-ական թթ.), փաստաթղթերի ժողովածու*, կազմող և խմբագիր՝ պրոֆ. **Ղազախեցյան Վ.Ն.**, Ե., 2016, էջ 38–39:

րելի է նշել նաև Թեհրանում հրատարակվող «Նոր գաղափար» հանդեսի աշխատակիցներ Ս. Բաղդասարյանին, Ա. Պետրոսյանին, Ռ. Աբրահամյանին և ուրիշների: Սրանք ևս սկզբունքորեն ընդունում էին խորհրդային քաղաքական համակարգը և ակնկալում էին, որ այդ պետությունը լուծում կտա հայ ազգային դատին: Օրինակ՝ Ս. Բաղդասարյանն իր հոդվածներից մեկում դրվատում էր կոմունիստներին, որ նրանք փրկել են հայությանը և կառուցում են նոր ու կանոնավոր երկիր: Բայց և միաժամանակ հիշեցնում էր «հին դատի» և «վեց վիլայեթների» հարցի լուծման անհրաժեշտության մասին[1]: «Յուսաբեր»-ի խմբագիր Վ. Նավասարդյանը, թերթի խմբագրականում վերագնահատելով Հայաստանի խորհրդայնացման, ինչպես նաև խորհրդային երկրում և աշխարհում տեղի ունեցող արտաքին ու ներքին բնույթի իրադարձությունների ազդեցությամբ Հ Յ Դաշնակցություն կուսակցության շարքերում դրսևորվող նման երևույթները, թվարկում էր Դաշնակցությունից դավանափոխված մի քանի անձանց անուններ՝ Հովհ. Քաջազնունի, Սիմ. Հակոբյան, Սնար Նարինյան, Ս. Չիթչյան, Ա. Ղազարյան և այլք: «Ասոնք,- գրում է նա,- պարզապես կաթիլ մըն են այն ծովի մէջ, որ Դաշնակցութիւն կը կոչուի»: Ուստի. «Կեանքը կուգա վկայելու, որ Դաշնակցութեան գերեզմանը կը փորէ այն ուժը միայն, որ յարութիւն կուտայ անոր հալածական գաղափարներուն: Ու քանի դեռ այս չէ եղած, ուրեմն պիտի ապրի եւ պիտի մնայ ինքը Դաշնակցութիւնը՝ իր իսկ ձեռքերով իրագործելու համար հայութեան դարաւոր Երազը»[2]:

Հանրագումարի բերելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել.

– Սմենովեխականությունը համառուսաստանյան երևույթ էր՝ կապված քաղաքացիական պատերազմի հաղթական ավարտից հետո

---

[1] «Նոր գաղափար», Թեհրան, 1927, Ա տարի, էջ 302, 306–307:

[2] «Յուսաբեր», Գահիրե, 19 օգոստոսի 1926 թ.:

ՆԷՊ-ի պայմաններում ազատական մտավորականության ու սպիտակ էմիգրացիայի որոշ հատվածի՝ բոլշևիկների նկատմամբ դիրքորոշման որոշ փոփոխության և ստեղծված նոր իրավիճակին հաշտվելու, համակերպվելու մտայնության հետ: Վերջիններս ակնկալիք ունեին, որ բոլշևիկյան ծայրահեղական գաղափարախոսությունը և քաղաքականությունը ժամանակի ընթացքում կմեղմանան և իբր աստիճանաբար խորհրդային պետությունը դարձ կկատարի դեպի ազատական-ժողովրդավարական հասարակություն: Նման մտայնության երևան գալը պետք է համարել օբյեկտիվ երևույթ՝ իբրև մտավորականության առանձին ներկայացուցիչների համարժեք արձագանք ստեղծված իրավիճակին: Սակայն այդ հույսերը չարդարացան: Ընդհակառակը, խորհրդային-բոլշևիկյան քաղաքական ու տնտեսական վարչակարգը պահպանվեց ու ավելի ամրապնդվեց:

– 1920-ական թթ. սկզբներին ձևավորված այս մտայնությունն իր դրսևորումն ունեցավ նաև հայ իրականության մեջ, սակայն որպես առանձնահատկություն՝ ստացավ ազգային թեքում: Պետք է փաստել, որ «հայկական սմենովեխականություն» կոչված հասկացությունը հայ բոլշևիկ գործիչների գաղափարաքաղաքական մտքի արգասիք էր: Սմենովեխական որակված ոչ մի հայ գործիչ իրեն չի համարել սմենովեխական: Պարզապես նրանց լոյալ ու բարյացակամ վերաբերմունքը խորհրդային իշխանության հանդեպ համարվել է ռուսական սմենովեխականության հայկական դրսևորում՝ իր ազգային թեքումով: Եվ այս ամենը արվել է Ռուսաստանի օրինակին հետևելու համար:

– Հայ բոլշևիկ գործիչները հայ սմենովեխականության մեջ առանձնացրել են երկու ուղղություն՝ **ազատամտական** և **դաշնակցական**: Վերջինս էլ, իր հերթին, բաժանել են երկու թևի՝ ըստ ՀՅԴ գործիչներ Հ. Քաջազնունու և Արշակ Ղազարյանի դիրքորոշումնե-

րի: Նշված երկու ուղղությունների համար ընդհանրական է եղել ազգային խնդիրների լուծման գործում ռուսական կողմնորոշումը:

– Ազատամտական ուղղության ամենավառ ներկայացուցիչ համարվող Գր. Չալխուշյանը հակադաշնակցական դիրքերից պաշտպանում էր խորհրդային վարչակարգը՝ բնավ չակնկալելով հին կարգերի վերականգնումը, իսկ Հայաստանի քաղաքական ապագան տեսնում էր ԽՍՀՄ հովանու ներքո:

– Ինչ վերաբերում է դաշնակցական երկու թևին, ապա դրանց մոտեցումների յուրահատկությունը արտահայտվել է նրանով, որ եթե Քաջազնունին գտնում էր, որ նոր փոփոխված պայմաններում հայ քաղաքական կյանքի գլխավոր դերակատար ՀՅԴ-ն պետք է հեռանա քաղաքական ասպարեզից, ու գլխավոր դերակատարությունը տրվի Հայկոմկուսին, որպեսզի խորհրդային պետության օգնությամբ վերաշինեն երկիրը և աստիճանաբար լուծում տան Հայ Դատին, ապա Ա. Ղազարյանը զարգացնում էր այն միտքը, որ Դաշնակցությունը դեռ անելիք ունի և՛ հայրենիքի վերաշինության, և՛ աշխարհասփյուռ գաղթականության խնդիրների լուծման, և՛ այլ հարցերում:

– Տնտեսական բնույթի հարցերում եթե Քաջազնունին առաջարկում էր երկու՝ խորհրդային և շուկայական-մասնատիրական տնտեսակարգերի փոխզիջում, ապա Ա. Ղազարյանը ելքը տեսնում էր խորհրդային պետության հետագա կատարելագործման, երկրի իրավական ու տնտեսական բարեփոխումների մեջ:

– Ի տարբերություն Հ. Քաջազնունու՝ Ա. Ղազարյանը, հանդես գալով առավել ծայրահեղ դիրքերից, հայ ժողովրդի միակ փրկությունը տեսնում էր Ռուսաստանի մեջ: Տվյալներ կան, որ նա, ապրելով ու գործելով Պարսկաստանում, որոշակի գործակալական կապեր է ունեցել Թեհրանում Ռուսաստանի դեսպանատան և խորհրդային անվտանգության մարմինների հետ:

– Այսպիսով՝ հայ սմենովեխական մտայնության կրողները առանց բացառության՝ ազատամտական թե դաշնակցական, ցուցաբերելով ռուսամետ և նաև խորհրդամետ կողմնորոշում, իբրև ընդհանուր առանձնահատկություն, նպատակ են հետապնդել ոչ այնքան հասնելու խորհրդային քաղաքական ու տնտեսական համակարգի վերափոխմանը ու հնի վերականգնմանը, որքան հաշտվելով, համակերպվելով ու բարեկամանալով բոլշևիկների ու խորհրդային պետության հետ՝ ակնկալել են նրա օգնությամբ հասնելու հայ ժողովրդի կենսական նշանակության հարցերի ու առաջին հերթին՝ Հայկական հարցի լուծմանը: Եվ այս իմաստով իբրև յուրահատկություն՝ հայ սմենովեխական մտայնությունը չի կարելի լիարժեք բովանդակությամբ սմենովեխական շարժում անվանել, որովհետև նրանք ամենևին էլ հատուկ խնդիր չեն ունեցել ներաճելու խորհրդային վարչակարգի մեջ և այն տանելու ազատական-ժողովրդավարական ուղիով:

– Հայտնի է, որ նման մտայնության մտավորական առանձին գործիչների անգամ թույլատրվեց վերադառնալ խորհրդային երկիր՝ աշխատելու հանուն հայրենիքի բարօրության: Դրանց ամենավառ ներկայացուցիչներից էր ՀՀ առաջին վարչապետ Հ. Քաջազնունին: Լի հույսերով նրա հաստատվելը Խորհրդային Հայաստանում, հետագա հիասթափությունը և բանտային վախճանը մանրապատկերն է այն քաղաքականության, որ վարել է կոմկուսը սմենովեխական կոչվածների և այլ կուսակցությունների, հոսանքների ու պլատֆորմների նկատմամբ:

– Խորհրդային պատմակուսակցական գրականության մեջ չափազանցվել ու խեղաթյուրվել է սմենովեխականներին տրված գնահատականը: Հայրենիք վերադարձողները ժողովրդի թշնամիներ չէին, ինչպես որ ներկայացվել է տասնամյակներ շարունակ: Սակայն խորհրդային-բոլշևիկյան վարչակարգը, իր էությանը բնորոշ, միշտ թշնամիներ է փնտրել թե՛ երկրի ներսում և թե՛ արտերկրում և

քաղաքական ու գաղափարական անհաշտ պայքար է մղել նրանց դեմ:

– Եթե տնտեսական-մշակութային վերաշինության առումով խորհրդային երկրում նկատելի քայլեր ձեռնարկվեցին, ապա հայկական հողային խնդիրների լուծման ուղղությամբ առաջին մի քանի տարիների փորձը ցույց տվեց, որ նման ակնկալիքը մոլորություն է: Հիշյալ պատրանքը արդիական է հնչում նաև մեր ժամանակներում: Հիմա էլ Երրորդ հանրապետության պայմաններում շատերը հայ ժողովրդի կենսական նշանակության հարցերի լուծումը միամտորեն շարունակում են կապել Ռուսաստանի Դաշնության օժանդակության հետ:

– 1920-ական թթ. երկրորդ կեսին կոմունիստական-բոլշևիկյան վարչակարգի դիրքերի ամրապնդմամբ սմենովեխական հոսանքի նկատմամբ վերաբերմունքը կոշտացավ: Քանի դեռ խորհրդային իշխանության դիրքերը թե՛ Ռուսաստանում և թե՛ Հայաստանում թույլ էին, այսպես թե այնպես, բոլշևիկ ղեկավարությունը հանդուրժում և նույնիսկ դրականորեն էր գնահատում սմենովեխականությունը՝ իբրև չափավոր ընդդիմություն: Բայց երբ նրա դիրքերը քիչ թե շատ ամրապնդվեցին, վերաբերմունքը սմենովեխական հոսանքի հանդեպ կոշտացվեց: ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1928 թ. նոյեմբերյան պլենումը եկավ արձանագրելու, որ ժամանակն է հաշիվները մաքրելու նաև այս հոսանքի հետ՝ դրա մեջ տեսնելով ազգայնականության վտանգ: Պլենումը Կենտրոնի հրահանգով որոշում կայացրեց տրոցկիստական, ազգայնական, մենշևիկ-դաշնակցական և այլ ընդդիմադիր ու թշնամական որակված խմբերի, հոսանքների ու պլատֆորմների հետ միասին անհաշտ պայքար մղել նաև սմենովեխականների դեմ՝ դրանց ևս վերացնելու նպատակով: Պատահական չէր, որ ԿԿ-ի պլենումից հետո խորհրդային-կուսակցական գործիչ Ա. Կարինյանի 1929 թ. լույս ընծայած գրքույկում հայկական սմենովեխակա-

նությունը արդեն բնորոշում էր որպես նացիոնալիզմի «նոր դիրքեր», և պահանջում էր ավելի վճռական ու հետևողական լինել նացիոնալիզմի այդ դրսևորման դեմ պայքարում[1]: Նրանց նկատմամբ հաշվեհարդարն իրագործվեց արդեն 1930-ական թվականներին՝ ստալինբոլշևիկյան քաղաքական բռնաճնշումների արդյունքում: Հայաստանում հայտնվածները բռնադատվեցին, իսկ գաղթաշխարհի շրջանակներում աստիճանաբար մարեցին նման հայացքներն ու մտայնությունները:

[1] Տե՛ս Կարինյան Ա., *Նացիոնալիզմի նոր դիրքերը*, Մոսկվա, 1929, էջ 24:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

«ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՏԵՌՈՐԻՍՏՆԵՐԻ ԳՈՐԾԸ»: ՄԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1. Մ. Խուշոյանի սպանության հանգամանքները, դատավարության նախապատրաստումը և բացումը

Հայաստանի խորհրդայնացումից հետո Հ Յ Դաշնակցության, համենայն դեպս Հայաստանում, կազմակերպական և գաղափարական կազմաքանդման գործը առաջ տանելու նպատակով ՀԿ(բ)Կ-ն դիմել է պայքարի տարբեր ձևերի ու եղանակների: Դրանցից մեկն այսպես կոչված «Դաշնակցական տեռորիստների գործ»-ի հորինումն էր: Խոսքը վերաբերում է Վաղարշապատի գավառի Ներքին Աղջաղալա (այժմ՝ Ն. Բազմաբերդ) գյուղի գյուղխորհրդի քարտուղար **Մանուկ Խուշոյանի** հանդեպ 1925 թ. հուլիսի 26-ի լույս 27-ի գիշերը քաղաքական ահաբեկչություն որակված սպանությանը:

Խորհրդային իշխանությունների ջանքերով մեծ աղմուկ հանած այս սպանության հետաքննությունը տևել է մեկ տարուց ավելի: Խնդիրն այն է, որ սպանություն կատարողները եղել են դաշնակցականներ, բայց ըստ էության այն իրականացրել են անձնական ու կենցաղային հողի վրա, սակայն գործի քննությունը միտումնավոր

կերպով ձգձգվել է, որպեսզի, համապատասխան նյութեր հավաքելով և քարոզչական աշխատանքներ տանելով, դրան տրվի քաղաքական բնույթ, այն վերագրվի ՀՅ Դաշնակցություն կուսակցությանը՝ իբրև նրա ղեկավար մարմնի կազմակերպած տեռորիստական (ահաբեկչական) գործողություն:

Հակադաշնակցական քարոզչությունը շարունակվել է նաև պետական բարձր մակարդակով անցկացված դատավարությունից հետո: Պատահական չէ, որ այդ դատական գործին, հանրային լայն հնչողություն տալու նպատակով, ՀԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղարությունը, 1926 թ. դեկտեմբերի 20-ի նիստում, որոշել է անգամ հրատարակել «Խուշոյանի դատապրոցեսը»՝ ՀՍԽՀ Գերագույն դատարանի դատական կոլեգիայի նախագահ և դատը նախագահող **Զարմայր Աշրաֆյանի** ներածականով[1]: Դատավարության նյութերի ժողովածուն լույս է տեսել 1927 թվականին 347 էջ ծավալով, հրատարակչական մարմինների «մշակմամբ» և ԽՍՀՄ-ում գրաքննություն իրականացնող «Գլավլիտի» խիստ հսկողության տակ[2]:

Մ. Խուշոյանի «տեռորիստական սպանության» քաղաքականացած գործը խորհրդային իշխանությունների կողմից Դաշնակցություն կուսակցության վարկաբեկման ու քայքայման հերթական փորձն էր: Ինչպես արդեն ասվել է, համանման գործողությունների թվին պետք է դասել ՀՅԴ 1921 թ. հրապարակային դատը, այսպես կոչված, նախկին դաշնակցականների 1923 թ. հայաստանյան լուծարման համագումարը և այլն:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 11, թ. 181: Նա Գերագույն դատարանի նախագահ էր հաստատվել 1925 թ. մարտից (տե՛ս ՀԱԱ. ֆ. 571, ց. 11, գ. 2, թ. 1):

[2] Տե՛ս «*Դաշնակցական տերրորիստների գործը» (նյութեր Մ. Խուշոյանի տերրորիստական սպանության դատավարությունից)*, Յեր., 1927, (այսուհետ՝ «Դաշնակցական տերրորիստների գործը»): Սույն գրքից քաղվածաբար առանձին հատվածներ տեղ են գտել պրոֆ. Վ. Ղազախեցյանի կազմած «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», Ե., 1999, փաստաթղթերի և նյութերի ժողովածուում:

Կոմունիստական կուսակցության այս գործողությունները միանգամայն համահունչ էին ՀՅԴ-ն կազմակերպորեն քայքայելու, գաղափարապես վարկաբեկելու և խորհրդային երկրից դուրս մղելու ռազմավարությանը: Ընդ որում, ինչպես արդեն ասվել է, ՀՅԴ-ն քայքայելու քաղաքականությունը իրականացվում էր ոչ միայն խորհրդային երկրի սահմաններում, այլև արտասահմանում՝ Մփյուռքում: Դա արվում էր խորհրդային դիվանագիտական ներկայացուցչությունների (դեսպանատներ, հյուպատոսարաններ, առևտրատնտեսական կազմակերպություններ), ՀՕԿ-ի, դրսում հրատարակվող թերթերի ու ամսագրերի, խորհրդային գաղտնի ծառայությունների ու գործակալների միջոցով: Այս կապակցությամբ ՀԿԽՀ Գերագույն դատարանի նախագահ Զ. Աշրաֆյանը հայտարարում էր, որ. «ջախջախելով դաշնակցությանը Հայաստանում՝ կոմունիստական շարժումը հետապնդում է այդ կուսակցությանը արտասահմանում, գաղթաշխարհում»[1]:

Գալով Ներքին Աղջաղալայի գյուղխորհրդի քարտուղար Մ. Խուշոյանի սպանության գործին՝ կարելի է փաստել, որ այն վերագրվեց Դաշնակցություն կուսակցությանը, որպեսզի հասարակական լայն կարծիք ձևավորվի, վարկաբեկեն նրան ժողովրդի աչքում և դրանով արագացնեն նրա քայքայումը:

Խնդիրը լավ հասկանալու համար փորձենք ներկայացնել գործը հնարավորինս ամբողջությամբ: Ցավոք, մեր ձեռքի տակ չկան Խուշոյանի սպանության գործով նախաքննության ամբողջական նյութերի 6 հատորները: Ուստի մեզ մնում է վերականգնել սպանության հանգամանքների, հարցաքննությունների, վկայությունների, իրեղեն ապացույցների և այլնի մոտավոր իրական պատկերը՝ առաջին հերթին հիմնվելով դատավարության նյութերի վրա: Մակայն մյուս կողմից՝ կասկած չկա, որ հրատարակված գրքում տեղ

[1] *«Դաշնակցական տերրորիստների գործը»*, էջ V:

գտած դատավարության ընթացքում մեղադրյալների հարցաքննությունները, նրանց տված վկայությունները, պաշտպանական ելույթները ըստ ամենայնի անցել են գրաքննության մաղով, վերամշակվել ու խմբագրվել են: Մյուս կողմից շատ սակավ են սպանության գործին վերաբերող արխիվային փաստաթղթերը և ժամանակաշրջանի մամուլում տեղ գտած նյութերը: Դրա համար էլ սպանության և հետաքննության առանձին հանգամանքներ մնում են չպարզաբանված:

*

* *

Ինչպես արդեն ասվեց, 1925 թ. հուլիսի 26-ի լույս 27-ի գիշերը Վեդարշապատի գավառի Սամադարի գավառակի Արագածի ենթաշրջանի Ներքին Աղջաղալա գյուղում կատարվել էր նույն գյուղի խորհրդի քարտուղար, նաև գյուղի դպրոցի ուսուցիչ Մ. Խուշոյանի սպանությունը: Նա սպանվել էր գլխից ստացած «Մաուզեր» սիստեմի ատրճանակի 3 գնդակից[1]: Հիմնականում երեք մեղադրյալների մեղադրական եզրակացության բովանդակությունից պարզվում է, որ սպանվածը ընդամենը մեկ տարի առաջ՝ 1924 թ. հուլիս ամսին էր տեղափոխվել ու բնակություն հաստատել Ն. Աղջաղալա գյուղում, ուր բնակվում էին Սասունի, Մուշի և այլ շրջանների արևմտահայ գաղթականներ:

«Դատական խեղկատակություններ» վերտառությամբ «Դրոշակ»-ի Իրատես ծածկանունով հեղինակը պատմում է, որ Մ. Խուշոյանը եղել է Վանից գաղթածներից մեկի որդին, ով, լինելով որբ, մոր և քրոջ հետ սկզբում ապաստանել էր Երևանում, իսկ հետո խորհրդային իշխանությունների կողմից ուղարկվել է Արագածի գյուղերից մեկը՝ որպես գյուղխորհրդի քարտուղար: Նա, իր քրոջն ամուսնաց-

---

[1] Տե՛ս *«Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը»*, էջ 200:

նելով Սամաղարի շրջանի միլպետ ոմն Սերյոժայի հետ ու ստանալով նրա հովանավորությունը, դառնում է մի սանձարձակ իշխան սասունցիների գլխին[1]: Այսինքն՝ տվյալ գյուղում բնակություն է հաստատել երիտասարդ մի անձ, որը անծանոթ է եղել սասունցիների հանդուգն բնավորությանը, նահապետական սովորույթներին ու կենցաղավարությանը:

Սպանվածը եղել է խորհրդային իշխանությանը նվիրված անձ, բայց ոչ կոմկուսի անդամ: Կարելի է պատկերացնել, թե սպանության արձագանքը որքան հնչեղ կլիներ և Դաշնակցության դեմ քաղաքական մեղադրանքը որքան զորեղ, եթե սպանվածը կոմունիստ եղած լիներ:

Խուշոյանը մի կողմից՝ նվիրված է եղել խորհրդային իշխանությանը, իսկ մյուս կողմից՝ գյուղացիների հանդեպ ունեցել է կոպիտ վարվելակերպ, հայհոյել է նրանց, ինչի մասին վկայել են համագյուղացիներ Ղ. Պետոյանը, Ղ. Ֆահրադյանը, Մ. Մանուկյանը և ուրիշներ[2]: Հայաստանի ազգային արխիվի ՀՍԽՀ դատախազության ֆոնդի (ֆ. 571) գործերից մեկում առկա է Մ. Խուշոյանի՝ Սամաղարի շրջգործկոմին ուղղված մի դիմումի մեքենագիր պատճեն, որը Արդարադատության ժողկոմ Լևոն Վարդապետյանը 1926 թ. հոկտեմբերի 3-ին ուղարկել է Հայկոմկուսի ԿԿ[3]: Այդ նամակ-դիմումում Մ. Խուշոյանը տեղեկացնում էր, որ, իրոք, ինքը Ն. Աղջաղալա գյուղում հաստատվել է 1924 թ.-ից՝ որպես չքավոր գյուղացու զավակ: Միաժամանակ նա սասունցիներին համարում էր իրեն հայրենակից, բայց և դիմումում նշում էր, որ ինքը պայքարում է գյուղի հարստահարիչների՝ ինչպիսիք Կրպե Տոնոյանի, Ապրո Ղազարյանի և մյուսների դեմ, ովքեր, նրա բնորոշմամբ, «տիրացել են գյուղի հողերի

---

[1] Տե՛ս «Դրոշակ», Փարիզ, 1927 թ., թիվ 1, (հունվար). էջ 28:
[2] Տե՛ս *«Դաշնակցական տերրորիստների գործը»*, էջ 1–2:
[3] Տե՛ս ՀԱԱ. ֆ. 571, ց. 1, գ. 10. թ. 45:

զգալի մասին և հարկ ու տուրք են հավաքում, ռեսի[1] ու աղայի կյանք են վարում»[2]: Դրա համար էլ ինքը հաճախակի արժանացել է ծեծի, նույնիսկ՝ աքսորի: Նամակի վերջում Մ. Խուշոյանը նշում էր, որ ինքը պատրաստ է շարունակելու պայքարը[3]: Մ. Խուշոյանի նամակդիմումի բովանդակությունից կարելի է կռահել, որ նա բնավորությամբ եղել է անհանդուրժող, իր ասելով՝ անարդարությունների դեմ պայքարող, բայց և հաճախակի իշխանություններին մատնագրեր ուղարկող, մարդկանց իր դեմ հանող, շարունակ վեճեր հարուցող անձնավորություն:

Այդ նույն կարծիքն է արտահայտվել նաև դատավարության ժամանակ: Այսպես՝ դատավարության ընթացքում դատապաշտպան Տ. Տրդատյանը տվյալներ է բերել Մ. Խուշոյանի անհանդուրժելի վարքագծի վերաբերյալ: Նրա տեղեկացմամբ՝ ընդամենը մի քանի ամիս պաշտոնավարելուց հետո Մ. Խուշոյանը 'գործնականում իր դեմ էր հանել աղջաղալացիներին: Նա հայտնում էր, որ Խուշոյանի գործում կան իրեն վարկաբեկող փաստաթղթեր՝ շրջկենտրոն ուղարկված գաղտնի զեկուցագրեր (մատնագրեր), որոնցում տեղեկություններ է հայտնել, թե գյուղում ժողովրդի քանի տոկոսն է զինված, ինչով են զինված սասունցիները, փորձել է սասունցիներին լարել իրար դեմ և այլն: Գյուղացիների մեջ դժգոհությունն այնքան մեծ է եղել, որ գյուղի հասարակությունը 1925 թ. փետրվարի 3-ին շրջգործկոմի անունով կոլեկտիվ բողոքագիր է ուղարկել[4]: Առաջարկ է եղել Մ. Խուշոյանին հեռացնել շրջանից, սակայն վերադաս իշխանությունները մերժել են առաջարկը: Դրանից ոգևորված՝ գյուղխորհրդի քարտուղարը ավելի է ուժեղացրել ճնշումները գյու-

---

[1] Ռեսը արևմտահայ նահանգներում գյուղապետի պաշտոն էր:
[2] ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 10, թ. 46:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս *«Դաշնակցական տնտրտրիատների գործը»*, էջ 225–226:

ղացիների հանդեպ[1]: Չեկան պահել է նրան, որպեսզի «Արագածում խորհրդային իշխանությունը ամրացվի»[2]:

Այս ամենի հետևանքով, բնականաբար, ոմանց մոտ բոնի ճանապարհով այդ մարդուց ազատվելու մտադրություն է առաջացել: Հայտնի է, որ գաղթական սասունցիների մոտ անցյալի ավանդույթի ուժով դեռևս շարունակում էր ուժեղ մնալ ազատ ապրելու ձգտումը, «խուշոյանական» գործելակերպին չհամակերպվելը: Բացի այդ՝ արևմտահայ գաղթականության մեջ ընդհատակյա ձևով դեռևս շարունակում էր պահպանվել դաշնակցական միջուկը: Եվ սա բավական է եղել, որպեսզի հենց դաշնակցականները նրան ահաբեկեն և գյուղացիներին ազատեն այդ անցանկալի մարդուց, մանավանդ որ տեղեկություն են ունեցել նրա՝ Չեկայի գործակալ լինելու մասին[3]:

Քրեական գործի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար հարցաքննությունների ժամանակ տրված վկայությունների, դատապաշտպանների ու պետական մեղադրողների ելույթների նյութերից կարելի է հավաստել, որ Մ. Խուշոյանի սպանության ակտը կատարել են Վ. Աղջաղալայի գյուղխորհրդի քարտուղար **Պետրոս Մինոյանը**, նույն գյուղի գյուղխորհրդի նախագահ **Արտաշես Ստեփանյանը** (երկուսն էլ ՀՅԴ Արագածի ընդհատակյա խմբի անդամ) և **Հակոբ Մովսեսյանը** (վերջինս սպանությունից հետո անհետացել է, նրա վերաբերյալ հայտարարվել է հետախուզում և հետաքննության ու դատավարության ողջ ընթացքում նրա մասին որևէ տեղեկություն այդպես էլ չի հայտնվել): Քնած վիճակում սպանվողի տեղը և դիրքը ուսումնասիրել ու հայտնել է **Հակոբ Հակոբյանը**: Ընդհանուր թվով քրեական գործով դատաքննչական վարույթում ներգրավված է եղել 11 անձ:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 3:

[2] «Դրոշակ», Փարիզ, 1927 թ., թիվ 1 (հունվար), էջ 29:

[3] Տե՛ս *«Դաշնակցական տերրորիստների գործ»*, էջ 7:

Քաղաքական ահաբեկչություն որակված սույն սպանությունը փաստորեն կատարվել է Պ. Սինոյանի մշակած ծրագրով հուլիսի 27-ի գիշերը: Սակայն մեղադրականում նշվում է, որ իբր մահափորձը հրահանգել է Դաշնակցություն կուսակցության Վաղարշապատի գավառային ընդհատակյա կոմիտեի ղեկավար Սահակ Ստեփանոսյանը, որը միաժամանակ եղել է ՀՅԴ Հայաստանի ընդհատակյա ԿԿ-ի անդամ: Բայց հարցաքննությունների ժամանակ նա հերքել (ժխտել) է իր որևէ առնչությունը այդ սպանությանը: Ս. Ստեփանոսյանը իրեն մեղավոր է ճանաչել միայն դաշնակցական գաղտնի բջիջներ կազմակերպելու, ինչպես նաև ընդհատակյա գրականություն տարածելու մասով: Բայց դա չի խանգարել, որպեսզի հենց քաղաքական նկատառումներից ելնելով՝ ներկայացված մեղադրյալների ցանկը գլխավորի ՀՅԴ Վաղարշապատի ընդհատակյա կոմիտեի ղեկավար Ս. Ստեփանոսյանը: Ի դեպ, նշված 11 անձանց մեջ եղել են դաշնակցականներ, հնչակյաններ և անկուսակցականներ: Ու թեև քրեական գործին հատուկ կազմակերպված խմբակային հանցագործության բնույթ է տրվել, սակայն կայացված դատավճռով մեղավոր են ճանաչվել և դատապարտվել 4 անձ, իսկ մնացած 7-ը ազատ են արձակվել մեղքը ապացուցված չլինելու պատճառով[1]:

Սպանություն կամ ահաբեկչություն անմիջական կատարողների և դրա հետ առնչություն ունեցողների կասկածանքով մեղադրանք է առաջադրվել ՀՍԽՀ Քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Քր. օր.) 16–64 հոդվածներով, այսինքն՝ Խորհրդային իշխանության դեմ նախնական համաձայնությամբ ահաբեկչական ակտ կատարելու որակմամբ: Բացի այդ՝ երկու գլխավոր մեղադրյալներին՝ Պ. Սինոյանին և Ա. Ստեփանյանին, մեղադրանք էր առաջադրվել նաև նույն Քր. օր.-ի 72 և 61 հոդվածներով, այսինքն՝ հակահեղափոխական գրականություն տարածելու և գաղտնի կազմակերպությունների

[1] Տե՛ս *«Դաշնակցական տպագրությունների գործ»*, էջ 344–345:

մասնակցելու համար[1]: Հարկ է նշել, որ ՀՍԽՀ Քրեական օրենսգիրքը ընդունվել է Հայաստանի Կենտրոնական գործադիր կոմիտեի Գ. նստաշրջանի 1922 թ. հուլիսի 22-ի նիստում, որը հետագա տարիներին փոփոխվել ու լրացվել է[2]:

Ինչպես արդեն ասվեց, քաղաքական հնչեղություն ստացած այս գործը գտնվել է կուսակցական-պետական բարձրագույն մարմինների առաջնային հսկողության ներքո: Հետաքննության ավարտական փուլում՝ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախագահության 1926 թ. հունիսի 2-ի նիստում լսվել է «Դաշնակցություն կուսակցության տեռորի գործի մասին» հարցը, զեկուցել է Պետական քաղաքական վարչության (ՊՔՎ) պետ Ս. Մելիք-Օսիպովը (Հովսեփյանը): Որոշվել է. ա) գործը հանձնել Հանրապետության դատախազին՝ հանրային դատավարություն նախապատրաստելու համար և բ) առաջարկել ԿԿ-ի նախագահության անդամներին մեկ շաբաթվա ընթացքում ծանոթանալ այդ գործում առկա նյութերին[3]: Ասվածից հետևում է, որ մինչև դատավարություն սկսելը իշխանության բարձրագույն մարմինը գործը ներկայացնում է որպես «Դաշնակցություն կուսակցության ահաբեկչություն»: Այս նույն հարցը կրկին լսվել է ԿԿ-ի նախագահության 1926 թ. հունիսի 9-ի նիստում՝ «Դաշնակների դատապրոցեսի մասին» օրակարգով (զեկ. Լ. Վարդապետյան) և որոշվել է «Առաջարկել Արդարադատության ժողկոմատին դատական կարգով հետաքննել Մ. Խուշոյանի տեռորիստական սպանությունը դաշնակների կողմից և նախապատրաստել դատապրոցեսի որոշում գործի սոցիալական և քաղաքական ուղղվածության տեսանկյունից»[4]: Այս կապակցությամբ դարձյալ ուշադրության է արժանի այն հանգա-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 8:

[2] Տե՛ս «ՀՍԽՀ դեկրետների և վորոշումների հավաքածու», 1922 դեկտեմբերի 10, թիվ 21, Ցեր., 1922:

[3] Տե՛ս ՀԱԱ. ֆ. 1, ց. 6, գ. 5, թ. 49:

[4] Նույն տեղում, թ. 71, նաև՝ ֆ 571, ց. 1, գ. 10, թ. 91:

մանքը, որ դատավարության գործընթացը դեռ չսկսած կուսակցական բարձրագույն մարմինը արդեն կանխորոշում էր, թե ում պետք է վերագրվի սպանությունը: Այստեղից էլ հանձնարարություն Արդարադատության ժողկոմատին (ի դեպ, նրա համակարգում էին գտնվում և՛ Գերագույն դատարանը, և՛ Գլխավոր դատարանը), թե ինչպես պետք է տարվի քննությունը:

ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախագահության օգոստոսի 12-13-ի նիստում Խուշոյանի գործի կապակցությամբ հերթական անգամ լսվել է «Դաշնակցության կուսակցության մասին» հարցը և որոշվել «հանձնարարել Աշ. Հովհաննիսյանին (ՀԿ(բ)Կ ԿԿ-ի առաջին քարտուղար) և Ա. Կարինյանին (ՀՍԽՀ Կենտրոնական գործադիր կոմիտեի (ԿԳԿ) նախագահ) երկշաբաթյա ժամկետում պատրաստել թեզիսներ և մշակել Դաշնակցության դեմ պայքարի մարտավարություն»[1]:

ԿԿ-ի նախագահության մեկ այլ՝ սեպտեմբերի 7-ի նիստում հավանություն է տրվում Արդարադատության ժողկոմատի կողմից ներկայացված (զեկուցող ժողկոմ Լ. Վարդապետյան) Խուշոյանի տեռորիստական սպանության գործի վերաբերյալ որոշման նախագծին և սահմանվում. ա) հավանություն տալ Արդարադատության ժողկոմատի մեղադրական եզրակացության նախագծին, բ) դատապրոցեսի քաղաքական ղեկավարման համար ստեղծել հանձնաժողով՝ Աշ. Հովհաննիսյան, Ա. Մռավյան և Զ. Աշրաֆյան կազմով և գ) հանձնարարել հանձնաժողովին որոշելու դատարանի և հասարակական մեղադրողների կազմը, ինչպես նաև որոշել դատավարության ժամկետը[2]: Այսպես կոչված «Մ. Խուշոյանի գործը» մեկ անգամ էլ սեպտեմբերի 14-ին է լսվել ԿԿ-ի նախագահության նիստում՝ զեկ. ԿԿ-ի քարտուղար Աշ. Հովհաննիսյան[3]: Այս ամենը ցույց է տա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 5, թ. 107:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 127:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 129:

լիս, թե քաղաքական որքան կարևորություն է տրվել այդ գործին: Ստացվում է, որ ամիսներ շարունակ նշված գործը չի իջել ԿԿ-ի նախագահության քննարկումների օրակարգից:

Ի վերջո ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախագահությունից գործը փոխանցվել է ՀՍԽՀ ԿԳԿ-ի նախագահություն: Վերջինիս 1926 թ. սեպտեմբերի 15-ի նիստում լսվել և որոշվել է Մ. Խուշոյանի դատական գործը հանձնել հանրապետության Գերագույն դատարանին, իսկ ՀՍԽՀ Գերագույն դատարանի դատական կոլեգիայի նախագահ **Զարմայր Աշրաֆյանին** հաստատել որպես դատավոր[1]: Հասկանալի է, որ նման բարձր մակարդակով դատավարության անցկացումը նպատակ ուներ դատավարությանը տալ առավել քաղաքական բարձր հնչեղություն:

Այդպիսով, սպանությունից ի վեր ավելի քան մեկ տարի տևած հարցաքննության 6 հատորների հասնող նյութերով գործը ներկայացվել է ՀՍԽՀ Գերագույն դատական ատյանին: Հարկ է նշել, որ դատավարության բացումը ձգձգվել է նաև 1926 թ. աշնանը (հոկտեմբերի 22-ին) տեղի ունեցած Լենինականի երկրաշարժի պատճառով:

2. Դատավարության ընթացքը

Դատավարությունը տևել է 1926 թ. հոկտեմբերի 8-ից մինչև 19-ը: Դատավարությանը վերաբերող հրատարակված գրքի բովանդակությունից պարզ չի դառնում, թե քանի նիստ է անցկացվել: Հասկանալի է, որ դատավարության նիստերի արձանագրությունները հրատարակվել են կրճատումներով, ուստի դժվար է ամբողջական պատկերացում կազմել նրա գործընթացից: Նիստերը նախագահել է Զ. Աշրաֆյանը, դատավարության ընթացքում հանդես են եկել պե-

[1] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 5, գ. 56, թ. 56:

տական մեղադրող (դատախազ) Արմենակ Հովսեփյանը, հասարակական մեղադրողներ Արամայիս Երզնկյանը, Գր. Չուբարը, դատապաշտպաններ Տ. Հախումյանը, Տ. Տրդատյանը, վկաներ և այլն:

Առաջին նիստում նախագահողը ընթերցում է «Մ. Խուշոյանի տերրորիստական սպանության մեջ մեղադրվողների մեղադրական եզրակացությունը»՝ ներկայացնելով սպանության հնարավոր դրդապատճառներն ու հանգամանքները, մեղադրվողների ցանկն ու մասնակցության աստիճանը: Դատական 2-րդ նիստում առաջինը հարցաքննվում է գլխավոր մեղադրյալներից մեկը՝ սպանությունը իրականացրած Պետրոս Սինոյանը: Համաձայն դատավարության նյութերի՝ Մ. Խուշոյանի սպանության առթիվ Պ. Սինոյանը պատմել է, որ «Նա այնպիսի տիպն էր, որ ուզենայինք, չուզենայինք պիտի խփեինք», որ նա «մտրակը ձեռքին զրկում էր մեզ ազատ ապրելու հնարավորությունից, միշտ աշխատում էր խլրտում մտցնել բնակչության մեջ և զանազան դավեր էր սարքում. մենք մի քանի անգամ դիմել ենք կառավարությանը, բայց նա միջոցներ-ձեռք չէր առնում հեռացնելու Մանուկին այդ շրջանից: Բոլորն ասում էին Մանուկը վատ մարդ է, նեղացնում է ժողովրդին»[1]:

Մեր պատկերացմամբ գեղջկական այս նկարագրությունը շատ բանի մասին է վկայում: Ըստ ամենայնի՝ սպանության շարժառիթը տվել է սպանվողը՝ Մ. Խուշոյանը, իր անհանդուրժելի վարքագծով ու գործողություններով: Սակայն դատարանում հարցաքննության ընթացքից կարելի է տեսնել, որ հարցաքննող, պետական մեղադրող Ա. Հովսեփյանը քննությունը տարել է այն հունով, որպեսզի սպանության գործում կապ տեսնվի դրա անմիջական կատարողների և

[1] *«Դաշնակցական տերրորիստների գործը»*, էջ 10:

Վաղարշապատի ՀՅԴ ընդհատակյա կոմիտեի ղեկավար Սահակ Ստեփանոսյանի միջև:

Անշուշտ, Պ. Սինոյանը և Ս. Ստեփանոսյանը իրար ծանոթ կուսակիցներ են եղել: Վերջինիս առաջարկով 1923 թ. Պ. Սինոյանը մտել է Դաշնակցություն կուսակցության շարքերը: Խուշոյանի վատ պահվածքի մասին Սինոյանը հայտնել է Ստեփանոսյանին, որն էլ, ըստ Սինոյանի, ասել է, որ եթե ուզում եք՝ «խփեք» և իբրև նա Ստեփանոսյանից ստացել է «Մաուզեր» 10 փամփուշտով: Սակայն հետագա վկայություններից պարզվում է, որ Սինոյանն ինքն է ունեցել սեփական «Մաուզեր» տիպի ատրճանակ, որով էլ կատարվել է սպանությունը: Դա հաստատել է Արտաշես Ստեփանյանի եղբայր Շմավոն Ստեփանյանը[1]:

Հասարակական մեղադրող Ար. Երզնկյանի՝ ամբաստանյալներին ուղղված հարցաքննությունից պարզվում է, որ Պ. Սինոյանը նախկինում՝ Դաշնակցական կառավարության օրոք, կամավոր է եղել, 1919 թ. կռվել է Կողբում ու Դարալագյազում, որ իր ընկերների հետ միասին քշել է թուրքերին և սովից չմեռնելու համար հացը խլել են նրանց ձեռքից: Իսկ 1921 թ. Փետրվարյան ապստամբության ժամանակ գտնվել է Էջմիածնում՝ Կարո Սասունու ղեկավարած կամավորական խմբում[2]:

Հարցաքննությունների ընթացքում դրսևորած իր անաչառ մոտեցմամբ առանձնացել է Հայ ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) նախկին անդամ Տիգրան Հախումյանը: Վերջինիս այն հարցմանը, թե Ս. Ստեփանոսյանը ինչպես է վերաբերել Խորհրդային իշխանությանը, Պ. Սինոյանը պատասխանել է. «նա մեզ հրահանգել էր, որ Խորհրդային իշխանության հետ միասին մենք զարկ տանք և

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 261:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 17:

աջակցենք շինարարական աշխատանքին»[1]: Հախումյանի հարցաքննությունից նաև պարզվում է, որ մեղադրյալ Սինոյանը, 1925 թ. դեկտեմբերի 17-ից հետո, **կտրուկ փոխել է իր ցուցմունքները**: Նրա խոսքերով՝ ինքը բանտում գիտակցել է, որ հարկավոր է «սթափվել», բայց թե ինչ երևույթներից դրդված՝ **«ինքը չի կարող ասել»**[2]: Իր ցուցմունքներում 1926 թ. հունվարի 11-ին համանման փոփոխություն է կատարել նաև Ա. Ստեփանյանը:

Հարցաքննության այս հատվածի բովանդակությունից հիմքեր կան պնդելու, որ Պ. Սինոյանը Ս. Ստեփանոսյանի, այսինքն՝ ՀՅԴ Վաղարշապատի կոմիտեի դեկավարի դեմ ցուցմունք՝ չի տվել, թե իբր Ստեփանոսյանն է իրեն առաջարկել սպանել Խուշոյանին: Հավանաբար բանտախցում ֆիզիկական և հոգեբանական ներգործության, «մշակումներից» հետո է, որ սկսած դեկտեմբերի 17-ից, նա փոխել է իր ցուցմունքը՝ ասելով, որ իբր կոմիտեի դեկավար Ստեփանոսյանի հրահանգով է տեռորը կատարել: Կասկած է հարուցում Սինոյանի այն արտահայտությունը, թե «ինքը սթափվել է և չի կարող ասել»: Թե ինչը չի կարող ասել, մնում է անբացատրելի: Հասկանալի է, որ դատավարության պաշտոնապես հրապարակված նյութերում չէին կարող տեղ գտնել իշխանությունների համար անցանկալի մտքեր ու արտահայտություններ: Մնում է ենթադրել, որ Պ. Սինոյանը իր ցուցմունքները փոխել է կամ «ծեծուջարդի» միջոցով, կամ էլ նրանից ցանկալի ցուցմունք կորզելու նպատակով ինչ-որ բան են խոստացել: Այդ մասին դարձյալ անդրադարձ կլինի:

Դատապաշտպան Տ. Հախումյանի հարցաքննության ժամանակ նա մեղադրյալ Սինոյանը կրկին վկայել է Խուշոյանի անհանդուրժելի գործողությունների մասին: Նրա խոսքերով. «նա մեր գլխին դա-

---

[1] Նույն տեղում, էջ 24:
[2] Նույն տեղում:

ոել էր դիկտատոր Պիլսուդսկի[1]», «մենք բողոքում էինք սուլթան Համիդի բռնությունների առթիվ և դրա համար է, որ այնտեղից փախել ենք ու չէինք կարող տեսնել Մանուկին՝ սուլթան Համիդի (ընդգծումները տեքստինն է – Ա.Հ.) դերում»[2]: Այլ խոսքով՝ մեղադրյալ Պ. Սինոյանը Մ. Խուշոյանին նմանեցրել է այն ժամանակվա Լեհաստանի դիկտատոր, մարշալ Յու. Պիլսուդսկու և «Կարմիր սուլթան» Աբդուլ Համիդ 2-րդի հետ:

Այնուհետև, հարցաքննվել է Ս. Ստեփանոսյանը: Նա պատմել է, որ 1925 թ. հուլիսին գործով եկել էր Վաղարշապատ, տեսել է Պ. Սինոյանին, որն իրեն պատմել է Մանուկի մասին, որի անունը ինքը առաջին անգամ էր լսել: Ստեփանոսյանի փոխանցմամբ՝ Սինոյանն իրեն ասել էր, որ «Մանուկը վատ մարդ է, գյուղում ծեծի է ենթարկում և հայհոյում է ազգաբնակչությանը և մի քանի դաշնակցականների դեմ լարված է», այնուհետև ավելացրել է՝ «դրան պետք է մեջտեղից վերացնել»: Այդ խոսքերից հետո Ստեփանոսյանը Սինոյանին ասել է, որ «Դաշնակցության տակտիկան հիմա թույլ չի տալիս, որպեսզի մենք դիմենք նման քայլերի, որ մենք այդպիսի գործերով չենք զբաղվում, որ տերրորը հին մեթոդ է, որից մենք հրաժարվել ենք, և որ դաշնակցական քաղաքականությունը դեմ է առհասարակ տերրորին»: Դրան Սինոյանը պատասխանել է, թե. «դուք, ռուսահայերդ վախկոտ եք, եթե դուք չեք անի, մենք՝ կանենք»[3]:

Այնուհետև, Ստեփանոսյանի բացատրությամբ՝ ինքը Սինոյանին չի տեսել և միայն ամիսուկես անց լսել է Ալագյազում կատարված սպանության մասին և իմացել է, որ սպանվողը Խուշոյանն է, իսկ Պ. Սինոյանը բանտարկված է[4]:

---

[1] Խոսքը այդ շրջանում Լեհաստանի դիկտատոր, մարշալ Յուզեֆ Պիլսուդսկու մասին է:

[2] *«Դաշնակցական տերրորիստների գործ»*, էջ 25:

[3] Նույն տեղում, էջ 27:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 28:

Հարցաքննության ժամանակ Ստեփանոսյանը զրպարտություն է համարել, թե ինքը ատրճանակ է տվել Պ. Սինոյանին, սակայն խոստովանում է, որ ինքը «Հայրենիք», «Յուսաբեր» թերթեր և նմանատիպ գրականություն է տվել Պ. Սինոյանին[1]:

Ս. Ստեփանոսյանի դատական հարցաքննությունից պարզվում է, որ Պ. Սինոյանը շատ բան ինքն է հնարել հավանաբար արդեն նշված դեկտեմբերի 17-ի «շրջադարձից» հետո և սպանության ցուցումը վերագրել է Ստեփանոսյանին, իբրև թե նրա հրահանգն է կատարել: Դատավարության նյութերը ցույց են տալիս, որ մինչ այդ օրը (շուրջ 5 ամիս) Սինոյանը, ըստ էության, ոչ մի ցուցմունք չի տվել Ստեփանոսյանի և դրանով իսկ Հ Յ Դաշնակցության դեմ: Ինչպես արդեն ասվեց, բանտային-քննչական մեքենայի «աշխատանքից» հետո Սինոյանը սպանության վարկածը փոխում է՝ իբրև Ստեփանոսյանի հրահանգով կատարված գործողություն, որպեսզի ցույց տրվի, թե տեռորը, հանձին Ստեփանոսյանի, կատարվել է Դաշնակցության ղեկավար մարմնի (ԿԿ-ի) հրահանգով և դրանով իսկ մեղադրյալը փորձել է մեղմացնել իր հանցանքի չափը:

Ի տարբերություն դատապաշտպան Տ. Հախումյանի՝ մեր կարծիքով՝ շատ կտրուկ ու կողմնակալ են եղել հասարակական մեղադրող Ար. Երզնկյանի տված հարցերը: Իր հարցերով վերջինս փորձել է սպանության մեղքը ամբողջությամբ բարդել ՀՅԴ-ի վրա: Պատասխանելով Երզնկյանի հարցին՝ Ստեփանոսյանը բացատրություն է տվել, որ 1923 թվականից ինքը եղել է ՀՅԴ Հայաստանի ընդհատակյա ԿԿ-ի անդամ, որ 1925 թ. իրենք կազմակերպել են երկու կարևոր միջոցառում՝ մեկ գավառային խորհրդակցություն և մեկ հատ էլ համահայաստանյան համագումար Երևանում: Համագումարում լսվել է ՀՅԴ Փարիզի 10-րդ Ընդհ. ժողովի (1924 թ. նոյեմբեր – 1925 թ. հունվար) աշխատանքների ու արդյունքների մասին,

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 29–30:

այնտեղից եկած ներկայացուցչի միջոցով[1]: Մեղադրյալ Ստեփանոսյանը պատասխանել է, որ իրենք արտասահմանից մշտապես հրահանգներ են ստացել՝ «աջակցել Խորհրդային իշխանությանը և միշտ լոյալ լինել դեպի նա»[2]: Պատասխանելով Ար. Երզնկյանի հերթական հարցին՝ Ստեփանոսյանը տեղեկացնում է, որ իրենք ստացել են նաև այլ կուսակցությունների թերթեր՝ «Արև», «Պայքար», «Ապագա», «Դնի», «Սոցիալիստիչեսկիյ վեստնիկ» և այլն, որոնցից իրենք տեղեկանում էին աշխարհում կատարվող անցուդարձին, նաև ուսումնասիրում ուրիշ կուսակցությունների գրականությունը[3]:

ՀՅԴ Հայաստանի ընդհատակյա ԿԿ-ի անդամ Ս. Ստեփանոսյանի հարցաքննության ընթացքում տված պատասխանների բովանդակությունից դժվար չէ նկատել, որ դատաքննչական գործը ընթացել է ոչ այնքան Մ. Խուշոյանի սպանության, որքան Հայաստանում ՀՅԴ կուսակցության գործունեության բացահայտման շուրջ: Մյուս կողմից՝ հարկ է փաստել, որ Հայաստանում նախկին դաշնակցականների 1923 թ. լուծարման համագումարից երեք տարի անց ՆԷՊ-ի պայմաններում տակավին շարունակել են գործել ՀՅԴ ընդհատուկյա խմբեր ու կազմակերպություններ, որոնք վարել են կազմակերպական ու քարոզչական աշխատանք, կապ են պահպանել արտասահմանի իրենց բարձրագույն մարմնի հետ, նրանց առանձին պատվիրակներ մասնակցել են ՀՅԴ 10-րդ Ընդհ. ժողովի աշխատանքներին, ղեկավարվել են ՀՅԴ Բյուրոյի հրահանգներով ու հանձնարարականներով՝ լինելու լոյալ խորհրդային իշխանության հանդեպ և ներգրավվել երկրի վերաշինության գործում:

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 34:
[2] Նույն տեղում, էջ 35:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 41:

3. Հարցաքննությունների հետագա ընթացքը և դատավարության ավարտը

Պ. Սինոյանից և Ս. Ստեփանոսյանից հետո հարցաքննվող մյուս անձը եղել է մեղադրյալ, 1924 թ. Դաշնակցություն կուսակցության անդամ **Արտաշես Ստեփանյանը**, որն անմիջական մասնակցություն է ունեցել սպանության ակտին: Նա խոստովանել է, որ ահաբեկությունը կատարել են 3 հոգով՝ ինքը, Պետրոս Սինոյանը և Հակոբ Մովսեսյանը[1]: Վերջինս, ինչպես արդեն ասվել է, սպանությունից հետո անհետացել է, և նրա մասին չի հայտնվում որևէ տեղեկություն: Հարցաքննվել են նաև Մ. Խուշոյանի գտնվելու տեղի ու քնած վիճակի մասին ահաբեկիչներին տեղեկություն հայտնած **Հակոբ Հակոբյանը** և ուրիշներ: Ընդ որում, դատարանում Հ. Հակոբյանը ցուցմունք տալիս ցույց է տվել իր գլխի սպին, որը նրան էին հասցրել չեկայի քննիչներ Եսայանը և Միշան՝ ցանկալի արձանագրություն կորզելու համար[2]:

ՀՅԴ հայաստանյան ընդհատակյա կառույցի գործունեության բացահայտման տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում դատավարության ժամանակ որպես վկա հրավիրված ՀՅԴ Հայաստանի ԿԿ-ի անդամ **Հռիփսիմե Մուշեղյանը**[3]: Հարցաքննության ժամանակ նա խոսել է **Քուրդ Ղազոյի** ահաբեկման խնդրի մա

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 55:

[2] Տե՛ս «Դրոշակ», Փարիզ, 1927 թ., թիվ 1 (հունվար), էջ 27:

[3] Հռիփսիմե Մուշեղյան ծնվ. 1889 թ. Ալեքսանդրապոլում, մասնագիտությամբ՝ դեղագործ, կրթությունը՝ թերի բարձրագույն: 1924–1926 թթ. եղել է ՀՅԴ Հայաստանի ԿԿ-ի անդամ, որպես դաշնակցական՝ ձերբակալվել և աքսորվել է համակենտրոնացման ճամբար: 1934 թ. սկզբին վերադարձել է աքսորից: Սակայն 1935 թ. օգոստոսին կրկին ձերբակալվել ու բանտարկվել է: Հետագայում՝ 1959 թ. հունվարին, Հ. Մուշեղյանը արդարացվել է: Նրա գործը կարճվել է հանցակազմի բացակայության պատճառով: Այդ մասին տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 9, գ. 2295, թ. 1–236:

սին[1]: Բանն այն է, որ վերջինս 1924 թ. Պարսկաստանից անլեգալ կերպով անցել էր Հայաստան, Դաշնակցության Թավրիզի Պատասխանատու մարմնի ներկայացուցիչ **Եղիշե Իշխանյանի** հանձնարարությամբ՝ իր հետ բերելով 3500 ռուբլի, որը պետք է հանձներ հայաստանյան ընդհատակյա կառույցին նրա կարիքների և բանտարկված ընկերների ընտանիքներին օգնելու համար: Սակայն Ք. Ղազոն ոչ միայն դրամը չի հանձնել, այլ ավելին, սկսել է մատնել ԿԿ-ի անդամներին: Հ. Մուշեղյանն իր ցուցմունքներում նշում է, որ Քուրդ Ղազոյի մատնությամբ 1924 թ. ձերբակալվել է ԿԿ-ի անդամ **Արշակ Սարուխանյանը**: Այդ իսկ պատճառով ԿԿ-ի անդամներ Ա. Սարուխանյանը, **Աշոտ Արծրունին (Տուլյան)** և ինքը՝ Հ. Մուշեղյանը ՀՅԴ Թավրիզի կենտրոնի համաձայնությամբ որոշել են տեռորի ենթարկել Քուրդ Ղազոյին, սակայն մահափորձը անհաջող է անցել: Այս կապակցությամբ Ս. Ստեփանոսյանը դատական հարցաքննության ժամանակ պարզաբանում է տվել, որ չնայած իրենք այդ հրահանգը ստացել էին Թավրիզի Բյուրոյի ներկայացուցչից, սակայն բերված գումարը կոմիտեին չհանձնելու և յուրացնելու համար չէ, որ ընդհատակյա ԿԿ-ը տեռորի հրահանգ է արձակել, այլ Քուրդ Ղազոյի արած մատնությանն ի պատասխան[2]:

Սույն դատավարության էական կողմերից մեկն էլ այն է, որ հարցաքննությունների ու վկայությունների միջոցով բացահայտվում են ՀՅԴ հայաստանյան ընդհատակյա ԿԿ-ի գոյության ու գոր-

---

[1] Խոսքը արճեշցի, խմբապետ **Ղազար Հարությունյանի** մասին է: Նա 1921 թ. Փետրվարյան ապստամբությունից հետո հազարավոր փախստականների հետ տարագրվել է Պարսկաստան, 1924 թ. գաղտնի վերադարձել է Հայաստան, բնակվել է Աշտարակի շրջանի Քարաշամբ գյուղում, 1937 թ. ձերբակալվել է և գնդակահարվել (տե՛ս ԲՀԱ, Ե., 2017, թիվ 125, էջ 163):

[2] Տե՛ս «Դաշնակցական տերրորիստների գործը», էջ 31, «Խորհրդային Հայաստան», 25 ապրիլի 1926 թ., «Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը», էջ 201: Ի դեպ, նման մահափորձ էր կազմակերպվել նաև Նիկ. Կրմենեանցի դեմ, քանի որ վերջինս ակտիվ մասնակցություն էր ցույց տվել ՀՅԴ 1923 թ. կազմակերպման աշխատանքներին:

ծունեության առանձին դրվագներ: Ի դեպ, ինչպես արդեն ասվել է, ԿԿ-ի անդամներից Ա. Արծրունին Հայաստանից անցել է Թավրիզ, այնտեղից էլ՝ Փարիզ ու մասնակցել է ՀՅԴ 10-րդ Ընդհ. ժողովին որպես Հայաստանի պատգամավոր: Ինչ վերաբերում է մեղադրյալ Ս. Ստեփանոսյանի Հայաստանի ընդհատակյա ԿԿ-ի անդամ լինելուն, ապա Հ. Մուշեղյանը հայտնում է, որ Քուրդ Ղազոյի մատնությամբ Արշակ Սարուխանյանի ձերբակալությունից հետո ԿԿ-ի կազմում ընդգրկվել են Ս. Ստեփանոսյանը, Միքայել Մելիք-Մուրադյանը և ինքը[1]: Դատավարության ժամանակ իբրև վկա Հ. Մուշեղյանը ևս վկայություն է տվել, որ իրենք Հայաստանում անցկացրել են համագումար և կոնֆերանս: Նրա ելույթից նաև պարզվում է, որ ՀՅԴ ընդհատակյա կազմակերպություններ են գործել Դարալագյազում ու Լենինականում[2]: Սակայն վկա Հ. Մուշեղյանը նույնպես կտրականապես ժխտել է Խուշոյանի ահաբեկման կապակցությամբ ՀՅԴ Հայաստանի ԿԿ-ի որոշում կայացնելու հանգամանքը: Նույն կերպ իբրև վկա հարցաքննել են նույն ԿԿ-ի անդամ բժիշկ Մ. Մելիք-Մուրադյանին, ով նույնպես հաստատել է, որ Խուշոյանին տեռորի ենթարկելու վերաբերյալ ԿԿ-ը որևէ որոշում չի կայացրել[3]:

ՀՅԴ Հայաստանի ԿԿ-ի անդամներ Հ. Մուշեղյանի և Մ. Մելիք-Մուրադյանի հարցաքննություններից դարձյալ դժվար չէ նկատել, որ դատավարության նպատակը ոչ այնքան Խուշոյանի սպանության իրական հանգամանքների պարզումն էր, որքան Դաշնակցության հայաստանյան ընդհատակյա կառույցի բացահայտումը, նրա անդամների ցանկի ճշտումը, նրանց մեկուսացումը, ինչպես և ՀՅԴ արտասահմանյան գործունեության վերաբերյալ լրացուցիչ տեղե-

---

[1] Տե՛ս *«Դաշնակցական տերրորիստների գործ»*, էջ 31 և 84–85:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 89 և 94:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 103 և 114:

կությունների հավաքումը: Հարցաքննությունը տարվել է այն ուղղությամբ, որպեսզի սպանության հետքերը Հայաստանի ընդհատակյա ԿԿ-ից հասցվի մինչև իսկ ՀՅԴ Թավրիզի Պատասխանատու մարմին: Այս խնդիրը լուծելուն են ծառայեցվել նաև ՀՅԴ նախկին գործիչներ **Սահակ Թորոսյանի** և **Հարություն Բուդաղյանի (Բուդաշկոյի)** հարցաքննությունները[1]: Ի դեպ, վերջինս նույնպես ՀՅԴ Երևանի կազմակերպության (ԿԿ-ի) կողմից մասնակցել էր 10-րդ Ընդհ. ժողովին՝ իբրև պատգամավոր: Սակայն Աշոտ Արծրունու տվյալներով Հ. Բուդաղյանը (Բուդաշկոն) համագումարին ներկա չի գտնվել, եղել է Չեկայի գործակալ[2]: Չնայած վերը նշած երկու գործիչները, ինչպես արդեն ասվել է, սմենովեխականության դիրքերից հակում են ունեցել ծառայել խորհրդային իշխանությանը, Խուշոյանի սպանության գործում նրանք ժխտել են ՀՅԴ կուսակցության որևէ դերակատարություն: Ս. Թորոսյանի հարցաքննության ընթացքում դատարանի նախագահ Զ. Աշրաֆյանին առանձնապես ցավ է պատճա-

---

[1] Խորհրդային Հայաստանում 1920–1930-ական թթ. բռնադատվածների կարճված գործերից երկուսում տեղեկություններ կան Հարություն Համբարձումի Բուդաղյանի վերաբերյալ: Նա ծնվել է 1900 թ. Կարսի մարզի Կաղզվան ավանում, կրթությունը՝ թերի բարձրագույն, ՀՅԴ անդամ: 1922 թ. Թիֆլիսում Ջեմալ փաշայի սպանության կապակցությամբ նա ձերբակալվել է և երկու տարով արտաքսվել Ռուսաստան: Այնուհետև փոխադրվել է Տիրասպոլ՝ Ռումինիա անցնելու նպատակով: Սահմանն անցնելու փորձի ժամանակ ձերբակալվել է, հարցաքննվել և մեղադրական նյութերով 1924 թ. հուլիսին ուղարկվել է Թիֆլիս Անդրչեկայի (նախագահ Մոգիլևսկի, գաղտնի-օպերատիվ մասի (ՀՕԿ) պետ Բերիա) տրամադրության տակ: Այնտեղից էլ իր հերթին էտապային կարգով ուղարկվել է Հայչեկայի տրամադրության տակ: Հայչեկայի կոլեգիայի 1924 թ. սեպտեմբերի 19-ի նիստում, նախ (Ս. Մելիք-Օսիպով), որոշվում է նրան բանտարկել վեց ամսով: Սակայն հաշվի առնելով, որ նրա պատժի նշված ժամկետը արդեն անցել է, ուստի ազատվել է կալանքից: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 18, գ. 5, թ. 19, 33, 35: Մյուս գործում տեղեկություն կա, որ ՀՍԽՀ ՊՔՎ կոլեգիայի 1929 թ. մարտի 16-ի նիստում լսվել է 29-ամյա նախկին դաշնակցական Հ. Բուդաշկոյի քր. գործը: Նա ձերբակալվել և ՀՍԽՀ Քր. օր.-ի 142 հոդվածով, դատապարտվել է ազատազրկման 8 տարի ժամկետով՝ խիստ մեկուսացմամբ: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 19, գ. 9, թ. 20: Հարկ է նշել, որ որոշ հետազոտողներ Հարություն Բուդաղյանին շփոթել են ՀՅԴ արևմտահայ ճանաչված գործիչ Հովակիմ Բուդաղյանի հետ:

[2] Տե՛ս *«Հ.Յ. Դաշնակցությունը գաղտնի գործունեություններում»*, էջ 38:

ոել նրա արտահայտած այն միտքը, որ «Դաշնակցությունը՝ որպես կազմակերպություն, Հայաստանում իր դերը արդեն վերջացրել է, իսկ որպես գաղափար՝ նա դեռ խորը նստած է հայ ժողովրդի սրտում»[1]:

Հարցաքննությունների ավարտից հետո ամփոփիչ ճառով հանդես է եկել պետական մեղադրող (դատախազ) Ա. Հովսեփյանը, ով սպանությունը համարել է Ն. Աղջաղալայի գյուղխորհրդի նախագահ, գրագիտություն չունեցող Գևորգ Մկրտչյանի սադրանքի ու բանսարկության արդյունք: Դատախազի կարծիքով՝ Գ. Մկրտչյանը նպատակ է ունեցել ասպարեզից հեռացնել Մ. Խուշոյանին և նրա փոխարեն գյուղխորհրդի քարտուղարի պաշտոնում նշանակել իրեն ցանկալի անձի՝ ահաբեկչությունը կազմակերպած Պ. Սինոյանին[2]: Մեր կարծիքով՝ սպանության շարժառիթի նման վարկածը քիչ համոզիչ է: Իբրև պետական մեղադրող՝ Ա. Հովսեփյանը փորձել է տալ գործի իրավական գնահատականը. Խուշոյանի՝ որպես խորհրդային աշխատողի նկատմամբ ոտնձգությունը որակելով որպես ոտնձգություն խորհրդային իշխանության դեմ, որը համապատասխանում էր ՀՍԽՀ Քր. օր.-ի 64 հոդվածի բովանդակությանը[3]:

ՀՍԽՀ ԿԳԿ-ի 1923 թ. փետրվարի 1-ին Քր. օր-ում արված փոփոխություններով Պետական հանցանքներ գլուխ 1-ի 64-րդ հոդվածը ձևակերպված է հետևյալ կերպ. «Հակահեղափոխական նպատակներով տեռորիստական ակտերի կազմակերպումը, ուղղված Խորհրդային իշխանության ներկայացուցիչների կամ բանվորագյուղացիական հեղափոխական կազմակերպության գործիչների դեմ, այլ և մասնակցությունը այդպիսի ակտերի գործադրության, թեկուզ

---

[1] Տե՛ս *«Դաշնակցական տերրորիստների գործը»*, էջ 138: Ս. Թորոսյանի արտահայտած այդ միտքը Զ. Աշրաֆյանը ակնարկում է դատավարության նյութերի ժողովածուի համար գրած իր առաջաբանում: Տե՛ս էջ XIV:

[2] Տե՛ս *«Դաշնակցական տերրորիստների գործը»*, էջ 170–174:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 180:

և այդպիսի ակտի առանձին մասնակցողը չպատկանի հակահեղափոխական կազմակերպության՝ պատժվում է 58-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված պատիժներով»[1]: Իսկ 58-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում էր պատժի առավելագույն չափ՝ գնդակահարություն և ամբողջ գույքի գրավում հօգուտ պետական գանձարանի[2]: Այլ խոսքով՝ սպանությունը որակել է որպես **քաղաքական հակահեղափոխական ահաբեկչական ակտ**՝ այն կապելով Խուշոյանի՝ իբրև խորհրդային իշխանության ներկայացուցչի աշխատանքային գործունեության հետ:

Պետական մեղադրողից հետո դարձյալ ճառով հանդես է եկել հասարակական մեղադրող, նախկին մենշևիկ Ար. Երզնկյանը: Նա իր ընդարձակ 38 էջ կազմող ելույթում խոսել է ոչ թե սպանության կոնկրետ հանգամանքների և իր գնահատականի մասին, այլ գործը ներկայացրել է որպես Դաշնակցության դեմ ուղղված մի դատապրոցես՝ վերագնահատելով այդ կուսակցության 35-ամյա «ոճրապատ» գործունեությունը[3]: Դրան հակառակ՝ ուշադրության է արժանի հասարակական մեղադրող Տ. Հախումյանի ելույթը: Հախումյանը կշտամբել է Երզնկյանին այն բանի համար, որ նա փոխարեն լուսաբանելու այն հանգամանքները, որի պայմաններում տեղի է ունեցել սպանությունը, շեղվելով բուն նպատակից և գործին տալով քաղաքական բնույթ՝ պատմական ընդարձակ էքսկուրս է կատարում Դաշնակցության 35-ամյա գործունեության պատմությանը: Նույն կերպ, նա քննադատական խոսք է ուղղել գործի մեղադրական եզրակացությանը ու դատախազության մեղադրանքների ոչ կոնկրետ հասցեականությանը: Տ. Հախումյանի փոխանցմամբ՝ «դատախազների մեղադրական խոսքերը ուղղված պետք է լինեին ոչ թե ընդհանրապես Դաշնակցություն կուսակցության հասցեին՝ որպես

---

[1] *«ՀՄԽՀ դեկրետների և փոխոշումների հավաքածու»*, էջ 58:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 13:

[3] Տե՛ս *«Դաշնակցական տերրորիստների գործը»*, էջ 185–223:

քաղաքական կազմակերպություն, որը 35 տարվա ընթացքում խոշոր դեր է խաղացել հայ իրականության մեջ, այլ բացառապես պետք է պարզաբանեին այն արարքները, որը կատարել են այստեղ նստած մեղադրյալները»[1]:

Լինելով Ս. Ստեփանոսյանի պաշտպանը՝ Տ. Հախումյանը կարծում էր, որ բնավ իրավացի չէ իր պաշտպանյալի վրա բարդել ամբողջ մեղադրանքը: Մենք «դատում ենք ոչ թե ամբողջ Դաշնակցություն կուսակցությունը,- հայտարարում էր նա,- այլ միմիայն այն անձնավորություններին, որոնք մեղադրվում են այսօր Մանուկ Խուշոյանի սպանության գործում»[2]: Դատապաշտպան Տ. Հախումյանը իրավացիորեն անտեղի է համարում սպանությունը Դաշնակցություն կուսակցությանը վերագրելը այն հիմնավորմամբ, որ վերջին տարիներին. «իր բոլոր կոնֆերանսներում, համագումարներում և ժողովներում, ինչպես Ամերիկայում, նույնպես և Եվրոպայում և այլուր, նա կոչ է անում աջակցել Խորհրդային Հայաստանի շինարարությանը»[3]:

Համերաշխվելով Տ. Հախումյանի արտահայտած մտքին՝ հարկ է նշել, որ եթե Դաշնակցությունը, իրոք, մտադրություն ունենար տեռոր կազմակերպել երկրի ներսում կամ արտասահմանում, ապա ավելի տրամաբանական կլիներ այն կիրառել խորհրդային ազդեցիկ կուսակցական-պետական գործչի դեմ, և ի՞նչ կարիք կար նման ակտ կատարել Արագածի փեշերին կորած մի խղճուկ գյուղում, մի ինչ-որ գյուղխորհրդի քարտուղարի հանդեպ: Այս կապակցությամբ դատապաշտպան Հախումյանը տեղին հարց էր տալիս. «Մի՞թե Խուշոյանն այդպիսի խոշոր վտանգ էր ներկայացնում Դաշնակցության համար»[4]: Իսկապես, միանշանակ կարելի է հաստատել, որ

---

[1] Նույն տեղում. էջ 233:
[2] Նույն տեղում, էջ 235:
[3] Նույն տեղում. էջ 245:
[4] Նույն տեղում. էջ 246:

Դաշնակցություն կուսակցության հրահանգով՝ ո՛չ ընդհանրապես ԿԿ-ի և ո՛չ էլ նրա անդամ Ս. Ստեփանոսյանի կողմից նման տեռորի կատարման ոչ հիմք կար և ոչ էլ որևէ շահագրգռություն: Պաշտպան Տ. Հախումյանը համոզմունք էր հայտնում, որ «այդ սպանությունը կատարվել է տեղական անհատական դժգոհությունների հողի վրա և միայն և միայն տեղական նախաձեռնությամբ»[1]:

Կրկին դառնալով գործի դատավարության նյութերին՝ պետք է արձանագրել, որ դրանք բավարար տեղեկություն չեն տալիս, թե ինչպես են ընթացել գործով մեղադրվողների նախաքննությունը: Սպանության մեջ գլխավոր կասկածյալներ Պ. Սինոյանը և Ա. Ստեփանյանը կալանավորված են եղել շուրջ 14 ամիս, և ինչպես արդեն ասվել է, սպանության գործի վերաբերյալ կազմվել է 6 հատոր նյութ: Նաև ասվել է, որ երկու գլխավոր մեղադրյալների նախաքննության ժամանակ, նրանց տված ցուցմունքներում, կատարվել է կտրուկ շրջադարձ. **Պ. Սինոյանի մոտ 1925 թ. դեկտեմբերի 17-ին, իսկ Ա. Ստեփանյանի մոտ՝ 1926 թ. հունվարի 11-ին**[2]:

Եթե մինչ նշված այդ օրերը տրված ցուցմունքներում նրանք հայտնել են, որ սպանությունը կատարվել է անձնական, առօրեական հողի վրա, և քննիչները որևէ այլ վարկած առաջ չեն քաշել, ապա համապատասխանաբար Պ. Սինոյանը դեկտեմբերի 17-ին և Ա. Ստեփանյանը հունվարի 11-ին, կարծես պայմանավորված, հանդես են եկել հայտարարությամբ: Տվյալ դեպքում Պ. Սինոյանը հայտնել է, որ սպանությունը կատարել է անձամբ ինքը՝ ԿԿ-ի անդամ Ս. Ստեփանոսյանի հանձնարարությամբ, թե «Կենտկոմը որոշել է

---

[1] Նույն տեղում, էջ 205:
[2] Նույն տեղում, էջ 254–255 և 318:

Խուշոյանին խփել, և դու պիտի հանձն առնես այդ և խփես»[1]: Այսինքն՝ ինչ-ինչ հանգամանքների թելադրանքով Սինոյանը մինչ այդ արած իր ցուցմունքը փոխում է և դրան քաղաքական բնույթ է տալիս, որ իբր սպանությունը կատարվել է իր կուսակցության ղեկավար մարմնի հանձնարարությամբ:

Այդպիսով՝ սույն գործով 14 անգամ հարցաքննված Պ. Սինոյանի ցուցմունքները բաժանվում են երկու հիմնական փուլի՝ ցուցմունքներ մինչև 1925 թ. դեկտեմբերի 17-ը և 17-ից հետո՝ մինչև դատի օրը՝ 1926 թ. հոկտեմբերի 8-ը:

Հարց է ծագում. ի՞նչն էր ստիպել Պ. Սինոյանին և նաև Ա. Ստեփանյանին իրենց ցուցմունքներում նման կտրուկ փոփոխություն կատարել: Ինչպես արդեն ասվել է, ցուցմունքի փոփոխման երկու վարկած կարելի է մատնանշել.

1. Նրանց հանդեպ իրավապահ մարմինների գործադրած ծեծուջարդը՝ ցանկալի ցուցմունք ու խուստովանություն կորզելու համար: Դաշնակցականների ձեռքով մասնավոր հողի վրա սպանություն ներկայացնելը նպատակահարմար չէր: Պետք է նկատի ունենալ, որ այդ շրջանում Հայկոմկուսը մեծածավալ աշխատանք էր ծավալել Դաշնակցություն կուսակցությունը վարկաբեկելու ու քայքայելու ուղղությամբ: Եվ այս սպանությունը ևս մի հայմար միջոց էր այդ ճանապարհին: Հարկավոր էր Խուշոյանի սպանությանը, որքան էլ այդ անձը հասարակայնորեն ճանաչված չէր, քաղաքական բնույթ ու հնչեղություն տալ:

2. Մեղադրյալների նախնական ցուցմունքի փոփոխումը կարելի է բացատրել նաև նրանով, որ հավանաբար կալանավայրում քննիչները կամ երկարամյա բանտային փորձառություն ունեցող բանտարկյալները նրանց հուշել են փոխելու իրենց նախնական ցուցմունքը, գործին քաղաքական բնույթ տալ, որպեսզի մեղմացվի

---

[1] Նույն տեղում, էջ 255:

իրենց նկատմամբ կիրառվելիք պատժաչափը: Այս կապակցությամբ դատապաշտպան Ա. Հասան-Ջալալյանը տալիս է հետևյալ մեկնաբանությունը. «Եթե այդ սպանությունը որակվեր որպես մասնավոր հողի վրա կատարված, այդ դեպքում համաձայն ՀՍԽՀ Քր. օր.-ի 142 հոդվածի պահանջի՝ նրանց կսպառնար ազատազրկում 8–10 տարի ժամկետով: Իսկ եթե պարզվեր, որ այդ երիտասարդները եղել են գործիք ավելի ուժեղ հանցագործների ձեռքում, այդ դեպքում նրանք կարող էին հուսալ, որ դատարանը հնարավոր կգտներ կիրառելու նույն օրենսգրքի 28 հոդվածը, որը տալիս է իրավունք նվազեցնել պատիժը, ըստ հայեցողության, 3-ից մինչև 6 տարի»[1]: Մեր կարծիքով՝ պետական քննչական մարմինների աշխատողները հուշած կլինեն այդ գաղափարը, որպեսզի հանցանքի գլխավոր մեղքը, իբրև կազմակերպիչ, գցեն Դաշնակցություն կուսակցության վրա: Այստեղից էլ՝ քաղաքական մեղադրանք կուղղվեր այդ կուսակցության դեմ՝ որպես տեռորի գլխավոր կազմակերպչի, ու դրանով կնվազեցվեր սպանությունը իրականացնողների համար նախատեսվող պատժաչափը՝ իբրև հանձնարարություն կատարողների: Մինչդեռ պաշտպան Հասան-Ջալալյանը կարծիք էր հայտնում, որ այդ գաղափարը նրանց հուշել են բանտի «հմուտ և մասնագետ հանցագործները»՝ 14 ամիս նրանց հետ ունեցած շփումներում[2]:

Այդուհանդերձ, ամփոփելով դատապաշտպաններ Տ. Հախումյանի և Ա. Հասան-Ջալալյանի արտահայտած կարծիքները սպանության բնույթի վերաբերյալ՝ պետք է նշել, որ եթե ըստ Հախումյանի՝ Մ. Խուշոյանի սպանության փաստը «տեղական մի տերրոր է, որի հետ Սահակ Ստեփանոսյանը ոչ մի կապ կամ առնչություն չունի և չի էլ կարող ունենալ»,[3] ապա Հասան-Ջալալյանը, տարատեսակ դատողություններ անելով հանդերձ, վերջում ոչ հստակ եզրա-

[1] Նույն տեղում, էջ 278:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 279:
[3] Նույն տեղում, էջ 260:

կացնում է, որ սպանությունը կատարվել է քաղաքական հողի վրա՝ հավանաբար Ստեփանոսյանի կամ ԿԿ-ի հանձնարարությամբ[1]:

Սպանությանը քաղաքական բնույթ է տվել նաև դատավարության ժամանակ ելույթ ունեցած վերջին դատապաշտպանը՝ իրավաբան Գրիգոր Չուբարյանը[2]: Նա էլ, Ա. Երզնկյանի նման պատմական էքսկուրս կատարելով դեպի Դաշնակցության անցյալը, վերջում եզրակացրել է, որ «այդ սպանությունը ևս արդյունք է Ալագյազի խմշապետական-կուլակային տարրերի և Դաշնակցության գործակցության»[3]: Սպանությունը նա որակել է որպես տեռոր, ինչը համապատասխանում էր Քր. օր.-ով նախատեսված 64 հոդվածին[4]: Մեղադրյալներ Պ. Սինոյանի և Ա. Ստեփանյանի պաշտպան Գր. Չուբարյանը թեև երկուսի հանդեպ մեղադրանքներ է ներկայացրել Դաշնակցությանը անդամակցելու և հակահեղափոխական բնույթի ազիտացիոն գրականություն տարածելու մեջ, սակայն, նրա կարծիքով. «նրանք հակախորհրդային դեմքեր չեն, նրանք լոյալ են եղել Խորհրդային իշխանությանը»[5]: Դրա համար էլ նա առաջարկում էր ավելի մեղմ պատիժ, քան դատախազ Ա. Հովսեփյանի առաջարկած գնդակահարությունը:

Հոկտեմբերի 19-ին ավարտվել է ՀՍԽՀ Գերագույն դատարանի դատական կոլեգիայի դռնբաց դատական նիստը: Դատարանը՝ մասնակցությամբ նախագահ Զ. Աշրաֆյանի, ժողատենակալներ՝ Մ.

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 282:

[2] **Չուբարյան Գրիգոր Համբարձումի** (1888–1962 թթ.), Դոնի Ռոստովի Չուբարյան հայտնի տոհմի ներկայացուցիչ, ճանաչված իրավաբան, ՀՍԽՀ արդարադատության ժողկոմի տեղակալ, ՀՍԽՀ առաջին սահմանադրության հեղինակ:

[3] *«Դաշնակցական տերրորիստների գործը»*, էջ 308, նաև *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 206:

[4] Տե՛ս *«Դաշնակցական տերրորիստների գործը»*, էջ 316:

[5] Նույն տեղում, էջ 330:

Սարգսյանի և Ա. Աղամալյանի, խորհրդակցելուց հետո՝ նույն օրը՝ երեկոյան ժամը 21-ին, հրապարակում է դատավճիռը: Նախագահի կողմից ընթերցված մեղադրական եզրակացությունում նշվում էր, որ քննվել է Վաղարշապատի գավառի Ն. Աղջաղալայի գյուղխորհրդի քարտուղար Մ. Խուշոյանի սպանության մեջ մեղադրվող կամ դրա հետ այս կամ այն կերպ առնչություն ունեցող, ինչպես նաև հակահեղափոխական կազմակերպությանը մասնակցելու և հակահեղափոխական գրականություն տարածելու համար մեղադրվող 11 անձանց գործ: Քննելով սպանության գործը՝ դատարանը այն համարել է ապացուցված: Տասէջանոց դատավճռում նախ մի ամբողջական մեղադրանք էր ուղղվում ՀՅԴ հասցեին: Այնուհետև ներկայացնելով գործին առնչվող գրեթե բոլոր ուղղակի և անուղղակի 11 մասնակիցներին՝ մի մասի հանցանքը ապացուցված համարելով, իսկ մյուսինը՝ ոչ, և ղեկավարվելով հեղափոխական խղճով և ՀՍԽՀ Քր. օր.-ի համապատասխան հոդվածներով՝ դատական կոլեգիան որոշում է սահմանել հետևյալ պատիժը.

Քր. օր.-ի 16, 64 հոդվածներով թիվ մեկ մեղավոր է ճանաչվել ՀՅԴ Հայաստանի ընդհատակյա ԿԿ-ի անդամ Սահակ Արտեմի Ստեփանոսյանը և սահմանվել է պատժի առավելագույն չափ՝ գնդակահարություն՝ գույքի կատարյալ բռնագրավմամբ: Սպանության երկու անմիջական իրականացնողներ Պ. Սինոյանը և Ա. Ստեփանյանը ճանաչվել են թիվ երկրորդ մեղավոր և հաշվի առնելով, որ նրանք հանցանքը կատարել են կուսակցական կարգապահության համաձայն, ուստի դատապարտվել են 10 տարի ժամկետով ազատազրկման՝ գույքի կատարյալ բռնագրավմամբ, իսկ Հակոբ Հակոբյանը դատապարտվել է 3 տարի ժամկետով: Վերջինս դատապարտվել է Քր. օր.-ի 58-րդ հոդվածի երկրորդ մասով, այն է՝ «մասնակցողը անտեղյակ է եղել սույն հոդվածով մատնանշված հանցանքի վերջնական նպատակներին, այդ մասնակցությունը պատժվում է

ազատազրկում երեք տարուց ոչ պակաս ժամանակով»[1]: Մյուսների մեղքը ապացուցված չլինելու պատճառով նրանք ազատ են արձակվել[2]: Թեև հրապարակված դատավճիռը համարվել է վերջնական և բեկման ոչ ենթակա, սակայն վճռից մի քանի օր անց՝ հոկտեմբերի 22-ին, ՀՍԽՀ ԿԳԿ-ի նախագահությունը (նախ. Ա. Կարինյան, քարտուղար՝ Հ. Տատյան) քննել է Ս. Ստեփանոսյանի դիմում-խնդրանքը՝ նրա գնդակահարությունը ազատազրկման փոխարինելու վերաբերյալ և որոշել գնդակահարությունը փոխարինել 10 տարվա ազատազրկման[3]:

Այս դատական գործընթացի ականատեսը՝ Իրատես ծածկանունով, իր «Դատական խեղկատակություններ» հրապարակման մեջ պատմում է, որ դատավարության ավարտից հետո պահեստի միլիցիան, սրերը մերկացրած, բռնել էր Աբովյան փողոցի երկայնքը՝ մինչև Չեկայի շենքի թեքվող անկյունը: Նրանք հետաքրքրասեր ժողովրդին քշում էին կողքի փողոցները: Մեկ դասակ՝ ռուս պահակային զինվորների, և 10 չեկիստների հսկողությամբ, թատրոնի շենքից դուրս են բերվում դատապարտյալները: Ժողովուրդը հեռացվում է քաղաքային այգուց, բայց կրկին «խուժում է առաջ՝ տեսնելու իրենց հարգված մարդկանց»[4]:

Դատապարտվածների հետագա ճակատագրի վերաբերյալ մենք տեղեկություններ չունենք: Ամենայն հավանականությամբ, նրանք՝ որպես ձրի աշխատուժ, քշվել են Սիբիր՝ տաժանակրության: Դա երևում է «Յուսաբեր» թերթում զետեղված «Կեանքը Հայաստանի մէջ» խորագրով «Դրօշակ» և «Յառաջ» թերթերի թղթակցությունից, որտեղ մասնավորապես նշվում է, որ Ս. Ստեփանոսյանը իր

---

[1] *«ՀՍԽՀ դեկրետների և փոխոշումների հավաքածու»*, էջ 13:
[2] Տե՛ս *«Դաշնակցական տերրորիստների գործը»*, էջ 336–345:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 308, թ. 105:
[4] «Դրօշակ», Փարիզ, 1927 թ., թիվ 1 (հունվար), էջ 28:

ընկերների հետ 20 օր պահվել է Թիֆլիսում և ապա տարվել դեպի հյուսիս՝ անհայտ ուղղությամբ[1]:

ՀՅԴ Երևանի ընդհատակյա ԿԿ-ի՝ 1927 թ. հուլիսի 8-ին Թավրիզ՝ Բյուրոյի ներկայացուցիչ Արցախյանին (Ե. Իշխանյանին) հասցեագրած նամակ-զեկուցագրում տեղեկացվում է, որ Հայաստանից Թիֆլիս տեղափոխված 40 կալանավորների թվում եղել են տասը տարվա բանտարկության դատապարտված Ս. Ստեփանոսյանը և երկու ուրիշներ: Զեկուցագրում նաև նշվում է, որ կալանավորներ Ս. Ստեփանոսյանին, մենշևիկ ուսանողներին[2] և մյուսներին Թիֆլիսի բանտից դեպի երկաթուղային կայարան տեղափոխելու ճանապարհին (Սիբիր աքսորի փոխադրելու նպատակով) ժողովուրդը բանտի մուտքի առջև և կայարանում կազմակերպել է ցույց և ուռաներով ու ոգևորիչ վանկարկումներով դիմավորել նրանց[3]:

Միացյալ պետական քաղաքական վարչության 1927 թ. դեկտեմբերի 30-ի ամսաթվով գաղտնագերծված մի ամփոփագրում հիշատակություն կա Սահակ Ստեփանոսյանի մասին: Խոսքը վերաբերում է Վաղարշապատ քաղաքի շենքերի պատերին փակցված տասնյակ հակախորհրդային բովանդակության պաստառների մասին, որոնցից մեկին գրված է եղել. «Կեցցե՛ Սահակ Ստեփանոսյանն իր կազմով, թքա՛ծ այդ լկտի կոմունիստների վրա, ուռա՛ դաշիզմը»[4]:

Վերջում հավելենք, որ 1925–1926 թթ. աղմուկ հանած այդ սպանության գործին հասկանալիորեն հակառակ դիրքերից, իրարամերժ կարծիքներով արձագանքել է բոլշևիկյան և դաշնակցական

---

[1] Տե՛ս «Յուսաբեր», Գահիրե, 13 օգոստոսի 1927 թ.:

[2] Խոսքը հավանաբար 1924 թ. օգոստոսին վրաց մենշևիկների հայտնի հակախորհրդային ապստամբության կապակցությամբ ձերբակալվածների մասին է;

[3] Տե՛ս *Հ.Յ. Դաշնակցությունը գաղտնի գործունեության մեջ*, էջ 132–133:

[4] Տե՛ս *Հայաստանը սովետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)*, Ե., 2008, էջ 239:

մամուլը: «Խորհրդային Հայաստան»-ը, ինչպես ընդունված էր պաշտոնական վարկածով, սպանությունը համարել է ՀՅԴ Երևանի կազմակերպության որոշմամբ կատարված տեռորիստական ակտ[1]: Դատավարությունը նախագահած Զ. Աշրաֆյանը Անդրերկրկոմի «Մայրտակոչ» պաշտոնաթերթում զետեղված իր «Թե ինչո՞ւ դատվեցին դաշնակցական տերրորիստները» վերտառությամբ հոդվածում սպանության թելը հասցնում էր մինչև ՀՅԴ Թավրիզի Պատասխանատու մարմնի ղեկավար Եղիշե Իշխանյանին և անգամ ՀՅԴ Բյուրոյի անդամ Ռուբեն փաշային (Ռուբեն Տեր-Մինասյանին)[2]:

Խորհրդային իշխանությունների կողմից տեռորիստական որակված սպանության այդ գործի ողջ անհեթեթությունն այն է, որ եթե Դաշնակցություն կուսակցությունը իսկապես մտադրություն ունենար հակախորհրդային պայքարին մեծ հնչեղություն տալ, ապա կարող էր ահաբեկել շատ ավելի երևելի դեմքի, քան թե անհայտ մի գյուղի խորհրդի անկուսակցական քարտուղարի:

ՀՅԴ Կահիրեի «Յուսաբեր» թերթը, հակադարձելով խորհրդային մամուլի աղմուկին, իր խմբագրականում հեգնանքով գրում էր. «... խորհրդային մամուլը «Պրավդա»-էն եւ «Իզվեստիա»-էն սկսած, ընդարձակ յոդվածներ կը նուիրէ «հակայեղափոխական Դաշնակցութեան» այս ահավոր ձեռնարկին, որ պիտի զար հիմէն ցնցելու խորհրդային բովանդակ շէնքը և լրջորէն վտանգելու «պրոլետարիատի դիկտատուրայի» ճակատագիրը»: Այդ նույն խմբագրականում դարձյալ երգիծանքով շարունակում էր. «Դաշնակցութեան վարիչ մարմինները՝ Պարսկաստանից մինչև Երկրի ԿԿ որոշած էին գաղտնի ահաբեկել յեղափոխական այս մեծ ու կարկառուն դեմքը՝ «ընկ. Խուշոյանը»: Կը սպաննուի Աղջաղալայի աննշան Խուշոյանը,

---

[1] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 25 ապրիլի 1926 թ.: Թերթում գյուղի անվանումն էլ է շփոթված՝ Ն. Աղջաղալայի փոխարեն նշված է Վերին Հաջիղարա, որը ներկայիս Այգեշատ գյուղն է:

[2] Տե՛ս «Մարտակոչ», Թիֆլիս, 15 փետրվարի 1927 թ. (թիվ 36):

սակայն կենդանի կը մնան բոլոր մեծանուն Խուշոյանները, անոնք, որոնք նստած են Երևանի մէջ»[1]:

Հանրագումարի բերելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ նախ դա արհեստականորեն քաղաքական երանգ ստացած մի դատական գործ էր, նպատակը՝ խորհրդային իշխանությունների կողմից ՀՅԴ կուսակցության հերթական վարկաբեկման փորձ: Այսպես կոչված դաշնակցական տեռորիստների դատական գործը, անշուշտ, ծառայեցվել է Հայկոմկուսի որդեգրած Դաշնակցություն կուսակցությունը քայքայելու, կազմալուծելու և Հայաստանից դուրս մղելու քաղաքականությանը:

Ինչպես արդեն ասվել է, այդ քաղաքականության առաջին ակտը ՀՅԴ 1921 թ. հրապարակային դատն էր, երկրորդը՝ նախկին դաշնակցականների 1923 թ. հայաստանյան լուծարման համագումարը, երրորդը՝ կարելի է համարել Մ. Խուշոյանի սպանության հետ կապված, այսպես կոչված, «Դաշնակցության տեռորիստական գործը»:

Սպանությունը վերագրվեց Դաշնակցություն կուսակցությանը, որպեսզի նրա դեմ պայքարին հրապարակային հնչողություն տրվեր: Պաշտոնապես հրատարակված դատավարության նյութերի դիտարկումից դժվար չէ նկատել, որ փաստորեն ամբողջ մեղադրանքը ուղղվել է ՀՅԴ դեմ՝ սկսած նրա Արազածի կազմակերպությունից մինչև Հայաստանի ընդհատակյա ԿԿ ու մինչև իսկ ՀՅԴ Թավրիզի Պատասխանատու մարմին: Խորհրդային դատաքննչական մարմինների կողմից ՀՅԴ անունից ներկայացված գլխավոր մեղադրյալ ՀՅԴ Հայաստանի ԿԿ-ի անդամ Ս. Ստեփանոսյանի մեղքը այդպես էլ մնում է չապացուցված: Սպանությունը իրականացրած երկու գլխավոր դերակատարների՝ ՀՅԴ Արազածի խմբի անդամներ Պ. Սինոյանի և Ա. Ստեփանյանի հանցանքի դրդապատճառները պետք է փնտրել սասունցիներով ու մշեցիներով բնակեցված, ավան-

[1] «Յուսարեր», Գահիրե, 2 նոյեմբերի 1926 թ., (թիվ 18):

դական-նահապետական կենցաղավարությամբ ապրող գյուղի գյուղացիների իրենց գյուղխորհրդի քարտուղարից ունեցած դժգոհությունների մեջ:

Հիրավի, եթե Դաշնակցություն կուսակցությունը վերին մակարդակով, իրոք, ծրագրեր ահաբեկչություն կազմակերպել, որի հարուստ փորձը նա կուտակել էր նախընթաց տասնամյակների ընթացքում, ապա դա չէր իրականացնի խորհրդային մի խեղճ ու աննշան պաշտոնյայի նկատմամբ: Փաստորեն Փետրվարյան ապստամբությանը հաջորդած հետագա տարիներին մենք չենք հանդիպում Խորհրդային Հայաստանում ընդհատակում կամ կիսաընդհատակում գործող ՀՅԴ կառույցների կամ անդամների կողմից որևէ աղմկահարույց գործողություն, որովհետև դա չէր բխում կուսակցության որդեգրած քաղաքականությունից: Ինչպես արդեն նշվել է, ՀՅԴ-ն ընդդիմադիր էր Խորհրդային իշխանությանը գաղափարական, քաղաքական հարցերում, սակայն ոչ ամենևին մարդ սպանելուն (ահաբեկչության): Նրա որդեգրած ուղեգիծն էր՝ ընդդիմադիր լինելով Խորհրդային իշխանությանն ու բոլշևիկյան վարչակարգին, այդուհանդերձ օժանդակել Խորհրդային Հայաստանի տնտեսական ու մշակութային վերաշինությանը:

Վերջում սույն դատական գործի նյութերի հիման վրա պատմագիտության ծիրում կարելի է կատարել երկու կարևոր բացահայտում. ա) քրեական այս գործին քաղաքական բնույթ է տրվել, ՀՅԴ կուսակցությանը մեղադրանք է ներկայացվել՝ նպատակ ունենալով հերթական անգամ վարկաբեկել ու արագացնել այդ կուսակցության քայքայումը և բ) սույն դատական գործի դատավարության նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ամբողջ 1920-ական թվականներին Հայաստանում գործել է պաշտոնապես իբրև թե լուծարված, սակայն իրականում գործող ՀՅԴ ընդհատակյա ԿԿ՝ իր բազմաթիվ կազմակերպություններով ու խմբերով: Այդ վիճակը շարունակվել է մինչև 1930-ական թթ. համատարած կոլեկտիվացման

փուլը, որը ուղեկցվեց զանգվածային քաղաքական բռնաճնշումներով՝ կուլակաթափությամբ, բանտարկություններով, աքսորներով ու գնդակահարություններով: 1936 թ. դեկտեմբերին ընդունված ԽՍՀՄ և դրա օրինակով ու նմանությամբ 1937 թ. մարտին ՀԽՍՀ նոր սահմանադրությամբ հայտարարվեց, որ խորհրդային երկրում վերացել են շահագործող դասակարգերը, այլևս չկան թշնամական կուսակցություններ, երկրում հաղթանակել է սոցիալիզմը[1]:

[1] Տե՛ս *ՍՄԿԿ պատմություն*, Ե., 1981, էջ 554–555, *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 7, Ե., 1967, էջ 380–384, *История Советской Конституции в документах 1917–1956*, М., 1957, с. 729–730.

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ՈՒ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԼ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ: ԳԱՂԱՓԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԿՈՄԿՈՒՄ - ՀՅԴ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1920 – ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

1. Քաղաքական հալածանքների ու բռնությունների այլ դրսևորումներ

Նշված ժամանակաշրջանում ևս Հ. Յ. Դաշնակցության և մնացյալ հակահեղափոխական ու թշնամական որակվող կուսակցությունների լուծարումը Խորհրդային Հայաստանում ուղեկցվում էր արտաքսումներով, բռնություններով, բանտարկություններով ու աքսորով: Այս շրջանում քաղաքական հետապնդումների գլխավոր դերակատարներն էին հանրապետության Ն.Գ. ժողկոմատը, 1926 թվականի երկրորդ կեսից Արտակարգ հանձնաժողովի իրավահաջորդ Պետական քաղաքական վարչությունը (ՊՔՎ), դատախազությունը, դատարանները և այլն:

Հայաստանում Դաշնակցության «լուծարման» կամ ինքնավերացման (1923 թ.) համագումարից հետո, երբ 4000-ից ավելի դաշնակցականներ իբրև հրապարակայնորեն հայտարարել էին կուսակցությունից իրենց հեռանալու մասին, փաստերը ցույց են տալիս, որ դրանից հետո էլ՝ ամբողջ 1920-ական թթ., ընդհատակում գոյատևել ու գործել են նրա ոչ քիչ թվով խմբեր ու բջիջներ, որոնք, իբրև թե հակահեղափոխական աշխատանք տանելու համար, իշխանությունների կողմից ենթարկվել են հետապնդումների, բանտարկության ու աքսորի:

Դաշնակցական ընդհատակյա կազմակերպություններ են բացահայտվել Լենինականում, Էջմիածնի, Զանգեզուրի, Դարալագյազի և այլ գավառներում: Դրանց ակտիվիստները տասնյակներով ու հարյուրներով ձերբակալվել և բանտարկվել են կամ աքսորվել Ռուսաստան: Օրինակ, հակահեղափոխական աշխատանք տանելու մեղադրանքով 1926 թ. ձերբակալվել է Դարալագյազի Այնաձոր (Աղավնաձոր) գյուղի ուսուցիչ Մելիքսեթ Կարապետյանը, որը եղել է Դարալագյազի գավառի ընդհատակյա դաշնակցական կազմակերպության ղեկավարը: Հայպետքաղվարչության կոլեգիայի որոշումով Մ. Կարապետյանը դատապարտվել է 5 տարվա աքսորի, և նրա գործը ուղարկվել է Անդրկովկասյան Պետքաղվարչություն[1]:

Հայպետքաղվարչության կոլեգիայի 1926 թ. հուլիսի 15-ի որոշումով, որպես ընդհատակյա դաշնակցական ուսանողական կազմակերպության կոմիտեի անդամ Արտավազդ Գևորգյանը՝ դատապարտվել է աքսորի, 5 տարի ժամկետով ԱՍԴԽՀ սահմաններից դուրս՝ ԽՍՀՄ խորքերը[2]: Նույն թվականից Հայպետքաղվարչության կալանքի տակ է գտնվել դաշնակցական ընդհատակյա կազմակերպության հայտնի դեմքերից Միհրան Տեր-Հովհաննիսյանը: Տեղե-

---

[1] Տե՛ս *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, Ե., 1999, էջ 283:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 284:

կացվում է, որ մինչև բանտարկությունը նա եղել է Լենինականի կազմակերպության Կենտկոմի[1] անդամ և կապ է պահպանել Դաշնակցություն կուսակցության արտասահմանյան մարմինների հետ: Հայպետքաղվարչության նախագահ Ս. Մելիք-Հովսեփյանի, գաղգործառման պետ Վարդանյանի և գաղտնի բաժնի պետ Խ. Մուղդուսու ստորագրությամբ ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Սաքո Համբարձումյանին ուղղված 1926 թ. նոյեմբերի 8-ի գրությունում տեղեկացվում էր, որ Մ. Տեր-Հովհաննիսյանը իբրև Հայաստանի դաշնակցականների ներկայացուցիչ, 1925 թ. ամռանը մասնակցել է Համամիութենական դաշնակցական ընդհատակյա կոնֆերանսին, որը տեղի է ունեցել Ռուսաստանում: Իր հակահեղափոխական աշխատանքի համար Մ. Տեր-Հովհաննիսյանը Հայպետքաղվարչության կոլեգիայի կողմից դատապարտվել է քաղաքական աքսորի 5 տարի ժամկետով, Հայաստանի սահմաններից դուրս՝ ՌՍԴԽՀ խորքերը[2]:

Այս շրջանում ավելի են ուժեղացվում քաղաքական հետապնդումներով հալածանքներն ու բանտարկությունները: Բանն այն է, որ հանձին ՀամԿ(բ)Կ ներսում ի հայտ եկած, այսպես կոչված, ընդդիմադիր տրոցկիստական-զինովևական, աջ և այլ համարվող խմբերի ու պլատֆորմների՝ ուժեղացել էր պայքարը նաև կոմկուսի ներսում, որը քաղաքական հետապնդումների լայն դաշտ էր բացում: Հասկանալի է, որ Հայաստանի բանտերում, բացի քրեականից, առկա են եղել նաև քաղաքական կալանավորներ: Այսպես, Երևանի ուղղիչ տան պետ Չախմախչյանը ՀՍԽՀ ԿԳԿ-ի նախագահին, պատճենը ՀՊՔ վարչության և Հանրապետության դատախազին ուղղված 1926 թ. հունիսի 8-ի գաղտնի գրությունում տեղեկացնում էր, որ 27 հոգուց բաղկացած քաղաքական կալանավորների մի խումբ, հունի-

---

[1] Մեր կարծիքով՝ տեղեկանքը ստույգ չէ, որովհետև Հայաստանում ընդհատակյա Կենտկոմ է գործել միայն Երևանում:

[2] Տե՛ս *Հ.Ց. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 284–286:

սի 5-ին, հացադուլ էր հայտարարել, սակայն հաջորդ օրը հետ է կանգնել այդ որոշումից[1]:

Քանի որ հասկանալի պատճառով հայաստանյան մամուլը լռել է 1926 թ. սկզբներից Հայաստանում սկսված զանգվածային ձերբակալությունների մասին, առաջիններից մեկը դրան արձագանքեց Փարիզում նոր լույս տեսնող ՀՅԴ պաշտոնական օրգան «Դրօշակ»-ը: Նրա ապրիլյան համարի «Հայաստանի ձերբակալությունները» խորագրով նյութում, արտասահմանյան մամուլի հաղորդած հեռագրերի ու նամակների հիման վրա, տեղեկացվում է, որ 1926 թ. հունվարի սկզբներին Հայաստանում կատարվել են հարյուրավոր ձերբակալություններ: Նշվում է, որ ձերբակալված են Շիրակի շրջանում՝ 43 մարդ, Արագածում՝ 12, Էջմիածնում՝ 15, Կոտայքում՝ 5, Ղամարլուում՝ 2, Դիլիջանում՝ 10, Դարալագյազում՝ 12, Զանգեզուրում՝ 11, Երևանում՝ 89, Երևանի զինվորական և հրամանատարական կազմից՝ 40 մարդ, և որ ձերբակալությունները փոքր ընդհատումներով շարունակվում են[2]: ՀՀ Ազգային անվտանգության նախարարության (ԱԱՆ) կարճված գործերի ֆոնդի (ԿԳՖ) մի տեղեկանքով՝ 1927 թ. նոյեմբերին Էջմիածնի շրջանում ձերբակալվել է 59 մարդ, որոնք մեղադրվել են դաշնակցական ընդհատակյա կազմակերպության մեջ լինելու համար: Նրանց մեծ մասը դատապարտվել է 3-ական տարով աքսորի[3]:

Հայաստանում ծայր առած զանգվածային ձերբակալություն-բանտարկությունների մասին է վկայում նաև այն փաստը, որ, անհանգստացած հանրապետությունում ստեղծված քաղաքական վիճակի սրացումից, իշխանությունները դիմել են պատժի միջոցների խստացումների: Այսպես, օրինակ, ՀՍԽՀ ԿԳԿ-ը՝ նախագահ Ար-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 571, ց. 1, գ. 13, թ. 12:

[2] Տե՛ս **Լազեան Գ.**, *Հայաստան և Հայ Դատը*, Ե., 1991, էջ 319–320:

[3] Տե՛ս **Մանուկյան Ա.**, *Քաղաքական կյանքը Հայաստանում 1920–1940 թթ.*, Ե., 2002, էջ 91:

տաշեւ Կարինյանի, քարտուղար Հայրապետ Տատյանի և քարտուղարության վարիչ Ավիս Նուրիջանյանի ստորագրությամբ, 1926 թ. սեպտեմբերի 8-ին ընդունվել է որոշում. «Բոլոր տեսակի հակահեղափոխության, լրտեսության, հրոսակության, մաքսանենգության և պաշտոնի վերաբերյալ հանցագործությունների դեմ հաջող պայքարելու նպատակով՝ ՀՊՔՎ (Հայաստանի Պետական քաղաքական վարչությանը – Ա.Հ.) տալ իրավունք արտադատական պատժի՝ մինչև պատժի առավելագույն չափը»[1]: Եվ այդ մարմնի միջոցով կատարվել են ձերբակալվածների արագացված կարգով դատավճիռներ՝ ավելի հաճախ աքսոր, բանտարկություն, իսկ ծայրահեղ դեպքերում՝ գնդակահարություն:

Ձերբակալությունները կատարվում էին անհատական կամ խմբակային ձևով: Ուշագրավ է, որ ձերբակալությունների իրականացման տեղեկատվական աղբյուրներից մեկը համարվել է Հայաստանի և Անդրպետքաղվարչության կողմից հետախուզական ու գործակալական խողովակներով Հայաստանի ու Թավրիզի դաշնակցական մարմինների ու գործիչների նամակագրությունների գաղտընթերցումները գաղտնի տեղեկատվություն հավաքելու միջոցով՝ ՀՅԴ հայաստանյան գաղտնի կազմակերպությունների ու անհատ անձանց բացահայտումն ու դրանց դեմ արդյունավետ պայքարի կազմակերպումը: Այդ նամակներում ևս տեղեկություններ են հայտնվում Հայաստանում կատարվող զանգվածային ձերբակալությունների մասին, որոնք շարունակվել են նաև 1927 թ.:

ՀՅԴ Երևանի (Մրզաստանի) ԿԿ-ի ուրիանդակի (курьер) միջոցով 1927 թ. մայիսի 5-ին Թավրիզի ՀՅԴ մարմիններին, այդ թվում անձամբ Ե. Իշխանյանին (ծածկանունները՝ Արցախյան, Մենակ, Ստյոպա) ուղարկված և խորհրդային պետական անվտանգության

---

[1] *Ստալինյան բռնահնչումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրեա,* **Խաչատյան Հ.** և ուրիշներ, Ե., 2015, էջ 118–119:

մարմինների կողմից հավաքագրված հյուպատոսարանի և փոստատան գործակալ աշխատողների միջոցով գաղտնընթերցված նամակում (ունեցել՝են նաև ծածկագրերի բանալին) տեղեկացվում էր, որ. «բացի մինչ այդ տեղի ունեցող ամենօրյա մասնակի ձերբակալություններիից՝ ապրիլի 26-ի լույս 27-ի գիշերը տեղի ունեցան նոր զանգվածային ձերբակալություններ միաժամանակ թե՛ քաղաքում և թե՛ գավառներում: Այդ ձերբակալությունների թիվը, ենթադրում ենք, հասնում է մինչև 100 մարդու: Ձերբակալությունների համար որևէ առիթ չի տրվել: Նման քայլի են դիմել, որպեսզի աշխատանքից ազատեն իրենց համար անցանկալիներին: Սա հին մեթոդ է: Անցյալում նրանք այդպես են վարվել, օրինակ, համալսարանի դասախոս Թ. Ավդալբեկյանի, Ամերկոմի աշխատակից Վարազդատ Տերոյանի, Գյուտ եպիսկոպոս Տեր-Ղազարյանի և այլոց հանդեպ»[1]: Ձերբակալվածների թվում եղել են ԿԿ-ի անդամներից Գրիգորը և Արմենակ Ա-ճեմյանը: Ենթադրվում է, որ նման սրացման առիթ կարող էին լինել արտասահմանյան թերթերում բոլշևիկների դեմ գրված սուր հոդվածները: Երևանի ԿԿ-ի նամակում նաև հայտնվում էր, որ գավառներից իրենք նորանոր նամակներ են ստանում, որոնցում պահանջում են գրականություն և հրահանգներ, որ նկատվում է ակտիվություն և հետաքրքրություն ՀՅԴ-ի հանդեպ, սակայն իրենք չունեն բավարար հնարավորություններ, նյութեր, դրամ և այլն: Դրա համար նամակագիրները խնդրում էին, գոնե ձերբակալվածների օգնելու համար, ուղարկել 10 ռուսական ռսկի[2]:

Պարսկաստանում գաղտնի գործող Պետքաղվարչության հետախույզ (ռեզիդենտ) Գ. Աղաբեկովի հուշերով ևս հաստատվում է,

---

[1] *Հ.Յ. Դաշնակցությունը գաղտնընթերցումներում*, էջ 71:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 72–73: Գաղտնագերծված այդ նամակի ռուսերեն թարգմանված պատճենները 1927 թ. հուլիսին ուղարկվել են՝ Անդրերկրկոմի քարտուղարներ Ս. Օրախելաշվիլուն, Հմ. Նազարեթյանին, նաև՝ Ս. Լուկաշինին, Ա. Հովհաննիսյանին և Հայպետքաղվարչություն՝ Ս. Մելիք-Հովսեփյանին:

որ. «իրենք բռնում էին նրանց (դաշնակցականների – Ա.Հ.) փոստը, որն ուղարկվում էր Թավրիզ՝ դաշնակների ներկայացուցիչ Իշխանյանի հասցեով: Այդ նամակագրությունների միջոցով մենք տեղեկանում էինք Հայաստանում և Թուրքիայում նրանց գործունեության մասին և դրանց համապատասխան ձեռնարկում հակաքայլեր»[1]: Նույն հաջողությամբ խորհրդային չեկիստները գաղտնընթերցել են նաև վրաց մենշևիկների և աղրբեջանական մուսավաթականների գաղտնի գրագրությունները և դրանով գործնականում տիրապետել են անդրկովկասյան ընդդիմության ամբողջ տեղեկատվությանը: Հայերի ու Հայաստանի մասին խորհրդային մարմինների համար տեղեկատվության մի աղբյուր էլ գտնվել է Կ. Պոլսում:

ՀՅԴ Երևանի ԿԿ-ի դեպի Թավրիզ՝ ՀՅԴ Բյուրո ուղարկված 1927 թ. հուլիսի 8-ի, դարձյալ Թավրիզում գաղտնընթերցված նամակում, մասնավորապես տեղեկացվում էր, որ 1927 թ. հունիսի 24–25-ի գիշերը Լենինականում ձերբակալվել է 27 մարդ՝ հիմնականում Ամերկոմի աշխատակիցներ, այդ թվում նաև Կ. Պոլսից ժամանած սկաուտական շարժման մասնագետ, մանկատան ֆիզդաստիարակ Վահան Չերազը: Գավառներում կատարվում են խուզարկություններ և ձերբակալություններ: Հայտնվում էր նաև, որ իշխանությունները տեղ-տեղ պրովոկատորների միջոցով ժողովներ են գումարում, ապստամբության կոչեր են արվում՝ դրանք վերագրելով Դաշնակցությանը: Տեղեկացվում էր նաև, որ ձերբակալություններ են կատարվել Թիֆլիսում և Բաքվում, որոնց թիվը հասնում է 500-ի[2]:

Բերենք մեկ այլ գաղտնընթերցված նամակ, որը Երևանի (Մրգաստանի) ԿԿ-ը 1927 թ. օգոստոսի 10-ին ուղարկել էր Թավրիզ: Նամակում նշվում էր, որ ստացել են հուլիսի 30-ի նամակը և 250 ռ. դրամը: Այնուհետև բերվում են տվյալներ զանգվածային ձերբակա-

---

[1] **Агабеков Г.**, *ЧК за работой.* Приложение к журналу «Отечественные архивы», випуск 1, М., 1992, с. 202. http://Jib.ru/memuary/Acabekow/chzarabotoj.txt, p. 202.

[2] Տե՛ս *Հ.Ց. Դաշնակցությունը գաղտնընթերցումներում*, էջ 133–136:

լությունների մասին: «21 թվից ի վեր մինչ օրս Հայաստանում այնպիսի ձերբակալություններ չենք նկատել, ինչպիսին տեսնում ենք վերջին օրերին. Լենինականի գավառում՝ 29 մարդ, Վաղարշապատում՝ 33, Կոտայքում՝ 6, Ղամարլուում՝ 17, Դարալագյազում՝ 16, Նոր Բայազետում՝ 21, Աշտարակում՝ 18, Ղարաքիլիսայում՝ 15, Սարդարապատում՝ 11, Էրիվանում՝ 11, Դիլիջանում՝ 8, Ախտայում՝ 3, Բաշգյառնիում՝ 4, կարմիրբանակային՝ 6 մարդ: Ձերբակալությունները դեռևս շարունակվում են: Ոմանց հաջողվել է խույս տալ ձերբակալությունից: Նման որս տեղի է ունենում ամբողջ Անդրկովկասում»[1]: Նամակում հայտնած տվյալներով՝ Հայաստանում ձերբակալվածների ընդհանուր թիվը կազմել է 198 մարդ: Տեղեկություններ են հաղորդվում նաև Մեծ քաղաքից (Թիֆլիսից), համաձայն որի՝ Վրաստանում ձերբակալվել է մինչև 700 մարդ, այդ թվում հայեր: Նամակում նշվում էր, որ Զանգեզուրում և Լեռնային Ղարաբաղում ձերբակալվածների մասին դեռ տեղեկություններ չունեն: Նամակագիրները հայտնում են, որ Չեկան ձերբակալությունների մեթոդը փոխել է. այժմ ձերբակալում է ոչ թե մեկ գիշերվա ընթացքում, այլ աստիճանաբար, ամեն օր: Կատարվում են կրկնաձերբակալություններ: «Էրիվանի բանտը և Չեկան լիքը լցված են կալանավորներով: Յուրաքանչյուր խցում կա 25-40 մարդ: Դրա համար շրջաններում ձերբակալվածներին թողնում են տեղում: Հին ստաժավոր ուսուցիչներին ազատում են աշխատանքից՝ իբրև անվստահելի տարրի: Նրանց փոխարեն նշանակում են կոմերիտականների, որոնց պատրաստվածության մասին դուք գիտեք»[2]: Այնուհետև նամակում նշվում է, որ «քաղաքում և շրջաններում ժողովուրդը իրարանցման մեջ է: Նա, ով կոմունիստ չէ, չունի ոչ մի հույս, թե վաղը չի ձերբակալվի»[3]: Նամակագիրների տեղեկացմամբ՝ նախկին ձերբա-

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 178:
[2] Նույն տեղում, էջ 179:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 180:

կալվածների թվին ավելացել է ևս վերը նշված շուրջ 200 հոգի, որոնց մեծ մասը ընտանիքավոր են և օգնության կարիք ունեն: Մրգաստանի ԿԿ-ը խնդրում էր ստեղծված ծանր վիճակի մասին հայտնել Բյուրո՝ դրամ ուղարկելու համար: Վերջում հայտնվում էր, որ Մրգաստանի ԿԿ-ը կանոնավոր կապ է հաստատել Ախալքալաքի հետ[1]:

ՀՅԴ Մրգաստանի ԿԿ-ի մեկ այլ՝ 1927 թ. հոկտեմբերի 13-ի Թավրիզ ուղարկված, սակայն խորհրդային գործակալների միջոցով գաղտնընթերցված և նոյեմբերին Թավրիզից Թիֆլիս ուղարկված գաղտնի նամակում տվյալներ են հաղորդվում նոր ձերբակալությունների վերաբերյալ: Հայտնվում է, որ Երևանից և շրջանից ձերբակալվել է 28 հոգի, բերվում է դրանց մի մասի անուն-ազգանունները, Լենինական քաղաքից ու շրջանից՝ 14, Էջմիածնից՝ 16 հոգի, ընդամենը 58 մարդ[2]: Նամակում նշված է, որ առայժմ իրենց հաջողվել է ճշտել նշված մարդկանց ցուցակները, մնացածներինը հետո պարբերաբար կհաղորդեն: Հաղորդվում է, որ ձերբակալվածների ընտանիքները ծանր վիճակում են, ուղարկված 500 ռուբլին ծախսվել է, մարդկանց մի մասը փախստականի վիճակում է և որ այս զանգվածային բանտարկությունները մեծ հարված հասցրին տեղի կազմակերպություններին, որ ժողովուրդը բացասաբար է վերաբերում կոմկուսի վարչակարգին[3]: Գաղտնընթերցված նամակի երկրորդ հատվածում խոսվում է այն մասին, որ որոշ ընդդիմություն կա նաև կոմկուսի ներսում, Մոսկվայի և Թիֆլիսի օրինակով Հայաստանի կոմկուսի շարքերից հեռացրել են մի քանի (4) ընդդիմադիր առաջնորդների՝ Պատվական Ղազարյանին, Արսեն Եսայանին, Շահսուվարյանին և Սաֆրասբեկյանին: Վերջում հաղորդվում է, որ Թիֆլիսում

---

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 223:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 224:

ձերբակալվել է Դ. Անանունը, որը բերվել է Երևան և այժմ նստած է Չեկայի բանտում[1]:

ՀՅԴ Երևանի ԿԿ-ի վերը բերված փաստերը իրոք վկայում են դաշնակցականի անվան տակ մարդկանց զանգվածային ձերբակալությունների մասին, որոնք կարծես հիշեցնում են 1921 թ. մեզ հայտնի մինչփետրվարյան դեպքերը և կարծես նախերգանքը պետք է լինեին 1930-ական թվականների մեծ բռնաճնշումների: Հասկանալի է, որ նման ձերբակալությունները միաժամանակ վկայում են քաղաքական առումով մարդկանց անհանգստության, վախի, հոգեպես ոչ խաղաղ առօրյայի մասին:

Հարկ է նշել, որ գաղտնընթերցումներ են կատարվել նաև հակառակ ուղղությամբ՝ Թավրիզից դեպի Թիֆլիս կամ Երևան: Նման մի գաղտնընթերցված զեկուցագիր, 1927 թ. օգոստոսի 7-ի ամսաթվով պատրաստել էր Եղիշե Իշխանյանը (Մենակը) Վրեժի (Ատրպատականի) ԿԿ-ի անունից՝ ուղղված ՀՅԴ Բյուրոյին: Փաստաթուղթը Թավրիզից Թիֆլիս ճանապարհին գաղտնընթերցվել և սեպտեմբերի 20-ին ուղարկվել է Անդրկովկասի կոմունիստական դեկավարությանը: Ե. Իշխանյանի զեկուցագրում նշվում էր, որ Մրգաստանի ԿԿ-ի ստացած տեղեկությունների համաձայն՝ իշխանությունների հետապնդումների հետևանքով կազմակերպությունները հաճախ քայքայվում և վերականգվում էին: Նշվում էր, որ 1926 թ. սկզբներից Հայաստանում կատարվել են զանգվածային ձերբակալություններ, որոնք շարունակվել են մեկ տարուց ավելի[2]: Հայտնվում էր նաև, որ Թավրիզից Մրգաստանի ԿԿ-ին ուղարկված գումարի 80 տոկոսը

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 225: Գաղտնընթերցված նամակում բերված ոչ բոլոր տվյալներն են ճիշտ ներկայացված: Իրականում տրոցկիզմի մեջ են մեղադրվել և կոմկուսից հեռացվել են կուսակցական պատասխանատու աշխատողներ Ռ. Սաֆրասբեկյանը, Գ. Փիրգուլյանը, Պ. Ղազարյանը, Գ. Արեշյանը և ուրիշներ: Ինչ վերաբերում է Ա. Շահուվարյանին, ապա նա ազատվել է ԿԿ-ի քարտուղարի պաշտոնից, բայց ոչ կուսակցությունից:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 159:

հատկացվում է բանտարկված ընկերների ընտանիքներին որպես օգնություն[1]: Մեկ այլ խնդրի կապակցությամբ Ե. Իշխանյանը նշում է, որ Թավրիզից և Թեհրանից բոլշևիկներին ծառայող գործակալների մասին իրենք իրազեկ են, սակայն պարզվում է, որ Մրգաստանի (Երևան) ԿԿ-ի անունից էլ ստացվում են անհարազատ, կասկածելի նամակներ ու զեկուցագրեր, որոնց ձեռագիրը չեն կարողանում պարզել, հավանաբար դրանք պրովոկատորներ են, Չեկայի գործակալ[2]: Ե. Իշխանյանն էլ, իր հերթին, վերը նշած զանգվածային ձերբակալությունները բացատրում էր Հայաստանի իրենց երիտասարդ ընկերների անփորձությամբ, բացբերանությամբ, քյալլազյոզությամբ և խիզախությամբ[3]:

Եվ այդ իմաստով թող ամենևին էլ այն տպավորությունը չստեղծվի, թե 1920-ական թվականներին քաղաքական մեղադրանքներով առանձնապես ձերբակալություններ, բանտարկություն և աքսոր քիչ են եղել: Հետագայում ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1937 թ. մարտյան պլենումի ժամանակ (սղագրական նյութերը լիարժեք չեն) «Խորհրդային Հայաստան» թերթի նախկին խմբագիր Եղիա Չուբարն իր ելույթում հետին թվով տեղեկություն է հայտնել, որ 1920-ական թթ. կեսերին. «Հայաստանում տեղի ունեցան մասսայական ձերբակալություններ, կարծեմ այն ժամանակ 3000 հոգի ձերբակալվել էին»[4]: Մեր կարծիքով, ձերբակալությունների այդ թիվը միգուցե փոքր-ինչ չափազանցված լինի, սակայն հիմք ընդունելով մեկ այլ տվյալ Հայաստանից սաքսորվածների վերաբերյալ՝ կարելի է այդ թիվը մոտավոր ընդունելի համարել: Այսպես՝ Գ. Լազյանն, իր հայտնի վավերագրերի ժողովածուում, «Դրօշակ»-ի 1931 թ. ապրիլյան համարից «Աքսորականները» վերտառությամբ նյութից բերել է մի տեղեկություն վերջին

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 167:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 172–173:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 176:
[4] *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 322:

հինգ տարում 1926–1930 թթ. Հայաստանից դեպի Սիբիրի խորքերը և Հյուսիսային Ռուսաստանի տունդրաները աքսորված 5000 մարդկանց մասին, որոնց մեծամասամբ մեղադրել են Դաշնակցությանը պատկանելու մեջ[1]:

Հայտնի է, որ վերոնշյալ զանգվածային ձերբակալությունները մեծ աղմուկ էին հանել արտասահմանում: Այս կապակցությամբ ՀՅԴ Բյուրոն վերջնագիր (բողոք) է ներկայացրել Ֆրանսիայում խորհրդային դեսպանին[2]: Վիճակն այնքան անհանգստացնող է եղել, որ Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում և Ռուսաստանում 1926 թ. հունվար-փետրվարին կատարված մի քանի հարյուր դաշնակցականների անակնկալ ձերբակալությունների կապակցությամբ ՀՅԴ Բյուրոն դիմել է Մոցինտերնի քարտուղարությանը, որպեսզի նա ներազդի բոլշևիկների վրա՝ վերջ տալու նման հալածանքներին[3]:

Հիրավի, փաստերը ցույց են տալիս, որ 1926 թ. սկսվել է զանգվածային ձերբակալություններով, որը շարունակվել է նաև հաջորդ տարում: ՀՅԴ «Դրօշակ» պաշտոնական օրգանը գրում է, որ չեկայի խոնավ նկուղները լցրին հարյուրավոր անմեղ մարդկանց և մոտ տասը ամիս չարչարելուց հետո միայն մի մասին ազատ արձակեցին, ոմանց աքսորեցին, շատերին էլ մինչ օրս պահում են բանտում և դատական խաղեր են կազմակերպում[4]: Խորհրդային մամուլը 1926 թ. ձերբակալությունների պատճառները համարել է դաշնակցականների կողմից կոմունիստների ահաբեկումը, նրանց համագործակցությունը մուսավաթի ու ռուս միապետականների հետ, խորհրդային հիմնարկներ թափանցելը և խաղաղ-շինարարական աշխատանքին խոչընդոտելը: Կարելի է վստահաբար ասել, որ

---

[1] Տե՛ս Լազեան Գ., նշվ. աշխ., էջ 321:

[2] Տե՛ս Հ.Յ. *Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 322:

[3] «Յուսաբեր», Գահիրե, 11 օգոստոսի 1926 թ.:

[4] Տե՛ս «Դրօշակ», Փարիզ, 1927 թ., թիվ 1, (260), հունվար, էջ 1:

մատնանշված մեղադրանքներից և ոչ մեկը չի ունեցել բավարար հիմք: Դրան հակառակ՝ ՀՅԴ մամուլը 1926 թ. բանտարկությունների սաստկացումը բացատրել է ՀՍԽՀ 1925 թ. վերջին անցկացված խորհուրդների ընտրություններում բոլշևիկների արձանագրած «տխուր տվյալներով»: Հայտնի է, որ ՆԷՊ-ի հետագա խորացման կամ այսպես կոչված «Նոր ՆԷՊ-ի» պայմաններում որոշ չափով ընդլայնվել էր ընտրական իրավունքը, սոցիալապես ունևոր, կուլակային տարրը ընտրություններում ակտիվություն էր դրսևորել՝ ձգտելով խորհուրդներում անցկացնել իր թեկնածուներին:

Պետանվտանգության մարմինների 1925–1926 թթ. ամփոփագրերում տեղեկություններ են հաղորդվում, որ Հայաստանում վերընտրությունների ժամանակ ակտիվ դերում են նախկին դաշնակցականները, որոնք դաշինքի մեջ են ունևոր շերտերի հետ: Սակայն, որպես կանոն, կուլակային տարրերը և հակահեղափոխականները չեն կարողանում իրենց ներկայացուցիչներին անցկացնել խորհուրդներում, որովհետև նրանք ընտրելու և ընտրվելու իրավունք չունեն: Եվ բերված են օրինակներ[1]: Տվյալները ցույց են տալիս, որ խորհուրդների 1925 թ. դեկտեմբերյան ընտրություններում, կոմունիստների թվի սակավության պատճառով, նրանք գյուղխորհուրդներում բացարձակ մեծամասնություն չեն կազմել: Այսպես, 1926 թ. գյուղխորհուրդների ընդամենը 14232 անդամներից կոմկուսի անդամների ու թեկնածուների ընդհանուր թիվը կազմել է ընդամենը 6972, այսինքն՝ ընդհանուրի կեսից պակաս[2]: Ստացվել է այնպես, որ այդ անցանկալի արդյունքների մեղքը գցել են դաշնակցականների քայքայիչ աշխատանքի վրա ու դիմել են զանգվածային ձերբակալությունների: Ձերբակալությունների համար հիմք է համարվել այն, որ քաղաքացիների մոտ հայտնաբերվել են արտասահ-

---

[1] Տե՛ս *Հայաստանը սովետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.)*, Ե., 2008, էջ 153–155:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 108, թ. 54, նաև՝ ֆ. 113, ց. 3, գ. 405, թ. 1:

մանյան արգելված թերթեր ու գրականություն: Եվ այդ հիման վրա փորձել են կապ տեսնել խորհուրդների ընտրությունների և քաղաքացիների մոտ հայտնաբերված ՀՅԴ գրականության միջև:

Բռնադատվածների վերաբերյալ ՀԱԱ 1191 ֆոնդի կարճված գործերը ցույց են տալիս, որ բավականին ուժեղ հետապնդումներ են ընթացել դաշնակցականների, էսէռների և այլ հայացքների տեր ներկայացուցիչների հանդեպ: Հայպետքաղվարչության կոլեգիային կից գործող հատուկ խորհրդակցության 1929 թ սեպտեմբերի 20-ի նիստում, (նախագահ՝ Ս. Մարգարյան, կոլեգիայի անդամներ՝ Գ. Պետրոսյան, Ս. Արշակյան և դատախազ՝ Սարգսյան) լսվել է 11 անձանց գործ, ովքեր մեղադրվել են Քր. օր.-ի 67, 68, 82, 109 և այլ հոդվածներով իբրև դաշնակցական, նախկին էսէռ, կուլակի որդի և այլն լինելու մեջ: 11-ից 8-ին ներկայացված մեղադրանքը համարվել է ապացուցված և նրանց համար խափանման միջոց է ընտրվել՝ աքսորը Սիբիր, համակենտրոնացման ճամբար, 3 տարի ժամկետով[1]:

Այնուհետև, այդ նույն թվականի նոր. 189 քննչական գործով բերված են 21 անձանց անուններ, ովքեր մեղադրվում են 1927 թ. հայկական Քր. օր.-ի 63, 82, և 109 խմբագրված հոդվածներով: Մեղադրական եզրակացության մեջ նշվում է, որ նույն թվի (1929 թ.) մայիս ամսին, Հայպետքաղվարչության կողմից, ձերբակալվել են մի շարք անձինք, մեծամասամբ աշակերտական երիտասարդության ներկայացուցիչներ, ովքեր «մեղադրվում են երիտասարդ դաշնակցականների, այսպես կոչված «Դաշնոմոլ»-ի հակահեղափոխական կազմակերպությանը մասնակցելու մեջ»[2]: Այդ կազմակերպությունը ղեկավարել է Կարապետ (Կարո) Հովհաննիսյանը: Եթե հավատանք անվտանգության մարմինների կազմած արձանագրության հավաս-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 19, գ. 10, թ. 42:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 44:

տիությանը[1], ապա վերջինս կապեր է ունեցել Հայաստանի էսէռների և մենշևիկյան «Երիտասարդ մարքսիստների» կազմակերպության առանձին աշխատողների հետ, տարածել է ընդհատակյա գրականություն, փորձեր է արել Դաշնակցությունը և Երիտասարդ մարքսիստների կազմակերպությունները միավորել մեկ կազմակերպության մեջ, սակայն արդյունքի չի հասել[2]:

Բերված արձանագրությունից երևում է, որ նրանք ձերբակալվել են այն բանից հետո, երբ հուլիսի 11-ին, Արաքս գետով սահմանն անօրինական կերպով դեպի Պարսկաստան անցնելիս, Նախիջևանի սահմանապահների կողմից բռնվել է Երևանի բնակիչ Թովմաս Մնացականյանը, որին խուզարկելիս հայտնաբերվել է ամերիկյան դոլար և խորհրդային դրամ, ինչպես նաև հայերեն այբուբենի ծածկագրի բանալին ու ծածկագիր ձեռագրեր, որոնց միջոցով էլ Երևանում, Լենինականում և Դիլիջանում բացահայտվել ու ձերբակալվել են նրա 20 ընկերները: Պարզել են նաև, որ նշյալ 21 անձինք մասնակցություն են ունեցել Հայաստանում էսէռների ընդհատակյա կազմակերպության աշխատանքներին, ստացել ու տարածել են ընդհատակյա գրականություն և այլն[3]: Սակայն գործում նշված 21 անձանց վերաբերյալ դատավճիռը բացակայում է: Հավանաբար գործը փոխանցվել է դատական ավելի բարձր ատյան, որովհետև ՀՍԽՀ ՊՔՎ կոլեգիային կից գործող «հատուկ խորհրդակցության»[4] դատավճիռները հիմնականում իրավասու են եղել սահմանել ավելի

---

[1] Ի տարբերություն 1930–ականի կեսերի, իրոք, մեծամասամբ «թխված» կեղծ գործերի՝ 1920-ական թվականներին պետանվտանգության մարմինների կազմած գործերի ավելի վստահելի ու հավաստի լինելու մասին է հավաստում բոլշևիկյան ընդաթական բռնաճնշումների խորագիտակ մասնագետ Ա. Մանուկյանը, (տե՛ս **Մանուկյան Ա.**, *Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920–1953 թթ.*, Ե., 1999, էջ 13):

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 19, գ. 10, թ. 46:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 19, գ. 10, թ. 44–45:

[4] Միության շրջանակներում արտադատարանական նման մարմին ստեղծվել էր 1922 թվականից, որը գործել է մինչև 1953 թ.:

մեղմ պատիժ՝ հիմնականում աքսոր դեպի Սիբիր՝ երկու, երեք կամ հինգ տարով[1]:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ 1926–1927 թթ. Հայաստանում լայն թափ ստացած ձերբակալություն-բանտարկությունները հիմնականում բացատրվում են խորհրդային երկրում ծավալվող ներկուսակցական տրոցկիստական-զինովևական բանավեճերով ու պայքարով, որոնք էլ բնականաբար իրենց անդրադարձը պետք է գտնեին ազգային հանրապետություններում, ներկուսակցականից զատ, նաև այլ հակահեղափոխական ու թշնամական որակվող կուսակցությունների ու հոսանքների դեմ, այդ թվում Հայաստանում առաջին հերթին դաշնակցականների հանդեպ, քաղաքական բռնությունների շարունակական ուժեղացումով:

ՀՍԽՀ ներքին գործերի, Չեկա-ՊՔՎ-ի, Գերագույն և Գլխավոր դատարանների, դատախազության և մյուս պետահիրավական մարմինների արխիվային վավերագրերը հավաստում են, որ ամբողջ 1920-ական թվականներին, քաղաքական կուսակցությունների լուծարմանն և ասպարեզից վերացմանը զուգընթաց, տեղի են ունեցել քաղաքական հետապնդումներ, բանտարկություններ, աքսոր, ընդհուպ մինչև քաղաքական հողի վրա գնդակահարություններ: Եվ այդ գործընթացներում հարվածի գլխավոր թիրախը եղել է Դաշնակցություն կուսակցությունը:

Հայաստանում քաղաքական բռնաճնշումների պատմության մասնագետ Ա. Մանուկյանը նշում է, որ 1920-ական թվականներին Հայաստանի իշխանությունների համար Դաշնակցության «վտանգը» մշտապես առկա էր, այստեղից էլ՝ Արտակարգ հանձնաժողովում, Պետական քաղաքական վարչությունում վարվող գործերի ճնշող մասը նախկին դաշնակցական գործիչների կամ ընդհատակ-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 19, գ. 10, թ. 63–81:

յա դաշնակցական կազմակերպությունների անդամների դեմ էր[1]: Հելլինեակը ՀՀ Ազգային Անվտանգության նախարարության (ԱԱՆ) արխիվի տվյալների հիման վրա հաշվարկներ է կատարել և հրապարակել, որ 1920–1930 թթ. ժամանակահատվածում Հայաստանում քաղաքական դրդապատճառներով (հանցակազմով) տարբեր պատժատեսակներով (աքսոր, բանտ, գնդակահարություն և այլն) դատապարտվել է 1246 մարդ[2]: Անշուշտ, դրանց ճնշող մեծամասնությունը եղել են նախկին դաշնակցականներ կամ նման պիտակավորում ստացած մարդիկ: Գրեթե այդ նույն ժամանակահատվածում (1921–1929 թթ.) այսպես կոչված հակահեղափոխական հանցագործությունների համար քաղաքական հանցակազմով, ԽՍՀՄ-ում դատապարտվել է 600000 մարդ[3]: 1922–1928 թթ. ընթացքում նույն ԽՍՀՄ-ում, միայն Չեկա-ՄՊՔՎ (ՕԳՊՍ) – Ն.Գ. ժողկոմատի կողմից, քաղաքական բռնաճնշումների արդյունքով գնդակահարվել է 11271 մարդ[4]:

Այսպիսով, երբ սովորաբար խոսք է բացվում 1930-ական թթ. զանգվածային քաղաքական ռեպրեսիաների (բռնաճնշումների) մասին, չպետք է մոռանալ, որ բռնաճնշումների մեքենան գործել է նաև նախորդ ամբողջ 1920-ական թվականներին, որի համեմատական բարձրակետը կարելի է համարել 1926–1927 թթ.: Սակայն մեկ տասնամյակ անց, այսպես կոչված, սոցիալիզմի կառուցման ավարտական փուլում, քաղաքական բռնաճնշումները ընդունեցին աննախադեպ մեծ՝ աղետալի չափեր:

---

[1] Տե՛ս **Մանուկյան Ա.**, *Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920–1953 թթ.*, Ե., 1999, էջ 12:

[2] Տե՛ս **Մանուկյան Ա.**, նշվ. աշխ., էջ 12 և 89:

[3] Տե՛ս *История России XX век. (1894–1939)*, отв. ред. **Зубов А.Б.**, М., 2009, с. 819.

[4] Տե՛ս *История Коммунистической Партии Советского Союза*, отв. ред. **Безбородов А.Б.**, М., 2014, с. 235.

2. Գաղափարախոսական ու գաղափարաքաղաքական հարցերը Հայկոմկուս-ՀՅԴ հարաբերություններում

ՀՅԴ և մյուս հակահեղափոխական, ազգայնական, ռեակցիոն և այլ որակում ստացած կուսակցությունների ու քաղաքական հոսանքների դեմ **գաղափարական** պայքարի ուժեղացման տեսակետից հատկապես առանձնանում է ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 5-րդ՝ **1928 թ. նոյեմբերյան պլենումը**[1]: Կարելի է փաստել, որ հնչակիզմի, մենշևիզմի, սմենովեխականության, սպեցիֆիզմի, տրոցկիզմի և այլ հոսանքների դեմ գաղափարական պայքարում պլենումը առաջնայինը համարել է պայքարը Դաշնակցություն կուսակցության դեմ:

Պլենումում իր հակադաշնակցական կեցվածքով առանձնապես աչքի է ընկել ԿԳԿ-ի նախագահ դարձած **Ս. Կասյանը**: «Գաղափարական ճակատի խնդիրները» զեկուցման մեջ նա շեշտում էր «կոմունիզմի թշնամի դաշնակիզմի» դեմ պայքարի ուժեղացման անհրաժեշտության մասին, այդ կուսակցությանը բնորոշելով՝ «**հայ իրականության ֆաշիզմ**»[2]: Հենց այդ միտքն էլ հետո արտացոլում գտավ պլենումի ընդունած բանաձևի մեջ: Ս. Կասյանը, հակադրվելով ԿԿ-ի նախկին քարտուղար Ա. Հովհաննիսյանի արտահայտած այն տեսակետին, որ Դաշնակցությունն իր բնույթով և սոցիալ-դասակարգային կազմով **մանրբուրժուական, գյուղացիական կուսակցություն է**, հայտարարում է, որ «Դաշնակցությունը հայ **խոշոր բուրժուազիայի** մարտական կուսակցություն է»[3]: Եվ սա այն դեպքում, երբ, օրինակ, այդ նույն Կասյանը 1919 թ.վերջին գրած իր հայտնի աշխատության մեջ ՀՅԴ-ը վրաց մենշևիկների նման համարում էր

---

[1] Ի դեպ, արդեն ձևավորված ընթացակարգով, նույնաբնույթ օրակարգով այս պլենումին նախորդել էր ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի 1928 թ. հոկտեմբերյան պլենումը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1411, թ. 1):

[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 8, թ. 10:

[3] Նույն տեղում:

մանրբուրժուական ազգայնական կուսակցություն[1]: Հարկ է փաստել, որ ժամանակին Դաշնակցություն կուսակցությանը մանրբուրժուական, էսէռական են բնութագրել Վ. Լենինը, Ստ. Շահումյանը, Ալ. Մյասնիկյանը և ուրիշներ[2]: Հենց Ա. Հովհաննիսյանը, հենվելով ու մեջբերումներ անելով Վ. Լենինի, Ստ. Շահումյանի, Գ. Ղարաջյանի (Արկոմեդ), Ս. Կասյանի և մյուս մարքսիստների աշխատություններից, հիմնավորում էր Դաշնակցության մանրբուրժուական-գյուղացիական սոցիալական ծագումը՝ քննադատելով իր ընդդիմախոսներ Գ. Վանանդեցուն, Մարենցին, Գ. Քալաշյանին և մյուսներին[3]:

Պլենումի ընդունած բանաձևում Դաշնակցությանը տրված է ամենասուր գնահատականը՝ որպես պրոլետարիատի դիկտատուրայի թշնամի, հայ իրականության բուրժուա-ազգայնական ամենաազդեցիկ ու ամենավտանգավոր կուսակցություն, մինչև իսկ՝ **«հայ իրականության ֆաշիզմ»** (ընդգծումը տեքստին է – Ա.Հ.)[4]: Սակայն նոյեմբերյան պլենումի ընդունած բանաձևում ՀՅԴ դասակարգային բովանդակության հարցում այդ կուսակցությունը բնութագրված է ոչ թե կասյանական բնորոշմամբ՝ **խոշոր բուրժուական**, ինչը վերցվել էր Ստ. Շահումյանի հայտնի մտքերից և ոչ էլ հովհաննիսյանական՝ **մանրբուրժուական**, այլ բուրժուական: **«Դաշնակների կուսակցությունը**,- կարդում ենք պլենումի ընդունած բանաձևում,- **հայ բուրժուազիայի կուսակցություն է**, հայ իրականության հակահեղափոխական կուսակցություններից **ամենաազդեցիկն ու ամե-**

---

[1] Տե՛ս **Ատենյան Ս.**, *Ո՞ւր է կիրը*, Նոր-Նախիջևան, 1920, էջ 43:

[2] Այդ մասին տես՝ **Хуршудян Л.А.**, *К вопросу о ленинской оценке социальной сущности партии Дашнакцутюн* («Լրաբեր» հաս. գիտ., Ե., 1988, թիվ 7 (հուլիս), էջ 12–18):

[3] Տե՛ս **Հովհաննիսյան Աշոտ**, *Դաշնակցության ատիթով*, Մոսկվա, 1929, էջ 5–64:

[4] Տե՛ս Հայաստանի Կոմունիստական (բ) կուսակցության խնդիրները իդեոլոգիական ֆրոնտում, Ե., 1929, էջ 13 և 19:

նավտանգավորը (բոլոր ընդգծումները փաստաթղթին է – Ա.Հ.)»[1]: Մյուս կողմից՝ պլենումում ընդգծվում էր, թե. «դաշնակցության ռեակցիոն ազգայնական իդեոլոգիան քակում էր հայ և թյուրք զանգվածների կապերը, մեկուսացնում էր հայ ժողովրդի ազատագրական շարժումը, բաժանում այդ շարժումը թյուրք ժողովրդի հեղափոխական կովից և այն հակադրում վերջինիս»[2]:

1920-ական թվականներին խորհրդային երկրում ծայր առած հակակուսակցական, թշնամական որակվող հոսանքների ու թեքումների դեմ պայքարի օրինակով՝ նմանակում էր կատարվում նաև Հայաստանում: Ս. Կասյանը, բորբոքելով քաղաքական կրքերը, ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախկին ղեկավարությանը մեղադրում էր Դաշնակցության հանդեպ զիջողական լինելու մեջ՝ պահանջելով բոլոր միջոցներով անխնա հարվածել այդ կուսակցությանը:

Ինչ վերաբերում է Ս Դ Հնչակյան կուսակցությանը տրված կասյանական քաղաքական գնահատականին, ապա նախկին հնչակյանը (մինչև 1905 թ.) հայտարարում էր հետևյալը. «Դաշնակիզմից հեռու չէ հնչակիզմը: Խորհրդային երկրում նա համարյա գոյություն չունի այլևս: Միայն հայ գաղութներում է, որ ապրում են հնչակյան պորտաբույծ զառամյալները»: «Հնչակիզմը,- շարունակում է Ս. Կասյանը,- նույն դաշնակիզմն է, միայն ավելի թույլ և անգույն, սվելի վախկոտ ու երերող, ավելի հակասական ու քաոսային: Մի չտեսնված ու չլսված հարմարվող մտայնություն է նա, որ պահում է իր նավի ղեկը դեպի այն կողմը, դեպի ուր փչում է քամին, և հագնում է այն տարազը, որ այսինչ տեղում և այսինչ ժամանակում սմենաընդունվածն է: ... նա կենդանի դիակ է, կամ դիակացած շունչ»[3]: Սակայն, այդուհանդերձ, Ս. Կասյանը Հնչակի գոյությունը անհրա-

---

[1] Նույն տեղում, էջ 13, նաև՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 8, թ. 161:
[2] *ՀԿ(բ)Կ իսկիրների իդեոլոգիական ֆրոնտում*, Ե., 1929, էջ 14:
[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 8, թ. 11:

ժեշտ էր համարում այն չափով, ինչ չափով նա «գաղութներում պայքարում էր դաշնակների դեմ»[1]:

Նույն կերպ, նոյեմբերյան պլենումում, իր հայտնի աշխատության[2] դիրքերից, Ս. Կասյանը քննադատում էր **սպեցիֆիզմը՝** իբրև ռեֆորմիստական (օպորտունիստական) մենշևիզմի և դաշնակցական նուրբ նացիոնալիզմի խառնուրդ (տարատեսակություն)[3]: ՀՍԽՀ ԿԳԿ-ի նախագահ Կասյանը համոզմունք էր հայտնում, թե «դաշնակներն ու դաշնակիզմը ճակատագրորեն պիտի վերանան աշխարհիս երեսից: Բայց դա դեռ չի նշանակում, թե մենք պետք է ձեռքներս ծալենք ու հանգիստ սպասենք այդ երջանիկ օրվան»[4]: Դրան հասնելու համար նա, մասնավորապես, պահանջում էր. 1. ուշի-ուշով հետևել դաշնակցականների ամեն մի քայլին և անխնայորեն հարվածել դրանց, 2. մղել անխնա գաղափարական պայքար՝ ապացուցելու նրանց սոցիոլոգիական և քաղաքական աշխարհայեցողության անկարողությունը, 3. չխնայել պետության ոչ մի կոպեկ՝ հեղեղելու մեր գրական շուկան «դաշնակների ու դաշնակիզմի» դեմ հանրամատչելի և գիտական գրվածքներով և այլն[5]:

Պլենումում այդ հարցերի շուրջ հանդես է եկել նաև ՀայՀԵԿ-ՊՔՎ նախագահ Ս. Մելիք-Օսիպովը: ՀՅԴ գնահատման հարցում նա, չհամաձայնվելով գլխավոր զեկուցող Ս. Կասյանի արտահայտած այն մտքին, թե, իբր, Դաշնակցություն կուսակցությունը բավարար սոցիալական հող չունի, նրան հակադարձում է, որ «իր 10-ամյա աշխատանքի ընթացքում հավաքել է նյութերի մի հսկա զանգված, որոնք վկայում են, որ Դաշնակցություն կուսակցությունն ունի արմատներ, ունի բազա այնպիսի մանր բուրժուական գյուղացիա-

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Խոսքը՝ **Ս. Կասյանի** Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928, աշխատության մասին է:

[3] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 8, թ. 161:

[4] *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 236:

[5] Տե՛ս նույն տեղում:

կան երկրում, ինչպիսին Հայաստանն է»[1]: Եվ սա ասում էր տասը տարի շարունակ ՀՅԴ դեմ պայքարած Հայաստանի առաջին չեկիստը, ով անձամբ էր ղեկավարում ՀՅԴ և մյուս կուսակցությունների կազմալուծման գործընթացը:

Ս. Մելիք-Օսիպովը փաստում էր, որ Դաշնակցությունը գործում է ոչ միայն դրսում, այլև Հայաստանում, որ նրա դեմ պետք է պայքարել ոչ միայն վարչական միջոցներով, այլ նաև գաղափարական մեթոդներով: Նա ակնարկում էր, որ հայ մտավորականությունը հիմնականում կողմնորոշված է դեպի այդ կուսակցությունը. «Անցած 8 տարում,- նշում էր նա,- մենք չենք կարողացել մտավորականությանը մեր կողմը նվաճել՝ նրանք ակներև Դաշնակցության կողմն են»[2]: Տվյալներ կան, որ 1929 թ. գարնանը Փարիզում գումարված ՀՅԴ 11-րդ Ընդհ. ժողովին Հայաստանից վճռական ձայնի իրավունքով մասնակցել է 4 մարդ, որոնց անունները խիստ գաղտնիության նպատակով արձանագրություններում չի պահպանվել[3]:

Հայաստանի թիվ մեկ չեկիստը, ավելի մոտ լինելով հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին, խոստովանում էր, թե ինչպիսին է եղել գործերի իրական վիճակն այդ ուղղությամբ: Մեր և շատ գրականագետների կարծիքով ևս, դա է պատճառը, որ Հայաստանի ու հայ ժողովրդի քաղաքական ու հոգևոր ազատության, նրա հետագա ճակատագրի, զարգացման ուղու, գրական ու գեղարվեստական արժեհամակարգի հարցերում մտավորականության, հատկապես հայ գրողների, ստեղծագործական այլ կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում, ամբողջ 1920-ական թվականներին ընթանում էին բուռն քննարկումներ ու բանավեճեր:

Եվ պետք է ասել, որ Խորհրդային Հայաստանի 70-ամյա պատմության ընթացքում հայ հասարակական-քաղաքական, գրական,

---

[1] ՀԱԱ, ֆ. 1, ց. 8, գ. 8, թ. 23:
[2] Նույն տեղում, թ. 24:
[3] Տե՛ս Оганесян Эд., *Век борьбы*, Е., 2010, с. 268.

գիտական, ստեղծագործական և այլ կազմակերպություններից իշխող վարչակարգին, թերևս, ամենաընդդիմադիրը եղել է Հայ գրողների միությունը (մի բան, որ չես ասի փաստորեն պառակտված ներկայիս հայ գրողների՝ քանակով մեծաթիվ, սակայն որակով ցածր ու իշխանահաճո միության մասին), որի ակունքներում կանգնած են եղել Ե. Չարենցը, Գ. Մահարին, Ա. Բակունցը, Մ. Արմենը և ուրիշներ:

Այսպիսով, խոսելով գաղափարախոսական հարցերի, Դաշնակցություն կուսակցության՝ Հայաստանում տակավին ունեցած դերի ու կշռի մասին՝ Ս. Մելիք-Օսիպովի խոսքերից կարելի է հետևեցնել, որ 1920-ական թվականների վերջին Խորհրդային Հայաստանի հասարակական ընկալումներում ՀՅԴ ոչ միայն ջախջախված չէր, այլև մարդկանց առանձին շերտերի հոգում և մտքում նրա գաղափարները դեռևս զգալի ուժ էին ներկայացնում: Եվ պետք է ասել, որ հետագայում էլ խորհրդային-բոլշևիկյան վարչակարգի հայաստանյան իշխանավորները, հիմնավոր թե մտացածին, մշտապես անհանգստացել են Դաշնակցություն կուսակցության գոյությունից: Եվ դա էր պատճառը, որ տասնամյակից տասնամյակ, Հայկոմկուսի համագումարից համագումար՝ իբրև գաղափարախոսական ճակատի գլխավոր խնդիր, դրված է եղել բոլոր միջոցներով պայքարը ՀՅԴ դեմ, ինչը շարունակվեց ընդհուպ մինչև ԽՍՀՄ փլուզումը և բոլշևիզմի մենիշխանության վախճանը:

Հարկ է նշել, որ Հայկոմկուսի ԿԿ-ի 1928 թ. նոյեմբերյան պլենումի ոգուն համապատասխան էր, որ այդ փուլում լույս տեսան Դաշնակցության և մյուս «թշնամական» կուսակցությունների ու հոսանքների դեմ ուղղված տասնյակ գրքեր ու հոդվածներ, բազմաթիվ քարոզչական բնույթի հոդվածներ[1]: Ի հավելումն ասվածի՝ ՀամԿ(բ)Կ

---

[1] Տե՛ս **Կարինյան Ա.**, *Հայկական ֆաշիզմի նորագույն «իմաստասիրությունը»* («Լենինյան ուղի», 1928, թիվ 1–2), **Ազատյան Հ.**, *Դաշնակցության դասակարգային բնույթը* («Նոր ուղի», 1929, թիվ 1–2), **Ջրաֆյան**, *Հոկտեմբերյան հեղափոխությունը և*

Անդրերկրկոմը 1929 թ. հուլիսի 16-ին, 22-ին և հոկտեմբերի 14-ին որոշումներ էր կայացրել երկրամասում հակակոմունիստական կազմակերպությունների դեմ պայքարը ուժեղացնելու, այդ կապակցությամբ հանրամատչելի գրքույկներ հրատարակելու վերաբերյալ[1]:

Այդ ամենը նշանակում էր, որ Հայկոմկուսի համար գաղափարապես ու քաղաքականապես ամենավտանգավոր Դաշնակցություն կուսակցությունը ոչ միայն քայքայված չէր, այլև դրսում, թե ներսում որոշակի վտանգ էր ներկայացնում խորհրդային իշխանության ու կոմունիստական կուսակցության համար: Դա միաժամանակ նշանակում էր, որ գաղափարական ճակատում կոմկուսը դեռ լուրջ անելիքներ ուներ:

Մեր կարծիքով, 20-ական թվականների վերջին խորհրդային քաղաքական տարածքում ՆԷՊ-ը փակելու գործում դեր են խաղացել ոչ միայն մթերումների դժվարությունները, ունևոր-կուլակային տարրերի ուժեղացումն ու հակազդեցությունը, այլև այն, որ խորհրդային իշխանությունը գաղութարախոսական ճակատում կարծես տանուլ էր տալիս, որովհետև նրա ոտքերի տակ սոցիալական հողը նեղանում էր:

Թեև 1920-ականի վերջին ՀՅԴ-ը Հայաստանում կարելի էր կազմակերպորեն համարել լուծարված, սակայն մանր արտադրողների, կուլակների ու նեպմանների աշխուժացման պայմաններում, կոմունիստական իշխանությունները մարդկանց առանձին շերտերի մոտ շարունակում էին տեսնել, իրենց ասելով, դաշնակցական ազգայնական-գաղափարական մտայնություններ, հոգեվիճակ ու վարքագիծ և դրանով իսկ՝ անվստահություն խորհրդային վարչակարգի ու

Դաշնակցությունը («Լենինյան ուղի», 1928, թիվ 10), **Զուբար Ե.**, *Դաշնակցությունը սպեցիֆիզմի դրոշի տակ* («Լենինյան ուղի», 1928, թիվ 11), **Աբով Գ.**, *Դաշնակցությունը անցյալում և հիմա*, Ե., 1929, **Մանդալյան Թ.**, *Մայիսյան ապստամբությունը*, Ե., 1929, **Բզնունի Ա.**, *Հայկական «Ստենալենիական»* («Նոր ուղի», 1931, գիրք 4) և այլք:

[1] Տե՛ս *Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը*, էջ 238:

իրենց վաղվա օրվա հանդեպ: Այդ իմաստով պատահական չէր, որ 20-ականների Խորհրդային Հայաստանի ամենաճանաչված ու ամենահեղինակավոր ղեկավար Ալ. Մյասնիկյանը իր հայտնի աշխատության մեջ համոզմունք էր հայտնում, որ Դաշնակցությունը հայ կյանքում դարձել է **հոգեբանություն**[1]:

Տվյալ ժամանակաշրջանում Դաշնակցության կազմակերպական ջախջախումը դեռևս բավարար չէր Խորհրդային Հայաստանի քաղաքական ու գաղափարական ղեկավարությանը, քանզի նրանք լավ հասկանում էին, որ ՀՅԴ գաղափարախոսությունը և հոգեբանությունը բավականին խորն էր նստած լայն հասարակաշերտերի շրջանում: Ուստի պետք է գործի դրվեր խորհրդային-բոլշևիկյան քարոզչամեքենան, բոլոր թույլատրելի ու անթույլատրելի մեթոդներով վարկաբեկելու և մարդկանց գիտակցությունից արմատախիլ անելու համար Դաշնակցության ազգային գաղափարները և դրանով իսկ գաղափարաքաղաքական հող ստեղծել՝ Հայաստանի աշխատավորությանը ներգրավելու իրենց ծրագրած սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման գործում:

Վերջում կարելի է վստահաբար ամփոփել, որ Հայաստանի բոլշևիկ ղեկավարությանը և նրա հզոր քարոզչամեքենային ո՛չ 1920-ական թվականներին և ո՛չ էլ հետագա տասնամյակներին, չնայած ստեղծված հսկայածավալ գրականությանը, քաղաքականացված գեղարվեստական պատկերավորումներին և այլ միջոցներին, այդպես էլ չհաջողվեց ջախջախել և վերացնել ՀՅԴ կուսակցությունը՝ **գաղափարական կրախի ենթարկելու միջոցով**: Եվ դրա վառ ապացույցը արդի իրողություններն են:

---

[1] Տե՛ս **Մյասնիկյան Ալ.**, *Երկեր, հինգ հատորով*, հ. 5, Ե., 2007, էջ 211:

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԽՈՍՔ

Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո, միակուսակցական վարչակարգի հաստատման ճանապարհին, Ռուսաստանի օրինակով Հայաստանում հարվածի գլխավոր թիրախ դարձավ Հայկոմկուսի գլխավոր ախոյան, նախկին կառավարող ու առավել ազդեցիկ ՀՅԴ կուսակցությունը:

Ամբողջ 1920-ական թվականներին կոմունիստական կուսակցական-պետական մարմինները հետևողական աշխատանք տարան ներսից ու դրսից՝ քայքայելու ու վերացնելու այդ կուսակցությունը: Այդ նպատակով գործի դրվեցին հետապնդումներ ու հալածանքներ ՀՅԴ նախկին գործիչների ու շարքայինների, Հայաստանում ընդհատակ անցած նրա կառույցների դեմ: Զանգվածների շրջանում, քարոզչական աշխատանքներից զատ, կազմակերպվեց հրապարակային ցուցադրական դատ, հրավիրվեցին նախկին դաշնակցականների և նրա երիտասարդական կառույցների ինքնավերացման համագումարներ և այլն:

Հայկոմկուսը, ներքին կապ տեսնելով ՀՅԴ և Հայ եկեղեցու Մայր Աթոռի միջև, փորձեց հավասարապես քայքայել հայ ազգային ու հոգևոր այդ երկու կառույցները: ՆԷՊ-ի քաղաքականության պայմաններում ի հայտ եկած, այսպես կոչված, սմենովեխականության երևույթը ևս օգտագործվեց ՀՅԴ շարքերը ներսից քայքայելու ու կազմալուծելու ուղղությամբ: Այդ հոսանքի ամենավառ ներկայացուցիչը համարվում է 20-րդ դարի հայ ականավոր քաղաքական և

պետական գործիչ Հ. Քաջազնունին: Աշխատության մեջ տրվում է ՀՀ առաջին վարչապետի հայացքների ու դիրքորոշման փոփոխության ընթացքը, իսկ վերջում արխիվային փաստաթղթերի հիման վրա հավելվածի ձևով ներկայացվում է նրա անձնական մեծ ողբերգությունը:

1920-ական թվականների երկրորդ կեսին, ՀամԿ(բ)Կ ներսում ընդդիմադիր (օպոզիցիոն) խմբերի ու հոսանքների դեմ ծավալվող պայքարի համապատկերում, ավելի ուժեղացվեց պայքարը նաև Դաշնակցության ու «դաշնակիզմի» լիակատար վերացման ուղղությամբ: Կազմակերպվեց, այսպիս կոչված, «Դաշնակցական տեռորիստների գործ»-ի դատավարությունը, կատարվեցին զանգվածային բանտարկություններ ու աքսոր, քաղաքական բռնությունների այլ դրսևորումներ: Դրանք հետագայում իրենց գագաթնակետին հասան, հանձին 1930-ական թվականների, ստալինյան կոչված զանգվածային բռնաճնշումների (ռեպրեսիաների) ձևով:

Այդուհանդերձ, մինչ այդ՝ ամբողջ 1920-ական թվականներին, շարունակել են գործել դաշնակցական ընդհատակյա խմբեր ու անհատներ: Փաստերը վկայում են, որ դրանք գործել են մինչև համատարած կոլեկտիվացման փուլը՝ 1930-ական թթ. առաջին կեսը, մինչև որ ՀՅԴ 12-րդ Ընդհանուր ժողովը (1933 թ. փետրվար-մարտ) պաշտոնապես լուծարված համարեց իր ընդհատակյա կազմակերպությունը Խորհրդային Հայաստանում և խորհրդային ողջ տարածքում: Այս համաժողովում արդեն Հայաստանից ներկայացուցիչ չի մասնակցել:

Ի վերջո, խորհրդային-կոմունիստական իշխանությունների բռնաճնշիչ քաղաքականության հետևանքով՝ ՀՅԴ-ն հայտնվեց հարկադիր տարագրության մեջ: Նրա գործունեության ծանրության կենտրոնը փոխադրվեց գաղթաշխարհ (Սփյուռք): Դրանով հանդերձ՝ նա շարունակեց հոգևոր թելերով կապված մնալ հայրենի

փոքր հողակտորի՝ Խորհրդային Հայաստանի, ազգային ինքնագիտակցություն ունեցող հայ մայրդու և հայ հանրույթի հետ:

Քայքայման ու կազմալուծման փորձեր կատարվեցին նաև ՀՅԴ արտասահմանյան կառույցների ու նրա անդամների հանդեպ: Այդ նպատակով օգտագործվում էր նաև ՀՅԴ-ին հակառակորդ Սփյուռքի մյուս (Հնչակ, Ռամկավար) կուսակցությունների ներուժը, ստեղծվում էին կոմունիստական (համայնավար) խմբեր ու հոսանքներ, լույս էին ընծայվում հակաղաշնակցական ուղղվածության թերթեր, տարվում էր գաղափարական և գործակալական պայքար խորհրդային արտերկրյա մարմինների ու կառույցների միջոցով, օգտագործվում էին ՀՕԿ-ի, հասարակական ու հայրենակցական այլ կազմակերպությունների ուժերը և այլն:

Այդուհանդերձ, **եթե Հայաստանում ու խորհրդային երկրի տարածքում ՀՅԴ կազմակերպակուն քայքայումը հաջողվեց, ապա գաղթաշխարհում այդ փորձերը հաջողություն չունեցան:** Դրանից հետո՝ տասնամյակներ շարունակ, ՀՅԴ ազգամետ գաղափարները անթեղված մնացին հայ հասարակության առանձին շերտերի հոգում և գիտակցության մեջ: Դրանք հնարավոր չեղավ մինչև վերջ արմատախիլ անել:

Ի վերջո՝ նպաստավոր ժամանակներ գալուն պես, նոր փոփոխված պայմաններում, այդպես մեր ժամանակներում, ԽՍՀՄ փլուզման և կոմունիստական ամբողջատիրության վերացման փուլում, **1990 թ. օգոստոսի 8-ին** Հ Յ Դաշնակցությունը կրկին բացահայտեց իր կազմակերպական ներկայությունը մայր հայրենիքում, և իր ծանրակշիռ մասնակցությունը բերեց Հայոց անկախ պետականության կառուցման և Արցախի ազատագրության գործին:

Հիրավի, մեր ժամանակներում պատմությունը կայացրեց ականավոր պատմաբան, ակադեմիկոս **Ա. Հովհաննիսյանի** խոսքերով ասած՝ **իր ահեղ ու արդարացի դատաստանը:** Դրսի ուժերի հովա-

նավորությամբ, հայ ազգային ոգուն ոչ հարազատ երբեմնի միահեծան Հայկոմկուսը ապրում է գաղափարական ու սոցիալ-քաղաքական ծանր ժամանակներ, ըստ էության, սնանկացման գործընթաց, մինչեռ ՀՅԴ-ն Հայաստանում ու ի սփյուռս աշխարհի, հենված հայ ազգային գաղափարախոսության, ազգային իդեալների իրագործման, արդար հասարակարգ հաստատելու տեսլականի վրա, շարունակում է պահպանել իր կենսունակությունը, և քանի կա հայ ժողովուրդը՝ կշարունակի հարատևել: Այլ խոսքով՝ կարելի է արձանագրել, որ Հայկոմկուսին չհաջողվեց Դաշնակցության «լիկվիդացիան»:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ I

ԿԼԻՄԱԿԱԳԻՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

(Տվյալներ մանդատային հանձնաժողովի կողմից)

ԳԱՎԱՌԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԸՆՏՐՎԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ*

№№	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Տարի	Կոնտակցիան պարտականություն
	ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ԾՐՋԱՆ		
1	Ալեքսանդր Բակունց	1915	Զանգեզուրի կոմ. անդամ
2	Առստ. Գյուրջյան (Խոստնց)	1898	» » »
3	Միսակ Հայրապետյան	1914	Ադիտատոր
4	Նիկոլայ Դորոնց	1912	Զանգեզուրի կ. կոմ. անդամ
5	Նիկոլայ Կրժիժանոց	1917	Միկոյանի շրջ. կոմ. անդամ
6	Հովհաննես Գրիգորյան	1910	Շարքային
7	Լևոն Պետրոսյան	1903	Դավառական կոմ. անդամ
8	Մաշիկ Դանիելյան	1917	Կադմակերպիչ և գրագրագ.
9	Համազասպ Յեսայիանոսյան	1903	» և մարտական
	ՍԻՍՅԱՆ		
10	Գրիգոր Մելիք-Խանդյան	1907	Շարքային
11	Յերվանդ Ակայան	1905	»
12	Յեղո Ղազարյան	1905	»
13	Ալեքսան Ալեքսանյան	1905	»
14	Ստեփան Մելիք Փարսադանյան	1905	»
15	Դավիթ Դավթյան	1914	Կադմակերպչական
16	Ղևոնդ Մխիթարյան	1917	Շարքային
17	Սարգիս Փիլիպոսյան	1909	»
	ԼՈՌԻ ՓԱՄԲԱԿ		
18	Դատոս Տեր-Մարտիրոսյան	1903	Կադմակերպչական և մարտ.
19	Գրիգոր Հարությունյան	1901	Ռազմական
20	Ալեքսանդր Նայրանդյան	1918	Շարքային
21	Գեվորգ Մելիք Գևորգյան	1904	Շրջանային կոմ. անդամ
22	Հովհաննես Ստեփանյան	1900	Շարքային
23	Դեղամ Ղազարյան	1917	Շրջանային կոմ. անդամ
24	Սերգեյ Տ. Գևորգյան	1913	» » »
25	Սեդրակ Պետրոսյան	1907	Շարքային
26	Վաղինակ Ստեփանյան	1905	»
27	Սամսոն Լարիսյան	1906	Շրջանային կոմ. անդամ.

№№	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Ստաժ	Կուսակցական պատասխանատվ.
28	Շահնազար Շահնազարյան . .	1905 թ.	Երկրային Կոմ. անդամ
29	Արսեն Յեղշադյան	1904	Շարքային
30	Մարտիրոս Բաբայան . . .	1916	»
31	Դարեգին Խաչատրյան . . .	1903	»
32	Ջումշուդ Դիլնոսյան	1903	»
33	Մայսակ Բաբայան	1917	»
34	Յեղիշե Իսահակյան	1917	»
35	Ստեփան Արովյան	1915	»
36	Հաջի-Բար Մելքոնյան . . .	1917	»
37	Լևոն Թորոսյան	1914	»
38	Համայակ Տ. Հովհաննեսյան .	1912	»
39	Սայադ Տ. Հարությունյան . .	1914	»
40	Մկրտիչ Սուքիասյան	1914	»
	ՂԱՄԱՐԼՅԻ		
41	Հակոբ Տ. Դեվրիկյան . . .	1901	Շարքային
42	Մկրտիչ Թարիրյան	1890	Կազմակ. գրագար. և շրջիկ
43	Բարեղամ Սայադյան	1914	Շարքային
44	Հարություն Բաղալյան . . .	1995	»
	ԱԽՏԱ		
45	Յեվրեմ Բաղդասարյան . . .	1899	Շարքային
46	Սողոմոն Բաղդասարյան	1916	Կոմիտեյի անդամ
47	Արմենակ Ստեփանյան . . .	1912	Երկրային Կոմ անդամ
48	Տիգրան Գրիգորյան	1917	» » »
49	Խաչատուր Տ. Թուլմասյան . .	1919	» » »
50	Արամ Տոնյան	1912	» » »
51	Մաթեոս Մանուկյան . . .	1906	Բալահանիկոմ. անդամ
52	Թադեվոս Ղարագոզյան . . .	1905	Յենթակոմ. անդամ
53	Սայադ Նազարյան	1918	Շարքային
	ԲԱՇԳԱՌԵԻ		
54	Հովհաննես Խանդիյան . . .	1895	Շարքային
55	Համբո Մելքոնյան	1914	»
	ԿՈՏԱՅՔ		
56.	Աբրամ Հովհաննեսյան	1905	Ազգային Խորհրդի անդամ
57	Կարապետ »	1914	Շարքային
	ՅԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔ		
58	Ավագ Բունյաթյան	1906	Երկրային Կոմ. անդամ
59	Նավարդ Բասենցյան	1901	Դալսի Կ. կոմիտ. անդամ
60	Միհրան Տ. Գրիգորյան . . .	1912	Գրոսլագանիստ
61	Ցերվանդ Խանամիրյան	1001	Շարքային
62	Բժիշկ Ասոյան	1915	»
63	Մանուկ Սարգսյան	1917	»

Հմ.	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Տարի	Կուսակցական պատասխանատուներ
64	Հայկ Ավագյան	1914	Շարքային
65	Գողոս Գոխիկյան	1917	»
66	Խաչատուր Մ. Բարխուդարյան	1905	»
67	Տրդատ Տրդատյան	1905	Վրաստանի Կ. Կ. անդամ
68	Սմբատ Ամիրխանյան . . .	1905	Կոմիտ. անդամ
69	Մկրտիչ Աղաբաբյան . . .	1905	Շարքային
70	Մկրտիչ Այվազյան	1908	»
71	Հրանտ Կարինյան	1905	Գրոսպակ. կուս. թերթի խմբ
72	Զաքուզ Արրահամյան . . .	1903	Շարքային
73	Հովհաննես Առաքելյան	1906	«
74	Սարգիս Բոչարյան	1906	Պրոդպականդիստ
75	Սարգիս Տ. Հովհաննիսյան .	1915	»
76	Դիլիդար Ներսեսյան . . .	1913	Երջանային Կոմ. անդամ
77	Արշակ Սինանյան	1894	Շարքային
78	Գաբեղին Մովսիսյան . . .	1912	»
79	Անդրեյ Կարագեզյան . . .	1903	»
80	Մկրտիչ Զաքարյան	1915	»
81	Վարդան Մելիք Ավետիսյան	1917	Ակտիվիստ
82	Վարդան Բարսաղյան . . .	1918	»
83	Նյուքար Լալոյան	1918	»
84	Կարապետ Գորյանյան . . .	1918	»
85	Արտեմ Տ. Հարությունյան .	1915	Շարքային
86	Արամ Սարգսյան	1918	»
87	Մկրտիչ Մարգարյան . . .	1918	»
88	Գրիգոր Գրիգորյան	1918	»
89	Միքայել Մարուքյան . . .	1917	»
90	Սարգիս Բեգլարյան	1917	»
	ՆՈՐ ԲԱՅԱՋԵԳ		
91	Լևոն Նավասարդյան . . .	1915	Կոմ. անդամ
92	Վահան Ամրագյան . . .	1913	Յերիտասա. միութ. անդամ
93	Հրաչ Տ. Հովհաննիսյան .	1910	Ուսանող. միութ. անդամ
94	Տիգրան Մարգարյան . . .	1918	Շարքային
95	Սենեքերիմ Ադիլխանյան .	1902	Գրոսպականդիստ
96	Հովհաննես Խիզանյան . .	1908	Խմբագիր
97	Նիկողոս Մուրադյան . . .	1902	Շարքային
98	Խորեն Իսահակյան	1907	Կ. կոմ. անդամ
99	Հակոբ Գնունի	1895	Կ. անդամ
100	Զավադ Նահապետյան . . .	1918	Շարքային
101	Արտեմ Մուրադյան	1918	»
102	Բեգլար Հովհաննիսյան . . .	1915	Երջանային Կոմ. անդամ
103	Բաղրատ Հովհաննյան . . .	1918	Շարքային
104	Խաչատուր Մովսեսյան . . .	1918	»
105	Աթաբեգ Բաղալյան	1908	»
106	Յեկնիկ Նալբանդյան . . .	1917	»

№№	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Տարեթիվ	Կուսակցական պատկանելիք
107	Հակոբ Տ. Վարդանյան	1917 թ.	Շարքային
	ԵՋՄԻԱԾԻՆ		
108	Սվրատ Կարոյան	1913	Երջանկային Կոմ. անդամ
109	Թաթևոս Սարուխանյան	1892	» » »
110	Վաղարշ Փարսադանյան	1915	Շարքային
111	Արնստակես Ասլիյան	1900	Կոմ. անդամ
112	Սվետիս Գասպարյան	1904	» »
113	Կարապետ Ցինգիրարյան	1903	» »
114	Անուշավան Տ. Միքայելյան	1906	Կ. Կոմ. անդամ
115	Արամ Աղաջանյան	1900	» » »
116	Սահակ Կարճիկյան	1911	Շարքային
117	Սարգիս Վարդիկյան	1903	»
118	Միհրան Մամիկոնյան	1913	Կազմակերպիչ
119	Վերգին Սանամյան	1915	Շարքային
120	Գոռոռ (սասունցի)	1905	Խմբապետ
121	Մուշեղ Բաբսեղյան	1899	Շարքային
122	Խոսրով Ալանյան	1900	Մարտական
123	Մկրտիչ Ղազարյան	1915	Շարքային
124	Բարդող Վարդանյան	1900	Կոմ. անդամ
125	Բագրատ Մանուկյան	1902	Շարքային
126	Ղուկաս Հովհաննեսյան	1916	Մարտական
127	Գևորգ Փանոյան	1895	Շարքային
128	Վաչագան Շահաղիզյան	1998	Երջանկային Կոմ. անդամ
129	Մովսես Գրիգորյան	1912	» » »
130	Հայկ Արբհամյան	1917	Կազմակերպչական
131	Մանուկ Գևորգյան	1906	Շարքային
132	Վարդ Կոստանյան	1918	»
133	Գևորգ Սահակյան	1916	Պրոպագանդիստ
134	Հովհաննես Մուշեղյան	1918	Շարքային
135	Հարութիւն Կարապետյան	1915	Իսպիտական
136	Միհրան Մանուկյան	1917	»
137	Մամբրե Հայրապետյան	1914	Շարքային
138	Արամ Զքսավյան	1906	»
139	Յերվանդ Գանիելյան	1910	»
140	Միհրան Սերջանյան	1911	Կազմակերպչական
141	Ցնտրոս Սարգսյան	1908	Մարտական
142	Հայկ Գնտրոսյան	1915	Շարքային
	ԱԼԵՔՊՈԼ		
143	Արշակ Առուստամյան	1912	Յերկաթուղու Կոմ. անդամ
144	Մամիկոն Ալթունյան	1916	Յերկաթուղու Կոմ. անդամ
145	Մխիթար Տ. Արբամյան	1907	Կոմ. անդամ
146	Միհրան Տ. Սահակյան	1909	Պրոպագանդ. և Կոմ. անդ.
147	Միքայել Այվազյան	1904	Կոմ. անդամ
148	Խորեն Այվազյան	1918	Կազմակերպչական

ՀԱ	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Տարեթ	Կուսակցական պաշտոններ
149	Սմբատ Ավաքյան	1917 թ.	Ջանազան պաշտոններ
150	Վռամ Հակոբյան	1900	Շարքային
151	Մովսես Դավթյան	1907	»
152	Գուրգին Հարության	1918	»
153	Տաճատ Դիմոյան	1915	Կոմ. անդամ
154	Մարիամ Բաղչյան	1897	Շարքային
155	Մկրտիչ Ստեփանյան . . .	1904	Շրջանային Կ. անդ. խմբապ.
156	Առաքել Սիմոնյան	1900	Կոմ. անդամ
157	Դավուստ Ավետիսյան . . .	1905	Շարքային
158	Հովհաննես Զիտչյան . . .	1917	Աշակ. միութ. նախագահ
159	Հայուհյուն Հակոբյան . .	1903	Շարքային
160	Համազասպ Տիգրանյան . . .	1917	»
161	Դավիթ Գևորգյան	1917	»
162	Արտավազդ Գրիգորյան . . .	1917	»
163	Արտաշես Բաղալյան	1917	Կալամակերպչական
164	Հովսեփ Միրզոյան	1917	Շարքային
165	Հարություն Դարախանյան	1917	Շրջանային կոմ. անդամ
166	Հովսեփ Իլիթյան	1917	Շարքային
167	Արտաշես Մելքոնյան . . .	1917	Կոմ. անդամ
168	Աթանես Աթանեսյան	1905	Շարքային
169	Հակոբ Թաշչիյան	1919	»
170	Սամսոն Ղարիբյան	1917	Ջանազան պաշտոններ
171	Գրիգոր Բալասրեկյան . . .	1908	Երկրամասի և Լոռվա Կ. անդ.
172	Արսեն Տ. Դավթյան	1903	Շրջանային Կոմ. անդամ
173	Գրիգոր Վարդանյան . . .		
174	Գոգոս Տ. Գոգոսյան . . .		
175	Հարություն Թումյան	1917	Շրջանային Կոմ. անդամ
		1914	Գանձ. և Վրատ. Կ. Կ. անդ.
	ՍԱՆԱՀԻՆ	1915	Ղարաբաղի Կոմ. անդամ
176	Գասպար Բաղդասարյան . . .		
	ԹԱԼԻՆ	1914	Ջանազան պաշտոններ
177	Կլիակոս Համբարձումյան . .		
178	Հարություն Սիրոբյան . . .	1905	Մարտական
179	Մարքար Առաքելյան	1904	Կոմ. քարտուղար
180	Մուշեղ Դարմանյան	1900	Կոմիտեյի անդամ
181	Գրիգոր Սարգսյան	1907	Ցենքոմկոմ. անդամ
		1904	Շարքային
	ԴԻԼԻՋԱՆ		
182	Մաքենզոս Մաքենզոսյան . .	1906	Կոմիտեյի անդամ
183	Բենո Սարիբեկյան	1914	»
184	Աստատուր Ալիխանյան	1892	»

№	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Տարի	Կուսակցական պատասխաններ
185	Գրիգոր Շահնազարյան . . .	1919 թ.	Շարքային
186	Կարապետ Սարուխանյան . .	1905	»
187	Խոսրով Շիրինյան	1912	»
188	Գրիգոր Տ. Վոսկանյան . . .	1905	Կոմիտեյի անդամ
189	Բագրատ Մհակյան	1916	Շարքային
190	Ծովակ Ծովյան	1910	»
	ՊԱՐՍԿԱՍՏԱՆ		
191	Ռուբեն Արբաձյան	1917	Լոռվա կոմիտե
192	Ստեփան Դանավուգյան . .	1917	Կազմակերպչական
	ԴԱՐԱԼԱԳՅԱԶ		
193	Լևոն Դավթյան	1907	Շարքային
194	Մովսես Մովսեսյան	1915	»
195	Միսակ Ավագյան	1919	»
196	Մովսես Մնացականյան . . .	1906	»
197	Սարգիս Սարգսյան	1900	Կոմիտեյի անդամ
	ԲԱԳԱՌ		
198	Գրիգոր Գեորգյան	1910	Խմբակների կազմակերպիչ
199	Վահան Բեջանյան	1898	Կենտ. Կոմի. անդամ
200	Գեղամ Բուշտունի	1903	Շարքային
201	Գրիգոր Մովսեսյան	1902	»
202	Ռաշիդ Հակոբյան	1913	Սուրհանդակ
203	Իսրայել Գյուլիքոխվյան . . .	1900	Գրոպաղանդիստ
204	Սարգիս Աղամյան	1905	Շարքային
205	Բենյամին Մարտիրոսյան . .	1903	»
	ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԲՅՈՒՐՈՅԻ ԱՆԴԱՄՆԵՐ. ՎԱՐՈՒՆՔ ՉԵՆ ԸՆՏՐՎԵԼ ՇՐՋԱՆՆԵՐԻՑ		
206	Արտաշես Գևորգյան	1909	Գանձակի Բախումի Կ.Կ.ա.
207	Ռուբեն Տոնյան	1917	Գրոպաղանդիստ
208	Սիմոն Փոլյան	1917	Բաքվի Կ. Կոմ. անդամ
	ՅԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ.		
209	Մկրտիչ Մարգարյան	1918	Վաղարշապ. ազակերտ, միության նախագահ
210	Միքայել Մարուքյան (Լիմուել)	1917	«Յերկիր» թերթի խմբագիր և կոլեկտիվի նախագահ
211	Սուրեն Տ. Հարությունյան . .	1918	Շարքային
212	Գրիգոր Գրիգորյան (Գրո) . .	1918	Աշակերտ միության վարչության անդամ
213	Կարապետ Թորոսյան . . .	1918	Աշակերտական միութ. անդ.
214	Վահան Սասունյան	1917	Հայաստանի դաշն. աշ. միութ. Կենտ. Կոմի. անդամ

№	ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	Տարի	Դասակցական պաշտոնները
215	Սարգիս Բեղլարյան . . .	1917 թ.	Աշակերտ. միութ. անդամ
216	Արամ Սարգիսյան . .	1915	Հայաստանի դաշ. ուսան. միության Կ. Կոմ. անդամ
217	Վարդան Փարասչյան . .	1918	Վաղարշապ. դաշ. աշակերտ. միութ. վարչութ. անդ., և քարտուղար
218	Մկրտիչ Չաքարյան	1918	Ցերնվանի աշակերտ. միության վարչութ. անդամ
219	Վարդան Մելիք Ալիխանյան .	1915	Ճարքային
220	Նյուքար Զոլոյան	1919	«Վասպուրական» աշակերտ. միության անդամ
	ՉԱՆԱՉԱՆ ՎԱՅՐԵՐԻՑ		
	27 հոգի		

Ընդամենը 247 սրատոդամատոր



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՋԱԶՆՈՒՆԻ
(1868–1938 թթ.)

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՋԱԶՆՈՒՆՈՒ ՄԵԾ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ
Ստալինյան բռնաճնշումներից մինչև արդարացում (փաստաթղթեր)

Իբրև շարունակություն Հ. Քաջազնունու 1920-ական թվականների գործունեության՝ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Խորհրդային Հայաստանում նրա կյանքի վերջին տարիների՝ ձերբակալության, քրեական գործի հարուցման, ողբերգական մահվան և ապա գործի վերանայման ու արդարացման վերաբերյալ արխիվային փաստաթղթերը:

Դրանք հայտնաբերել ենք ԽՄՀՄ փլուզման և Հայաստանի անկախացման փուլում՝ Հայկ. ՍՍՌ Պետական անվտանգության կոմիտեի (ՊԱԿ) կարճված գործերի թղթապանակներում: Խորհրդային բազմահազար բռնադատվածների գործերը իրենց գաղտնիության ժամկետը անցնելուց հետո փոխանցվել ու պահվում են Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) 1191 ֆոնդում՝ 19 ընդարձակ ցուցակներով: Հ. Քաջազնունուն վերաբերող գաղտնազերծված քրեական գործն ամփոփված է վերոնշյալ ֆոնդի 16-րդ ցուցակի 78 թերթից բաղկացած 2083 գործում: Հաջորդ՝ 2084 գործը ևս վերաբերում է Հ. Քաջազնունուն, որը որպես հսկողական վարույթ բաղկացած է ընդամենը 17 թերթից և հիմնականում կրկնում է նախորդի առանձին փաստաթղթերը: Սակայն այս գործում կա արժեքավոր մի վավերագիր: Բանն այն է, որ քր. գործում տեղ է գտել մի անճշտություն՝ ժամանակին ճիշտ չի ընթերցվել Քաջազնունու մահվան կապակցությամբ բանտային հիվանդանոցի բժշկի կազմած **ակտը**, որում հստակորեն

արձանագրված է, որ տուբերկուլյոզով և գրիպով հիվանդ կալանավոր Քաջազնունին մահացել է **1938 թ. հունվարի 15-ին**: Սակայն նրա մահվանից հետո կազմված փաստաթղթերում, ընդհուպ մինչև 1992 թ. այդդարացումը, Հ. Քաջազնունու մահվան թվականը սխալմամբ նշված է **1937 թ. դեկտեմբերի 22-ը**, մինչդեռ բժշկական ակտում դեկտեմբերի 22-ը նշված է որպես նրա հիվանդանալու օր: Հենց այս թյուրիմացությունը հարթելու համար է արժեքավոր 2084 գործում առկա ձեռագիր (բնագիր) գրությունը, որը Քաջազնունու մահվան օրը՝ 1938 թ. հունվարի 15-ին գրել է Երևանի քաղաքային բանտի պետ, լեյտենանտ Միքայելյանը՝ հասցեագրված ՀԽՍՀ ՆԳԺԿ առընթեր Պետանվտանգության վարչության 8-րդ բաժնի պետ Գրիգորյանին: Դրանում հիմք ընդունելով բանտի հիվանդանոցի **ակտը**՝ հայտնվում է, որ «այսօր՝ հունվարի 15-ին, բանտիս հիվանդանոցում թեթև տուբերկուլյոզից և գրիպից մահացել է քաղ. կալանավոր Քաջազնունի Հովհաննես Հովհաննեսի, 70 տարեկան»[1]: Բերված փաստաթուղթը լիովին հաստատում է Քաջազնունու մահվան օրվա վերաբերյալ մեր կասկածները:

Ինչպես ասվեց, Հ. Քաջազնունու ամբողջական քր. գործը ամփոփված է 2084-րդ թղթապանակում: Ստորև ներկայացնելով փաստաթղթերը (բնագիր, մեքենագիր, պատճեն)՝ փորձենք առանձին հարցերի վերաբերյալ տալ որոշ մեկնաբանություններ: Հ. Քաջազնունու՝ Երևանի Գնունի փողոցի վրա գտնվող բնակարանի խուզարկության և նրա ձերբակալության օրդերը տվել է ՀԽՍՀ ՆԳ Ժողկոմ, տխրահռչակ **Խ. Մուղդուսին** 1937 թ. հուլիսի 28-ին: Կազմված արձանագրության համաձայն՝ խուզարկությունը և ձերբակալությունը կատարվել է հաջորդ օրը՝ հուլիսի 29-ին: Գուցե հիշողության կորստի հետ կապված՝ հետագայում սխալվել է Քաջազնունու 91-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2084, թ. 7:

ամյա դուստր Մարգարիտա Քաջազնունին, երբ 1990-ական թթ. սկզբին, պատասխանելով թղթակցի հարցին, հայտնել է, որ իր հորը ձերբակալել են 1937 թ. օգոստոսին, այն էլ Ստեփանավանի հանգստյան տանը[1]: Ընդ որում, բնակարանի խուզարկությանը ներկա են եղել ինքը և մայրը՝ Սաթենիկ Քաջազնունին: Հ. Քաջազնունու ձերբակալության անկետայում ձերբակալության ամսաթիվ է նշված հուլիսի 29-ը[2]:

Փաստաթղթերից մեկում ընթերցողի մոտ տարօրինակ զգացում է առաջացնում որդու՝ Կարեն Քաջազնունու տված վկայությունը հոր մասին: Լենինյան կոմերիտական Կարենը իր պարտքն է համարել փաստորեն մատնության բնույթ ունեցող տեղեկություններ հայտնել պետանվտանգության ղեկավարին՝ հորը համարելով «կատարյալ բուրժուա», «խորհրդային կառավարության թշնամի» և այլն[3]: Միանշանակ դժվար է ասել՝ այդ խոսքերը հարազատ որդին կամովի՞ն է ասել, թե՞ նրան ստիպել են, որ նման մտքեր արտահայտի: Այդուհանդերձ, Կարենի վկայության տողերը խոսում են խորհրդային երկրում առկա՝ հարազատներին, միմյանց լրտեսելու և մատնելու դրդող մթնոլորտի մասին:

Հ. Քաջազնունու գործում առկա միակ հարցաքննությունը կատարվել է 1937 թ. նոյեմբերի 16-ին:

Ամբողջ հետաքննության ընթացքում փաստաթղթերում ոչ մի ակնարկ չկա Քաջազնունու «Հ.Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս» հայտնի խորհրդայնանպաստ գրքի մասին: Մինչդեռ քննչական մարմինները «մեղադրյալ» Քաջազնունուն շոայլորեն պիտակավորել են ամեն տեսակի վարկաբեկիչ մեղադրանքներով՝ «ակտիվ հակախորհրդային քարոզիչ», «կադրային դաշնակ առաջնորդներից», «դաշնակ ազգայնական» և այլն: Գործը կազմելիս նրա

---

[1] Տե՛ս «Հայություն», Ե., 1993, ապրիլի 15–20:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2084, թ. 13:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 5–6:

խորհրդայնանպաստ գրքի մասին հիշեցում չկա, որովհետև հակառակ դեպքում այն կդիտվեր որպես մեղմացուցիչ հանգամանք:

Հ. Քաջազնունու հետաքննության քր. գործը, մեղադրական եզրակացությամբ 1937 թ. նոյեմբերին (ամսաթիվը չի երևում) ՀԽՍՀ ՆԳԺԿ Կոնդակովի հաստատմամբ, ուղարկվել է ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի Եռյակի քննության[1]: Եռյակը 1937 թ. դեկտեմբերի 5-ին մեղադրյալ Հ. Քաջազնունու հանդեպ կայացրել է գնդակահարության դատավճիռ՝ անձնական գույքի բռնագրավմամբ: Սակայն առողջական խնդիրների պատճառով նա պառկած է եղել Երևանի բանտային հիվանդանոցում: Ընդունված կարգի համաձայն՝ մահապատիժը կարող էր ի կատար ածվել միայն բանտային (դատական) բժշկի եզրակացության հիման վրա: Մինչդեռ դատապարտյալ Հ. Քաջազնունին գտնվել է ֆիզիկական ու առողջական այնպիսի ծանր վիճակում, որ բանտային բժիշկը չի տվել գնդակահարությունը իրականացնելու թույլտվություն կամ առնվազն՝ ժամանակավորապես հետաձգել է ակտի իրականացումը, մինչև որ կալանավորը կարողանա ինքնուրույնաբար ոտքի վրա կանգնած մնալ: Սակայն նախկին վարչապետի սառողջական վիճակի հետագա սրացումը (պաշտոնական վարկածով՝ ծերունական թուլություն, տուբերկուլյոզ և գրիպ) հանգեցնում է նրան, որ նա մահանում է բանտային հիվանդանոցում 1938 թ. հունվարի 15-ին, 70 տարեկան հասակում: Մինչդեռ տվյալներ կան, որ հարցաքննության ու հոգեբանական ներգործությունների ընթացքում «լրտեսության» վերաբերյալ խոստովանություն կորզելու համար տնականորեն 3500 մոմանոց էլեկտրական լամպի լուսարձակի առջև պահվելով՝ Քաջազնունին կուրացել էր[2]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 21:

[2] Տե՛ս Հարությունյան Ա.Ա., Հ.Յ. *Դաշնակցության մեծ դատավարության թղթածրարները.* Հ. Քաջազնունու դատական գործը, «Վէմ», Ե., 2010, հոկտեմբեր-դեկտեմբեր, N 4(32), էջ 188-189:

Հավելենք, որ Ա. Բակունցի, Ե. Չարենցի և հազարավոր այլ բռնադատվածների նման հայտնի չէ նաև Հ. Քաջազնունու գերեզմանը: Նրան մինչև վերջ հավատարիմ մնացած սիրելի դուստրը՝ Մարգարիտան (Մարգոն), բանտարկության ընթացքում քանիցս փորձել է տեսակցել հորը, բայց ապարդյուն: Իսկ այդ փորձերից մեկի ժամանակ հաջողվել է մի չեկիստի հարցնել, թե որտեղ կարող է լինել իր հայրը, բայց նրան պատասխանել են այն ժամանակվա հաստուկ մշակված արտահայտությամբ (ֆրազով). «Աքսորված է աշխատանքային ուղղիչ ճամբար 10 տարով՝ առանց նամակագրության իրավունքի»: Այս հանրահայտ ֆրազին տեղյակ էր 1930-ական թթ. ցանկացած բռնադատվածի հարազատ: Վերջին անգամ բանտում Հ. Քաջազնունուն տեսել են կալանավոր, բանաստեղծ Կարո Մելիք-Օհանջանյանը և կոմունիստ, կուսակցական-պետական գործիչ Սերգեյ Մարտիկյանը[1]: Այդպես էլ Մարգոն չի տեսել հորը:

Ընթերցողին հետաքրքիր կլինի իմանալ գնդակահարության դատավճիռ կայացրած տխրահռչակ Եռյակի կազմը: Բռնադատվածների կարճված գործերի մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1937 թ. նոյեմբերից մինչև 1938 թ. փետրվար ամիսը ներառյալ, ՀԽՍՀ Եռյակի կազմում ընդգրկված են եղել նախագահ, ՆԳԺԿ **Վիկտոր Խվորոստյանը**, անդամներ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1-ին քարտուղար **Գրիգոր Հարությունյանը** (Արուտինովը) և ՀԽՍՀ դատախազ **Արամ Հարությունյանը**: Եռյակի նիստերի քարտուղարն է եղել ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի պետանվտանգության վարչության 8-րդ բաժնի պետ Կ. Գրիգորյանը:

---

[1] Տե՛ս «Հայություն», Ե., 1993, ապրիլի 15–20, ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 48:

Նկատի ունենալով, որ Հ. Քաջազնունու քր. գործում առկա է միևոյն Եոյակի դատավճռի քաղվածքը (դատավարության նիստի արձանագրությունը բացակայում է), ուստի հիմնավորապես կարելի է պնդել, որ դեկտեմբերի 5-ի նիստը ևս ի պաշտոնե վարել է այդ նույն կազմով Եոյակը: Եոյակի կայացրած գնդակահարության վերաբերյալ որոշման քաղվածքը մատիտով ստորագրել է նույն Եոյակի քարտուղար Գրիգորյանը[1]:

Հարկ է նշել, որ Եոյակը Հ. Քաջազնունուն գնդակահարության է դատապարտել առանց ՀԽՍՀ քրեական օրենսգրքի որևէ հոդվածով նրա հանդեպ մեղադրանքը որակելու, էլ չենք խոսում՝ ապացուցելու մասին: Ընդ որում, առաջադրված մեղադրանքներում Քաջազնունին իրեն մեղավոր չի ճանաչել:

Հրապարակվող փաստաթղթերի հաջորդ խումբը վերաբերում է, սկսած 1950-ական թթ. խրուշչովյան «ձնհալով» պայմանավորված՝ Քաջազնունու քր. գործի վերանայման, իսկ ավելի ուշ՝ 1990-ական թթ. սկզբին, իրավաքաղաքական արդարացման նյութերին:

Հազարավոր այլ բռնադատվածների հարազատների նման իր հորը արդարացնելու նպատակով Մարգո Քաջազնունին 1955 թ. հունիսի 22-ին ընդարձակ, հիմնավորումներով լի դիմում-հայց է ուղղել Հայկ. ՍՍՌ ՊԱԿ-ի նախագահ Գ. Բաղամյանցին: Դրանց հիման վրա Քաջազնունու քր. գործը հանձնվել է ՊԱԿ-ի համապատասխան բաժնին՝ լրացուցիչ ստուգման ենթարկելու համար:

Հ. Քաջազնունու արդարացման գործին օգնելու, նրա մարդկային ու բարոյական անբիծ կերպարը ներկայացնելու համար բերված են Գր. Չուբարյանի, Միք. Մազմանյանի, Գր. Տեր-Հակոբյանի (Գրոյի)[2], Ս. Մարտիկյանի և այլոց վկայությունները:

---

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 2083, թ. 22:

[2] Նախկին Սոցիալիստ-հեղափոխական (Էսէռ), հոգեբույժ Գրիգոր Տեր-Հակոբյանի մասին տե՛ս «Հայաստանի բժշկագիտություն», Ե., 2016, թիվ 4, էջ 162–164:

Դրան հակառակ. կարծես արդարացման գործը կասեցնելու համար, ՊԱԿ-ի քննչական մարմինները, հանձին հետաքննչական բաժնի պետի տեղակալ Փիրուզյանի, 1955 թ. սեպտեմբերի 9-ին դիմել են Հայաստանի ՆԳ մինիստրության արխիվային բաժնի պետ Վ. Կզարթմյանին՝ Քաջազնունու վերաբերյալ արխիվից հավելյալ տեղեկություններ ստանալու համար: Եվ ի՞նչ եք կարծում. ՊԱԿ-ի աշխատակից Աղուզումցյանի միջոցով ընտրվել ու պատճենահանվել են «նախկին դաշնակցական» Քաջազնունու «հակահեղափոխական գործունեությունը մերկացնող» 6-էջանոց արխիվային տվյալներ, պատճենների քաղվածքներ, որպեսզի հիմնավորվի Քաջազնունու արդարացման անհնարինությունը: Այդ ամենի հիման վրա ՊԱԿ-ը 1956 թ. փետրվարի 28-ին տալիս է բացասական «Եզրակացություն»[1]: Դա դեռ բավական չէ, ՊԱԿ-ից գրություն է ուղարկվել Հայկ. ՍՍՌ Գլավլիտի տնօրեն Թադևոսյանին՝ հարցնելով, թե Քաջազնունու հայտնի գիրքը հանվա՞ծ է արդյոք շրջանառությունից: Տնօրենը պատասխանել է, որ այն պահվում է հատուկ ֆոնդում և միաժամանակ գրքի բովանդակության վերաբերյալ արտահայտվել է բացասական երանգավորումներով[2]:

Խորհրդային բռնության մեքենան համարձակություն չունեցավ անգամ խրուշչովյան «ձնհալի» փուլում հետմահու արդարացնել բռնադատված անմեղ գործչին և մեծ քաղաքացուն: Արդյունք չտվեցին նրա դստեր՝ Մարգարիտայի դիմումները, Քաջազնունուն ճանաչող մարդկանց միջնորդագրերը:

Արդարացման հարցը հետաձգվեց, և ի վերջո խնդիրը լուծվեց միայն ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանի անկախության հռչակումից հետո: Անկախ Հայաստանի դատախազությունը, ուսումնասիրելով Հ. Քաջազնունու քր. գործը, եզրակացրել է, որ նրան վերագրված մե-

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 69–75:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 69:

դադրանքները հանցագործության հատկանիշներ չեն պարունակել, գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Հ. Քաջազնունին եղել է հայրենասեր, իր գործունեության ընթացքում պայքարել է բոնակալության դեմ՝ հայ ժողովրդի իդեալներն իրականացնելու համար:

Արդարացման որոշումը կայացրել է ՀՀ գլխավոր դատախազ Արտավազդ Գևորգյանը 1992 թ. դեկտեմբերի 12-ի հաստատմամբ. «Որոշեցի՝ Հովի. Քաջազնունու նկատմամբ քր. գործը կարճել հանցակազմի բացակայության պատճառով, նրան համարել արդարացված և ռեաբիլիտացված»[1]: Սույն որոշումը կարելի է համարել ափոփանք Հ. Քաջազնունու կրած հոգեկան և ֆիզիկական տառապանքների, բոլշևիկյան բռնավարչակարգի անհիմն մեղադրանքների ու դատապարտման դիմաց:

Ահա այսպես, ժամանակագրական հաջորդականությամբ հետևելով հրապարակվող փաստաթղթերին՝ կարելի է որոշակի պատկերացում կազմել 20-րդ դարի հայ անվանի քաղաքական-պետական գործիչներից մեկի, հայոց առաջին վարչապետի կյանքի վերջին շրջափուլի վերաբերյալը:

Վերջում մնում է տեղեկացնել, որ Հ. Քաջազնունու քր. գործի, ինչպես որ մնացած հազարավոր քր. գործերի փաստաթղթերը (բնագիր թե պատճեն) կազմված են եղել գերազանցապես ռուսերենով, որովհետև դրանց մեկ օրինակը՝ հիմնականում բնագիր, անխտիր կարգով ուղարկվում էր կենտրոն՝ Մոսկվա: Ուստի ներկայացվող փաստաթղթերը տրվում են հայերեն թարգմանությամբ, ինչը հաջողությամբ իրականացրել է բանաս. գիտ. թեկնածու Միրանուշ Գ. Հովհաննիսյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 77:

Միաժամանակ հարկ է նկատել, որ փաստաթղթերում տեղ են գտել տարաբնույթ անճշտություններ, տեխնիկական բնույթի թերություններ, որոնց վերաբերյալ բուն տեքստում և տողատակի ծանոթագրություններում արված են ուղղումներ, խիստ անհրաժեշտության դեպքում կատարված են ուղղագրական, կետադրական և լեզվառճային շտկումներ, իսկ հապավված, կրճատված կամ կիսատ բառերը ներկայացվել են լրացումներով, որոնք առնված են ուղղագիծ փակագծերի մեջ՝ []:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

N 1
ՈՐՈՇՈՒՄ

«Հաստատում եմ»
ՀԽՍՀ ՆԳ ԺՈՂԿՈՄ
պետանվտանգության ավագ մայոր [Խ.] ՄՈՒՂԴՈՒՄԻ

Հուլիս, 1937 թ.
Մեղադրանքի ներկայացման և
խափանման միջոցի ընտրության մասին

Քաղաք Երևան, 1937 թ. հուլիս

Ես՝ 2-րդ բաժանմունքի 4-րդ բաժնի օպեր/լիազորս՝ պետանվտանգության լեյտենանտ, ՀԽՍՀ պետանվտանգության ՆԳ ԺՈՂԿՈՄի վարիչ Մովսեսյանս, քննելով N 19291 գործի հետաքննության նյութը և նկատի առնելով, որ քաղաքացի Հովհաննես Իվանի Քաջազնունին՝ ծնվ. 1871 թ.[1] Ախալքալաքում, մասնագիտությամբ լեռնային ինժեներ, դաշնակցական նախարար է եղել, զաղթել է արտասահման, վերադարձել 1926 թ.[2], հին դաշնակը բավականաչափ մերկացվում է նրանում, որ հակախորհրդային ազգայնամոլական ագիտացիա է վարում:

Որոշեցի.

Հովհաննես Իվանի Քաջազնունուն բերման ենթարկել քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածով որպես մեղադրյալ, որպես հե-

---

[1] Հ. Քաջազնունու ծննդյան ստույգ թվականը 1868-ն է:
[2] Խորհրդային երկիր է վերադարձել 1924 թվականի վերջին:

տաքննությունից և դատից խուսափելու եղանակների խափանման միջոց կիրառել կալանքը ՀԽՍՀ ՆԳ Ժողկոմատի ներքին բանտում:

2-րդ բաժանմունքի 4-րդ բաժնի օպեր/լիազոր,
պետանվտանգության լեյտենանտ /ստորագրություն/
Մովսեսյան

«Միանում եմ»:
2-րդ բաժանմունքի 4-րդ բաժնի պետ,
պետանվտանգության ավագ լեյտենանտ *Թովմասյան*
«Համաձայն եմ»:
Պետանվտանգության վարչության 4-րդ բաժնի պետ,
պետանվտանգության ավագ լեյտենանտ *Կոստիկյան*

Սույն որոշումն ինձ հայտարարված է:

Մեղադրյալի ստորագրությունը

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2084, թ. 1: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 2
ԿԱԼԱՆԱՎՈՐ

ՆԵՐՔԻՆ ԲԱՆՏԻ ՎԱՐԻՉ
ԵՐԵՎԱՆԻ ԲԱՆՏԻ ՎԱՐԻՉ

Խնդրում ենք Ներքին բանտի կալանավորվածներին՝ Մելիք-Նաղայան Գրիշային և Հովհաննես Իվանի Քաջազնունուն փոխադրել Երևանի բանտ՝ բանտի հիվանդանոցում բուժվելու համար:

8-րդ բաժին, 19291
«11»-ը նոյեմբերի, 1937 թ.

ՀԽՍՀ ՆԳԺԿ Պետանվտանգության վարչության 8-րդ բաժնի պետ, պետանվտանգության լեյտ. *Գրիգորյան*

1-ին տեսուչ Կոսարևից /ստորագրություն/

ՀԱԱՀ, ֆ. 1191, ց. 16, գ. 2084, թ. 2: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 3
ՏԵՂԵԿԱՆՔ

ԴՐՈՒՅԹԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՔԱՋԱԶՆՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Ծնվ. 1868 թ. Ախալքալաքում (Վրացական սոցիալիստական խորհրդային հանրապետություն): Հոգևորականի ընտանիքից է, քահանայի որդի, ծառայող ինժեներ: Մինչ ձերբակալությունը աշխատել է Կոմտնտ Ժողկոմում, ապրել է Երևանում՝ Գնունի 1, N 61 հասցեում:

ՎԱՐԿԱԲԵԿԻՉ ՆՅՈՒԹ

Ակտիվ կաղրային դաշնակ 1893 թվականից: Դաշնակցական առաջնորդներից և «Դաշնակցություն» կուսակցության կազմակերպիչներից մեկը: Դաշնակցական ակտիվ աշխատանք է տարել, կապված է եղել Ռուսաստանի և արտասահմանի բոլոր երևելի դաշնակների հետ, բազմիցս ընտրվել է որպես Կենտկոմի և Դաշնակցության Բյուրոյի անդամ[1]: Դաշնակության օրոք վարչապետ է եղել: 1920 թ. Հայաստանի խորհրդայնացումից հետո ձերբակալվել է և ազատ արձակվել դաշնակցական հակախորհրդային ավանտյուրայի ժամանակ: Դաշնակ-ավանտյուրիստներից է և նրանց ոգեշն-

[1] Հ. Քաջազնունին ՀՅԴ Բյուրոյի անդամ չի եղել:

չող: Ավանտյուրայի ճնշումից հետո գաղթել է Իրան, որտեղից՝ Ֆրանսիա, ուր ակտիվ դաշնակցական և հակախորհրդային աշխատանք է կատարել Հայաստանի սպիտակ վտարանդիների շրջանակում: ԽՍՀՄ է վերադարձել 1924 թվականին:

Մինչ ձերբակալությունը ապրելով խորհրդային Հայաստանում՝ շարունակել է մնալ համոզված դաշնակ-ազգայնական:

Իրեն մեղավոր է ճանաչել *մասամբ:*

Քաջազնունի Հովհաննեսի ցուցմունքները և գործակալա-հաշվառական նյութ

Պետանվտանգության վարչության

6-րդ բաժանմունքի 4-րդ բաժնի օպեր/լիազոր,

պետանվտանգության լեյտենանտ *Մովսեսյան*

պետանվտանգության 3-րդ բաժանմունքի 4-րդ բաժնի պետի տեղակալ,

պետանվտանգության կրտսեր լեյտենանտ *Իսրայելյան*

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2084, թ. 3: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 4

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»:

ՀԽՍՀ ՆԳ ժողկոմ

պետանվտանգության ավագ մայոր

ՄՈՒՂԴՈՒՍԻ

1937 թ. հուլիս

ՏԵՂԵԿԱՆՔ

<u>ՔԱՋԱԶՆՈՒՆԻ</u> Հովհաննես Իվանի – ծնվ. 1871 թ.[1], ծնունդով՝ Ախալքալաք, մասնագիտությամբ լեռնային ինժեներ, նախկին

[1] Ծննդյան թվականը դարձյալ ճիշտ չէ նշված:

դաշնակցական նախարար, գաղթել է արտասահման, վերադարձել 1926 թ.[1]: Հին դաշնակ: Վարում է հակախորհրդային ազգայնական ագիտացիա:

ՆԳ ԺՈՂԿՈՄԱՏԻ ՊԵՏԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 4-ՐԴ ԲԱԺԻՆ,
Պետանվտանգության ավագ լեյտենանտ *ԿՈՍՏԻԿՅԱՆ*

ՊԵՏԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ 4-ՐԴ ԲԱԺԻՆ
պետանվտանգության ավագ լեյտենանտ *ԹՈՎՄԱՍՅԱՆ*

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2084, թ. 4: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 5
ԳԱՂՏՆԻ

ՀԽՍՀ ՆԳԺԿ
Երևան ք.-ի բանտ,
Նո. 094/16
ԱԽՖՍՀ
Ներքին գործերի
ժողկոմատ, Հայաստանի վարչ.
բանտ. ք. Երևան
094/16
15.01.1938 թ.

[1] Սխալը կրկնվել է:

ՀԽՍՀ ՆԳԺԿ Պետ. Անվ. վարչության 3-րդ
բաժնի պետ ընկ. Գրիգորյանին

Ուղարկելով բանտիս հիվանդանոցի ակտը՝ հայտնում ենք, որ այսօր՝ հունվարի 15-ին բանտիս հիվանդանոցում թեթև տյուբերկուլյոզից և գրիպից մահացել է քաղ. կալանավոր Քաջազնունի Հովհաննես Հովհաննեսի, 70 տարեկան:

Առդիր – Ակտը:

Երևանի քաղբանտի պետ, պետանվ. լեյտենանտ Միքայելյան */ստորագրություն/*

Գրասենյակի պետ Վարդանյան */ստորագրություն/*

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2084, թ. 7: Վավերացված պատճեն: Ձեռագիր: Հայերեն:

N 6

Հարգելի՛ ընկեր [Ս.] Մելիք-Օսիպով[1],

Վերջին 3 տարիների ընթացքում (25, 26 և 27 թթ.) ապրել եմ հոս՝ Հովի. Քաջազնունու ընտանիքում: Ներկայումս մեկնում եմ Երևանից՝ խզելով կապերն իմ ընտանիքի հետ: Իմ կոմերիտական պարտքն եմ համարում տեղեկացնել այն ամենի մասին, ինչ որ գիտեմ:

1. Ով էր լինում նրա մոտ: Պարբերաբար՝ շաբաթը մեկ անգամից ոչ պակաս, նրա մոտ էր գալիս բժ. Գր. Սահինյանը՝ նրա հին ընկերը դեռևս Բաքվից: Նախկինում նա դաշնակ է եղել, ես դա հստակ գիտեմ: Բացի նրանից՝ ուրիշ ոչ ոք նրա մոտ պարբերաբար չէր լինում: 3-4 անգամ Ավ. Իսահակյանն էր լինում: Փարիզից վերադառնալուց անմիջապես հետո նրա մոտ եկավ Հակոբ Քոչարյանը: Քաջազնունին նրա վերաբերյալ խոսում էր՝ որպես հիմարիկի մասին:

[1] Խոսքը ՀՍԽՀ Չեկայի և ապա Պետքաղվարչության նախագահ Սերգեյ Մելիք-Հովսեփյանի (Օսիպովի) մասին է:

Հետազայում նա դադարեց գալ նրա մոտ: Մի քանի անգամ Իսահակյանի հետ եկել է Դերենիկ Դեմիրճյանը: Մի անգամ (այս տարվա գարնանը) Իսահակյանի հետ եկավ Դավիթ Անանունը: Վերջինիս հետ Քաջազնունին ամեն օր հանդիպում էր 1925 թ. գարնանը, երբ նրանք երկուսը (և մի շարք այլ անձինք) ճաշում էին Խան-Աղովների մոտ: Անանունի մասին Քաջազնունին այսպես էր արտահայտվում. շատ թերություններ ունի, բայց ինձ նա դուր է գալիս, որովհետև հայ մարդ է: Մի անգամ նրա մոտ եղավ Գազա Տեր-Օհանովը (ռազմական դպրոցի նախկին վարիչ): Մի քանի անգամ եղել է ինժ. Ավալյանը: Այն բանից հետո, երբ Քաջազնունին ընտրվեց Հայաստանի տեխնիկական ընկերության նախագահ, երեկոներին նրա մոտ 2–3 անգամ հավաքվում էր 5–7 հոգուց բաղկացած խումբ: Նա ասում էր, որ դա Տեխնիկական ընկերության խորհրդի նիստ է: Այդ նիստերին եղածներից ինձ ծանոթ էին վերոնշյալ ինժ. Ավալյանը և ինժ. Գասպարյանը (ԷԿՈՍՈ տեխնիկական կոմիտեի նախկին նախագահը): Մյուսները ծանոթ չէին, բոլորը ինժեներական համազգեստով էին: Ահա, որքան ես հիշում եմ, բոլորը, որ այդ տարիների ընթացքում եղել են նրա մոտ:

2. Նամակագրությունը: Նամակներ նա հազվադեպ էր ստանում, մեծ մասամբ արտասահմանից: Դրանց մեծ մասի ծրարների վրա Շեյխլանյան ազգանունն էր: Հենց նրան էլ նա հասցեագրում էր իր պատասխան նամակները: 2-3 նամակ Ամերիկայից են եղել: Ներքին նամակագրություն կարծես թե չի ունեցել՝ բացի տնեցիներին ամռանը Դիլիջան ուղարկած նամակներից:

3. Օրը մեծ մասամբ տնից դուրս էր անցկացնում: Ցերեկներն աշխատանքի էր: Ճաշից հետո 1-2 ժամով քնում էր: Հետո գնում և վերադառնում էր ժամը 8-9-ին, հաճախ՝ 11-ին: Իր ասելով՝ գնում էր համալսարան (դասախոսություններ), տեխնիկական բառարանի կազմման աշխատանքներին (Աճառյանի և Տոնյանի հետ), նիստերի (Պետպլան, Բանվորաշխատանքային տեսչություն, Համալսարան և

այլն)։ Ասենք՝ այդ ամենը ճշտելը մեծ ջանքեր չի պահանջում։ Ազատ երեկոներին նա մեծ մասամբ գրում էր։ Ես աչքի էի անցկանցում այդ գրվածքները. դրանք բոլորը տեխնիկական բնույթի էին (իհարկե, նրանք, որ իմ ձեռքն էին ընկնում)։

4. Սկզբնական շրջանում ես կարող էի լիակատար ազատությամբ հետևել նրան և ողջ ընտանիքին։ Բայց այնուհետև՝ իմ կողմից թույլ տրված մի աննրբանկատությունից հետո, նրանք սկսեցին ինձ անվստահորեն վերաբերվել։

Քաջազնունին Սահինյանի հետ իմ ներկայությամբ հազվադեպ էր քաղաքական թեմաներով խոսում։ Նույնը և իր մյուս հյուրերի հետ։ Ավելի հաճախ՝ գրեթե սմեն օր, ինձ հետ էր նա խոսում, այնպես, որ նրա քաղաքական կերպարանքը, իհարկե, այն, որը ցույց էր տալիս, ինձ պարզ է։

Իր զաղափարախոսությամբ՝ նա կատարյալ բուրժուա է, խորհրդային կառավարությանը թշնամաբար է վերաբերվում։ Տնտ. շինարարական գործում որևէ տիպի հաջողությունները ժխտում է։ Ասում է, որ կոմունիստներն իրենք էլ ավելի ու ավելի են համոզվում նման պայմաններում առաջ գնալու անհնարինության մեջ։ Ասում է, որ մենք արդեն անձնատուր ենք լինում ներքին (մասնավոր) և արտասահմանյան կապիտալի առջև։ Արտաքին քաղաքականության բնագավառում կարծում է, որ մենք պատերազմ ենք ուզում, որ մենք եվրոպական տերություններին պատերազմ ենք փաթաթում, որ նրանք, հատկապես Անգլիան, պատերազմ չեն ուզում, իսկ մենք ուզում ենք դա նրան պարտադրել։ Քանզի «դուք փակուղի եք ընկել, դուք այլևս շարժվելու տեղ չունեք, և դուք կարծում եք, որ ձեզ կփրկի համաշխարհային հեղափոխությունը, ինչին դուք ուզում եք հասնել պատերազմի օգնությամբ»։ Մեր վիճակագրությանը նա չի հավատում։ Մեր ազգային քաղաքականությունը նա համարում է ոչ անկեղծ, խորամանկ քայլ։ Մի խոսքով՝ բոլոր հարցերում մեր հանդեպ մերժողական դիրք է բռնում։ Իմ կողմից գրի առնված նրա մի քանի

արտահայտություններ բավականին ճշգրիտ են նրան բնութագրում են.

1. «Ես կարծում եմ, որ Զինովևի նամակը ինքնագիր է: Որովհետև այդպես է ասել Չերչիլը, իսկ անգլիացի ազնվականը չի կարող ստել»:

2. «Գյուղում մենք պետք է թույլ տանք կուլակին զարգանալ»:

3. «Ես կողմ եմ, որ Հայաստանն ընդգրկվի ԽՍՀՄ կազմում, քանի որ դա Հայաստանին ձեռնտու է: Բայց ես կգերադասեի, որ այն անգլիական գաղութ լիներ, որովհետև դա ավելի ձեռնտու կլիներ» և այլն:

Բայց միևնույն ժամանակ նրա մեջ մի հատկանիշ կա, որը շատ դժվար է հասկանալ: Նրա համար, իր խոսքերով, ահռելի դեր է խաղում տվյալ երկրի քաղաքացիությունը: Քանի որ նա ԽՍՀՄ քաղաքացի է, ապա դրանում տեսնում է այդ փաստից բխող մի շարք պարտավորություններ: Խոսելով ԽՍՀՄ-ի մասին նա միշտ ասում է «մենք», «մեզ», ինչը բավականաչափ զավեշտալի է ստացվում երբեմն: Նա կարծում է, որ ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացի՝ անկախ իր քաղաքական համոզմունքներից, պետք է պաշտպանի իր երկիրը բոլոր և ամեն տեսակի իրադրությունների պարագայում: Այսպես. մի անգամ նա հարցրեց իր մեծ դստերը՝ Հրաչիկին, թե ինչ կլիներ, եթե նրա ձեռքն ընկներ Կարմիր բանակի ռազմական հույժ գաղտնի փաստաթուղթ: Նա պատասխանեց. «Ինձնից ոչ մի ջանք չէր պահանջվի դա հանձնել, օրինակ, անգլիացիներին». «Ստու՛մ ես»,-ասաց Քաջազնունին: Նա պնդեց իր ասածը: Այդժամ նա, վերին աստիճանի մոլեգնած, ասաց. «Եթե դու այդպես անես, իմացի՛ր, սեփական ձեռքերովս քեզ կսպանե՛մ»:

Այդպիսով նրա մեջ տարօրինակորեն միավորվում են այդ երկու հատկանիշները՝ բոլշևիկների հանդեպ թշնամական վերաբերմունքը և քաղաքացիական պարտականությունների «քաղաքացիության» ինչ-որ խորհրդավոր ըմբռնում:

Մի քանի խոսք պետք է ասեմ ավագ քրոջս՝ Հրաչիկի մասին։ Չգիտեմ՝ մեզ մոտ այժմ նա ուանու՞մ է արդյոք հակահեղափոխական աշխատանք։ Բայց լիովին համոզված եմ, որ այդպիսի գործունեության համար գաղափարապես նա ամենահարմար նյութն է։

Նախ՝ նրա անցյալը մութ է. [19]18-[19]19 թթ. նա նստած է եղել ՉեԿա-ում (Հյուսիսային Կովկասում), դատվել է, բայց Սորոկինյան[1] խռովության ժամանակ նրա բոլոր գործերը ոչնչացման ենթարկվեցին, և նրան բաց թողեցին նյութերի բացակայության պատճառով։ Երկրորդ՝ նա ատելությամբ է լցված «ընդհանրապես» աշխատավորների և մասնավորապես կոմունիստների հանդեպ։ Բացի դրանից՝ նա, ըստ էության լինելով անսկզբունք մարդ, ամեն ինչի ընդունակ է՝ լրտեսություն, ահաբեկչություն, հրկիզումներ, մի խոսքով՝ այն ամենը, որ կարող է մեզ վնասել։ Զանգվածների հետ աշխատանքի նա ընդունակ չէ։ Եվ եթե հիմա նա ոչինչ չի անում, ապա միայն նրան բնորոշ ալարկոտության, անտարբերության, կրավորականության, պասիվության հետևանքով։ Նրա ամենաչնչին քաղաքական ակտիվությունը անպայմանորեն հակահեղափոխական ձևեր կընդունի։ Նրան պետք է նշանառության տակ վերցնել։

Ընտանիքիս մյուս անդամների մասին ոչինչ ասել չեմ կարող. մայրս (նա 57 տարեկան է), եղբայրս (Ռուբենը) և քույրս (Մարգոն) լիովին մտերիմ են մեզ հետ, հակահեղափոխական ոչ մի գործողության ընդունակ չեն։

Եթե որևէ հարցի բավարար չեմ լուսաբանել, ապա կարող եմ լրացուցիչ տեղեկություններ տալ։

Այս մի քանի օրը ես դեռ Երևանում եմ լինելու։ Եթե պետք գամ, ապա ինձ կարող եք գտնել ԼԿԵՄ Երևանի կոմիտեի միջոցով։

---

[1] Նկատի ունի ռուսական բանակի սպա, կազակ, ասնարխիստ Իվան Սորոկինի Հյուսիսային Կովկասում բարձրացրած հակախորհրդային ապստամբությունը։

Կարեն Քաջազնունի[1]
ԼԿԵՄ.պնդամ:

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 4-6: Վավերացված պատճեն: Ձեռագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 7

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ
ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Քաղ. Երևան
ՕՐԴԵՐ N 6/41
«28»-ը հուլիսի 1937 թ.

Տրված է ՆԳ Ժողկոմի պետանվտանգության վարչության աշխատակից Ար. Մովսեսյանին՝ Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունուն խուզարկության և կալանքի ենթարկելու համար:

Հասցե՝ Գնունի 1, N 2

Հայկական ԽՍՀ Ներքին գործերի ժողովրդական կոմիսար
պետանվտանգության մայոր [Խ.] Մուղդուսի /*ստորագրություն*/
Քարտուղար /*ստորագրություն*/

ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1937 թ. հուլիսի 29: Ես՝ ՀԽՍՀ ՆԳ Ժողկոմի ՊԱԿ 4-րդ բաժանմունքի 4-րդ բաժնի պետս, Հարությունյանի, Մովսեսյանի և Ջամբեգյանի հետ համատեղ, Հայկ. ԽՍՀ ՆԳ Ժողկոմի N 6/41 օրդերի հիման

[1] Ձեռագիր փաստաթղթի տարեթիվը չի նշված: Սակայն տեքստի բովանդակությունից կարելի է կռահել, որ այն գրվել է ամենայն հավանականությամբ 1928 թ.:

վրա խուզարկություն անցկացրի քաղաքացի Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունու (ք. Երևան, փ. Գնունի 1, բն. N 2 հասցեում բնակվող) տանը:

Խուզարկության իրականացման ընթացքում ներկա էին քաղաքացիներ Մարգարիտա Հովհաննեսի Քաջազնունին և Սաթենիկ Դավթի Քաջազնունին:

Համաձայն տրված ցուցումների՝ ձերբակալված են ----------

Հայկ. ԽՍՀ ՆԳ Ժողկոմ ներկայացնելու համար բռնագրավված է հետևյալը.

1. Զանազան արգելված գրքեր – 220 հատ
2. Թելեր՝ կոճերով (արտասահմանյան) – 35 հատ
3. Ֆիննական դանակ – 1 հատ
4. Կոճակներ (արտասահմանյան) – 417 հատ
5. Արտասահմանյան կոֆեին – 4 տուփ
6. Բնափիոն (մորֆին) – 1 տուփ
7. Սոդա – 1 տուփ
8. Բենզոնատ հիդրարգիրում – 6 տուփ
9. Հինայի սրվակներ – 25 գր
10. Ֆինիցիտին – 100 գր
11. Հինայի բրոմհիդրիտ – 25 գր
12. Նովարսենոլ բեզո – 1 տուփ
13. Մատիտներ – 17 հատ
14. Զայնապնակ «Զախորդ օրեր» - 1 հատ
15. [չի կարդացվում]

Խուզարկության ընթացքում թույլ տրված անճշտությունների մասին, առարկաների, թանկարժեք իրերի և փաստաթղթերի կորստի վերաբերյալ գանգատներ *ՉԿԱՆ:*

Արձանագրության մեջ տեղ գտած ամեն ինչ ճիշտ է, այն ընթերցված է մեզ, ինչի համար ստորագրում ենք (*ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է*)

Արձանագրության պատճենը ստացել է Մարգո Քաջազնունին:

Ծանոթագրություն 1. Բոլոր պահանջներն ու հայտարարությունները պետք է ներառվեն արձանագրության մեջ մինչ այն ստորագրելը: Հետագայում արված ոչ մի բողոք և հայտարարություն չի ընդունվում:

2. Հարցերով դիմել պարետատուն՝ համապատասխան հասցեով:

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾԻ ԱՆԿԵՏԱՆ

Ազգանուն *Քաջազնունի*

Անուն և հայրանուն *Հովհաննես Իվանի/Հովհաննեսի*

Ծննդյան թիվը *1868*

Ծննդյան վայրը *Ախալքալաք*

Բնակության վայրը (հասցե) *Երևան, Գնունի 1, N 2-61*

Մասնագիտությունը և մասնագիտացումը *Քաղաքացիական ինժեներ*

Ծառայության վայրը և պաշտոնը կամ զբաղմունքի բնույթը *Կոմունալ տնտ. ժողկոմ*

Անձնագիր

Սոցիալական ծագումը *Քահանայի որդի*

Հասարակական դիրքը *Ծառայող*

ա) Մինչև հեղափոխությունը *Ծառայող*

բ) Հեղափոխությունից հետո *Ծառայող*

Կրթությունը (ընդհանուր, մասնագիտական) *Բարձրագույն*

Կուսակցականությունը (անցյալում և ներկայում) *անկուսակցական*

Ազգությունը և քաղաքացիությունը *ԽՍՀՄ քաղաքացի*

Ռազմական հաշվառված պահեստայինի կատեգորիան և որտեղ է հաշվառված ----

Ծառայությունը սպիտակ և այլ հակահեղափոխական բանակներում, մասնակցությունը հանցախմբերում և խորհրդային իշխանության դեմ ապստամբություններին (երբ և որպես ինչ) *Չկա*

Ինչ ճնշումների է ենթարկվել. խորհրդային իշխանության օրոք. դատվածություն, ձերբակալություն և այլն (երբ, որ մարմնի կողմից և ինչի համար) *Չկա*

Ընտանիքի կազմը *Կինը՝ Սաթենիկ, 67 տ., որդին՝ Ռուբեն, 39 տ., Հայկ. տրանսպ. մեք. վարիչ, որդի՝ Կարեն, 32 տ., սովորում է Մոսկվայում, դուստր՝ Անահիտ, 45 տ., բժիշկ է Բաքվում, դուստր՝ Մարգո, 33 տ., ծառայում է որպես Առժողկոմ տնտեսագետ:*

Ձերբակալվածի ստորագրությունը (*Ստորագրված է* Հովի. Քաջազնունի)

Հատուկ արտաքին տվյալներ ----------

Ում կողմից և երբ է ձերբակալվել Հայկ. ԽՍՀ ՆԳ ԺՈՂԿՈՄ 29.07.1937 թ.

Հատուկ դիտողություններ ----------

Անկետան լրացրած աշխատակցի ստորագրությունը (*Ստորագրված է*)

29.07.1937 թ.

Ծանոթագրություն. անկետան լրացվում է հստակ և ընթեռնելի՝ ձերբակալվածի խոսքից, և ստուգվում է փաստաթղթերով:

Հայկական ԽՍՀ
Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ: Պետական անվտանգության վարչություն

Հարցաքննության արձանագրություն

1937 թվականի նոյեմբեր ամսի 16-ի: Ես՝ ՊԱԿ վարչության ՆԳ ԺՈՂԿՈՄ 6-րդ բաժանմունքի 4-րդ բաժնի օպեր/լիազոր Մովսեսյանս, հարցաքննեցի

1. Ազգանուն՝ *Քաջազնունի*

2. Անուն և հայրանուն՝ *Հովհաննես Հովհաննեսի*

3. Ծննդյան թիվը՝ *1868 թվի ծնունդ*

4. Ծննդյան վայրը՝ *Ախալքալաք, Վրացական ԽՍՀ*

5. Բնակության վայրը՝ *ք. Երևան, Գնունի 1, N 61*

6. Ազգություն և քաղաքացիություն՝ *ԽՍՀՄ քաղաքացի*

7. Անձնագիր՝ *Բռնագրավված է խուզարկության և ձերբակալման ժամանակ*

8. Զբաղմունքի տեսակը՝ *Կոմունալ տնտեսության Ժողկոմ Գիտատեխնիկական խորհրդի գիտական քարտուղար*

9. Սոցիալական ծագումը՝ *Հայրը եղել է քահանա և ուսուցիչ*

10. Սոցիալական դիրքը՝ (զբաղմունքի տեսակը և գույքային դրությունը)

ա) մինչև հեղափոխությունը՝ *ծառայող*

բ) հեղափոխությունից հետո՝ *ծառայող*

11.Ընտանիքի կազմը՝ *կին՝ Մաթենիկ, ապրում է ք. Երևանում, դուստր՝ Անահիտ, բժիշկ է, աշխատում է ք. Բաքվում, դուստր՝ Մարգո, աշխատում է ԱռԺողկոմ տնտեսագետ, բնակվում է ք. Երևանում, որդի՝ Ռուբեն, աշխատում է Հայտրանսի վերանորոգման արհեստանոցի ժողկոմ, բնակվում է ք. Երևանում, որդի՝ Կարեն, սովորում է Մոսկվայի կինեմատոգրաֆիայի ինստիտուտում:*

12. Կրթությունը՝ *Բարձրագույն, քաղաքացիական ինժեներ:*

13.Կուսակցականությունը (անցյալում և ներկայում)՝ *1893-1923 թթ. դաշնակցական, այժմ՝ անկուսակցական:*

14.Ինչպիսի ճնշումների է ենթարկվել. դատվածություն, ձերբակալություն և այլն (երբ, ինչ մարմնի կողմից և ինչի համար) ------

ա) մինչև հեղափոխությունը՝ *1910 թվին մեղադրվել է որպես դաշնակցական, դրամական գրավի դիմաց ազատ է արձակվել և փախել արտասահման՝ Ֆրանսիա:*

բ) *1921 թվի փետրվարի սկզբին ձերբակալվել է Հայաստանի չեկայի կողմից և ազատ է արձակվել ավանտյուրայի ժամանակ դաշնակների կողմից*

15.Ինչ պարգևներ ունի (շքանշան, պատվոգիր, զենք և այլն) խորհրդային իշխանության օրոք՝ *չկա*

16.Ռազմական պահեստայինի հաշվառման կատեգորիան և որտեղ է հաշվառված՝ *զորակոչային տարիքից մեծ է*

17.Ծառայությունը Կարմիր բանակում (կարմիր գվարդիայում, պարտիզանական ջոկատներում)՝ *չկա*

18.Ծառայությունը սպիտակների մեջ և այլ հակահեղափոխական բանակներում (երբ, որպես ինչ)՝ *չկա*

19.Մասնակցությունը հանցախմբերում, հակահեղափոխական կազմակերպություններում և ապստամբություններում՝ *չկա*

20.Տեղեկություններ հասարակաքաղաքական գործունեության մասին --------

(*Ստորագրված է* Հովհ. Քաջազնունի)

Ծանոթագրություն. արձանագրության յուրաքանչյուր էջը պետք է հաստատված լինի հարցաքննվողի ստորագրությամբ, իսկ վերջինը՝ նաև հարցաքննողի:

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 10-14: Վավերացված պատճեն: Ձեռագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 8

Մեղադրյալ Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունու ցուցմունքները 16.11.1937 թվականի

Հարց. Դուք մեղադրվում եք նրանում, որ մի շարք տարիների ընթացքում եղել եք հակահեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության անդամ և վարել եք հակախորհրդային ակտիվ գործունեություն:

Այդ մասին ցուցմունքներ տվեք:

Պատասխան. 1884 թ. ես, լինելով 5-րդ դասարանի աշակերտ Թիֆլիսի ռեալական դպրոցում, հավատում էի աշակերտական նարոդովոլեցական կազմակերպությանը, որտեղ նույնպես հայեր կային:

1889–1893 թթ. ես վերջապես հայկական ազգային բնույթ ունեցող ուսանողական կազմակերպության մեջ էի: Իսկ հետագայում այդ և համանման կազմակերպություններից ձևավորվեց «Դաշնակցություն» կուսակցությունը:

1893 թ. լինելով քաղաք Բաքվում՝ ես մտա «Դաշնակցություն» կուսակցության շարքերը, որոնց անդամներից հիշում եմ Դավթյան Ներսեսին և բժիշկ Զալյանին:

1895 թ. տեղափոխվեցի Բաթումի, որտեղ մնացի մինչև 1896 թ.: Դաշնակներից ես հիշում եմ Մարտին Շատիրյանին, որն այժմ Իրանում է: Լինելով Բաթումիում, իսկ հետո նաև Թիֆլիսում ես համագործակցում էի իշխան Գ. Մ. Թումանովի կողմից հրատարակվող «Новое обозрение» [«Նոր հանդես»] թերթին:

1898–1899 թթ. քաղաք Թիֆլիսում էի, որտեղ աշխատանքային գործով կապված էի Միքայելյան Քրիստափորի, Զավարյան Սիմոնի, Ստեփան Զորյանի («Դաշնակցություն» կուսակցության հիմնադիրների) հետ: Լինելով Թիֆլիսում՝ ես հանդես էի գալիս զեկուցումներով, հաղորդումներով, որոնցում տարածում էի «Դաշնակցություն» կուսակցության գաղափարները:

1899 թ. մինչև 1906 թ. ես քաղաք Բաքվում էի, որտեղ նույնպես ինձ առաջարկեցին աշխատանքային հավաքույթներին ելույթ ունենալ «Դաշնակցություն» կուսակցության գաղափարներով: 1906-1907 թթ. եղել եմ քաղաք Թիֆլիսում, որտեղ դարձյալ ինձ աշխատանք էին տալիս: Զբաղվում էի Անդրկովկասում տեղական ինքնակառավարման հիմնարկներ [զեմստվո] մտցնելու հարցերով: Նշված իսկ տարիներին գրել եմ մի քանի հոդված դաշնակցական թերթերում:

1907–1910 թթ. գտնվել եմ քաղաք Բաքվում, որտեղ նույնպես կուսակցական աշխատանք էի տանում, միաժամանակ աշխատում էի հայկական եկեղեցու շինարարության վրա:

1910 թ. Բաքվի ժանդարմերիայի կողմից մեկուկես ամիս ձերբակալված եմ եղել: Ազատվելուց հետո փախել եմ արտասահման (ազատվել եմ 10.000 ռուբլի դրամական գրավի դիմաց):

1910–1914 թթ. ես արտասահմանում էի՝ Ֆրանսիայում, Բելգիայում և Թուրքիայում՝ Վանում: 1914 թ. սեպտեմբեր ամսի վերջին ժամանեցի Թիֆլիս, որտեղ ապրել եմ մինչև 1917 թ. և նշանակված եմ եղել որպես Հայոց ազգային բյուրոյի քարտուղար (1915–16 թթ.), որը գլխավորապես կազմակերպում էր հայ կամավորական ջոկատները, որոնք հիմնականում ղեկավարվում էին «Դաշնակցություն» կուսակցության կողմից:

1917 թ. մինչև 1918 թ. հունվարը եղել եմ Բաքու քաղաքում, որտեղ եղել եմ Հայոց Ազգային խորհրդի նախագահ, ք. Բաքվում ժամանակավոր կառավարության անդամ, քաղաքային դումայի անդամ և ընտրվել եմ որպես համառուսաստանյան սահմանադիր ժողովի անդամ: 1918 թ. հունվար ամսին ժամանեցի Թիֆլիս, որպեսզի մեկնեմ Մոսկվա-Պետրոգրադ՝ սահմանադիր ժողովին մասնակցելու համար, բայց գնալ չհաջողվեց, և ես մնացի ք. Թիֆլիսում ու Անդրկովկասյան սեյմի անդամ էի, միաժամանակ կառավարության անդամ էի Գեկեչկորիի ու Չխենկելու կաբինետներում՝ որպես հանրային խնամատարության նախարար և անպորտֆել նախարար:

Մեկնել եմ Տրապիզոն և Բաթումի որպես թուրքական կառավարության հետ բանակցություն վարող պատվիրակության անդամ:

1918 թ. Անդկովկասյան սեյմի տրոհումից հետո ես եկա Երևան և ընտրվեցի դաշնակցական կառավարության վարչապետ, որի պաշտոնում էլ մնացի մինչև 1919 թ. սեպտեմբեր ամիսը:

1919 թ. դաշնակցական կառավարության և դաշնակցական խորհրդարանի որոշմամբ գործուղված եմ եղել Ֆրանսիա, Անգլիա և ԱՄՆ՝ դաշնակցական Հայաստանի համար տնտեսական և ֆինանսական օգնություն ստանալու նպատակով նշված բուրժուական պետությունների հետ բանակցություններ վարելու:

Փարիզում ես տեսնվեցի արտաքին գործերի նախարարի օգնականներից մեկի հետ՝ Գու անունով: Լոնդոնում կառավարչական դեմքերից ոչ մեկի հետ չեմ կարողացել հանդիպել: Վաշինգտոնում հանդիպել եմ սենատի՝ հայկական հարցերով հատուկ հանձնաժողովի հետ:

1920 թ. հոկտեմբերին վերադարձա Երևան և նշանակվեցի դաշնակցական խորհրդարանի նախագահ, որի պաշտոնում մնացի մինչև Հայաստանի խորհրդայնացումը:

Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ փետրվար ամսին, այսինքն՝ մինչև դաշնակցական հակախորհրդային ավանտյուրան, ես ձերբակալված էի քաղ. Երևանում և ազատվել եմ դաշնակների կողմից, Հայաստանում 1921 թ. փետրվարյան դաշնակցական ավանտյուրայի ժամանակ, այսինքն՝ 14-15 օր անց:

Դաշնակցական հակախորհրդային ավանտյուրայի ճնշումից հետո դաշնակցական կառավարության մյուս անդամների հետ միասին ես մեկնեցի Իրան, որտեղից՝ 1921 թ. Հնդկաստանով, Եգիպտոսով և Կոստանդնուպոլսով (Ստամբուլ) ժամանեցի Բուխարեստ (Ռումինիա), որտեղ մնացի մինչև 1924 թ. աշուն:

1924 թ. եկել եմ ԽՍՀՄ և ընդհուպ մինչև ձերբակալության օրը գտնվել եմ քաղ. Երևանում, որտեղ աշխատել եմ խորհրդային զանազան հաստատություններում:

Հարց. Հետաքննությունն ունի տվյալներ, համաձայն որոնց՝ դուք ԽՍՀՄ վերադարձից հետո շարունակել եք Ձեր հակահեղափոխական դաշնակցական աշխատանքը:

Այս մասին ցուցմունքներ տվեք:

Պատասխան. ԽՍՀՄ վերադարձից հետո ես հակահեղափոխական աշխատանք չեմ տարել:

Հարց. ԽՍՀՄ վերադարձից հետո դաշնակներից ու՞մ հետ եք հանդիպել:

Պատասխան. ԽՍՀՄ գալուց հետո ես հանդիպել եմ հետևյալ դաշնակների հետ.

1. Ղազարյան Արշակի՝ հայտնի դաշնակ, այժմ ձերբակալված է, մեկ անգամ նա իմ տանն է եղել, և մեկ անգամ ես եղել եմ նրա ծառայության վայրում: Ինչպես նաև փողոցում ենք հանդիպել:

2. Հակոբյան Սիմոնի՝ նրա հետ միասին ես հաճախ գնում էի ճաշարան՝ ճաշելու 1924 թվին[1], դրանից հետո ես նրա հետ փողոցում էի հանդիպում:

3. Իսահակյան Ավետիքի՝ մի քանի անգամ նա եղել է իմ տանը:

4. Տիգրանյան Սիրականի՝ նախկին դաշնակցական նախարար, մեկ անգամ եղել է իմ տանը, ինչպես նաև մենք հազվադեպ հանդիպում էինք փողոցում:

5. Դավիթ Անանունի՝ մեկ անգամ եղել է իմ տանը, դա եղել է իր ձերբակալությունից առաջ:

6. Ռմն Սնարի[2] հետ (ազգանունը չեմ հիշում)՝ նրա հետ հանդիպել եմ փողոցում: Սնարի հետ առաջին անգամ ծանոթացել եմ 1919-

---

[1] Թվականը ճիշտ չէ նշված, որովհետև նա 1924 թ. վերջին է Խորհրդային երկիր վերադարձել:

[2] Հավանաբար խոսքը Սնար Սնարյանի (Նարինյան) մասին է:

1920 թթ.՝ Ամերիկայում, որտեղ նա «Դաշնակցություն» կուսակցության շարքերում էր ընդգրկված: Եկել է ԽՍՀՄ խորհրդայնացումից հետո:

7. Վահան Թոթովենցի՝ գրող է, այժմ ձերբակալված, նրա՝ հետ ես հանդիպում էի փողոցում:

Թե ուրիշ էլ ում հետ էի հանդիպում, չեմ կարողանում մտաբերել:

Հարց. Հետաքննությունը պահանջում է ցուցմունքներ տալ ԽՍՀՄ գալուց հետո Ձեր հակահեղափոխական դաշնակցական աշխատանքի մասին, ինչը փորձում եք թաքցնել:

Պատասխան. Կրկնում եմ, որ ես ԽՍՀՄ գալուց հետո թեև հանդիպում էի վերը նշված դաշնակների, ինչպես նաև այժմ ազատազրկված գրող Զապել Եսայանի հետ, բայց ես դաշնակցական աշխատանք չեմ վարել:

Հարց. Ձեր որդի Կարեն Քաջազնունին նույնպես պնդում է, որ ԽՍՀՄ վերադառնալուց հետո Դուք շարունակում էիք մնալ դաշնակ:

Պահանջվում է ճշմարիտ ցուցմունքներ տալ:

Պատասխան. Իմ որդի Քաջազնունի Կարենը չի կարող ինձ զրպարտել, բայց եթե նա մամուլում հանդես է եկել իմ դեմ մեղադրանքով, թե ես դաշնակ եմ մնացել, ես դա բացատրում եմ նրանով, որ նա ինձ չի հասկացել:

Արձանագրությունը գրված է իմ խոսքից՝ ճշգրտորեն, ինչի համար ստորագրում եմ:

(*Ստորագրված է* Հովհ. Քաջազնունի)

Հարցաքննեց ՆԳԺԿ ՊԵՏԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 6-րդ բաժանմունքի 4-րդ բաժնի օպեր/լիազոր

Պետանվտանգության լեյտենանտ Մովսեսյան /*ստորագրություն*/

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 15-20: Վավերացված պատճեն: Ձեռագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 9

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»:
ՀԽՍՀ ՆԳ ԺՈՂԿՈՄ
պետանվտանգության ավագ լեյտենանտ
ԿՈՆԴԱԿՈՎ
1937թ. նոյեմբեր

N 19291 հետաքննչական գործով

Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունու մեղադրանքի առիթով

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ես՝ ՀԽՍՀ ՆԳ Ժողկոմատի պետանվտանգության վարչության 6-րդ բաժանմունքի 4-րդ բաժնի օպեր/լիազոր, պետանվտանգության լեյտենանտ Ա. Մովսեսյանս, 1937թ. նոյեմբերի 26-ին քննելով կաղրային դաշնակ Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունու (ծնվ. 1868 թ., քղք. Ախալքալաք, Վրացական խորհրդային սոցիալիստական հանրապետություն) մեղադրանքի առիթով հետաքննչական գործը,

Պարզեցի հետևյալը.

Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունին 1893 թվականից ակտիվ կաղրային դաշնակ է: Դաշնակցական առաջնորդներից և «Դաշնակցություն» կուսակցության կազմակերպիչներից մեկը: Դաշնակցական ակտիվ աշխատանք է տարել, կապված է եղել Ռուսաստանի և արտասահմանի բոլոր երևելի դաշնակների հետ, բազմիցս ընտրվել է որպես Կենտկոմ-ի և Դաշնակցության Բյուրոյի անդամ:

Դաշնակցական կառավարության օրոք վարչապետ է եղել: 1920 թ. Հայաստանի խորհրդայնացումից հետո ձերբակալվել է և ապա ազատ է արձակվել դաշնակների հակախորհրդային ավանտյուրայի ժամանակ: Դաշնակ-ավանտյուրիստների մասնակից և ոգեշնչող: Ավանտյուրայի ճնշումից հետո գաղթել է Իրան, որտեղից մեկնել է եկել Ֆրանսիա, ուր ակտիվ դաշնակցական և հակախորհրդային աշխատանք է կատարել Հայաստանի սպիտակ վտարանդիների շրջանակում: ԽՍՀՄ է վերադարձել 1924 թվականին:

Մինչ ձերբակալությունը ապրելով խորհրդային Հայաստանում՝ շարունակել է մնալ երդվյալ դաշնակ-ազգայնական:

Իրեն մեղավոր է ճանաչել *ՄԱՍԱՄԲ*:

ՈՐՈՇԵՑԻ

Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունու մեղադրական գործը քննության ուղարկել ՀԽՍՀ ՆԳ Ժողկոմ Եոյակին:

Պետանվտանգության վարչության 6-րդ բաժանմունքի 4-րդ բաժնի օպեր/լիազոր, պետանվտանգության լեյտենանտ *ՄՈՎՍԵՍՅԱՆ*

«ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ»:

Պետանվտանգության վարչության 3-րդ բաժանմունքի 4-րդ բաժնի պետի տեղակալ, պետանվտանգության կրտսեր լեյտենանտ *ԻՍՐԱՅԵԼՅԱՆ /ստորագրություն/*

ՏԵՂԵԿԱՆՔ: Կալանավորյալ Քաջազնունին Երևանի բանտում է գտնվում 1937 թ. հուլիսի 29-ից:

պետանվտանգության վարչության 6-րդ բաժանմունքի 4-րդ բաժնի օ/լիազոր

պետանվտանգության ավագ լեյտենանտ *ՄՈՎՍԵՍՅԱՆ /ստորագրություն/*

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 21: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 10

Քաղվածք արձանագրությունից N 49

Հայկական ԽՍՀ Ն. Գ. Ժ. Կ. Եոյակի նիստ

5-ը դեկտեմբերի, 1937 թ.

Լսեցին:

38. ՀԽՍՀ ՆԳԺԿ պետանվտանգության վարչության 4-րդ բաժնի N 19291 գործը Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունու (ծնվ. 1868 թ., Երևան քաղաքի բնակիչ, ծառայող) մեղադրանքի առիթով:

Մեղադրվում է նրանում, որ «Դաշնակցություն» կուսակցության կազմում է եղել 1893 թվականից: Դաշնակցական առաջնորդներից և «Դաշնակցություն» կուսակցության կազմակերպիչներից մեկը: Դաշնակցական ակտիվ աշխատանք է տարել, կապված է եղել երևելի դաշնակների հետ: Դաշնակցական կառավարության օրոք վարչապետ է եղել: 1920 թ. Հայաստանի խորհրդայնացումից հետո ձերբակալված է եղել և դաշնակների կողմից ազատ է արձակվել: Դաշնակցական ավանտյուրայի ճնշումից հետո գաղթել է Իրան, վերադարձել է 1924 թվականին:

Մինչև ձերբակալության օրը շարունակել է մնալ համոզված դաշնակ-ազգայնական:

Որոշեցին:

Հովհաննես Հովհաննեսի ՔԱՋԱԶՆՈՒՆՈՒՆ –

Գ Ն Դ Ա Կ Ա Հ Ա Ր Ե Լ, անձամբ նրան պատկանող գույքը բռնագրավել:

Ճիշտ է: Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ Եոյակի քարտուղար Գրիգորյան (*ստորագրություն*)

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 22: Վավերացված պատճեն: Հաստատված է ՆԳԺԿ-ի կնիքով: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 11

ԱԿՏ

Բանտարկյալ Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունին՝ (Ընդգծված է: – Ա.Հ.) 70 տարեկան, թոքախտով հիվանդ և «ծերունական» թուլությամբ, ընդունվել է Երևանի բանտային հիվանդանոց 11/XII.1937 թ.: Հիվանդանոցում լինելով դեկտեմբերի 22-ին՝ թոքերի գրիպային բորբոքում է ստացել: Մահացել է սույն տարվա 15/I, ժամը 6-ին[1]:

Ախտորոշում: Թոքախտ և գրիպ:

Բանտի գլխավոր բժիշկ՝ (*ստորագրություն*)
15.01.1938 թ.

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 23: Վավերացված պատճեն: Ձեռագիր: Թարգմանություն ռուսերենից:

---

[1] Հարկ է նշել, որ բանտի բժշկի կազմած ակտը ճիշտ չի ընթերցվել. հետագա մի շարք փաստաթղթերում կարելի է հանդիպել, որ իբր Հ. Քաջազնունին մահացել է 1937 թ. դեկտեմբերի 22-ին: Այնինչ բերված փաստաթղթում հստակ նշված է, որ նա մահացել է 1938 թ. հունվարի 15-ին և հենց նույն օրն էլ կազմվել է մահվան մասին ակտը: Հետագա փաստաթղթերում նրա մահվան վավեր ամսաթիվ համարել 1938 թ. հունվարի 15-ը:

N 12
ԽՍՀՄ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

Երևան, Շահումյան, N 6

«01»-ը օգոստոսի, 1955 թ.

ԳԱՂՏՆԻ

օրինակ N1

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԱԿ ՆԱԽԱԳԱՀ

ԳՆԴԱՊԵՏ ընկ. [ԳԵՈՐԳԻ] ԲԱԴԱՄՅԱՆՑԻՆ

Լրացուցիչ ստուգման համար կից ուղարկում եմ արխիվահետաքննչական գործը՝ Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունու մեղադրանքի առիթով, խնդրում եմ Հ. Հ. Քաջազնունու դստեր՝ Մարգարիտա Հովհաննեսի Քաջազնունու բողոքարկման հիման վրա կարգադրություն անել համապատասխան բաժնին՝ ստուգելու Հ.Հ. Քաջազնունու ձերբակալության և դատապարտման հիմնավորվածությունը:

Ինչպես երևում է գործի նյութերից, Հ. Հ. Քաջազնունին ձերբակալվել է ՆԳ Ժողկոմատի օպերատիվ տվյալների և նրա որդու՝ նախկին ՆԳԺԿ-ական Մելիք-Օսիպովին հասցեագրված նամակի հիման վրա:

Հ.Հ. Քաջազնունին իրեն մեղավոր չի ճանաչել հակախորհրդային աշխատանք կատարելու մեղադրանքի մեջ:

Գործով հիմնականում պետք է պարզել հետևյալը.

Անտարակույս, Քաջազնունին «Դաշնակցություն» կուսակցության առաջնորդներից է եղել: Անհրաժեշտ է պարզել՝ Հայաստանի

խորհրդայնացումից հետո հակախորհրդային ինչպիսի աշխատանք է կատարել նա խորհրդային պետության դեմ:

ՆԳԺԿ-ի Եռյակի որոշման մեջ չի ասվում, թե կոնկրետ ինչպիսի հակահեղափոխական աշխատանք է կատարել Քաջազնունին:

Այդ նույն որոշման մեջ թվարկվում է Քաջազնունու աշխատանքը մինչև Հայաստանի խորհրդայնացումը և ավարտվում է հետևյալ խոսքերով.

«Մինչև ձերբակալության օրը նա շարունակել է մնալ երդվյալ դաշնակ-ազգայնական»:

Չնայած նրան, որ Եռյակի՝ Քաջազնունու վերաբերյալ որոշումը ի կատար չի ածվել, այնուամենայնիվ ստուգման ընթացքում անհրաժեշտ է պարզել, թե որքանով է հիմնավորված եղել նրան ներկայացված մեղադրանքը:

Լրացուցիչ ստուգումից հետո խնդրում եմ գործը վերադարձնել մեզ՝ գործի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար:

Հավելված. Գործը՝ 2 հատոր, բողոք՝ 4 էջ:

Հայկական ԽՍՀ դատախազի տեղակալ
Արդարադատության վեցերորդ դասի
պետական խորհրդական,
(ստորագրություն) Ք. Ս. Քալանթարյան

Տ. Ավանեսով – Ի կատարումն/ 03.08.1955 թ.
Կնյազյան – Փոխանցել հետաքննչական բաժին/ 05.05.1955 թ.
Գասպարյանին ի կատարումն / 06.05.1955 թ
Քալանթարյան – Բողոքը ստացված չէ:

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 24: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 13

ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԽԱՉ
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԴԱՏԱԽԱՉԻ ՏԵՂԱԿԱԼ

ընկ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Քալանթարին

(Հասցե՝ Երևան, Ստալինի պողոտա, N 5, մուտք 2, բն. 12)

ԴԻՄՈՒՄ

1937 թ. հուլիսի 28-ին Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ-ի կողմից ձերբակալվել է հայրս՝ Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունին՝ ծնվ. 1868 թ.: Նախկինում նա եղել է «Դաշնակցություն» կուսակցության երևելի անդամ, Մինիստրների խորհրդի առաջին կազմի անդամ, իսկ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման նախօրեին ընտրվել է Հայկական հանրապետության խորհրդարանի անդամ:

Հորս ձերբակալությունը ես համարում եմ ոչ միայն իրավաբանորեն անթույլատրելի, այլ նաև քաղաքական մեծագույն անարդարության գործողություն, հետևյալ նկատառումներով.

1. Ըստ 1920 թ. դեկտեմբերի 2-ից գործող միջազգային իրավական պայմանագրի՝ կնքված ՌԽՖՍՀ դիվանագիտական ներկայացուցչի և Հայկական հանրապետության մինչխորհրդային կառավարության միջև, ոչ միայն էսէռները և էսդեկները, այլ նաև դաշնակցականները և զինծառայողները իրենց մինչխորհրդային գործունեության համար նոր Խորհրդային իշխանության առաջ պատասխան չէին տալիս և չպիտի ենթարկվեն քաղաքական և իրավաբանական հետապնդումների:

Այդ միջազգային իրավական պայմանագիրը սահմանադրական կարգով վավերացվել է ՌԽՖՍՀ Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից:

2. Երևանում խորհրդային իշխանության վերականգնումից հետո Հայհեղկոմը հրատարակել է ընդհանուր ներման մասին երկու դեկրետ, ըստ որում ըստ համընդհանուր և լիակատար քաղաքական համաներման վերաբերյալ երկրորդ դեկրետի (1921 թ. ապրիլի 23), առանց բացառության բոլոր ռազմական, քաղաքացիական և քաղաքական գործիչները իրենց գործունեության համար (նույնիսկ 1921 թ. փետրվարի 18-ից ապրիլի 23-ը տեղի ունեցած քաղաքացիական պատերազմում), անվերապահորեն համաներվում էին, ազատվում բանտերից և վերականգնվում էին նրանց քաղաքացիական և քաղաքական իրավունքները, իսկ խորհրդային պաշտոնակատար անձինք համաներման դեկրետի խախտման համար ենթակա էին խստագույն դատական պատասխանատվության և խիստ պատժի:

Այսպիսով, Հովհ. Քաջազնունու ձերբակալությունը նրա անցյալ գործունեության համար աղաղակող անօրինություն էր, եթե նույնիսկ նրա մինչխորհրդային գործունեության մեջ ՆԳ Ժողկոմի հին ղեկավարության տեսակետից եղել են կամ, ավելի ճիշտ, կարող էր լինել որևէ դատապարտելի բան:

Այսպիսին է իմ հոր «գործի» իրավաբանական կողմը:

3. Բայց ես հորս ձերբակալությունը համարում եմ միաժամանակ նաև քաղաքական աղաղակող անարդարության գործողություն, քանի որ Հովհաննես Քաջազնունին, լինելով մինչխորհրդային Հայաստանի կոալիցիոն կառավարության վարչապետ, Համառուսաստանյան խորհրդային ֆեդերացիայի դեմ ուղղված ոչինչ չի արել: 1918 թ. օգոստոսի 1-ի իր կառավարական դեկլարացիայում նա ընդգծում էր, որ այդ հարկադրորեն կազմակերպված ժամանակավոր կոալիցիոն կառավարությունը խնդիր է դրել կործանման դատապարտված հայ ժողովրդին փրկելու սովահարությունից և անիշխանությունից: Խորհրդային իշխանության դեմ պայքարի մասին խոսք էլ չէր կարող լինել այդ դարաշրջանում, քանի որ սովից և տիֆից մեռնող Հայաստանը խորհրդային Ռուսաստանից անջատված

էր Վրաստանով, Ադրբեջանով, Լեռնական հանրապետություններով, Թերեք-Կուբան-Դոն-Ուկրաինական և այլ կառավարություններով և ոչ մի քաղաքական հարաբերություն չի ունեցել խորհրդային Ռուսաստանի հետ:

1919 թ. գարնանը Հ. Քաջազնունին թողեց Հայաստանը և մեր ժողովրդին համատարած սովից ու հիվանդություններից փրկելու գործով մեկնեց արտասահման: Արտասահմանում նա մնաց մինչև 1920 թ. ուշ աշուն և վերադարձավ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից քիչ առաջ: Հորս վերադարձին խորհրդարանը արձակված էր, դրա համար էլ նա իրեն ոչնչով ցույց չտվեց որպես խորհրդարանի նախագահ: Միակ բանը, որ այդ ընթացքում արել է, մասնակցությունն է անխտիր բոլոր աշխատավոր հայերին բնաջնջող թուրքական հորդաների դեմ պայքարին: Հայրս, չնայած իր տարիքին, գնաց որպես կամավոր շարքային:

Այսպիսով, Հովհաննես Քաջազնունին ոչ մի մասնակցություն չի ունեցել միատարր-դաշնակցական հակախորհրդային կառավարությանը և մայիսյան ապստամբության ու հաջորդ իրադարձությունների ժամանակ լինելով արտասահմանում՝ չի մասնակցել և չէր կարող մասնակցած լինել դաշնակցական-կուսակցական հակախորհրդային գործունեության մեջ[1]:

4. Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ օրվանից նա ազնվորեն և բարեխղճորեն աշխատել է իրեն վստահված պաշտոնում: Իսկ փետրվարյան հակախորհրդային ապստամբության ժամանակ նա հրաժարվել է դաշնակցական կառավարությանը մասնակցությունից, իսկ տարագրության մեջ նա հանդես եկավ իր նախկին կուսակցության դեմ՝ պահանջելով «Դաշնակցության» լիակատար լուծարում, և կոչ անելով համակողմանի օգնություն ցույց տալ Խորհրդային կառավարությանը, որը խորհր-

[1] Նկատի ունի ՀՅԴ Բյուրո-կառավարությունը:

դային Մեծն Ռուսաստանի օգնությամբ է փրկվել հայ ժողովրդին անխուսափելի կործանումից: Արտասահմանում էլ նա հանդես եկավ «Դաշնակցությունը անելիք չունի այլևս» հանրահայտ գրքով: Այդ գիրքը երկու անգամ վերահրատարակվել է, Հայաստանում խորհրդային իշխանության կողմից հայերեն և Թիֆլիսում՝ ռուսերեն թարգմանությամբ «Закки́нга» խորհրդային-կուսակցական հրատարակչության կողմից: Դա ուժեղագույն բարոյաքաղաքական հարված է հասցրել «Դաշնակցություն» կուսակցությանը:

1923 թ. հայրս հայ մտավորականության մյուս երևելի ներկայացուցիչների հետ վերադարձավ Հայաստան և Խորհրդային միություն ժամանելու առաջին օրվանից ընդհուպ մինչև ձերբակալության օրը նա անձնվիրաբար տվեց ինժեներ-շինարարի և ճարտարապետի իր գիտելիքները Խորհրդային իշխանությանն ու մեր ժողովրդին ինչպես անմիջական գործնական աշխատանքով, այնպես էլ որպես գիտական աշխատող՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի պրոֆեսոր:

Հայաստան վերադարձի առաջին իսկ օրվանից նա անվերապահորեն հեռացավ քաղաքական կյանքից ու գործունեությունից և ամբողջությամբ տրվեց իր Հայրենիքի վերածնունդի մեծ գործին՝ հանուն հարազատ ժողովրդի երջանկության:

5. 69 տարեկան հասակում ձերբակալվեց Հովհաննես Քաջազնունին: Նրա ընտանիքին առ այսօր անհայտ է՝ արդյոք նրան ներկայացվե՞լ է կոնկրետ և որոշակի մեղադրանք: Անհայտ է նաև նրա հետագա ճակատագիրը: Մասնավոր տվյալներով՝ ոչ այն է՝ 1937 թվի վերջին, ոչ այն է՝ 1938 թվի սկզբին նա մահացել է կենտրոնական բանտի հիվանդանոցում, թեև ՆԳԺԿ ՊԱՆ հին ղեկավարության օրոք մեզ տեղեկացրել է, որ նա դատապարտվել է 10 տարվա

ազատազրկման ուղղիչ աշխատանքային ճամբարում առանց նամակագրության իրավունքի:

Ամբողջ շարադրանքի հիման վրա խնդրում եմ. ա) տեղեկացնել իմ հոր՝ Հովհաննես Քաջազնունու ճակատագրի մասին, բ) եթե նա դատապարված է եղել, ապա վերանայել նրա գործը՝ իրավունքների վերականգնման վրա հսկողության կարգի համաձայն:

(Մ. Հ. Քաջազնունի)

22-ը հունիսի, 1955 թ.

Ք. Երևան

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 25-28: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 14

ԽՍՀՄ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼ

23-ը օգոստոսի, 1955 թ.

ԳԱՂՏՆԻ

Օրինակ N1

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄ
ԳՆԴԱՊԵՏ ընկ. [Գ.] ԲԱԴԱՄՅԱՆՑԻՆ

Որպես Ձեզ ուղարկված 1955 թ. օգոստոսի 1-ին (N 7/06-1576 էջ), Հ.Հ. Քաջազնունու մեղադրական գործի և բողոքարկման լրացում կից ուղարկվում է Քաջազնունի Մարգարիտի դիմումը՝ լրացուցիչ ստուգման ժամանակ օգտագործելու համար:

Հավելված. Հիշատակված 1-ին էջում:

Հայկական ԽՍՀ դատախազի տեղակալ
Արդարադատության վեցերորդ դասի
պետական խորհրդական

Ք. Ս. Քալանթարյան (ստորագրություն)

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 29: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 15

Ընկե՛ր Քալանթարյան: Ձեզ եմ ներկայացնում իմ հորը լավ ճանաչող անձանց ցուցակ, խնդրում եմ գործի ստուգման ժամանակ հարցաքննել նրանց:

Մորուս Ստեփանի Հասրաթյան – պատմական գիտությունների թեկնածու, մանկավարժական ինստիտուտի դասախոս – Ալավերդյան 53, բն. 1, հեռ. 74-67

Միքայել Դավթի Մազմանյան – խորհրդային ճարտարապետների միության վարչության անդամ – Ստալինի պողոտա 18, մուտք 1, 1-ին հարկ, բն. 10

Ավետիք Իսահակյան – Պլեխանովի 14, հեռ. 36-16

Գրիգոր Համբարձումի Չուբարյան – Նալբանդյան 104

Հայկ Հակոբջանի Զարգարյան – Նալբանդյան 81, մուտք 2, բն. 6[1]

Սերգեյ Նիկոլայի Մարտիկյան – Տերյան 62

Անհրաժեշտության դեպքում կարող եմ ներկայացնել ցուցմունք տալու ընդունակ ընկերների լրացուցիչ ցուցակ:

Մ. Քաջազնունի
17.08.1955 թ.

[1] Մահացած է (գրված է ձեռագիր բացատրականում):

Ք. Երևան

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 30: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 16

ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ
ՀԱՅԿ. ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԱԿ ՀԵՏԱՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ ՏԵՂԱԿԱԼ, ԳՆԴԱՊԵՏ

ընկ. ՓԻՐՈՒԶՅԱՆԻՆ

Ի լրումն մեր 8/VIII-55 թ. N 13/6425-ին, կից առաքում ենք քաղաքացի Գրիգոր Համբարձումի Չուբարյանի դիմումը՝ Քաջազնունի Հովհաննեսի գործի առիթով քննելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ. դիմումը՝ 8 թերթով

ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԱԿ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ՝ փոխգնդապետ ՄՈՒՐԱՏՈՎ (*ստորագրություն*)

ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՊԱԿ ՀԱԲ 1-ԻՆ ԲԱԺՆԻ ՕՊԵՐ-ԼԻԱԶՈՐ ավագ լեյտենանտ ԳԱՍՊԱՐՅԱՆ (*ստորագրություն*)

N 13/8075

«08» սեպտեմբերի, 1955 թ.

ՀԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

Գրիգոր Համբարձումի Չուբարյանից
(Երևան, Նալբանդյան փ., տ. N 104)

ԴԻՄՈՒՄ
1.

Ինձ հայտնի է դարձել, որ ՀԽՍՀ հատուկ գործերի դատախազությունը նախկին վարչապետ և մինչխորհրդային Հայաստանի Հանրապետության խորհրդարանի նախագահ Հովհաննես Քաջազնունու գործը պետանվտանգության կոմիտե է ուղարկել՝ վերահսկողության կարգով ստուգողական քննության համար:

Հովհ. Քաջազնունուն որպես հասարակաքաղաքական գործիչ, լրագրող և խորհրդային մասնագետ-աշխատակից ճանաչելով ոչ միայն արխիվային ֆոնդերի, տպագրված նյութերի հիման վրա, ոչ միայն ժամանակակիցների հիշողությունների, այլ նաև նրա հետ անձնական, ուղղակի հաղորդակցման միջոցով՝ իմ քաղաքական խղճի պարտքն եմ համարում դիմել Ձեզ:

Հանգիստ խղճով և իմ յուրաքանչյուր բառի համար պատասխանատվության գիտակցումով հստակորեն և անհողդողդ պնդում եմ, որ Հովհ. Քաջազնունու ձերբակալությունը՝ դրանից բխող բոլոր ողբերգական հետևանքներով, բացահայտ անօրինության և քաղաքական կամայականության գործողության արդյունք է եղել:

Ա՛յն է.

29.11.1920 թ. հայկական բուրժուական հանրապետության կառավարությունը հաղորդագրություն է ստացել, որ ապստամբ պարտիզանները՝ Կարմիր բանակի զորամասերի հետ միասին անցել են Հայաստանի սահմանները, իսկ Հեղկոմը խորհրդային իշխանություն է հռչակել: Կառավարության, խորհրդարանական ֆրակցիայի և «Դաշնակցություն» կուսակցության ակտիվի պատասխանատու ժողովում դաշնակցականների ազդեցիկ խմբի կողմից առաջարկված է եղել անմիջապես խաղաղություն կնքել քեմալականների հետ և նրանց հետ միասին ճնշել բոլշևիկյան ապստամբությունը: Այդ հա

կաժողովրդական-բախտախնդրական խմբի դեմ վճռականորեն ելույթ ունեցավ հենց Հովի. Քաջազնունին՝ պահանջելով անվերապահ զիջում Հայհեղկոմին՝ որպես Հայաստանի քաղաքական ինքնուրույնության և հայ ժողովրդի փրկության միակ ելք: Այն օրերի թարմ տվյալներով ես համոզվեցի, որ քաղաքական ճգնաժամի խաղաղ լուծման և քաղաքացիական արյունալից պատերազմի կանխման գործում ոչ պակաս կարևոր դեր է խաղացել Հովի. Քաջազնունին:

Իշխանափոխության փոխանցումը ձևակերպվել է 02.12.1920 թ. միջազգային իրավական հատուկ պայմանագրով՝ կնքված Հայաստանի Հանրապետության և ՌՍՖԽՀ միջև: Այդ պայմանագիրը սահմանադրական կարգով վավերացվել է Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից: Ես անձամբ մասնակցել եմ այդ պայմանագրի խմբագրմանը:

Այդ պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ հայկական բանակի հրամկազմը ազատվում էր մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հռչակումը կատարած գործողությունների պատասխանատվությունից:

Իսկ նույն այդ իրավաքաղաքական ակտի 5-րդ հոդվածի հիման վրա «Դաշնակցություն» կուսակցության անդամները, սոցիալ-հեղափոխականները և սոցիալ-դեմոկրատները նույնպես հետապնդումների չեն ենթարկվում այդ կուսակցություններին պատկանելու համար, կոմկուսի դեմ պայքարի և մինչխորհրդային Հայաստանում իրենց կատարած գործողությունների համար:

Եվ հետո՛.

1921 թ. ապրիլի 23-ին Խորհրդային Հայաստանի գերագույն իշխանության կողմից տրվեց հրամանագիր՝ «Հրամանագիր հատատերման մասին»: Այդ հրամանագիրը հրապարակվեց Կ(բ)Կ Կենտկոմի և Հայկական ԽՍՀ կառավարության պաշտոնական օրգանի՝ «-

«Կոմունիստ»-ի 24.04.1921 թ. N 72-ում և պաշտոնապես հրատարակվեց 1921 թվականի «Դեկրետների եւ հրամանների ժողովածու»-ում:

Այդ պատմական հրամանագրի նախաձեռնողն ու ոգեշնչողն էր 11-րդ բանակի ռազմհեղկոմի նախագահ և ՌՍՖԽՀ Ժողկոմխորհի հատուկ լիազոր Սերգո Օրջոնիկիձեն, որի խնդրանքով ես կազմեցի հրամանագրի տեքստը, իսկ կարճ ներածականը (պրեամբուլան) կազմեց նա ինքը Հայհեղկոմի ղեկավարներ Ս. Կասյանի և Ա. Մռավյանի մասնակցությամբ:

Այդ հրամանագրի առաջին իսկ հոդվածում բառացիորեն ասված է.

«Քաղաքական և ցանկացած տեսակի ու ձևի պատասխանատվությունից առանց բացառության ազատ համարել բոլոր նրանց, ովքեր որևէ կերպ պայքարել են ՀՍԽՀ դեմ, անկախ նրանց անմիջական արարքներից, կոչումներից, դիրքերից ու պաշտոններից»:

Երրորդ հոդվածում ասված է.

3. «Բոլոր ռազմական և քաղաքացիական հաստատություններին ու ՀՍԽՀ ծառայողներին պարտավորեցնել սույն հրամանագիրն անմիջապես և անշեղորեն ի կատար ածելուն՝ բանտերից, կալանքից և աքսորից, ինչպես նաև ցանկացած այլ հետապնդումից ազատ արձակելով վերը նշված քաղաքական գործիչներին և քաղաքացիներին»:

Հատուկ նշանակություն և հապճեպություն տալով համաներման այս հրամանագրին՝ 4-րդ հոդվածում կարգադրվում էր հեռագրով ի կատար ածել հրամանագիրը:

Այս հրամանագրի հետ կապված և դրա առիթով անդրկովկասյան հակահեղափոխական ազիտպրոպագանդան և հատկապես դաշնակցականը բացառիկ աղմուկ բարձրացրին՝ համընդհանուր քաղաքական համաներումը որակելով որպես խաբեություն, թակարդ և այլն: Բայց այդ հրամանագիրը ոչ թե խաբեություն և թակարդ էր, այլ քաղաքական իմաստնության գործողություն:

Բայց հետագայում «լավրենտյան խաժամուժը» Հայաստանում քիչ չաշխատեց՝ այն օրերի դաշնակցական քաղաքական պրովոկացիայի արդարացման համար։

Իմ կողմից բերված տվյալները և նկատառումները ինձ իրավունք են տալիս պնդելու, որ Հովհաննես Քաջազնունու մինչխորհրդային գործունեությունն ու կուսակցական պատկանելությունը քրեականացնելը խորհրդային օրինականության աղաղակող խախտում է։

Այսպիսին է «Քաջազնունու գործի» իրավաբանական կողմը։

II

Իսկ եթե նա ձերբակալված և, հնարավոր է, նույնիսկ դատապարտված է արտասահմանից խորհրդային Հայաստան վերադառնալուց հետո հակախորհրդային գործունեության համար, ապա ես ոչ մի դրպե չեմ կասկածում, որ դա քաղաքական թերամտության բավականին մեծ բաժին ունեցող քաղաքական սադրանքի արդյունք է։

Բոլոր նրանք, ովքեր ճանաչել են Քաջազնունուն, նույնիսկ նրա քաղաքական հակառակորդները, այդ թվում և ես, արժանին են մատուցել նրա բարոյաքաղաքական մաքրությանն ու ազնվությանը, սկզբունքայնությանն ու վեհանձնությանը։ Նրա խոսքը երբեք չէր հակասում գործին։ Նա կարող էր սխալվել և քիչ չէր սխալվում, բայց երեսպաշտություն և կեղծավորություն երբեք չէր անի։ Նա սիրում էր իր ժողովրդին ու հայրենիքը ոչ թե վերացականորեն և վերացարկված, այլ իրականում գոյություն ունեցող։

Քաջազնունու բարոյաքաղաքական բնութագիրը տալիս պետք է ելնել ոչ թե «Դաշնակցություն» կուսակցությանը նրա ձևական

պատկանելությունից կամ նրա զբաղեցրած պաշտոնական դիրքերից, այլ անձամբ Հովի. Քաջազնունու կոնկրետ գործողություններից և փաստերից: Նա ինքը իր պատմական «Դաշնակցությունը անելիք չունի այլևս» հրատարակության մեջ գրում է. «Ես կուսակցական մարդ չեմ (բառի նեղ իմաստով) ու երբեք էլ չեմ եղել. և այդ է պատճառը, որ այդքան տարի մեկուսի եմ մնացել կուսակցության մեջ»: Ամերիկաթուրքական հետախուզության քամահրելի վարձկանը՝ երևելի դաշնակցական Վահան Նավասարդյանը, Քաջազնունու դեմ ուղղված իր նողկալի գրքում պնդում է, որ Քաջազնունին ընդհանրապես դաշնակցական չի եղել: Այդպիսին են անձամբ Քաջազնունուն ճանաչող և նրա գործունեությանը ծանոթ ինչպես դաշնակցականների, այնպես էլ հակադաշնակցականների գնահատականները: Անձամբ ես սխալ եմ համարում այսպիսի պնդումը, բայց միևնույն ժամանակ անվիճելի է, որ հայ քաղաքական պատմության վճռորոշ պահերին Քաջազնունին իր կուսակցության համեմատ այլ դիրքորոշում էր ունենում և երբեք չէր գլխավորում զուտ կուսակցական-դաշնակցական պետական հաստատությունները:

Որպես օրինակ կբերեմ, ասենք, այսպիսի փաստեր.

1914 թվականին Քաջազնունին կտրականապես դեմ ելույթ ունեցավ «հայ կամավորական շարժմանը», որը «Դաշնակցություն» կուսակցությունն էր գլխավորում:

1918 թվականին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հարցում ելույթ ունեցավ իր կուսակցության դեմ՝ այդ պայմանագրի ընդունմանը կողմ արտահայտվելով:

«Հայաստանի խորհրդի» (այսինքն՝ խորհրդարանի) կազմակերպման ժամանակ Քաջազնունին պահանջեց, որ այդ գերագույն կառույցում մասնակցություն ունենային բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները, ընդհուպ մինչև բոլշևիկներ, ինչն էլ իրակա

նացվեց, ընդ որում դաշնակցականները Հայաստանի այդ խորհրդում փոքրամասնություն էին կազմում:

Հայկական կառավարության առաջին կազմը, որ գլխավորում էր Քաջազնունին, միակուսակցական-դաշնակցական չէր, այլ կոալիցիոն և այլն, և այլն:

Կտրականապես պնդում եմ, որ Հովհաննես Քաջազնունու՝ կառավարության վարչապետ եղած ժամանակ բոլշևիկների ամենաչնչին իսկ հետապնդման դեպք չի եղել: Իսկ Հայաստանի բոլշևիկների այն ժամանակվա ղեկավար Արշավիր Մելիքյանը խորհրդարանի անդամ էր և խմբագրում էր «Նոր խոսք» թերթը:

1919 թ. ապրիլի վերջին, թե մայիսի սկզբներին Քաջազնունին մեկնեց արտասահման և Հայաստան վերադարձավ միայն 1920 թ. ուշ աշնանը: Նրա մեկնումից հետո առաջին գումարման խորհրդարանը ցրվեց, և միևնույն ժամանակ կոալիցիոն կառավարությունը փլուզվեց: Նոր կառավարությունը միակուսակցական-դաշնակցական էր, իսկ նորընտիր խորհրդարանում 80 պատգամավորից 72-ը դաշնակցական էին: Այդ ժամանակից ի վեր սկսվում է հայ քաղաքական պատմության այն «դարաշրջանը», որը հայտնի է «դաշնակ-մաուզերիստական դիկտատուրա» անվան տակ: Այդ ժամանակաշրջանում Քաջազնունին փաստացիորեն եղել է «պատվավոր քաղաքական աքսորում»: Կոմունիստների հետապնդումները, Մայիսյան ապստամբությունը, ձերբակալությունները, աքսորներն ու բոլշևիկների սպանությունները և այլն, այս ամենը տեղի էր ունենում այն ժամանակ, երբ Քաջազնունին արտասահմանում էր:

Ընդհանրապես 1919 թ. գարնանից Քաջազնունին հայ իրականության մեջ քաղաքական ոչ մի էական դեր չի կատարել: Նրան «պատվավոր աքսորի» մեջ էին պահում: Նա Հայաստան վերադարձավ հայ-թուրքական պատերազմի եռուզեռի ժամանակ՝ Կարսի անկման նախօրեին: Անվանապես նրան ընտրեցին որպես խորհրդարանի նախագահ, բայց այդ դիրքում նա անելիք չուներ, քանի որ

խորհրդարանը ցրվել էր, և դրա գործառույթները փոխանցվել էին կառավարությանը: Գործից մի կողմ թողնվելով՝ նա օր ծերության որպես շարքային-կամավոր գրանցվեց՝ իր ժողովրդին թուրքական հրուսակներից պաշտպանելու համար:

Հովհաննես Քաջազնունին անկեղծորեն ողջունում էր Հայաստանի խորհրդայնացումը և խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ օրից իր բոլոր ուժերն ու գիտելիքները տվեց նոր իշխանությանը, խորհրդային պետությանը՝ չնայած նրան, որ իրեն Հայաստանից անարգել մեկնելու իրավունք էր ընձեռվել:

1925 թ. գարնանը Քաջազնունին տարագրությունից վերադարձավ Հայաստան: Գլխավոր դատախազին ուղղված 13.02.1955 թ. իմ բողոքում՝ 63-րդ էջում, ես գրել եմ. «Երբ Քաջազնունին խորհրդային իշխանության հրավերով վերադարձավ արտասահմանից, ինձ հետ առաջին իսկ հանդիպման ժամանակ հայտարարեց, որ «Դաշնակցություն» կուսակցության քաղաքականությունը անդառնալիորեն սպառվել է, որ այդ քաղաքականությունը մեր բզկտված հայրենիքը և մեր դժբախտ ժողովրդին դեպի անպայման վախճանը կտաներ, եթե ժամանակին օգնության չգար Խորհրդային Ռուսաստանը, որ բոլշևիկները և միայն բոլշևիկները փրկեցին Հայաստանն ու հայերին անխուսափելի վախճանից: Ես,- ավելացրեց նա,- որպես անցյալում քաղաքական գործիչ, ծանրագույն մեղքի զգացում ունեմ անիծյալ անցյալի համար և եկել եմ Խորհրդային Հայաստան, որպեսզի իմ համեստ աշխատանքով մեղքս քավեմ»: Նա եղել և մնացել է ազնիվ, անկեղծ: Ես ոչինչ չեմ կարող ավելացնել սրան, առավել ևս, որ ոչ քիչ աշխատակիցներ կգտնվեն՝ ուղղակիորեն և ընդհանուր աշխատանքի բերումով Քաջազնունուն ճանաչող և՝ որպես գիտնական-մանկավարժի, և՝ որպես մեր սոցիալիստական Հայրենիքի տեխնիկական վերակառուցման ակտիվ մասնակցի: Ես չեմ հիշում մի դեպք, որ Քաջազնունու գիտամանկավարժական և գործնական աշխատանքից դժգոհ լինեն: Քննադատության և քաղաքական հար-

ձակումների առարկան եղել է Քաջազնունու «Դաշնակցությունը այլևս անելիք չունի» հրատարակությունը: Այդ հրատարակությունը որակվել է որպես «սմենովեխականություն»: Ես կարծում էի և այժմ էլ կարծում եմ, որ «սկզբունքային», «գաղափարական» մեղադրանքը թյուրիմացության արդյունք է: Ա՛յն է.

Առաջին. դա ոչ թե խորհրդային ընթերցասեր հասարակության համար նախատեսված աշխատություն է, այլ նախկին դաշնակցականի գաղտնի զեկուցում իր կուսակցության համաժողովին:

Երկրորդ. Քաջազնունին այդ զեկուցումը կրճատումներով է հրատարակել, քանի որ կուսակցության ղեկավարությունը հրաժարվեց համաժողովին ծանուցել այդ զեկուցումը:

Երրորդ. այդ զեկուցում-նամակը Խորհրդային միությունում հրատարակված է եղել ոչ միայն հայերեն, այլ նաև ռուսերեն թարգմանությամբ՝ իր իսկ՝ Քաջազնունու կամքին հակառակ և Անդրերկրկոմի ղեկավարության անձամբ Ս. Օրջոնիկիձեի, Ալ. Մյասնիկյանի, Ս. Լուկաշինի և այլոց նախաձեռնությամբ:

Չորրորդ. «Դաշնակցություն» կուսակցության քննադատությունը ազգային, այլ ոչ թե դասային դիրքորոշումներից էր, քանի որ դաշնակցականներն իրենց գոյության իրավունքը արդարացնում էին հենց ազգային մոտիվներով:

Հինգերորդ. Քաջազնունու այդ ելույթը բացառիկ ուժեղ հարված հասցրեց «Դաշնակցություն» կուսակցությանը:

Վեցերորդ. Քաջազնունու հրատարակությունը որպես սմենովեխականություն որակելը թյուրիմացություն է, քանի որ սմենովեխականությունը ձգտում էր հակախորհրդային ուժերի օրինականացմանն ու համախմբմանը, իսկ Քաջազնունին, ընդհակառակը, պահանջում էր հայկական խոշորագույն հակահեղափոխական քա-

դաքական կազմակերպության՝ Դաշնակցության լիակատար լուծարումը, և այլն, և այլն:

Այսպիսով, «գաղափարական վնասարարության» դեմ պայքարի դրոշի ներքո անցյալում բարձրացված աղմուկը համարել և համարում եմ ոչ ծանրակշիռ և Քաջազնունու ձերբակալությունը ու դատապարտումն ընդհանրապես համարում եմ քաղաքական կամայականության արդյունք: Ես պատրաստ եմ որպես վկա իմ դիմումը կրկնել նաև արդարադատության մարմինների առաջ:

Գ. Հ. Չուբարյան
«02»-ը սեպտեմբերի, 1955 թ.

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 32-39: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 17
ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

15-ը փետրվարի, 1956 թ., Երևան
Հարցաքննությունը սկսվել է ժամը 10:30

Ես՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդին կից ՊԱԿ հետաքննչական բաժնի հետաքննիչ, ավագ լեյտենանտ Աղուզումցյանս, որպես վկա հարցաքննեցի

Մարգարիտա Հովհաննեսի Քաջազնունուն՝
1902 թ. ծնված Բաքվում, անկուսակցական,
ԽՍՀՄ քաղաքացի, հայ, բարձրագույն կրթությամբ,
աշխատում է «Հայպետհրատ»-ում որպես
պլանավորման բաժնի վարիչ, ապրում է ք. Երևան,
Ստալինի պող. 5, 2-րդ մուտք, բն. 12:

Ցուցմունքներ տալուց հրաժարվելու պատասխանատվության և կանխահայտորեն կեղծ ցուցմունքներ տալու մասին զգուշացված է՝ ըստ Հայկական ԽՍՀ քրեական օրենսգրքի 117 և 119 հոդվածների:

(*Ստորագրված է* Մ. Քաջազնունի)

Հարց. Պատմե՛ք՝ որտեղ են գտնվում և ինչով են զբաղվում Ձեր մտերիմ բարեկամները:

Պատասխան. Հայրս՝ Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունին (-Ռուբեն Իվանովիչ), 1937 թ. ձերբակալվել է ՆԳԺԿ մարմինների կողմից: Մայրս՝ Սաթենիկ Դավթի Քաջազնունին, ապրում է ինձ հետ, 83-84 տարեկան է, չի աշխատում: Քույրս՝ Հրաչիկ (Անահիտ) Քաջազնունին, ապրում է ք. Երևանում, նա մոտավորապես 60 տարեկան է, չի աշխատում, թոշակառու է (երկրորդ խմբի հաշմանդամ): Ես 4 եղբայր ունեի, նրանք բոլորը զոհվել են: Ավագ եղբայրս՝ Ալամ Քաջազնունին, զոհվել է 1920 թվականին, Երևանին մերձակա ինչոր տեղում՝ ոչ այն է՝ Վեդիում, ոչ այն է Զանգիբասարում, թուրքերի հետ մարտերում: Մյուս եղբայրս՝ Աշոտը, զոհվել է 1918 թվականին Ղարաքիլիսայում (Կիրովական), նույնպես թուրքերի հետ մարտերում: Ռուբեն Հովհաննեսի Քաջազնունի եղբայրս մասնագիտությամբ ինժեներ (պրակտիկ) էր, «Գյումուշհէկշին» էքսկավատորների պարկի պետը, զոհվել է 1953 թվականին Երևան քաղաքում, ավտոմոբիլային աղետից: Կրտսեր եղբայրս՝ Կարեն Հովհաննեսի Քաջազնունին (ծնվ. 1905 թ.), մինչև պատերազմը աշխատում էր Մոսկվայում որպես դասախոս Կինեմատոգրաֆիայի ինստիտուտում: Հայրենական պատերազմի ժամանակ զոհվել է 1941 թ. նոյեմբեր ամսին, Վյազմայում: Իմ հայրը Վարդգես (Վարդ) անունով եղբայր ուներ, որը մասնագիտությամբ գյուղատնտես էր, աշխատում էր որպես մանկավարժ, մահացել է 20-ականներին: Հորաքույրս՝ Վերգինե Հով-

հանեսի Ինճիկյան, ողջ է, 70-ն անց, ապրում է դստեր մոտ՝ Երևան քաղաքում: Ուրիշ մտերիմ բարեկամներ ես չունեմ:

Հարց. Ո՞ր բանակներում են ծառայել Ձեր Արամ և Աշոտ եղբայրները:

Պատասխան. Ավագ եղբայրս՝ Արամը, ծառայել է ցարական բանակում, պրապորշչիկի [վառատար] աստիճանում, այնուհետև ծառայել է դաշնակցական բանակում նույնպես որպես պրապորշչիկ, և դաշնակցական բանակի կազմում էլ զոհվեց թուրքերի դեմ մարտերում, ոչ այն է՝ Վեդու, ոչ այն է՝ Զանգիբասարի շրջանում: Մյուս եղբայրս՝ Աշոտը, որքան հիշում եմ, ցարական բանակում չի ծառայել, ծառայել է դաշնակցական բանակում, դարձյալ պրապորշչիկի աստիճան ուներ և զոհվեց 1918 թվին Ղարաքիլիսայում՝ թուրքերի դեմ մարտերում, դաշնակցական բանակի կազմում, ինչի մասին ես վերը նշեցի:

Հարց. Ինչո՞վ կարող եք լրացնել Ձեր ցուցմունքները:

Պատասխան. Իմ բարեկամների վերաբերյալ ոչինչ չունեմ ավելացնելու, բայց կարծում եմ, որ հետաքննությանը կհետաքրքրի հետևյալ հանգամանքը: Քույրս՝ Հրաչիկը (Անահիտ), 1918 թ. Մոսկվայից վերադառնալիս Հյուսիսային Կովկասում՝ կարծես թե Կիսլովոդսկում, բռնվել էր (ում կողմից՝ չգիտեմ, բայց այդ ժամանակ այնտեղ բոլշևիկներն էին) և որոշ ժամանակ (ստույգ չգիտեմ) գտնվել է ինչ-որ «գերիների ճամբարում» որպես դաշնակցական կառավարության վարչապետի դուստր: Նա ինքն էր պատմում, որ այդ ճամբարում իր հետ միասին եղել են խորհրդային իշխանության կողմից հակախորհրդային համարվող մարդկանց ընտանիքների անդամներ: Անհրաժեշտ եմ համարում ավելացնել, որ մեր ընտանիքի անդամներից ոչ ոք, բացի հորիցս, «Դաշնակցություն» կուսակցության անդամ չի եղել: Ուրիշ ավելացնելու բան չունեմ:

Հարցաքննությունն ավարտված է ժամը 11:50

Հարցաքննության արձանագրությունը անձամբ ընթերցել եմ, իմ բառերով բոլոր պատասխանները ճիշտ են կազմված, ինչի համար ստորագրում եմ:

(*Ստորագրված է* Մ. Քաջազնունի)

Հարցաքննեց. ՀԽՍՀ Նախարարների խորհրդին կից ՊԱԿ հետաքննչական բաժնի հետաքննիչ, ավագ լեյտենանտ Աղուզումցյան

Հարցաքննության արձանագրություն

«28»-ը փետրվարի, 1956 թ.

ք. Երևան

Հարցաքննությունը սկսված է ժամը 10:15

Ես՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդին կից ՊԱԿ հետաքննչական բաժնի հետաքննիչ, ավագ լեյտենանտ Աղուզումցյանս, որպես վկա հարցաքննեցի

Միքայել Դավթի Մազմանյանին՝
1899 թ. ծնվ. Թիֆլիսում, հայ, ԽՍՀՄ քաղաքացի,
անկուսակցական, բարձրագույն կրթությամբ,
ճարտարապետ, Երքաղխորհի
ճարտարապետանախագծային արհեստանոցի ղեկավար,
ապրում է ք. Երևանում, Ստալինի պող. 18, բն. 5:

Ցուցմունքներ տալուց հրաժարվելու պատասխանատվության և կանխահայտորեն կեղծ ցուցմունքներ տալու մասին զգուշացված է՝ ըստ Հայկական ԽՍՀ քրեական օրենսգրքի 117 և 119 հոդվածների:

(*Ստորագրված է* Մազմանյան)

Հարց. Ճանաչու՞մ եք արդյոք Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունուն: Եթե այո, պատմե՛ք ձեր անձնական փոխհարաբերությունների մասին:

Պատասխան. Հովհաննես Քաջազնունուն ճանաչում եմ 1928 թվականից, Պետնախագծում համատեղ աշխատանքի բերումով և Կոմունալ տնտեսության նախարարությունից, որտեղ նա աշխատում էր որպես գիտատեխնիկական խորհրդի քարտուղար, և Պոլիտեխնիկական ինստիտուտից, որտեղ նա ճարտարապետություն էր դասավանդում: Մեր փոխհարաբերութունները խիստ պաշտոնական էին, անձնական հաշիվներ կամ թշնամանք մեր միջև չի եղել:

Հարց. Բնութագրե՛ք Քաջազնունուն քաղաքական և գործնական առումով:

Պատասխան. Լինելով ժողովրդական կոմիսարիատի կոմունալ տնտեսության գիտական քարտուղար՝ Քաջազնունին դրսևորվել է որպես իր մասնագիտությամբ մեծ գիտելիքներ ունեցող խոշոր ճարտարապետ-շինարար: Հանձնարարված գործին խիստ լրջաբար և բարեխճորեն էր վերաբերվում: Շինարարությունը հաստատելու համար դիտարկվող նախագծերում նա միշտ պետության շահերն էր պաշտպանում, պայքարում էր զանազան ճարտարապետական և կառուցարարական ավելորդությունների դեմ՝ հանուն կառուցվող շինությունների հարմարավետության: Այս սկզբունքներն իսկ նա կիրառում էր իր պրակտիկ գործունեության մեջ, ինչպես, օրինակ՝ ք. Լենինականում հրապարակին մոտ բնակելի տան կառուցման առիթով Քաջազնունին բացառիկ հոգատարություն ցուցաբերեց երիտասարդ մասնագետների աշխատանքների հանդեպ, և՛ Ժողկոմտնտ գիտական խորհրդում դրանց քննարկման ժամանակ, և՛ Պոլիտեխնիկական ինստիտուտում դասավանդման ժամանակ: Ինչ վերաբերում է Քաջազնունու քաղաքական հայմոզմունքներին, ես այդ առումով սպառիչ պատասխան տալ չեմ կարող, քանի որ նրա հետ առնչ-

վել եմ միայն գործնական հողի վրա: Սակայն կարող եմ ասել, որ նա բացառիկորեն լուրջ, զուսպ մարդ էր, և գոյություն ունեցող կարգերի կամ խորհրդային իշխանության դեմ որևէ բան երբևէ չեմ լսել նրանից: Նույնիսկ որպես ակնարկ չեմ լսել: Ուրիշներից նույնպես չեմ լսել, որ Քաջազնունին որևէ բացասական բան թույլ տար իրեն խորհրդային իշխանության հասցեին: Հիշում եմ մի դեպք, երբ Պոլիտեխնիկական ինստիտուտում, որտեղ ես տնօրեն էի, մոտ 1932-[19]33 թվականներին ընդհանուր ժողովում անդրադառնալով միջազգային դրությանը՝ խոսում էին Խորհրդային Միության նկատմամբ արտասահմանում իրականացվող դաշնակների թշնամական քաղաքականության մասին, ընդ որում հիշատակում էին նաև Քաջազնունուն՝ որպես դաշնակցական կառավարության նախկին վարչապետ: Այդ իսկ ժողովին Քաջազնունին իր ելույթում հայտարարեց, որ նա դեռևս տասը տարի առաջ «քաղաքական ինքնասպանություն» է գործել, հեռացել է դաշնակներից և իր ուժերի սահմաններում օգնում է Հայաստանում խորհրդային շինարարությանը: Ահա այն ամենը, որ կարող եմ ասել Քաջազնունու մասին:

Հարց. Ինչո՞վ կարող եք լրացնել Ձեր ցուցմունքը:

Պատասխան. Ոչ մի լրացում չունեմ:

Հարցաքննությունն ավարտված է 11:25

Հարցաքննության արձանագրությունը անձամբ ընթերցել եմ, իմ բառերով բոլոր պատասխանները ճիշտ են կազմված, ինչի համար ստորագրում եմ:

(*Ստորագրված է* Մազմանյան)

Հարցաքննեց. ՀԽՍՀ Նախարարների խորհրդին կից ՊԱԿ հետաքննչական բաժնի հետաքննիչ, ավագ լեյտենանտ Աղուզումցյան:

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 44-47: Վավերացված պատճեն: Ձեռագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 18

Տեղեկանք

Ես՝ Սերգեյ Նիկոլայի Մարտիկյանս, ճանաչում եմ Հովհաննես Քաջազնունուն որպես հին դաշնակցականի, դաշնակցական կառավարության անդամներից մեկի: Դաշնակցական ավանտյուրային (1921 թ.) նա մասնակցել է թե ոչ, ես չգիտեմ: Քաջազնունին հայտնի է իր «Դաշնակցությունը անելիք չունի այլևս» գրքով: Պետք է նշեմ, որ ես նրան ճանաչել եմ որպես հասարակական գործչի, անձնական ծանոթություն չեմ ունեցել: Լսել եմ, որ Սովետական կարգերի հաստատումից հետո նա իրեն շատ լոյալ է պահել: Նա շատ լավ արխիտեկտոր էր: Ես նրա հետ անձամբ ծանոթացել եմ 1937 թվին, բանտում, միևնույն կամերայում, բանտում նույնպես նա իրեն շատ լոյալ էր պահում դեպի սովետական կարգերը: 1937 թվից հետո ես նրան չեմ տեսել:

28.02.1956 թ. (*Ստորագրված է* Մարտիկյան)

Սույն տեղեկանքը ընկ. Մարտիկյանի վատառողջության պատճառով, նրա իսկ թելադրանքով արձանագրեց պետանվտանգության քննիչ Աղուզումցյանը: Ուղղում եմ՝ ընկ. Մարտիկյանի տեսողության բացակայության պատճառով:

(*Ստորագրված է* Աղուզումցյան)

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 48: Վավերացված պատճեն: Ձեռագիր: Հայերեն:

N 19
ՔԱՂՎԱԾՔ

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՈՒՆԻՑ

Գրիգոր Աբրահամի Տեր-Հակոբյան (Գրո),
ծնվ. 1887 թ., ք. Նախիջևան, հայ,
ԽՍՀՄ քաղաքացի, պրոֆեսոր-հոգեբույժ

1938 թ., 28-30-ը օգոստոսի

Հարց. 1921 թ. փետրվարին դուք՝ էսէրներդ, դաշնակների հետ համատեղ ավանտյուրա բարձրացրիք խորհրդային իշխանության դեմ: Այդ հարցի վերաբերյալ ցուցմունքներ տվեք:

Պատասխան. Խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ օրերից հայկական նախկին «սպեցիֆիկները», զալով իշխանության, մեզ (էսէռներին ու դաշնակներին) վերաբերվում էին առավել վստահությամբ: Ես նշանակված էի Սոցապ Ժողկոմ, իսկ առավել հետադիմորեն տրամադրված Գրիգոր Չուբարյանը՝ Արդարադատության Ժողկոմ-ի տեղակալ: Փոխված իրադրության մեջ պայքարի շարունակման փորձերը կանխելու փոխարեն «սպեցիֆիկները» քավորությամբ զբաղվեցին: Լուկաշինն իր պաշտպանության տակ առավ համերկրացիներին՝ դաշնակցական կառավարության նախկին վարչապետ, երևելի դաշնակ Տերտերյանին՝ և մեր Չուբարյան Գրիգորին: Իոնեսյանը պաշտպանում էր Խոնդկարյանին և այլն:

Չնայած խորհրդային իշխանության հաստատմանը՝ մեր կուսակցությունը շարունակում էր իր գործը: «Հայաստանի կոմիտեի» նիստերը գումարվում էին Խոնդկարյանի, Մենախորյանի և իմ բնակարաններում: Այդ նիստերին Խոնդկարյանը խորհրդային իշխա-

---

* Հ. Տերտերյանը վարչապետ չի եղել, թերևս շփոթում է Ս. Վրացյանի հետ:

նության տապալման կոչ էր անում, մյուսները ավելի չափավոր էին իրենց պահում:

Խորհրդային իշխանությունը դիտելով որպես ժամանակավոր երևույթ, մեծամասնությունը, այդ թվում և ես, բոլշևիկների հետ համագործակցելը հնարավոր էինք համարում: Հիշում եմ՝ հատուկ որոշում էր կայացվել, որ հանձնարարում էր կուսակցության անդամներին աշխատանքի ընդունվել խորհրդային հաստատություններ, որտեղ գործնականում պետք է տարվեր սեփական քաղաքականությունը, իրականացվեին Հեղկոմի միայն այն հրահանգները, որոնք չէին հակասում մեր կուսակցության դրվածքին, և սաբոտաժի ենթարկել պրոլետարիատի դիկտատուրայի ուժեղացման հետ կապված միջոցառումները:

Միայն 1921 թ. հունվարին մեզ առաջարկվեց լուծարել կուսակցությունը: Ազատության մեջ գտնվող մեր ղեկավարները՝ Խոնդկարյանը, Մենախորյանը, դաշնակների հետ համադաշինք, Վրացյանի ղեկավարության ներքո, «սպեցիֆիկներ» Կասյանի[1] և այլոց քաղաքական կարճատեսությունն օգտագործելով, փետրվարի 18-ին ավանտյուրա բարձրացրին՝ զինված ելույթ ունենալով խորհրդային իշխանության տապալման համար:

Ավանտյուրայի առաջին իսկ օրը Մենախորյանը, Խոնդկարյանը, Վրացյանի հետ միասին, կազմակերպեցին «Հայրենիքի փրկության կոմիտե»՝ փաստորեն ավանտյուրան ղեկավարող արտակարգ կառավարություն:

Ես էլ, որպես կոմիտեի նախագահ, մնում էի քաղաքում և գրեթե միայնակ ղեկավարում կուսակցության գործունեությունը: Մենք՝ էսէռներս, բնակչությանը զգեկոչում կոչ էինք անում նեցուկ լինել

[1] Ս. Կասյանը երբեք «սպեցիֆիկ» չի եղել:

ավանտյուրային՝ Խորհրդային իշխանության դեմ զինված ելույթը որակելով որպես «ժողովրդական շարժում»:

Հարց. Ավանտյուրայի առաջին իսկ օրերին քաղաքային վարչության շենքում գումարված Սոցիալ-հեղափոխական կուսակցության Երևանի կազմակերպության ժողովին Դուք կոմիտեի անունից կուսակցության անդամներին կոչ եք արել օժանդակել ավանտյուրային՝ ապստամբությունը բարեհաջող ավարտելու համար:

Պատասխան. Այդպիսին էր մեր կուսակցական կազմակերպության դրվածքը:

Հարց. Շարունակե՛ք:

Պատասխան. Չնայած խորհրդայնացումը կանխելու բոլոր փորձերին՝ Հայաստանի աշխատավորները Կարմիր բանակի օգնությամբ ճնշեցին ավանտյուրան և ամուր կերպով վերականգնեցին խորհրդային իշխանությունը:

Նախարար Քաջազնունու, դրամատուրգ Շանթի և ուրիշների հետ միասին ես գաղթեցի Իրան:

Հարց. Ի՞նչ էիք Դուք անում Թավրիզում:

Պատասխան. Տարագրության մեջ եղած ժամանակ մենք վերջնականապես կորցրինք մեր դեմքը և փաստորեն միաձուլվեցինք դաշնակներին՝ վերածվելով նրանց խմբակցության: Բոլոր քաղաքական միջոցառումները համատեղ էին քննարկվում, ինչպես որ համատեղ էր տնօրինվում դուրս բերված արժույթը, և նույնիսկ, ինչպես ես հետո լսեցի, երևելի մուսաֆաթական Խոսրով բեկ Սուլթանովի (որ Թավրիզ էր ժամանել Անդրկովկասում հակախորհրդային աշխատանքում շփումներ հաստատելու համար) և դաշնակների հանդիպումը տեղի է ունեցել Խոնդկարյանի և Մենախորյանի մասնակցությամբ:

Թավրիզում իմ եղած ժամանակ ես Հայաստանի կառավարությունից երկու պաշտոնական հրավեր ստացա վերադառնալու Հա-

յաստան: Որոշելով վերադառնալ աշխատանքային գործունեության՝ ես վերջ տվեցի անձնական գործերին և Հայաստանի Արտգործժողկոմ Բեկզադյանի հետ միասին վերադարձա Երևան:

ՀԱՐՑԱՔՆՆԵՑ. պետանվտանգության վարչության 4-րդ բաժանմունքի 4-րդ բաժնի վարիչի օգնական, ՊԱԿ կրտսեր լեյտենանտ (*Ստորագրված է* Ինաեկյան)

Ճիշտ է: (*Ստորագրված է* Աղուզումցյան)

Սույն փաստաթղթի պատճենը գտնվում է N 8669 արխիվում, բնօրինակի գտնվելու վայրը հայտնի չէ:

(*Ստորագրված է* Աղուզումցյան)

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 49-51: Վավերացված պատճեն: Ձեռագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 20

Հետաքննչական բաժին
8/1535
«9»-ը սեպտեմբերի, 1955 թ.
ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ
Օրինակ N 2
Պատճեն

ՀԱՅԿ. ԽՍՀ ՆԳՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
մայոր ընկեր [Վ.] ԿԶԱՐԹՄՅԱՆԻՆ

Ծագած անհրաժեշտության հետ կապված՝ խնդրում ենք ցուցում տալ ստուգելու՝ արդյո՞ք Ձեր հաշվառման մեջ չէ Հովհաննես

Հովհաննեսի Քաջազնունին, ծնվ. ք. Ախալքալաք, Վրացական ԽՍՀ, և խնդրում ենք ուղարկել համապատասխան տեղեկանք:

Մեզ մոտ եղած չճշտված տվյալներով՝ Հ. Հ. Քաջազնունին 1893 թվականից «Դաշնակցություն» կուսակցության անդամ է, նրա առաջնորդներից և կազմակերպիչներից մեկը: Դաշնակցական կառավարության օրոք նախարար է եղել, 1921 թ. դաշնակցական ավանտյուրայի մասնակից:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԱԿ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ ՏԵՂԱԿԱԼ
գնդապետ Փիրուզյան

ՀԽՍՀ ՆԽ ԿԻՑ ՊԱԿ ՀԵՏԱՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՔՆՆԻՉ, ավագ լեյտենանտ Աղուզումցյան

N 21

ՀԽՍՀ ՆԳ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԲԱԺԻՆ
N 9/364
«21»-ը սեպտեմբերի 1955 թ.
<u>ԳԱՂՏՆԻ</u>

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԱԿ ՀԵՏԱՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԳՆԴԱՊԵՏ

<u>Ընկեր Փիրուզյանին</u>

Կից ներկայացվում է տեղեկանք ոմն Քաջազնունիների, Հովհաննես Քաջազնունու համար: Այլ տվյալներ չունենք մեր տրամադրության տակ:

<u>ՀԱՎԵԼՎԱԾ</u>. Բաղկացած է երկու էջից:

ՀԱՅԿ. ԽՍՀ ՆԳՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ՓՈԽԳՆԴԱՊԵՏ [Վ.] ԿԶԱՐԹՄՅԱՆ

(*Ստորագրված է*)

N 22

ՀԽՍՀ ՆԳ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԲԱԺԻՆ
«21»-ը սեպտեմբերի 1955 թ.

ԳԱՂՏՆԻ
ԱՐԽԻՎԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայկ. ԽՍՀ Պետական կենտրոնական արխիվի փաստաթղթային նյութերի հիման վրա Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունին հաշվառման մեջ չէ: Ի գիտություն տեղեկացնում ենք.

1. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ (առանց անուն-հայրանունի) - ճարտարապետ, «Ներսեսյան» թեմական դպրոցի հոգաբարձու է ընտրվել «Դաշնակցություն» կուսակցության կողմից:

Փաստ. ժամկետը 1910 թ.

2. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ Հովհաննես (առանց հայրանունի) (Տեր-Հովհաննիսյան) - ճարտարապետ Բաքվից, կրել է «Հայկազնունի» կեղծանունը, 1910 թվից «Դաշնակցություն» կուսակցության Բաքվի կոմիտեի անդամ:

3. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ Հովհաննես (առանց հայրանունի) - ինժեներ-ճարտարապետ, ընդգրկված է Էջմիածնում «Դաշնակցություն» կուսակցության կենտրոնական ժողովի պատվիրակների ցուցակում: Ցուցակը կազմվել է Էջմիածնի սինոդի դատախազ Ֆրենկելի կողմից, 1906 թվի օգոստոսի 19-ին:

Ցուցակում նշվում է, որ Հովհաննես Քաջազնունին ընտրվել է շամախեցիների կողմից, ժամանել է Թիֆլիսից:

Փաստ. ժամկետը 1906, 1910 թթ.

4. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ (առանց անուն-հայրանունի) - Աղրբեջանում ՌՍՖԽՀ գլխավոր հյուպատոսության քարտուղարի զեկուցման քաղվածքներում Պարսկաստանում 1921 թ. օգոստոսի 28-ից ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցչի անունով հետևյալ նշումը կա. «Նախկին վարչապետը Թեհրանից գրում է Ռուբեն փաշային. «Աշխատե՛ք բոլոր կուսընկերներին ուղարկել հայրենիք ինչ գնով էլ լինի, քաղաքական դրությունը պարզվում է: Հաղթանակը մերն է»»:

Փաստ. ժամկետը 28.08.1921 թ.

5. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ Հովհաննես (առանց հայրանունի) - ինժեներ, Հայաստանի կառավարության նախկին նախարար-ներկայացուցիչ, պատվիրակ Ամերիկայում, դաշնակ:

Փաստ. ժամկետը 11.03.1920 թ.

6. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ (առանց անուն-հայրանունի) - հայտնի դաշնակ «Յապոնի» անունով նամակում ասվում է, որ փետրվարյան ավանտյուրայի ժամանակ բանտից ազատ են արձակվել դաշնակներ, որոնց թվում հիշատակված է Քաջազնունին:

Փաստ. ժամկետը մարտ, 1921 թ.

7. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ Հովհաննես Հովհաննեսի - Ընդգրկված է «-Դաշնակցություն» կուսակցության ընտրացուցակում:

Փաստ. թվական տվյալներն անհայտ են:

8. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ Հովհաննես (Качазнуни/Каджазнуни) - Դաշնակցական խորհրդարանի անդամ:

Փաստ. ժամկետը 1919, 1920 թթ.

9. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ Հովհաննես (Качазнуни/Каджазнуни) - Երևանի «Հայրենիքի փրկության կոմիտեի» անունից առկա է 23.02.1921 թ. «վկայական», որտեղ նշվում է, որ Հովհ. Քաջազնունին դաշնակների խմբով մտել է Ղարաքիլիսա, և նրանց համար հարկ է համապատասխան պայմաններ ստեղծել:

Փաստ. ժամկետը 23.02.1921 թ.

10. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ Հովհաննես (առանց հայրանունի) - «Հայրենիքի փրկության կոմիտեի» կողմից 1921 թ. մարտի 8-ին նշանակվել է՝ հաշվելու համար ավանտյուրայի ժամանակ զոհվածների թիվը:

Փաստ. ժամկետը 1921 թ.

11. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ Հովհաննես (առանց հայրանունի) - անցնում է Թիֆլիսի հայ ազգային համագումարի պատգամավորների ցուցակում որպես «հայկական ընկերությունների» ներկայացուցիչ, դաշնակ:

Փաստ. ամսաթիվը մոտավորապես 1917 թ.

Հայկ. ԽՍՀ ԿՊԱ

Ֆ. 208, գ. 69, թ. 7

Ֆ. 216, գ. 67, թ. 250

Ֆ. 198, գ. 3, թ. 19, 21, 23 և այլն

Ֆ. 200, գ. 720, թ. 96, 97

Ֆ. 113, ցուց. 3, գ. 27, թ. 12, 49, 96

Ֆ. 95, գ. 4, թ. 1711, 1713, 2191, գ. 8, թ. 4428, 4477, 4485,4599, գ. 3, թ. 1490

Ֆ. 37, գ. 2, թ. 18, 26, 40, գ. 34, թ. 44, գ. 28, թ. 43

Ֆ. 222, գ. 10, թ. 3

Հիմքը՝ Հայկ. ԽՍՀ Պետական կենտրոնական արխիվ

Հետաքննչական բաժին

8/224

«13»-ը փետրվարի, 1956 թ.

Հույժ գաղտնի

Օրինակ N2

N 23

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԳՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

Փոխգնդապետ ընկեր [Վ.] Կզարթմյանին

Ի պատասխան մեր N 8/1535-ին՝ 21.09.1955 թվի N 9/364-ին (1955 թ. սեպտեմբերի 22-ին) կից Ձեզնից ստացել ենք մեզ հետաքրքրող Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունու վերաբերյալ արխիվային տեղեկանք, որի համար հիմք են ծառայել.

Հայկ. ԽՍՀ ԿՊԱ

Ֆ. 208, գ. 69, թ. 7

Ֆ. 216, գ. 67, թ. 250

Ֆ. 198, գ. 3, թ. 19, 21, 23 և այլն

Ֆ. 200, գ. 720, թ. 96, 97

Ֆ. 113, ցուց. 3, գ. 27, թ. 12, 49, 96

Ֆ. 95, գ. 4, թ. 1711, 1713, 2191, գ. 8, թ. 4428, 4477, 4485,4599, գ. 3, թ. 1490

Ֆ. 37, գ. 2, թ. 18, 26, 40, գ. 34, թ. 44, գ. 28, թ. 43

Ֆ. 222, գ. 10, թ. 3

Այդ տեղեկանքում հիշատակված որոշ փաստաթղթեր մեզ համար մեծ հետաքրքրություն ունեն, և դրանց պատճենները պետք է կցված լինեն մեր կողմից վերանայվող գործին:

Խնդրում եմ հնարավորություն տալ հետաքննչական բաժնի աշխատակից ընկեր Աղուզումցյանին (հեռ. 53-3-52) նախապես ծանոթանալ Հ. Հ. Քաջազնունու վերաբերյալ փաստաթղթերին, իսկ դրանց պատճենները ուղարկել մեզ՝ գործում ներառելու համար:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ

ՊԱԿ ՀԵՏԱՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

Փոխգնդապետ Ավանեսով

Ճիշտ է: (*Ստորագրված է*)

Ուղարկել 2 օրինակից:

N 24

«23»-ը փետրվարի 1956 թ.

Հույժ գաղտնի

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԱԿ ՀԵՏԱՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
Փոխգնդապետ
ընկեր Ավանեսովին

Կից ուղարկվում են արխիվային պատճենները և Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունու վերաբերյալ քաղվածքները:

ՀԱՎԵԼՎԱԾ. բաղկացած է 6 թերթից:

Հայկ. ԽՍՀ ՆԳՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ, ՓՈԽԳՆԴԱՊԵՏ
(*Ստորագրված է* [Վ.] Կզարթմյան)

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 51-57: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 25

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՊԱՏՃԵՆ

Էջմիածին Երևանից

Նո. 076- 180 բառ

9-135

գաղտնի

28.1

9/3.1921 թ.

Էջմիածնի փրկության կոմիտեին
Պատճենը՝ կայազորապետին

Երևան, 9-ը մարտի վիրավոր զինվորներին օգնելու համար կազմված է հանձնաժողով պարլամենտի նախկին նախագահ Հովհաննես Քաջազնունու նախագահությամբ, 8-ին Երևանում տեղի ունեցավ ճակատ մեկնող եզիդիներից կազմված գնդերի զորահանդեսը: Հավաքվել էր խառը բազմություն, որ խանդավառ ցույցեր արավ եզիդ զինվորների հասցեին, խոսեց եզիդի Ջանկիր[1] աղան, որ յուր զինակիցների անունից խոստացավ առանց թշնամուն հաղթելու, ռազմի դաշտից չվերադառնալ, հայտարարելով, որ մինչև արյան վերջին կաթիլը իրենք բոլորը պատրաստ են պաշտպանել իրենց հայրենիքը: Մոսկվայից ռադիոն հաղորդում է համաձայն Կրոնշտադտից ստացված տեղեկություններին՝ այնտեղ ամբողջ իշխանությունը գտնվում է սպաների ձեռքին, Կրոնշտադտից փախչել ցանկացողներին ձերբակալնում են ապստամբները, նրանց դեմ ռազմական գործողություններ բաց անելու դեպքում ենթադրում են ռմբակոծել չեզոք Ֆինլանդիային, որոնք կստիպեն վերջինիս չհարձակվել Սովետական Ռուսաստանի վրա:

Էսէռների մամուլը հայտարարում է, որ Կրոնշտադտը կենգնած է իրենց կուսակցության տեսակետի վրա. Կադետների «Рупь» թերթը, նկատի ունենալով Կրոնշտադտի դեպքերը, կոչ է անում դադարեցնել բանակցությունները Սովետական Ռուսաստանի հետ վերջինիս ճանաչման և ապրանքի փոխանակության մասին, Ռուսաստանի վերածնման կոմիտեն Կրոնշտադտում ուժեղ ագիտացիա է մղում: Հայաստանի զորահրամանատարի հաղորդագրության 9-ին մարտի Նոր Բայազետի շրջանում մարտի 6-ին Նոր Բայազետի մեր զորամասը կռվից հետո գրավեց Աղզիբիր գյուղը, վերցրինք 45 գերի, գնդացիրներ, փամփուշտներ, ձիեր, հակառակորդի մի մասը փախան սարերը, մյուսը՝ Ալեքսանդրովկա գյուղը, հետապնդումը շարունակվում է, Ախտայի, Բաշաբարանի, Վաղարշա-

[1] Պետք է լինի Ջահանգիր:

պատի շրջաններում հանգիստ է, Ղամարլուի շրջանում հետախուզ-
ների գործողություն է:

Հ Ի Մ Ք . ֆոնդ նո. 7/38 գործ նո. 34 թերթ նո. նո. 43,44,45

ՀԱՅԿ. ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ՊԵՏ
(*Ստորագրված է* Ա. Մկրտչյան)
ԳԱՂՏՆԻ ՖՈՆԴԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ (*Ստորագրված է* ՉԱՍՈՐԻՆԱ)

N 26

20-ը փետրվարի, 1955 թ.
Գաղտնի

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՊԱՏՃԵՆ
21.03.1921 թ. Էջմիածին
Երևանից Կայազորի հայրենիք փրկության կոմիտեի նախագահին
Պատճեն

Երևանից նո. 0213 ուր 200 ա/21/314-20

Մամուլի պրոպագանդի վարչության հաղորդագրություններ Երևան, 21-ը մարտի, *կետ.* կիրակի ամսույս 20-ին Հայրենիքի Փրկության կոմիտեի նախագահ Վրացյանը նախկին նախարարապետներ Քաջազնունու և Օհանջանյանի հետ մեկնեց Ղամարլու: Վերադառնալով Վրացյանը հետևյալ տեղեկությունները տվեց. Ամբողջ ճանապարհին մինչև Ղամարլու մեծ ոգևորությամբ *միջակետ* ճակատ էին մեկնում Զորանոցի կամավորական խմբեր, ժողովուրդը վերադառնում էր քանդված տները վերանորոգելու, գյուղերում բոլշևիկները անօրինակ քանդել են տները, ջարդել գինիներով լի կարասները, թալանել-տարել ամբողջ պարենը միջակետ ավիրել-կտրատել ծառերը, բարբարոսական արարքների մի սոսկալի տեսարան են ներկայացնում բոլոր գյուղերը, մեր զորքերի հաղթական

արշավը խուճապի է մատնված թշնամին որ Ավշար է փախել, մեր մարտիկների տրամադրությունը շատ բարձր է, հաղթանակի մասին ոչ մի կասկած, բոլոր կամավորները հրամանատար Սմբաթը խոստում են տվել ոչ մի զոհողության առաջ կանգ չառնել հաղթելու համար թշնամուն *վերջակետ* զորահրամանատարի շտաբի հաղորդագրության 21 մարտի Ախտայի շրջանում երեկ առավոտը հակառակորդը փորձեր արեց հարձակման անցնել Քաղսի գյուղի մոտից խաճուղի վրայով Սոլակ և Բժնիի ուղղությամբ, նրանց փորձերը մեր հրետանային հրացանային կրակով կասեցված է *կետ* Ղամարլուի շրջանում մեր զորամասերը զարգացնելով իրենց հարձակումը հետապնդումը երեկոյան ժամը 6 գրավեցին Յուվայ Դարխալու, Թազա Դարխալու և Մուսամլու գյուղերը, վերցրին 70 գերի, հակառակորդը նահանջեց դեպի Շիրազլու և Ավշար։

ՎԵՐՋ

ՀԻՄՔ. Ֆոնդ նո. 7/38 գործ նո. 28 թերթ նո. 43-45։

ՀԱՅԿ. ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ՊԵՏ՝
(*Ստորագրված է* ՄԿՐՏՉՅԱՆ)
ԳԱՂՏՆԻ ԲԱԺՆԻ ՖՈՆԴԵՐԻ ՊԵՏ (*Ստորագրված է* ԶԱՍՈՐԻՆԱ)

N 27

«22»-ը փետրվարի 1956 թ.
ք. Երևան
Գաղտնի

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՊԱՏՃԵՆ
ՎԿԱՅԱԿԱՆ

Հայրենիքի Փրկության
Կոմիտէ
23 փետրվարի 1921 թ.

Երևան

նո. 41

Ընկեր Յովի. Քաջազնունին մի խումբ ընկերների հետ մեկնում է Ղամարլուի շրջանը աջակցելու տեղական ինքնապաշտպանության կազմակերպման և օժանդակելու Հայրենիքի Փրկության կոմիտեին:

Հրահանգում ենք բոլոր հաստատություններին ու անհատներին ցույց տալ ընկերոջը ամենալայն աջակցություն:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՆԱԽԱԳԱՀ /ստորագրություն/

Գործերի վարիչ

Ծանոթություն. Վկայականի մեջ Ռուբեն անվան վրա գծված է և թանաքով գրված է Յովի.

Հ Ի Մ Ք. Ֆոնդ 1/37 գործ նո. 2 թերթ 18:

ՀԱՅԿ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ՊԵՏ (*Ստորագրված է* Ա. ՄԿՐՏՉՅԱՆ)

ԳԱՂՏՆԻ ՖՈՆԴԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ (*Ստորագրված է* ԶԱՍՈՐԻՆԱ)

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 58-61: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Հայերեն:

N 28
«20»-ը փետրվարի 1956 թ.
Ք. Երևան

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՔԱՂՎԱԾՔ

Գաղտնի
Սիրելի Եապոն

Քո փետրվարի 26-ին գրած նամակը պատահմամբ ընկավ մեր ձեռքը և ահա աշխատում ենք բավարարել Ձեր հարցերին:

1. Հայաստանի տերիտորիայում ամեն տեղ միաժամանակ բռնկվեց մեծամասնականների դեմ ընդհանուր ապստամբություն դեռ փետրվարի 16-ից, իսկ 18-ին մայրաքաղաքը անցավ մեր ձեռքը: Երևանը գրավելուց հետո կոմունիստները տանելով իրենց հետ 11 թնդանոթ, երկու զրահապատներ, մոտիկ 1500 հետևակ, 50 ձիավոր, մեծ պարենի ու ռազմամթերքի պաշարով փախան դեպի Բեռւք Վեդի: Մենք հետապնդելով գրավեցինք Ղամարլուն և Յուվա գյուղերը, սակայն թշնամին անցնելով հակահարձակման մեզ ստիպեց նահանջելու մինչև Երևան, որի տակ 4 օր տեղի ունեցան ամենակատաղի կռիվներ, որոնք վերջացան մեր փառավոր հաղթանակով: Նոքա նորից քաշվեցին Բեռւք-Վեդի ու այժմ պաշտպանողականի են անցել:

Մենք բռնում ենք Խոր-Վիրապ, Քեչիկ-Վեդի, Բոզբուրուն գիծը, իսկ մեր դեմ թշնամին է, որը արդեն գտնվում է լքված դրության մեջ: Ամեն օր նրանցից փախչում են դեպի մեզ անհատներ ու խմբով սպաներ ու զինվորներ: Մենք բոլոր միջոցները ձեռք ենք առել նրանց վերջացնելու, այդ գործում Ձեր օգնությունը մեզ համար կունենա առաջնակարգ նշանակություն, եթե դուք հարվածեք թշնամուն Չիմաքյանդից ու կապվեք մեզ հետ, մենք սպասում ենք այդ հարվածին, միայն թե դուք չպետք է ուշացնեք, քանի գնում թշնամին

ուշքի է գալիս ու երես է առնում: Ձեր հարվածը թիկունքից, մերը՝ ճակատից, կխորտակե նրան վերջնականապես: Ուրեմն սպասում ենք Ձեզ:

2. Եթե մենք մի քանի ժամ ուշ մտնեինք քաղաքը, բանտի մեր ընկերները ամբողջովին կկոտորվեին, նոքա կարողացել էին կացիններով-սոսկալի տանջանքներով սպասել 30-ից ավելի մեր ընկերներից, որոնցից աչքի են ընկնում 1. Խմբապետ Համազասպը, 2. Արտուշ խանը, 3. Վաղարշակ Գասպարյանը, 4. Գնդապետ Կորգանովը, 5. Կարապետ Իսայիչ Խաչատրյանը, 6. Մակեդոնը, 7. Մուշեղ և Մուրադ եղբայրներին, 8. Ղարսեցի Սամոն և ուրիշ շատերը, որոնք աչքի ընկնող չեն:

Բանտից ազատվեցին՝ Քաջազնունի, Ա. Չիլինգարյան, Համո Օհանջանյան, բժ. Տեր-Դավթյան, Բախշի Իշխանյան, գեներալ Մելիք-Մուրադյան, Վարոս Բաբայան, Ս. Մելիք Յոլչյանը և շատ շատերը:

Դրսի աշխարհից առանձին նորություններ չունենք, Վրաստանում տեղի ունեն կատաղի կռիվներ, Տփղիսին շատ մոտիկ, Բաթումում դուրս է բերված դաշնակիցների դեսանտ: Տաճկական զորքեր են կենտրոնանում Արդահանի և Ախալքալակի ուղղությամբ վրացիներին օգնելու նպատակով: Կրոնշտադտում բռնկվել է մեծ ապստամբություն աջ էսէրների ղեկավարությամբ: Կրոնշտադտը ապստամբների ձեռքն է: Նավաստիները և ամբողջ ռազմանավերը ապստամբների հետն են: Տրոցկին հուսահատական կոչեր է ուղղում կոմունիստներին պայքարի համար: Տաճկաստանի և մեր հարաբերությունները լավ են, հեռու չէ այն օրը, երբ տաճիկ, հայ, վրացի, Ադրբեջան ու Լեռնաստանցիների կոալիցիան գործնականի կանցնի:

Պարզ է մեկ բան, որ Ռուսաստանը հնարավորություն չունի օգ

նական ուժեր ուղարկելու Դիլիջանի վրայով, որովհետև Աղրբեջանում դրությունը նույնպես խախուտ է և ահա մենք պետք է օգտվենք հանգամանքից ու քշենք այդ սրիկաներին մեր երկրի սահմաններից, քանի ուշ չէ:

Ղամարլվի ընդհանուր հրամանատարն է Սմբատը, իսկ Աղբաշ-Դարդալու, Բոզ-Բուբունի թևը Մարտիրոսի ղեկավարությամբ: Մենք Մարտիրոսյանին արդեն զգուշացրել ենք, որ Դարալագյազից մերոնք շուտով դուրս են գալու Չիմանքինդ: Շուտով կդատարկվի Ալեքսանդրապոլը: Էրզրումի մեր ռազմագերիները նույնպես շուտով կվերադառնան:

Ընկերական ջերմ բարևներով:

Սպարապետի շտաբի պետ՝ Գարիգ Սարգիսբեկյան /ստորագրություն/

Երևան

1921 թ. մարտի 11-ին

Հ Ի Մ Ք. Ֆոնդ նո. 40/113 ցուցակ նո. 3 գործ նո. 27 թերթ նո. 14:

ՀԱՅԿ. ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻ ՊԵՏ՝ (*Ստորագրված* ԷՄԿՐՏՉՅԱՆ)

ԳԱՂՏՆԻ ՖՈՆԴԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

(*Ստորագրված* ԷԶԱՍՈՐԻՆԱ)

[ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 62-63: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Հայերեն:

N 29

Պատճեն

ապ-2

8/274

«23»-ը փետրվարի, 1956 թ.

Գաղտնի

Օրինակ N 2

ՀԱՅԱԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԼԱՎԼԻՏԻ ՏՆՕՐԵՆ

Ընկ. Թադևոսյանին

Ելնելով ծագած անհրաժեշտությունից՝ խնդրում եմ տեղեկացնել՝ արդյոք հանվա՞ծ է շրջանառությունից Հովհաննես ՔԱՋԱԶՆՈՒՆՈՒ (դատված 1937 թ.) «Դաշնակցությունը անելիք չունի այլևս» գիրքը (բրոշյուր), և եթե այո, ապա ինչ պատճառով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԱԿ ԲԱԺՆԻ ՊԵՏ

Փոխգնդապետ
(ԱՎԱՆԵՍՈՎ)

Հրապարակված է 2 օրինակից
Օրինակ 1-ը՝ հասցեատիրոջը
Օրինակ 2-ը՝ N 1064 գործին

Ճիշտ է (*Ստորագրված է*)

N 30

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՄԱՄՈՒԼՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Երևան, Լենինի պող., 25,
Հեռ. 18-84
N 25 գ.

«27»-ը փետրվարի, 1956 թ.

Գաղտնի

Օրինակ 1

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸԹՆԵՐ
ՊԱԿ ԲԱԺՆԻ ՊԵՏ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ

ընկ. Ավանեսյանին

23.02.1956 թ. N 8/274-ին

Տեղեկացնում ենք, որ Հովհ. Քաջազնունու «Դաշնակցությունը անելիք չունի այլևս» գրքում հեղինակը փորձ է անում արդարացնել դաշնակների հակահեղափոխական, հակաժողովրդական գործունեությունը, նրանց համարում է հայ ժողովրդի շահերի պաշտպաններ, «հայերի քաղաքական ազատագրության մարտիկներ» (էջ 60):

Հեղինակը գրքում հանդես է գալիս Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման դեմ: Նա հանդես է գալիս Հայաստանում խորհրդային իշխանության սոցիալ-տնտեսական քաղաքականության դեմ:

Գիրքը լի է բոլշևիկյան կուսակցության և խորհրդային իշխանության հասցեին տրվող զրպարտություններով:

Գիրքը պահվում է հատուկ ֆոնդում:

Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր մամուլում

Ռազմական և պետական գաղտնիքների պահպանման գլխավոր վարչության պետ

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է (Ա. Թադևոսյան)

2-րդ բաժնի պետ *ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Է* (Ա. Միրզոյան)

N 31

Պատճեն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26»-ը փետրվարի, 1931 թ.

քաղ. Երևան

Ես՝ Հայաստանի պետքաղվարչության ՅԿՕ [տնտեսական բաժնի] լիազորված ներկայացուցիչ ԱՆԱՆՈՎ Աբգարս, քննելով N 57-ի առնթով քաղաքացիներ Քաջազնունի Հովհաննեսի, Մուշեղ Մելիք-Հայկազյանի և Հմայակ Մելիք-Աղամիրովի մեղադրանքով հետաքննչական գործը՝ հանցագործություն՝ ԽՍՀՄ քրեական օրենսգրքի 154 հոդվածով նախատեսված, և նկատի առնելով, որ նրանց գործողություններում բացակայում է հանցակազմը, ղեկավարվելով քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածի 5-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

Քաղաքացիներ Քաջազնունի Հովհաննեսի, Մելիք-Հայկազյան Մուշեղի և Մելիք-Աղամիրով Հմայակի դեմ հարուցված գործը կարճել և հանձնել արխիվ:

Սույն որոշման պատճենը ուղարկել Հանրապետական դատական բաժնի վարչություն և Հայպետքաղվարչության դատախազին:

Հայպետքաղվարչության տնտեսական բաժնի լիազոր ներկայացուցիչ (*Ստորագրված է*) ԱՆԱՆՈՎ

«ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ»: Հայկ. պետքաղվարչության տնտեսական բաժնի պետի ներկայացուցիչ (*Ստորագրված է*) ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ճիշտ է: ՀԱՅԿ. ԽՍՀ Նախարարների խորհրդին կից ՊԱԿ հետաքննչական բաժնի քննիչ, ավագ լեյտենանտ (*Ստորագրված է*) ԱՂՈՒԶՈՒՄՅԱՆ

Տեղեկանք. Սույն փաստաթղթի բնօրինակը պահպանվում է N 57/1064-55 թ. արխիվային-հետաքննչական գործում:

Ավագ լեյտենանտ (*Ստորագրված է*) ԱՂՈՒԶՈՒՄՅԱՆ

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 64-66: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 32
Տեղեկանք

Ես՝ Աղուզումցյանս, սույն ամսաթվին զանգահարել եմ Ավետիք Իսահակյանի բնակարան՝ նրան հարցաքննության կանչելու նպատակով: Սակայն նրա կինը պատասխանեց, որ նա արդեն վաղուց հիվանդ է, պառկած է ծանր վիճակում, և բժիշկները արգելել են անգամ տանը ընդունելություն:

Հայկ. ԽՍՀ Նախարարների խորհրդին կից
ՊԱԿ Հետաքննչական բաժնի քննիչ,
ավագ լեյտենանտ (*Ստորագրված է*) Աղուզումցյան

27.02.1956 թ.

N 33
Տեղեկանք

Հայկ Հակոբջանի Զարգարյանը սույն գործով չի հարցաքննվել, քանի որ նա մահացել է 1955 թ.:

Հայկ. ԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր
ՊԱԿ Հետաքննչական բաժնի քննիչ,
ավագ լեյտենանտ (*Ստորագրված է*) Աղուզումցյան

28.02.1956 թ.

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 67-68: Վավերացված պատճեն: Ձեռագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 34

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀԱՅԿ. ԽՍՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
Գ ն դ ա պ ետ (ԱՂԵԿՅԱՆ)

«29»-ը փետրվարի 1956 թվական
[Մակագրված է] «Համաձայն եմ
մերժման եզրակացությանը»:
(*ստորագրություն*)

24/XII.56 թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«28»ը փետրվարի 1956 թ. ք. Երևան

Ես՝ Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդին կից Պետական անվտանգության կոմիտեի հետաքննչական բաժնի քննիչ ավագ լեյ

տենանտ Աղուզումցյանս, քննելով քաղաքացի Մարգարիտ Հովհաննեսի Քաջազնունու հայցը՝ նյա հոր գործի վերանայման մասին՝ իրավունքների վերականգնման նպատակով, և դրա հետ կապված՝ քննելով արխիվային-հետաքննչական N 19291/1064 գործը՝ որպես մեղադրանք

Քաջազնունի Հովհաննես Հովհաննեսի, ծնվ. 1868 թ.,
Վրացական ԽՍՀ ք. Ախալքալաքի ծնունդ, հայ,
ԽՍՀՄ քաղաքացի, ինժեներ, մինչև ձերբակալությունը
աշխատող Կոմունալ տնտեսության Ժողովրդական կոմիսարիատի
գիտատեխնիկական խորհրդի գիտական քարտուղար,
բնակվել է՝ հասցե՝ ք. Երևան, Գնունի 1, բն. 61:

ԳՏՆՈՒՄ ԵՄ

Հ. Հ. Քաջազնունին 1937 թվականի հուլիսի 29-ին ձերբակալվել է Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ-ի կողմից և նույն թվի դեկտեմբերի 5-ին Հայկ. ԽՍՀ ՆԳԺԿ Եռյակի կողմից դատապարտվել է պատժի առավելագույն չափի այն մեղադրանքով, որ.

«1893 թվականից եղել է «Դաշնակցություն» կուսակցության անդամ: Դաշնակցական առաջնորդներից մեկը և «Դաշնակցություն» կուսակցության կազմակերպիչներից: Ակտիվ դաշնակցական աշխատանք է վարել, կապված է եղել երևելի դաշնակների հետ: Դաշնակցական կառավարության օրոք եղել է վարչապետ: Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1920 թվականին, ձերբակալվել է և ազատ արձակվել դաշնակների կողմից: Դաշնակցական ավանտյուրայի ճնշումից հետո արտագաղթել է Իրան, վերադարձել 1924 թ.: Ընդհուպ մինչև ձերբակալության օրը շարունակել է մնալ երդվյալ դաշնակ ազգայնամոլ»:

(տե՛ս անձնական գործ 22)

Քաջազնունու՝ առավելագույն պատժի չափի դատապարտման մասին Եոյակի 1937 թ. դեկտեմբերի 5-ի որոշումը ի կատար չի ածվել՝ պայմանավորված նրանով, որ 1937 թ. դեկտեմբերի 11-ին հիվանդության պատճառով (թոքախտ և ծերունական թուլություն) նա տեղափոխվել է Երևանի բանտի հիվանդանոց, ուր մահացել է նույն թվականի դեկտեմբերի 22-ին:

(տե՛ս անձնական գործ 23, ակտ)

Քաջազնունու ձերբակալության և դատապարտման համար որպես հիմք են ծառայել օպերատիվ տվյալները (անձնական գործ 1-3), դատապարտվածի որդու՝ Կարեն Քաջազնունու ցուցմունքները, ինչպես նաև հենց դատապարտյալի 1937 թ. նոյեմբերի 16-ի ցուցմունքները:

(անձնական գործ 4-9, 14-20)

Քաջազնունին 1937 թ. նոյեմբերի 16-ի հարցաքննությանը խոստովանեց իր ակտիվ դաշնակցական գործունեությունը մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հաստատվելը, ցուցմունք էր տալիս, որ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո ձերբակալված է եղել, բայց դաշնակցական ավանտյուրայի ժամանակ դաշնակները նրան բանտից ազատել են, և դաշնակցական ավանտյուրայի ճնշումից հետո դաշնակցական կառավարության այլ անդամների հետ փախել է Իրան: Արտասահմանից վերադարձել է 1924 թվականին և մինչև ձերբակալությունը հակախորհրդային ոչ մի գործունեությամբ չի զբաղվել:

Ցուցմունք տվողները՝ դուստրը՝ Մ. Հ. Քաջազնունին և Գ. Ա. Չուբարյանը, չհերքելով մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը Քաջազնունու դաշնակցական գործունեությունը, պնդում են, որ հետագայում նա չի զբաղվել հակախորհրդային գործունեությամբ, այդ իսկ պատճառով էլ խնդրում են վերանայել գործը և վերականգնել նրա իրավունքները:

Արխիվային-հետաքննչական գործի և սույն ստուգման բոլոր նյութերից նկատելի է, որ Քաջազնունին, իրոք, «Դաշնակցություն» կուսակցության առաջնորդներից և կազմակերպիչներից մեկն է եղել, բազմիցս ընտրվել է այդ կուսակցության Կենտկոմի անդամ, եղել է դաշնակցական կառավարության վարչապետը, իսկ մինչև խորհրդային իշխանության հաստատումն ընկած ժամանակահատվածում՝ դաշնակցական խորհրդարանի նախագահ:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո Քաջազնունին ձերբակալվել է բոլշևիկների կողմից, բայց դաշնակցական ավանտյուրայի (1921 թ. փետրվար-մարտ) ժամանակ Երևան քաղաքը ժամանակավորապես գրաված դաշնակները ազատել են նրան բանտից:

Անձամբ Քաջազնունու ցուցմունքներն այն մասին, որ դաշնակների կողմից բանտից ազատվելուց հետո ինքը փախել է Իրան և հետագայում հակախորհրդային գործունեություն չի ծավալել, ինչպես նաև նրա դատեր՝ Մ.Հ. Քաջազնունու և Գ.Ա. Չուբարյանի ցուցմունքներն այն մասին, որ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո Քաջազնունին հակախորհրդային գործունեությամբ չի զբաղվել, հերքվում են Հայկական ԽՍՀ պետական արխիվում եղած նյութերով:

Այդ նյութերում դիտվում է, որ դաշնակների կողմից բանտից ազատվելուց հետո Քաջազնունին ակտիվ մասնակցություն է ունեցել դաշնակցական ավանտյուրային:

Այսպես, օրինակ՝ հայտնի դաշնակ Յապոնին 1921 թ. մարտի 11-ին ուղարկած իր նամակում դաշնակցական բանակի գլխավոր շտաբի պետ Գ. Սարիբեկյանը[1], նկարագրելով դաշնակցական ավանտյուրայի ընթացքը և խնդրելով ռազմական օգնություն, հատուկ

[1] Պետք է լինի Գ. Սարգիսբեկյան:

նշում է, որ բանտից իրենց կողմից ազատ է արձակվել Քաջազնունին և ուրիշներ: (տե՛ս անձնական գործ 62-63)

Հայկական ԽՍՀ պետական կենտրոնական արխիվում պահպանվել է «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահի ստորագրությամբ 1921 թ. փետրվարի 23-ի վկայական, որտեղ ասվում է. «Ընկեր Յովի. Քաջազնունին մի խումբ ընկերների հետ մեկնել է Ղամարլուի շրջան՝ աջակցելու տեղական ինքնապաշտպանության կազմակերպմանը և «Հայրենիքի Փրկության կոմիտեին» օժանդակելուն:

Առաջարկվում է բոլոր հիմնարկություններին ու անձանց ընկերոջը ցույց տալ ամենայն աջակցություն»: (տե՛ս անձնական գործ 61)

1921 թ. մարտի 21-ի դաշնակցական մամուլի և քարոզչության պահպանված ամփոփագրերում, որ այն ժամանակ ուղարկվել են Էջմիածին՝ «Հայրենիքի փրկության կոմիտեի» կայազորի նախագահին, ասվում է, որ 1921 թ. մարտի 20-ին «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ Վրացյանը նախկին «նախարարապետներ» Քաջազնունու և Օհանջանյանի հետ միասին մեկնել են Ղամարլու, որտեղից վերադառնալով՝ Վրացյանը հայտարարություն է արել (այնուհետև բուն հայտարարությունն է, որի բովանդակությունն ակնհայտորեն հակախորհրդային է՝ ուղղված բնակչության աչքում բոլշևիկներին հեղինակազրկելուն):

(տե՛ս անձնական գործ 60)

Դաշնակցական մամուլի և քարոզչության վարչության մեկ այլ ամփոփագիր՝ 1921 թ. 9-ը մարտի, պարունակում է ակնհայտ զրպարտիչ հայտարարություն Խորհրդային Ռուսաստանի հասցեին, նրանում միևնույն ժամանակ ասվում է, որ վիրավոր զինվորներին օգնություն ցուցաբերելու համար մարտի 9-ին ստեղծվել է հանձնաժողով՝ նախկին վարչապետ Քաջազնունու նախագահությամբ:

(տե՛ս անձնական գործ 58-59)

Այս բոլոր նյութերը խոսում են այն մասին, որ Հ.Հ. Քաջազնունին դաշնակների կողմից բանտից ազատվելուց հետո ղեկավարող ակտիվ գործունեություն է ունեցել դաշնակցական ավանտյուրայում, որը կազմակերպվել էր Հայաստանում Խորհրդային իշխանության տապալման և սեփական տիրապետության հաստատման նպատակներով:

Պետական կենտրոնական արխիվում հայտնաբերվել են նյութեր, որոնք վկայում են այն մասին, որ դաշնակցական ավանտյուրայի ճնշմամբ դեպի Իրան փախուստից հետո Քաջազնունին շարունակել է այնտեղ հակախորհրդային դաշնակցական աշխատանք վարել: Այսպես, օրինակ՝ գոյություն ունի քաղվածք Իրանական Ադրբեջանի ՌՍՖԽՀ Գլխավոր հյուպատոսության քարտուղարի զեկուցումից (1921 թ. 28-ը օգոստոսի)՝ ուղղված Պարսկաստանում ՌՍՖԽՀ լիազորված ներկայացուցչին, որտեղ ասվում է. «Նախկին վարչապետ Քաջազնունին Թեհրանից գրում է Ռուբեն փաշային. «Աշխատե՛ք բոլոր կուսընկերներին ուղարկել հայրենիք ինչ գնով էլ լինի: Քաղաքական դրությունը պարզվում է, Հաղթանակը մերն է»»:

(տե՛ս անձնական գործ 54)

Լինելով արտասահմանում՝ Քաջազնունին հրատարակել է «Դաշնակցությունը անելիք այլևս չունի» գիրքը: Այդ գիրքը 1923 թ. լույս է տեսել Թիֆլիսում: Ինչպես դիտելի է Հայկական ԽՍՀ Գլավլիտի՝ N21(c), 1956 թ. փետրվարի 27-ի նամակից՝ «Դաշնակցությունը այլևս անելիք չունի» գրքում Հովհ. Քաջազնունինին փորձ է անում արդարացնել դաշնակների հակահեղափոխական, հակաժողովրդական գործունեությունը, նրանց համարում է հայ ժողովրդի շահերի պաշտպաններ, «հայերի քաղաքական ազատագրման մարտիկներ»: Հանդես է գալիս Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման դեմ, Հայաստանում խորհրդային իշխանության սո

ցիալ-տնտեսական քաղաքականության դեմ: Ինչպես ասվում է այդ նամակում՝ գիրքը լի է բոլշևիկյան կուսակցության և խորհրդային իշխանության հասցեին ուղղված զրպարտություններով: Այն պահպանվում է հատուկ ֆոնդում: (տե՛ս անձնական գործ 64-65)

Ինչպես 1937 թ. նախնական հետաքննության ընթացքում, այնպես էլ սույն ստուգման ընթացքում արտասահմանից վերադառնալուց հետո ընկած ժամանակահատվածում (1924-1937 թթ.) Քաջազնունու հակախորհրդային գործունեության մասին նյութեր չեն գտնվել: Այդ մասին վկայում է ընդամենը որդու հայտարարությունը՝ տրված 1937 թ., որում նա հայտնում է, որ իր հայր Հովհաննես Քաջազնունին մնում է երդվյալ դաշնակ, և բերում Քաջազնունու կողմից ընտանիքում արված առանձին արտահայտություններ:

Ստուգմամբ պարզվել է, որ 1931 թ. Հովհաննես Քաջազնունու և ուրիշ մի քանիսի դեմ դատական գործ է հարուցվել Հայկ. ԽՍՀ քրեական օրենսգրքի 154-րդ հոդվածով (անտնտեսվարություն), բայց և այնպես 1931 թ. փետրվարի 26-ի որոշմամբ այդ գործը կարճվել է նրանց գործողություններում հանցակազմի բացակայության պատճառով (Հայկ. ԽՍՀ քրեական օրենսգրքի 4-րդ հոդված, 5-րդ մաս):

(տե՛ս անձնական գործ 66)

Ելնելով վերոշարադրյալից, ինչպես նաև առաջնորդվելով 1921 թ. մայիսի 12-ից գործող Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեի դեկրետով (այդ դեկրետի համաձայն՝ 1921 թ. փետրվարի 18-ից հետո հանցանք գործած անձանց վրա չի տարածվում Ռազմահեղափոխական կոմիտեի 1921 թ. ապրիլի 10-ի և 23-ի «Ներման մասին» դեկրետը)՝

ԿԱՐԾՈՒՄ ԵՄ

Համարել. որ Հովհաննես Հովհաննեսի Քաջազնունու իրավունքների վերականգնման համար հիմքեր *չկան*:

Հ. Հ. Քաջազնունու վերաբերյալ N 19292/1064 արխիվային-հետաքննչական գործը ստուգողական նյութերի և սույն եզրակացության հետ միասին ուղարկել Հայկական ԽՍՀ դատախազություն՝ վերջնական վճռի կայացման և հայցվորներին պատասխան տալու համար:

Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր ՊՆԻԿ
հետաքննչական բաժնի քննիչ, լեյտենանտ (*Ստորագրված է*)
Աղուզումցյան

«Համաձայն եմ»
Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր
հետաքննչական բաժնի պետ,

փոխգնդապետ (*Ստորագրված է*) Ավանեսով
[Մակագրված է] «Համաձայն եմ»: *Օհանջանյան*
(ստորագրություն)

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 69-75: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 35

«Հաստատում եմ»
Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ
Արդարադատության երկրորդ դասի պետական
Խորհրդական (*Ստորագրված է*) Ա.Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

14.12.1992 թ.

ՈՐՈՇՈՒՄ

Քաղ. Երևան

«12»-ը դեկտեմբերի 1992 թ.

Հովհաննես Հովհաննեսի (Իվանի) Քաջազնունին ծնվել է 1868 թ. Վրաստանի Ախալքալաք քաղաքում, բարձրագույն կրթությամբ, մասնագիտությամբ ինժեներ, նախքան կալանավորվելը աշխատել է Հայաստանի Հանրապետության [1] կոմունալ տնտեսության ժողովրդական կոմիսարիատի գիտատեխնիկական խորհրդի գիտական քարտուղար: 1937 թ. հուլիսի 28-ին ՀՍՍՀ ՆԳԺԿ պետանվտանգության վարչության նո 6/41 օրդերով կալանավորվել և մեղադրվել է այն բանում, որ 1893 թվականից հանդիսացել է «Դաշնակցություն» կուսակցության անդամ, եղել է նույն կուսակցության ստեղծողներից մեկը, կապ է պահպանել ինչպես Ռուսաստանի, այնպես էլ արտասահմանում գտնվող դաշնակցական կազմակերպությունների և ականավոր գործիչների հետ, մի քանի անգամ ընտրվել է դաշնակցության կուսակցության կենտրոնական կոմիտեի և նրա բյուրոյի անդամ: Հայաստանում դաշնակցական իշխանության հաստատումից հետո ընտրվել է պրիմեր մինիստր, իսկ խորհրդային կարգերի հաստատումից հետո փախել է Իրան, այնտեղից մեկնել Ֆրանսիա, որտեղ սպիտակ վտարանդիների և դաշնակցականների շրջանում ակտի հակախորհրդային աշխատանք է տարել:

Հ. Քաջազնունին խորհրդային միություն է վերադարձել 1924 թ., բնակվել է Երևան քաղաքում, մասնագիտական աշխատանք է կատարել տարբեր գերատեսչություններում, մնալով երդվյալ դաշնակ-ազգայնական*:

---

[1] Պետք է լինի Հայկ. ՍՍՀ:

* Հատկանշական է, որ Հայաստանի անկախացումից հետո նացիոնալիստ («ազգայնամոլ») հասկացությունը փոխակերպվել է «ազգայնասերի»:

ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի Եռյակի 5.12.1937 թ. որոշմամբ Քաջազնունին, վերը շարադրված գործունեության համար, առանց քրեական օրենսգրքի որևէ հոդվածով նրա մեղադրանքը որակելու, դատապարտվել է գնդակահարության: Հ. Քաջազնունու նկատմամբ դատավճիռն ի կատար չի ածվել, մեկուսարանի հիվանդանոցի բժիշկների կողմից 15.01.1938 թ. ակտ է կազմվել, որ նա 22.12.1937 թվականին հիվանդանոցում մահացել է տուբերկուլյոզով տառապելու և գրիպով հիվանդանալու պատճառով:

Առաջադրված մեղադրանքում Հովհաննես Քաջազնունին իրեն մեղավոր չի ճանաչել և նշել է, որ ինքը հանդիսացել է դաշնակցական կուսակցության հիմնադիրներից և ղեկավարներից մեկը, ձգտել է անկախ Հայաստանի ստեղծման և Հայաստանում դաշնակցական կառավարության հաստատումից հետո ընտրվել պրիմեր մինիստր:

Քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Հովհաննես Քաջազնունին, լինելով հայրենասեր, իր գործունեության ընթացքում պայքարել է բոնակալության դեմ՝ հայ ժողովրդի իղձերը իրականացնելու համար, նրան վերագրված մեղադրանքները իրենց մեջ հանցագործության հատկանիշներ չեն պարունակել, նա բռնադատվել է իր իսկ հարազատ, կոմերիտական որդու զրպարտիչ հաղորդման հիման վրա:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր.-ի 5-րդ հոդվածի 2-րդ կետով:

ՈՐՈՇԵՑԻ

Հովհաննեսի Հովհաննեսի (Իվանի) Քաջազնունու նկատմամբ քրեական գործը կարճել հանցակազմի բացակայության պատճառով, նրան համարել արդարացված և ռեաբիլիտացված:

Ազգային անվտանգության մարմիններում

քննության վրա հսկող բաժնի դատախազ (*Ստորագրված է*) Ա. Վ. Թնոսյան

«Համաձայն եմ»

ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալ (*Ստորագրված է*) Ռ. Ս. Պողոսյան

N 37

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

14.12.1992 թ. N 13-2-92-92

ՏԵՂԵԿԱՆՔ

Հովհաննես Հովհաննեսի (Իվանի) Քաջազնունին ծնվել է 1868 թ. Վրաստանի Ախալքալաք քաղաքում, բարձրագույն կրթությամբ, մասնագիտությամբ ինժեներ, նախքան կալանավորվելը աշխատել է Հայաստանի Հանրապետության կոմունալ տնտեսության ժողովրդական կոմիսարիատի գիտատեխնիկական խորհրդի գիտական քարտուղար: 1937 թ. հուլիսի 28-ին ՀՍՍՀ ՆԳԺԿ պետանվտանգության վարչության նո 6/41 օրդերով կալանավորվել և մեղադրվել է այն բանում, որ 1893 թվականից հանդիսացել է «Դաշնակցություն» կուսակցության անդամ, եղել է նույն կուսակցության ստեղծողներից մեկը, կապ է պահպանել ինչպես Ռուսաստանի, այնպես էլ արտասահմանում գտնվող դաշնակցական կազմակերպությունների և ականավոր գործիչների հետ, մի քանի անգամ ընտրվել է դաշնակցություն կուսակցության կենտրոնական կոմիտեի և նրա բյուրոյի անդամ: Հայաստանում դաշնակցական իշխանության հաստատու-

մից հետո ընտրվել է պրիմեր մինիստր, իսկ խորհրդային կարգերի հաստատումից հետո փախել է Իրան, այնտեղից մեկնել Ֆրանսիա, որտեղ սպիտակ վտարանդիների և դաշնակցականների շրջանում ակտիվ հակախորհրդային աշխատանք է տարել:

Հ. Քաջազնունին խորհրդային միություն է վերադարձել 1924 թ., բնակվել է Երևան քաղաքում, մասնագիտական աշխատանք է կատարել տարբեր գերատեսչություններում, մնալով երդվյալ դաշնակ-ազգայնասեր:

ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի եռյակի 5.12.1937 թ. որոշմամբ Քաջազնունին, վերը շարադրված գործունեության համար, առանց քրեական օրենսգրքի որևէ հոդվածով նրա մեղադրանքը որակելու, դատապարտվել է գնդակահարության: Հ. Քաջազնունու նկատմամբ դատավճիռն ի կատար չի ածվել, մեկուսարանի հիվանդանոցի բժիշկների կողմից 15.01.1938 թ. ակտ է կազմվել, որ նա 22.12.1937 թվականին հիվանդանոցում մահացել է տուբերկուլյոզով տառապելու և գրիպով հիվանդանալու պատճառով:

Առաջադրված մեղադրանքում Հովհաննես Քաջազնունին իրեն մեղավոր չի ճանաչել և նշել է, որ ինքը հանդիսացել է դաշնակցական կուսակցության հիմնադիրներից և ղեկավարներից մեկը, ձգտել է անկախ Հայաստանի ստեղծմանը և Հայաստանում դաշնակցական կառավարության հաստատումից հետո ընտրվել պրիմեր մինիստր:

Քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Հովհաննես Քաջազնունին, լինելով հայրենասեր, իր գործունեության ընթացքում պայքարել է բռնակալության դեմ՝ հայ ժողովրդի իղձերը իրականացնելու համար: Նրան վերագրված մեղադրանքները իրենց մեջ հանցագործության հատկանիշներ չեն պարունակել, նա բռնադատվել է իր իսկ հաբազատ, կոմերիտական որդու միակ զրպարտիչ հաղորդման հիման վրա:

Հանրապետության դատախազությունը 12.12.1992 թ. որոշմամբ Հ. Քաջազնունուն արդարացրել և ենթարկել է ռեաբիլիտացիայի։

Ազգային անվտանգության մարմիններում

Քննության վրա հսկող բաժնի դատախազ (*Ստորագրված է*) Ա. Վ. Թևոսյան

ՀԱԱ, ֆ. 1191, ց. 16, գ. 2083, թ. 77-78: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Հայերեն:

Թարգմանությունը՝ Սիրանուշ Գ. Հովհաննիսյանի

Հովի. Քաջազնունու որդու՝ Կարեն Քաջազնունու մատնագիրը

4

Уважаемый тов. Мелик-Осипов!

В течение последних 3-х лет (25, 26 и 27 гг) я жил с семьёй своего отца Ов. Качазнуни. В настоящее время я уезжаю из Еривани порывая с семьёй. Считаю своим комсомольским долгом информировать о всем том что я знаю

1. Кто бывал у него. Систематически, не реже одного раза в неделю приходил к нему д-р. Гр. Сагиян, его старый товарищ еще по Баку. Раньше он был дашнаком - это я никто не знаю точно. Кроме него систематически у него никто не бывал. Раза 3-4 бывал Ив Исаакян. Только же по приезде из Парижа к нему пришел Акоп Кочарян. О нем Качазнуни отзывался как о дуракке. После он перестал ходить к нему. Вместе с Исаакяном несколько раз приходил Дереник Демирчян. Один раз (весною этого года) вместе с Исаакяном пришел Давид Ананун. С этим последним Качазнуни отдельно встречался весною 1925 г. когда оба они (и ряд других лиц) обедали у Хан-Давид. Об Анануне Качазнуни отзывался так: у него много недостатков, но он мне нравится потому что он армянин ("Ну бирр ки"). Один раз я был у него года в Тер-Станов (б. нач. военной школы). Несколько раз бывал инж. Ованян. После того как Качаз

куда вы избран предс. Техн. С-ва Армении. У нас раза 2-3. по вечерам собиралась группа людей. ~~он мне~~ в количестве 5-7 чел. Он говорил что это заседание Совета Техн. С-ва. Из бывавших на этих заседаниях мне были знакомы вышеупомянутый инж. Иванян и инж. Гаспарян (последний предс. Стр.-Техн. Ком. Экосо.) Остальные мне не были знакомы, были все в интересах формах. Вот - насколько я помню — все кто у него бывали в течение этих лет.

2. Переписка. Письма он получал редко. Большей частью из заграницы. На конвертах большинства из них стояла фамилия Шейхманян. Лично адресовывал он свои ответные письма. Были 2-3 письма из Америки. Внутренней переписки — кроме писем своим летом в Дилижан — у него никакой не было.

3. День свой он проводил большей частью вне дома. Днем на работе. После обеда ложился спать на 1ч.-2ч. После уходил и возвращался с 8-9ч. часа 11ч. По его словам он уходил: в Университет (лекции), занятия по составлению техн. словаря (совместно с Иджаряном и Тонянсом), заседания (Госплан, РКИ, Университет и др.). Впрочем проверить это не составляет особого труда. В свободные вечери он занимался, большей частью писал.

Я просматривал эти писания: все они были технического характера (конечно те, что попадали мне в руки).

А В первое время я мог совершенно свободно наблюдать за ним и за всей семьей. Но потом — после одной бестактности допущенной мною — они стали относиться ко мне недоверчиво.

С Саиляном Казазяном — в моем присутствии редко говорили на политические темы. Тоже и с другими своими гостями. Много чаще — почти ежедневно говорил он со мною, т.к. его политическая информация — конечно та, которую он показывал — мне ясна.

По своей идеологии он — чистейший буржуа. К советской власти относится враждебно. Отрицает какие либо успехи в деле хоз. строительства. Говорит, что коммунисты с каждым днем все больше убеждаются в невозможности идти дальше при таких условиях. Говорит что мы уже капитулируем перед внутренним капиталом (частным) и иностранным. В области внешней политики считает, что мы хотим войны, что мы навязываем войну европейским державам, что они — в частности Англия не хотят войны, а мы хотим ей навязать ее. Ибо — „вы зашли в тупик, вам некуда больше идти и вы дума-

сте, что вас спасет мировая революция которой вы хотите добиться при помощи войны." Нашей статистике он не верит. Нашу национальную политику он считает лицемерной, маневром. Одним словом во всех вопросах он занимает в отношении нас отрицательную позицию. Несколько его фраз которые я запомнил достаточно его характеризуют:

1. "Я считаю что письмо Зиновьева подлинное. Ибо это сказал Черчилл, а английский дворянин лгать не может.

2. "В деревне мы должны дать развиваться кулаку.

3. "Я за вхождение Армении в СССР, ибо это ей выгодно. Но я предпочел бы что бы она была английской колонией, ибо это было бы еще выгоднее. И т.д.

Но вместе с тем в нем есть одна черта которую очень трудно понять. Для него — по его словам — громадную роль играет гражданство данной страны. Т.к. он гражданин СССР, то он видит в этом ряд вытекающих для себя обязательств. Говоря об СССР, он всегда говорит „мы", „на:" что иногда выходит довольно комично. Он считает что каждый гражданин СССР независимо от своих политических убеждений должен защи-

щать свою страну при всех и всяческих обстоятельствах. Так однажды он спросил свою старшую дочь - Рачик - что если б ее руки попал бы секретнейший военный документ Красной Армии. Она ответила "Мне ничего не стоило бы передать его, напр., англичанам" "Ты лжешь!" сказал Казазян. Она настаивала. Тогда он - взбешенный до последней степени сказал: если ты это сделаешь, то знай - я тебя собственноручно убью!

Таким образом в нем странным образом соединяются эти два качества: враждебное отношение к большевикам и какое мистическое понимание "гражданства" обязанностей гражданина.

Несколько слов должен сказать о своей старшей сестре - Рачик. Я не знаю ведет ли она сейчас у нас контр. революционную работу или нет. Но я твердо уверен, что она идеологически - самый подходящий материал для такого рода деятельности.

Во первых - у нее темное прошлое; в 18-19 г. она сидела в ЧК (на Северном Кавказе), судилась, но во время Серокинского мятежа все дела ее подвергнись уничтожению и ее выпустили за отсутствием материалов.

Во вторых она - насыщена ненавистью

к рабочим „вообще" и к коммунистам в частности. Кроме того она сама по себе будучи беспринципным человеком способна на все — на шпионаж, террор, подлог — одним словом на все что может навредить нам. На мелкую работу она не способна. И если она сейчас ничего не делает, то вследствие своей лени, инертности, апатии, пассивности. Малейшая политическая активность ее обязательно выльется в контр-революционные формы. Ее надо взять на мушку.

Об остальных членов моей семьи ничего не могу сказать: мать (ей 57 л.), брат (Рубен) и сестра (Марго) совершенно близки к нам и ни на какие контр-революционные действия не способны.

Если какой либо вопрос я недостаточно освещал, то я могу дать дополнительные сведения.

Эти несколько дней я пока в Эривани. Если я понадобился то меня можете вызвать через ЭК ЛКСМ.

Карен Кадальян
Член ЛКСМ.

22

Выписка из протокола № 49

Заседания Тройки Н. К. В. Д. Армянской ССР

5 декабря 1937 г.

Слушали:	Постановили:
38. Дело 4 Отдела УГБ НКВД АРМ ССР № 19291, по обвинению КАЧАЗНУНИ Оганеса Оганесовича, 1858 г. рожд., м. г. Ереван, служащий. Обвиняется в том, что состоял членом партии "дашнакцутюн" с 1893 г. Один из дашнакских лидеров и организаторов партии "дашнакцутюн". Вел активную дашн. работу, был связан с видными дашнаками. При дашнаправительстве премьер министр. После советизации Армении, в 1920 г. был арестован и освобожден дашнаками. После подавления даш. авантюры, эмигрировал в Иран, вернулся в 1922 г. По день ареста продолжал оставаться убежденным дашнаком-националистом.	КАЧАЗНУНИ Оганеса Оганесовича - РАССТРЕЛЯТЬ, лично ему принадлежащее имущество - конфисковать.

Верно: Секретарь Тройки НКВД Армянск. ССР

23

Акт

Закл. Качазнуни Оганес Оганесович 70 лет поступил в ереванскую тюремную больницу 11/XII 1937 г. с туберкулезом легких и старческой слабостью. Будучи в больнице получил прогрессирующее вспоминание легких 22/XII 1937 г. Умер 15/I ф. в 6 часов.

Диагноз: Туберкулез легких и грипп.

Гл. врач тюрьмы Шахмуратян

15/I 1938 г.

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արխիվային նյութեր

1.1. Հայաստանի ազգային արխիվ

ֆ. 1, ց. 1, գ. 11, գ. 39, գ. 43, գ. 122, ց. 2, գ. 75, ց. 3, գ. 1, գ. 6, գ. 7, գ. 11, գ. 14, գ. 14ա, գ. 102, ց. 4, գ. 13, գ. 19, գ. 51, ց. 5, գ. 8, գ. 22, գ. 44, ց. 6, գ. 5, գ. 11, գ. 13, ց. 7, գ. 1, գ. 27, գ. 82, գ. 84, գ. 108, ց. 8, գ. 8, գ. 65:

ֆ. 4, ց. 2, գ. 1218:

ֆ. 48, ց. 39, գ. 26, գ. 29:

ֆ. 91, ց. 2, գ. 6:

ֆ. 113, ց. 3, գ. 33, գ. 53, գ. 308, գ. 405, գ. 416, ց. 5, գ. 56:

ֆ. 114, ց. 2, գ. 79, գ. 166:

ֆ. 121, ց. 1, գ. 38, գ. 197:

ֆ. 200, ց. 1, գ. 16:

ֆ. 403, ց. 1, գ. 20:

ֆ. 488, ց. 1, գ. 27, գ. 251, գ. 467:

ֆ. 571, ց. 1, գ. 2, գ. 10, գ. 13, գ. 16, գ. 57, ց. 2. գ. 5, ց. 11, գ. 2:

ֆ. 1021, ց. 2, գ. 1406, գ. 1411:

ֆ. 1022, ց. 3, գ. 275, ց. 5, գ. 217:

ֆ. 1191, ց. 1, գ. 78, ց. 9, գ. 2295, ց. 13, գ. 67, ց. 16, գ. 2082, գ. 2083, գ. 2084, ց. 18, գ. 5, ց. 19, գ. 2, գ. 9, գ. 10:

ֆ. 1422, ց. 1, գ. 22:

ֆ. 1457, ց. 1, գ. 18, գ. 185, գ. 199, գ. 208, գ. 209, գ. 211, գ. 213, գ. 214, գ. 220, գ. 224, գ. 226, գ. 229, գ. 232, գ. 190, գ. 208, ց. 2, գ. 10:

ֆ. 4033, ց. 2, գ. 1187:

1.2. Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվ

ֆ. 2, ց. 1, գ. 16404, ֆ. 85, ց. 14, գ. 117, գ. 118:

1.3. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Հ. Քաջազնունու ֆոնդ, գ. 161, թ. 2:

2. Փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ

1. Գարեգին Ա Հովսեփյան, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, գլխ. խմբ. Ա. Վիրաբյան, կազմող, Գ. Ավագյան, հ. Ա, Ե., 2017:
2. Հ.Ց. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատ. խմբագիր և կազմող Ղազախեցյան Վ.Ն., Ե., 1999:
3. Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, պատ. խմբագիրներ՝ Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Ե., 2000:

4. Հայկ. ՍՍՌ օրենքների, Գերագույն սովետի նստաշրջանների հրամանագրերի և Հայկ. ՍՍՌ կառավարության որոշումների ժամանակագրական ժողովածու (1920 թ. նոյեմբեր – 1938 թ. դեկտեմբեր), Ե., 1963:
5. **Ղազախեցյան Վլ., Հ.Յ.** Դաշնակցությունը խորհրդային իշխանության պայմաններում, (տե՛ս Հ.Յ. Դաշնակցության հիմնադրման 115 և 120-ամյակներին նվիրված գիտաժողովների նյութեր), Ե., 2011, «Հայ Դատ» մատենաշար, թիվ 3, էջ 67–68:
6. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԳ, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմող **Մ. Բեհրուդեան**, Ե., 2005:
7. Великая Октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении (сборник доку ментов), Е., 1957.

3. Գրականություն

1. **Աբով Գ.**, Դաշնակցությունը անցյալում և հիմա, Ե., 1929:
2. **Աղոնց Ն.**, Հայկական հարց, հ. Ա, Ե., 1996:
3. **Ալիխանյան Ս.Տ.**, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917–1921 թթ.), Ե., 1966:
4. **Այվազյան Մ.**, Ովքեր են սպանել Զեմալ փաշային, Ե., 2016:
5. **Ատենյան Ս.**, Ո՞ւր է ելքը, Նոր-Նախիջևան, 1920:
6. **Բարսեղեան Ս.**, Ինչպե՞ս կը գրեն մեր նորագոյն պատմությունը, Պ. Այրեա, 1948:
7. **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները (1917–1923), Ե., 1999:
8. **Գասպարյան Դ.**, Ակսել Բակունց, կյանքը և ստեղծագործությունը, Ե., 2009:
9. **Դալլաքյան Կ.Լ.**, Ակնարկներ սիյուռքահայ հասարակական մտքի պատմության (1920-ական թվականներ) Ե., 1994:
10. Դաշնակցական տերրորիստների գործը (Նյութեր Մ. Խուշոյանի տերրորիստական սպանության դատավարությունից), Ե., 1927:
11. **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն (յուշեր 1890-էն 1940), Ե., 2003:
12. **Դարբինեան Ռ.**, Մեր պատասխանը Յ. Քաջազնունիի, Պոսթրն, 1923:
13. **Դոլուխանյան Լ.**, Հովհաննես Քաջազնունին՝ ճարտարապետ, Ե., 1997:
14. **Զէյթլեան Ս.**, Հայ կնոջ դերը հայ յեղափոխական շարժման մէջ, Լոս Անճելես, Քալիֆորնիա, 1992:
15. **Զոհրաբյան Է.Ա.**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տեղությունները, Ե., 1997:
16. **Զոհրաբյան Է.Ա.**, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները 1920–1922 թթ., Ե. 1979:
17. **Թորոսեան Ս., Գերասիմ.**, Ինչո՞ւ հարաժարվեցինք, Բարիզ, 1926:
18. **Իրազեկ Հ.(Յ)**, Մոտիկ անցեալից, Պէյրութ, 1956:
19. **Լազեան Գ.**, Հայաստան և Հայ Դատը, Ե., 1991:
20. **Լենին Վ.Ի.**, Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ), հ. 44, Ե., 1982; հ. 45, Ե., 1983:

21. Լուկաշին Ս. (Սրապիոնյան). Հոդվածներ, զեկուցումներ, նամեր, Ե., 1986:
22. Խաչատրյան Ռ.Հ., Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից, Ե., 1960:
23. Կարապետյան Հ.Ն., Մեծ այպբարի մարդիկ. Սարգիս Կասյան, Սահակ Տեր-Գևորգիանյան, Գևորգ Աթաբեկյան, Ե., 1963:
24. Կարինյան Ա., Նացիոնալիզմի «նոր դիրքերը», Մոսկվա, 1929:
25. Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը, Ե., 1999:
26. Հ.Յ. Դաշնակցությունը ԽՍՀՄ Արտակարգ հանձնաժողովի և Պետական քաղաքական վարչության գաղթերերցումներում (1920-ական թթ.), փաստաթղթերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ պրոֆ. **Ղազախեցյան Վ.Ն.**, Ե., 2016:
27. Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Ե., 2010:
28. Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական դաշնակցությունները 1918–1920 թթ., Ե., 2005:
29. Հակոբյան Ա., ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Ե., 2014:
30. Հակոբյան Ա., Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ), Ե., 2016:
31. Հակոբյան Արշ., Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ., Ե., 1948:
32. Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Ե., 1967:
33. Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922–1929 թթ.), Ե., 2008:
34. Հայաստանի Կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Ե., 1967:
35. Հայաստանի Կոմունիստական (բ) կուսակցության խնդիրները իդեոլոգիական ֆրոնտում, Ե., 1929:
36. Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), Ե., 2000:
37. Հայաստանում Սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920–1922 թթ.), Ե., 1987:
38. Հայոց պատմություն, հ. 4, գիրք 1-ին, խմբ. նախագահ **Վլ. Բարխուդարյան**, Ե., 2010:
39. ՀԿ(բ)Կ խնդիրները իդեոլոգիական ֆրոնտում (ԿԿ-ի 1928 թ. նոյեմբերյան պլենումի որոշումները), Ե., 1929:
40. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Ե., 1960:
41. Հովհաննիսյան Աշոտ, Դաշնակցության առիթով, Մոսկվա, 1929:
42. ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների խորհուրդների առաջին համագումարը (արձանագրություն), Ե., 1922:
43. ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարիատների 1920–1922 թթ. հաշվետվությունը, Յեր., 1923:
44. Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920–1940 թթ., Ե., 2006:

45. **Ղազարեան Ա.**, Ազատութեան ուղին և հայի քաղաքական վարքագիծը. Թէհրան, 1924:
46. **Ղազարեան Ա.**, Հ.Յ. Դաշնակցութեան արդի քաղաքականութիւնը. Թէհրան, 1928:
47. **Ղազարեան Ա.**, Մոմենտոր պատանեաց է, Թէհրան, 1925:
48. **Մանդալյան Թ.**, Մայիսյան ապստամբությունը, Ե., 1929:
49. **Մանուկյան Ա.**, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920–1953 թթ., Ե., 1999:
50. **Մանուկյան Ա.**, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920–1940 թթ., Ե., 2002:
51. **Մանուկյան Ա.Ա.**, Քաղաքական կուսակցությունների լուծարումը Խորհրդային Հայաստանում 1920-ական թթ., (սեղմագիր), Ե., 2012:
52. **Մարենց.** Հայկական սմենովեխականության դեմքը, Յեր., 1928:
53. **Մարտունի Ալ.**, Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924:
54. **Մյասնիկյան Ալ.**, Երկեր, 5 հատորով, հ. 5, Ե., 2007:
55. **Մնացականյան Ա.Ն.**, Ընդդեմ պատմության դաշնակցական նենգափոխության, Ե., 1976:
56. Յուշամատեան ՀՅԴ, Այրոմ-ատյաս, հատ. Բ, Լոս Անճելըս, 2001:
57. Նոսիկին շարքային դաշնակցականների համահայաստանյան համագումարի արձանագրությունները, (Ստենոգրաֆիական հաշվետվություն), 20–23 նոյեմբերի 1923 թ., Ե., 1923:
58. **Նավասարդեան Վ.**, Հ.Յ. Դաշնակցության անելիքը (մտքեր և հուշեր), Գահիրե, 1924:
59. **Նավասարդյան Վ.**, Հ.Յ. Դաշնակցութեան «լիկվիդացիան» (բոլշևիզմի սևանկութեան առիթով), Գահիրե, 1924:
60. **Ներկարարյան Վ.Ն.**, Հայաստանի կոմունիստական պարտիայի 3-րդ համագումարը (1924 թ. մայիս), Ե., 1958:
61. **Ներսիսյան Ա.**, Կարո Սասունի, Ե., 2004:
62. **Չալխուշեան Գր.**, Ինչ էր եւ ինչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1923:
63. Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հ. Դ, Աթէնք, 1995:
64. **Ս. Կասյանի** Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928:
65. **Սասունի Կ.**, Փետրուարեան ապստամբութիւնը, Պէյրութ, 1970:
66. **Սիմոնյան Հ. Ռ.**, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Ե., 1991:
67. **Սիմոնյան Հր.**, Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Ե., 1996:
68. ՍՄԿԿ համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, հատ. 2, (1917–1922), Ե., 1986:
69. ՍՄԿԿ պատմություն, Ե., 1981:
70. **Սուքիասյան Համ.**, Ա. Ահարոնյանի նամակ-զեկուցագրերի հրատարակման հարցը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ), (տե՛ս **Ահարոնյան Ավետիս**: Գիտաժողովի նյութեր, Ե., 2017, էջ 363):
71. **Ստալին Ի.Վ.**, Երկեր, հ. 12, Ե., 1949:
72. Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրեա. **Խառատյան Հ.** և ուրիշներ, Ե., 2015:

73. Սուքիասյան Գ., Համազասպ Սրվանձտյանց, Ե., 2016:
74. Վրացեան Ս., Խարխապումներ, Պոսթըն, 1924:
75. Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, դէպքեր, դէմքեր, ապրումներ, հ. Ե., Բէյրութ:
76. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993:
77. Տասնապետեան Հ., Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. ժողով (1890–1924), Աթէնք, 1988:
78. Քաջազնունի Հովհ., Հ.Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Ե., 1994:
79. Քաջազնունի Յ., Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի, Պուրրէշ, 1923:
80. Քարտաշյան Ա., Հայաստանի դատախազության պատմության էջերից, Ե., 2009:
81. Агабеков Г.С., Записки чекиста, Париж, 1930.
82. Верт Никола, История Советского государства 1900–1991, М., 1992.
83. Галоян Г.А., Рабочее движение и национальный вопрос, Е., 1969.
84. Голиков Давид, Тайные операции ВЧК, М., 2008.
85. Документы внешней политики СССР, т. 2, М., 1958, т. 3, М., 1959.
86. История Грузии, т. III, Тб., 1968.
87. История Коммунистической Партии Советского Союза, отв. ред. Безбородов А.Б., М., 2014.
88. История России XX век. (1894–1939), отв. ред. Зубов А.Б., М., 2009.
89. История Советской Конституции в документах 1917–1956, М., 1957:
90. Квашонкин А.В., Советизация Закавказья в переписке большевистского руководства 1920–1922 гг., М., 1997.
91. Компартия Армении в цифрах и документах, 1920–1980, Е., 1980:
92. Конституция (Основной закон) Российской Социалистической Федеративной Советской Республики, М., 1918.
93. Непролетарские партии России, уроки истории, под. ред. И. Минца, М., 1984.
94. Оганесян Эд., Век борьбы, Е., 2010.
95. Павлов Д.Б., Большевистская диктатура против социалистов и анархистов 1917 – середина 1950-х годов, М., 1999.
96. Политические партии России. История и современность, под ред. проф. Завелева А.И., М., 2000.
97. Совершенно секретно. Лубянка-Сталину о положении в стране (1922–1934 гг.). М., 2001, часть 1, т. I, (1922–1923 гг.), часть 2, т. 2, М., 2001.
98. Советская историческая энциклопедия, т. 13, М., 1971.
99. Хейфец А.Н., Советская дипломатия и народы Востока, 1921–1927 гг., М., 1966.
100. Щетинов Ю.А., История России XX век, М., 1999.

4. Հոդվածներ

1. Ազատյան Հ., Դաշնակցության դասակարգային բնույթը («Նոր ուղի», 1929, թիվ 1–2):

2. **Բզնունի Ա.**, Հայկական «Սմենավեհական» («Նոր ուղի», 1931, գիրք 4):
3. **Կարինյան Ա.**, Հայկական ֆաշիզմի նորագույն «իմաստասիրությունը» («Լենինյան ուղի», 1928, թիվ 1–2):
4. **Կարինյանի Ա.**, Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, «Զակկինգա», 1926:
5. **Կիրիմյան Ա.**, ՀՍԽՀ Արտակարգ հանձնաժողովի 1923 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակաշրջանի ամփոփագրերը Խորհրդային Հայաստանի իրավիճակի մասին // (ԲՀԱ, Ե., 2013, թիվ 1):
6. **Հարությունյան Ա.**, Հայ սպաները Ռյազանի համակենտրոնացման ճամբարում 1920–1923 թթ. («ՎԷՄ», Ե., 2016, (ապրիլ-հունիս), թիվ 2 (54):
7. **Հարությունյան Ա.Ա.**, Հ.Յ. Դաշնակցության մեծ դատավարության թղթածրարները, Հ. Բաջագնունու դատական գործը, «ՎԷՄ», Ե., 2010, հոկտեմբեր-դեկտեմբեր, N 4(32):
8. **Հովհաննիսյան Ա.**, Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը, «Նորք», Ե., 1923, գիրք 3, ապրիլ- սեպտեմբեր:
9. ՀՍԽՀ Արտակարգ հանձնաժողովի 1923 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակաշրջանի ամփոփագրերը Խորհրդային Հայաստանի իրավիճակի մասին, («Բանբեր Հայաստանի արխիվների», 2013, թիվ 1):
10. ՀՍԽՀ Արտակարգ հանձնաժողովի տեղեկատվական գործունեությունը 1921 թ. հուլիս-դեկտեմբեր ժամանակաշրջանում, կազմեցին՝ **Ա. Վիրաբյան, Ա. Կիրիմյան** (ԲՀԱ, Ե., 2017, թիվ 125):
11. ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 2, (1921 թ. ապրիլի 2 – 1921 թ. օգոստոսի 1), Էջմիածին, 1921:
12. ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 1–2, Էջմիածին, 1921:
13. ՀՍԽՀ դեկրետների և վորոշումների հավաքածու, 1922 դեկտեմբերի 10, թիվ 21, Յեր., 1922:
14. **Ղազախեցյան Վլ.**, Հայ սպաների աքսորը 1920–1921 թթ., (ԲՀԱ, Ե., 2003, թիվ 2:
15. **Ղազախեցյան Վլ.**, Չեկայի գործունեության առաջին տարին Հայաստանում (ԲՀԱ, Ե., 2011, թիվ 1:
16. **Ղազարեան Ա.**, Հ.Յ. Դաշնակցութեան արդի բաղաքականութիւնը, («Նոր գաղափար», Ա տարի, Բ մաս, Թէհրան, 1927):
17. **Մուրադյան Դերենիկ**, Հովհաննես Բաջագնունու ողբերգությունը. հիշողություններ և խոհեր, «Երկիր», ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի պաշտոնաթերթ, Ե., 3 մարտի 2006 թ., N 6:
18. **Զուբար Ե.**, Դաշնակցությունը սպեցիֆիզմի դրոշի տակ («Լենինյան ուղի», 1928, թիվ 11):
19. **Ջամալեան Ա.**, Յ. Բաջագնունին և Դաշնակցութիւնը, («Հայրենիք», հունվար 1924, (Բ տարի), թիվ 3):
20. **Չշրաֆյան**, Հոկտեմբերյան հեղափոխությունը և Դաշնակցությունը («Լենինյան ուղի», 1928, թիվ 10):

21. Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, 1925, Գ տարի (նոյեմբեր), թիվ 1:
22. Սուքիասյան Հ., 1921 թ. փետրվարի 18-ին նախորդած ձերբակալությունների փաստաթղթերը («ՎԷՄ», Ե., 2011, հունվար-մարտ, թիվ 1 (33)):
23. Վիրաբյան Ա., Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալման մասին // Բանբեր Հայաստանի արխիվների (ԲՀԱ), Ե., 2009, թիվ 1:
24. Гимпельсон Е.Г., Путь к однопартийной диктатуре, («Отечественная история», РАН, М., 1994, N 4–5).
25. Хуршудян Л.А., К вопросу о ленинской оценке социальной сущности партии Дашнакцутюн («Լրաբեր» հաս. գիտ., Ե., 1988, թիվ 7 (հուլիս):

5. Պարբերական մամուլ

1. «Ազգակ շաբաթօրեակ»,Պէյրութ, 1973:
2. «Ապագա», Բարիզ, 1921,1926:
3. «Բանբեր Հայաստանի արխիվների» (ԲՀԱ), Ե., 2013,2017:
4. «Գաղափար», Թեհրան, 1925:
5. «Դրօշակ», Պոսթըն, 1930:
6. «Դրօշակ», Փարիզ, 1926, 1927:
7. «Երկիր», Ե., 2004:
8. «Լրաբեր», Ե., 1923:
9. «Խորհրդային Հայաստան», Ե., 1921, 1922,1923, 1924, 1925, 1926:
10. «Կարմիր աստղ», Թիֆլիս, 1921:
11. «Կոմունիստ», Ե., 1920, 1921:
12. «Հայաստանի բժշկագիտություն», Ե., 2016:
13. «Հայություն», Ե., 1993:
14. «Հայրենիք», Պոսթըն, 1923, 1924:
15. «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1922,1923:
16. «Մարտակոչ», Թիֆլիս, 1923,1927:
17. «Յառաջ», Յեր., 1920:
18. «Յուշամատեան ՀՅԴ», Ալբոմ-ատլաս, հատ Բ, Լոս Անճելըս, 2001:
19. «Յուսաբեր», Գահիրե, 1926, 1927:
20. «Նոր գաղափար», Թէհրան, 1927:
21. «Նորք», Ե., 1923:
22. «Վերջին լուր», Կ. Պոլիս, 1921:
23. «ՎԷՄ», Ե., 2018:
24. «Коммунист», Эривань, 1920, 1921:

6. Համացանցի նյութեր

1. Агабеков Г., *ЧК за работой.* Приложение к журналу «Отечественные архивы», випуск 1, М., 1992, http://Jib.ru/memuary/Acabekow/chzarabotoj.txt.

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Անձնանուններ

Ա

Աբգար, 383
Աբդուլ Համիդ 2-րդ, 120, 246
Աբրահամյան Մարտիրոս (Բաշ-
գառնեցի), 156
Աբրահամյան Ռ., 226
Ագրիպասյան, 66
Ադոնց Ն., 105
Ազատյան Հ., 59
Աթաջանյան Գերասիմ (Ղա-
փանցի Գերասիմ), 70, 71,
156, 214, 216, 217
Աթարբեկյան Գ., 28
Ալթունյան Մամիկոն, 110
Ալիխանյան Գ., 17, 24
Ահարոնյան Ա., 154
Ահմեդ Ջեմալ փաշա, 46
Աղաբեկով Գեորգի, 162, 272
Աղամալյան Ա., 260
Աղբալյան Ն., 26
Աղբաշ-Դարդալու, 380
Աղուզումցյան, 312, 357, 360,
362, 363, 367, 368, 372, 384,
385, 386, 392
Աճառյան, 321
Աճեմյան Արմենակ, 272
Ամատունի Ա., 175
Ամիր Արշատ, 165
Ամիրխանյան Շ., 22, 33, 42, 58,
71, 75, 81, 94, 156
Ամիրխանյան-Մուրասյան Նա-
տալիա, 22
Ամրազյան Վահան, 112
Այվազյան Կ., 24
Անահիտ, 328, 329
Անանով Ա., 211, 384
Անդրանիկ, 22, 186
Աշոտ Արծրունի (Տուլյան Աշոտ),
68, 225, 250–252
Աշոտ, 358, 359
Աշրաֆյան Զարմայր, 71, 75, 233,
234, 241, 242, 252, 259, 263
Առաքելյան Ս., 161, 163, 224
Ասատրյան Խնկո (Բաշգառնե-
ցի), 156
Աստվածատրյան Արշ., 21
Ավալյան Հայկ, 11, 12, 13, 82, 92,
94, 121, 135, 321
Ավանեսով Տ., 341, 372, 373
Ավանեսով, 381, 382, 392
Ավդալբեկյան Թ., 272
Ավետիսյան Հրաչ, 156
Ավետիսյան Մուշեղ (Սասունցի),
156
Արամ, 359
Արեշյան Գ., 276
Արմեն Մ., 289
Արշակյան Ս., 280
Արտուշ խան-Շահրիմիրզյան, 22,
379
Աֆրիկյան Վ., 21

Բ

Բաբայան Վարոս, 21, 379
Բաբասյան Խաչատուր, 93
Բաղամյանց Գ., 311, 340, 346
Բալայան Գերասիմ, 156
Բալասբեկյան Գրիգոր, 99, 119, 125
Բալյան Վ., 117
Բակունց Ակսել (Ալեքսանդր), 78, 79, 80, 82, 96, 97, 99,100, 101, 102, 103, 106, 107, 108, 110, 111, 112, 119, 123, 125, 128, 139, 140, 142, 289, 310
Բակունց Երեմիա, 170; 210, 211
Բաղդասարյան Ս., 226
Բաղդասարյան, 21
Բաշալյան Լևոն, 203
Բասենցյան Ծաղարշ, 156
Բարսեղյան Ս., 198
Բեկզադյան Ա., 24, 367
Բեն, 20
Բերիա, 252
Բոբրիշչև Ա., 178
Բոգոռազ-Տան Վ., 182
Բուդաղյան Հարություն (Բուդաշկո), 28, 214, 225, 252
Բուդաղյան Հովակիմ, 19
Բուդումյան Ս., 98
Բուխարին Ն., 109

Գ

Գալոյան Գ., 21
Գասպարյան Դ., 79
Գասպարյան Վաղարշակ, 379
Գասպարյան, 321, 341, 348
Գեկեչկորի, 333
Գիլբարս, 166
Գոլոշյան, 66
Գործունյան Կ., 139
Գրիգոր, 272, 305
Գրիգորյան Արշակ, 11
Գրիգորյան Գ., 92
Գրիգորյան Գր. (Գրո), 139, 140, 141, 142
Գրիգորյան Կ., 310, 311,
Գրիգորյան, 307, 316, 319, 339
Գումեդին Գուրգեն, 133, 136, 140, 143, 144
Գևորգ Ե Վշտալի, 165, 166
Գևորգյան Ա.Ա., 392
Գևորգյան Արտաշես, 47
Գևորգյան Արտավազդ, 214, 268, 313
Գևորգյան Հակոբ, 84

Դ

Դալլաքյան Կ., 172, 173,
Դանիելյանց Խաչիկ, 82
Դավթյան Ներսես, 331
Դավիթ Անանուն, 276, 321, 334
Դարբինյան Արտակ, 203
Դարբինյան Ռուբեն (Չիլինգարյան Արտաշես), 26, 187, 197, 198
Դեմիրճյան Դերենիկ, 321
Դենիկին Ա., 206
Դովլաթյան Ի., 24, 25
Դրաստամատ Կանայան (Դրո), 12, 14, 16, 17, 20, 21, 24, 27, 31, 32, 46, 47, 48, 100, 101

Ե

Եղիա Զուբար, 217, 277

Եսայան Զապել, 335
Եսայան, 249, 275
Երզնկյան Արամայիս, 59, 64, 65, 106, 152, 166, 243, 244, 247, 248, 254, 259
Երզնկյան Եզեկել, 156, 157
Երվանդ խան-Ադամյան, 22
Երվանդ Հրաչ, 203

Զ

Զայան, 331
Զառաֆյան Լևոն, 22
Զասորինա, 376, 380
Զավարյան Սիմոն, 331
Զարգարյան Հայկ Հակոբջանի, 347, 385
Զարյան Ն., 103
Զաքարյան Լիպարիտ, 92
Զաքարյան Մկրտիչ,
Զեյթլեյան Ս., 27
Զինովև, 99, 126, 140
Զորյան Զորի, 31
Զորյան Ստեփան, 331

Է

Էլիավա Ճ., 26

Թ

Թագվորյան Թ., 159
Թադևոսյան Ա., 383
Թադևոսյան, 312, 381
Թարխանյան Սուրեն (Կուռո), 156
Թերզիպաշյան Ավետիս, 203
Թերլեմեզյան Փանոս, 203
Թեքեյան Վահան, 203
Թոթովենց Վահան, 335
Թովմասյան, 316, 319
Թորոսյան Պետիկ, 175
Թորոսյան Սահակ, 31, 214–216, 252
Թումանով Գ.Մ., 331
Թումյան Հարություն, 99, 100, 111, 124
Թուխյան Բագրատ, 31
Թևոսյան Ա.Վ., 78, 395, 397

Ժ

Ժիրայր, 66

Ի

Ինաեկյան, 367
Ինճիկյան Վերգինե Հովհաննեսի, 358
Իշխանյան Բախշի, 21, 379
Իշխանյան Եղիշե Վրեժի (Ատրպատական, Մենակ, Ստյոպա, Արցախյան), 250, 262, 263, 271, 273, 276, 277
Իոնեսյան, 364
Իսահակյան Ավետիք, 320, 321, 334, 347, 384
Իսրայելյան Աշոտ, 31
Իսրայելյան, 318, 337
Իրազեկ (Տեր-Հակոբյան Հակոբ), 11, 19, 22
Իրատես, 261

Լ

Լազյան Գ., 277
Լեգրան Բորիս,11, 14–17, 20
Լենին Վ., 5, 12, 17, 55, 57, 99, 126, 140, 179, 180, 193, 199, 285
Լիժին Ն., 63

Լուկաշին Ս., 29, 48, 51, 69, 99, 102–105, 125, 126, 152, 155, 203, 272, 356, 364

Խ

Խան-Աղովներ, 321
Խանջյան Ա., 173, 175, 213
Խաչատրյան Կարապետ Իսայիչ, 379
Խաչյան Ա., 59
Խատիսյան Ալ., 221, 222
Խատիսյան Գևորգ, 31
Խարմանդարյան Գ., 106
Խոնդկարյան, 364, 365, 366
Խվորոստյան Վիկտոր, 310
Խուշոյան Մանուկ, 225, 232–238, 240, 241–243, 245, 246, 248, 249, 251–255, 257–260, 263, 264

Ծ

Ծաղիկյան Ստ., 47
Ծովյան Ծովակ, 111

Կ

Կալինին Մ., 39
Կամենև Լ., 35
Կասյան Ս., 16, 17, 22–26, 28, 29, 38, 42, 117, 155, 185, 202, 203, 205, 207, 284–287, 351, 365
Կարապետյան Մելիքսեթ, 268
Կարինյան Արտաշես, 29, 57, 94, 155, 203, 204, 221, 230, 241, 261, 270-271
Կարինյան Հրանտ, 119
Կարո Սասունի, 22, 244
Կարոյան Սմբատ, 121
Կզարթմյան Վ., 312, 367, 369, 372, 373
Կիսիբեկյան Աբ., 89
Կլյուչնիկով Յու., 178
Կնյազյան, 341
Կոսարև, 317
Կոստանյան Հ., 173
Կոստիկյան, 316, 319,
Կորգանով գնդ., 379
Կրմենանց Նիկ., 82, 94
Կուզնեցով Պ. (Դարբինյան), 210, 211
Կուրսկի Դ., 35

Հ

Հախումյան Տիգրան, 243–245, 247, 254, 255, 256, 258
Հակոբյան Հակոբ, 238, 249, 260
Հակոբյան Սիմոն, 226, 334
Համազասպ, 21, 26, 28, 379
Համբարձումյան Սաքո, 93, 99, 224, 269
Համդիլյան Կարո, 173
Հասան-Ջալալյան Ա., 258
Հասրաթյան Մորուս Ստեփանի, 347
Հարությունյան Առաքել, 161, 225
Հարությունյան Արամ, 310
Հարությունյան Գրիգոր (Արուտինով), 310
Հարությունյան Ղազար, 250
Հարությունյան Սերգեյ, 45
Հարությունյան, 170, 326
Հովհաննիսյան Ա. (Աշոտ), 14, 29, 46, 51, 59, 61, 65, 66, 101, 102, 107, 108, 137, 140, 155,

160, 169–172, 192, 224, 241, 272, 284, 285, 294
Հովհաննիսյան Արշակ (Ա. Արշակունի), 219
Հովհաննիսյան Կարապետ (Կարո), 280
Հովհաննիսյան Սիրանուշ Գ., 313, 397
Հովսեփյան Արմենակ, 243, 253, 259
Հովսեփյան Գարեգին, 166
Հովսեփյան Հայկ, 201
Հունո, 66
Հրաչիկ, 323, 324

Ձ

Ձերժինսկի Ֆ., 35, 55

Ղ

Ղազազյան Կոլյուն, 31, 32, 46, 101
Ղազախեցյան Վլ., 26, 38, 42, 43, 79, 130
Ղազարյան Ապրո, 236
Ղազարյան Ա. (Արշակ), 22, 28,, 162, 185, 203, 214, 217-219, 220-222, 224, 226-228, 334
Ղազարյան Պատվական, 275, 276
Ղազարյան, 22, 100
Ղամբարյան Ռ., 92
Ղասաբյան, 21
Ղարաբեկյան Մ., 41
Ղարագյոզյան Արմենակ, 59, 64, 65
Ղարաջյան Գ. (Արկոմեդ), 285
Ղափանցյան Գեղամ, 85
Ղլյտճյան Արսեն վարդապետ, 165

Մ

Մադոնց Վ., 92,
Մազլումյան Կարապետ արք., 160
Մազմանյան Միքայել Դավթի, 311, 347, 360, 362
Մակեդոն, 22, 379
Մակինցյան Պ., 59, 164
Մահարի Գ., 289
Մանուկյան Ա., 36, 281, 282
Մասուրյան Ս., 216
Մարգարյան Մկրտիչ, 133, 136, 138, 139, 140, 141, 143
Մարգարյան Ս., 59, 280
Մարգարյան, 384
Մարենց, 285
Մարության Լ., 99
Մարության Միք. (Լեմբել),137, 140
Մարտիկյան Սերգեյ Նիկոլայի, 59, 308, 311, 347, 363
Մարտիրոս, 380
Մացակ, 21
Մղիվանի Բ., 12
Մելիք-Աղամիրով Հմայակ, 211, 383
Մելիք-Թանգյան Ներսես արք., 164, 165, 166, 167
Մելիք-Հայկազյան Մուշեղ, 211, 383
Մելիք-Հովսեփյան (Օսիպով), Սերգեի 45, 71, 91, 93, 149, 158, 211, 240, 252, 269, 272, 287–289, 320, 340

Մելիք-Մուրադյան Միքայել, 251
Մելիք-Մուրադյան, 379
Մելիքյան Արշավիր, 354
Մելիքյան Հ., բժ., 21
Մելիք-Յոլչյան Սերգեյ, 21, 156, 379
Մելիք-Նադայան Գրիշայի, 316
Մելիք-Սարգսյան Սաֆար, 92
Մելիք-Օհանջանյան Կարո, 310
Մելքոնյան Արտաշես, 85
Մելքոնյան Սանդրո Ալեքսանդրի, 45
Մեծատուրյան-Սասունի Հռիփսիմե (Լոլա), 22
Մեծարենց Միսակ, 22
Մեծպայսն Հեղինե, 27
Մեհրաբյան Գրիգոր, 137
Մենժինսկի, 47
Մինախորյան Վ., 68, 364-366
Մինասյան Մուշեղ, 133, 134, 137-138
Մինց Ի., 4
Միշա, 249
Միսակյան Շավարշ, 172
Միրաքյան Ենոք, 31
Միրզոյան Ա., 383
Միքայելյան, 307, 320
Մխիթարյան Հայկ, 117
Մկրտչյան Գևորգ, 253
Մկրտչյան, 376, 380
Մյասնիկյան Ալ. (Մարտունի), 29, 32, 33, 41, 42, 43, 48, 49, 51, 69, 94, 99, 106, 146, 151, 154, 155, 172, 203, 208, 285, 291, 256
Մնացականյան Թումման, 281
Մոգիլևսկի Ս., 47, 158, 252
Մովսեսյան Ա., 336
Մովսեսյան Ար., 325
Մովսեսյան Հակոբ, 238, 249
Մովսեսյան, 315, 317, 318, 326, 329, 336, 337, 338
Մովսիսյան Լևոն, 85
Մռավյան Ա., 22, 24, 25, 26, 106, 113–118, 126, 151, 203, 241, 351
Մուղդուսի Խ., 91, 213, 269, 307, 315, 318, 325
Մուշեղ, 379
Մուշեղյան Հռիփսիմե, 249, 250, 251
Մուսայելյան, 173
Մուսինյան Մ., 26
Մուրադ, 379
Մուրադբեկյան Խորեն, 166
Մուրադյան Արտաշես, 167
Մուրադյան Դերենիկ, 212
Մուրադյան Հակոբ, 84
Մուրատով, 348

Յ

Յաղուբյան Հ., 60
Յոյան Զաքար, 156
Յուզեֆ Պիլսուդսկի, 246
Յուրենև Կ., 163, 224

Ն

Նազարեթյան Հմ., 272
Նազարով, 151
Նալչաջյան Արամ, 31
Նահապետյան, 85
Նաջարյան, 21
Նասիբյան Գ., 92

Նավասարդյան Վահան, 26, 79, 197, 226, 353
Նարինյան Սիմոն Սահակի, 124
Նարոյան Մեսրոպ Մշեցի, 160
Նժդեհ Գ., 157, 165, 216
Նուպար Փաշա, 163
Նուրիջանյան Ավետիս (Ավիս), 16, 22, 24, 59, 271

Շ

Շահան Նաթալի, 172
Շահինյան Մ., 182
Շահումյան Ստ., 285
Շահսուվարյան Ալ., 83, 86, 91, 93, 94, 99, 106, 135, 150, 275, 276
Շանթ Լ., 26, 366
Շատիրյան Մարտին, 331
Շեյխլանյան, 321
Շումյացկի, 157
Շուշանյան Խաչիկ, 84

Չ

Չալխուշյան Գրիգոր, 202, 203, 205–208, 228
Չախմախչյան, 269
Չարենց Ե., 70, 289, 310
Չերազ Վահան, 273
Չերչիլ, 323
Չթչյան Օնիկ, 140
Չիթչյան Սահակ, 214, 226
Չիլինգարյան Ա., 28, 379
Չիչերին Գ., 11, 12, 17
Չիտենկելի, 333
Չոպանյան Արշակ, 203
Չուբար Գր., 243
Չուբարյան Գրիգոր Համբարձումի, 259, 311, 347, 348, 357, 364, 387, 388
Պահլավունի Արտաշես, 22
Պայտարյան Հ., 171
Պաստուխով Ս., 224
Պարոնյան Հովհաննես (Ցապոն), 156, 388
Պետոյան Ղ., 236
Պետրոսյան Ա., 226
Պետրոսյան Գ., 280
Պողոս Նուպար փաշա, 186, 203
Պողոսյան Ռ.Ս., 395
Պուշկին, 178

Ջ

Ջահանգիր, 374
Ջամալյան Արշակ, 195
Ջամբեզյան, 326
Ջեմալ փաշա, 32, 47, 68, 252

Ռ

Ռաշիդ, 95
Ռուզվելտ Ֆ., 33

Ս

Սահակյան Ավետիք, 26, 156
Սահինյան Գր., 320
Սահինյան Քաջազնունի, 322
Սայիյան Ա.Ս., 168
Սառիկյան Հակոբ, 63
Սարգիսբեկյան Գարիգ, 380
Սարգսյան Եփրեմ, 19, 22, 156
Սարգսյան Լևոն, 33
Սարգսյան Մ., 260
Սարգսյան, 280
Սարիբեկյան Գ., 388

Սարուխանյան Արշակ, 250, 251
Սաֆրասբեկյան Ռ., 275, 276
Սերյոժա, 236
Սերջանյան Միհրան, 92
Սիմոն, 221
Սիմոնյան Առաքել, 119, 120
Սիմոնյան Հր., 213
Սինոյան Պետրոս, 238, 239, 243–247, 249, 253, 256, 257, 259, 260, 264
Սլավուցկի Մ., 157
Սմբաթ,376, 380
Սմիռնով Ա., 39
Սմկո, 165
Սնարյան (Նարինյան) Սնար, 140, 214, 226, 335
Սորոկին Իվան, 324
Ստալին Ի., 12, 17, 140
Ստեփանյան Ա. (Արտաշես), 238, 239, 244, 249, 256, 257, 259, 264
Ստեփանյան Ասլան, 156,
Ստեփանյան Հայկ, 92
Ստեփանյան Շմավոն, 243
Ստեփանյան Սահակ, 239, 244–251, 255, 256, 258-262, 264
Սուլթանով Խոսրով բեկ, 366
Սևդաշունի Հմայակ, 92

Վ

Վահե Արծրունի, 158
Վանա Իշխան (Նիկոլ Միքայելյան), 27
Վանանդեցի Գ., 285
Վանիև Երեմեյ, 21
Վանյան Տիգրան, 112
Վանցյան Արտաշես, 11
Վարդանյան Գր., 165, 172, 173
Վարդանյան, 269, 320
Վարդապետյան Լևոն, 240, 241
Վարդապետյան Վ., 89
Վարդգես (Վարդ), 358
Վարշամյան Գևորգ, 156
Վիշինսկի Ա., 175
Վրանգել Պ., 179
Վրացյան Սիմոն, 11, 14, 16, 19, 21, 24, 68, 156, 197, 216, 365, 375, 389

Տ

Տաոլե Ե., 182
Տատյան Հայրապետ, 261, 271
Տեր-Դավթյան Հովսեփ, 21, 26, 121, 379
Տեր-Թովմասյան Խաչատուր, 111
Տեր-Հակոբյան Գրիգոր Աբրահամի (Գրո), 138, 311, 364
Տեր-Հակոբյան Հակոբ, 68, 156
Տեր-Հարությունյան Ս., 142
Տեր-Հովհաննիսյան Միհրան, 268, 269
Տեր-Հովհաննիսյան, 369
Տեր-Ղազարյան Գյուտ եպիսկոպոս, 165, 272
Տեր-Ղազարյան Թորոս, 12
Տեր-Մինասյան Անահիտ, 78
Տեր-Մինասյան Գեղեոն, 156, 224
Տեր-Մինասյան Ռուբեն (Ռուբեն փաշա) , 34, 78, 156, 168, 221, 263, 370, 390
Տեր-Ներսիսյան Ի., 26
Տերոյան Վարազդատ, 272
Տեր-Պողոսյան Պ., 121, 124

Տեր-Պողոսյան Պետրոս, 47
Տեր-Պողոսյան Պողոս, 99, 113
Տեր-Սիմոնյան Դր., 59, 60, 61, 64, 65, 173
Տերտերյան Հ., 14, 16, 17, 21, 364, 365
Տեր-Օհանով Գագա, 321
Տիգրանյան Սիրական, 334
Տոյստոյ Ա., 182
Տոնյան, 321
Տոնոյան Կրպե, 236
Տոնոյան Ռուբեն, 82
Տրդատյան Տրդատ, 120, 237, 243
Տրոցկի Լ., 57, 99, 126, 140

Ց

Ցիրուլ, 169, 170

Ու

Ուստրյալով Նիկոլայ, 178, 182

Փ

Փանյան, 75
Փիրգուլյան Գ., 276
Փիրուզյան, 312, 348, 368
Փիրումյան Ս., 106, 152, 172, 215
Փոլյան Սիմոն, 99, 113, 119, 121, 122, 127

Ք

Քալանթարյան Լ., 20
Քալանթարյան Քալանթար, 341, 342, 347
Քալաշյան Գ., 285
Քանքանյան Անդրանիկ, 142
Քաջազնունի Արամ, 358
Քաջազնունի Կարեն Հովհաննեսի, 212, 308, 387 325, 328, 329, 335, 358, 397
Քաջազնունի Հրաչիկ (Անահիտ), 358, 359
Քաջազնունի Մ., 347, 358, 360
Քաջազնունի Մարգարիտա (Մարգո) Հովհաննեսի, 208, 212, 213, 308,.310-312, 324, 326, 327- 329, 340, 346, 357, 386- 388
Քաջազնունի Սաթենիկ Դավթի, 308, 326, 328, 329, 358
Քաջազնունի Հովհաննես Հովհաննեսի (Ռուբեն Իվանի), 26, 110, 119, 185, 189, 190–201, 203, 208 -214, 215, 217, 218, 220, 221, 223, 224, 226–229, 293, 306–313, 315–318, 320, 321, 323–331, 335–346, 348, 349, 350, 352–358, 361, 362, 363, 366–375, 379, 381, 382, 383, 386–397
Քաջբերդունի Ռուբեն, 11, 358
Քեմալ Մ., 199
Քոչարյան Հակոբ, 320
Քուրդ Ղազո, 249, 250, 251
Քրիստափոր Միքայելյան, 331

Օ

Օհանջանյան Ավետիս, 11, 12, 13, 161, 225
Օհանջանյան Համազասպ (Համո), 13, 20, 21, 26, 28, 221, 375, 379, 389
Օհանջանյան, 392

Օրախելաշվիլի Մ., 23, 272
Օրջոնիկիձե Գ. (Սերգո), 16-17, 20, 23, 25, 46, 151, 351, 356

Ֆ

Ֆահրադյան Ղ., 236
Ֆոլյան Ս., 139, 142

Տեղանուններ

Ա

Աբովյան փողոց, 261
Ադրբեջան, 12, 99, 106, 113, 115, 124, 129, 148, 150, 152, 278, 344, 370, 379, 380
Այազյազ, 246, 259
Այավերդյան փող., 347
Այեքպոլ, 88, 141
Այեքսանդրապոլ, 20, 57, 75, 88, 89, 99, 119, 133, 137, 141, 200, 249, 380
Այեքսանդրիա, 196
Այեքսանդրովկա, 374
Ախալքալաք, 275, 315, 317, 318, 327, 329, 336, 368, 379, 386, 393, 395
Ախուրյան, 114
Ախտա, 20, 87, 274, 374, 376
Աղավնատուն, 146
Աղգիբիր, 374
Աղջաղալա Ն., 232, 234, 235, 236, 253, 263
Աղջաղալա Վ., 238
Ամասիա, 175
Ամերիկա, 140, 152, 159, 171–173, 188, 255, 321, 335, 370
ԱՄՆ, 105, 172, 270, 333
Այգեշատ, 263
Այնաձոր (Աղավնաձոր), 268
Անգլիա, 322, 333
Անգորա, 23
Անդրկովկաս, 7, 36, 39, 46, 47, 53, 60–62, 75, 77, 105, 126, 148, 150-152, 167, 168, 175, 215, 268, 274, 332-333, 366, 374
Աշտարակ, 59, 84, 144, 146, 250, 274
Ապարան, 20, 175
Ավշար, 376
Ատրպատական, 164–166, 168
Արագած լեռ, 87, 200, 235, 255, 270
Արագղայան, 114
Արարատ լեռ, 167, 168
Արաքս, 114, 200
Արդահան, 379
Արխանգելսկ, 27
Արցախ, 64, 131, 294
Արփաչայ (Ախուրյան) գետ, 200
Արևելք, 116, 199
Արևմուտք, 184
Արևմտյան Եվրոպա, 204
Արևմտյան Հայաստան, 115, 168

Բ

Բաթում, 200, 331, 333, 379
Բալախան, 111
Բալկաններ, 152, 159
Բաշ Գյառնի, 20, 89, 274
Բաշաբարան, 374
Բասարգեչար, 88
Բաքու, 17, 20, 23, 74, 89, 95, 99, 103, 105, 106, 111, 116, 157, 199, 273, 320, 328, 329, 331, 332, 357, 369
Բելգիա, 49, 332

Բեռլ Վեղի, 378
Բեռլին, 178, 208, 216
Բզովդալ (Բազում), 21
Բժնի, 376
Բյուրական, 85
Բոսբուրուն, 378, 380
Բուլղարիա, 105, 140, 159, 172
Բուխարեստ (Պուքրեշ), 104, 188, 191, 196, 208, 334

Գ

Գերմանիա, 49
Գնունի փողոց, 307, 317, 325–327, 329, 386

Դ

Դարալագյազ, 89, 93, 244, 251, 268, 270, 274, 380
Դիլիջան, 89, 93, 111, 141, 270, 274, 281, 321, 379
Դոխս, 146
Դոն, 206, 259, 344

Ե

Եգիպտոս, 219, 333
Ելենովկա (Սևան), 88
Եղվարդ, 20, 114
Եվրոպա, 255
Երուսաղեմ, 167
Երևան, 7, 11, 16–23, 26, 28, 57, 59, 75, 78, 79, 87, 88, 92, 95, 119, 129, 132, 133, 140, 141, 147, 148, 196, 208, 209, 211, 213, 215, 224, 225, 235, 247, 252, 263, 264, 269, 270–273, 275, 277, 281. 307, 315–317, 319, 320, 325–327, 329, 333, 334, 338–340, 342, 343, 348, 357, 358, 360, 366, 367, 370, 373, 374, 376–378, 382, 383, 385, 386, 388, 393, 396
Երևանի բանտ, 316, 337, 387

Զ

Զանգեզուր, 37, 41, 58, 88, 99, 133, 141, 216, 224, 268, 270, 274
Զանգիբասար, 87, 120, 358, 359
Զառ գյուղ, 20

Է

Էջմիածին, 57–59, 75, 83, 85, 86, 92, 99, 121, 133, 137, 141, 144, 146, 164, 165, 167, 200, 244, 268, 270, 275, 369, 373, 375, 389
Էվջիլար (Արազափ), 84
Էրզրում, 380
Էրիվան, 274

Թ

Թազա Դարխալու, 376
Թալին, 57
Թավրիզ, 54, 59, 68, 70, 75, 90, 92, 136, 156–158, 160, 164, 165, 167, 168, 225, 250–252, 262-264, 271, 273, 275, 277, 366
Թեհրան, 54, 156, 157, 161, 163, 217, 224, 226–277, 370, 390
Թերեք, 206, 344
Թիֆլիս, 30, 32, 33, 46, 57, 68, 75, 77, 95, 103, 196, 209, 252, 262, 273–275, 331, 332, 345, 360, 369, 371, 390
Թուրքեստան, 124

Թուրքիա, 12, 47, 49–53, 60, 61, 114, 115, 165, 168, 169, 199, 219, 220, 273, 332
Թուրքմենլու (Ապագա) գյուղ, 85

Ի

Իրան, 51, 53, 54, 71, 155, 156, 162, 317, 331, 333, 337, 338, 366, 386–388, 390, 393, 396
Իրանական Ադրբեջան, 390

Լ

Լեհաստան, 246
Լենինական, 141, 210, 242, 251, 268, 269, 273–275, 281, 362
Լենինգրադ, 28
Լենինի փող., 382
Լեռնային Ղարաբաղ, 99, 274
Լոնդոն, 333
Լոռի, 20, 45, 75, 89

Խ

Խարկով, 106, 124
Խորհրդային Հայաստան, 9, 49, 67, 76, 96, 97, 100, 111, 114, 118, 130, 149, 150, 165, 166, 168, 176, 181, 186, 201, 204, 205, 209, 220, 221, 223, 229, 252, 255, 265, 267, 288, 289, 291, 293, 294, 306, 355, 390
Խորհրդային Միություն, 109, 124, 129, 208
Խորհրդային Ռուսաստան, 6, 8, 14, 34, 35, 39, 51, 53, 115, 194, 207, 355, 389
Խոր-Վիրապ, 378
ԽՍՀՄ, 209, 283, 306, 323, 334, 335, 346, 357, 360, 364

Ծ

Ծաղկաձոր, 20

Կ

Կ. Պոլիս, 47, 160, 190, 273
Կալուգա, 27
Կահիրե, 263
Կաղզվան, 252
Կապան, 88
Կապանի լեռներ, 70
Կարս (Ղարս), 113–116, 354
Կարսի մարզ, 252
Կըրբուլաղ, 20
Կիլիկիա, 50
Կիսլովոդսկ, 359
Կիրովական, 358
Կողբ, 244
Կոստանդնուպոլիս, 152, 334
Կոստրոմա, 28
Կովկաս, 67, 106, 115
Կոտայք, 87, 270, 274
Կուբան, 206, 344
Կրասնոյարսկ, 28
Կրոնշտադ, 35, 374, 379

Հ

Հայ Ձեյվա, 146
Հայաստան, 6–24, 26, 27, 29, 32–34, 36–46, 48–50, 53, 54, 58, 62–64, 67, 68, 70–73, 75–78, 83, 85, 90, 94–97, 99, 102, 105, 110, 113–117, 119, 123, 127–130, 132, 133, 136, 151, 153–161, 163–165, 167–170, 173, 175, 183, 185, 186, 188–194, 196, 199, 201, 203–210, 212, 213, 215, 218, 221, 222–

224, 226, 228, 230–233, 236, 240, 247–253, 260, 262, 264, 265, 268–271, 273–275, 277–279, 281–283, 288–295, 306, 312, 317–319, 321, 323, 330, 333, 337, 338, 340, 341–345, 349, 350, 352, 354, 355, 366-367, 370, 374, 378, 382, 383, 386–388, 390, 391, 393–396
Հայաստանի Առաջին հանրապետություն, 214, 217
Հայաստանի Հանրապետություն, 10, 19, 30, 31, 194, 195, 197, 206, 214, 221, 229, 293, 313, 349, 350, 393, 394, 395
Հյուսիսային Կովկաս, 35, 106, 149–152, 324, 359
Հյուսիսային Ռուսաստան, 278
Հյուսիսային Սիբիր, 50
Հնդկաստան, 333
Հունաստան, 105, 160
Հրազդան, 111

Ղ

Ղամարլու, 57, 89, 270, 274, 375–378, 389
Ղարաբուդ, 93, 105
Ղարադաղ, 165
Ղարաքիլիսա, 89, 133, 141, 274, 358, 359, 370
Ղզլլթամար (Ոսկեվազ) գյուղ, 85
Ղոնջալի, 175,
Ղուրդուդուլի (Արմավիր), 83, 146

Մ

Մարգարա գյուղ, 84
Մարսել, 152
Մարտունի, 88
Մեղրի, 99, 161
Մերձվոլգյան, 35
Միջին Ասիա, 124
Մոսկվա, 11, 17, 23, 28, 32, 56, 67, 73, 115, 128, 161, 169, 204, 224, 275, 313, 328, 329, 332, 358, 359, 374
Մուլլաբադար, 85
Մուշ, 235
Մուսամլու, 376
Մտեխի բանտ, 32, 77
Մրգաստան, 271, 273, 275, 277

Յ

Յուվա գյուղ, 376, 377
Յուվայ Դարխալու, 376

Ն

Ն. Բազմաբերդ, 225, 232
Ն. Խաթունարխ, 146
Նալբանդյան փող., 347, 348
Նախիջևան, 115, 281, 364
Ներքին Աղջաղալա, 225, 234, 235, 236
Նյու Յորք, 171
Նոր Բայազետ, 20, 21, 75, 87, 88, 99, 112, 141, 145, 274, 374
Նոր Նովգորոդ, 28
Նորք, 75

Շ

Շահումյան, 340
Շիրազլու, 376
Շիրակ, 20, 163, 270
Շուշի, 64

Չ

Չիմաբյանդ, 378, 380

Պ

Պարսկաստան, 33, 37, 38, 51, 53, 68, 74, 155–164, 167, 168, 203, 217, 219, 223, 224, 228, 250, 263, 272, 281, 370, 390
Պետրոգրադ
Պետրովսկի ճամբար, 215
Պլովդիվ, 159
Պրահա, 178

Ջ

Ջալալօղլի, 89
Ջանֆիդա գյուղ, 85
Ջենովա, 36
Ջուլֆա, 157

Ռ

Ռյազան, 27, 28
Ռոստով, 259
Ռումինիա, 252, 334
Ռուսաստան, 3, 6, 7, 13, 21, 27, 31, 37, 47, 52–54, 56, 61–63, 94, 115, 129, 148, 154, 177–180, 185, 188, 194, 199, 206, 207, 215, 218, 220, 223, 227, 228, 230, 252, 268, 269, 278, 292, 317, 336-337, 344, 345, 374, 379, 393, 395
Ռուսաստանի Դաշնություն, 230

Ս

Սայոնիկ, 61
Սամաղար, 146, 235, 236
Սանկտ Պետերբուրգ, 63, 332
Սասուն, 235
Սարդարապատ, 114, 274
Սիբիր, 28, 215, 261, 262, 278, 280, 282
Սիսիան, 88
Սիրիա, 50
Սմոլենսկ, 28
Սյունիք, 64
Սոյակ, 376
Սովետական Ռուսաստան, 374
Սուրգուտ, 28
Սուրմալու, 113, 114, 115
Ստալինի փող., 342, 347, 357, 360
Ստամբուլ, 334
Ստեփանակերտ, 105
Ստեփանավան, 308
Սև ջուր գետ, 200

Վ

Վ. Աղջաղալա, 238
Վաղարշապատ, 86, 93, 135, 144, 147, 232, 235, 244, 245, 274, 374
Վան, 235, 332
Վաշինգտոն, 333
Վասպուրական, 92, 260, 262
Վեղի, 358, 360
Վերին Հաջիղալա, 263
Վիեննա, 187, 188, 196, 208
Վյազմա, 358
Վյատկա, 28
Վոլոգդա, 28
Վորոնեժ, 27
Վրաստան, 30–33, 47, 77, 101, 106, 113, 124, 129, 133, 145, 148–150, 152, 274, 278, 344, 368, 379, 393, 395

Տ

Տաճկաստան, 124, 379
Տամբով, 28, 35
Տոմսկ, 215
Տուլա, 28
Տվեր, 28
Տրապիզոն, 333
Տիրապոլ, 252
Տփղիս, 379

Ու

Ուկրաինա, 344

Փ

Փարիզ, 152, 154, 161, 163, 172, 173, 178, 216, 221, 247, 251, 270, 288, 320, 333
Փարպի գյուղ, 85, 215

Ք

Քաղսի գյուղ, 376
Քարաշամբ, 250
Քեչիկ-Վեղի, 378

Օ

Օշական գյուղ, 85, 1460

Ֆ

Ֆիլիպե, 159
Ֆինլանդիա, 374
Ֆրանսիա, 105, 159, 171, 172, 278, 317, 330, 332, 333, 337, 396

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

ՀՅԴ կուսակցության քայքայման առաջին փորձերը և դրանց նպաստող ներքին ու արտաքին գործոնները

1. ՀՅԴ կուսակցությունը քայքայելու առաջին քայլերը (1920-1921 թթ.) 10
2. Թիֆլիսի «Աշխատավորականների» թևը և ՀՅԴ քայքայման առաջին փորձերը արտերկրում 30
3. ՀՅԴ քայքայմանը նպաստող ներքին և արտաքին գործոնները 34
4. ՀՅԴ 1921 թ. հրապարակային դատը 55
5. ՀՅԴ դեմ քաղաքական հետապնդումների ու բռնությունների այլ դրսևորումները 1920-ական թվականների սկզբներին 67

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

ՀՅԴ լուծարման 1923 թ. հայաստանյան համագումարը

1. Լուծարման համագումարի հրավիրման հանգամանքները և աղբյուրագիտական հիմքերը 73
2. Լուծարման համագումարի նախապատրաստումը և բացումը 81
3. Ա. Բակունցի զեկուցման մասին 100
4. Հ. Յ. Դաշնակցության սոցիալական ծագման ու կազմի մասին ... 107
5. Միջազգային դրության և ներքին խնդիրների քննարկումը 113
6. Հ. Յ. Դաշնակցության գործունեության վերագնահատման հարցի շուրջ 119
7. Համագումարի եզրափակիչ փուլը 123

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

Նախկին երիտասարդ դաշնակցականների միության (Դաշերիտմիության) «ինքնավերացման» հայաստանյան համագումարը

1. Դաշերիտմիության «ինքնավերացման» համագումարի նախապատրաստումը 132
2. Համագումարի բացումը և ընթացքը 139
3. Դրությունը երիտդաշնակցականների ինքնավերացման համագումարից հետո 143

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.
Հ. Յ. Դաշնակցության կազմալուծման փորձերը արտերկրում 148
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.
Հայկական սմենովեխականության հարցի շուրջ
1. Սմենովեխականության երևույթի առաջացումը 177
2. Հայկական սմենովեխականության երևույթը և նրա առանձնահատկությունները 183
3. Հովի. Քաջազնունու դիքորքորքշումը 189
4. Հովի. Քաջազնունու նոր դիքորոշքման քննադատները 195
5. Հայկական սմենովեխականության թևերը և գաղափարական հոսանքները 201
6. Հովի. Քաջազնունու վերադարձը Հայրենիք և հետագա ճակատագիրը 208
7. Իրանահայ հոսանքը 217
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ.
«Դաշնակցական տեռորիստների գործը»: Մի սպանության իրական պատմությունը
1. Մ. Խուշոյանի սպանության հանգամանքները, դատավարության նախապատրաստումը և բացումը 232
2. Դատավարության ընթացքը 242
3. Հարցաքննությունների հետագա ընթացքը և դատավարության ավարտը 249
ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ.
Քաղաքական հալածանքների ու բռնությունների այլ դրսևորումներ: Գաղափարաքաղաքական հարցերը Հայկոմկուս-ՀՅԴ հարաբերություններում 1920-ական թվականների երկրորդ կեսին
1. Քաղաքական հալածանքների ու բռնությունների այլ դրսևորումներ 267
2. Գաղափարախոսական ու գաղափարաքաղաքական հարցերը Հայկոմկուս - ՀՅԴ հարաբերություններում 284
ԱՎԱՐՏԱԿԱՆ ԽՈՍՔ 292
ՀԱՎԵԼՎԱԾ 1 298
ՀԱՎԵԼՎԱԾ 2 306

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 405
Անձնանուններ 412
Տեղանուններ 422

ԱՐԱՐԱՏ ՄԽԻԹԱՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՀԱՅԿՈՄԿՈՒՍԻ ՓՈՐՁԵՐԸ (1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

АРАРАТ М. АКОПЯН

ПОПЫТКИ АРМКОМПАРТИИ О РАСПУЩЕНИИ ПАРТИИ АРМЯНСКОЙ РЕВОЛЮЦИОННОЙ ФЕДЕРАЦИИ (ДАШНАКЦУТЮН) (1920-ые гг.)

ARARAT M. HAKOBYAN

THE ATTEMPTS OF THE ARMENIAN COMMUNIST PARTY TO DISSOLVE THE ARF (DASHNAKTSUTYUN) (1920'S)

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Տեխնիկական խմբագիր՝ Ն. Դավթյան
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Տպաքանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

ՀԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0633274

II
A 105950